

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ԿՈՂՄԻՑ

# ՖԻԶԻԿԱ

2016 թ. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՄԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ

ԸՆԴԵՐԱԾ

ՄԱՍ  
2



Երևան  
2015

ՀՏԴ 373.1: 53  
Գ.Ա.Դ 74.2 + 22.3  
Ֆ 524

Հեղ. խումբ՝ Ալավերդյան Ռոմա  
Ղազարյան Էդուարդ  
Մելիքյան Գագիկ  
Նինոյան Ժիրայր  
Պետրոսյան Ալֆրեդ  
Թոսունյան Ռոստոմ

### Խմբագրությամբ՝ պրոֆեսոր Էդուարդ Ղազարյանի

Ֆիզիկա: Թեստային առաջադրանքների շտեմարան/  
Ֆ 524 Ո. Ալավերդյան, Ե. Ղազարյան և ուրիշ.- Եր.: Էդիթ Պրինտ,  
2015. Մաս 2.- 435 էջ:

Սույն շտեմարանի առաջադրանքների հիման վրա կազմվում են պետական ավարտական և միասնական քննությունների թեստերի տարրերակները: Շտեմարանը կազմված է երեք մասից: Երկրորդ մասը ներառում է ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հանրակրթական դպրոցի ֆիզիկայի ծրագրով նախատեսված բոլոր բաժինները և թեմաները ներկայացնող ճիշտ պատասխանի ընտրության, մեկ, երկու, երեք և չորս թվային պատասխաններ պահանջող 2088 առաջադրանք:

ՀՏԴ 373.1: 53  
Գ.Ա.Դ 74.2 + 22.3

ISBN 978-9939-52-628-7

- © Ալավերդյան Ռոմա, Ղազարյան Էդուարդ, Մելիքյան Գագիկ,  
Նինոյան Ժիրայր, Պետրոսյան Ալֆրեդ, Թոսունյան Ռոստոմ, 2015
- © «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2015

## ՆԱԽԱԲԱՆ

Ֆիզիկայի շտեմարանում ընդգրկված առաջադրանքների հիման վրա կազմվում են պետական ավարտական և միասնական քննությունների թեստերի տարրերակները: Շտեմարանը կազմված է երեք մասից: Սույն գիրքը 2012 թվականին հրատարակված ֆիզիկայի շտեմարանի երկրորդ մասի լրամշակված տարրերակն է: Այն ներառում է ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հանրակրթական դպրոցի ֆիզիկայի ծրագրով նախատեսված բոլոր բաժինները և թեմաները ներկայացնող ճիշտ պատասխանի ընտրության, մեկ, երկու, երեք և չորս թվային պատասխաններ:

Առաջադրանքների մի մասն ընտրվել և վերախմբագրվել են նի շարք հանրահայտ թեստային առաջադրանքների ժողովածուներից և խնդրագրերից, իսկ որոշ մասը կազմել են հեղինակները: Շտեմարանում առաջադրանքները դասակարգված են ըստ ծրագրի առանձին բաժինների: Գրքի վերջում բերված են պատասխանները:

Թվարանական հաշվարկները հեշտացնելու և պատասխանների միարժեքությունն ապահովելու նպատակով որոշ իրացիոնալ թվեր, եռանկյունաչափական ֆունկցիաների արժեքներ և ֆիզիկական հաստատուններ օգտագործված են մոտարկված (օրինակ՝  $\pi^2 = 10$ ,  $\sqrt{2} = 1,4$ ,  $h = 6,6 \cdot 10^{-34}$  ԶՎ և այլն):

Խնդիրների լուծումների հաշվարկները կատարելիս, եթե առկա են իրացիոնալ արտահայտություններ, ապա իրացիոնալ թվերի մոտավոր արժեքները (օրինակ՝  $\sqrt{2} = 1,4$ ) պետք է տեղադրել հայտարարի իրացիոնալությունը վերացնելոց հետո (օրինակ՝  $1/\sqrt{2} = \sqrt{2}/2 = 1,4/2 = 0,7$ ): Բոլոր այն խնդիրներում, որտեղ չկա հասուլ վերապահում, պետք է ընդունել, որ  $\pi = 3,14$ ,  $\sqrt{3} = 1,7$ ,  $\sqrt{2} = 1,4$ , իսկ ֆիզիկական հաստատունների համար անհրաժեշտ է օգտագործել նրանց այն մոտավոր արժեքները, որոնք տրված են ստորև բերված աղյուսակում:

Ընորհակալություն ենք հայտնում հանրակրթական այն դպրոցներին, որոնք մասնակցել են թեստային առաջադրանքների հավաքագրման աշխատանքներին, ինչպես նաև Գնահատման և թեստավորման կենտրոնի գլխավոր մասնագետ Արամ Ծատուրյանին՝ շտեմարանի ստեղծման աշխատանքներին աջակցություն ցուցաբերելու համար:

Ընորհակալ ենք նաև բոլոր այն ուսուցիչներին, մասնագետներին, որոնք իրենց դիտողություններով և առաջարկություններով նպաստեցին շտեմարանի բարելավմանը:

	Ֆիզիկական մեծությունը	Մոտավոր թվային արժեքը	Չափայնու- թյունը
1.	Ազատ անկման արագացումը	$10$	$\text{մ}/\text{վ}^2$
2.	Գ-բավիտացիոն հաստատունը	$6,7 \cdot 10^{-11}$	$\text{Նմ}^2/\text{կգ}^2$
3.	Ավոգադրոյի հաստատունը	$6,02 \cdot 10^{23}$	$\text{մոլ}^{-1}$
4.	Բոլցմանի հաստատունը	$1,38 \cdot 10^{-23}$	$\Omega/\text{Կ}$
5.	Գ-ազային ունիվերսալ հաստա- տունը	$8,3$	$\Omega/\text{մոլ}\cdot\text{Կ}$
6.	Լույսի արագությունը վակուու- մում	$3 \cdot 10^8$	$\text{մ}/\text{վ}$
7.	Էլեկտրոնի լիցքի մոդուլը	$1,6 \cdot 10^{-19}$	$\text{Կ}_{\text{l}}$
8.	Էլեկտրոնի զանգվածը	$9 \cdot 10^{-31}$	$\text{կգ}$
9.	Պրոտոնի զանգվածը	$1,68 \cdot 10^{-27}$	$\text{կգ}$
10.	Էլեկտրական հաստատունը	$8,85 \cdot 10^{-12}$	$\text{Ֆ}/\text{Վ}$
11.	Կուլոնի օրենքում համեմատա- կանության գործակիցը	$1/4\pi\varepsilon_0 = 9 \cdot 10^9$	$\text{Նմ}^2/\text{Կ}_{\text{l}}^2$
12.	Պլանկի հաստատունը	$6,6 \cdot 10^{-34}$	$\Omega\cdot\text{վ}$

# I. ԱՇԽԱՆԻԿԱ

## 1. ԿԻՆԵՍԱՏԻԿԱ

### 1.1. ԹԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:  
**Սեխանիկայի հիմնական խնդիրը ...**
  - 1) մարմնի վրա ազդող ուժերը պարզելն է:
  - 2) մարմնի դիրքը տարածության մեջ ժամանակի կամայական պահին որոշելն է:
  - 3) մարմնի շարժման պատճառը պարզելն է:
  - 4) մարմնի անցած ճանապարհը գտնելն է:
2. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:  
**Նյութական կետ կրչփում է ...**
  - 1) շատ փոքր զանգված ունեցող մարմինը:
  - 2) տարածության մեջ մարմնի դիրքը ցույց տվող կետը:
  - 3) այն մարմինը, որի չափերը տվյալ պայմաններում կարելի է անտեսել:
  - 4) այն մարմինը, որի զանգվածը կարելի է անտեսել:
3. Առաջին խնդրում հաշվարկվում է 5 մ շառավիզով գնդի վրա Երկրի ազդող գրավիտացիոն ձգողության ուժը, իսկ Երկրորդում՝ ջրի մեջ 5 սմ շառավիզ գնդի վրա ազդող արքիմենյան ուժը: Ո՞ր խնդրում գունդը կարելի է համարել նյութական կետ:
  - 1) Միայն առաջին խնդրում:
  - 2) Միայն Երկրորդ խնդրում:
  - 3) Երկու խնդրում էլ:
  - 4) Ոչ մի խնդրում:
4. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:  
**Երկու վեկտորները հավասար են, եթե...**
  - 1) հավասար են նրանց մոդուլները:
  - 2) համուլլված են:
  - 3) մոդուլները հավասար են և համուլլված են:
  - 4) մոդուլները հավասար են և հակուլված են:

5. Նյութական կետը շարժվում է  $XOY$  հարթության մեջ: Ո՞ր բանաձևերն են ճիշտ արտահայտում նյութական կետի դիրքը բնութագրող շառավիղ-վեկտորի մոդուլի ու նրա  $x$  և  $y$  կոորդինատների կապը ( $r$ -ը շառավիղ-վեկտորի մոդուլն է,  $\varphi$ -ն՝  $OX$  առանցքի հետ նրա կազմած անկյունը):

$$1) \quad r = x + y, \quad \varphi = \frac{x}{y};$$

$$3) \quad r = \sqrt{x^2 + y^2}, \quad \varphi = \frac{y}{x};$$

$$2) \quad r = x + y, \quad \operatorname{tg} \varphi = \frac{x}{y};$$

$$4) \quad r = \sqrt{x^2 + y^2}, \quad \operatorname{tg} \varphi = \frac{y}{x};$$

6. Ի՞նչն են անվանում հաշվարկման մարմին:

- 1) Կամայական անշարժ մարմինը:
- 2) Մարմինը, որի նկատմամբ դիտարկվում են այլ մարմինների դիրքերը:
- 3) Մարմինը (օրինակ՝ Երկիրը), որի մակերևույթին շարժվում են դիտարկվող մարմինները:
- 4) Բավականաշափ մեծ չափեր ունեցող մարմինը:

7. Հաշվարկման ո՞ր համակարգը նկատի ունենք, եթե ասում ենք, որ Երկրի վրա ցերեկվա և գիշերվա հերթագայությունը պայմանավորված է արևածագով և արևամուտով:

- 1) Արեգակին կապված հաշվարկման համակարգը:
- 2) Երկրին կապված հաշվարկման համակարգը:
- 3) Աստղերին կապված հաշվարկման համակարգը:
- 4) Արեգակնային համակարգի մոլորակներին կապված հաշվարկման համակարգերը:

8. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Նյութական կետի շարժման հետազիծ կոչվում է...

- 1) նրա սկզբնական և վերջնական դիրքերը միացնող ուղղի հատվածը:
- 2) նրա սկզբնական և վերջնական դիրքերը միացնող հատվածի երկարությունը:
- 3) նրա սկզբնական և վերջնական դիրքերը միացնող վեկտորը:
- 4) այն կետերի բազմությունը, որոնցով տվյալ հաշվարկման համակարգում հաջորդաբար անցնում է նյութական կետը շարժման ընթացքում:

9. Մարմինը շարժվում է պտտվող սկավառակի շառավղի երկայնքով:  
Հաշվարկման ո՞ր համակարգում է նրա հետազիծն ուղիղ գիծ:

- 1) Մարմնի հետ կապված համակարգում:

- 2) Սկավառակի հետ կապված համակարգում:
- 3) Երկրի պտտման առանցքի հետ կապված համակարգում:
- 4) Սենյակի հետ կապված համակարգում:

**10. Ո՞րն է նախադասության սխալ շարունակությունը:**

Մարմնի շարժումը համընթաց է, եթե ...

- 1) նրա բոլոր կետերը շարժվում են միատեսակ:
- 2) նրա կամայական երկու կետերը միացնող ուղիղը շարժման ընթացքում մնում է ինքն իրեն զուգահեռ:
- 3) նրա բոլոր որևէ ժամանակամիջոցում անցնում են նույն ճանապարհը:
- 4) նրա բոլոր կետերը շարժվում են նույն շառավիղն ունեցող շրջանագծերով:

**11. Ի՞նչ է նյութական կետի հետազիծը, եթե նրա շարժումը նկարագրվում է  $x = 2t$ ,  $y = 4 + t^2$  հավասարումներով:**


- |               |                                 |
|---------------|---------------------------------|
| 1) Պարաբոլ:   | 3) Շրջանագիծ:                   |
| 2) Ուղիղ գիծ: | 4) Կարող է լինել կամայական կոր: |

**12. Ո՞րն պնդումն է սխալ:**

- 1) Որևէ ժամանակամիջոցում մարմնի անցած ճանապարհ կոչվում է այդ ժամանակամիջոցում հետազծի երկայնքով նարմնի անցած հեռավորությունը:
- 2) Ճանապարհը վեկտորական մեծություն է:
- 3) Ճանապարհի միավորը ՄՀ-ում 1 մ-ն է:
- 4) Մարմնի անցած ճանապարհը ժամանակի ընթացքում չի նվազում:

**13. Ավտոմեքենան կատարում է ճախ շրջադարձ: Այդ դեպքում ավտոմեքենայի աջ և ձախ անիվներից ո՞րն է ավելի մեծ ճանապարհ անցնում:**

- 1) Աջ անիվը:
- 2) Ձախ անիվը:
- 3) Երկու անիվներն ել կանցնեն միևնույն ճանապարհը:
- 4) Հարցը միանշանակ պատասխան չունի:



**14. Նկարում պատկերված է մարմնի անցած ճանապարհի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է 8 ժամում նրա անցած ճանապարհը:**

- 1) 8 կմ:                  3) 400 կմ:  
 2) 100 կմ:                4) 500 կմ:


15. Ո՞ր քանածնն է ճիշտ արտահայտում մարմնի տեղափոխության  $S_x$  պրոյեկցիայի և նրա սկզբնական  $x_0$  ու վերջնական  $x$  կոորդինատների կապը:

- 1)  $S_x = x_0 + x$ :                  3)  $S_x = x - x_0$ :  
 2)  $S_x = x_0 - x$ :                4)  $S_x = |x - x_0|$ :

16. Գետնից  $h$  քարձրությամբ պատուհանից հորիզոնական ուղղությամբ նետված քարը գետին ընկալ շենքի պատից  $l$  հեռավորության վրա:  
 Որքա՞ն է քարի տեղափոխության մոդուլը:

- 1)  $h$ :                          3)  $\sqrt{hl}$  :  
 2)  $l$ :                            4)  $\sqrt{h^2 + l^2}$  :

17. Նյութական կետը  $R$  շառավղով շրջանագծով շարժվելիս  $A$  կետից տեղափոխվել է  $B$  կետ ( $\alpha = \pi/2$ ):  
 Որքա՞ն է նրա տեղափոխության մոդուլը:



- 1)  $0,5\pi R$ :                    3)  $1,5\pi R$  :  
 2)  $R\sqrt{2}$ :                    4)  $2R$  :

18. Ինչպիսի՞ շարժման դեպքում են հավասար մարմնի անցած ճանապարհը և տեղափոխության մոդուլը:

- 1) Միայն հավասարաչափ շարժման դեպքում:  
 2) Միայն միակողմ ուղղագիծ շարժման դեպքում:  
 3) Միայն ուղղագիծ հավասարաչափ շարժման դեպքում:  
 4) Բոլոր դեպքերում:

19. Ֆուտբոլիսն ամրող խաղի ընթացքում վագել է 15 կմ: Դա նրա...

- 1) անցած ամրող ճանապարհն է:  
 2) կատարած ամրող տեղափոխությունն է:  
 3) կատարած ամրող տեղափոխության մոդուլն է:  
 4) նրա սկզբնական և վերջնական դիրքերի հեռավորությունն է:

20. Նկարում պատկերված են հորիզոնական հարթ մակերևույթով շարժվող կարողիկով սայլակի հետքերը: Ո՞ր դեպքում է սայլակը շարժվում հավասարաչափ:

- 1) ա դեպքում:

ա. 

•	•	•	•	•	•	•	•
---	---	---	---	---	---	---	---

բ. 

•	•	•	•	•	•	•
---	---	---	---	---	---	---

գ. 

•	•	•	•	•	•	•	•
---	---	---	---	---	---	---	---

- 2) բ դեպքում:
- 3) գ դեպքում:
- 4) Նշված բոլոր դեպքերում:

**21. Հայտնի է, որ մարմինը յուրաքանչյուր ժամում նույն ուղղությամբ կատարում է 30 կմ տեղափոխություն: Կարելի՞ է պնդել, որ այն կատարում է ուղղագիծ հավասարաչափ շարժում:**

- 1) Այո, քանի որ մարմինը շարժվում է ուղիղ գծով:
- 2) Այո, քանի որ մարմինը շարժվում է հաստատուն 30 կմ/ժ արագությամբ:
- 3) Ոչ, քանի որ թերված պայմանից չի հետևում, որ կամայական հավասար ժամանակամիջոցներում մարմինը կատարում է հավասար տեղափոխություններ:
- 4) Այո, քանի որ յուրաքանչյուր ժամում անցնում է 30 կմ:

**22. Ո՞րն է նախադասության սխալ շարունակությունը:**

**Ուղղագիծ հավասարաչափ շարժման արագությունը...**

- 1) հավասար է որևէ ժամանակամիջոցում կատարված տեղափոխության և այդ ժամանակամիջոցի հարաբերությանը:
- 2) թվապես հավասար է միավոր ժամանակամիջոցում կատարած տեղափոխության մոդուլին:
- 3) մոդուլը հավասար է որևէ ժամանակամիջոցում անցած ճանապարհի և այդ ժամանակամիջոցի հարաբերությանը:
- 4) փոխում է իր ուղղությունը:

**Ինչպե՞ս է փոխվում մարմնի արագությունն ուղղագիծ հավասարաչափ շարժման ժամանակ:**

- 1) Ուղրությունը մնում է հաստատուն, իսկ մոդուլն անընդհատ մեծանում է:
- 2) Ուղղությունն անընդհատ փոփոխվում է, իսկ մոդուլը մնում է հաստատուն:
- 3) Ուղղությունը և մոդուլը մնում են հաստատուն:
- 4) Փոխվում են ուղղությունը և մոդուլը:

**24. Ի՞նչ է ցույց տալիս հավասարաչափ շարժման ճանապարհային արգությունը:**


- 1) Միավոր ժամանակում մարմնի կատարած տեղափոխությունը:
- 2) Կամայական ժամանակում մարմնի անցած ճանապարհը:
- 3) Միավոր ժամանակում մարմնի անցած ճանապարհը:
- 4) Բոլոր պատասխանները ճիշտ են:

25. Դելֆինի արագությունը՝  $v_1 = 72$ կմ/ժ, նապաստակինը՝  $v_2 = 20$ մ/վ, իսկ հաղորդալարում էլեկտրոնների ուղղորդված շարժման արագությունը՝  $v_3 = 0,6$  սմ/րոպե: Համեմատել այդ արագությունները:

- 1)  $v_1 > v_2 > v_3$ :      3)  $v_3 > v_1 = v_2$ :  
 2)  $v_2 > v_3 = v_1$ :      4)  $v_1 = v_2 > v_3$ :


26. Նկարում պատկերված է մարմնի շարժման արագության մոդուլի՝ ժամանակից կախումն արտահայտող չորս գրաֆիկ: Ո՞ր գրաֆիկի դեպքում մարմնի արագության մոդուլը ժամանակի  $t = 1$  վ պահին ունի ամենափոքր արժեքը:

- 1)  $w$ :      3)  $q$ :  
 2)  $p$ :      4)  $\eta$ :




27. Ըստ  $X$  առանցքի վրա նյութական կետի կոորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող նկարում պատկերված գրաֆիկի՝

- 1) նյութական կետը դադարի վիճակում է:  
 2) նյութական կետը  $X$  առանցքով շարժվում է հավասարաչափ:  
 3) նյութական կետը սկզբնական արագությամբ կատարում է հավասարաչափ արագացող շարժում:  
 4) նյութական կետն առանց սկզբնական արագության կատարում է հավասարաչափ արագացող շարժում:



28. Նկարում պատկերված են  $X$  առանցքով շարժվող երկու մարմնների կոորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկները: Ո՞ր պնդումն է ճիշտ:


- 1) A և B մարմինները հանդիպել են ժամանակի հաշվարկման սկզբնական պահից 2 վ հետո:  
 2) A և B մարմինները մինչ հանդիպելն անցել են 4 մ ճանապարհ:  
 3) A և B մարմինները չեն հանդիպել:



4) Խնդրի պայմանները բավարար չեն միարժեք դատողություն անելու համար:

29. Նկարում պատկերված է ուղղագիծ հավասարաչափ շարժվող մարմնի անցած ճանապարհի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է նրա արագության մոդուլը:

- 1) 500 կմ/ժ:      3) 50 կմ/ժ:  
2) 200 կմ/ժ:      4) 10 կմ/ժ:




30. Որքա՞ն է ուղղագիծ հավասարաչափ շարժվող հեծանվորոջի արագության  $v_x$  ալրոյթեցիան, եթե նրա կոռորդինատը  $t$  ժամանակամիջոցում փոխվեց  $x_0$ -ից մինչև  $x$ :

- 1)  $\frac{x - x_0}{t}$ :      3)  $\frac{x + x_0}{t}$ :  
2)  $\frac{x_0 - x}{t}$ :      4)  $\frac{\sqrt{x_0^2 + x^2}}{t}$ :


31. Նկարում պատկերված է մարմնի կոռորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն են նրա սկզբնական կոռորդինատը և արագության  $v_x$  արոյթեցիան:

- 1) 4 մ, 1,6 մ/վ:  
2) 12 մ, 0,2 մ/վ:  
3) 12 մ, 16 մ/վ:  
4) 4 մ, 5 մ/վ:




32. Նկարում պատկերված է հեծանվորոջի անցած ճանապարհի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է հեծանվորոջի անցած ճանապարհը  $t_1 = 1$ -ից մինչև  $t_2 = 3$  վ ժամանակամիջոցում:

- 1) 3 մ:      3) 9 մ:  
2) 6 մ:      4) 12 մ:




33. Նկարում պատկերված է ուղղագիծ շարժվող մարմնի տեղափոխության մոդուլ՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ինչպիսի՞ն է մարմնի շարժման բնույթը:

- 1) OP տեղամասում հավասարաչափ արագացող է, PQ տեղամասում՝ հավասարաչափ:
- 2) OP տեղամասում հավասարաչափ է, PQ տեղամասում արագությունը զրո է:
- 3) OP տեղամասում հավասարաչափ է, PQ տեղամասում՝ հավասարաչափ արագացող:
- 4) OP տեղամասում հավասարաչափ արագացող է, PQ տեղամասում արագությունը զրո չէ:




34. Նկարում պատկերված է X առանցքով շարժվող մարմնի կոորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Համեմատել մարմնի  $v_1$ ,  $v_2$  և  $v_3$  արագությունները ժամանակի  $t_1$ ,  $t_2$  և  $t_3$  պահերին:

- 1)  $v_1 < v_2 < v_3$ :
- 2)  $v_1 > v_2 > v_3$ :
- 3)  $v_1 = v_2$ ,  $v_3 = 0$ :
- 4)  $v_1 = v_2 = v_3$ :




35. Նկարում պատկերված է ուղղագիծ շարժվող մարմնի արագության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է տեղափոխության  $s_x$  պրոյեկցիան շարժման առաջին 10 վում:

- 1) -1 մ:
- 2) 1 մ:
- 3) 6 մ:
- 4) 13 մ:



36. x կոորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկի ո՞ր հատվածն է համապատասխանում արագության  $v_x$  պրոյեկցիայի մոդուլի ամենամեծ արժեքին:


- 1) ω:
- 3) φ:




2) բ:                  4) դ:

37. Նկարում պատկերված է նյութական կետի կոորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Գրել գրաֆիկին համապատասխանող շարժման բանաձևը:

- 1)  $x(t) = 2,5 + 2,5t$ :
- 2)  $x(t) = -2,5 + 2,5t$ :
- 3)  $x(t) = 2,5 - 2,5t$ :
- 4)  $x(t) = -2,5 - 2,5t$ :




38. Տրված գրաֆիկներից որո՞նք են համապատասխանում  $X$  առանցքով ուղղագիծ հավասարաչափ շարժմանը:



- 1) ա-ն և դ-ն:
- 2) բ-ն և զ-ն:
- 3) ա-ն և գ-ն:
- 4) բ-ն և դ-ն:

39. Ստորև պատկերված գրաֆիկի ո՞ր տեղանասն է համապատասխանում  $X$  առանցքի ուղղությամբ նյութական կետի ուղղագիծ հավասարաչափ շարժմանը:

- 1) ա:
- 2) բ:
- 3) զ:
- 4) դ:



40. Ուղղագիծ հավասարաչափ շարժում կատարող հետիոտնը  $t_1$  ժամանակում անցավ  $s_1$  ճանապարհ: Ի՞նչ ճանապարհ նա կանցնի  $t_2$  ժամանակում՝ շարժվելով նոյն արագությամբ:

- 1)  $\frac{s_1 t_1}{t_2} :$
- 2)  $\frac{s_1 t_2}{t_1} :$
- 3)  $\frac{t_1}{s_1 t_2} :$
- 4)  $\frac{t_2}{s_1 t_1} :$

- 41.** Մարմնի կոռորդինատների կախումը ժամանակից արտահայտվում է  $x = 5 + 3t$  և  $y = -4t$  հավասարումներով, որտեղ մեծությունները ներկայացված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է նրա արագության մոդուլը:
- 1) 3,5 մ/վ:                    3) 7 մ/վ:
  - 2) 5 մ/վ:                    4) 12 մ/վ:
- 42.** Ո՞ր մարմնի նկատմամբ է շարժվում շարժվող գնացքի վազոնում սեղանին դրված գիրքը:
- 1) Սեղանի:                    3) Ուկսերի:
  - 2) Վազոնի հատակի:                    4) Անշարժ նստած ուղևորի:
- 43.** Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:
- Համաձայն արագությունների գումարման կանոնի՝ հաշվարկման անշարժ համակարգի նկատմամբ մարմնի արագությունը հավասար է...
- 1) շարժվող համակարգի նկատմամբ մարմնի արագության և անշարժ համակարգի նկատմամբ շարժվող համակարգի արագության վեկտորական գումարին:
  - 2) անշարժ համակարգի նկատմամբ մարմնի արագության և շարժվող համակարգի արագության վեկտորական գումարին:
  - 3) շարժվող համակարգի նկատմամբ մարմնի արագության և շարժվող համակարգի արագության տարբերությանը:
  - 4) Ոչ մեկը ճիշտ չէ:
- 44.** Տրված հաշվարկման համակարգի նկատմամբ երկու մարմիններ շարժվում են համապատասխանաբար  $\vec{v}_1$  և  $\vec{v}_2$  արագություններով: Ո՞ր արտահայտությամբ է որոշվում առաջին մարմնի արագությունը երկրորդի նկատմամբ:
- 1)  $\vec{v}_1 - \vec{v}_2$  :
  - 2)  $\vec{v}_1 + \vec{v}_2$  :
  - 3)  $\vec{v}_2 - \vec{v}_1$  :
  - 4)  $v_1 + v_2$  :
- 45.** Երկու մարմիններ շարժվում են նույն ուղղությամբ՝ մոդուլով հավասար  $v$  արագություններով: Որքա՞ն է նրանց հարաբերական արագության մոդուլը:
- 1) 0 :
  - 2)  $v$  :
  - 3)  $v\sqrt{2}$  :
  - 4)  $2v$  :
- 46.** Երկու ավտոմեքենա նույն  $\vec{v}$  արագությամբ շարժվում են ուղղագիծ ճանապարհով: Որքա՞ն է առաջին մեքենայի արագությունը երկրորդի նկատմամբ:
- 1) 0:
  - 3)  $2\vec{v}$  :

2)  $\vec{v}$ :

4)  $-\vec{v}$ :

47. Երկու մարմիններ շարժվում են մոդուլով հավասար  $v$  արագություններով այնպես, որ արագությունների վեկտորները միմյանց հետ կազմում են  $60^\circ$  անկյուն: Որքա՞ն է նրանց հարաբերական արագության մոդուլը:

1)  $v$ :

3)  $v\sqrt{3}$ :

2)  $v\sqrt{2}$ :

4)  $2v$ :

48. Մետրոյի շարժասանդուղքը գետնի նկատմամբ վեր է բարձրանում 1 մ/վ արագությամբ: Կարելի է ասել, որ մարդը շարժասանդուղքի վրա Երկրի նկատմամբ դադարի վիճակում է:

- 1) Այո, եթե նա շարժասանդուղքի նկատմամբ հակառակ ուղղությամբ շարժվում է 1 մ/վ արագությամբ:
- 2) Այո, եթե նա շարժասանդուղքի նկատմամբ նույն ուղղությամբ շարժվում է 1 մ/վ արագությամբ:
- 3) Այո, եթե նա դադարի վիճակում է շարժասանդուղքի նկատմամբ:
- 4) Ոչ:

49. Ո՞ր դեպքում  $\vec{v}_1$  և  $\vec{v}_2$  արագություններով շարժվող ավտոմեքենաների հարաբերական արագության մոդուլը կընթանի իր առավելագույն արժեքը:

- 1) Երբ դրանք շարժվում են նույն ուղղությամբ:
- 2) Երբ դրանք շարժվում են հակառակ ուղղություններով:
- 3) Երբ դրանց արագությունների վեկտորները կազմում են սուր անկյուն:
- 4) Երբ դրանց արագությունների վեկտորները կազմում են բութ անկյուն:

50. Լողորդը հոսանքի ուղղությամբ լողում է գետում: Որոշել նրա արագությունը ափի նկատմամբ, եթե ջրի նկատմամբ նրա արագությունը  $\vec{v}_1$  է, իսկ հոսանքի արագությունը՝  $\vec{v}_2$ :

1)  $v_1 - v_2$ :

3)  $\sqrt{v_1^2 + v_2^2}$ :

2)  $v_1 + v_2$ :

4)  $\sqrt{v_1^2 - v_2^2}$ :

51. Հեծանվորդը և ավտոմեքենան շարժվում են ուղիղ անկյան տակ հատվող ճանապարհներով: Հեծանվորդի արագությունը  $\vec{v}_1$  է, իսկ ավտոմեքենայինը՝  $\vec{v}_2$ : Որքա՞ն է ավտոմեքենայի հարաբերական արագության մոդուլը հեծանվորդի նկատմամբ:

1)  $v_1 - v_2$ :

3)  $\sqrt{v_1^2 + v_2^2}$ :

$$2) \quad v_1 + v_2 : \quad 4) \quad \sqrt{v_1^2 - v_2^2} :$$

**52. Ըստ Պոտոմեոսի՝ Արեգակը պտտվում է Երկրի շորջը, իսկ ըստ Կոպենիկոսի՝ Երկիրն է պտտվում Արեգակի շորջը: Ձեր կարծիքով՝ ո՞ր պեղումն է ճիշտ:**

- 1) Ճիշտ է Պոտոմեոսի պնդումը, քանի որ միշտ տեսնում ենք, որ Արեգակն է շարժվում երկնակամարտում:
- 2) Երկու պնդումներն ել ճիշտ չեն, քանի որ դրանք փորձով չեն ստուգվել:
- 3) Երկու պնդումներն ել ճիշտ են, քանի որ երկու դեպքում էլ Երկրի և Արեգակի շարժումները դիտարկվում են հաշվարկման տարբեր համակարգերում:
- 4) Ճիշտ է Կոպենիկոսի պնդումը, քանի որ այն ավելի ժամանակակից է:

**53. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:**

**Ուղղագիծ անհավասարաշափ շարժման ժամանակ ...**

- 1) Կամայական հավասար ժամանակամիջոցներում մարմինն անցնում է հավասար ճանապարհներ:
- 2) Կամայական հավասար ժամանակամիջոցներում մարմինը կատարում է միատեսակ տեղափոխություններ:
- 3) Մարմնի արագությունը հաստատում մեծություն է:
- 4) Գոնե երկու հավասար ժամանակամիջոցներում մարմինը կատարում է անհավասար տեղափոխություններ:


**54. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:**

**Ակնթարքային արագության վեկտորը միշտ ուղղված է ...**

- 1) տեղափոխության ուղղությամբ:
- 2) արագացման ուղղությամբ:
- 3) տվյալ կետում շարժման հետագծին տարված շոշափողի երկայնքով:
- 4) շառավիղ վեկտորի ուղղությամբ:

**55. Ինչպե՞ս է փոխվում մարմնի արագությունը կորագիծ անհավասարաշափ շարժման ժամանակ:**

- 1) Ուղղությունը և մոդուլը չեն փոխվում:
- 2) Մոդուլը մնում է հաստատուն, ուղղությունը փոխվում է:
- 3) Ուղղությունը մնում է հաստատուն, մոդուլը փոխվում է:
- 4) Փոխվում է և ուղղությունը, և մոդուլը:




56. Նկարում պատկերված է սայլակի արագության մոդուլը՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր պահին է սայլակը դադարի վիճակում:

- |         |         |
|---------|---------|
| 1) 0 վ: | 3) 3 վ: |
| 2) 2 վ: | 4) 6 վ: |

57. Նկարում պատկերված ուղղաձիգ պատին հենված աստիճանի հիմքը սահում է հորիզոնական հատակի վրայով:

Ինչպիսի՞ն է ձևի A և B ծայրակետերի  $\vec{v}_A$  և  $\vec{v}_B$  արագությունների մոդուլների հարաբերությունն այն պահին, երբ աստիճանի և պատի կազմած անկյունը  $\alpha$  է:



- |                    |                                  |
|--------------------|----------------------------------|
| 1) $\sin \alpha$ : | 3) $\operatorname{tg} \alpha$ :  |
| 2) $\cos \alpha$ : | 4) $\operatorname{ctg} \alpha$ : |

58. Մարմինը պտտվում է  $R$  շառավղով շրջանագծով: Որքա՞ն է նրա միջին արագության մոդուլը կես պտույտ կատարելիս, եթե դրա համար պահանջվում է  $t$  ժամանակ:


- |                         |                     |
|-------------------------|---------------------|
| 1) $\frac{2\pi R}{t}$ : | 3) $\frac{2R}{t}$ : |
| 2) $\frac{\pi R}{t}$ :  | 4) 0:               |

59. Ո՞ր դեպքում է խոսքը ճանապարհային միջին արագության մասին:

- Ավտոմեքենայի արագաչափը ցույց է տալիս 60 կմ/ժ:
- Հասնելով բնակավայրին՝ վարորդը ավտոմեքենայի արագությունը փոփրացրեց մինչև 50 կմ/ժ:
- Ավտոբուսը Երևանից Արտաշատ ճանապարհն անցավ 70 կմ/ժ արագությամբ:
- Ավտոմեքենայի արագությունն աճեց մինչև 100 կմ/ժ:

60. Գրաֆիկում պատկերված է մարմնի արագության մոդուլի կախումը ժամանակից: Որքա՞ն է մարմնի միջին ճանապարհային արագությունը:

- |                       |                       |
|-----------------------|-----------------------|
| 1) $2v_0$ :           | 3) $\frac{3}{4}v_0$ : |
| 2) $\frac{3}{2}v_0$ : | 4) $\frac{1}{3}v_0$ : |



61. Նյութական կետը շարժման ամբողջ ժամանակի առաջին կետում շարժվում է  $v_1$  արագությամբ, իսկ երկրորդ կետում՝  $v_2$  արագությամբ: Որքա՞ն է նյութական կետի միջին ճանապարհային արագությունն ամբողջ ժամանակում:

$$1) \frac{v_1 + v_2}{2} :$$

$$3) \frac{v_1 v_2}{v_1 + v_2} :$$

$$2) \sqrt{v_1 v_2} :$$

$$4) \frac{2v_1 v_2}{v_1 + v_2} :$$

62. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Ուղղագիծ հավասարաչափ փոփոխական կոչվում է այն շարժումը, որի ժամանակ...

- 1) մարմնի արագությունը կամայական հավասար ժամանակամիջոց-ներում փոփոխում է նույն չափով:
- 2) մարմնի արագության մողուլն անընդհատ աճում է:
- 3) մարմնի արագության մողուլն անընդհատ նվազում է:
- 4) մարմնի արագության մողուլն սկզբում աճում է, իսկ հետո նվազում:

63. Նշված բանաձևերից ո՞րն է արտահայտում արագացման սահմանումը:

$$1) a = \frac{v^2}{R} :$$

$$3) \ddot{a} = \frac{\Delta \vec{v}}{\Delta t} :$$

$$2) a = \frac{v^2}{2S} :$$

4) Նշված բոլոր բանաձևերը:

64. Ուղղագիծ հավասարաչափ փոփոխական շարժման ժամանակ ո՞ր մեծությունը չի փոխվում:

- 1) Արագությունը:
- 2) Տեղափոխությունը:
- 3) Արագացումը:
- 4) Անցած ճանապարհը:

65. Ո՞ր ֆիզիկական մեծությունը միավորների ՄՀ-ում ունի  $\text{մ}/\text{վ}^2$  չափայնություն:

- 1) Արագությունը:
- 2) Տեղափոխությունը:
- 3) Արագացումը:
- 4) Անկյունային արագությունը:

66. Ճանապարհի հորիզոնական տեղամասում ավտոմեքենան արգելակում է: Ինչպես է ուղղված նրա արագացումը:

- 1) Արագացումը զրո է:


- 2) Շարժման ուղղությամբ:  
 3) Շարժմանը հակառակ ուղղությամբ:  
 4) Ուղղաձիգ դեպի ներքև:

67. Հեծանվորդն ու հետիոտնը դադարի վիճակից միաժամանակ սկսում են կատարել ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում: Հեծանվորդի արագացումը 2 անգամ մեծ է հետիոտնի արագացումից: Հեծանվորդը որոշակի  $t$  ժամանակամիջոցում ձեռք է բերում  $v$  արագություն: Որքա՞ն ժամանակում հետիոտնը ձեռք կբերի նույն արագությունը:

- 1)  $t$ :                   3)  $2t$ :  
 2)  $\sqrt{t}$ :               4)  $4t$ :


68. Նկարում պատկերված է ուղղագիծ շարժվող ավտոմեքենայի արագության մոդուլի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է ավտոմեքենայի արագացման մոդուլը:

- 1)  $1 \text{ m/s}^2$ :           3)  $6 \text{ m/s}^2$ :  
 2)  $4 \text{ m/s}^2$ :           4)  $16 \text{ m/s}^2$ :





69. Նկարում պատկերված է ուղղագիծ շարժվող մարմնի արագության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է նրա արագացման  $a_x$  արոյեկցիան:

- 1)  $3 \text{ m/s}^2$ :           3)  $1,5 \text{ m/s}^2$ :  
 2)  $-3 \text{ m/s}^2$ :          4)  $-1,5 \text{ m/s}^2$ :



70. Նկարում պատկերված է  $X$  առանցքով շարժվող մարմնի արագության  $v_x$  արոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ո՞րն է այդ շարժման արագացման  $a_x$  արոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը:





- 1) а:                    3) q:  
2) p:                    4) η:

71. Ո՞րն է X առանցքով հավասարաչափ փոփոխական շարժում կատարող նյութական կետի տեղափոխության պրոյեկցիայի որոշման սխալ բանաձևը:

- 1)  $S_x = \frac{v_x^2 - v_{0x}^2}{2a_x}$ :                    3)  $S_x = \frac{v_x + v_{0x}}{2}t$ :  
2)  $S_x = v_{0x}t + \frac{a_x t^2}{2}$ :                    4)  $S_x = v_x t$ :

72. Ուղղագիծ շարժվող մարմնի արագությունը  $t$  ժամանակամիջոցում  $\vec{v}_1$ -ից հավասարաչափ աճում է մինչև  $\vec{v}_2$ -ը: Ո՞ր բանաձևով է որոշվում մարմնի միջին արագությունն այդ լուրացքում:

- 1)  $\vec{v}_{\text{միջ}} = \frac{\vec{v}_2 - \vec{v}_1}{2}$ :                    3)  $\vec{v}_{\text{միջ}} = \frac{\vec{v}_2 + \vec{v}_1}{2}$ :  
2)  $\vec{v}_{\text{միջ}} = \frac{\vec{v}_2 + \vec{v}_1}{t}$ :                    4)  $\vec{v}_{\text{միջ}} = \frac{v_2^2 - v_1^2}{2}$ :

73. Փորձից պարզվեց, որ իրար հաջորդող կամայական հավասար ժամանակահատվածներում ուղղագիծ շարժվող մարմնի կատարած տեղափոխությունների նորությունը հարաբերում են ինչպես կենտ քվերը: Ինչպիսի՞ շարժում է կատարում այդ մարմինը:


- 1) Ուղղագիծ հավասարաչափ:  
2) Առանց սկզբնական արագության՝ ուղղագիծ հավասարաչափ արագացող:  
3) Սկզբնական արագությամբ՝ ուղղագիծ հավասարաչափ արագացող:  
4) Մարմնի արագության մոդուլն անընդհատ նվազում է:

74. X առանցքով շարժվող մարմնի տեղափոխության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումը ներկայացվում է  $S_x = 40t - 0,1t^2$  բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ժամանակի ո՞ր պահին մարմինը կանգ կառնի:

- 1)  $t = 100$  վ:      3)  $t = 400$  վ:  
2)  $t = 200$  վ:      4)  $t = 800$  վ:


75. Նկարում պատկերված է X առանցքով շարժվող նյութական կետի արագության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է տեղափոխության մոդուլն առաջին 3 վում:

- 1) 0:      3) 10 մ:  
2) 5 մ:      4) 15 մ:



76. Նկարում պատկերված է X առանցքով շարժվող նյութական կետի արագության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է նրա անցած ճանապարհը  $t = 6$  վայրկյանում:

- 1) 10 մ:      3) 20 մ:  
2) 12 մ:      4) 24 մ:



77. Ստորև բերված բանաձևերից ո՞րն է արտահայտում մեխանիկայի հիմնական խնդրի լուծումը հավասարաշափ փոփոխական շարժման համար:

- 1)  $\vec{r} = \vec{r}_0 + \vec{v}t$ :      3)  $\vec{v} = \vec{v}_0 + \vec{a}t$ :  
2)  $\vec{r} = \vec{r}_0 + \vec{v}_0 t + \frac{\vec{a}t^2}{2}$ :      4)  $\vec{s} = \vec{v}_{\text{նհ}} t$ :

78. Նյութական կետի շարժման  $x = 3 + 5t + t^2$  հավասարման մեջ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է նրա արագացման  $a_x$  պրոյեկցիան:

- 1)  $1 \text{ m/s}^2$ :      3)  $3 \text{ m/s}^2$ :  
2)  $2 \text{ m/s}^2$ :      4)  $5 \text{ m/s}^2$ :

79. Ի՞նչ տեսք ունի X առանցքով ուղղագիծ հավասարաշափ արագացող շարժում կատարող մարմնի x կոորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը:


- 1) Կոռրդինատների սկզբնակետով անցնող և ժամանակի առանցքի հետ որևէ անկյուն կազմող ուղիղ գիծ է:
- 2) Ժամանակի առանցքին գուգահեռ ուղիղ գիծ է:
- 3) Պարաբոլ է:
- 4) Հիպերբոլ է:

80. Մարմինը կատարում է ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում: Հետազօնի իրար հաջորդող երկու հավասար տեղամասերից որո՞ւմ մարմնի արագության փոփոխությունը կլինի ավելի մեծ:

- 1) Առաջին տեղամասում:
- 2) Երկրորդ տեղամասում:
- 3) Երկու տեղամասերում էլ կլինի նույնը:
- 4) Պատասխանը կախված է սկզբնական արագությունից:


81. Նկարում պատկերված է դադարի վիճակից ուղղագիծ շարժում կատարող մարմնի արագացման  $a_x$  պրոյեկցիայի կախումը  $t$  ժամանակից: Ժամանակի նշված ո՞ր պահին արագությունն ունի ավելի մեծ արժեք:

- 1)  $t_1$ :
- 2)  $t_3$ :
- 3)  $t_2$ :
- 4)  $t_4$ :



82. Նկարում պատկերված է  $X$  առանցքով շարժվող մարմնի կոռրդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ինչպես է փոխվում մարմնի արագության մոդուլը  $0$ -ից  $t_1$  ժամանակամիջոցում:

- 1) Ժամանակի ընթացքում չի փոխվում:
- 2) Աճում է:
- 3) Նվազում է:
- 4) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխան տալ:



83. Անօդ ուղղագիծ խողովակում ընկում են երկարե գնդիկը, խցանը և փետուրը: Ո՞ր մարմնի արագացումն է ավելի փոքր:

- 1) Երկարե գնդիկի:
- 2) Խցանի:
- 3) Փետուրի:
- 4) Բոլոր մարմինների արագացումները նույնն են:

84. Ո՞ր միավորով կարելի է չափել ազատ անկման արագացումը:

- |             |                           |
|-------------|---------------------------|
| 1) 1 կգմ/վ: | 3) 1 կգմ/վ <sup>2</sup> : |
| 2) 1 Նմ:    | 4) 1 Ն/կգ:                |

85. Դեպի ներքև ուղղված  $a$  արագացմամբ իջնող ուղղաթիռից դուրս նետած մարմինը Երկրի նկատմամբ ի՞նչ արագացմամբ կշարունակի իր շարժումը: Օդի դիմադրությունն անտեսել:

- |              |          |
|--------------|----------|
| 1) $a + g$ : | 3) $a$ : |
| 2) $a - g$ : | 4) $g$ : |

86. Մարմինը  $h_0$  բարձրությունից  $v_0$  սկզբնական արագությամբ նետվել է ուղղաձիգ դեպի ներքև: Ո՞ր բանաձևով կարելի է որոշել մարմնի հ բարձրությունը գետնից ժամանակի և պահին: Օդի դիմադրությունն անտեսել:

- |   |   |
|---|---|
| 1) $h = h_0 - v_0 t - \frac{gt^2}{2}$ : | 3) $h = h_0 + v_0 t + \frac{gt^2}{2}$ : |
| 2) $h = v_0 t + \frac{gt^2}{2}$ :       | 4) $h = h_0 - v_0 t + \frac{gt^2}{2}$ : |

87. Ինչպես կփոխսվեն ուղղաձիգ դեպի վեր նետված մարմնի թռիչքի առավելագույն բարձրությունը և վերելքի ժամանակը, եթե նետման արագությունը մեծացնենք 2 անգամ: Օդի դիմադրությունն անտեսել:


- 1) Բարձրությունը կմեծանա 4 անգամ, իսկ ժամանակը կփոքրանա 4 անգամ:
- 2) Բարձրությունը կմեծանա 2 անգամ, իսկ ժամանակը կփոքրանա 2 անգամ:
- 3) Բարձրությունը կմեծանա 4 անգամ, իսկ ժամանակը կմեծանա 2 անգամ:
- 4) Բարձրությունը կմեծանա 2 անգամ, իսկ ժամանակը կփոքրանա 4 անգամ:

88. Զրի երկու կաթիճներ ծորակից պոկվում են մեկը մյուսի հետևից: Ինչպես կշարժվի երկրորդ կաթիլը առաջինի հետ կապված հաշվարկ-ման համակարգում: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Հավասարաչափ, դեպի վեր:
- 2) Հավասարաչափ, դեպի ներքև:
- 3) Կգտնվի դադարի վիճակում:
- 4) Հավասարաչափ արագացող, դեպի ներքև:


89. Նկարում պատկերված է ինչ-որ մոլորակի մակերևույթից դեպի վեր նետված մարմնի առավելագույն բարձրության կախումը սկզբնական արագությունից: Որքա՞ն է ազատ անկման արագացումն այդ մոլորակի մակերևույթին:

- 1)  $0,025 \text{ m/s}^2$ :      3)  $20 \text{ m/s}^2$ :  
2)  $0,05 \text{ m/s}^2$ :      4)  $40 \text{ m/s}^2$ :




90. Նկարում պատկերված է ուղղաձիգ դեպի վեր նետված մարմնի արագության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր պահին մարմնը կհասնի Երկրի մակերևույթին: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) 0 վ:      3) 4 վ:  
2) 2 վ:      4) 8 վ:



91. Ուղղաձիգ վեր արձակած նետի կոռուպինատի՝ ժամանակից կախումը պատկերված է գրաֆիկում, որի մի մասը չի երևում: Օգտվելով այդ գրաֆիկից՝ որոշեք նետի առավելագույն բարձրությունը: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) 120 մ:      3) 130 մ:  
2) 125 մ:      4) 140 մ:



92. Որքա՞ն է  $h$  բարձրությունից հորիզոնական ուղղությամբ  $v_0$  արագությամբ նետված մարմնի թուչքի հեռահարությունը: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1)  $v_0 \sqrt{\frac{2h}{g}}$ :      3)  $\frac{2h}{v_0}$ :  
2)  $\frac{v_0^2}{2g}$ :      4)  $\sqrt{\frac{2h}{g}}$ :

93. Աշտարակից առաջին մարմինը նետում են հորիզոնական ուղղությամբ  $v_0$  արագությամբ, միաժամանակ երկրորդ մարմինը պարզա-

այս բաց են թողնում: Դրանցից ո՞րն ավելի շուտ կհասնի գետնին:  
Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Առաջինը:                  3) Սիաժամանակ:  
2) Երկրորդը:                  4) Պատասխանը կախված է բարձրությունից:

94. Ինչպես կփոխվի  $h$  բարձրությունից հորիզոնական ուղղությամբ նետված մարմնի քոիչքի հեռահարությունը, եթե սկզբնական արագությունը մեծանա 2 անգամ: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Կմեծանա 2 անգամ:                  3) Կմեծանա 4 անգամ:  
2) Կփոքրանա 2 անգամ:                  4) Կփոքրանա 4 անգամ:

95. Մարմինը  $v_0$  արագությամբ նետել են հորիզոնական ուղղությամբ: Ո՞ր բանաձևն է ճիշտ արտահայտում նրա արագության նորուի կախումը ժամանակից: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1)  $v = v_0 + gt$ :                  3)  $v = \sqrt{v_0^2 + g^2 t^2}$ :  
2)  $v = v_0 - gt$ :                  4)  $v = \sqrt{v_0^2 - g^2 t^2}$ :

96. Ի՞նչ հետազծով է շարժվում հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետված մարմինը: Օդի դիմադրությունը հաշվի չառնել:

- 1) Շրջանագծային աղեղով:                  3) Ուղիղ գծով:  
2) Պարաբոլով:                  4) Հիպերբոլով:

97. Ինչպես կփոխվի հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետված մարմինի քոիչքի առավելագույն բարձրությունը, եթե մարմնի սկզբնական արագությունը մեծանա երկու անգամ: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Կմեծանա 2 անգամ:                  3) Կմեծանա 4 անգամ:  
2) Կփոքրանա 2 անգամ:                  4) Կփոքրանա 4 անգամ:

98. Ինչպես կփոխվի հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետված մարմնի քոիչքի հեռահարությունը, եթե մարմնի սկզբնական արագությունը մեծանա երկու անգամ: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Կմեծանա 2 անգամ:                  3) Կմեծանա 4 անգամ:  
2) Կփոքրանա 2 անգամ:                  4) Կփոքրանա 4 անգամ:

99. Որքա՞ն է հորիզոնի նկատմամբ նույն անկյան տակ  $v_0$  և  $3v_0$  արագություններով նետված մարմինների քոիչքի հեռահարությունների  $S_2 / S_1$  հարաբերությունը: Օդի դիմադրությունն անտեսել:


- 1) 27:                  3) 3:  
2) 9:                  4)  $\sqrt{3}$ :

100. Հորիզոնի նկատմամբ ի՞նչ անկյան տակ պետք է նետել մարմինը, որպեսզի տրված սկզբնական արագության դեպքում նրա քոչքի հեռահարությունը լինի առավելագույնը: Օդի դիմադրությունն անտեսել:
- 1)  $30^\circ$ :
  - 2)  $45^\circ$ :
  - 3)  $60^\circ$ :
  - 4)  $30^\circ$  կամ  $60^\circ$ :


101. Հորիզոնի նկատմամբ անկյան տակ 4 մ/վ սկզբնական արագությամբ նետված մարմնի արագությունը հետազծի ամենավերին կետում 2 մ/վ է: Հորիզոնի նկատմամբ ի՞նչ անկյան տակ է նետված մարմինը: Օդի դիմադրությունն անտեսել:
- 1)  $30^\circ$ :
  - 2)  $45^\circ$ :
  - 3)  $60^\circ$ :
  - 4)  $30^\circ$  կամ  $45^\circ$ :

102. Ինչպես է ուղղված հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետված մարմնի արագացումը հետազծի ամենավերին A կետում: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) ա պարի ուղղությամբ:
- 2) թ պարի ուղղությամբ:
- 3) զ պարի ուղղությամբ:
- 4) Արագացումը զրո է:



103. A և B մարմինները նետել են հորիզոնի նկատմամբ տարբեր անկյան տակ՝ տարբեր սկզբնական արագություններով, ինչպես ցույց է տրված նկարում: Թոփքի առավելագույն բարձրությունում ո՞ր մարմնի արագությունը կլինի ավելի մեծ: Օդի դիմադրությունն անտեսել:
- 1) A մարմնի:
  - 2) B մարմնի:
  - 3) Հավասար են:
  - 4) Հարցին հնարավոր չէ միանշանակ պատասխան տալ:




104. Ինչպես է փոխվում մարմնի արագությունը կորագիծ շարժման ժամանակ:
- 1) Ուղղությունը և մոդուլը չեն փոխվում:
  - 2) Ուղղությունը չի փոխվում, մոդուլը կարող է փոխվել:
  - 3) Ուղղությունը փոխվում է, մոդուլը կարող է փոխվել կամ մնալ հաստատուն:
  - 4) Ուղղությունը չի փոխվում, մոդուլը բոլոր դեպքերում հաստատուն է:

105. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

**Հրանագծային հավասարաչափ շարժում կոչվում է...**

- 1) այն հավասարաչափ շարժումը, որի հետագիծը շրջանագիծ է:
  - 2) այն շարժումը, որի հետագիծը շրջանագիծ է և մարմինը կամայական հավասար ժամանակամիջոցներում կատարում է հավասար տեղափոխություններ:
  - 3) այն շարժումը, որի դեպքում մարմնի արագության մողով մնում է հաստատուն:
  - 4) այն շարժումը, որի հետագիծը շրջանագիծ է, իսկ մարմնի արագությունը փոխվում է գծային օրենքով:
106. Մարմինը  $T$  պարբերությամբ սկսում է հավասարաչափ պտտվել շրջանագծով: Որքա՞ն ժամանակ անց նրա արագության վեկտորը կպտտվի  $270^0$ -ով:
- 1)  $\frac{T}{4}:$
  - 2)  $\frac{T}{2}:$
  - 3)  $\frac{3T}{4}:$
  - 4)  $T:$
107.  $\Omega^{\circ}$  պնդումն է սխալ:
- 1) Մեկ պտույտի տևողությունը կոչվում է պտտման պարբերություն:
  - 2) Միավոր ժամանակամիջոցում պտույտների թիվը կոչվում է հաճախություն:
  - 3) Պտտման պարբերության և հաճախության արտադրյալը մեկ է:
  - 4) Պտտման պարբերությունը մեծացնելիս նյութական կետի գծային արագությունը մեծանում է:
108. Մարմինը հավասարաչափ պտտվում է  $R$  շառավղով շրջանագծով: Որքա՞ն է նրա արագությունը, եթե պտտման հաճախությունը  $n$  է:
- 1)  $2\pi Rn:$
  - 2)  $\frac{2\pi R}{n}:$
  - 3)  $\frac{2\pi n}{R}:$
  - 4)  $\frac{R}{2\pi n}:$
109. Քանի՞ անգամ է ժամացույցի րոպեացույց սլաքի պտտման պարբերությունը փոքր ժամապաքի պտտման պարբերությունից:
- 1) 6:
  - 2) 12:
  - 3) 24:
  - 4) 25:
110. Ի՞նչ է ցույց տալիս հավասարաչափ շրջանագծային շարժում կատարող մարմնի անկյունային արագությունը:
- 1) Տվյալ ժամանակում շառավիղ վեկտորի գծած անկյունը:

- 2) Սիավոր ժամանակում մարմնի անցած ճանապարհը:  
 3) Սիավոր ժամանակում շառավիղ-վեկտորի գծած անկյունը:  
 4) Սիավոր ժամանակում մարմնի կատարած տեղափոխությունը:
111. AB ճողը պտտվում է հորիզոնական հարթության մեջ՝ նրա B ծայրով անցնող ուղղաձիգ առանցքի շուրջ: Համեմատել նրա A ծայրի և O միջնակետի գծային արագությունները:
- 1)  $\frac{v_A}{v_O} = 1$ :                    3)  $\frac{v_A}{v_O} = 4$ :  
 2)  $\frac{v_A}{v_O} = 2$ :                    4)  $\frac{v_A}{v_O} = \frac{1}{2}$ :
112. Ω°ր բանաձևն է ճիշտ արտահայտում հավասարաչափ շրջանագծային շարժման գծային  $v$  և անկյունային  $\omega$  արագությունների կապը: Ծրջանագծի շառավիղը R է:
- 1)  $v = \frac{\omega}{R}$ :                    3)  $v = \omega^2 R$ :  
 2)  $v = \frac{\omega^2}{R}$ :                    4)  $v = \omega R$ :
113. Սկավառակը պտտվում է նրա կենտրոնով անցնող առանցքի շուրջ: Պատասխանների ո՞ր զույգն է նշում սկավառակի A և B կետերի գծային ու անկյունային արագությունների միջև ճիշտ առնչությունները:
- 1)  $v_A > v_B$ ,  $\omega_A > \omega_B$ :  
 2)  $v_A < v_B$ ,  $\omega_A < \omega_B$ :  
 3)  $v_A = v_B$ ,  $\omega_A = \omega_B$ :  
 4)  $v_A < v_B$ ,  $\omega_A = \omega_B$ :
114. Որքա՞ն է առանց սահելու  $v_0$  արագությամբ շարժվող ավտոմեքենայի անվարողի ստորին կետի ակնթարթային արագությունը գետնի նկատմամբ:
- 1)  $2v_0$ :                            3)  $v_0 / 2$ :  
 2)  $v_0$ :                                    4)  $0$ :
115. Որքա՞ն է  $v$  արագությամբ հավասարաչափ շրջանագծային շարժում կատարող նյութական կետի արագության վեկտորի փոփոխության մոդուլը քառորդ պարբերության ընթացքում:
- 1)  $v\sqrt{2}$ :                            3)  $0$ :



2)  $v$ :

4)  $2v$ :

116. Որքա՞ն է  $v$  արագությամբ հավասարաչափ շրջանագծային շարժում կատարող նյութական կետի արագության վեկտորի փոփոխության մոդուլը  $1/6$  պարբերության ընթացքում:

1)  $v\sqrt{2}$ :

3) 0:

2)  $v$ :

4)  $2v$ :

117. Շրջադարձ կատարելիս ավտոմեքենան շարժվում է մոդուլով հաստատուն  $v$  արագությամբ: Որքա՞ն է նրա կենտրոնաձիգ արագացումը, եթե հետազծի կորության շառավիղը  $R$  է:

1)  $v^2 R$ :

3)  $vR$ :

2)  $\frac{v^2}{R}$ :

4)  $\frac{v}{R}$ :

118. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Շրջանագծով հավասարաչափ շարժվող նյութական կետի արագացման վեկտորը ...

1) հաստատուն է և մեծությամբ, և ուղղությամբ:

2) զրո է:

3) հաստատուն է մեծությամբ, իսկ ուղղությունն անընդհատ փոխվում է:

4) հաստատուն է ուղղությամբ, իսկ մեծությունն անընդհատ փոխվում է:

119. Ի՞նչ անկյուն են կազմում հետազծի տվյալ կետում արագությունը և արագացումը հավասարաչափ շրջանագծային շարժման դեպքում:

1)  $0^\circ$ : 3) բութ:

2) սուր: 4) ուղիղ:

120. Ինչպես կփոխվի հավասարաչափ շրջանագծային շարժում կատարող նյութական կետի կենտրոնաձիգ արագացման մոդուլը, եթե հետազծի շառավիղը և պտտման հաճախությունը փոքրանան 2 անգամ:

1) Կփոքրանա 2 անգամ: 3) Կփոքրանա 8 անգամ:

2) Կմեծանա 2 անգամ: 4) Չի փոխվի:

121.  $AB$  ձողը հավասարաչափ պտտվում է հորիզոնական հարթության մեջ՝ նրա  $A$  ծայրով անցնող ուղղաձիգ առանցքի շուրջ: Համեմատել ձողի  $B$  ծայրակետի և  $O$  միջնակետի կենտրոնաձիգ արագացումների մոդուլները:

$$1) \frac{a_B}{a_O} = 1:$$

$$3) \frac{a_B}{a_O} = \frac{1}{4}:$$

$$2) \frac{a_B}{a_O} = \frac{1}{2}:$$

$$4) \frac{a_B}{a_O} = 2:$$

122. Ինչպիսի՞ շարժում է կատարում մարմինը, եթե նրա արագացման վեկտորը միշտ ուղղահայաց է արագության վեկտորին, իսկ մոդուլը հաստառուն է:


- 1) Ուղղագիծ հավասարաչափ:
- 2) Ուղղագիծ հավասարաչափ արագացող:
- 3) Շրջանագծային հավասարաչափ:
- 4) Շրջանագծային հավասարաչափ արագացող:

123. Ե՞րբ է մարմինը կատարում հավասարաչափ շրջանագծային շարժում:

- 1) Երբ մարմնի վրա ազդող ուժերի համագործ գրունք:
- 2) Երբ մարմնի վրա ազդող ուժերի համագործ մոդուլը հաստատուն է և միշտ ուղղահայաց է արագության վեկտորին:
- 3) Երբ մարմնի վրա ուժ չի ազդում:
- 4) Երբ մարմնի վրա ազդող  $\vec{F}$  համագործ հաստատուն է:

124. Նկարում պատկերված քելի կոճը հնարավոր է առանց սահելու գլորվի հորիզոնական սեղանի վրա: Կոճի ներքին շառավիղը  $r$  է, իսկ արտաքինը՝  $R$ : Ի՞նչ արագությամբ կշարժվի կոճի կենտրոնով անցնող առանցքը, եթե քելը քաշենք հորիզոնական ուղղված  $v$  արագությամբ:

- 1)  $v$  արագությամբ:
- 2)  $\frac{r}{R}v$  արագությամբ:
- 3)  $\frac{R}{R+r}v$  արագությամբ:
- 4)  $\frac{R+r}{R}v$  արագությամբ:



## 1.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

125. Տղան իրուսիային ուղղությամբ անցավ 8 մ, այնուհետև արևելյան ուղղությամբ՝ 6 մ: Տղայի անցած ճանապարհը ոքքանո՞վ է մեծ նրա տեղափոխության մոդուլից:
126. Գնդակն ընկավ 10 մ բարձրությունից, հատակին հարվածելուց հետո հետ թռավ և բռնվեց, երբ հատակից բարձր էր 5 մ: Գնդակի անցած ճանապարհը քանի՞ անգամ է մեծ նրա կատարած տեղափոխության մոդուլից:
127. Նյութական կետը  $x_1 = -1$  մ,  $y_1 = 3$  մ, կոորդինատներով կետից տեղափոխում է  $x_2 = 4$  մ,  $y_2 = -2$  մ կոորդինատներով կետը: Որքա՞ն է տեղափոխության պրոյեկցիան X առանցքի վրա:
128. 12 մ/վ արագությամբ հավասարաչափ շարժվող մեքենան նույն ճանապարհն անցավ 10 վ-ում, իսկ երկրորդը՝ 15 վ-ում: Որքա՞ն է հավասարաչափ շարժվող երկրորդ մեքենայի արագությունը:
129. Մողովով հաստատուն արագությամբ շարժվող ավտոմեքենան A կետից B կետ հասնում և վերադառնում է 4 ժամում: Որքա՞ն է 3 ժամում ավտոմեքենայի անցած ճանապարհի և տեղափոխության մոդուլի հարաբերությունը:
130. Ավտոմեքենան և մոտոցիկլը, որոնք իրարից հեռու են 600 մ, միաժամանակ շարժվեցին նույն ուղղությամբ: Ավտոմեքենայի արագությունը 54 կմ/ժ է, իսկ մոտոցիկլինը՝ 43,2 կմ/ժ: Որքա՞ն ժամանակ անց ավտոմեքենան կհասնի մոտոցիկլին:
131. Ուղղագիծ հավասարաչափ շարժվող գնացքը 100 մ երկարությամբ կամուրջն անցնում է 15 վ-ում: Գնացքի երկարությունը 50 մ է: Որքա՞ն է գնացքի արագությունը:
132. Բոցը քուղով հավասարաչափ տարածվում է 2 սմ/վ արագությամբ: Ի՞նչ ամենափոքր երկարությամբ քուղ պետք է վերցնել, որպեսզի այն վառողը կարողանա քուղի իրկիզման տեղից հեռանալ 200 մ՝ մինչև բոցը քուղով հասնի պայթյունի կետին: Վառողի վազքի արագությունը 4 մ/վ է:


133. Տրված է  $X$  առանցքով շարժվող նյութական կետի շարժման օրենքը՝  $x = 4 + 5t$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն ճանապարհ է անցնում նյութական կետը 4 վ-ում:
134. Նյութական կետը 4 մ շառավիղ ունեցող շրջանագծով կատարում է  $3\frac{1}{6}$  պտույտ: Որքա՞ն է նյութական կետի տեղափոխության մոդուլը:
135. 20 մ/վ արագությամբ շարժվող գնացքը, որի երկարությունը 280 մ է, որքա՞ն ժամանակում կանցնի հանդիպակաց ուղղությամբ՝ 15 մ/վ արագությամբ շարժվող գնացքում գտնվող ուղևորի մոտով:
136. Նավակն անցնում է գետի մի ափից մյուսը՝ շարժվելով ափին ուղղահայաց ուղղությամբ: Նավակի արագությունը կանգնած ջրում 5 մ/վ է, գետի հոսանքի արագությունը՝ 3 մ/վ: Որքա՞ն է նավակի արագությունը ափի նկատմամբ:
137. Երկու նավակներ շարժվում են ուղղագիծ հավասարաչափ, իրար ընդառաջ՝ համապատասխանարար 7 մ/վ և 5 մ/վ արագություններով: Որքա՞ն է առաջին նավակի արագությունը երկրորդի նկատմամբ:
138.  $60^{\circ}$  անկյան տակ հատվող ճանապարհներով միևնույն 50 կմ/ժ արագությամբ շարժվող ավտոմեքենաների իեռավորությունը խաչմերուկում հանդիպելուց որքա՞ն ժամանակ անց կդառնա 2 կմ:
139. Ավտոբուսը ճանապարհի առաջին 40 մետրն անցավ 4 մ/վ արագությամբ, իսկ հաջորդ 500 մետրը՝ 10 մ/վ արագությամբ: Որքա՞ն է ավտոբուսի միջին ճանապարհային արագությունը:
140. Սերենան ժամանակի առաջին կեսը շարժվեց 12 մ/վ հաստատուն արագությամբ, իսկ ժամանակի երկրորդ կեսը՝ 18 մ/վ արագությամբ: Որքա՞ն է մերենայի միջին ճանապարհային արագությունն ամրող ժամանակի ընթացքում:
141. Գնացքն անցավ 180 կմ ճանապարհ: Այն 1 ժամ շարժվել է 80 կմ/ժ արագությամբ, այնուհետև 1,5 ժամ ծախսել է հանգստի համար, իսկ ճանապարհի մնացած մասն անցել է 40 կմ/ժ արագությամբ: Որքա՞ն է

գնացքի միջին ճանապարհային արագությունն ամբողջ ճանապարհին:

142. Դահուկորդն դադարի վիճակից սահում է սարի զագարից  $0,4 \text{ մ/վ}^2$  արագացմամբ: Որքա՞ն ճանապարհ կանցնի նա 20 վ-ում:
143. Մոտոցիկլավարը, շարժվելով դադարի վիճակից, 1 կմ երկարությամբ ճանապարհատվածն անցնում է  $0,2 \text{ մ/վ}^2$  արագացմամբ: Որքա՞ն կլինի արագությունը ճանապարհի վերջում:
144. Ավտոմեքենան արգելակելիս շարժվում է արագացումով, որի մոդուլը  $0,5 \text{ մ/վ}^2$  է, և կանգ է առնում արգելակումից 20 վ հետո: Որքա՞ն է նրա սկզբնական արագությունը:
145. Կայարանից  $h = 5$  մ ենուավորության վրա պետք է արգելակել 36 կմ/ժ արագությամբ շարժվող գնացքը, եթե արգելակման արագացման մոդուլը  $0,1 \text{ մ/վ}^2$  է:
146. Դահուկորդը 90 մ երկարությամբ թեքությունն իջավ 15 վ-ում՝ շարժվելով  $0,4 \text{ մ/վ}^2$  արագացումով: Որքա՞ն էր դահուկորդի սկզբնական արագությունը:
147. Ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում կատարող մարմնի արագությունը որոշվում է  $v = 3 + 2t$  բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են **ՍՀ-ի համապատասխան միավորներով**: Որքա՞ն է մարմնի անցած ճանապարհը առաջին 5 վ-ում:
148. Տրված է մարմնի շարժման հավասարում՝  $x = 16t - 2t^2$ , որտեղ մեծություններն արտահայտված են **ՍՀ-ի համապատասխան միավորներով**: Որքա՞ն է մարմնի արագությունը շարժման սկզբից 3 վայրկյան անց:
149. Մարմինը կատարում է ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում՝ առանց սկզբնական արագության: Շարժման 4-րդ վայրկյանում այն անցնում է 28 մ ճանապարհ: Որքա՞ն է մարմնի արագացումը:
150. Առանց սկզբնական արագության ազատ ընկնող մարմինը գետին հասնելու պահին ուներ  $30 \text{ մ/վ}$  արագություն: Ի՞նչ բարձրությունից է այն ընկել:

151. Դեպի ներքև ուղղված ի՞նչ արագություն պետք է հաղորդել մարմնին, որպեսզի այն 20 մ բարձրությամբ կամրջից ջրին հասնի 1Վ անց: Օդի դիմադրությունն անտեսել:
152. Մարմինն սկսում է ազատ ընկնել որոշ բարձրությունից: Որքա՞ն է անկման ամրող ժամանակամիջոցի և ժամանակամիջոցի առաջին կեսի ընթացքում անցած ճանապարհների հարաբերությունը:
153. Մարմինն ուղղաձիգ նետված է դեպի ներքև՝ 5 մ/վ սկզբնական արագությամբ: Որքա՞ն ժամանակից նրա արագությունը կմեծանա 5 անգամ: Օդի դիմադրությունն անտեսել:
154. Մարմինը նետված է ուղղաձիգ դեպի վեր՝ 30 մ/վ արագությամբ: Որքա՞ն ժամանակում այն կիասնի առավելագույն բարձրության: Օդի դիմադրությունն անտեսել:
155. Քանի՞ անգամ պետք է մեծացնել ուղղաձիգ դեպի վեր նետված մարմնի սկզբնական արագությունը, որպեսզի վերելքի բարձրությունը մեծանա 4 անգամ: Օդի դիմադրությունն անտեսել:
156. Ուղղաձիգ դեպի վեր նետված մարմինը վերադարձավ Երկրի մակերևույթ նետումից 4 վ հետո: Որքա՞ն է մարմնի սկզբնական արագությունը: Օդի դիմադրությունն անտեսել:
157. Հորիզոնական ուղղությամբ 10 մ/վ արագությամբ նետված մարմնի թռիչքի հեռավորությունը հավասար է նետման բարձրությանը: Որքա՞ն է մարմնի թռիչքի տևողությունը: Օդի դիմադրությունն անտեսել:
158. Հորիզոնական ուղղությամբ 200 մ/վ արագությամբ արձակված գնդակը թռիչքի ընթացքում ուղղաձիգ ուղղությամբ ինչքա՞ն կիշտի, եթե նպատակակետի հեռավորությունը 800 մ է: Օդի դիմադրությունն անտեսել:
159. Մարմինը նետված է հորիզոնի նկատմամբ  $60^0$  անկյան տակ: Հետագծի ամենաբարձր կետում մարմնի արագությունը է 8 մ/վ է: Որքա՞ն է մարմնի սկզբնական արագությունը: Օդի դիմադրությունն անտեսել:

160. Գնդակը նետված է հորիզոնի նկատմամբ  $15^0$  անկյան տակ՝  $20 \text{ մ/վ}$  սկզբնական արագությամբ: Որքա՞ն է գնդակի բռիչքի հեռահասությունը: Օդի դիմադրությունն անտեսել:
161. Ծրջանագծային հավասարաչափ շարժում կատարող նյութական կետը 2 րում կատարում է  $60$  պտույտ: Որքա՞ն է կետի պտտման պարբերությունը:
162. Մարմինը 5 վ-ում կատարում է  $10$  պտույտ: Պտտման առանցքից որքա՞ն է այն կետի հեռավորությունը, որը շարժվում է  $12\pi$   $\text{մ/վ}$  գծային արագությամբ:
163. Որոշ ճանապարհ անցնելիս տրակտորի հետևի անիվը, որի շառավիղը  $120$  սմ է, կատարեց  $520$  պտույտ: Քանի՞ պտույտ կատարեց այդ ճանապարհին  $64$  սմ շառավղով առջևի անիվը:
164. Նյութական կետը, հավասարաչափ շարժվելով  $5$  մ շառավիղ ունեցող շրջանագծով,  $10$  վ-ում անցնում է  $50$  մ ճանապարհ: Որքա՞ն է կետի կենտրոնաձիգ արագացումը:
165. Ծրջանագծով շարժվող նյութական կետի շառավիղ-վեկտորի կազմած անկյունն ընտրված ուղղության հետ որոշվում է  $\varphi = 5t$  բանաձևով, որտեղ  $t$  մեծություններուն արտահայտված են  $ՄՀ$ -ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է շրջանագծի շառավիղը, եթե կետի ճանապարհային արագությունը  $10 \text{ մ/վ}$  է:
166. Փոկավոր փոխանցման միջոցով շարժումն  $a$  փոկանիվից փոխանցվում է  $b$  փոկանիվին (նկ. 1):  $b$  փոկանիվի շառավիղը  $8$  անգամ մեծ է  $a$  փոկանիվի շառավիղից: Քանի՞ անգամ է  $a$  փոկանիվի եզրակետի կենտրոնաձիգ արագացումը մեծ  $b$  փոկանիվի եզրակետի կենտրոնաձիգ արագացումից:




Նկ.1

### 1.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

167. Գնդակն ընկավ 3 մ բարձրությունից, հետ քոավ հատակից և հասավ 1 մ բարձրության:
- 1) Որքա՞ն է գնդակի անցած ճանապարհը:
  - 2) Որքա՞ն է գնդակի տեղափոխության մոդուլը:
168. Աշտարակի ժամացույցի ժամեր ցույց տվող պլաքի երկարությունը 2 մ է:
- 1) Որքա՞ն է սլաքի ծայրակետի կատարած տեղափոխության մոդուլը  $12^{00}$ -ից մինչև  $14^{00}$ -ն ընկած ժամանակահատվածում:
  - 2) Որքա՞ն է սլաքի ծայրակետի կատարած տեղափոխության մոդուլը  $12^{00}$ -ից մինչև  $22^{00}$ -ն ընկած ժամանակահատվածում:
169. Ուղղագիծ հավասարաչափ շարժվող գնացքի լոկոմոտիվի առջևի կետը կամուրջն անցնում է 10 վ-ում, իսկ ողջ շարժակազմը՝ 15 վ-ում: Գնացքի երկարությունը 50 մ է:
- 1) Որքա՞ն է գնացքի արագությունը:
  - 2) Որքա՞ն է կամրջի երկարությունը:
170. 4,2 կմ/ժ արագությամբ հավասարաչափ շարժվող հետիոտնը 1 ր-ում  $30^0$  անկյան տակ հատում անցնում է ավտոմայրուղու ուղիղ տեղամասը:
- 1) Որքա՞ն է հետիոտնի տեղափոխության մոդուլը ավտոմայրուղին անցնելիս:
  - 2) Որքա՞ն է ավտոմայրուղու լայնությունը:
171. X առանցքով հավասարաչափ շարժվող նյութական կետի կոորդինատը 4 վ-ում փոխվում է 9 մ-ից մինչև 17 մ:
- 1) Որքա՞ն է նյութական կետի տեղափոխության պրոյեկցիան X առանցքի վրա:
  - 2) Որքա՞ն է նյութական կետի արագության պրոյեկցիան X առանցքի վրա:
172. X առանցքով շարժվող երկու նյութական կետերի կոորդինատների՝ ժամանակից կախումը ներկայացվում է  $x_1 = 10 + 2t$  և  $x_2 = 4 + 5t$  հավասարումներով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:
- 1) Ժամանակի հաշվարկման սկզբնական պահից հաշված որքա՞ն ժամանակ անց նրանք կհանդիպեն:
  - 2) Որքա՞ն ճանապարհ կանցնի այդ ընթացքում երկրորդ մարմինը:

173. Մոտորաճավակը 300 մ ճանապարհը գետի հոսանքի ուղղությամբ անցնում է 25 վ-ում, իսկ հոսանքին հակառակ ուղղությամբ՝ 37,5 վ-ում:
- 1) Որքա՞ն է կանգնած ջրի նկատմամբ մոտորաճավակի արագությունը:
  - 2) Որքա՞ն է գետի հոսանքի արագությունը:
174. Հանդիպակաց ուղղությամբ շարժվող մարդատար և բեռնատար գնացքները շարժվում են համապատասխանաբար 54 կմ/ժ և 36 կմ/ժ արագությամբ: Բեռնատար գնացքի մի վագոնի երկարությունը 25 մ է:
- 1) Որքա՞ն է բեռնատար գնացքի արագությունը մարդատար գնացքում նատած ուղևորի նկատմամբ:
  - 2) Որքա՞ն ժամանակում ուղևորի մոտով կանցնի բեռնատար գնացքի մեկ վագոնը:
175. Գնացքը ճանապարհի առաջին կեսն անցավ 1,5 անգամ ավելի մեծ արագությամբ, քան երկրորդ կեսը: Ամբողջ ճանապարհին գնացքի միջին արագությունը 43,2 կմ/ժ է:
- 1) Որքա՞ն էր գնացքի արագությունը ճանապարհի առաջին կեսին:
  - 2) Որքա՞ն էր գնացքի արագությունը ճանապարհի երկրորդ կեսին:
176. 2-րդ նկարում պատկերված է մարմնի անցած ճանապարհի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը:
- 1) Որքա՞ն է մարմնի միջին ճանապարհային արագությունը ժամանակի 0-4 վ միջակայքում:
  - 2) Որքա՞ն է մարմնի առավելագույն արագությունը:



Նկ. 2


177. Ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում կատարող գնացքը, 5 վ-ում անցնելով 70 մ ճանապարհ, ձեռք բերեց 19 մ/վ արագություն:
- 1) Որքա՞ն է գնացքի սկզբնական արագությունը:
  - 2) Որքա՞ն է գնացքի արագացումը:
178. Մարմինը դադարի վիճակից սկսում է շարժել հաստատուն արագմամբ և առաջին 3 վ-ում անցնում է 9 մ ճանապարհ:
- 1) Որքա՞ն է մարմնի արագացումը:
  - 2) Որքա՞ն ճանապարհ կանցնի մարմինը 5-րդ վայրկյանում:

179. Կայարանից շարժվող գնացքի առաջին վագոնը դիտողի մոտով անցնում է 10 վ-ում: Մինչ գնացքի մեկնումը դիտողն այդ վագոնի սկզբի մոտ էր: Վագոնների միջև հեռավորությունն անտեսել, իսկ գնացքի շարժումը համարել հավասարաչափ արագացող:

- 1) Դիտողի մոտով որքա՞ն ժամանակում կանցնի 4 միատեսակ վագոնից բաղկացած գնացքը:
- 2) Դիտողի մոտով որքա՞ն ժամանակում կանցնի 4-րդ վագոնը:

180. 3-րդ նկարում պատկերված է ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում կատարող մարմնի արագության՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը:


- 1) Որքա՞ն ճանապարհ է անցել մարմինը շարժման առաջին 10 վ-ում:
- 2) Որքա՞ն է մարմնի միջին ճանապարհային արագությունն այդ ժամանակահատվածում:



Նկ. 3

181. 4-րդ նկարում պատկերված է X առանցքով շարժվող մարմնի արագության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը:

- 1) Որքա՞ն է մարմնի արագացումը ժամանակի 2–6 վ միջակայքում:
- 2) Որքա՞ն է մարմնի անցած ճանապարհը ժամանակի 0–6 վ միջակայքում:



Նկ. 4

182. Մարմինն առանց սկզբնական արագության ազատ անկում է կատարում 45 մ բարձրությունից:

- 1) Որքա՞ն է մարմնի անկման ժամանակը:
- 2) Որքա՞ն է մարմնի արագությունը գետնին հարվածելու պահին:

183. Զրի մակերևույթից հաշված՝ 5 մ բարձրությունից առանց սկզբնական արագության ազատ անկում կատարող գնդիկը խորասուզվում է զրի մեջ մինչև 2 մ խորությունը: Զրում գնդիկը կատարում է հավասարաչափ դանդաղող շարժում:

- 1) Որքա՞ն է գնդիկի արագությունը զրի մակերևույթին հասնելու պահին:
- 2) Որքա՞ն է գնդիկի արագացման մոդուլը զրում շարժվելիս:

184. 50 մ/վ սկզբնական արագությամբ ուղղաձիգ վեր արձակած արկը նպատակակետին է հասնում 3 վ անց: Օդի դիմադրությունն անտեսել:
- 1) Որքա՞ն է նպատակակետի բարձրությունը:
  - 2) Որքա՞ն է արկի արագությունը նպատակակետին հասնելու պահին:
185. 10 սմ շառավղով անշարժ ճախսարակին փաթաթված չճգկող քելի ազատ ծայրին ամրացված քեռն սկսում է իջնել 2 մ/վ<sup>2</sup> արագացմամբ:
- 1) Որքա՞ն է քեռի արագությունն այն պահին, երբ քեռը իջել է 100 սմ:
  - 2) Որքա՞ն է ճախսարակի անկյունային արագությունն այդ պահին:
186. 1 մ երկարությամբ ձողը հավասարաչափ պտտվում է հորիզոնական հարթության մեջ՝ ձողը 1:3 հարաբերությամբ մասերի բաժանող ուղղաձիգ առանցքի շուրջ: Կարծ մասի ծայրակետի գծային արագությունների հարաբերությունը:
- 1) Որքա՞ն է ձողի պտտման հաճախությունը:
  - 2) Որքա՞ն է ձողի երկար և կարծ մասերի ծայրակետերի գծային արագությունների հարաբերությունը:
187. Հորիզոնական ուղղությամբ 10 մ/վ արագությամբ նետված մարմնի բոլչքի հեռահասությունը հավասար է գետնից նետման կետի բարձրությանը: Օդի դիմադրությունն անտեսել:
- 1) Որքա՞ն է մարմնի բոլչքի ժամանակը:
  - 2) Որքա՞ն է մարմնի նետման կետի բարձրությունը գետնից:


## 1.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

188. Տրված է Խ առանցքով շարժվող առաջին մարմնի շարժման հավասարումը՝  $x = 100 - 10t$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ժամանակի հաշվարկման սկզբնական պահից 30 վ անց նոյն ուղղությամբ և նոյն կետից 20 մ/վ արագությամբ սկսում է շարժվել երկրորդ մարմինը:
- 1) Ժամանակի հաշվարկման սկզբնական պահից հաշված՝ որքա՞ն ժամանակ անց մարմինները կհանդիպեն:
  - 2) Որքա՞ն է հանդիպման կետի հեռավորությունը կոորդինատների սկզբնակետից:
  - 3) Որքա՞ն ճանապարհ կանցնեն մարմինները մինչև հանդիպելը:
189. A և B կետերից, որոնց միջև հեռավորությունը 100 մ է, իրար ընդառաջ շարժվում են երկու մարմին: A կետից շարժվող մարմնի արագությունը 15 մ/վ է, մյուսինը՝ 5 մ/վ:
- 1) Որքա՞ն ժամանակ անց մարմինները կհանդիպեն:
  - 2) A կետից ի՞նչ հեռավորությամբ մարմինները կհանդիպեն:
  - 3) Որքա՞ն ժամանակ անց մարմինները կհանդիպեն, եթե երկրորդ մարմինը շարժվի առաջինի ուղղությամբ:
190. Տրված են երկու հեծանվորդների շարժումների հավասարումները՝  $x_1 = 6 + 2t$  և  $x_2 = 0,5t^2$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:
- 1) Ժամանակի հաշվարկման սկզբնական պահից հաշված՝ որքա՞ն ժամանակ անց նրանք կհանդիպեն:
  - 2) Որքա՞ն ճանապարհ կանցնի առաջին հեծանվորդն այդ ընթացքում:
  - 3) Որքա՞ն է հանդիպման պահին երկրորդ հեծանվորդի արագությունը:
- 191.Գետնից պոկվելու համար անհրաժեշտ 360 կմ/ժ արագությունն ինքնարիոր ձևոր է քերում 1 կմ երկարությամբ թոփքուղու վերջում: Խոհքուղում ինքնարիորի շարժումն ուղղագիծ հավասարաչափ արագացող է:
- 1) Որքա՞ն է ինքնարիորի միջին արագությունը թափավազքի ընթացքում:
  - 2) Որքա՞ն է ինքնարիորի թափավազքի ժամանակը:
  - 3) Որքա՞ն է ինքնարիորի արագացումը:
192. Դադարի վիճակից ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում կատարող մարմինը շարժման 5-րդ վայրկյանում անցավ 45 մ ճանապարհ:
- 1) Որքա՞ն է մարմնի արագացման մոդուլը:

- 2) Որքա՞ն է մարմնի անցած ճանապարհն առաջին 5 վ-ի ընթացքում:
- 3) Որքա՞ն է մարմնի արագությունը 5-րդ վայրկյանի վերջում:

**193. 5-րդ նկարում պատկերված է X առանցքով շարժվող նյութական կետի արագության պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը:**

- 1) Որքա՞ն է նյութական կետի արագացման մոդուլը ժամանակի 0-2 վ միջակայքում:
- 2) Որքա՞ն է նյութական կետի անցած ճանապարհը ժամանակի հաշվարկման սկզբից մինչև 4-րդ վայրկյանը:
- 3) Որքա՞ն է նյութական կետի տեղափոխությունը ժամանակի հաշվարկման սկզբից մինչև 4-րդ վայրկյանը:



**194. Գետնից 25 մ բարձրությամբ պատշգամբից 20 մ/վ արագությամբ ուղղաձիգ դեպի վեր են նետում գնդակը: Օդի դիմադրությունն անտեսել:**

- 1) Որքա՞ն է գնդակի առավելագույն բարձրությունը գետնից:
- 2) Նետման պահից որքա՞ն ժամանակ անց գնդակը կհասնի գետին:
- 3) Որքա՞ն է գնդակի արագությունը գետին հասնելու պահին:

## 1.5. ՉՈՐՍ ՊԱՏԱԽԱՆԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

195. X առանքով շարժվող նյութական կետի շարժման հավասարումը  $x = 2 - 3t + 0,1t^2$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:

- 1) Որքա՞ն է նյութական կետի արագության պրոյեկցիայի մոդուլը շարժման սկզբից 5 վ անց:
- 2) Ժամանակի մ՝ պահին նյութական կետի արագությունը հավասար կլինի զրոյի:
- 3) Որքա՞ն է նյութական կետի տեղափոխության մոդուլը ժամանակի 0-30 վ միջակայքում:
- 4) Որքա՞ն է նյութական կետի անցած ճանապարհը ժամանակի 0-30 վ միջակայքում:

196. Գնդիկը 2 մ/վ սկզբնական արագությամբ նետում են թեք հարքությամբ դեպի վեր: Գնդիկի արագացման մոդուլը  $1 \text{ մ}/\text{վ}^2$  է:

- 1) Նետման պահից որքա՞ն ժամանակ անց գնդիկի արագությունը կլինի զրո:
- 2) Որքա՞ն ճանապարհ կանցնի գնդիկը մինչև ամենաբարձր կետին հասնելը:
- 3) Նետման պահից որքա՞ն ժամանակ անց գնդիկը կանցնի 1,5 մ ճանապարհ:
- 4) Նետման պահից որքա՞ն ժամանակ անց գնդիկը երկրորդ անգամ կլինի հիմքից 1,5 մ հեռավորության վրա:

197. Դահուկորդն առանց սկզբնական արագության 10 վ-ում իջնում է 50 մ երկարությամբ բլրից և կանգ առնում հորիզոնական տեղամասում՝ անցնելով և 25 մ: Դահուկորդի շարժումը երկու տեղամասերում էլ հավասարաչափ փոփոխական է:

- 1) Որքա՞ն է դահուկորդի արագացման մոդուլը բլրով շարժվելիս:
- 2) Որքա՞ն է դահուկորդի արագությունը հորիզոնական տեղամասի սկզբում:
- 3) Որքա՞ն է դահուկորդի արագացման մոդուլը հորիզոնական տեղամասում:
- 4) Որքա՞ն է դահուկորդի միջին ճանապարհային արագությունն ամբողջ ճանապարհին:

198. Երկու կայարանների միջև 2 կմ հեռավորությունը մետրոյի գնացքն անցնում է 36 կմ/ժ միջին արագությամբ: Դադարի վիճակից քավա-

վագրի վրա գնացքը ծախսում է 1 րոպե, այնուհետև այն շարժվում է հավասարաչափ, իսկ մինչև կանգ առնելն արգելակման համար ծախսում՝ 1,5 րոպե: Թափավագըն ու արգելակումը համարել հավասարաչափ փոփոխական շարժում:

- 1) Որքա՞ն ժամանակ է գնացքը շարժվում հավասարաչափ:
- 2) Որքա՞ն է գնացքի առավելագույն արագությունը:
- 3) Որքա՞ն է գնացքի անցած ճանապարհը թափավագի ժամանակ:
- 4) Որքա՞ն է գնացքի անցած ճանապարհն արգելակման ժամանակ:

199. Ուղղաձիգ դեպի վեր նետված մարմինը 15 մ բարձրությամբ A կետով անցնում է երկու անգամ (վերելքի և վայրէջքի ժամանակ)  $\Delta t = 2$  վ ընդմիջումով: Օյի դիմադրությունն անտեսել:

- 1) Որքա՞ն է մարմնի արագության մոդուլը A կետում:
- 2) Որքա՞ն է մարմնի սկզբնական արագությունը:
- 3) Որքա՞ն է գնիղիկի առավելագույն բարձրությունը:
- 4) Որքա՞ն է գնիղիկի շարժման ամբողջ ժամանակը:

200. Գնդիկն առանց սկզբնական արագության ազատ անկում է կատարում  $H = 10$  մ բարձրությունից: Գնդիկի ճանապարհին, գետնից  $H/2$  բարձրությամբ, հորիզոնի նկատմամբ  $45^{\circ}$  անկյան տակ դրված է հարթակ, որից գնդիկն անդրադառնում է բացարձակ առաձգական հարվածի հետևանքով:

- 1) Ի՞նչ արագությամբ գնդիկը կանդրադառնա հարթակից:
- 2) Շարժումն սկսելուց որքա՞ն ժամանակ անց գնդիկը կհասնի գետին:
- 3) Որքա՞ն է գնդիկի տեղափոխությունը հորիզոնական ուղղությամբ:
- 4) Որքա՞ն է գնդիկի արագությունը գետին հարվածելու պահին:

## 2. ԴԻՆԱՍԻԿԱ

### 2.1. ՃԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

201. Ավտորուսը կատարում է աջ շրջադարձ: Ավտորուսի նկատմամբ ո՞ր կողմ կթեքվի ուղևորը:

- 1) Դեպի աջ:
- 2) Դեպի ձախ:
- 3) Դեպի հետ:
- 4) Դեպի առաջ:

202. Ո՞ր հաշվարկման համակարգը չի կարելի համարել իներցիալ:

- 1) Սառույցի վրա առանց շփման սահող տափողակի հետ կապված համակարգը:
- 2) Ազատ անկում կատարող մարմնի հետ կապված համակարգը:
- 3) Հավասարաչափ իջնող վերելակի հետ կապված համակարգը:
- 4) Հավասարաչափ բարձրացող փուչիկի հետ կապված համակարգը:

203. Մարմինը տվյալ իներցիալ հաշվարկման համակարգում դադարի վիճակում է: Ինչպիսի՞ն կլինի այդ մարմնի շարժումը այն հաշվարկման համակարգում, որն առաջինի նկատմամբ շարժվում է հաստատուն արագությամբ:

- 1) Ուղղագիծ հավասարաչափ:
- 2) Ուղղագիծ հավասարաչափ արագացող:
- 3) Կգունվի դադարի վիճակում:
- 4) Կկատարի կամայական շարժում:

204. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

**Նյուտոնի առաջին օրենքը պնդում է, որ...**

- 1) գոյություն ունեն այնպիսի հաշվարկման համակարգեր, որտեղ մարմնի արագությունը չի փոխվում, եթե նրա վրա ազդող ուժերի համազորը զրո է:
- 2) մարմնի արագությունը տարբեր հաշվարկման համակարգերում տարբեր է:
- 3) հեղուկի մեջ ընկղմված մարմնի վրա ազդում է դուրս մղող ուժ:
- 4) մարմինները փոխազդում են մոդուլով հավասար, ուղղությամբ հակառակ ուժերով:

205. Աերոստատը հաստատուն արագությամբ բարձրանում է ուղղաձիգ դեպի վեր: Ո՞ր պնդումն է ճիշտ, եթե Երկրի հետ կապված հաշվարկման համակարգը կարելի է համարել իներցիալ:

- 1) Աերոստատի վրա ազդող ծանրության ուժը զրո է:
- 2) Աերոստատի վրա ազդող բոլոր ուժերի գումարը զրո է:
- 3) Աերոստատի վրա ազդող բոլոր ուժերի գումարը զրոյից տարբեր հաստատուն մեծություն է:
- 4) Աերոստատի վրա ոչ մի ուժ չի ազդում:

**206.** Ինչպե՞ս կշարժվի մարմինը հաշվարկման իներցիալ համակարգում, եթե ժամանակի որևէ պահից սկսած՝ նրա վրա ազդող բոլոր ուժերի համագործ հավասարվի զրոյի:

- 1) Կշարունակի շարժվել այդ պահին ունեցած արագությամբ:
- 2) Կվատարի հավասարաչափ դանդաղող շարժում:
- 3) Կշարունակի շարժվել նախկին արագացմամբ:
- 4) Ակնթարթորեն կանգ կառնի:


**207.** Մարմնի արագությունը չի փոխվում, եթե նրա վրա ազդող բոլոր ուժերի համագործ զրո է: Ե՞րբ է ճիշտ այս պնդումը:

- 1) Սիշտ:
- 2) Սիայն հաշվարկման իներցիալ համակարգերում:
- 3) Սիայն Երկրի հետ կապված հաշվարկման համակարգում:
- 4) Սիայն Արեգակի հետ կապված հաշվարկման համակարգում:

**208.** Ո՞ր մեծությունը չի փոխվի հաշվարկման մի իներցիալ համակարգից մյուսին անցնելիս:

- |                  |                     |
|------------------|---------------------|
| 1) Արագությունը: | 3) Ծանապարիլ:       |
| 2) Արագությունը: | 4) Տեղափոխությունը: |


**209.** Անկարգելողի անկման լնիքացրում  $t = 0$  պահից սկսած՝ նրա վրա ազդող ուժերի համագործ զրո է: Ո՞ր գրաֆիկն է նկարագրում այդ շարժումը:



- |          |             |
|----------|-------------|
| 1) $w$ : | 3) $q$ :    |
| 2) $p$ : | 4) $\eta$ : |

210. Նկարում պատկերված է հաշվարկման իներցիալ համակարգում ուղղագիծ շարժվող մարմնի արագության մոդուլ՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր միջակայքում են մարմնի վրա ազդող ուժերն իրար համակշռում:

- 1)  $0 - t_1$ :
- 2)  $t_1 - t_2$ :
- 3)  $t_2 - t_3$ :
- 4)  $0 - t_1$  և  $t_2 - t_3$ :



211. Ո՞րն է զանգվածի չափման միավորը միավորների ՄՀ-ում:

- |                 |                            |
|-----------------|----------------------------|
| 1) 1 գրամը:     | 3) 1 տոննան:               |
| 2) 1 կիլոգրամը: | 4) նշված բոլոր միավորները: |

212. Ո՞ր ֆիզիկական մեծությունն է հավասար մարմնի զանգվածի և ծավալի հարաբերությամբ:

- |                     |                |
|---------------------|----------------|
| 1) Ծանրության ուժը: | 3) Կշիռը:      |
| 2) Շնչումը:         | 4) Խտությունը: |

213. Ո՞րն է նախադասության ճիշտ շարտնակությունը:

Մարմնի ծավալը հաշվելու համար նրա ...

- 1) զանգվածը պետք է բաժանել խտությանը:
- 2) զանգվածը պետք է բազմապատկել խտությամբ:
- 3) զանգվածը պետք է բաժանել մեկ մոլեկուլի զանգվածին:
- 4) խտությունը պետք է բաժանել զանգվածին:


214. Ո՞րն է  $1 \text{ կգ}/\text{մ}^3$  և  $1 \text{ գ}/\text{սմ}^3$  միավորների միջև ճիշտ առնչությունը:

- |  |   |
|--|---|
| 1) $1 \text{ կգ}/\text{մ}^3 = 0,001 \text{ գ}/\text{սմ}^3$ : | 3) $1 \text{ կգ}/\text{մ}^3 = 10 \text{ գ}/\text{սմ}^3$ :   |
| 2) $1 \text{ կգ}/\text{մ}^3 = 1 \text{ գ}/\text{սմ}^3$ :     | 4) $1 \text{ կգ}/\text{մ}^3 = 1000 \text{ գ}/\text{սմ}^3$ : |

215. Պղնձե գունդը տաքացնելիս ո՞ր մեծությունը կարելի է համարել հաստատուն:

- |                   |                     |
|-------------------|---------------------|
| 1) Գնդի շառավիղը: | 3) Գնդի զանգվածը:   |
| 2) Գնդի ծավալը:   | 4) Գնդի խտությունը: |

216. Նկարում պատկերված կշեռքի նժարներին հավասարակշռված են տարրեր նյութերից պատրաստված A և B համասեռ մարմինները: Որի՞ խտությունն է ավելի մեծ:



- 1) A մարմնի:
- 2) B մարմնի:
- 3) Խտությունները հավասար են:
- 4) A մարմնի խտությունը կարող է մեծ կամ փոքր լինել B մարմնի խտությունից:

217. Որքա՞ն է համասեռ խառնուրդի խտությունը, եթե այն ստացվել է  $\rho_1$  խտությամբ և  $V_1$  ծավալով հեղուկը  $\rho_2$  խտությամբ և  $V_2$  ծավալով հեղուկին խառնելիս: Խառնուրդի ծավալը  $V$  է:

$$\begin{array}{ll} 1) \frac{\rho_1 + \rho_2}{2}: & 3) \frac{\rho_2 V_1 + \rho_1 V_2}{V}: \\ 2) \frac{\rho_1 V_1 + \rho_2 V_2}{\rho_1 + \rho_2}: & 4) \frac{\rho_1 V_1 + \rho_2 V_2}{V}: \end{array}$$

218. Աշակերտն իր բազկի ուժը չափում է զապանակավոր ուժաչափով: Վերջինիս աշխատանքը ուժի  $n^{\circ}$  հատկությամբ է պայմանավորված՝ առաջնի արագությունը փոխելու, բ. դեֆորմացիա առաջացնելու:

- 1) Սիայն ա:
- 2) Սիայն ք:
- 3) Եվ ա, և ք:
- 4) Ոչ ա, ոչ ք:

219.  $\Omega^{\circ}$  ն է ուժի միավորը՝ ըստ ՄՀՀ հիմնական միավորների:

$$\begin{array}{ll} 1) 1 \text{ կգ} \cdot \text{մ}/\text{վ}^2: & 3) 1 \text{ կգ} \cdot \text{մ}^2/\text{վ}^2: \\ 2) 1 \text{ կգ} \cdot \text{մ}: & 4) 1 \text{ կգ} \cdot \text{մ}/\text{վ}: \end{array}$$

220. Հաշվարկման իներցիալ համակարգում  $F_1$  համազոր ուժի ազդեցությամբ մարմինը շարժվում է  $a_1$  արագացմամբ: Ի՞նչ արագացմամբ կշարժվի այդ մարմինը  $F_2$  համազոր ուժի ազդեցությամբ:

$$\begin{array}{ll} 1) \frac{a_1 F_1}{F_2}: & 3) \frac{F_1}{a_1 F_2}: \\ 2) \frac{a_1 F_2}{F_1}: & 4) \frac{F_2}{a_1 F_1}: \end{array}$$

221. Ինչպե՞ս կփոխվի մարմնի արագացումը հաշվարկման իներցիալ համակարգում, եթե հաստատուն պահելով նրա վրա ազդող ուժերի համազորը, զանգվածը մեծացնենք 2 անգամ:


- 1) Կմեծանա 2 անգամ:
- 2) Կփոքրանա 2 անգամ:
- 3) Կմեծանա 4 անգամ:
- 4) Կփոքրանա 4 անգամ:

222. Սիևույն համազոր ուժի ազդեցությամբ առաջին մարմնի արագությը 4 անգամ մեծ է երկրորդ մարմնի արագությունից: Որքա՞ն է առաջին և երկրորդ մարմնների զանգվածների հարաբերությունը:

- |       |          |
|-------|----------|
| 1) 4: | 3) 1:    |
| 2) 2: | 4) 0,25: |


223. Նկարում պատկերված են մարմնի շարժման  $\vec{v}$  արագության և նրա վրա ազդող ուժերի  $\vec{F}$  համազորի վեկտորները հաշվարկման իներցիալ համակարգում: Ի՞նչ ուղղությունն ունի մարմնի արագությունը:

- 1) ա վեկտորի ուղղությունը:
- 2) բ վեկտորի ուղղությունը:
- 3) զ վեկտորի ուղղությունը:
- 4) դ վեկտորի ուղղությունը:



224. Նկարում պատկերված են հաշվարկման իներցիալ համակարգում մարմնի վրա ազդող ուժերի և նրա ակնթարթային արագության վեկտորները: Ինչպես է ուղղված մարմնի արագությունը:

- 1) Դեպի աջ:
- 2) Դեպի ձախ:
- 3) Դեպի վերև:
- 4) Դեպի ներքև:



225. Ո՞ր դեպքում է մարմինը հաշվարկման իներցիալ համակարգում կատարում հավասարաչափ փոփոխական շարժում:

- 1) Եթե մարմնի վրա ազդող ուժերի համազորը զրո է:
- 2) Եթե մարմնի վրա ուժեր չեն ազդում:
- 3) Եթե մարմնի վրա ուժ է ազդում:
- 4) Եթե մարմնի վրա ազդող ուժերի համազորը զրոյից տարրեր հաստատում մեծություն է:

226. Հաշվարկման ո՞ր համակարգերում է կիրառելի Նյուտոնի II օրենքը:

- 1) Կամայական հաշվարկման համակարգում:
- 2) Միայն հաշվարկման իներցիալ համակարգերում՝ կամայական արագության դեպքում:
- 3) Միայն հաշվարկման իներցիալ համակարգերում, եթե մարմնի արագությունը շատ անգամ փոքր է վակուումում լույսի արագությունից:
- 4) Ամեն մի համակարգում, կամայական արագության դեպքում:

227. Որքա՞ն է մարմնի արագացումն  $\vec{F}_1$  և  $\vec{F}_2$  ուժերի միաժամանակյա ազդեցության դեպքում, եթե մարմնի զանգվածը  $m$  է:

$$1) \frac{F_1 F_2}{(F_1 + F_2)m}; \quad 3) \frac{\vec{F}_1 - \vec{F}_2}{m};$$

$$2) \frac{\vec{F}_1 + \vec{F}_2}{m}; \quad 4) \frac{\vec{F}_2 - \vec{F}_1}{m};$$

228.  $m$  զանգվածով ավտոմեքենայի վրա ազդող ուժերի համագորքը  $\vec{F}$  է:


Որքա՞ն է ավտոմեքենայի արագության փոփոխությունը  $\Delta t$  ժամանակում:

$$1) \frac{m\vec{F}}{\Delta t}; \quad 3) \frac{\vec{F}\Delta t}{m};$$

$$2) \frac{\vec{F}}{m\Delta t}; \quad 4) \frac{m\Delta t}{F};$$


229. Նկարում պատկերված է մարմնի արագացման՝ նրա վրա ազդող ուժերի համագորից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է մարմնի զանգվածը:

- 1) 0,2 կգ:      3) 2 կգ:  
2) 0,5 կգ:      4) 5 կգ:




230. Նկարում պատկերված է հաշվարկման իներցիալ համակարգում ուղղագիծ շարժվող ավտոմեքենայի արագության մոդուլը՝ ժամանակց կախումն արտահայտող գրաֆիկը: Ավտոմեքենայի վրա ազդող ուժերի համագորքը ժամանակի ո՞ր միջակայքում է զրո:

- 1) 0 – 2 վ միջակայքում:  
2) 2 – 4 վ միջակայքում:  
3) 4 – 6 վ միջակայքում:  
4) Նշված միջակայքերից ոչ մեկում:




231. X առանցքի ուղղությամբ մարմնի վրա դադարի վիճակում սկսում է ազդել ուժ, որի պրոյեկցիայի՝ ժամանակից կախված փոփոխությունը պատկերված է գրաֆիկում: Ժամանակի ո՞ր միջակայքերում է մարմնի արագության մոդուլը աճում:

- 1) 0–1 վ և 2–5 վ միջակայքերում:
- 2) Միայն 2–3 վ միջակայքում:
- 3) Միայն 2–4 վ միջակայքում:
- 4) Միայն 3–5 վ միջակայքում:




232. Նկարում պատկերված է հաշվարկման իներցիալ համակարգում ուղղագիծ շարժվող դահուկորոյի արագության մոդուլը՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր միջակայքում է նրա վրա ազդող ուժերի համագորի պրոյեկցիան շարժման ուղղության վրա փոքր գրոյից:

- 1) Միայն 0 - 3 վ միջակայքում:
- 2) Միայն 3 - 4 վ միջակայքում:
- 3) Միայն 4 - 6 վ միջակայքում:
- 4) Շարժման ամրող ընթացքում:




233. Նկարում պատկերված է հաշվարկման իներցիալ համակարգում ուղղագիծ շարժվող մարմնի արագության մոդուլը՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ո՞ր սեղամասում է մարմնի վրա ազդող ուժերի համագորի մոդուլն առավելագույնը:

- |        |        |
|--------|--------|
| 1) OA: | 3) BC: |
| 2) AB: | 4) CD: |



234. Որքա՞ն է նկարում պատկերված անշարժ թեք հարթությամբ սահող տ զանգվածով մարմնի արագացումը շիման բացակայության դեպքում:

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) $g :$             | 3) $g \sin \alpha :$ |
| 2) $g \cos \alpha :$ | 4) $g \tan \alpha :$ |



235. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:


Հավասարաչափ շրջանագծային շարժում կատարող մարմնի վրա ազդող ուժը ուժերի համագորք...

- 1) զրո է:
- 2) հաստատուն է և ուղղահայաց է շրջանագծի հարթությանը:
- 3) մոդուլով հաստատուն է և ուղղված է դեպի շրջանագծի կենտրոն:
- 4) մոդուլով հաստատուն է և ուղղված է արագության ուղղությամբ:

236. Նկարում պատկերված գունդն անցնում է հավասարակշռության դիրքով: Ո՞րն է նրա վրա ազդող ծանրության ուժի ( $mg$ ) և քելի լարման ուժի ( $T$ ) մոդուլների միջև ճիշտ

հարաբերակցությունն այդ պահին:

- 1)  $mg = T$ :
- 2)  $mg > T$ :
- 3)  $mg < T$ :
- 4)  $mg = T = 0$ :




237. Հավասարակշռության դիրքով անցնելիս մաքենատիկական ճոճանակի քելի լարման ուժը  $3mg$  է: Որքա՞ն է քեզի կենտրոնաձիգ արագացումն այդ պահին:

- 1)  $3g$ :
- 2)  $2g$ :
- 3)  $g$ :
- 4)  $0$ :

238. Սեքենան հավասարաչափ շարժվում է ուռուցիկ կամրջով: Ո՞ր կողմ է ուղղված մեքենայի վրա ազդող ուժերի համագորք կամրջի վերին կետով անցնելիս:

- 1)  $w$ :
- 2)  $p$ :
- 3)  $q$ :
- 4)  $\eta$ :




239. Թելից կախված մարմինը ուղղաձիգ հարթության մեջ կատարում է տատանողական շարժում: Ինչպես է ուղղված մարմնի վրա ազդող համագորք ուժը, եթե այն հավասարակշռության դիրքից առավելագույն շեղման վիճակում է:

- 1) Հորիզոնական ուղղությամբ:
- 2) Թելի երկայնքով:
- 3) Հետագծին տարված շոշափողի երկայնքով դեպի ներքև:
- 4) Համագորք ուժը հավասար է զրոյի:

240. Բեռքը նետում են թեք հարթությամբ դեպի վեր: Նո՞յնն են արդյոք վերելքի և վայրէջքի ժամանակները: Ծփումը հաշվի առնել:

- 1) Հավասար են:
- 2) Վերելքի ժամանակը մեծ է:
- 3) Վայրէջքի ժամանակը մեծ է:
- 4) Պատասխանը կախված է հարթության թեքության անկյունից:



241.  $m_1$  և  $m_2$  զանգվածներով երկու մարմին ( $m_1 > m_2$ ) առանց սկզբնական արագության ընկնում են նույն բարձրությունից: Մարմինների վրա ազդող ոդի դիմադրության ուժերն ընդունել հավասար:  $\Omega$ ՝ մարմինն ավելի շուտ կհասմի գետնին:



- 1)  $m_1$  զանգվածով մարմինը:
- 2)  $m_2$  զանգվածով մարմինը:
- 3) Անկման ժամանակները հավասար են:
- 4) Բոլոր պատասխանները սխալ են:

242. Հարթության վրա շարժվող նյութական կետի կոորդինատների՝ ժամանակից կախումն արտահայտվում են  $x = 2 + 4t^2$  և  $y = 3 - t^2$  բառաձևով: Փոխվո՞ւմ է արդյոք նյութական կետի վրա ազդող ուժերի համագորքը:

- 1) Փոխվում է համագորք ուժի և մոդուլը, և ուղղությունը:
- 2) Համագորք ուժի մոդուլը փոխվում է, իսկ ուղղությունը՝ ոչ:
- 3) Համագորք ուժի ուղղությունը փոխվում է, իսկ մոդուլը՝ ոչ:
- 4) Համագորք ուժի և մոդուլը, և ուղղությունը մնում են հաստատում:

243. Երկրի կողքով անցնում է երկնաքարը, որի շարժման ուղղությունը նկարում ցոյց է տրված կետագծերով:  $\vec{F}_A$  վեկտորը երկնաքարի վրա ազդող Երկրի ուժն է: Ինչպես է ուղղված երկնաքարի՝ Երկրի վրա ազդող ուժը:

- 1)  $w$ :
- 2)  $p$ :
- 3)  $q$ :
- 4)  $\eta$ :




244. Համեմատել Երկրի՝ Լուսնի վրա ազդող  $\vec{F}_1$  և Լուսնի՝ Երկրի վրա ազդող  $\vec{F}_2$  ձգողության ուժերի մոդուլները:

- 1)  $|\vec{F}_1| = |\vec{F}_2|$ :      3)  $|\vec{F}_1| < |\vec{F}_2|$ :  
 2)  $|\vec{F}_1| > |\vec{F}_2|$ :      4)  $|\vec{F}_1| \gg |\vec{F}_2|$ :

245. Երկու աշակերտ ուժաչափը ձգում են հակառակ ուղղություններով 20-ական նյուտոն ուժով: Ի՞նչ է ցույց տալիս ուժաչափը:

- 1) 40 Ն:      3) 10 Ն:  
 2) 20 Ն:      4) 0:

246. Չորսուն տեղադրված է հորիզոնական սեղանի վրա: Ո՞ր նկարում են ճիշտ պատկերված չորսուի և սեղանի փոխազդեցության ուժերը:



- 1) w:  
 2) p:  
 3) q:  
 4) η:

247. Զին քաշում է սայլը 500 Ն ուժով: Ի՞նչ ուժով է սայլն ազդում ձիու վրա:

- 1) Սայլը ձիու վրա չի ազդում:  
 2) 500 Ն-ից փոքր ուժով:  
 3) 500 Ն ուժով:  
 4) Պատասխանը կախված է սայլի անիվների և գետնի միջև գործող շփման ուժի մեծությունից:

248. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

**Դեֆորմացիան կոչվում է բացարձակ առաձգական...**

- 1) Եթե արտաքին ազդեցությունը վերացնելուց հետո այն անհետանում է:  
 2) Եթե արտաքին ազդեցությունը վերացնելուց հետո այն չի անհետանում:  
 3) Եթե արտաքին ազդեցությունը վերացնելուց հետո այն մասամբ է անհետանում:  
 4) Եթե ազդող ուժը նրա վրա ոչ մի ազդեցություն չի ունենում:

**249.** Ինչպիսի՞ն է պինդ մարմնի ատոմների ճգողության և վանողության ուժերի հարաբերակցությունը ձգման դեֆորմացիայի դեպքում:

- 1) Վանողության ուժերը գերազանցում են ճգողության ուժերը;
- 2) Զգողության ուժերը գերազանցում են վանողության ուժերը;
- 3) Վանողության և ճգողության ուժերի մոդուլները հավասար են:
- 4) Վանողության ուժերը չեն գործում:

**250.** Ո՞րն է Հոլկի օրենքն արտահայտող բանաձևը:

- 1)  $F = G \frac{m_1 m_2}{r^2} :$
- 2)  $\vec{F} = m\vec{a} :$
- 3)  $F = m(g + a) :$
- 4)  $F_x = -kx :$

**251.** Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Համաձայն Հոլկի օրենքի՝ զսպանակում առաջացած առաձգականության ուժի մոդուլը  $x$  երկարացման դեպքում...

- 1) ուղիղ համեմատական է  $x$ -ին:
- 2) հակադարձ համեմատական է  $x$ -ին:
- 3) ուղիղ համեմատական է  $x^2$ -ուն:
- 4) հակադարձ համեմատական է  $x^2$ -ուն:

**252.** Ինչի՞ց է կախված զսպանակի կոշտությունը:

- 1) Դեֆորմացիայի չափից:
- 2) Առաձգականության ուժից:
- 3) Զսպանակի չափերից, ձևից և նյութի տեսակից:
- 4) Բոլոր պատասխանները սխալ են:

**253.** Որքա՞ն է ո միատեսակ, կո կոշտությամբ զսպանակների հաջորդական միացումից կազմված համակարգի կոշտությունը:


- 1)  $k = nk_0 :$
- 2)  $k = \frac{k_0}{n} :$
- 3)  $k = \frac{k_0}{n^2} :$
- 4)  $k = n^2 k_0 :$

**254.**  $L$  երկարությամբ և  $k$  կոշտությամբ զսպանակը բաժանում են 3 հավասար մասերի: Որքա՞ն է յուրաքանչյուր մասի կոշտությունը:

- 1)  $k / 3 :$
- 2)  $k :$
- 3)  $3k :$
- 4)  $9k :$

255. Նկարում պատկերված են երկու գոյացությունների առաձգականության ուժի մոդուլի՝ երկարացումից կախումն արտահայտող գրաֆիկները: Որքա՞ն է զապահակաների կոշտությունների  $k_2 / k_1$  հարաբերությունը:

- 1) 1:                                   3) 3:  
2) 2:                                   4) 4:



256. Երեք զապահակաների կոշտություններն ուսումնասիրող փորձերի արդյունքները ներկայացված են աղյուսակում: Ի՞նչ հաջորդականությամբ են աճում զապահակաների կոշտությունները:

x (սմ)	0	2,5	5	7,5	10
$F_{\text{wsp}1} (\text{N})$	0	1	2	3	4
$F_{\text{wsp}2} (\text{N})$	0	5	10	15	20
$F_{\text{wsp}3} (\text{N})$	0	0,8	1,6	2,4	3,2

- 1)  $k_1 < k_2 < k_3$ :                                   3)  $k_1 < k_3 < k_2$ :  
2)  $k_2 < k_3 < k_1$ :                                   4)  $k_3 < k_1 < k_2$ :

257.  $m$  զանգվածով բեռը  $L$  երկարությամբ պողպատե լարից կախելիս նրա երկարացումը  $\Delta L$  է: Ո՞ր դեպքում լարի  $\Delta L$  երկարացումը նույնը կլինի:

- 1)  $L$ -ը երկու անգամ մեծացնում են, իսկ  $m$ -ը՝ երկու անգամ փորձարացնում:
- 2)  $L$ -ը և  $m$ -ը երկու անգամ մեծացնում են:
- 3)  $L$ -ը և  $m$ -ը երկու անգամ փորձարացնում են:
- 4)  $L$ -ը փորձարացնում են չորս անգամ, իսկ  $m$ -ը՝ երկու անգամ:

258.  $m_1$  և  $m_2$  ( $m_1 > m_2$ ) զանգվածներով երկու մարմիններ հորիզոնական ողորկ հարքության վրա միացված են զապահակով: Համակարգի նկատմամբ կիրառում են հորիզոնական ուղղված  $F$  ուժ, մի դեպքում  $m_1$  զանգվածով, մյուս դեպքում՝  $m_2$  զանգվածով մարմնի վրա: Որքա՞ն է այդ դեպքերում զապահակի երկարացումների  $x_1 / x_2$  հարաբերությունը:

- 1)  $\frac{m_1}{m_2}$ :                                   3)  $\frac{m_1 - m_2}{m_1 + m_2}$ :

$$2) \frac{m_2}{m_1} :$$

$$4) \frac{m_1 + m_2}{m_1 - m_2} :$$

**259. Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Տիեզերական ձգողության ուժերը գործում են բոլոր մարմինների միջև:
- 2) Երկու նյութական կետերի միջև գործող տիեզերական ձգողության ուժերն ուղղված են այդ կետերը միացնող ուղղի երկայնքով:
- 3) Տիեզերական ձգողության ուժերը միայն ձգողական բնույթի են:
- 4) Տիեզերական ձգողության օրենքը ճիշտ է կամայական մարմինների համար:

**260. Ո՞ր մարմինների միջև են գործում գրավիտացիոն ուժերը:**

- 1) Կամայական մարմինների:
- 2) Սիայն նյութական կետերի:
- 3) Սիայն նյութական կետերի և գնդաձև մարմինների:
- 4) Սիայն նյութական կետերի և համասեռ գնդերի:

**261. Ո՞ր պատասխանն է նշում գրավիտացիոն հաստատունի ճիշտ թվային արժեքը և չափայնությունը:**

- |   |   |
|---|---|
| 1) $G = 9,8 \text{ մ/վ}^2$ :                  | 3) $G = 6,67 \cdot 10^{-11} \text{ Նմ}^2/\text{կգ}^2$ : |
| 2) $G = 6,67 \cdot 10^{-11} \text{ Ն/կգ}^2$ : | 4) $G = 10 \text{ մ/վ}^2$ :                             |


**262. Ինչպես է փոխվում երկու համասեռ գնդերի գրավիտացիոն փոխազդեցության ուժը նրանց միջև հեռավորությունը երկու անգամ փորձացնելիս:**

- 1) Մեծանում է երկու անգամ:
- 2) Մեծանում է չորս անգամ:
- 3) Փորձանում է երկու անգամ:
- 4) Փորձանում է չորս անգամ:

**263. Առաջին գնդի շառավիղը 2 անգամ մեծ է երկրորդ գնդի շառավիղց, իսկ խտությունը 4 անգամ փոքր է երկրորդ գնդի խտությունից: Երկրորդի վրա ազդող առաջին գնդի գրավիտացիոն ձգողության ուժը քանի անգամ է մեծ առաջինի վրա ազդող երկրորդի գրավիտացիոն ձգողության ուժից:**

- |             |                |
|-------------|----------------|
| 1) 2 անգամ: | 3) 8 անգամ:    |
| 2) 4 անգամ: | 4) Հավասար են: |

**264.  $m$ ,  $2m$  և  $3m$  զանգվածներով  $w$ ,  $p$  և  $q$  գնդերը դասավորված են մի ուղղի երկայնքով՝ ըստ նկարում պատկերված հեռա-**



Վորությունների: Գնդերի ո՞ր զույգի միջև գործող գրավիտացիոն փոխազդեցության ուժն է ավելի մեծ:

- 1) ա և բ:
- 2) ա և գ:
- 3) բ և զ:
- 4) Բոլոր զույգերի համար նույնն է:


265. Տիեզերանավը Երկրի մակերևույթից հասավ Երկրի շառավղին հավասար բարձրության: Ունակտիվ շարժիչի աշխատանքի հետևանքով նրա զանգվածը փոքրացավ 2 անգամ: Ինչպես փոխվեց տիեզերանավի և Երկրի փոխազդեցության ուժը վերջինիս՝ Երկրի մակերևույթին ունեցած արժեքի համեմատությամբ:

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) Փոքրացավ 2 անգամ: | 3) Փոքրացավ 8 անգամ: |
| 2) Մնաց նույնը:      | 4) Փոքրացավ 4 անգամ: |

266. Տարրեր զանգվածներով երեք մարմիններ ( $m_1 > m_2 > m_3$ ) ընկնում են Երկրի վրա: Դրանցից ո՞րն է շարժվում ամենամեծ արագացումով: Օղի դիմադրությունը հաշվի չառնել:


- 1)  $m_1$  զանգվածով մարմինը:
- 2)  $m_2$  զանգվածով մարմինը:
- 3)  $m_3$  զանգվածով մարմինը:
- 4) Բոլոր մարմինները շարժվում են նույն արագացումով:

267. Ժամանակի ինչոր պահի առաջին գնդակն ընկած է գետնին, երկրորդը թռչում է դեպի վեր, երրորդը թռչքի ամենավերին կետում է, իսկ չորրորդն ընկնում է ներքև: Այդ պահին գնդակներից որի՞ վրա է ազդում ծանրության ուժ:



- 1) Սիայն 1-ինի:
- 2) Սիայն 3-րդի:
- 3) Սիայն 2-րդի և 4-րդի:
- 4) Բոլորի:

268. Տիեզերագնացը հետազոտեց անձանոր մոլորակի վրա ծանրության ուժի կախումը մարմնի զանգվածից: Ուսումնասիրության



արդյունքները նշված են զրաֆիկում: Որքա՞ն է ազատ անկման արագացումն այդ մոլորակի վրա:

- |                           |                          |
|---------------------------|--------------------------|
| 1) $0,4 \text{ m/s}^2$ :  | 3) $2,5 \text{ m/s}^2$ : |
| 2) $1,25 \text{ m/s}^2$ : | 4) $10 \text{ m/s}^2$ :  |

269. Ինչպե՞ս կփոխավի մարմնի վրա ազդող ծանրության ուժը, եթե մարմինը տեղադրվի ուղղաձիգ դեպի վեր ուղղված արագացումով շարժվող վերելակում:

- |              |                |
|--------------|----------------|
| 1) Չի փոխվի: | 3) Կփոքրանա:   |
| 2) Կմեծանա:  | 4) Կդառնա զրո: |

270. Թվարկված ո՞ր մեծությունից կախված չէ ազատ անկման արագացումը:

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1) Երկրի զանգվածից: | 3) Կփոքրանա:         |
| 2) Երկրի շառավղից:  | 4) Մարմնի զանգվածից: |

271. Որքա՞ն է ազատ անկման արագացումը ինչ-որ մոլորակի մակերևույթին, եթե նրա միջին խտությունը հավասար է Երկրի միջին խտությանը, իսկ շառավղին ո անգամ մեծ է Երկրի շառավղից: Ազատ անկման արագացումը Երկրի մակերևույթին  $g_0$  է:

- |                |                     |
|----------------|---------------------|
| 1) $n^2 g_0$ : | 3) $\sqrt{n} g_0$ : |
| 2) $ng_0$ :    | 4) $g_0 / n$ :      |

272. Երկրի մակերևույթին ազատ անկման արագացումը  $g_0$  է: Որքա՞ն է այն Երկրի կրկնակի շառավղին հավասար բարձրությունում:

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) $\frac{g_0}{3}$ : | 3) $\frac{g_0}{2}$ : |
| 2) $\frac{g_0}{9}$ : | 4) $\frac{g_0}{4}$ : |

273. Աղյուսը և նույնատեսակ մի այլ աղյուսի կես պատշզամբից գետին ընկան միաժամանակ: Ինչո՞վ է դա պայմանավորված:

- |  |  |
|--|--|
| 1) Ազատ անկման արագացումը կախված չէ մարմնի զանգվածից:                | 3) Աղյուսը և նույնատեսակ մի այլ աղյուսի կես պատշզամբից գետին ընկան միաժամանակ: |
| 2) Ե՛վ լրիվ աղյուսին, և՝ կես աղյուսին Երկիրը ճգում է միևնույն ուժով: | 4) Աղյուսը և նույնատեսակ մի այլ աղյուսի կես պատշզամբից գետին ընկան միաժամանակ: |

- 3) Կամայական ուժի ազդեցությանք մարմնի ձեռք բերած արագացումը կախված չէ նրա զանգվածից:
- 4) Կամայական ուժի ազդեցության դեպքում մարմնի արագությունը կախված չէ նրա զանգվածից:

**274. Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Մարմնի կշիռը վեկտորական մեծություն է:
- 2) Մարմնի կշիռը կարող է փոքր լինել ծանրության ուժից:
- 3) Մարմնի կշիռը կարող է մեծ լինել ծանրության ուժից:
- 4) Մարմնի կշիռն ազդում է իր վրա:

**275. Ո՞րն է նախադասության ճիշտ շարտնակությունը:**

**Մարմնի կշիռը դադարի վիճակում մողովով...**

- 1) հավասար է նրա վրա ազդող ծանրության ուժին:
- 2) մեծ է նրա վրա ազդող ծանրության ուժից:
- 3) փոքր է նրա վրա ազդող ծանրության ուժից:
- 4) հավասար է զրոյի:

**276. Նկարում պատկերված է լծակավոր կշեռքի ցուցնակի դիրքը:**

**Որքա՞ն է կշռվող մարմնի զանգվածը:**

- |    |         |    |         |    |         |           |
|----|---------|----|---------|----|---------|-----------|
| 1) | 2,3 կգ: | 3) | 3,2 կգ: | 4) | 3,4 կգ: | կգ        |
| 2) | 2,6 կգ: |    |         |    |         | 0 1 2 3 4 |

**277. Ինչպե՞ս է փոխվում մարմնի կշիռը Երկրի քևերից հասարակած տեղափոխելիս:**


- 1) Սեծանում է:
- 2) Փոքրանում է:
- 3) Չի փոխվում:
- 4) Կախված մարմնի զանգվածից՝ կմեծանա կամ կփոքրանա:

**278. Որքա՞ն է մարմնի կշիռն ազատ անկման ժամանակ:**

- 1) Զրո է:
- 2) Սեծ է ծանրության ուժից:
- 3) Հավասար է ծանրության ուժին:
- 4) Կարելի է հաշվել տիեզերական ձգողության ուժի բանաձևով:

**279. Զրով լցված ամանում ա մարմինը լողում է ջրի մակերևույթին, բ-ն հեղուկի ներսում է, իսկ գ-ն նստած է անորի հատակին: Ո՞ր մարմինն է անկշռության վիճակում:**

- 1) ա մարմինը:
- 3) գ մարմինը:



2) բ մարմինը:

4)  $\Omega_z$  մեկը:

280. Որքա՞ն է  $m$  զանգվածով տղայի կշիռը դեպի ներքև ուղղված  $a$  արագացումով շարժվող վերելակում ( $a < g$ ):

1)  $P = mg$ :

3)  $P = m(g + a)$ :

2)  $P = m(g - a)$ :

4)  $P = m(a - g)$ :

281. Ուղղաձիգ դեպի ներքև ի՞նչ արագացմամբ պետք է իջեցնել զսպանակավոր կշեռքը, որպեսզի նրանից կախված թերի կշիռը դադարի վիճակի համեմատությամբ փոքրանա 2 անգամ:

1)  $\frac{g}{2}$ :

3)  $2g$ :

2)  $g$ :

4)  $3g$ :

282. Պատռված տոպրակից կաք է հոսում: Ի՞նչ տեղի կունենա, եթե տոպրակը բաց թռղնենք և այն կատարի ազատ անկում:

1) Կաքը կհոսի ավելի դանդաղ:

2) Կաքը կդադարի հոսելուց:

3) Կաքը կհոսի ավելի արագ:

4) Կաքը կշարունակի հոսել այնպես, ինչպես հոսում էր մինչ անկում կատարելը:

283.  $m$  զանգվածով մարմինը  $v$  արագությամբ հավասարաչափ շարժվում է ուղղիկ կամքով, որի կորության շառավիղն  $R$  է: Որքա՞ն է մարմնի  $P$  կշիռը կամքի ամենավերին


կետում:

1)  $P = mg$ :

3)  $P = m\left(g + \frac{v^2}{R}\right)$ :

2)  $P = 2mg$ :

4)  $P = m\left(g - \frac{v^2}{R}\right)$ :



284. Երկրի շուրջ պտտվող տիեզերանավում տիեզերագնացի կշիռը զրո է: Ինչո՞վ է դա բացատրվում:

1) Տիեզերանավի վրա ծանրության ուժ չի ազդում:


2) Տիեզերանավում մարմինը կորցնում է իր զանգվածը:

3) Կշիռ ունեն միայն Երկրի նկատմամբ անշարժ մարմինները:

4) Ե՛վ տիեզերանավը, և տիեզերագնացը ազատ անկնան վիճակում են:

285. Նկարում պատկերված է վերելակի արագության մոդուլ՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը:  
Ժամանակի ո՞ր միջակայքում է ուղղորդ ճնշման ուժը վերելակի հատակին հավասար նրա ժամանակակից ուժին:

- 1)  $0 - t_1$ :
- 2)  $t_1 - t_2$ :
- 3)  $t_2 - t_3$ :
- 4)  $0 - t_3$ :




286. Դեպի ներքեւ շարժվող վերելակի արագության մոդուլը մինչև  $t$  պահը հավասարաչափ աճում է, որից հետո՝ հավասարաչափ նվազում: Ինչպես է փոխվում այդ ընթացքում մարմնի կշիռը շարժվող վերելակում:

- 1) Միշտ փոքր է ծանրության ուժից:
- 2) Միշտ մեծ է ծանրության ուժից:
- 3) Մինչև  $t$  պահը մեծ է ծանրության ուժից, հետո՝ փոքր:
- 4) Մինչև ժամանակի  $t$  պահը փոքր է ծանրության ուժից, հետո՝ մեծ:

287. Երկու արիեստական արբանյակներ շրջանագծային ուղեծրերով պտտվում են Երկրի շուրջն այնպես, որ առաջինի արագությունը 2 անգամ մեծ է երկրորդի արագությունից: Որքա՞ն է այդ արբանյակների պտտման պարբերությունների  $T_2 / T_1$  հարաբերությունը:

- 1) 0,25:
- 2) 2:
- 3) 4:
- 4) 8:



288. Լուսնի զանգվածը  $m$  է, իսկ Երկրինը՝  $M$ : Երկրի կենտրոնից մինչև Լուսնի կենտրոն հեռավորությունը  $R$  է: Որքա՞ն է Լուսնի շարժման արագությունը Երկրի շուրջը պտտվելիս: Գրավիտացիոն հաստատունը  $G$  է: Ընդունել, որ Լուսնի ուղեծիրը շրջանագիծ է:

- 1)  $\sqrt{\frac{GM}{R}}$ :
- 2)  $\sqrt{\frac{Gm}{R}}$ :
- 3)  $\sqrt{\frac{2GM}{R}}$ :
- 4)  $\sqrt{\frac{2Gm}{R}}$ :

289. Ինչպես է կախված Երկրի շուրջ շրջանային ուղեծրով պտտվող արբանյակի պտտման պարբերությունը նրա ուղեծրի  $r$  շառավղից:


- 1) Համեմատական է  $r$ -ին:      3) Համեմատական է  $\sqrt{r}$ -ին:  
 2) Համեմատական է  $r^2$ -ուն:      4) Համեմատական է  $\sqrt{r^3}$ -ին:

290. Դադարի շփման ուժի առավելագույն արժեքն ինչպե՞ս է կախված հենարանի հակազդեցության ուժից:

- 1) Ուղիղ համեմատական է:  
 2) Հակադարձ համեմատական է:  
 3) Կախված չէ:  
 4) Այդ ուժերը միշտ հավասար են:


291. Ի՞նչ ուղղություն ունի չորսուի վրա ազդող շփման ուժը, եթե  $\vec{F}$  ուժի ազդեցությամբ այն տեղից չի շարժվում:

- 1) ա:                          3) գ:  
 2) բ:                            4) դ:



292. Որքա՞ն է նկարում պատկերված մարմնի վրա ազդող շփման ուժը, եթե այն դադարի վիճակում է:

- 1)  $F_2 = 0$ :                    3)  $F_2 = F \sin \alpha$ :  
 2)  $F_2 = \mu mg$ :                4)  $F_2 = F \cos \alpha$ :



293. Մարմինը թեք հարքության վրա անշարժ վիճակում է: Ինչպե՞ս է փոխվում նրա վրա ազդող շփման ուժը՝ թեքության անլյունը փոքրացնելիս, եթե մարմինը շարունակում է մնալ դադարի վիճակում:

- 1) Չի փոխվում:  
 2) Սեծանում է:  
 3) Փոքրանում է:  
 4) Սկզբում փոքրանում է, հետո՝ մեծանում:

294. Ինչպե՞ս կփոխվի շփման ուժը, եթե թեք հարքության վրա դադարի վիճակում գտնվող մարմինը սեղմնենք թեք հարքությանն ուղղահայց ուժով:

- 1) Կմեծանա:                3) Չի փոխվի:  
 2) Կփոքրանա:             4) Կդառնա զրո:

295. Սայլակին դրված թեռը սայլակի հետ հավասարաշափ շարժվում է սեղանի հորիզոնական մակերևույթով: Ինչպիսի՞ շփման ուժ է ազդում թեռի վրա:

- 1) Դադարի շփման ուժ:      3) Գլորման շփման ուժ:

- 2) Սահրի շփման ուժ:                  4) Շփման ուժ չի ազդում:
296. Ի՞նչ արտաքին ուժի ազդեցությամբ է տեղից շարժվում ավտոմեքենան:

- 1) Դադարի շփման ուժի:                  3) Գրավիտացիոն ուժի:
- 2) Շարժիչի քարշի ուժի:                  4) Սահրի շփման ուժի:

297. Ո՞ր գործոնից կախված չէ սահրի շփման գործակիցը:

- 1) Հպման մակերևույթի մակերեսից:  
 2) Հպվող մակերևույթների նյութի տեսակից:  
 3) Հպվող մակերևույթների ողորկության աստիճանից:  
 4) Քսութի առկայությունից:


298. Սահրի շփման ուժի ուսումնասիրման վերաբերյալ լարորատոր աշխատանք կատարելիս աշակերտը փորձի արդյունքում լրացրեց հետևյալ աղյուսակը: Ո՞ր սյունակում է աշակերտը սխալ գրել:

	1	2	3	4	5
$N(U)$	1	2	4	6	8
$F_{2\Phi}(U)$	0,3	0,6	1,2	1,4	2,4

- 1) 5-րդ:                  3) 3-րդ:  
 2) 4-րդ:                  4) 1-ին:

299. Նկարում պատկերված են սահրի շփման ուժի՝ ճնշման ուժից կախումն արտահայտող 1 և 2 գրաֆիկները: Որքա՞ն է սահրի շփման գործակիցների  $\mu_1/\mu_2$  հարաբերությունը:

- 1) 0,05:                  3) 0,5:  
 2) 0,1:                  4) 2:



300. Մարմինը սահում է թեր հարթությամբ: Ինչպե՞ս է փոխվում նրա վրա ազդող շփման ուժը թերության անկյունը  $30^\circ$ -ից մինչև  $60^\circ$  մեծացնելիս:

- 1) Մեծանում է  $\sqrt{3}$  անգամ:                  3) Փորրանում է 2 անգամ:  
 2) Փորրանում է  $\sqrt{3}$  անգամ:                  4) Չի փոխվում:


301. Մարմինը թեր հարթության վրա դադարի վիճակում է: Ինչպե՞ս կփոխվի մարմնի վրա ազդող շփման ուժը թերության  $\alpha$  անկյունը մեծացնելիս, եթե այն միշտ գտնվում է դադարի վիճակում:

- 1) Չի փոխվի:

- 2) Անընդհատ կփոքրանա:
- 3) Անընդհատ կմեծանա:
- 4) Կմեծանա, հետո կփոքրանա:

302.  $m$  զանգվածով չորսուն հորիզոնի նկատմամբ  $\alpha$  անկյան տակ ազդող  $\vec{F}$  ուժի ազդեցությամբ շարժվում է հորիզոնական հարթությամբ: Չորսուի և հարթության միջև շփման գործակիցը  $\mu$  է: Որքա՞ն է շփման ուժը:

- 1)  $\mu(mg - F \sin \alpha)$ :
- 2)  $F \cos \alpha$ :
- 3)  $\mu mg$ :
- 4)  $\mu(mg + F \sin \alpha)$ :




303. Ինչպե՞ս է ուղղված քայլող մարդու վրա ազդող շփման ուժը:

- 1) Քայլելիս մարդու վրա շփման ուժ չի ազդում:
- 2) Ուղղված է շարժման ուղղությամբ:
- 3) Ուղղված է շարժմանը հակառակ ուղղությամբ:
- 4) Ուղղահայաց է մակերևույթի հարթությանը:

304. Նկարում պատկերված մարմինների զանգվածները՝  $m = 1$  կգ,

$M = 2$  կգ: Թեք հարթության անկյունը՝  $\alpha = 30^\circ$ : Որքա՞ն է  $M$  զանգվածով մարմնի վրա ազդող շփման ուժը, եթե այն գտնվում է դարպարի վհճակում:



- 1) 0:
- 2) 10 Ն:
- 3) 20 Ն:
- 4) 30 Ն:

305. Ո՞ր դեպքում սարի զագարից սահող սահնակն ավելի շուտ կհասնի ստորոտին: Առաջին դեպքում սահնակի վրա նստած է մեկ տղա, իսկ երկրորդում՝ երկու: Շփման գործակիցը երկու դեպքում էլ նույնն է:

- 1) Երբ նստած է մեկ տղա:
- 2) Երբ նստած է երկու տղա:
- 3) Կիշնեն նույն ժամանակում:
- 4) Պատասխանը կախված է տղաների զանգվածներից:

## 2.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆԱԿ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

306. 200 գ և 600 գ զանգվածներով մարմինների վրա ազդում են հավասար ուժեր: Որքա՞ն է առաջին և երկրորդ մարմինների արագացումների հարաբերությունը:
307. Երկու չորսուններող, հորիզոնական ողորկ հարթության վրա հրվելով նրանց միջև տեղադրված զսպանակից, ձեռք են բերում 3 մ/վ և 1 մ/վ արագություններ: Որքա՞ն է այդ չորսունների գումարային զանգվածը, եթե մեծ արագություն ստացած չորսուի զանգվածը 4 կգ է:
308. Որքա՞ն է 10 կգ զանգվածով ջրի ծավալը, եթե նրա խտությունը  $1000 \text{ կգ}/\text{մ}^3$  է: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
309. 50 սմ կողմով խորանարդաճական ակվարիումի մեջ 30 սմ բարձրությամբ ջուր է լցված: Որքա՞ն է ակվարիումի ջրի զանգվածը: Ջրի խտությունը  $1000 \text{ կգ}/\text{մ}^3$  է:
310. Տվյալ նյութից պատրաստված հոծ խորանարդի զանգվածը 8 կգ է: Որքա՞ն կիմի խորանարդի զանգվածը, եթե նրա կողմը փոքրացնենք երկու անգամ:
311.  $2 \text{ մմ}^2$  հատույքի մակերեսով պղնձալարի կծիկի զանգվածը  $35,6 \text{ կգ}$  է: Պղնձի խտությունը  $8900 \text{ կգ}/\text{մ}^3$  է: Որքա՞ն է պղնձալարի երկարությունը:
312. Առարկան ուսկեապատելիս ուսկու հաստությունն անհրաժեշտ է հասցեկան  $10^{-6} \text{ մ}-ի$ : Ի՞նչ մակերեսով մակերեսույթ կարելի է ուսկեապատել  $38,6 \cdot 10^{-3} \text{ կգ}$  ուսկով: Ուսկու խտությունը  $19300 \text{ կգ}/\text{մ}^3$  է:
313. Ի՞նչ ուժ է ազդում  $4 \text{ կգ}$  զանգվածով մարմնի վրա, եթե այն մարմնին հաղորդում է  $6 \text{ մ}/\text{վ}^2$  արագացում:
314. Ի՞նչ արագացում կհաղորդի  $28 \text{ Ն}$  ուժը  $7 \text{ կգ}$  զանգվածով մարմնին:
315. Մարմինը  $60 \text{ Ն}$  ուժի ազդեցությամբ շարժվում է  $8 \text{ մ}/\text{վ}^2$  արագացմանմբ: Ի՞նչ ուժ է անհրաժեշտ կիրառել նույն մարմնի վրա, որպեսզի այն շարժվի  $2 \text{ մ}/\text{վ}^2$  արագացմամբ:
316. Ավտոմեքենան  $1000 \text{ Ն}$  համազոր ուժի ազդեցությամբ շարժվում է  $1 \text{ մ}/\text{վ}^2$  արագացումով: Ի՞նչ արագացումով կշարժվի այն  $2000 \text{ Ն}$  ուժի ազդեցությամբ:

317. Տրված է 2 կգ զանգվածով մարմնի շարժման հավասարումը՝  $x = 4t + 0,5t^2$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է մարմնի վրա ազդող համազոր ուժի պրոյեկցիան շարժման ուղղության վրա:
318. 200 Ն համազոր ուժի ազդեցությամբ մարմինը շարժվում է ուղղագիծ: Տրված է նրա արագության՝ ժամանակից կախման հավասարումը  $v = 5 + 4t$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է մարմնի զանգվածը:
319. 0,2 կգ զանգվածով ազատ մարմնի վրա դադարի վիճակում սկսում է ազդել 0,4 Ն ուժ: Ի՞նչ արագություն ձեռք կրերի այդ մարմինն առաջին 5 վ-ի ընթացքում:
320. 1 կգ զանգվածով ազատ մարմնի վրա դադարի վիճակում սկսում է ազդել 0,5 Ն ուժ: Ի՞նչ արագություն ձեռք կրերի մարմինը 100 մ ճանապարհ անցնելիս:
321. Որքա՞ն ժամանակում  $5 \cdot 10^3$  Ն համազոր ուժի ազդեցությամբ 1000 կգ զանգվածով մարմնի արագությունը կաճի 500 մ/վ-ից մինչև 2000 մ/վ:
322. 6-րդ նկարում պատկերված է 2 կգ զանգվածով ուղղագիծ շարժվող մարմնի արագության մոդուլը՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է նրա վրա ազդող ուժերի համազորը:
- 
- Նկ. 6
323. Որքա՞ն ժամանակ է ազդել 80 Ն հաստատուն համազոր ուժը 10 կգ զանգվածով մարմնի վրա, եթե այդ ընթացքում մարմնի արագությունն աճել է 16 մ/վ-ով:
324. 3 կգ զանգվածով մարմնի վրա ազդում են իրար հակառակ ուղղված 15 Ն և 9 Ն ուժերը: Որքա՞ն է մարմնի ձեռք բերած արագացումը:
325. 2 կգ զանգվածով մարմնի վրա ազդում են երկու փոխուղղահայաց ուժեր, որոնցից մեկը մյուսից մեծ է 1 Ն-ով: Որքա՞ն է մեծ ուժի մեծությունը, եթե մարմինը շարժվում է  $2,5 \text{ m/v}^2$  արագացումով:

326. 5 կգ զանգվածով մարմնի վրա ազդում են նույն ուղղությամբ ուղղված երկու ուժեր, որոնք մարմնին հաղորդում են  $1,5 \text{ m}^2/\text{կ}^2$  արագացում: Ուժերից մեկը  $3,5 \text{ N}$  է: Որքա՞ն է մյուս ուժը:
327. 40 կգ և 50 կգ զանգվածներով երկու տղա չմուշկներով կանգնած են սառցի վրա: Երկրորդ տղան հրում է առաջինին  $100 \text{ N}$  ուժով: Որքա՞ն է հրող տղայի արագացումը:
328. Որքա՞ն կլինի  $2500 \text{ N/m}$  կոշտությամբ զսպանակի երկարացումը նրանից 5 կգ զանգվածով բեռ կախելիս: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
329.  $\text{Ի}^{\circ}\text{նչ}$  ուժով է մեքենան սեղմում հարվածամեղմիչը, եթե նրա  $500 \text{ kN/m}$  կոշտությամբ զսպանակը սեղմվել է  $15 \text{ mm}$ -ով:
330.  $200 \text{ N/m}$  և  $400 \text{ N/m}$  կոշտություններով երկու զսպանակները ձգում են միևնույն ուժով: Որքա՞ն է առաջին զսպանակի երկարացումը, եթե երկրորդի երկարացումը 4 սմ է: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
331.  $50 \text{ N}$  ուժի ազդեցությամբ ձողի երկարությունը  $40 \text{ mm}$ -ից դարձավ  $0,44 \text{ m}$ : Որքա՞ն է ձողի կոշտությունը:
332. Մետաղալարի կոշտությունը  $200 \text{ N/m}$  է: Որքա՞ն է չորս անգամ ավելի երկար նույնպիսի մետաղալարի կոշտությունը:
333. Երկու մետաղալար, որոնց տրամագծերի հարաբերությունը  $2$  է, ենթարկվում են հավասար ձգող ուժերի ազդեցության: Քանի՞ անգամ է բարակ ձողում մեխանիկական լարումը մեծ հաստ ձողում մեխանիկական լարումից:
334.  $\text{Ի}^{\circ}\text{նչ}$  մեծության ուժով են ձգել  $0,5 \text{ mm}^2$  լայնական հատույթի մակերես ունեցող  $2 \text{ m}$  երկարությամբ պողպատե լարը, եթե այն երկարել է  $1 \text{ mm}$ -ով: Պողպատի համար առաճգականության գործակիցը  $2,2 \cdot 10^{11} \text{ Pa}$  է:
335. Որքա՞ն է պողպատե լարի մեխանիկական լարումը, եթե նրա հարաբերական երկարացումը  $5 \cdot 10^{-4}$  է: Պողպատի առաճգականության գործակիցը (Յունգի մոդուլը)  $2,2 \cdot 10^{11} \text{ Pa}$  է: Պատասխանը բազմապատկել  $10^{-7}$ -ով:
336.  $0,02 \text{ m}$  տրամագիծ ունեցող ճռպանը, որի մի ծայրն ամրացված է անշարժ հենարանին, ձգում են  $7850 \text{ N}$  ուժով: Որքա՞ն է մեխանիկական լարումը ճռպանում: Պատասխանը բազմապատկել  $10^{-6}$ -ով:

337. Տիեզերական ճգողության հաստատունը որոշելու համար ուժաչափից կախված 10 կգ զանգվածով գնդի տակ տեղադրեցին 4 տ զանգվածով կապարե գունդն այնպես, որ գնդերի կենտրոնների հեռավորությունը լինի 0,5 մ: Ուժաչափի ցուցմունքն այդ դեպքում աճեց 0,01 մՆ-ով: Այս փորձի արդյունքում տիեզերական ճգողության հաստատունի համար ի՞նչ արժեք ստացան: Պատասխանը բազմապատկել  $10^{13}$ -ով:
338. Քանի՞ անգամ կփոքրանա երկու միատեսակ համաստ զնդերի տիեզերական ճգողության ուժը, եթե զնդերը սկզբում հպված են, այնուհետև դրանցից մեկը հեռացվում է մյուսից այնքան, որ նրանց կենտրոնների հեռավորությունը հավասարվի զնդի տրամագծի կրկնապատճենին:
339. Մարզագնդի զանգվածը 7 կգ է: Ի՞նչ ուժով է Երկիրը ձգում այն:
340. Ինչ-որ մոլորակի շառավիղը երկու անգամ փոքր է Երկրի շառավիղից, իսկ այդ մոլորակի զանգվածը կազմում է Երկրի զանգվածի 0,125 մասը: Որքա՞ն է Երկրի և այդ մոլորակի մակերևույթի վրա ազատ անկման արագացումների հարաբերությունը:
341. Մարմնի բարձրությունը Երկրի մակերևույթից հավասար է Երկրի շառավիղին: Որքա՞ն է մարմնի զանգվածը, եթե Երկրի կողմից նրա վրա ազդող ճգողության ուժը 50 Ն է:
342. Մարմնի ճնշման ուժը հորիզոնական հարթության վրա քանի՞ անգամ է մեծ հորիզոնի նկատմամբ  $60^0$  անկյուն կազմող թեք հարթության վրա ճնշման ուժից:
343. Որքա՞ն է ազատ անկման արագացումը Երկրի մակերևույթի այն կետում, որտեղ զապանակավոր կշեռքի ցուցմունքը, երբ նրանից 5 կգ զանգվածով բեռ է կախված,  $48,9$  Ն է: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
344. Վերելակի մեջ ամրացված զապանակավոր կշեռքից կախված է 1 կգ զանգվածով մարմին: Ի՞նչ ցույց կտա կշեռքը, եթե վերելակը իջնի ներքև  $5 \text{ m}/\text{s}^2$  արագացմամբ դանդարձ շարժմամբ:
345. Շարժվող վերելակի հատակին դրված 80 կգ զանգվածով բեռը վերելակի հատակին ճնշում է  $560$  Ն ուժով: Որքա՞ն է վերելակի արագացման մոդուլը:

346. 0,5 կգ զանգվածով մազնիսն անշարժ կպած է ուղղաձիգ պողպատ-յա սալիկին: Որքա՞ն է մազնիսի վրա ազդող դադարի շփման ուժը:
347. Հորիզոնական նակերևույթի և նրա վրա տեղադրված 5 կգ զանգվա-ծով չորսուի միջև շփման գործակիցը 0,1 է: Չորսուի վրա հորիզոնա-կան ուղղությամբ ազդում է 8 Ն ուժ: Որքա՞ն է չորսուի վրա ազդող շփման ուժը:
348. 2 կգ զանգվածով մարմինը թեք հարթության վրա դադարի վիճակում է: Որքա՞ն է մարմնի վրա ազդող շփման ուժը, եթե հորիզոնական ուղղության հետ հարթության կազմած անկյունը  $30^{\circ}$  է:
349. 4 կգ զանգվածով մարմինը հորիզոնական ուղղության հետ  $60^{\circ}$  անկյուն կազմող թեք հարթությամբ սահում է դեպի ներքև: Որքա՞ն է մարմնի վրա ազդող շփման ուժը, եթե շփման գործակիցը 0,1 է:
350. Հետազօծի հորիզոնական տեղամասում 5 կգ զանգվածով սահնակի վրա ազդում է 6 Ն սահքի շփման ուժ: Որքա՞ն է շփման գործակիցը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
351. 2 կգ զանգվածով չորսուն 400 Ն/մ կոշտությամբ զսպանակի օգնու-թյամբ հավասարաչափ շարժվում է հորիզոնական հարթության վրա-յով, որի լճացքում զսպանակի երկարացումը հասնում է  $0,04$  մ-ի: Որքա՞ն է չորսուի և հարթության միջև շփման գործակիցը: Պատաս-խանը բազմապատկել  $10^2$ -ով:
352. 2000 կգ զանգվածով ավտոմեքենան հորիզոնական ճանապարհով  $0,5$  մ/ $\text{վ}^2$  արագացմամբ քաշելու համար օգտագործում են  $10^5$  Ն/մ կոշտությամբ ճռպան: Որքա՞ն է ճռպանի երկարացումը: Ըփումը բա-ցակայում է: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
353. Շարժիչն անջատելուց հետո մոդուլով ի՞նչ արագացմամբ կշարժվի ավտոմեքենան հորիզոնական ճանապարհով, եթե շփման գործակիցը  $0,2$  է:
354. 4 կգ զանգվածով մարմինը սահում է թեք հարթության զագարից, որի երկարությունը 5 մ է, իսկ բարձրությունը՝ 3 մ: Որքա՞ն է մարմնի վրա ազդող շփման ուժը, եթե շփման գործակիցը 0,5 է:
355. 50 կգ զանգվածով թեռը բարձրացնում են թեք հարթությամբ՝ այն քաշելով թեք հարթության երկայնքով ուղղված պարանով: Որքա՞ն է թեռի վրա ազդող շփման ուժը, եթե թեռի և թեք հարթության միջև

շիման գործակիցը 0,3 է, իսկ հարթությունը հորիզոնական ուղղության հետ կազմում է  $60^0$  անկյուն:

356. 10 կգ զանգվածով բեռք կախված է ճախարակի վրա զցված թելի մի ծայրից: Ի՞նչ ուժով պետք է ճգել թելի մյուս ծայրից, որպեսզի բեռք բարձրանա 1 մ/ $\text{վ}^2$  արագացմամբ: ճախարակի զանգվածը և շփումը նրա առանցքում անտեսել:
357. Ուղղաձիգ դեպի ներքև ուղղված 7,5 մ/ $\text{վ}^2$  հաստատուն արագացումով շարժվող հարթակի վրա դրված է մարմին: Քանի անգամ է մարմնի վրա ազդող ծանրության ուժը մեծ հարթակի հակազդեցության ուժից:
358. 0,5 կգ զանգվածով փայտի կտորը օդում ընկնում է 4 մ/ $\text{վ}^2$  արագացումով: Որքա՞ն է օդի դիմադրության միջին ուժը:
359. 1000 կգ զանգվածով և 1500 Ն քարշի ուժով ավտոմեքենան հորիզոնական ճանապարհով շարժվում է 1,2 մ/ $\text{վ}^2$  արագացումով: Որքա՞ն է դիմադրության ուժը:
360. 1 կգ զանգվածով բեռք հավասարաշափ բարձրացնում են 30 $^0$  թեքությամբ հարթությունով՝ բերի վրա կիրառելով թեք հարթությանը գուգահեռ ուղղված ուժ: Որքա՞ն է այդ ուժը, եթե շփումը բացակայում է:
361. 50 սմ երկարությամբ ռետինե քուղի ծայրին ամրացված է 50 գ զանգվածով գնդիկ: Եթե գնդիկը քուղի հետ միասին պտտվում է հորիզոնական հարթության մեջ 10 ոադ/ $\text{վ}$  անկյունային արագությամբ, քուղը երկարում է 10 սմ-ով: Որքա՞ն է քուղի կոշտությունը:
362. Որքա՞ն է հորիզոնական ճանապարհով 10 մ/ $\text{վ}$  արագությամբ ընթացող ավտոմեքենայի շրջադարձի աղեղի նվազագույն շառավիղը, եթե սահքի շիման գործակիցը 0,25 է:
363. Մեքենան հորիզոնական ճանապարհով շարժվում է 27 մ/ $\text{վ}$  արագությամբ: Նվազագույնը ինչքանո՞վ պետք է փոքրացնել նրա արագությունը, որպեսզի հնարավոր լինի կատարել 45 մ շառավիղով շրջադարձ, եթե սահքի շիման գործակչոցը 0,5 է:
364. 1000 կգ զանգված ունեցող ավտոմեքենան 36 կմ/ $\text{ժ}$  արագությամբ անցնում է 50 մ շառավիղով ուսուցիկ կամրջով: Ի՞նչ ուժով է մեքենան ճնշում կամրջի ամենավերին կետում:

365. 400 կգ զանգվածով մարմինը հավասարաչափ շարժվում է գոգավոր կամքջի վրայով, որի կորության շառավիղը 25 մ է: Որքա՞ն է մարմնի շարժման արագությունը, եթե կամքջի ամենացածր կետում մարմնի ճնշման ուժը նրա վրա 7136 Ն է:
366. 1 մ երկարությամբ թելից կապած 1 կգ զանգվածով գնդիկը պտըտվում է ուղղաձիգ հարթության մեջ  $\omega = 4 \text{ } \text{Վ}^{-1}$  անկյունային արագությամբ: Որքա՞ն է թելի լարման ուժը հետագծի ամենացածր կետում:
367. Զրով լցված փոքր դրոյլը 0,9 մ երկարությամբ պարանով պտտվում է ուղղաձիգ հարթության մեջ:  $\text{Ի՞նչ նկազագոյն արագություն պետք է ունենա դրոյլը հետագծի ամենավերին կետում, որպեսզի ջուրը նրանից չքափվի:}$
368. Ուղղաձիգ առանցքի շուրջը պտտվող հորիզոնական սկավառակի կենտրոնից 0,2 մ հեռավորությամբ դրված է փոքրիկ մարմին:  $\text{Ի՞նչ առավելագոյն անկյունային արագությամբ պետք է պտտվի սկավառակը, որպեսզի մարմինը նրա վրայից չսահի, եթե մարմնի և սկավառակի միջև շփման գործակիցը 0,02 է:}$
369. Երկրի արիեստական արքանյակը պտտվում է շրջանագծային ուղեծրով Երկրի մակերևույթից 19200 կմ բարձրության վրա: Որքա՞ն է արքանյակի արագությունը ուղեծրով շարժվելիս, եթե Երկրի շառավիղը 6400 կմ է:

## 2.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

370. 500 կգ/մ<sup>3</sup> խտությամբ նյութից 0,5 մ երկարությամբ խողովակ պատրաստելիս ծախսվեց 1,256 կգ զանգվածով հումք:

- 1) Որքա՞ն է ծախսված հումքի ծավալը: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:
- 2) Որքա՞ն է խողովակի ներքին տրամագիծը, եթե արտաքին տրամագիծը 0,1 մ է: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

371. 3 կգ զանգվածով մարմինը դադարի վիճակից հաստատուն համարոր ուժի ազդեցությամբ 5 վ-ում անցնում է 25 մ ճանապարհ:

- 1) Որքա՞ն է մարմնի շարժման արագացումը:
- 2) Որքա՞ն է մարմնի վրա ազդող համարոր ուժը:

372. 2 վ-ի ընթացքում գործադրելով 400 Ն հաստատուն ուժ՝ մարդը ձողի օգնությամբ հորիզոնական ուղղությամբ ափից հրում է 200 կգ զանգվածով անշարժ լաստը: Զրի դիմադրությունը հաշվի չառնել:

- 1) Ի՞նչ արագացմամբ է շարժվում լաստը:
- 2) Ափից որքա՞ն կիեռանա լաստը հրելու ընթացքում:

373. 6 կգ զանգվածով մարմինը շարժվում է 8 մ/վ արագությամբ: Ինչ-որ պահից նրա վրա սկսում է ազդել 12 Ն հաստատուն ուժ, որն ուղղված է արագության ուղղությամբ:

- 1) Որքա՞ն է մարմնի շարժման արագացումը:
- 2) Ի՞նչ արագություն ձեռք կրերի մարմինը ուժի ազդեցությամբ 9 մ ճանապարհ անցնելուց հետո:

374. 0,5 կգ զանգվածով մարմինը դադարի վիճակից հաստատուն ուժի ազդեցությամբ սկսում է շարժվել և, 50 մ ճանապարհ անցնելով, ձեռք է բերում 20 մ/վ արագություն:

- 1) Որքա՞ն է մարմնի արագացումը:
- 2) Որքա՞ն է մարմնի վրա ազդող ուժը:

375. 100 մ/վ սկզբնական արագություն ունեցող 0,2 կգ զանգվածով մարմնի վրա որոշ ժամանակամիջոցի ընթացքում ազդում է 8 Ն համարոր ուժ: Մարմնի վերջնական արագությունը 300 մ/վ է:

- 1) Ի՞նչ արագացմամբ է շարժվել մարմինը:
- 2) Որքա՞ն է ուժի ազդման տևողությունը:

376. 2 կգ զանգվածով չորսուն, որը դադարի վիճակում էր, 500 Ն/մ կոշտությամբ զսպանակով քաշում են հորիզոնական մակերևույթի վրա-

յով՝ նրան զուգահեռ ուղղությամբ: Զսպանակի երկարացումը 0,016 մ է: Շարժումը համարել հավասարաչափ արագացող: Շփումն անտեսել:

- 1) Որքա՞ն է չորսուի վրա ազդող համազոր ուժը:
- 2) Որքա՞ն ճանապարհ կանցնի չորսուն շարժման առաջին 5 վ-ում:

377. 18 կգ զանգվածով մարմինը, որը Երկրի մակերևույթից շատ քարձր է, Երկիրը ձգում է 20 Ն ուժով:

- 1) Որքա՞ն կլիներ այդ մարմնի վրա ազդող Երկրի ձգողության ուժը, եթե այն լիներ Երկրի մակերևույթի վրա:
- 2) Քանի՞ անգամ է այդ քարձրությունը մեծ Երկրի շառավղից:

378. Անտշիռ ձողին ամրացված 0,5 կգ զանգվածով մարմինն ուղղաձիգ հարթության մեջ պտտում են հաստատուն 2,5 մ/վ արագությամբ: Չողի Երկարությունը 62,5 սմ է:

- 1) Որքա՞ն է մարմնի կենտրոնաձիգ արագացումը:
- 2) Որքա՞ն է ձողի լարման ուժը, եթե մարմինը հետազօծի ամենաներքի կետում է:

379. Եթե ավտոտեսուչը չափեց ավտոմեքենայի արգելակման ճանապարհը, պարզվեց, որ այն 40 մ է: Ավտոմեքենայի անիվների և ճանապարհի միջև շփման գործակիցը 0,5 է, ճանապարհի այդ տեղամասը՝ հորիզոնական է: Արգելակման ընթացքում ավտոմեքենայի շարժումը համարել հավասարաչափ փոփոխական:

- 1) Որքա՞ն է արգելակման ընթացքում ավտոմեքենայի արագացման մոդուլը:
- 2) Ի՞նչ արագությամբ էր շարժվում ավտոմեքենան մինչ արգելակումը:

380. Վարորդը ճանապարհի հորիզոնական տեղամասում 10 մ/վ արագությամբ շարժվող ավտոմեքենայի շարժիչն անջատեց: Ավտոմեքենայի և գետնի միջև շփման գործակիցը 0,2 է: Ավտոմեքենայի շարժումը շարժիչն անջատելուց հետո համարել հավասարաչափ փոփոխական:

- 1) Որքա՞ն է ավտոմեքենայի արագացման մոդուլը շարժիչն անջատած շարժվելիս:
- 2) Ի՞նչ հեռավորություն կանցնի ավտոմեքենան մինչև կանգ առնելը:

381. 3 կգ զանգվածով չորսուն հավասարաչափ քաշում են հորիզոնական մակերևույթով՝ այդ մակերևույթին զուգահեռ զսպանակի օգնությամբ: Չորսուի և մակերևույթի միջև շփման գործակիցը 0,2 է:

- 1) Որքա՞ն է չորսուի վրա ազդող շփման ուժը:

2) Որքա՞ն է զսպանակի կոշտությունը, եթե նրա երկարացումը 5 սմ է:

382. Դադարի վիճակից մարմինը ցած է սահում 2,5 մ երկարություն և 1,25 մ բարձրություն ունեցող թեք հարքության գազարից: Ըփումն անտեսել:

1) Որքա՞ն է մարմնի արագացումը:

2) Որքա՞ն է մարմնի արագությունը թեք հարքության հիմքին հասնելիս:

383. 2000 կգ զանգվածով ավտոմեքենան 20 մ/վ արագությամբ հավասարաչափ շարժվում է 50 մ շառավղով ուսուցիկ կամրջի վրայով:

1) Որքա՞ն է ավտոմեքենայի արագացումը:

2) Որքա՞ն է կամրջի վրա ազդող ավտոմեքենայի ճնշման ուժը, եթե այն անցնում է կամրջի ամենաբարձր կետով:

384. Ավտոմեքենան մողուղով հաստատում 25 մ/վ արագությամբ շարժվում է ուսուցիկ կամրջով, որը դիտարկում ենք որպես շրջանագծի աղեղ: Կամրջի ամենաբարձր կետով անցնելիս մեքենայի կշիռը փոքրանում է երկու անգամ:

1) Որքա՞ն է մեքենայի արագացումը:

2) Որքա՞ն է կամրջի կորության շառավիղը:

## 2.4. ԵՐԵՔ ՊԱՏԱԽԱՆԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

385. 2 կգ զանգվածով արկը հորիզոնական ուղղությամբ դուրս է քոչում հրանորդի փողից 1000 մ/վ արագությամբ: Ծարժումը համարել հավասարաչափ արագացող:
- 1) Ի՞նչ արագացմամբ է շարժվել արկը փողի մեջ, եթե փողի երկարությունը 2,5 մ է: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
  - 2) Որքա՞ն է հրանորդի փողում արկի վրա ազդող համազոր ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
  - 3) Որքա՞ն ժամանակ է շարժվել արկը փողի մերսում: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
386. 1,7 կգ զանգվածով մարմինը գտնվում ողորկ հորիզոնական հարթության վրա է: Մարմնի վրա ազդում է դեպի վեր ուղղված  $10 \text{ N}$  ուժ, որը հորիզոնի հետ կազմում է  $30^\circ$  անկյուն: Ըփումն անտեսել:
- 1) Ի՞նչ արագացումով է շարժվում մարմինը:
  - 2) Ի՞նչ արագություն ձեռք կրերի մարմինը շարժումն սկսելուց  $10 \text{ s}$  հետո:
  - 3) Ի՞նչ ուժով է մարմինը ճնշում հարթությանը:
387. 6 կգ զանգվածով մարմինը գտնվում է հորիզոնական հարթության վրա: Մարմնի վրա ազդող  $20 \text{ N}$  ուժը հորիզոնական հարթության հետ կազմում է  $30^\circ$  անկյուն և ուղղված է դեպի վեր: Հարթության և մարմնի միջև շփման գործակիցը  $0,1$  է:
- 1) Որքա՞ն է մարմնի վրա ազդող հորիզոնական հարթության հակագդեցության ուժը:
  - 2) Որքա՞ն է մարմնի վրա ազդող սահքի շփման ուժը:
  - 3) Որքա՞ն է մարմնի շարժման արագացումը:
388. Միմյանց հետ թերով կապված երկու մարմիններ, վերևինը՝  $0,6$  կգ, իսկ ներքևինը՝  $0,2$  կգ զանգվածներով, շարժվում են ուղղաձիգ դեպի վեր  $12 \text{ m}$  հաստատուն ուժի ազդեցությամբ:
- 1) Որքա՞ն է մարմինների համակարգի վրա ազդող համազոր ուժը:
  - 2) Որքա՞ն է մարմինների շարժման արագացումը:
  - 3) Որքա՞ն է մարմինները միացնող թելի լարման ուժը:
389. Մարմնին հաղորդում են թեք հարթությամբ դեպի վեր ուղղված սկզբնական արագություն: Թեք հարթության բարձրությունը  $4 \text{ m}$  է, իսկ երկարությունը՝  $5 \text{ m}$ : Ըփման գործակիցը  $0,5$  է:

- 1) Որքա՞ն է մարմնի արագացման մոդուլը թեք հարթությամբ սահելով բարձրանալիս:
- 2) Որքա՞ն է մարմնի արագացման մոդուլը թեք հարթությամբ ցած սահելիս:
- 3) Որքա՞ն է թեք հարթությամբ վեր բարձրանալիս և ցած սահելիս մարմնի վրա ազդող համազոր ուժերի հարաբերությունը: Պատասխանը բազմապատկել 10- ով:

**390.** **Թեք հարթության հիմքի մոտից մարմնին հաղորդում են թեք հարթության երկայնքով դեպի վեր ուղղված այնպիսի նվազագույն սկզբնական արագություն, որ այն հասնում է թեք հարթության գագարին: Թեք հարթության բարձրությունը 3 մ է, իսկ երկարությունը՝ 5 մ: Մարմնի և թեք հարթության միջև շփման գործակիցը 0,5 է:**

- 1) Որքա՞ն է վեր բարձրանալիս մարմնի շարժման արագացման մոդուլը:
- 2) Որքա՞ն է մարմնի սկզբնական արագությունը:
- 3) Որքա՞ն ժամանակում է մարմինը հասնում թեք հարթության գագար:

**391.** **Անշարժ ճախարակի վրայով զցված թելի ծայրերից կախված են 3 կգ և 1 կգ զանգվածներով բեռներ: Ճախարակի և թելի զանգվածները, շփումն անտեսել:**


- 1) Որքա՞ն է բեռների շարժման արագացումը:
- 2) Որքա՞ն է թելի լարման ուժը:
- 3) Որքա՞ն է ճախարակի առանցքի վրա ազդող ձնշման ուժը:

**392.**  $m_1 = 6$  կգ և  $m_2 = 4$  կգ զանգված-

ներով մարմինները միացված են

$m_0 = 5$  կգ զանգվածով ձողով և դրված

են ողորկ հորիզոնական սեղանի վրա



Նկ. 7

(Նկ. 7): Համակարգի վրա հորիզոնական ուղղությամբ ազդում են  $F_1 = 100$  Ն և  $F_2 = 40$  Ն իրար հակառակ ուղված ուժեր:

- 1) Որքա՞ն է համակարգի շարժման արագացումը:
- 2) Որքա՞ն է ձողի լարման ուժը B կետում:
- 3) Որքա՞ն է ձողի լարման ուժը A կետում:

**393.** **Թեք հարթության վրա, որի երկարությունը 5 մ է, իսկ բարձրությունը՝ 3 մ, դրված է 5 կգ զանգվածով մարմին: Մարմնի և թեք հարթության միջև շփման գործակիցը 0,2 է:**

- 1) Որքա՞ն է մարմնի կողմից թեք հարթության վրա ազդող ճնշման ուժը:
- 2) Որքա՞ն է մարմնի վրա ազդող սահքի շիման ուժը:
- 3) Որքա՞ն է թեք հարթության երկայնքով դեպի վեր ազդող այն ուժը, որի դեպքում մարմինը կշարժվի դեպի վեր ուղղված  $2 \text{ մ}/\text{վ}^2$  արագացումով:

394. Ինչ-որ մոլորակի վրա  $0,45 \text{ մ}$  երկարությամբ թելին ամրացված  $1 \text{ կգ}$  զանգվածով քեռը հորիզոնական հարթության մեջ  $1,5 \text{ մ}/\text{վ}$  արագությամբ հավասարաչափ պտտվում է շրջանագծով: Թելին ուղղաձիգի հետ կազմում է  $30^\circ$  անկյուն:

- 1) Որքա՞ն է թեղի կենտրոնաձիգ արագացումը:
- 2) Որքա՞ն է թելի լարման ուժը:
- 3) Այս տվյալներով որոշեք ազատ անկման արագացումն այդ մոլորակի վրա:

395. Երկրի երկու արհեստական արբանյակներ պտտվում են շրջանագծային ուղեծրերով՝ Երկրի մակերևույթից համապատասխանաբար  $600 \text{ կմ}$  և  $21600 \text{ կմ}$  քարձրություններում: Երկրի շառավիղն ընդունել  $6400 \text{ կմ}$ :

- 1) Որքա՞ն է փոքր ու մեծ շառավիղներով ուղեծրերով պտտվող արբանյակների արագությունների հարաբերությունը:
- 2) Որքա՞ն է մեծ ու փոքր շառավիղներով ուղեծրերով պտտվող արբանյակների պտտման պարբերությունների հարաբերությունը:
- 3) Որքա՞ն է փոքր ու մեծ շառավիղներով ուղեծրերով պտտվող արբանյակների կենտրոնաձիգ արագացումների հարաբերությունը:

## 2.5. ՉՈՐՍ ՊԱՏԱԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

396. Հորիզոնական մակերևոյթի վրա դադարի վիճակում 5 կգ զանգվածով մարմնի վրա հորիզոնական ուղղությամբ ազդող 20 Ն ուժի տևողությունը 5 Վ է: Մակերևոյթի և մարմնի միջև շփման գործակիցը 0,2 է:


- 1) Որքա՞ն է մարմնի վրա ազդող սահքի շփման ուժը:
- 2) Ի՞նչ արագացմամբ է շարժվում մարմինը ուժի ազդեցությամբ:
- 3) Որքա՞ն ճանապարհ է անցնում մարմինը շարժման առաջին 5 Վ-ում:
- 4) Որքա՞ն ճանապարհ է անցնում մարմինը շարժման սկզբից մինչև կանգ առնելը:

397. Հորիզոնական հարթության վրա դադարի վիճակից մարմինն սկսում է շարժվել հորիզոնական ուղղությամբ ուղղված որոշակի տևողությամբ հաստատուն ուժի ազդեցությամբ, որի մոդուլը երկու անգամ փոքր է մարմնի վրա ազդող ծանրության ուժի մոդուլից: Ուժի ազդեցությունը դադարելուց հետո մարմինն անցնում է 9 մ ճանապարհ: Հորիզոնական մակերևոյթի և մարմնի միջև շփման գործակիցը 0,2 է:

- 1) Ի՞նչ արագացմամբ է շարժվում մարմինն ուժի ազդման ընթացքում:
- 2) Որքա՞ն է մարմնի շարժման արագացման մոդուլը ուժի ազդեցությունը դադարելուց հետո:
- 3) Որքա՞ն է մարմնի շարժման առավելագույն արագությունը:
- 4) Որքա՞ն է ուժի ազդման տևողությունը:

398. Համակարգը բաղկացած է քեռներից, երկու անշարժ և մեկ շարժական անկշիռ ճախարակներից (նկ. 8): Անշարժ ճախարակներն ամրացված են առաստաղին: Երեք ճախարակներով անցկացված անկշիռ քելի ծայրերից կախված են  $m_1 = m_2 = 3$  կգ զանգվածով քեռներ: Շարժական ճախարակի առանցքից կախված է  $m_3 = 4$  կգ զանգվածով քեռ: Շփման և դիմադրության ուժերն անտեսել:

- 1) Որքա՞ն է  $m_1$  զանգվածով քեռի արագացումը:
- 2) Որքա՞ն է քելի լարման ուժը:
- 3) Որքա՞ն է շարժական ճախարակի առանցքի վրա ազդող ուժը:
- 4) Որքա՞ն է համակարգի կողմից առաստաղի վրա ազդող ուժը:




Նկ. 8

399. Անկշիռ զսպանակով միացված  $m_1 = 2$  կգ

և  $m_2 = 4$  կգ զանգվածներով երկու չորսունիքը  $\alpha = 30^\circ$  թեքության անկյուն ունեցող թեք հարթության վրա են (նկ. 9):  $m_1$  զանգվածով չորսուն չճպվող անկշիռ թելով միացված է թեք հարթության գագաթին և զուգահեռ է թեք հարթությանը: Համակարգը դադարի վիճակում է:

**Ծփումն անտեսել:**



Նկ. 9

- 1) Որքա՞ն է թելի լարման ուժը:
- 2) Որքա՞ն է զսպանակում առաջացած առաձգական ուժը:
- 3) Որքա՞ն է  $m_1$  զանգվածով չորսուի արագացումը թելը կտրելուց անմիջապես հետո:
- 4) Որքա՞ն է  $m_2$  զանգվածով չորսուի արագացումը թելը կտրելուց անմիջապես հետո:

400. Երկու չորսուներ, յուրաքանչյուրը 0,2 կգ զանգվածով, իրար հպկած սահում են թեք հարթությամբ, որի երկարությունը 5 մ է, իսկ բարձրությունը՝ 3 մ: Չորսուների և թեք հարթության միջև շփման գործակցությը՝ համապատասխանաբար՝ 0,01 և 0,1 են:

- 1) Որքա՞ն է փոքր շփման գործակցով չորսուի վրա ազդող շփման ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
- 2) Որքա՞ն է մեծ շփման գործակցով չորսուի վրա ազդող շփման ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 3) Որքա՞ն է չորսուներից մեկի՝ մյուսի վրա ազդող ուժի մոդուլը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
- 4) Որքա՞ն է չորսուների համատեղ շարժման արագացումը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

### 3. ԱՏԱՏԻԿԱ

#### 3.1. ՃԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


401. Ո՞րն է նախադասության ճիշտ շարտնակությունը:

Ուժերի համազոր է կոչվում ...

- 1) մարմնի զանգվածի և արագացման արտադրյալը:
- 2) այն ուժը, որը մարմնի վրա ունենում է նույն ազդեցությունը, ինչ կիրառված բոլոր ուժերը միասին:
- 3) մարմնի վրա ազդող ուժերի մոդուլների գումարը:
- 4) մարմնի վրա ազդող ուժերի մոդուլների տարրերությունը:

402. Երկու՝  $\vec{F}_1$  և  $\vec{F}_2$  ուժեր, կիրառված են նույն կետում և փոխուղղահայց են: Որքա՞ն է այդ ուժերի համազորի մոդուլը:

- |                             |                      |
|-----------------------------|----------------------|
| 1) $F_1 + F_2$ :            | 3) $F_1 - F_2$ :     |
| 2) $\sqrt{F_1^2 + F_2^2}$ : | 4) $F_1^2 + F_2^2$ : |




403. Սուր անկյուն կազմող երկու ուժեր կիրառված են մարմնի միևնույն կետում: Ինչպես է փոխվում այդ ուժերի համազորի մոդուլը՝ դրանց կազմած անկյունը մինչև  $180^\circ$  մեծացնելիս:

- 1) Մեծանում է:
- 2) Փոքրանում է:
- 3) Չի փոխվում:
- 4) Ակզեռում մեծանում է, ասա՞ փոքրանում:

404. Ո՞ր բանաձևով է որոշվում նկարում պատկերված  $\vec{F}_1$  և  $\vec{F}_2$  ուժերի համազորի մոդուլը:

- 1)  $F = \sqrt{F_1^2 + F_2^2}$  :
- 2)  $F = \sqrt{F_1^2 + F_2^2 + 2F_1F_2 \cos\alpha}$  :
- 3)  $F = \sqrt{F_1^2 + F_2^2 + 2F_1F_2 \sin\alpha}$  :
- 4)  $F = \frac{1}{2}F_1F_2 \sin\alpha$  :



405. Մարմնի վրա միևնույն կետում կիրառված 3 և 4 Ն ուժերի համազորի մոդուլը 5 Ն է: Որքա՞ն է այդ ուժերի վեկտորներով կազմած անկյունը:

- 1)  $0^\circ$ :
- 2)  $30^\circ$ :
- 3)  $60^\circ$ :
- 4)  $90^\circ$ :

406. Մարմնի վրա մի կետում կիրառված են  $F$  մոդուլով երկու ուժեր, որոնք միմյանց հետ կազմում են  $120^\circ$  անկյուն: Որքա՞ն է այդ ուժերի համագորք:

- |           |          |
|-----------|----------|
| 1) $3F$ : | 3) $F$ : |
| 2) $2F$ : | 4) $0$ : |

407. Մարմնի վրա մի կետում կիրառված են  $F$  մոդուլով երեք ուժեր, որոնք մի հարթության մեջ են և միմյանց հետ կազմում են  $60^\circ$  անկյուն: Որքա՞ն է այդ ուժերի համագորք:

- |           |          |
|-----------|----------|
| 1) $3F$ : | 3) $F$ : |
| 2) $2F$ : | 4) $0$ : |

408. Մարմնի վրա ազդում են  $\vec{F}_1$  և  $\vec{F}_2$  ուժերը: Ո՞րն է դրանց համագորք  $|\vec{F}_1 + \vec{F}_2|$  մոդուլի և մոդուլների  $|\vec{F}_1| + |\vec{F}_2|$  գումարի միշտ հարաբերակցությունն առավել ընդհանուր դեպքում:


- |  |   |
|--|---|
| 1) $ \vec{F}_1  +  \vec{F}_2  <  \vec{F}_1 + \vec{F}_2 $ : | 3) $ \vec{F}_1  +  \vec{F}_2  \leq  \vec{F}_1 + \vec{F}_2 $ : |
| 2) $ \vec{F}_1  +  \vec{F}_2  >  \vec{F}_1 + \vec{F}_2 $ : | 4) $ \vec{F}_1  +  \vec{F}_2  \geq  \vec{F}_1 + \vec{F}_2 $ : |

409. Նկարում պատկերված պարանի ծայրերին կիրառված են 100-ական նյուտոն ուժեր: Որքա՞ն է նրա լարման ուժը: Պարանի ծանրության ուժն ամսենել:

- |                     |                      |  |      |
|---------------------|----------------------|--|------|
| 1) $0$ :            | 3) $100 \text{ N}$ : | $\xleftarrow{\hspace{1cm}} \xrightarrow{\hspace{1cm}}$ | 100N |
| 2) $50 \text{ N}$ : | 4) $200 \text{ N}$ : |  |      |


410. Որքա՞ն է նկարում պատկերված  $F_1 = 3 \text{ N}$ ,  $F_2 = 4 \text{ N}$  և  $F_3 = 5 \text{ N}$  ուժերի համագորք:

- |                    |                     |
|--------------------|---------------------|
| 1) $0$ :           | 3) $10 \text{ N}$ : |
| 2) $5 \text{ N}$ : | 4) $30 \text{ N}$ : |



411.  $O$  կետի վրա կիրառված են միևնույն հարթության մեջ հիմք ուժեր: Ո՞ր ուժի բացակայության դեպքում մնացած ուժերի համագորք կլինի զրո:

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1) $\vec{F}_1$ : | 3) $\vec{F}_4$ : |
| 2) $\vec{F}_2$ : | 4) $\vec{F}_5$ : |




412. Ո՞ր մեծությունն է կոչվում ուժի բազուկ:

- Ուժի ազդման գծից պտտման առանցքի հեռավորությունը:
- Ուժի մոդուլի և պտտման առանցքի ուժի կիրառման կետի հեռավորության արտադրյալը:
- Զանգվածների կենտրոնից պտտման առանցքի հեռավորությունը:
- Ուժի կիրառման կետից պտտման առանցքի հեռավորությունը:


**413. Նկարում պատկերված ձողը կարող է պտտվել  $O$  կետի շուրջ: Որքա՞ն է  $\vec{F}_2$  ուժի բազուկը:**

- Հավասար է  $OB$  հատվածի երկարությանը:
- Հավասար է  $OA$  հատվածի երկարությանը:
- Հավասար է  $BA$  հատվածի երկարությանը:
- Չը:



**414. Ո՞րն է  $\vec{F}$  ուժի բազուկի ճիշտ արտահայտությունն Օ կետով անցնող և նկարի հարթության ուղղահայաց առանցքի նկատմամբ:**

- |                          |                                       |
|--------------------------|---------------------------------------|
| 1) $d = l :$             | 3) $d = l \sin \alpha :$              |
| 2) $d = l \cos \alpha :$ | 4) $d = l \operatorname{tg} \alpha :$ |



**415. Ի՞նչ միավորով է չափում ուժի մոմենտը միավորների ՄՀ-ում:**


- |          |                        |
|----------|------------------------|
| 1) 1 Ն:  | 3) 1 Նմ <sup>2</sup> : |
| 2) 1 Նմ: | 4) 1 Ջ:                |

**416. Ստորև բերված մեծություններից ո՞րն ունի կզմ<sup>2</sup>/վ<sup>2</sup> չափայնություն:**

- |                 |                  |
|-----------------|------------------|
| 1) Ուժ:         | 3) Ուժի իմպուլս: |
| 2) Ուժի բազուկ: | 4) Ուժի մոմենտ:  |


**417. Որքա՞ն է նկարում պատկերված  $F = 20$  Ն ուժի մոմենտը  $O$  կետով անցնող և նկարի հարթության ուղղահայաց առանցքի նկատմամբ:**

- |            |           |
|------------|-----------|
| 1) 3,4 Նմ: | 3) 34 Նմ: |
| 2) 20 Նմ:  | 4) 40 Նմ: |



**418. Որքա՞ն է նկարում պատկերված  $\vec{F}$  ուժի մոմենտը  $O$  կետով անցնող և նկարի հարթության ուղղահայաց առանցքի նկատմամբ:**

- |                               |  |
|-------------------------------|--|
| 1) $F \cdot OM :$             | 3) $F \cdot OM \sin \alpha :$              |
| 2) $F \cdot OM \cos \alpha :$ | 4) $F \cdot OM \operatorname{tg} \alpha :$ |




419. Ինչպե՞ս կփոխվի ուժի մոմենտը տվյալ առանցքի նկատմամբ, եթե ուժի մոդուլը մեծացնենք 3 անգամ, իսկ բազուկը փոքրացնենք 2 անգամ:

- |                        |                      |
|------------------------|----------------------|
| 1) Կմեծանա 1,5 անգամ:  | 3) Կմեծանա 6 անգամ:  |
| 2) Կփոքրանա 1,5 անգամ: | 4) Կփոքրանա 6 անգամ: |


420. Որքա՞ն է նկարում պատկերված  $l$  երկարությամբ և  $m$  զանգվածով համասեռ ձողի ծանրության ուժի մոմենտը կախման կետով անցնող և նկարի հարթության ուղղահայաց առանցքի նկատմամբ:

- |                                   |                                   |
|-----------------------------------|-----------------------------------|
| 1) $mg l \sin \alpha :$           | 3) $mg \frac{l}{2} \cos \alpha :$ |
| 2) $mg \frac{l}{2} \sin \alpha :$ | 4) $mg l \cos \alpha :$           |




421. Որքա՞ն է սկավառակի վրա ազդող  $\vec{F}_1$  և  $\vec{F}_2$  ուժերի մոմենտների գումարը սկավառակի կենտրոնով անցնող և նկարի հարթության ուղղահայաց առանցքի նկատմամբ: Սկավառակի շառավիղը  $R$  է:

- |                              |             |
|------------------------------|-------------|
| 1) $R\sqrt{F_1^2 + F_2^2} :$ | 3) $RF_1 :$ |
| 2) $R(F_1 + F_2) :$          | 4) $RF_2 :$ |



422. Որքա՞ն է պատիճ հենված սանրութիւն վրա հատակի հակագնեցության  $\vec{N}$  ուժի մոմենտը  $B$  կետով անցնող և նկարի հարթության ուղղահայաց առանցքի նկատմամբ:

- |                   |                   |
|-------------------|-------------------|
| 1) $N \cdot BC :$ | 3) $N \cdot AB :$ |
| 2) $N \cdot AC :$ | 4) $0 :$          |



423. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Մարմնի զանգվածների կենտրոն կոչվում է այն ուղիղների հատման կետը, որոնց երկայնքով ազդող ուժերը մարմնին հաղորդում են...


- 1) միայն պտտական շարժում:
- 2) միայն համընթաց շարժում:
- 3) և համընթաց, և պտտական շարժում:
- 4) միայն հավասարաչափ շարժում:

424. Սետաղե լարի ուղիղ կտորը օղակ դարձնելիս փոխվո՞ւմ են արդյոք նրա զանգվածն ու զանգվածների կենտրոնը:

- 1) Զանգվածը չի փոխվում, զանգվածների կենտրոնը փոխվում է:
- 2) Զանգվածների կենտրոնը չի փոխվում, զանգվածը փոխվում է:
- 3) Երկուսն էլ փոխվում են:
- 4) Երկուսն էլ չեն փոխվում:

**425. Որոշեք նկարում պատկերված հավասարասրուն եռանկյան տեսք ունեցող համասեռ քիրեղի զանգվածի կենտրոնի  $X_c$  և  $Y_c$  կոորդինատները:**


- 1)  $X_c = 3$  սմ,  $Y_c = 3$  սմ:
- 2)  $X_c = 3$  սմ,  $Y_c = 2$  սմ:
- 3)  $X_c = 2$  սմ,  $Y_c = 3$  սմ:
- 4)  $X_c = 2$  սմ,  $Y_c = 2$  սմ:



**426. Լծակի վրա ազդում է երկու ուժ, որոնց բազուկները  $d_1$  և  $d_2$  են: Կարճ բազուկի վրա ազդող ուժը  $\vec{F}_1$  է: Որքա՞ն է երկար բազուկի վրա ազդող ուժը, եթե լծակը հավասարակշռության վիճակում է:**


- |                                    |                            |
|------------------------------------|----------------------------|
| 1) $\frac{F_1 d_1}{d_2}$ :         | 3) $\frac{d_1}{F_1 d_2}$ : |
| 2) $(F_1 + F_2) \frac{d_1}{d_2}$ : | 4) $\frac{d_2}{F_1 d_1}$ : |

**427. Նկարում պատկերված անկշիռ լծակը հավասարակշռության վիճակում է: Որքա՞ն է նրա վրա ազդող  $\vec{F}_1$  և  $\vec{F}_2$  ուժերի մոմենտների հարաբերությունը հենման կետով անցնող և նկարի հարքությանն ուղղահայաց առանցքի նկատմամբ:**



- |         |         |
|---------|---------|
| 1) 0:   | 3) 1:   |
| 2) 0,4: | 4) 2,5: |

**428. Ի՞նչ  $F$  ուժ պետք է կիրառել թելի ազատ ծայրին՝ 10 կգ զանգվածով բեռը հավասարաշափ վեր բարձրացնելու համար: Ծախսարակների և թելի զանգվածները, ինչպես նաև շփումն անտեսել:**




- |          |           |
|----------|-----------|
| 1) 5 Ն:  | 3) 50 Ն:  |
| 2) 10 Ն: | 4) 100 Ն: |

**429. Հնարավո՞ր է արդյոք, որ մարմինը կատարի պտտական շարժում, եթե նրա վրա ազդող ուժերի վեկտորական գումարը զրո է:**


- 1) Այս, եթե այդ ուժերը կիրառված են միևնույն կետում:
- 2) Այս, եթե այդ ուժերը կիրառված են տարրեր կետերում:
- 3) Կախված է մարմնի ձևից:
- 4) Ոչ մի դեպքում հնարավոր չէ:

**430.** Ի՞նչ զանգվածով բեռ պետք է կախել ձողի  $C$  կետից, որպեսզի այն լինի հավասարակշռության վիճակում:

- 1) 0,1 կգ:
- 2) 0,2 կգ:
- 3) 0,4 կգ:
- 4) 0,8 կգ:




**431.**  $O$  պտտման առանքով անկշիռ լծակը  $\vec{F}$  ուժի ազդեցությամբ գտնվում հավասարակշռության վիճակում է, եթե  $B$  կետից կախված է  $m$  զանգվածով բեռ: Ինչպես պետք է փոխել ուժի նորուր, որպեսզի բեռի կախման կետը  $C$  դիրք տեղափոխվելիս լծակի հավասարակշռությունը չխախտվի:



- 1) Մեծացնել 3 անգամ:
- 2) Փորբացնել 3 անգամ:
- 3) Մեծացնել 2 անգամ:
- 4) Փորբացնել 2 անգամ:


**432.** Երկու ուժեր կիրառված են համասեռ ձողի ծայրերին այնպես, ինչպես պատկերված է նկարում: Ո՞ր հատվածում պետք է կիրառվի դրանց համազոր ուժը և որքա՞ն է նրա նորուրը:

- 1)  $AO$  հատվածում,  $F_1 + F_2$ :
- 2)  $AO$  հատվածում,  $|F_1 - F_2|$ :
- 3)  $BO$  հատվածում,  $F_1 + F_2$ :
- 4)  $BO$  հատվածում,  $|F_1 - F_2|$ :




**433.** Նկարում պատկերված անկշիռ ձողի վրա ազդում են  $|\vec{F}_1| > |\vec{F}_2|$  երկու հակուղղված ուժեր: Նկարի հարքության ուղղահայաց առանցքի նկատմամբ ո՞ր կետով անցնող առանցքի նկատմամբ ձողը կլինի հավասարակշռության վիճակում:

- 1)  $a$  կետով:
- 2)  $b$  կետով:
- 3)  $c$  կետով:
- 4) Ոչ մի կետով:



434. Երկարությամբ  $L$  անկշիռ ծողի ծայրերին ամրացված են  $m_1$  և  $m_2$  զանգվածությունով զնդեր:  $m_1$  զանգվածով զնդից ի՞նչ հեռավորությամբ պետք է թելից կախել ծողը, որպեսզի այն լինի հավասարակշռության մեջ:




$$1) \quad x = \frac{Lm_2}{m_1 + m_2} :$$

$$3) \quad x = \frac{Lm_1}{m_1 + m_2} :$$

$$2) \quad x = \frac{L(m_1 - m_2)}{m_1 + m_2} :$$

$$4) \quad x = \frac{L(m_1 + m_2)}{m_1 - m_2} :$$

435. Երկու հենարանների վրա դրված  $L$  երկարությամբ  $AB$  անկշիռ ծողի Ա ծայրից  $s$  հեռավորությամբ կետում ծողին ուղղահայց ազդում է  $F$  ուժը: Որքա՞ն է  $B$  հենարանի հակագդեցության ուժը:



$$1) \quad \frac{F(L-s)}{L} :$$

$$3) \quad \frac{Fs}{L} :$$

$$2) \quad \frac{FL}{s} :$$

$$4) \quad \frac{FL}{s-L} :$$


436. Համասեռ ծողը Օ հողակապով ամրացված է պատիճ և պահվում է հավասարակշռության վիճակում  $AB$  թելի օգնությամբ: Ինչպե՞ս է ուղղված հողակապի՝ ծողի վրա ազդող ուժը:

1) ա:

3) զ:

2) բ:

4) դ:



437. Ինչպիսի՞ն է ուղղաձիգ թելից կախված զնդիկի հավասարակշռությունը:

1) Կայուն:                  Անկայուն:

2) Անտարբեր:

3) Պատասխանը կախված է թելի երկարությունից:

438. Թեր հարթության ի՞նչ առավելագույն անկյան դեպքում նրա վրա դադարի վիճակում խորանարդը չի շրջվի:

1)  $15^0$ :

3)  $45^0$ :

2)  $30^0$ :

4)  $60^0$ :

### 3.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


439. 60 կգ զանգվածով մարդը իր ձեռքում է պահում 20 կգ զանգվածով մարմինը: Ի՞նչ ուժով է նա ճնշում գետնին:

440. Երկրի մակերևույթի վրա է 1 կգ զանգվածով մարմինը: Նրան ամրացված է 200 Ն/մ կոշտությամբ ուղղաձիգ զսպանակ: Որքա՞ն է մարմնի ճնշման ուժը Երկրի մակերևույթի վրա, եթե զսպանակի երկարացումը 1սմ է:

441. 4 կգ զանգվածով մարմինը թեք հարթության վրա ճնշում է 32 Ն ուժով: Որքա՞ն է մարմնի ծանրության ուժի պրոյեկցիայի մոդուլը թեք հարթության երկայնքով:

442. Մարմնի մի կետի վրա միմյանց նկատմամբ  $120^{\circ}$  անկյան տակ ազդում են 10 Ն մեծությամբ երկու ուժեր: Որքա՞ն է այդ ուժերի համազորը:

443. Նավակը պահպում է ափին ամրացված երկու միատեսակ ճոպաններով (նկ. 10): Նավակի վրա ի՞նչ ուժով է ազդում ափից նրան ուղղահայաց փշող քամին, եթե յուրաքանչյուր ճոպանի լարման ուժը 600 Ն է, իսկ ափի հետ նրանց կազմած անկյունը՝  $\alpha = 30^{\circ}$ :



Նկ. 10

444. Հորիզոնի հետ  $30^{\circ}$ -ի անկյուն կազմող թեք հարթության վրա դրված է 12 կգ զանգվածով մարմին: Թեք հարթության երկայնքով դեպի վեր ի՞նչ մեծությամբ ուժ պետք է կիրառել որպեսզի մարմինը գտնվի դադարի վիճակում: Ըկումը բացակայում է:

445. Զանի՝ անգամ կմեծանա ուժի մոմենտը, եթե ուժը մեծացնենք 6 անգամ, իսկ բազուկը փոքրացնենք 2 անգամ:


446. Վագոնի անվագուտու վրա ազդում է 500 Ն արգելակող ուժ: Որքա՞ն է այդ ուժի մոմենտն անիվի պտտման առանցքի նկատմամբ, եթե անիվի շառավիղը 0,5 մ է:

447. 4 կգ զանգվածով համասեռ ձողի ծայրը հողակապով ամրացված է առաստաղին: Չողը թեք վիճակում պահպում է մյուս ծայրից կապված ուղղաձիգ պարանով: Որքա՞ն է պարանի լարման ուժը:

448. Որքա՞ն է թելի լարման ուժը, եթե շարժական ճախարակից կախված 20 կգ զանգվածով բեռք հավասարաչափ վեր է բարձրացվում: Թելի և ճախարակի զանգվածներն անտեսել:

449. Որքա՞ն է այն  $F$  ուժը, որն անկշիտ լծակի օգնությամբ  $P$  բեռք պահում է հավասարակշռության վիճակում՝  $P = 20$  Ն,

$$AO = 2OB \text{ (նկ. 11):}$$



Նկ. 11

450. Համասեռ ձողը, որի մի ծայրից 12 կգ զանգվածով բեռք է կախված, հորիզոնական դիրքում կլինի հավասարակշռության վիճակում, եթե նեցուկ գնեն բեռքից ձողի երկարության  $1/5$ -ին հավասար հեռավորությամբ (նկ. 12):


Որքա՞ն է ձողի զանգվածը:



Նկ. 12

451. 2 կգ զանգվածով համասեռ ձողն իր մի ծայրին ամրացված որոշակի զանգված ունեցող ծանրոցով հորիզոնական դիրքում կլինի հավասարակշռության վիճակում, եթե նրան նեցուկ դրվի ձողի ծայրից նրա երկարության  $1/8$ -ին հավասար հեռավորությամբ: Որքա՞ն է ծանրոցի զանգվածը:

452. 6 կգ զանգվածով ձողը տեղադրված է երկու հենարանների վրա: Որքա՞ն է ճնշման ուժը ձախ հենարանի վրա  
(նկ. 13):



Նկ. 13


453. 1 կգ զանգվածով և  $0,72$  մ երկարությամբ համասեռ ձողի ծայրերից կախված են 1 կգ և 2 կգ զանգվածներով զնուեք: Զողի մեջտեղից ի՞նչ հեռավորությամբ պետք է ձողին դրվի հենարան, որպեսզի համակարգը հավասարակշռվի: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

454. Հաստոցի լիսեռի եզրագծի վրա շղափողով ազդում է մի ուժ, որի նոմենտը լիսեռի առանցքի նկատմամբ  $6,25$  Նմ է: Որքա՞ն է այդ ուժը, եթե լիսեռի տրամագիծը 25 սմ է:

### 3.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

455.  $m = 10$  կգ զանգվածով բեռք կախված է ABC բարձակից (նկ. 14): AB և BC ձողերի կազմած անկյունը՝  $\alpha = 30^\circ$ :

- 1) Որքա՞ն է BC դիմկալի սեղման ուժը:
- 2) Որքա՞ն է AB հորիզոնական ձողի վրա ազդող ուժը:




456. 2 կգ զանգվածով մարմինը բեր հարթության վրա է, որը հորիզոնական է և կազմում է  $30^\circ$  անկյուն: Ըփումն անտեսել:

Նկ. 14

- 1) Թեր հարթության երկայնքով ի՞նչ ուժ պետք է կիրառել մարմինը հավասարակշռության վիճակում պահելու համար:
- 2) Որքա՞ն է բեր հարթության հակագեցության ուժը:


457.  $m_1 = 6$  կգ և  $m_2 = 3$  կգ զանգվածներով երկու բեռնիացված են իրար զապանակով (նկ. 15): Երրորդ համակարգը կախված է վերևի բեռից, զապանակի երկարությունը՝  $L_1 = 1,25$  մ: Համակարգը հորիզոնական պատվանդանին դնելու դեպքում զապանակի երկարությունը՝  $L_2 = 0,5$  մ:



Նկ. 15

- 1) Որքա՞ն է զապանակի սկզբնական երկարությունը:
- 2) Որքա՞ն է զապանակի կոշտությունը:

458. 2000 Ն կշռով համասեռ զերանն իր ծայրերով հենված է A և B հենարանների վրա, որոնց հեռավորությունը 6 մ է (նկ. 16): Աջ հենարանից 1 մ հեռավորությամբ C կետում ազդում է 3000 Ն ուժ:



Նկ. 16

459. 3 մ երկարությամբ և 2 կգ զանգվածով համասեռ ձողի ձախ ծայրից կախված է 1 կգ զանգվածով բեռ, իսկ աջ ծայրից՝ 3 կգ զանգվածով բեռ:

- Զողի աջ ծայրից ի՞նչ հեռավորությամբ պետք է դնել հենարանը, որպեսզի ձողը լինի հավասարակշռության մեջ:
- Որքա՞ն է այդ հենարանի վրա ազդող ուժը:

**460. 16 մ երկարությամբ և 2,1 տ զանգվածով խողովակը դրված է երկու հենարանների վրա՝ A ծայրից 4 մ և**

**14 մ հեռավորությամբ (նկ. 17):**



Նկ. 17


- Ի՞նչ նվազագույն ուժ պետք է կիրառել խողովակի B ծայրին՝ այն բարձրացնելու համար:
- Ի՞նչ նվազագույն ուժ պետք է կիրառել խողովակի A ծայրին՝ այն բարձրացնելու համար:

### 3.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

461. Երկու անշարժ ճախարակների վրա զցված չճպվող թելի ծայրերից կախված են  $m_1 = 3$  կգ և  $m_2 = 4$  կգ զանգվածով բեռներ (նկ. 18):

Ճախարակների միջև թելից կախում են  $M$  զանգվածով ծանրոցը: Համակարգի հավասարակշռությունից հետո թելի առաջին միմյանց հետ կազմում են  $90^\circ$  անկյուն:

- 1) Որքա՞ն է առաջում թելի լարման ուժը:
- 2) Որքա՞ն է բարձրացնելու առաջում թելի լարման ուժը:
- 3) Որքա՞ն է ծանրոցի  $M$  զանգվածը:




Նկ.18

462. Նույն երկարությամբ երկու զսպանակից հորիզոնական դիրքով կախված է անկշիռ ձող: Առաջին զսպանակի կոշտությունը  $20 \text{ N/m}$  է, երկրորդինը՝  $40 \text{ N/m}$ : Չողից  $300 \text{ g}$  զանգվածով բեռ կախելիս այն շարունակում է մնալ հորիզոնական:

- 1) Որքա՞ն է առաջին և երկրորդ զսպանակների ամրացնան կետերից բեռի կախման կետի հեռավորությունների հարաբերությունը:
- 2) Որքա՞ն է առաջին զսպանակի առաձգական ուժը:
- 3) Որքա՞ն է երկրորդ զսպանակի առաձգական ուժը:

463. ABC բարձակից կախված է  $120 \text{ kg}$  զանգվածով բեռ (նկ. 19):  $BC = 2 \text{ m}$ :

- 1) Որքա՞ն է բեռի ծանրության ուժի բազուկը C կետի նկատմամբ:
- 2) Որքա՞ն է բեռի ծանրության ուժի մոմենտը C կետի նկատմամբ:
- 3) Որքա՞ն է բեռի ծանրության ուժի մոմենտը A կետի նկատմամբ:




Նկ. 19

### 3.4. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

464. AB և CD համասեռ ձողերը չճպվող, անկյուն թեկրի և ճախարակի միջոցով միացված են իրար, ինչպես ցույց է տրված 20-րդ նկարում։ Թելերն ուղղաձիգ են։ AB ձողի զանգվածը 2 կգ է։  $AO = OB$ ։

- 1) Որքա՞ն է AE և BF թելերի լարման ուժը։
- 2) Որքա՞ն է AE թելի լարման ուժը։
- 3) Որքա՞ն է CO թելի լարման ուժը։
- 4) Որքա՞ն է CD ձողի զանգվածը։



Նկ. 20

## 4. ԱՇԽԱՏԱՆՔ, ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ԷՆԵՐԳԻԱ: ԻՄՊՈՒԼՍ: ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՍԵԽԱՆԻԿԱՅՈՒՄ

### 4.1. ԹԻՇԸ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

465. Ո՞ր ֆիզիկական մեծությունն է սահմանվում որպես հաստատուն  $F$  ուժի և  $\vec{s}$  տեղափոխության  $\vec{F} \cdot \vec{s}$  սկալյար արտադրյալ:

- 1) Էներգիան:
- 2) Հզորությունը:
- 3) Հաստատուն ուժի աշխատանքը:
- 4) Հաստատուն ուժի ճնշումը:

466. Նշված միավորներից ո՞րն է աշխատանքի չափման միավորը ՄՀ-ում:


- |          |          |
|----------|----------|
| 1) 1 Ջ:  | 3) 1 Ն:  |
| 2) 1 Վտ: | 4) 1 Պա: |

467. Որո՞նք են ֆիզիկական այն երկու մեծությունները, որոնք չափվում են նույն միավորներով:

- 1) Ուժ և զանգված:
- 2) Պոտենցիալ էներգիա և ուժի իմպուլս:
- 3) Կինետիկ էներգիա և աշխատանք:
- 4) Ուժ և աշխատանք:


468. Հորիզոնական հարթության վրա երեք չորսուներից 1-ինը դադարի վիճակում է, 2-րդն առանց շփման շարժվում է իներցիայով, 3-րդն առանց շփման շարժվում է ուժի ազդեցությամբ: Ո՞ր դեպքում է կատարվում աշխատանք:

- 1) 1-ին դեպքում:
- 2) 2-րդ դեպքում:
- 3) 3-րդ դեպքում:
- 4) 2-րդ և 3-րդ դեպքերում:



469. Նկարում պատկերված մարմինն ուղիղ գծով շարժվում է դեպի աջ: Ո՞ր ուժի կատարած աշխատանքն է բացասական:

- 1) Միայն  $\vec{F}_4$ :




2) Սիայն  $\vec{F}_5$ ,  $\vec{F}_6$ :

3) Սիայն  $\vec{F}_2$ ,  $\vec{F}_3$ ,  $\vec{F}_4$ ,  $\vec{F}_5$ :

4) Սիայն  $\vec{F}_3$ ,  $\vec{F}_4$ :

470. Նկարում պատկերված են մարմնի վրա ազդող հաստատուն  $\vec{F}$  ուժի և նրա  $\vec{s}$  տեղափոխության վեկտորների փոխադարձ դասավորությունները: Ո՞ր դեպքում միևնույն տեղափոխության համար տվյալ ուժի կատարած աշխատանքը կլինի ավելի մեծ:

- 1) ա:                    3) զ:  
2) բ:                    4) դ:




471.  $m$  զանգվածով արհեստական արբանյակը մողուլով հաստատուն  $v$  արագությամբ պտտվում է Երկրի շորջը՝  $r$  շառավղով շրջանագծային ուղեծրություն: Որքա՞ն է արբանյակի ծանրության ուժի կատարած աշխատանքը  $\frac{1}{6}$ -րդ պարբերության ընթացքում:


- 1)  $\frac{mv^2}{2}$ :                    3)  $2\pi r mg$ :  
2)  $\frac{mv^2}{r}$ :                    4) 0:

472.  $R$  երկարությամբ թելին ամրացված մարմինը  $v$  արագությամբ հավասարաչափ պտտվում է ուղղաձիգ հարթության մեջ: Որքա՞ն է ծանրության ուժի կատարած աշխատանքը մեկ պտույտի ընթացքում:

- 1)  $mgR$ :                    3)  $m\left(g + \frac{v^2}{R}\right)R$ :  
2)  $4mgR$ :                    4) 0:



473. Նկարում պատկերված է մարմնի վրա ազդող ուժի մողությունը կատարված տեղափոխության մողությոց կախումն արտահայտող



**գրաֆիկը:** Որքա՞ն է այդ ուժի կատարած աշխատանքը 4 մ տեղափոխության դեպքում:

- |          |          |
|----------|----------|
| 1) 6 Ω:  | 3) 18 Ω: |
| 2) 12 Ω: | 4) 24 Ω: |

**474.** *m* զանգվածով մարմինը հորիզոնի հետ  $\alpha$  անկյուն կազմող թեք հարթությամբ դեպք ներքև սահելիս անցնում է *L* ճանապարհ: Որքա՞ն է ծանրության ուժի կատարած աշխատանքը:

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) $mgL$ :             | 3) $mgL \cos \alpha$ : |
| 2) $mgL \sin \alpha$ : | 4) 0:                  |

**475.** Տակառը լիք էր ջրով: Աղջկը դույլով դատարկեց տակառի ջրի կեսը: Մնացածը դատարկեց տղան: Ինչպիսի՞ն է աղջկա և տղայի կատարած աշխատանքների հարաբերակցությունը:


- 1) Կատարեցին նույն աշխատանքը:
- 2) Աղջկա կատարած աշխատանքը մեծ է տղայի կատարած աշխատանքից:
- 3) Տղայի կատարած աշխատանքը մեծ է աղջկա կատարած աշխատանքից:
- 4) Հնարավոր չէ համեմատել:

**476.** Ո՞րն է հզորության միավորը՝ արտահայտված *ՄՀ*-ի հիմնական միավորներով:

- |  |                             |
|--|-----------------------------|
| 1) 1 կգ մ <sup>2</sup> Վ <sup>-1</sup> : | 3) 1 կգ մ Վ <sup>-2</sup> : |
| 2) 1 կգ մ <sup>2</sup> Վ <sup>-3</sup> : | 4) 1 կգ մ Վ <sup>-3</sup> : |

**477.** Նկարում պատկերված է շարժիչի կատարած աշխատանքի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է շարժիչի հզորությունը:

- |            |            |
|------------|------------|
| 1) 25 Վտ:  | 3) 200 Վտ: |
| 2) 100 Վտ: | 4) 400 Վտ: |



**478.** Հաստատուն հզորության դեպքում ավտոմեքենայի արագությունը փորրացավ երկու անգամ: Ինչպես վոխվեց քարշի ուժը:

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) Մեծացավ 2 անգամ:  | 3) Մեծացավ 4 անգամ:  |
| 2) Փոքրացավ 2 անգամ: | 4) Փոքրացավ 4 անգամ: |

**479.** Ինչպես է վոխվում ավտոմեքենայի քարշի ուժը, եթե հաստատուն հզորության դեպքում նրա արագությունը մեծացնում ենք:

- |             |                |
|-------------|----------------|
| 1) Աճում է: | 3) Չի վոխվում: |
|-------------|----------------|

- 2) Նվազում է:                          4) Սկզբում աճում է, հետո՝ նվազում:

480.  $m$  զանգվածով չորսուն հորիզոնական հարթության վրա կատարում է  $R$  շառավիրվ շրջանագծային շարժում: Որքա՞ն է շփման ուժի կատարած աշխատանքը մեկ պտույտի ընթացքում, եթե շփման գործակիցը  $\mu$  է:

- 1)  $\mu mg$ :                                  3)  $-2\pi R\mu mg$ :  
2)  $2\pi R\mu mg$ :                                  4)  $0$ :

481.  $k$  կոշտությամբ զսպանակի երկարացումը  $x$ -ից նվազեց մինչև  $0$ : Որքա՞ն է առաձգականության ուժի կատարած աշխատանքը:

- 1)  $kx$ :    3)  $-\frac{kx}{2}$ :  
2)  $\frac{kx^2}{2}$ :    4)  $kx^2$ :

482. Զսպանակը նախ ճգնեցին  $x$  չափով, ապա ևս նույնքան: Համեմատել առաջին և երկրորդ դեպքերում կատարված աշխատանքների  $A_1$  և  $A_2$  արժեքները:

- 1)  $A_2 = A_1$ :    3)  $A_2 = 3A_1$ :  
2)  $A_2 = 2A_1$ :    4)  $A_2 = 9A_1$ :

483. Զսպանակին ամրացված  $m$  զանգվածով մարմինը  $x_0$  լայնույթով տատանվում է ուղղաձիգ հարթության մեջ: Որքա՞ն է ծանրության ուժի կատարած աշխատանքը մեկ պարբերության ընթացքում:

- 1)  $0$ :    3)  $2mgx_0$ :  
2)  $mgx_0$ :    4)  $4mgx_0$ :

484. Անիրաժեշտ է փորել  $H$  խորությամբ ջրիոր: Փորելիս ի՞նչ խորության վրա կկատարվի պահանջվող ամրող աշխատանքի կեսը:

- 1)  $\frac{H}{2}$ :    3)  $\frac{\sqrt{2}H}{2}$ :  
2)  $\frac{H}{3}$ :    4)  $\frac{2H}{3}$ :

485. Ո՞րն է շարժիչի ՕԳԳ-ն հաշվելու քանակը, եթե օգտակար հզորությունը  $N_0$  է, իսկ ծախսած հզորությունը՝  $N$ :

$$1) \quad \eta = N_0 N \cdot 100\% :$$

$$3) \quad \eta = \frac{N_0}{N} \cdot 100\% :$$

$$2) \quad \eta = \frac{N}{N_0} \cdot 100\% :$$

$$4) \quad \eta = \frac{1}{NN_0} \cdot 100\% :$$

**486.** Թեր հարթությամբ բեռք բարձացնելիս ուժի մեջ շահում ենք 2 անգամ: Շահում ենք արդյոք այդ դեպքում կատարվող աշխատանքի մեջ: Ըստումը հաշվի չառնել:

- 1) Շահում ենք 2 անգամ:  
2) Շահում ենք 4 անգամ:

- 3) Կորցնում ենք 2 անգամ:  
4) Ոչ շահում ենք, ոչ կորցնում:


**487.** Նկարում պատկերված մեխանիզմի օգնությամբ  $m$  զանգվածով բերք ող հավասարաչափ բարձրացնում են  $\vec{F}$  ուժի ազդեցությամբ: Որքա՞ն է մեխանիզմի ՕԳԳ-ն:

$$1) \quad \frac{F}{mg} :$$

$$3) \quad \frac{mg}{2F} :$$

$$2) \quad \frac{mg}{F} :$$

$$4) \quad \frac{2F}{mg} :$$



**488.** Ներքոնշյալ պարզ մեխանիզմներից ո՞րի դեպքում ենք շահում աշխատանքի մեջ:

- 1) Թեր հարթության դեպքում:  
2) Լծակի:  
3) Ոչ մի մեխանիզմի դեպքում:  
4) Բոլոր պարզ մեխանիզմների դեպքում:

**489.** Ի՞նչ մեծություններից է կախված մարմնի կինետիկ էներգիան:

- 1) Երկրի մակերևույթից ունեցած բարձրությունից:  
2) Միայն մարմնի զանգվածից:  
3) Միայն մարմնի արագությունից:  
4) Մարմնի զանգվածից և արագությունից:

**490.** Ո՞րն է ճախաղասության ճիշտ շարունակությունը:

Կինետիկ էներգիան չափում է նոյն միավորներով, ինչ ...

- 1) ուժի աշխատանքը:  
2) ուժի իմպուլսը:

3) ճնշումը:

4) հզորությունը:

**491.** Ինչպե՞ս պետք է փոխել մարմնի արագությունը, որպեսզի նրա կինետիկ էներգիան մեծանա 4 անգամ:

- 1) Մեծացնել 2 անգամ:  
2) Մեծացնել 4 անգամ:

- 3) Փոքրացնել 2 անգամ:  
4) Փոքրացնել 4 անգամ:

492. Մարդատար ավտոմեքենայի արագությունը երկու անգամ մեծ է բեռնատար ավտոմեքենայի արագությունից, իսկ վերջինիս զանգվածը չորս անգամ մեծ է մարդատարի զանգվածից: Ո՞րն է մեքենաների կինետիկ էներգիաների ճիշտ հարաբերությունը:

$$\begin{array}{ll} 1) \frac{E_{\text{d}}}{E_{\text{p}}} = \frac{1}{2}: & 3) \frac{E_{\text{d}}}{E_{\text{p}}} = 2: \\ 2) \frac{E_{\text{d}}}{E_{\text{p}}} = 1: & 4) \frac{E_{\text{d}}}{E_{\text{p}}} = 4: \end{array}$$

493. Անշարժ մարմնին  $v$  արագություն հաղորդելու համար անհրաժեշտ է կատարել  $A$  աշխատանք: Ի՞նչ աշխատանք պետք է կատարել այդ մարմնի արագությունը  $v$ -ից  $2v$  մեծացնելու համար:


$$\begin{array}{ll} 1) A: & 3) 3A: \\ 2) 2A: & 4) 4A: \end{array}$$

494.  $m$  զանգվածով  $v$  արագությամբ շարժվող մարմնը բախվում է պատիճ և շարժվում հակառակ ուղղությամբ: Ի՞նչ աշխատանք կատարեց մարմնի վրա ազդող պատի առաձգականության ուժը, եթե բախումը բացարձակ առաձգական է:

$$\begin{array}{ll} 1) mv^2: & 3) \frac{mv^2}{4}: \\ 2) \frac{mv^2}{2}: & 4) 0: \end{array}$$

495. Երկու մարմիններ  $X$  առանցքի երկայնքով  $x_1$  կոորդինատով կետից շարժվում են  $x_2$  կոորդինատով կետու: Նկարում պատկերված են նյութական կետերի վրա ազդող ուժերի համագորի պրոյեկցիայի՝ կոորդինատից կախումն արտահայտող գրաֆիկները: Ո՞ր մարմնի կինետիկ էներգիայի աճն է ավելի մեծ:

- 1) ա մարմնի:
- 2) բ մարմնի:
- 3) Հավասար են:
- 4) Պատասխանը կախված է մարմինների սկզբնական արագություններից:



496.  $v$  արագությամբ շարժվող երկնաքարի կինետիկ էներգիան  $E$  է:  
Որքա՞ն է նրա զանգվածը:

1)  $\frac{2v}{E}$ :


3)  $\frac{E}{v}$ :

2)  $\frac{2E}{v^2}$ :

4)  $\sqrt{\frac{2E}{v}}$ :


497. Նկարում պատկերված է մարմնի կինետիկ էներգիայի կախումը ժամանակից: Որքա՞ն է կինետիկ էներգիան ժամանակի  $t = 3$  վ պահին:

- 1) 20 Ω:  
2) 10 Ω:  
3) 5 Ω:  
4) 1 Ω:




498. Ուղղագիծ շարժում կատարող 1 կգ զանգվածով մարմնի տեղափոխության մոդուլի կախումը ժամանակից պատկերված է նկարում: Որքա՞ն է այդ մարմնի կինետիկ էներգիան ժամանակի  $t = 2$  վ պահին:

- 1) 5 Ω:  
2) 50 Ω:  
3) 100 Ω:  
4) 200 Ω:




499. Նկարում պատկերված են X առանցքով շարժվող  $m$  և  $2m$  զանգվածներով ավտոմեքենաների կոռորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող համապատասխանաբար 1 և 2 գրաֆիկները:  $\Omega$  թիվ է դրանց կինետիկ էներգիաների  $E_{k1} / E_{k2}$  ճշշտ հարաբերությունը:

- 1) 1,5:  
2) 2:  
3) 4:  
4) 8:



500. Նկարում պատկերված է թերթի հարթությամբ առանց շվման շարժվող մարմնի կինետիկ էներգիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր միջակայքում է մարմնինը շարժվում թերթ հարթությամբ դեպի վար:

- 1)  $0 - t_1$  միջակայքում:  
2)  $t_1 - t_2$  միջակայքում:  
3) Մարմնը միշտ շարժվում է դեպի վեր:  
4) Մարմնը միշտ շարժվում է դեպի ներքև:



501. Միևնույն զանգվածներով երկու ավտոմեքենաներ շարժվում են իրար ընդառաջ: Գետնի նկատմամբ առաջինի արագությունը 2 անգամ մեծ է երկրորդի արագությունից: Ո՞ր ավտոմեքենայի հետ կապված հաշվարկման համակարգում նրանց ընդհանուր կինետիկ էներգիան կլինի ավելի մեծ:

- 1) Առաջինի հետ կապված հաշվարկման համակարգում:
- 2) Երկրորդի հետ կապված հաշվարկման համակարգում:
- 3) Երկուսում էլ նույնը կլինի:
- 4) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխան տալը:

502. Ինչո՞վ է պայմանավորված մարմնի պոտենցիալ էներգիան:

- |                     |                  |
|---------------------|------------------|
| 1) Շարժմամբ:        | 3) Խտությամբ:    |
| 2) Փոխազդեցությամբ: | 4) Իներտությամբ: |

503. Սկյուտը նստած է 3 մ բարձրությամբ ճյուղին: Որքա՞ն է նրա պոտենցիալ էներգիան Երկրի մակերևույթի նկատմամբ: Սկյուտի զանգվածը 2 կգ է:


- 1) 2 Ω:
- 2) 6 Ω:
- 3) 30 Ω:
- 4) 60 Ω:

504. Ի՞նչ մեծություններից է կախված մարմնի՝ Երկրի ձգողությամբ պայմանավորված պոտենցիալ էներգիան:

- 1) Միայն մարմնի զանգվածից:
- 2) Միայն մարմնի արագությունից:
- 3) Միայն մարմնի և Երկրի զանգվածներից:
- 4) Մարմնի զանգվածից, ազատ անկման արագացումից և ընտրված գրոյական մակարդակից մարմնի ունեցած բարձրությունից:

505. Սահմակը դադարի վիճակից սահում է բլրի գագաթից և կանգ առնում բլրի ստորոտում: Որքա՞ն է շփման ուժի կատարած աշխատանքը:

- 1)  $mgH$ :
- 2)  $-mgH$ :
- 3)  $mg(H + S)$ :
- 4)  $-mg(H + S)$ :



506. Լեռնագնացը A կետից բարձրանում է B կետը նկարում պատկերված A1B և A2B հետազծերով: Ո՞րն է ծանրության ուժի կատարած աշխատանքների միշտ հարաբերակցությունը երկու հետազծերի դեպքում:

1)  $|A_1| > |A_2|$ :

3)  $|A_1| = |A_2|$ :



2)  $|A_1| < |A_2|$ :

4)  $|A_1| = |A_2| = 0$ :

507. Նկարում պատկերված է մարմնի պոտենցիալ էներգիայի կախումը


Երկրի մակերևույթից ունեցած բարձրությունից: Որքա՞ն է մարմնի զանգվածը:

- 1) 1,2 կգ:      3) 2,4 կգ:  
2) 1,5 կգ:      4) 15 կգ:



508. Տափօղակը սահում է սառցի հորիզոնական մակերևույթով: Ո՞ր կետում է նրա ծանրության ոժով պայմանավորված պոտենցիալ էներգիան ավելի փոքր:

- 1) ա կետում:  
2) բ կետում:  
3) զ կետում:  
4) Բոլոր կետերում նույնն է:



509. Հորիզոնի նկատմամբ ամեյան տակ նետված մարմինը վերադառնում է Երկրի մակերևույթը: Որքա՞ն են ծանրության ոժի աշխատանքը և մարմնի պոտենցիալ էներգիայի փոփոխությունը:

1)  $A=0, \Delta E_w = 0$ :      3)  $A=0, \Delta E_w = mgH_{\max}$ :

2)  $A=\frac{mv^2}{2}, \Delta E_w = 0$ :      4)  $A=\frac{mv^2}{2}, \Delta E_w = mgH_{\max}$ :

510. Ինչպես է փոխվում զսպանակի պոտենցիալ էներգիան այն սեղմելիս և ձգելիս:

- 1) Սեղմելիս աճում է, ձգելիս՝ նվազում:  
2) Սեղմելիս նվազում է, ձգելիս՝ աճում:  
3) Երկու դեպքում էլ աճում է:  
4) Երկու դեպքում էլ նվազում է:

511. Ի՞նչ աշխատանք է կատարում առաձգականության ոժը, եթե  $k$  կոշտությամբ զսպանակի երկարացումը  $x_1$  արժեքից աճում է մինչև  $x_2$  արժեքը:

1)  $\frac{kx_1^2}{2} - \frac{kx_2^2}{2}$ :

3)  $\frac{k(x_1 - x_2)^2}{2}$ :

2)  $\frac{kx_2^2}{2} - \frac{kx_1^2}{2}$ :

4) 0:


512. Նկարում պատկերված  $k$  կոշտությամբ չղեփորմացված երկու զսպանակներին ամրացված է  $m$  զանգվածով գնդիկը: Ինչպե՞ս կիոլիսվի հավասարագիր պրոտենցիալ էներգիան, եթե գնդիկը հավասարակշռության դիրքից  $x$  չափով շեղենք աջ:

1) Չի փոխվի:

2) Կփոքրանա  $\frac{kx^2}{2}$ -ով:

3) Կմեծանա  $\frac{kx^2}{2}$ -ով:

4) Կմեծանա  $kx^2$ -ով:




513. Նկարում պատկերված է զսպանակի առաձգականության ուժի մոդուլի՝ դեֆորմացիայի մոդուլից կախումն արտահայտող գրաֆիկը: Ո՞ր մեծությանն է հավասար առաձգականության ուժի կատարած աշխատանքի բացարձակ արժեքը՝ զսպանակը  $x_1$  չափով ձգելիս:

1)  $x$  առանցքի հետ գրաֆիկի կազմած անկյան տանգենսին:

2)  $x$  առանցքի հետ գրաֆիկի կազմած անկյան կոսինոսին:

3) Ստվերագծված եռանկյան մակերեսի կեսին:

4) Ստվերագծված եռանկյան մակերեսին:



514. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Անխանդկան էներգիայի պահպանման օրենքը ճիշտ է....

1) յուրաքանչյուր փակ համակարգերում:

2) յուրաքանչյուր համակարգում, որտեղ շփման ուժերը բացակայում են:

3) իրար հետ շփոխազդող մարմիններից կազմված համակարգերում:

4) յուրաքանչյուր փակ համակարգում, որտեղ գործում են միայն պոտենցիալային ուժեր:

515. Երկու միատեսակ մարմիններ ընկնում են միևնույն բարձրությունից՝ առաջինը՝ վակուումում, երկրորդը՝ օդում: Ո՞ր մարմնի կինետիկ էներգիան ավելի մեծ կլինի անկման վերջում:

1) Առաջին մարմնինը:

- 2) Երկրորդ մարմնինը:
- 3) Հավասար են:
- 4) Կախված է մարմինների ձևերից:

**516.** Մարմինը  $v_0$  սկզբնական արագությամբ նետել են ուղղաձիգ դեպի վեր: Ի՞նչ բարձրության վրա նրա արագությունը կփոքրանա 2 անգամ: Օդի դիմադրությունն անտեսել:

$$\begin{array}{ll} 1) \frac{3v_0^2}{4g}: & 3) \frac{v_0^2}{4g}: \\ 2) \frac{3v_0^2}{8g}: & 4) \frac{v_0^2}{8g}: \end{array}$$

**517.** Չորսուն սահելով իջնում է ողորկ հորիզոնական հարթության վրա գտնվող սեպի զագարից առաջին դեպքում՝ առանց շփման, իսկ երկրորդ դեպքում՝ շփման առկայությամբ: Համեմատել այդ երկու դեպքերում սեպի արագությունները, եթե չորսուն հասնում է սեպի հիմքին:


- 1) Առաջին դեպքում ավելի մեծ է:
- 2) Երկրորդ դեպքում ավելի մեծ է:
- 3) Երկու դեպքում էլ ունի նույն արագությունը:
- 4) Հարցին պատասխանելու համար տվյալները բավարար չեն:

**518.** Մարմինը թեք հարթությամբ բարձրացնում են որոշակի  $h$  բարձրություն: Ինչպես է այդ դեպքում կատարված նվազագույն աշխատանքը կախված հորիզոնի հետ թեք հարթության կազմած անկյունից: Ծփումն անտեսել:

- 1) Անկյան մեծացմանը զուգընթաց կատարված աշխատանքը մեծանում է:
- 2) Անկյան մեծացմանը զուգընթաց կատարված աշխատանքը փորանում է:
- 3) Կատարված աշխատանքը զրո է:
- 4) Կատարված աշխատանքը կախված չէ թեքության անկյունից:

**519.** Նկարում պատկերված է հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետված մարմնի շարժման հետազիթը: Հետազդի ո՞ր կետում մարմնի կիմետրիկ էներգիան ունի ամենամեծ արժեքը: Օդի դիմադրությունը հաշվի առնել:


- 1) A կետում:



- 2) Բ կետում:  
 3) Ը կետում:  
 4) Բոլոր կետերում նույնն է:

520. Նկարում պատկերված է հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետված մարմնի շարժման հետազիծը: Հետազծի ո՞ր կետում է մարմնի լրիվ մեխանիկական էներգիան ամենափոքրը: Օդի դիմադրությունը հաշվի առնել:

- 1) Ա կետում:  
 2) Բ կետում:  
 3) Ը կետում:  
 4) Բոլոր կետերում նույնն է:



521. Ո՞ր դեպքում սարի գազաթից սահող սահնակն ավելի մեծ արագություն կունենա սարի ստորոտին: Առաջին դեպքում սահնակի վրա նստած է մեկ տղա, իսկ երկրորդ դեպքում՝ երկու տղա: Շփումն անտեսել:

- 1) Երբ նստած է մեկ տղա:  
 2) Երբ նստած է երկու տղա:  
 3) Երկու դեպքում էլ կունենա նույն արագությունը:  
 4) Կախված է տղաների զանգվածներից:

522.  $H$  բարձրությունից մարմինը նետվել է հորիզոնական ուղղությամբ  $v_0$  սկզբնական արագությամբ: Որքա՞ն է մարմնի արագությունը գետնին ընկնելու պահին: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1)  $\sqrt{v_0^2 + 2gH}$  :                            3)  $v_0 + \sqrt{2gH}$  :  
 2)  $\sqrt{2gH}$  :    4)  $v_0 - \sqrt{2gH}$  :

523. Որքա՞ն է  $H$  բարձրությամբ սեղանից հորիզոնական ուղղությամբ  $v_0$  սկզբնական արագությամբ նետված մարմնի կինետիկ էներգիան գետնից  $h$  բարձրությունում: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1)  $\frac{mv_0^2}{2} + mgH - mgh$  :                            3)  $mgH + mgh - \frac{mv_0^2}{2}$  :  
 2)  $\frac{mv_0^2}{2} - mgH + mgh$  :                            4)  $mgH - mgh - \frac{mv_0^2}{2}$  :

524. Որքա՞ն է հորիզոնի նկատմամբ  $60^{\circ}$  անկյան տակ նետված մարմնի պոտենցիալ և կիմետրիկ էներգիաների հարաբերությունը հետազծի ամենավերին կետում:

- |    |    |       |
|----|----|-------|
| 1) | 1: | 3) 3: |
| 2) | 2: | 4) 4: |

525.  $m_1$  և  $m_2$  զանգվածներով ( $m_1 > m_2$ ) Երկու չորսուներ միևնույն սկզբնական արագությամբ սահելով հորիզոնական հարթության վրա, շվաման ուժի ազդեցությամբ կանգ են առնում: Ո՞ր չորսուն ավելի մեծ ճանապարհ կանցնի: Երկու դեպքում էլ շվաման գործակիցը նույնն է:

- 1)  $m_1$  զանգվածով չորսուն:
- 2)  $m_2$  զանգվածով չորսուն:
- 3) Երկուսն էլ կանցնեն հավասար ճանապարհներ:
- 4) Պատասխանը կախված է սկզբնական արագությունից:


526. Պատասխանների ո՞ր խումբն է ճիշտ նշում  $E_{\omega}$  պոտենցիալ,  $E_{\zeta}$  կիմետրիկ և  $E_{lp}$  լրիկ էներգիաների փոփոխությունները դադարի վիճակից մարմնի ազատ անկնան ժամանակ:

- 1)  $\Delta E_{\zeta} > 0$ ,  $\Delta E_{\omega} < 0$ ,  $\Delta E_{lp} = 0$ :
- 2)  $\Delta E_{\zeta} > 0$ ,  $\Delta E_{\omega} < 0$ ,  $\Delta E_{lp} > 0$ :
- 3)  $\Delta E_{\zeta} < 0$ ,  $\Delta E_{\omega} < 0$ ,  $\Delta E_{lp} < 0$ :
- 4)  $\Delta E_{\zeta} < 0$ ,  $\Delta E_{\omega} > 0$ ,  $\Delta E_{lp} < 0$ :

527.  $m$  զանգվածով բեռն ուղղաձիգ վեր ուղղված  $F$  ուժի ազդեցությամբ բարձրացել է  $h$  չափով: Որքա՞ն է բեռի կիմետրիկ էներգիայի փոփոխությունը: Օղի դիմադրությունն անտեսել:

- 1)  $mgh$ :
- 2)  $Fh$ :
- 3)  $Fh - mgh$ :
- 4)  $Fh + mgh$ :

528. Նկարում պատկերված է հաշվարկման իներցիալ համակարգում մարմնի լրիկ մեխանիկական էներգիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր միջակայքում է մարմնին փոխազդում այլ



**մարմինների հետ:**

- 1) Միայն 0 – 3 կ միջակայքում:
- 2) Միայն 3 – 6 կ միջակայքում:
- 3) Միայն 6 – 9 կ միջակայքում:
- 4) 0 – 3 կ և 6 – 9 կ միջակայքում:

**529.** Զրով լցված անոթի հատակին պահվող գնդիկը բաց քողնելիս բարձրանում և որոշակի արագությամբ դուրս է քոչում անոթից: Ինչի՞ շնորհիվ է գնդիկը ձեռք բերում կինետիկ էներգիա:

- 1) Ի հաշիվ ջրի ներքին էներգիայի:
- 2) Ի հաշիվ ջրի կինետիկ էներգիայի:
- 3) Ի հաշիվ ջրի պոտենցիալ էներգիայի:
- 4) Ի հաշիվ գնդիկի պոտենցիալ էներգիայի:

**530.** Հորիզոնական սառցի վրա որոշակի արագությամբ սահող սահնակը որոշ ժամանակ անց կանգ առավ: Խախտվո՞ւմ է արդյոք էներգիայի պահպանման օրենքն այս դեպքում:

- 1) Այն, քանի որ սահնակի լրիվ մեխանիկական էներգիան փոքրանում է:
- 2) Ոչ, քանի որ սահնակի կինետիկ էներգիան փոխակերպվում է Երկրի հետ փոխազդեցության պոտենցիալ էներգիայի:
- 3) Ոչ, քանի որ սահնակի կինետիկ էներգիան փոխակերպվում է սահնակի և սառցի ներքին էներգիայի:
- 4) Ոչ, քանի որ սահնակի պոտենցիալ էներգիան փոխակերպվում է Երկրի կինետիկ էներգիայի:

**531.** Իրար լմողառաջ շարժվող երկու այլակների միջև տեղի է ունենում ոչ առաճական բախում: Բախումից անմիջապես հետո դրանց արագությունները հաշվելու հանար պահպանման ո՞ր օրենքից կարելի է օգտվել: **Ծփումը կարելի է անտեսել:**

- 1) Միայն մեխանիկական էներգիայի պահպանման օրենքից:
- 2) Միայն իմպուլսի պահպանման օրենքից:
- 3) Ո՞չ մեկից, ո՞չ էլ մյուսից:
- 4) Ե՞վ մեկից, և մյուսից:

**532. Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Մարմնի իմպուլսը հավասար է նրա զանգվածի և արագության արտադրյալին:
- 2) Մարմնի իմպուլսը հավասար է նրա վրա ազդող ուժի և ազդեցության ժամանակի արտադրյալին:

- 3) Մարմնի իմպուլսը վեկտորական մեծություն է:  
 4) Փակ համակարգի լրիվ իմպուլսը պահպանվում է:

**533. Ո՞րն է իմպուլսի չափման միավորը ՄՀ-ում:**

- 1) 1 Ն մ Վ<sup>-1</sup>:      3) 1 կգ մ Վ<sup>-1</sup>:  
 2) 1 կգ մ Վ:      4) 1 Ն մ<sup>-1</sup> Վ:

**534. Կախված է արդյոք մարմնի իմպուլսը հաշվարկման համակարգի ընտրությունից:**

- 1) Այո:      2) Ոչ:  
 3) Կախված է միայն իմպուլսի ուղղությունը:  
 4) Կախված է միայն իմպուլսի մոդուլը:

**535. Նույն շառավղով փայտե և պողպատե գնդերը կատարում են ազատ անկում՝ միևնույն բարձրությունից: Համեմատել այդ գնդերի իմպուլսերը Երկրի մակերևույթին հարվածելու պահին:**

- 1) Պողպատե գնդի իմպուլսը մեծ է փայտե գնդի իմպուլսից:  
 2) Պողպատե գնդի իմպուլսը փոքր է փայտե գնդի իմպուլսից:  
 3) Փայտե և պողպատե գնդերի իմպուլսները հավասար են:  
 4) Հարցը չունի միարժեք պատասխան:

**536. Հաստատում զանգվածով մարմնի արագությունը մեծացնելիս նրա կինետիկ էներգիան մեծացավ 4 անգամ: Ինչպես փոխվեց մարմնի իմպուլսը:**

- 1) Մեծացավ 4 անգամ:      3) Մեծացավ 2 անգամ:  
 2) Փորրացավ 4 անգամ:      4) Փորրացավ 2 անգամ:

**537. Նյութական կետը հավասարաչափ պտտվում է շրջանագծով: Ինչ-պես է այդ դեպքում փոխվում նրա իմպուլսը:**

- 1) Չի փոխվում:  
 2) Փոխվում է ուղղությունը, մեծությունը չի փոխվում:  
 3) Փոխվում է և ուղղությունը, և մեծությունը:  
 4) Փոխվում է մեծությունը, ուղղությունը չի փոխվում:

**538. Որքա՞ն է  $m$  զանգվածով և  $v$  արագությամբ հավասարաչափ շրջանագծային շարժում կատարող մարմնի իմպուլսի փոփոխության մոդուլը մեկ պարբերության ընթացքում:**

- 1) 0:      3)  $mv$ :  
 2)  $\frac{mv}{2}$ :      4)  $2mv$ :

539.  $m$  զանգվածով մարմինը մողուլով հաստատուն  $v$  արագությամբ պտտվում է շրջանագծով: Որքա՞՞ն է մարմնի իմպուլսի փոփոխության մողուլը քառորդ պարերության ընթացքում:

- 1)  $0$ :                           3)  $mv\sqrt{2}$ :  
2)  $mv$ :                           4)  $2mv$ :

540.  $m$  զանգվածով և  $\vec{v}$  արագությամբ շարժվող գնդիկը հարվածում է անշարժ ուղղաձիգ պատին: Արագության վեկտորը պատի ուղղահայցի հետ կազմում է  $\alpha$  անկյուն: Քախումը համարելով քացարձակ առածգական՝ որոշել պատին գնդիկի հաղորդած իմպուլսի մողուլը:

- 1)  $mv\cos\alpha$ :                           3)  $2mv\cos\alpha$ :  
2)  $mv\sin\alpha$ :                           4)  $2mv\sin\alpha$ :

541. Միևնույն  $m$  զանգվածով երկու ավտոմեքենա Երկրի հետ կապված հաշվարկման համակարգում հակառակ ուղղություններով շարժվում են մողուլով միևնույն  $v$  արագությամբ: Որքա՞՞ն է երկրորդ ավտոմեքենայի իմպուլսի մողուլը առաջին ավտոմեքենայի հետ կապված հաշվարկման համակարգում:

- 1)  $3mv$ :                                   3)  $mv$ :  
2)  $2mv$ :                                   4)  $0$ :

542. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:


Մարմնի վրա ազդող ուժի իմպուլսը հավասար է ...

- 1) մարմնի արագության փոփոխությանը:  
2) մարմնի իմպուլսին:  
3) մարմնի իմպուլսի փոփոխությանը:  
4) մարմնի զանգվածի փոփոխությանը:

543.  $m$  զանգվածով ազատ մարմնի վրա  $\Delta t$  ժամանակամիջոցում ազդում է հաստատուն  $\vec{F}$  համագոր ուժ: Որքա՞՞ն է այդ ընթացքում մարմնի իմպուլսի փոփոխությունը:

- 1)  $\frac{\vec{F}}{m}\Delta t$ :                           3)  $\frac{\vec{F}}{2m}(\Delta t)^2$ :  
2)  $\vec{F}\Delta t$ :                                   4)  $0$ :

544. Նկարում պատկերված է մարմնի վրա ազդող ուժերի համագորի մողուլի՝ ժամանակից կախումն արտահայտող գրա-








**Ֆիկը:** Որքա՞ն է մարմնի իմպուլսի փոփոխությունը ժամանակի սկզբնական պահից 6 վ անց:

- 1) 36 ՆՎ:                  3) 18 ՆՎ:  
2) 24 ՆՎ:                  4) 12 ՆՎ:

**545.** Նկարում պատկերված է ուղղագիծ

շարժվող մարմնի իմպուլսի պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ո՞րն է մարմնի վրա ազդող ուժերի համագորի պրոյեկցիայի՝ ժամանակից կախումն արտահայտող ճիշտ գրաֆիկը:



- 1) ա:                          3) զ:  
2) բ:                          4) դ:

**546.** Ե՞րբ է պահպանվում համակարգի իմպուլսը:

- 1) Միայն փակ համակարգ կազմող մարմինների բացարձակ առաձգական բախումների դեպքում:
- 2) Միայն փակ համակարգ կազմող մարմինների բացարձակ ոչ առաձգական բախումների դեպքում:
- 3) Միշտ պահպանվում է:
- 4) Փակ համակարգ կազմող մարմինների կամայական փոխազդեցության դեպքում:

**547.**  $m$  և  $2m$  զանգվածներով մարմինները՝ համապատասխանաբար՝  $2v$  և  $v$  արագություններով շարժվում են իրար ընդհանուր: Որքա՞ն է այդ մարմինների համակարգի ընդհանուր իմպուլսը:

- 1)  $4mv :$                   3)  $mv :$   
2)  $3mv :$                   4)  $0 :$

548. Կարելի՞ է արյուր տեղից շարժել առագաստանավը՝ նրա հզոր օդամղիչից օդի ուղղելով առագաստի վրա:


- 1) Կարելի է, քանի որ գործում է իմպուլսի պահպանման օրենքը:
- 2) Կարելի է, քանի որ գործում է էներգիայի պահպանման օրենքը:
- 3) Չի կարելի, քանի որ կիսախտվի իմպուլսի պահպանման օրենքը:
- 4) Չի կարելի, քանի որ կիսախտվի էներգիայի պահպանման օրենքը:

549. *v* արագությամբ շարժվող *m* զանգվածով գունդը բախվում է նույն զանգվածով անշարժ գնդին: Բախումը կենտրոնական է և բացարձակ առաձգական: Որքա՞ն է երկրորդ գնդի կինետիկ էներգիան բախումից հետո:

- 1)  $\frac{mv^2}{2}$ :
- 2)  $\frac{mv^2}{4}$ :
- 3)  $\frac{mv^2}{8}$ :
- 4) 0 :

550.  $m_1 = 3 \text{կգ}$  և  $m_2 = 2 \text{կգ}$  զանգվածներով երկու գնդեր  $v_1 = 2 \text{մ/վ}$  և  $v_2 = 3 \text{մ/վ}$  արագություններով շարժվում են իրար ընդառաջ: Ինչպե՞ս կշարժվեն գնդերը բացարձակ ոչ առաձգական բախումից հետո:

- 1) ‘Դեպի ձախ’ 1 մ/վ արագությամբ:
- 2) ‘Դեպի աջ’ 1 մ/վ արագությամբ:
- 3) Կանգ կառնեն:
- 4) Առաջինը՝ դեպի ձախ՝ 2 մ/վ արագությամբ, երկրորդը՝ դեպի աջ՝ 3 մ/վ արագությամբ:



551. *m* զանգվածով *A* գունդը, շարժվելով *v* արագությամբ, բախվում է անշարժ, նույն զանգվածով *B* գնդին և նրան հաղորդում իր արագությանը հավասար արագություն: Որքա՞ն է *A* գնդի արագությունը հարվածից անմիջապես հետո, եթե բախումը կենտրոնական է:

- 1) 0:
- 2)  $v/2$ :
- 3)  $v$ :
- 4)  $2v$ :

552.  $m_1$  զանգվածով սահնակը հորիզոնական մակերևույթով սահում է  $v_1$  արագությամբ: Նրա շարժմանն ուղղահայաց ուղղությամբ շարժվող  $m_2$  զանգվածով տղան  $v_2$  արագությամբ ցատկում է սահնակի վրա: Որքա՞ն է «սահնակ-տղա» համակարգի իմպուլսի մոդուլը:

- 1)  $m_1v_1 + m_2v_2$ :
- 3)  $\sqrt{(m_1v_1)^2 + (m_2v_2)^2}$ :

$$2) \quad (m_1 v_1)^2 + (m_2 v_2)^2 : \quad 4) \quad \sqrt{m_1 v_1 + m_2 v_2} :$$

553. Միևնույն  $m$  զանգվածներով երկու գնդեր շարժվում են միմյանց ընդառաջ՝ մողովով հավասար  $v$  արագություններով: Ոչ առածքական բախման հետևանքով երկուսն էլ կանգ են առնում: Որքա՞ն է հարվածի ընթացքում համակարգի իմպուլսի փոփոխությունը:

- 1)  $m\vec{v}$  :                    3)  $0$  :  
2)  $2m\vec{v}$  :                    4)  $-2mv$  :

554. Ո՞ր օրենքն է ընկած ռեակտիվ շարժման հիմքում:

- 1) Հուկի օրենքը:  
2) Իմպուլսի պահպանման օրենքը:  
3) Սեխանիկական էներգիայի պահպանման օրենքը:  
4) Արքիմեդի օրենքը:

## 4.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

555. Տեղափոխության ուղղության հետ  $60^0$  անկյուն կազմող ուժի ազդեցությամբ մարմինը շարժվում է ուղղագիծ: Որքա՞ն է ուժի մոդուլը, եթե մարմինը 6 մ տեղափոխելիս այդ ուժը կատարել է 600 Զ աշխատանք:
556. 5 մ խորությամբ ջրհորից հավասարաչափ բարձրացրին ջրով լցված 10 կգ զանգվածով դույլը: Որքա՞ն է բարձրացման համար կատարված աշխատանքը:
557. Ավտոմեքենան շարժվում է ուղղագիծ հավասարաչափ՝  $4 \text{ մ/վ}$  արագությամբ: Ավտոմեքենայի վրա ազդող հաստատուն քարշի ուժը 14 Վ-ում կատարում է 784 Զ աշխատանք: Որքա՞ն է քարշի ուժը:
558. Պոմպի միոցի վրա ազդում է 24 կՆ ուժ: Որքա՞ն է միոցի մեկ քայլի ընթացքում այդ ուժի կատարած աշխատանքը, եթե քայլի երկարությունը 20 սմ է:
559. 2 կգ զանգվածով մարմինը հորիզոնական հարքության մեջ տեղափոխվում է 5 մ: Որքա՞ն է այդ տեղափոխության ընթացքում ծանրության ուժի կատարած աշխատանքը:
560. Որոշ բարձրությունից հորիզոնական ուղղությամբ նետված 0,5 կգ զանգվածով մարմինը 4 Վ անց ընկավ գետին: Որքա՞ն է ծանրության ուժի կատարած աշխատանքը: Օդի դիմադրությունն անտեսել:
561. 10 մ բարձրությունից անկյան տակ նետված 0,1 կգ զանգվածով մարմինն ընկավ գետին: Որքա՞ն է ծանրության ուժի կատարած աշխատանքը:
562. 3 Ն հաստատուն ուժի ազդման ուղղությամբ մարմինն սկսում է շարժվել  $0,2 \text{ մ/վ}^2$  արագացումով: Որքա՞ն է այդ ուժի կատարած աշխատանքն առաջին 10 Վ-ում:
563. Յուրաքանչյուր վայրկյանում պոմպը 6 կգ ջուր է մատակարարում 5 մ բարձրության վրա: Ի՞նչ աշխատանք է կատարում պոմպը 0,5 րոպեի ընթացքում:

564. Ի՞նչ աշխատանք է պահանջվում 50 կգ զանգվածով և 2 մ երկարությամբ համասեռ ձողը հորիզոնական դիրքից ուղղաձիգ կանգնեցնելու համար:
565. Ի՞նչ աշխատանք պետք է կատարել 30000 Ն/մ կոշտություն ունեցող սպանակը 2 սմ-ով ձգելու համար:
566. Մարմինը հավասարաչափ տեղափոխում են հորիզոնական նակերևույթով 400 Ն քարշի ուժի ազդեցությամբ, որը հորիզոնական ուղղության հետ կազմում է  $60^{\circ}$  անկյուն: Որքա՞ն է դիմադրության ուժերի կատարած աշխատանքի մոդուլը 8 մ ճանապարհ անցնելիս:
567. 60 կգ զանգվածով սահնակը, իջնելով սարից, հորիզոնական ճանապարհով անցավ 20 մ: Որքա՞ն է հորիզոնական հատվածում շվման ուժի կատարած աշխատանքի մոդուլը, եթե շվման գործակիցը 0,02 է:
568. 26 կգ զանգված ունեցող մարմինը հաստատում ուժի ազդեցությամբ շարժվում է 1 մ/ $\text{վ}^2$  արագացումով: Որքա՞ն է այդ ուժի կատարած աշխատանքը 4,5 մ ճանապարհ անցնելիս:
569. Նավակի շարժիչը, որն ունի  $4 \cdot 10^3$  Վտ հզորություն, զարգացնում է  $10^3$  Ն քարշի ուժ: Ի՞նչ արագությամբ է շարժվում նավակը:
570. Ի՞նչ միջին հզորություն է զարգացնում մարդը 20 մ խորությամբ ջրհորից 12 կգ զանգվածով ջրով լի դույլը 15 վ-ում հավասարաչափ բարձրացնելիս:
571. Էլեկտրաքարշի հզորությունը 3 ՄՎտ է, իսկ քարշի ուժը՝ 240 կՆ: Որքա՞ն ժամանակում զնացքը կանցնի երկու կայարանների միջև եղած 10,8 կմ հեռավորությունը տված հզորության և քարշի ուժի դեպքում:
572. Ինքնաթիռը թռչում է ուղղագիծ հավասարաչափ,  $600$  մ/ $\text{վ}$  արագությամբ: Որքա՞ն է օդի դիմադրության ուժը, եթե ինքնաթիռի շարժիչի զարգացրած օգտակար հզորությունը  $1,8 \cdot 10^6$  Վտ է:
573. Ի՞նչ կիսետիկ էներգիայով է օժտված ինքնաձիգ իրացանի փողից 900 մ/ $\text{վ}$  արագությամբ դրւս թռչող 20 գ զանգվածով գնդակը:

574. Թեղին ամրացված  $0,5$  կգ զանգվածով մարմինը  $2 \text{ v}^1$  հաճախությամբ պտտվում է  $1 \text{ m}$  շառավղով շրջանագծով: Որքա՞ն է մարմնի կինետիկ էներգիան:  $\text{Ընդունել` } \pi^2 = 10:$
575. Մարմնի վրա ազդող համազոր ուժը ճանապարհի որոշ հատվածում կատարեց  $170 \text{ N}$  աշխատանք: Որքա՞ն է մարմնի կինետիկ էներգիան այդ հատվածի վերջում, եթե սկզբում այն  $30 \text{ N}$  էր:
576. 3 կգ զանգվածով մարմինն ազատ անկում է կատարում: Որքա՞ն է մարմնի կինետիկ էներգիան անկումն սկսելուց  $2 \text{ v}$  անց:
577. 3 կգ զանգվածով մարմինը  $10 \text{ m}$  բարձրությունից նետվել է ուղղաձիգ դեպի ներքև  $6 \text{ m/v}$  արագությամբ: Որքա՞ն է նրա կինետիկ էներգիան  $5 \text{ m}$  բարձրությունում: Օդի դիմադրությունն անտեսել:
578. Դպրոցականը  $400 \text{ q}$  զանգվածով ֆիզիկայի դասազիրքը հատակից բարձրացրեց  $1,5 \text{ m}$ : Որքա՞ն է զրդի պոտենցիալ էներգիան հատակի նկատմամբ:
579. 2 կգ զանգվածով մարմինն ազատ ընկնում է  $80 \text{ m}$  բարձրությունից: Որքա՞ն է այդ մարմնի պոտենցիալ էներգիան գետնի նկատմամբ՝ շարժումն սկսելուց  $3 \text{ v}$  հետո:
580.  $8 \text{ m}$  բարձրությունից առանց սկզբնական արագության ազատ անկում կատարող մարմինը գետնին հարկածելու պահին ուներ  $2000 \text{ N}$  կինետիկ էներգիա: Որքա՞ն է մարմնի զանգվածը:
581. Գունդը կախված է  $20 \text{ m}$  երկարությամբ անկշիռ չճպող թելից: Ի՞նչ հորիզոնական արագություն պետք է հաղորդել զննին, որպեսզի այն շեղվի մինչև կախման կետի բարձրությունը: Օդի դիմադրությունն անտեսել:
582. Խաղալիք ատրճանակը կրակելու նախապատրաստելիս նրա  $800 \text{ N/m}$  կոշտությամբ զսպանակը սեղմեցին  $0,05 \text{ m-v}$ : Հորիզոնական ուղղությամբ կրակելիս ի՞նչ արագություն է ստանում  $0,02 \text{ kg}$  զանգվածով գնդակը:
583. Քարը նետված է ուղղաձիգ դեպի  $20 \text{ m/v}$  արագությամբ: Ի՞նչ բարձրության վրա նրա կենետիկ էներգիան հավասար է պոտենցիալ էներգիային: Օդի դիմադրությունն անտեսել:

584. Որքա՞ն է 100 գ զանգվածով մարմնի իմպուլսը, եթե այն շարժվում է 80 մ/վ արագությամբ:
585. Տղան, հարվածելով 0,5 կգ զանգվածով գնդակին, նրան հաղորդում է 10 մ/վ արագություն: Որքա՞ն է հարվածի միջին ուժը, եթե հարվածի տևողությունը 0,02վ է:
586. Ազատ անկում կատարող 200 գ զանգվածով գնդիկը հորիզոնական հարթակին հարվածելիս ուներ 15 մ/վ արագություն: Որքա՞ն է իմպուլսի փոփոխության մոդուլը բացարձակ առաճգական հարվածի դեպքում:
587. 2 կգ զանգվածով նյութական կետը 5 մ/վ արագությամբ հավասարաչափ շարժվում է շրջանագծով: Որքա՞ն է իմպուլսի փոփոխության մոդուլը կես պարբերության ընթացքում:
588. Հրացանի փողից գնդակը դուրս է թռչում 900 մ/վ արագությամբ: Որքա՞ն է հրացանի հետհարվածի արագությունը, եթե նրա զանգվածը 450 անգամ մեծ է գնդակի զանգվածից:
589. 3 մ/վ արագությամբ շարժվող մարմնի կինետիկ էներգիան 6 Ջ է: Որքա՞ն է մարմնի իմպուլսը:
590.  $m_1$  զանգվածով գունդը շարժվելով 3 մ/վ արագությամբ՝ բախվում է  $m_2$  զանգվածով անշարժ գնդին, որից հետո նրանք շարժվում են միասին: Որքա՞ն է համատեղ շարժման արագությունը, եթե  $m_2 = 0,5m_1$ :
591. 70 կգ զանգվածով մարդը վազում է 7 մ/վ արագությամբ և հասնելով նույն ուղղությամբ 2 մ/վ արագությամբ շարժվող սայլակին՝ ցատկում նրա վրա, որից հետո սայլակի արագությունը դառնում է 5,5 մ/վ: Որքա՞ն է սայլի զանգվածը:
592. Ուղղաձիգ դեպի վեր նետված 1 կգ զանգվածով մարմինը հասնում է 5 մ առավելագույն բարձրության: Որքա՞ն է մարմնի իմպուլսի առավելագույն արժեքը նրա թոփքի ընթացքում: Օդի դիմադրությունն անտեսել:


### 4.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

593. 15 կգ զանգվածով շաղախով լի դրոյլը պարանով բարձրացնում են 3 մ բարձրությամբ առաջին հարկի կտորը: Մի դեպքում այն բարձրացնում են հավասարաչափ, մյուս դեպքում՝ 1 մ/ $\sqrt{2}$  արագացումով: Օղի դիմադրությունն ու պարանի զանգվածն անտեսել:

- 1) Որքա՞ն է դրոյլ հավասարաչափ բարձրացնելու համար կատարված մեխանիկական աշխատանքը:
- 2) Երկրորդ դեպքում կատարված մեխանիկական աշխատանքը որքանո՞վ է մեծ առաջին դեպքում կատարված աշխատանքից:

594. 21-րդ նկարում պատկերված է զսպանակը դեֆորմացնող ուժի կախումը զսպանակի երկարացումից:

- 1) Որքա՞ն է զսպանակի կոշտությունը:
- 2) Ի՞նչ աշխատանք է կատարում զսպանակը դեֆորմացնող ուժը զսպանակը չդեֆորմացված վիճակից 5 սմ-ով ճգելու ընթացքում:



Նկ. 21

595. Մարդը 2 կգ զանգված ունեցող մարմինն ուղղաձիգ բարձրացնում է 3 մ/ $\sqrt{2}$  հաստատուն արագացմամբ: Օղի դիմադրությունն անտեսել:

- 1) Որքա՞ն է մարմնի վրա նարդու գործադրած ուժը:
- 2) Որքա՞ն աշխատանք է կատարում մարդը մարմինը 1,5 մ բարձրացնելիս:

596.  $1,5 \cdot 10^4$  կգ զանգվածով բեռնատարը  $1,5 \cdot 10^3$  Ն արգելակող ուժի ազդեցությամբ արգելակման սկզբից մինչև կանգ առնելը հորիզոնական ճանապարհով անցնում է 5 մ ճանապարհ:

- 1) Որքա՞ն է արգելակող ուժի կատարած աշխատանքի մոդուլը մինչև բեռնատարի կանգ առնելը:
- 2) Որքա՞ն էր բեռնատարի սկզբնական արագությունը:

597. Ավտոմեքենան ճանապարհի հորիզոնական տեղամասում շարժվում է ուղղագիծ և հավասարաչափ՝ 4 մ/վ արագությամբ: Ավտոմեքենայի վրա ազդող հաստատուն քարշի ուժը 14 վ-ում կատարում է 8960 Զ աշխատանք:

- 1) Որքա՞ն է ավտոմեքենայի վրա ազդող դիմադրության ուժերի աշխատանքի մոդուլը:

2) Որքա՞ն է ավտոմեքենայի քարշի ուժը:

**598. 4 կգ զանգվածով ազատ անկում կատարող մարմնի արագությունը ճանապարհին 2 մ/վ-ից հասավ մինչև 8 մ/վ:**

- 1) Որքա՞ն է ծանրության ուժի աշխատանքն այդ ճանապարհին:
- 2) Որքա՞ն է մարմնի անցած ճանապարհն այդ ընթացքում:

**599. Աշակերտը չփեֆորմացված զսպանակը ձգեց ինչ-որ երկարությամբ: Այդ վիճակում զսպանակը բռնեց երկրորդ աշակերտը և ձգեց նոյն-քանի, որքան առաջինը:**

- 1) Զսպանակի պոտենցիալ էներգիան երկրորդ աշակերտի ձգելուց հետո քանի՞ անգամ է մեծ առաջին աշակերտի ձգելուց հետո զսպանակի պոտենցիալ էներգիայից:
- 2) Երկրորդ աշակերտի կատարած աշխատանքը քանի՞ անգամ է մեծ առաջին աշակերտի կատարած աշխատանքից:

**600. 0,5 կգ զանգվածով քարը նետված է 3,2 մ բարձրությունից ուղղաձիգ ներքև 6 մ/վ արագությամբ: Օդի դիմադրությունն անտեսել:**

- 1) Որքա՞ն է ծանրության ուժի աշխատանքն անկնան ընթացքում:
- 2) Որքա՞ն է քարի կինետիկ էներգիան գետին հասնելու պահին:

**601. 0,5 կգ զանգվածով մարմնը սեղանից նետվել է հորիզոնական ուղղությամբ: Հատակին հասնելու պահին նրա արագությունը հավասար էր 6 մ/վ-ի: Սեղանի բարձրությունը 1 մ է: Օդի դիմադրությունն անտեսել:**

- 1) Որքա՞ն է մարմնի սկզբնական արագությունը:
- 2) Որքա՞ն է ծանրության ուժի կատարած աշխատանքը:

**602. 0,3 կգ զանգվածով մարմնը նետվել է հորիզոնի նկատմամբ  $30^{\circ}$  անկյան տակ: Հետազօծի վերին կետում նրա կինետիկ էներգիան  $45 \text{ } \Omega$  է: Օդի դիմադրությունն անտեսել:**

- 1) Ի՞նչ սկզբնական արագությամբ է մարմնը նետվել:
- 2) Որքա՞ն է այդ կետում մարմնի պոտենցիալ էներգիան:

**603. 1 կգ զանգվածով սայլակը հորիզոնական մակերևույթով շարժվում է 8 մ/վ արագությամբ և բախվում է նոյն ուղղությամբ 4 մ/վ արագությամբ շարժվող 3 կգ զանգվածով սայլակին: Բախվելուց հետո սայլակները շարժվում են որպես մի ամբողջություն:**

- 1) Որքա՞ն է սայլակների համատեղ շարժման արագությունը:
- 2) Որքա՞ն է համակարգի լրիվ մեխանիկական էներգիայի փոփոխության մոդուլը:

**604. 5 Ն հաստատուն ուժն ազդում է մարմնի վրա 10 վ-ի ընթացքում:**

- 1) Որքա՞ն է մարմնի իմպուլսի փոփոխությունը:
- 2) Որքա՞ն է մարմնի վերջնական կինետիկ էներգիան, եթե նրա սկզբնական կինետիկ էներգիան եղել է զրո, իսկ զանգվածը՝ 2 կգ:

**605. 0,3 կգ զանգվածով պլաստիլինե գունդը դադարի վիճակում է: 0,5 կգ զանգվածով կապարե գունդը 8 մ/վ արագությամբ հարվածում է նրան, որից հետո նրանք շարժվում են միասին:**

- 1) Որքա՞ն է զնների ընդհանուր կինետիկ էներգիան հարվածից հետո:
- 2) Որքա՞ն է համակարգի լրիվ մեխանիկական էներգիայի փոփոխության մոդուլը հարվածի ընթացքում:

#### 4.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

606. Աշակերտն ուժաչափի միջոցով, որի զսպանակի կոշտությունը 100 Ն/մ է, 8 կգ զանգվածով չորսուն հորիզոնական տախտակի վրայով հավասարաչափ տեղափոխեց 0,2 մ: Աշակերտն ուժաչափը ձգում էր հորիզոնական ուղղությամբ: Տախտակի և չորսուի միջև շփման գործակիցը 0,25 է:
- 1) Որքա՞ն է չորսուի վրա ազդող տախտակի շփման ուժի առավելագույն արժեքը:
  - 2) Որքա՞ն է աշակերտի ազդող ուժի աշխատանքը մինչև չորսուի շարժվելը:
  - 3) Շփման ուժը հաղթահարելու աշխատանքը քանի՞ աճամ է մեծ մինչև չորսուի շարժվելը զսպանակը ձգելու աշխատանքից:
607. 1500 կգ զանգվածով ավտոմեքենան անշատած շարժիչով, 1,5 մ/վ հաստատուն արագությամբ իջնում է թեք հարթությամբ: Հարթության բարձրությունը 50 մ է, երկարությունը՝ 1000 մ:
- 1) Որքա՞ն է մեքենայի վրա ազդող դիմադրության ուժը:
  - 2) Որքա՞ն է դիմադրության ուժերի կատարած աշխատանքի մոդուլը 1 Վ-ի ընթացքում:
  - 3) Որքա՞ն պետք է լինի ավտոմեքենայի շարժիչի հզորությունը, որ պեսզի այն կարողանա նույն արագությամբ վեր բարձրանալ այդ հարթությամբ:
608. 40 կգ զանգվածով թեռը  $30^0$  թեքության անկյուն ունեցող հարթությամբ բարձրացնում են 2 մ բարձրության վրա: Բեռի և թեք հարթության միջև շփման գործակիցը  $\sqrt{3}/3$  է:
- 1) Որքա՞ն է թեռը մինչև թեք հարթության գագաթը բարձրացնելու համար անհրաժեշտ օգտակար աշխատանքը:
  - 2) Որքա՞ն է թեռը մինչև թեք հարթության գագաթը բարձրացնելու համար անհրաժեշտ նվազագույն աշխատանքը:
  - 3) Որքա՞ն է այդ դեպքում ՕԳ-Գ-Ա՝ արտահայտված տոկոսներով:
609. 1 մ կողի երկարությամբ և 200 կգ զանգվածով խորանարդածն համասնո մարմինը հորիզոնական դիրքում գտնվող թեռնատարի քափում է:
- 1) Գետնի նկատմամբ ի՞նչ պոտենցիալ էներգիայով է օժտված մարմինը, եթե մեքենայի թափքի բարձրությունը 1 մ է:

- 2) Առավելագույնը որքանո՞վ կբարձրանա մարմնի զանգվածի կենտրոնը՝ այն մի նիստից մյուսի վրա շրջելիս: Պատասխանը բազմապատկել 10-ով:
- 3) Ի՞նչ նվազագույն աշխատանք պետք է կատարի բանվորը, որպեսզի մարմինը մի նիստից շրջի մյուսի վրա:

**610.** 1800 կգ զանգվածով ավտոմեքենան ճանապարհի հորիզոնական հատվածում զարգացնում է 1500 Ն քարշի ուժ: Շանապարհի 180 մ երկարությամբ հատվածի վրա նրա արագությունն աճեց 12 մ/վ-ից մինչև 20 մ/վ:

- 1) Որքա՞ն է մեքենայի վրա ազդող համազոր ուժի աշխատանքը ճանապարհի նշված տեղամասում: Պատասխանը բազմապատկել 10<sup>-2</sup>-ով:
- 2) Որքա՞ն է ավտոմեքենայի զարգացրած հզորությունը նշված ճանապարհի վերջում: Պատասխանը բազմապատկել 10<sup>-4</sup>-ով:
- 3) Որքա՞ն է դիմադրության ուժի մոդուլը:

**611.** Հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետված 0,5 կգ զանգվածով մարմինը 4 Վ անց ընկավ գետին նետման կետից 16 մ հեռավորությամբ: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Որքա՞ն է մարմնի քոիչքի առավելագույն բարձրությունը:
- 2) Որքա՞ն է մարմնի պոտենցիալ էներգիան հետազօհ ամենաբարձր կետում:
- 3) Որքա՞ն է մարմնի լրիվ մեխանիկական էներգիան:

**612.** 2 կգ զանգվածով ուղղաձիգ վեր նետած մարմինը 1,6 Վ հետո ընկավ գետին: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Որքա՞ն է մարմնի ինպուլսի փոփոխության մոդուլը շարժման ընթացքում:
- 2) Որքա՞ն է մարմնի սկզբնական ինպուլսը:
- 3) Որքա՞ն է մարմնի կինետիկ էներգիան գետնին հարվածելու պահին:

**613.** 10 կգ զանգվածով սահնակը սահում է 5 մ բարձրությամբ բլրակից և կանգ առնում ճանապարհի հորիզոնական մասում:


- 1) Որքա՞ն է սահնակի վրա ազդող ծանրության ուժի աշխատանքը:
- 2) Որքա՞ն է շփման ուժերի աշխատանքի մոդուլը սահնակի ամբողջ շարժման ընթացքում:
- 3) Ի՞նչ աշխատանք պետք է կատարի տղան, որպեսզի սահնակը նույն ճանապարհով բարձրացնի մինչև բլրակի գագաթը:

614. Սառցադաշտում կանգնած 60 կգ զանգվածով չմշկորդը հորիզոնական ուղղությամբ գետնի նկատմամբ 10 մ/վ արագությամբ նետում է 6 կգ զանգվածով քարը:

- 1) Որքա՞ն է չմշկորդի արագությունը քարը նետելուց անմիջապես հետո:
- 2) Ի՞նչ մեխանիկական աշխատանք է կատարել չմշկորդը քարը նետելու ընթացքում, եթե այն ամբողջությամբ վեր է ածվել մեխանիկական էներգիայի:
- 3) Մինչև կանգ առնելը որքա՞ն ճանապարհ կանցնի չմշկորդը սառցի վրայով, եթե սառցի և չմուշկների միջև շփման գործակիցը 0,01 է:

615. 2 կգ զանգվածով մարմինն սկսում է սահել  $H = 4,5$  մ բարձրությամբ թեք հարթությունից, որը սահուն կերպով վերածում է  $R = 2$  մ շառավղով գլանային մակերևույթի (նկ. 22):

- 1) Որքա՞ն է ծանրության ուժի կատարած աշխատանքը, մարմինը  $H$  բարձրությունից մինչև  $B$  կետը սահելու ընթացքում:
- 2) Որքա՞ն է մարմնի կինետիկ էներգիան  $B$  կետում, եթե մարմնի վրա ազդող շփման ուժի աշխատանքը սահելու ընթացքում 40 Ջ է:
- 3) Որքա՞ն է գլանային մակերևույթի վերին  $B$  կետում մարմնի գործության ճնշման ուժը:




Նկ. 22

#### 4.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


616. ճախարակի վրայով անցկացված չճգվող թելին ամրացված  $m_1 = 0,4$  կգ և  $m_2 = 0,6$  կգ զանգվածներով մարմիններն սկսում են շարժվել դադարի վիճակից (նկ. 23):  $m_1$  զանգվածով մարմինը 2,5 մ ճանապարհի վերջում ձեռք է թերում 5 մ/վ արագություն: Ճախարակի զանգվածն ու նրա առանցքում շփումն անտեսել:

- 1) Որքա՞ն է  $m_1$  զանգվածով մարմնի արագացումը:
- 2) Որքա՞ն է թելի լարման ուժը:
- 3) Որքա՞ն է  $m_1$  զանգվածով մարմնի վրա ազդող թելի լարման ուժի աշխատանքը, եթե այն տեղափոխվում է 2 մ-ով:
- 4) Որքա՞ն է շփման ուժի աշխատանքի մոդուլը, եթե  $m_1$  զանգվածով մարմինը տեղափոխվում է 2 մ-ով:



Նկ. 23

617.  $m = 10^{-3}$  կգ զանգվածով ոչ մեծ մարմինը  $H = 7$  մ բարձրությունից առանց շփման ցած է սահում թեր ճոռով, որը վերածվում է  $R = 2$  մ շառավղով «մահվան օդակի» (նկ. 24):



Նկ. 24

- 1) Ի՞նչ կինետիկ էներգիայով է օժնված մարմինը «մահվան օդակի» C ամենավերին կետում: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 2) Ի՞նչ արագություն ունի մարմինը «մահվան օդակի» B կետում, որի բարձրությունը R է:
- 3) Ի՞նչ ուժով է ճնշում մարմինն օդակի A կետում: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 4) Ի՞նչ ճնշման ուժով է ազդում մարմինն օդակի վրա B կետում, որի բարձրությունը R է: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

618. Հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետված արկի արագությունը հետագծի ամենաբարձր՝ 80 մ կետում 100 մ/վ է: Այդ դիրքում պայքայունի հետևանքով արկը բաժանվում է 1 կգ և 1,5 կգ զանգվածներով երկու թեկորմերի: Մեծ թեկորը շարունակում է շարժվել նախկին ուղղությամբ՝ 240 մ/վ արագությամբ: Օղի դիմադրությունն անտեսել:

- 1) Որքա՞ն է փոքր զանգվածով բեկորի արագությունը պայթյունից անմիջապես հետո:
- 2) Որքա՞ն է փոքր և մեծ բեկորների արագությունների կազմած անկյունը պայթյունից անմիջապես հետո:
- 3) Որքա՞ն ժամանակ անց գետին կհասնի փոքր զանգվածով բեկորը:
- 4) Որքա՞ն է բեկորների միջև հեռավորությունն այն պահին, երբ մեծ զանգվածով բեկորը հասնում է գետին:

## 5. ՀԻԴՐՈՍԱՏԻԿԱ

### 5.1. ՇԻԾՑ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

619. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Ճնշումը հավասար է ...

- 1) տվյալ մակերևույթի վրա ազդող ուժի և այդ մակերևույթի մակերեսի հարաբերությանը:
- 2) տվյալ մակերևույթի վրա ազդող ուժի և այդ մակերևույթի մակերեսի արտադրյալին:
- 3) տվյալ մակերևույթի վրա ազդող ճնշման ուժին:
- 4) տվյալ մակերևույթի վրա ազդող ճնշման ուժի և այդ մակերևույթի մակերեսի հարաբերությանը:

620. Ի՞նչ միավորով է չափվում ճնշումը միավորների ՄՀ-ում:

- |                       |                                    |
|-----------------------|------------------------------------|
| 1) $1 \text{ N:}$     | 3) $1 \text{ kg/m}^3:$             |
| 2) $1 \text{ N/m}^2:$ | 4) $1 \text{ N} \cdot \text{m}^2:$ |

621. Ի՞նչ ճնշում է գործադրում ձյան վրա կանգնած  $m$  զանգվածով երեխան, եթե նրա մեկ կոշիկի հենման մակերեսը  $S$  է:

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) $\frac{mg}{S}:$  | 3) $\frac{mg}{2S}:$ |
| 2) $\frac{2mg}{S}:$ | 4) $\frac{mg}{4S}:$ |

622. Ինչպես կփոխակի ճնշումը, եթե ճնշման ուժը մեծացնենք 2 անգամ, իսկ մակերեսը փոքրացնենք 4 անգամ:

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| 1) Կփոքրանա 8 անգամ: | 3) Կմեծանա 8 անգամ: |
| 2) Կփոքրանա 2 անգամ: | 4) Կմեծանա 2 անգամ: |

623.  $a$  կողմով համասեռ խորանարդը հորիզոնական հարթակի վրա գործադրում է  $p$  ճնշում: Որքա՞ն կլինի նույն նյութից պատրաստված  $a/2$  կողմով խորանարդի ճնշումը հարթակի վրա:

- |                   |                   |
|-------------------|-------------------|
| 1) $p:$           | 3) $\frac{p}{4}:$ |
| 2) $\frac{p}{2}:$ | 4) $\frac{p}{8}:$ |

624. Ի՞նչ եղանակով կկարողանա մարդը գետնին գործադրած իր ճնշումը մեծացնել 2 անգամ:

- 1) Պառկելով գետնին:
- 2) Կանգնելով մեկ ոտքի վրա:
- 3) Նստելով գետնին:
- 4) Մարդու գործադրած ճնշումը բոլոր դեպքերում նույնն է:

**625.** *a, b, c* կողերով ուղղանկյուն զուգահեռանիստը, որը պատրաստված է թափությամբ մետաղից, դրված է հորիզոնական սեղանի վրա այնպես, որ *c* կողմն ուղղահայաց է սեղանին: Որքա՞ն է զուգահեռանիստի գործադրած ճնշումը սեղանի մակերևույթին:


$$\begin{array}{ll} 1) \rho ga: & 3) \rho gc: \\ 2) \rho gb: & 4) \frac{\rho gc^3}{ab}: \end{array}$$

**626.** Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Երկիրը շրջապատող օդային բաղանքը կոչվում է մթնոլորտ:
- 2) Մթնոլորտի բաղադրության մեջ մտնող գագերի խառնուրդն անվանում են օդ:
- 3) Մթնոլորտի գոյությունը պայմանավորված է Երկրի ձգողությամբ և մոլեկուլների ջերմային շարժմամբ:
- 4) Երկրի մակերևույթից հեռանալիս մթնոլորտային ճնշումն աճում է:


**627.** Որքա՞ն է Տորիչելիի փորձում սնդիկի սյան *h* բարձրությունը նորմալ մթնոլորտային ճնշման դեպքում:

$$\begin{array}{ll} 1) 76 \text{ մմ:} & 3) 1 \text{ մ:} \\ 2) 760 \text{ մմ:} & 4) 10,3 \text{ մ:} \end{array}$$



**628.** Աշակերտը կրկնեց Տորիչելիի փորձը՝ օգտագործելով 1 մ երկարությամբ տարրեր խողովակներ (տես նկարը): Ո՞ր խողովակում սնդիկի սյան բարձրությունը կլինի ավելի մեծ:

- 1) *w* խողովակում:
- 2) *p* խողովակում:
- 3) *q* խողովակում:
- 4) Բոլորում կունենա նույն բարձրությունը:



**629.** Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

**Համաձայն Պասկալի օրենքի՝ ...**

- 1) նորմալ մթնոլորտային ճնշումը հավասար է 760 մմ սնդիկի սյան ճնշմանը:

- 2) հեղուկի մեջ ընկղմված մարմնի վրա ազդում է դուրս մղող ուժ, որն ուղղված է ուղղաձիգ դեպի վեր և հավասար է նրա դուրս մղած հեղուկի կշռին:
- 3) հեղուկի սյան հիդրոստատիկ ճնշումն ուղիղ համեմատական է հեղուկի սյան բարձրությանը և խտությանը:
- 4) հեղուկի կամ գազի վրա գործադրած ճնշումը հաղորդվում է բոլոր կետերին՝ առանց փոփոխության:


**630.** Անորում՝ ազատ շարժվող միուցի տակ, լցված է  $\rho$  խտությամբ հեղուկ: A և B կետերում ճնշումների տարբերությունը՝  $p_A - p_B = \rho gh$ : Որքա՞ն կլինի այդ տարբերությունը, եթե S մակերեսով միուցի վրա դնենք m զանգվածով բեռ:

1)  $p_A - p_B = \rho gh$ :

2)  $p_A - p_B = \rho gh - \frac{mg}{S}$ :

3)  $p_A - p_B = \rho gh + \frac{mg}{S}$ :

4)  $\frac{mg}{S}$ :



**631.** Ո՞ր օրենքի հիման վրա է աշխատում ջրաբաշխական մանիչը:

- 1) Պասկալի օրենքի:
- 2) Նյուտոնի I օրենքի:
- 3) Արքիմենի օրենքի:
- 4) Հուկի օրենքի:

**632.** Ո՞րն է ջրաբաշխական մանիչի միուցների վրա ազդող  $F_1$  և  $F_2$  ուժերի և միուցների  $h_1$  և  $h_2$  տեղափոխությունների մոդուլների հիշտ հարաբերակցությունը շիման բացակայության դեպքում:

1)  $\frac{F_1}{F_2} = \frac{h_1}{h_2}$ :

3)  $\frac{F_1}{F_2} > \frac{h_1}{h_2}$ :

2)  $\frac{F_1}{F_2} = \frac{h_2}{h_1}$ :

4)  $\frac{F_1}{F_2} < \frac{h_2}{h_1}$ :

**633.** Ինչպես կփոխվի ջրաբաշխական մանիչի ճնշման ուժը, եթե նույն պայմանների դեպքում յուղի փոխարեն օգտագործվի ավելի մեծ խտությամբ հեղուկ:


- 1) Կմեծանա:
- 3) Կմնա նույնը:
- 2) Կփոքրանա:
- 4) Կարող է մեծանալ կամ փոքրանալ:

**634.** Նշված ՞՞ մեծություններից կախված չէ հեղուկի սյան գործադրած ճնշումն անորի հատակին:

- 1) Հեղուկի խտությունից:
- 2) Հեղուկի սյան բարձրությունից:
- 3) Այն անորի ձևից, որում լցված է հեղուկը:
- 4) Տվյալ աշխարհագրական վայրում ազատ անկման արագացման արժեքից:

**635.** Նկարում պատկերված բոլոր անորներում ջրի սյան բարձրությունը նույնն է: Ո՞՞ անորի հատակին է ջրի հիդրոստատիկ ճնշումն ամենամեծը:

- 1) ա անորի:
- 2) թ անորի:
- 3) զ անորի:
- 4) Բոլոր անորների հատակին ճնշումը նույնն է:




**636.** Ուղիղ գուգահեռանիստաձև բաց անորում լցված է ը խտությամբ հեղուկ, որի ազատ մակերևույթի բարձրությունը անորի հատակից  $h$  է: Որքա՞ն է անորի պատին հեղուկի գործադրած միջին ճնշումը, եթե մթնոլորտային ճնշումը բացակայում է:

- 1)  $\rho gh$ :
- 2) 0:
- 3)  $\frac{\rho gh}{2}$ :
- 4)  $2\rho gh$ :

**637.** Ո՞՞ն է հեղուկի սյան բարձրությունից հիդրոստատիկ ճնշման կախումն արտահայտող ճիշտ գրաֆիկը:

- 1) ա:
- 2) թ:
- 3) զ:
- 4) դ:



**638.** Ծովում ի՞նչ առավելագույն խորությամբ կխորասուզվի հետազոտություններ կատարող սարքը, եթե նրա պատյանը դիմանում է  $p$  առավելագույնը ճնշման: Մթնոլորտային ճնշումը  $p_0$  է, իսկ ծովի ջրի խտությունը՝  $\rho$ :

1)  $p_0 + \rho gh$ :

3)  $\frac{p + p_0}{\rho g}$ :

2)  $\frac{p - p_0}{\rho g}$ :

4)  $\frac{\rho g}{p + p_0}$ :

639. Ի՞նչ խորությամբ պետք է խորասուցվի սուզանավը, որպեսզի ճնշումը նրա վրա լինի մքնողորտային  $p_0$  ճնշումից:

1)  $\frac{p_0 n}{\rho g}$ :

3)  $\frac{p_0}{\rho g(n-1)}$ :

2)  $\frac{p_0(n-1)}{\rho g}$ :

4)  $\frac{p_0}{\rho g(n+1)}$ :


640. Ջրաբաշխական մամլիչի հաղորդակից անորմերից մեկի  $S$  մակերես-սով միտցի վրա ազդում են  $F$  ուժով: Որքա՞ն է անորմերում  $\rho$  խոռո-թյամբ հեղուկի սյուների բարձրությունների տարբերությունը հավասարակշռության վիճակում: Միտցների կշիռը և շփումն անտեսել:

1)  $\frac{F}{\rho g S}$ :

3)  $\frac{\rho g S}{F}$ :

2)  $\frac{FS}{\rho g}$ :

4)  $\frac{F \rho g}{S}$ :



641. Ω°ր քեյնիկի ջրատարողությունն է ավելի մեծ:


1)  $w$ :



2)  $p$ :



3)  $q$ :




4) Բոլորի ջրատարո-  
ղությունը նույն է:

642. Համեմատել անորի հեղուկի ճնշումներն  $A$  և

**B** կետերում:

1)  $A$  կետում ճնշումն ավելի մեծ է, քան  $B$  կե-  
տում:




2)  $B$  կետում ճնշումն ավելի մեծ է, քան  $A$  կե-  
տում:

3)  $A$  և  $B$  կետերում ճնշումը նույն է:

4)  $A$  կետում ճնշումը զրո է:


643. Նկարում պատկերված անոքների մեջ լցված է միևնույն ծավալի ջուր: Ինչպիսի՞ն է այդ անոքների հատակներին հեղուկի գործադրած ճնշումներին և ճնշման ուժերի հարաբերակցությունը:

- 1)  $p_1 = p_2$ ,  $F_1 = F_2$ :
- 2)  $p_1 > p_2$ ,  $F_1 > F_2$ :
- 3)  $p_1 > p_2$ ,  $F_1 = F_2$ :
- 4)  $p_1 < p_2$ ,  $F_1 < F_2$ :




644. Ի՞նչ առնչություն գոյություն ունի նկարում պատկերված անոքում հեղուկի կշռի և անոքի հատակին հեղուկի ճնշման ուժի միջև:

- 1) Ճնշման ուժը մեծ է հեղուկի կշռից:
- 2) Ճնշման ուժը փոքր է հեղուկի կշռից:
- 3) Ճնշման ուժը հավասար է հեղուկի կշռին:
- 4) Ճնշման ուժը, կախված հեղուկի այան բարձրությունից, հնարավոր է մեծ կամ փոքր լինի հեղուկի կշռից:



645. Նկարում պատկերված է հեղուկի  $\rho$  հիդրոստատիկ ճնշման կախումը հեղուկի  $h$  խորությունից: Որքա՞ն է հեղուկի խտությունը:

- 1)  $\sqrt{3}/2 \text{ կգ/մ}^3$ :
- 2)  $\sqrt{3} \text{ կգ/մ}^3$ :
- 3)  $\sqrt{3}/30 \text{ կգ/մ}^3$ :
- 4)  $\sqrt{3}/10 \text{ կգ/մ}^3$ :



646. Քարը ջրում ավելի հեշտ է բարձրացնել, քան օդում: Ինչո՞վ է դա պայմանավորված:

- 1) Ազատ անկման արագացումը ջրում ավելի փոքր է, քան օդում:
- 2) Ջրի ճնշումը քարի ստորին մակերևույթին ավելի մեծ է, քան վերին մակերևույթին:
- 3) Ջրի խտությունը քարի ստորին մակերևույթի մոտ ավելի մեծ է, քան վերին մակերևույթի մոտ:
- 4) Ջրում քարի վրա մթնոլորտային ճնշումը չի ազդում:

647. Արքիմենյան ուժը որոշելու համար ո՞ր մեծությունները պետք է հայտնի լինեն:

- 1) Մարմնի խտությունը և ծավալը:
- 2) Հեղուկի խտությունը և մարմնի ընկղմված մասի ծավալը:

3) Հեղուկի ծավալը և մարմնի խտությունը:

4) Հեղուկի ծավալը և խտությունը:

648. Ջրով լցված անորի հատակին սոսնձով կպցված է չորսու, որի զանգվածը  $m$  է, իսկ ծավալը՝  $V$ : Ջրի խտությունը  $\rho$  է:


Որքա՞ն է չորսուի վրա ազդող Արքիմեսի ուժը:

1)  $mg - \rho g V$ :

3)  $mg$ :

2)  $\rho g V$ :

4)  $0$ :



649. Լրացուցիչ զազ ներմղելու հետևանքով փուչիկի ծավալը մեծացավ 2 անգամ: Ինչպես փոխվեց օդի՝ կողմից նրա վրա ազդող արքիմեսյան ուժը:

1) Մեծացավ 2 անգամ:


3) Մեծացավ 8 անգամ:

2) Փոքրացավ 2 անգամ:

4) Մնաց նույնը:

650. Նկարում պատկերված երեք կապարե գնդիկներն իջեցված են ջրի մեջ: Ո՞ր գնդիկի վրա ազդող արքիմեսյան ուժն է ավելի մեծ:

1) C գնդիկի վրա, քանի որ նրա խորությունն ավելի մեծ է:



2) B գնդիկի վրա, քանի որ նրա ծավալն ամենամեծն է:

3) A գնդիկի վրա, քանի որ նրա խորությունն ավելի փոքր է:

4) Բոլոր գնդիկների վրա ազդում է միևնույն արքիմեսյան ուժը, քանի որ դրանք պատրաստված են նույն նյութից:

651. Նույն չափի երեք փուչիկներ լցված են տարրեր խտությամբ զազերով: Օդում ո՞ր փուչիկի վրա կազդի ավելի մեծ արքիմեսյան ուժ:

1) Մեծ խտությամբ գազով լցված փուչիկի վրա:

2) Փոքր խտությամբ գազով լցված փուչիկի վրա:

3) Բոլոր փուչիկների վրա կազդի նույն արքիմեսյան ուժը:

4) Բոլոր պատախանները սխալ են:

652. Մարմինը լողում է  $\rho_0$  խտությամբ հեղուկում այնպես, որ նրա ծավալի մեկ երրորդը հեղուկից դուրս է: Որքա՞ն է մարմնի խտությունը:

1)  $\rho_0 / 2$ :

3)  $2\rho_0 / 3$ :

2)  $\rho_0 / 3$ :

4)  $\rho_0$ :

653. Ո՞րն է  $\rho_1$  և  $\rho_2$  խտությամբ հեղուկների մակերևույթներին լողալիս նույն մարմնի ընկդմված  $V_1$  և  $V_2$  ծավալների ճիշտ հարաբերակցությունը:

$$1) \frac{V_1}{V_2} = \frac{\rho_1}{\rho_2};$$

$$3) \frac{V_1}{V_2} > \frac{\rho_1}{\rho_2};$$

$$2) \frac{V_1}{V_2} = \frac{\rho_2}{\rho_1};$$

$$4) \frac{V_1}{V_2} < \frac{\rho_1}{\rho_2};$$

654. Առաջին անորդ լցված է ջրով, երկրորդը՝ աղաջրով, երրորդը՝ սնդիկով: Անորմներում հեղուկների մակերևույթներին լողում են նույն զանգվածով փայտն չորսուներ: Ո՞ր չորսուի վրա ազդող արքիմեդյան ուժն է ավելի փոքր:

1) Առաջին:

2) Երկրորդ:

3) Երրորդ:

4) Բոլորի վրա ազդում է միևնույն արքիմեդյան ուժը:

655. Նույն հեղուկի մեջ լրիվ ընկդմված են միևնույն շառավղով հոծ և սնամեջ գնդեր: Համեմատել նրանց վրա ազդող արքիմեդյան ուժերը:

1) Սնամեջ գնդի վրա ավելի մեծ արքիմեդյան ուժ է ազդում:


2) Հոծ գնդի վրա ավելի մեծ արքիմեդյան ուժ է ազդում:

3) Երկու գնդերի վրա ազդող արքիմեդյան ուժերը հավասար են:

4) Պատասխանը կախված է գնդերի նյութի խտությունից:

656. Միևնույն մարմինը տարբեր հեղուկներում հավասարակշռության վիճակում է, ինչպես ցույց է տրված նկարում: Ի՞նչ հարաբերակցության մեջ են այդ հեղուկների խտությունները:

$$1) \rho_A < \rho_B < \rho_C;$$




$$2) \rho_A > \rho_B > \rho_C;$$

$$3) \rho_A > \rho_C > \rho_B;$$

$$4) \rho_B > \rho_C > \rho_A;$$

657. Թելից կախված մարմինը ջրում անշարժ վիճակում է: Նրա վրա ազդում են թելի լարման  $\vec{T}$ , ծանրության  $m\vec{g}$  և արքիմեդյան  $\vec{F}_U$  ուժերը: Որքա՞ն է թելի լարման ուժի նոդուլը:



$$1) \quad \left| m\vec{g} \right| + \left| \vec{F}_U \right| :$$

$$2) \quad \left| m\vec{g} \right| :$$

$$3) \quad \left| \vec{F}_U + m\vec{g} \right| :$$

$$4) \quad \left| \vec{F}_U - m\vec{g} \right| :$$

**658.** Ո՞ր դեպքում է մարմինը խորասուզվում հեղուկում և նստում անորի հատակին:

- 1) Եթե հեղուկի խտությունը մեծ է մարմնի խտությունից:
- 2) Եթե հեղուկի խտությունը փոքր է մարմնի խտությունից:
- 3) Եթե հեղուկի խտությունը հավասար է մարմնի խտությանը:
- 4) Եթե մարմնի կշիռը մեծ է հեղուկի կշռից:

**659.** Մարմինը լողում է ջրով լցված բաժակում: Ինչպես կփոխվի մարմնի ընկղղմված մասի ծավալը, եթե բաժակը Երկրի մակերևույթից տեղափոխվի Լուսնի մակերևույթը:

- 1) Կմնեանա:
- 2) Կփոքրանա:
- 3) Չի փոխվի:
- 4) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխանել:


**660.** Ջրով լցված անորի մեջ իջեցվում է փայտի կտոր այնպես, որ ջուրը անորից դուրս չի բախվում: Ինչպես կփոխվի ճնշումն անորի հատակին:

- 1) Կմնեանա:
- 2) Կփոքրանա:
- 3) Չի փոխվի:
- 4) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխանել:

**661.** Ո՞ր դեպքում ավելի մեծ ուժ կպահանջվի՝ դատարկ դույլը օդում պահելո՞ւ, թե՞ ջրով լցված նույն դույլը ջրում պահելու համար:

- 1) Կպահանջվի նույն ուժը:
- 2) Առաջին դեպքում ավելի մեծ ուժ է հարկավոր:
- 3) Երկրորդ դեպքում ավելի մեծ ուժ է հարկավոր:
- 4) Պատասխանը կախված է դույլի զանգվածից:

**662.** Ո՞ր գրաֆիկն է ճիշտ արտահայտում համաստու հեղուկի մեջ ընկղղմվելիս  $\alpha$  կողով պողպատե խորանարդի վրա ազդող արքիմեդյան ուժի՝ չորսուի ներքևի նիստի  $h$  խորությունից կախումը:



- 1) ա:  
2) բ:
- 3) գ:  
4) դ:

**663.** Զրով լցված բաժակում լողացող սառույցը հալվեց: Ինչպե՞ս փոխվեց զրի մակարդակը բաժակում:


- 1) Բարձացավ:
- 2) Իջավ:
- 3) Մնաց նույնը:
- 4) Պատասխանը պայմանավորված է սառցի զանգվածով:

**664.** Երկու միատեսակ ծավալներով փուչիկներից մեկը լցված է ջրածնով, մյուսը՝ հելիումով (հելիումի խտությունը երկու անգամ մեծ է ջրածնի խտությունից): Համեմատեք այդ երկու փուչիկների վրա ազդող վերամբարձ ուժերը:

- 1) Ջրածնով լցված փուչիկի վերամբարձ ուժն ավելի մեծ է:
- 2) Հելիումով լցված փուչիկի վերամբարձ ուժն ավելի մեծ է:
- 3) Վերամբարձ ուժերը հավասար են:
- 4) Վերամբարձ ուժերը զոր են:


**665.** Յուրաքանչյուրը  $d$  հաստությամբ չորս միատեսակ նրբատախտակներից հավաքված չորսուն լողում է ջրում՝ կիսով չափ ընկղմվելով նրա մեջ: Որքանո՞վ կփոքրանա ընկղմման խորությունը, եթե չորսուից հեռացնենք նրբատախտակներից մեկը:

- 1)  $0,5d$ -ով:
- 2)  $d$ -ով:
- 3)  $1,5d$ -ով:
- 4)  $2d$ -ով:



**666.**  $m$  զանգվածով համասեռ գունդը դրված է անորի հատակին: Անորի մեջ այնքան ջուր են լցնում, որ այն ծածկի գնդի կեսը: Գնդի խտությունը 2 անգամ մեծ է ջրի խտությունից: Որքա՞ն է այդ դեպքում գնդի ճնշման ուժն անորի հատակին:

- 1)  $0$ :
- 2)  $\frac{mg}{4}$ :
- 3)  $\frac{mg}{2}$ :
- 4)  $\frac{3mg}{4}$ :



**667.** Աղաջրով լցված բաժակում լողում է մաքուր ջրից պատրաստված սառցե չորսուն: Ինչպե՞ս կփոխվի ջրի մակարդակը բաժակում, եթե սառույցը հալվի:

- 1) Կրածրանա:
- 2) Կիշնի:
- 3) Չի փոխվի:
- 4) Սկզբից կիշնի, հետո կրածրանա:

## 5.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

668. 60 կգ զանգվածով մարզիկը դահուկներով կանգնած է ձյան վրա: Յուրաքանչյուր դահուկի երկարությունը 1,5 մ է, լայնությունը՝ 0,08 մ: Որքա՞ն է մարզիկի գործադրած ճնշումը ձյան հորիզոնական մակերևույթի վրա:
669. Ի՞նչ ճնշում է գործադրում հորիզոնական հարթության վրա 0,1 մ կողի երկարությամբ փայտյա խորանարդը: Փայտի խտությունը 600 կգ/մ<sup>3</sup> է:
670. Անորում լցված ջրի բարձրությունը 15 սմ է: Որքա՞ն է ջրի գործադրած ճնշումն անորի հատակին: Ջրի խտությունը 1000 կգ/մ<sup>3</sup> է:
671. Մելչ պոմապը ջուրը հասցնում է 30 մ բարձրության: Ի՞նչ ուժով է ջուրն այդ բարձրության դեպքում ճնշում 6 սմ<sup>2</sup> կտրվածքի մակերես ունեցող պոմապի կափարիչին: Ջրի խտությունը 1000 կգ/մ<sup>3</sup> է:
672. Նավի ստորջրյա մասում առաջացել է 5 սմ<sup>2</sup> մակերեսով անցք՝ ջրի մակերեսույթից 3 մ խորությամբ: Նավի ներսից ի՞նչ նվազագույն ուժ պետք է գործադրել անցքի վրա՝ ջրի ներհոսքը կանխելու համար: Ջրի խտությունը 10<sup>3</sup> կգ/մ<sup>3</sup> է:
673. Խորանարդած թիթեղյա անորի կողի երկարությունը 10 սմ է: Անորը լիքը լցված է ջրով: Ջրի խտությունը 10<sup>3</sup> կգ/մ<sup>3</sup> է: Որքա՞ն է հիդրոստատիկ ճնշման ուժը անորի հատակին:
674. Ջրաբաշխական մանլիչի փոքր միտոցի տրամագիծը 2,5 սմ է, իսկ մեծ միտոցինը՝ 25 սմ: Ի՞նչ ճնշման ուժ պետք է գործադրել փոքր միտոցի վրա, որի հնարավոր լինի բարձրացնել 2 տ զանգվածով ավտոմեքենան:
675. Ջրաբաշխական մանլիչի փոքր միտոցը 500 Ն ուժի ազդեցությամբ տեղափոխվում է 15 սմ-ով, որի հետևանքով մեծ միտոցը բարձրանում է 5 սմ-ով: Որքա՞ն է մեծ միտոցի վրա ազդող ուժը:
676. Ջրանցքը, որի լայնությունը 1,2 մ է, իսկ խորությունը՝ 0,8 մ, լցված է ջրով և նիշնորմված է պատվարով: Որքա՞ն է ջրի ճնշման ուժը պատվարի վրա: Ջրի խտությունը 10<sup>3</sup> կգ/մ<sup>3</sup> է:
677. Որքա՞ն է ծովի ջրում 0,2 մ<sup>3</sup> ծավալով քարի վրա ազդող արքիմեդյան ուժը: Ծովի ջրի խտությունը 1030 կգ/մ<sup>3</sup> է:

678.  $3,5 \text{ м} \times 1,5 \text{ м} \times 0,2 \text{ м}$  չափերով երկաքրետոնե սալն իր ծավալի կիսով  
ընկղմված է ջրի մեջ: Ջրի խտությունը  $10^3 \text{ կգ/մ}^3$  է: Որքա՞ն է նրա վրա  
ազդող արքիմեդյան ուժը:
679. Հոծ մարմինը լողում է հեղուկում: Նրա ծավալը քանի՞ անգամ է մեծ  
հեղուկում ընկղմված մասի ծավալից, եթե մարմնի նյութի խտությունը  
 $200 \text{ կգ/մ}^3$  է, իսկ հեղուկինը՝  $800 \text{ կգ/մ}^3$ :
680. Մարմինը ջրում երեք անգամ ավելի քերև է, քան օդում: Որքա՞ն է  
մարմնի նյութի խտությունը: Արքիմեդյան ուժն օդում անտեսել: Ջրի  
խտությունը  $10^3 \text{ կգ/մ}^3$  է:
681. Մարմինը, որի նյութի խտությունը  $1,25$  անգամ մեծ է ջրի խտությու-  
նից, կախված է թելից: Քանի՞ անգամ կփոքրանա թելի լարման ուժը,  
եթե մարմինն ընկղմենք ջրի մեջ: Արքիմեդյան ուժն օդում անտեսել:

### 5.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

682. Կերոսինով մինչև պրունկը լցրած քաց տակառն ունի  $10 \text{ ամ}^2$  կտրվածքի մակերեսով կողային կլոր անցք, որի կենտրոնի խորությունը հեղուկի մակարդակից 2 մ է: Անցքը փակված է խցանով: Մընդուրային ճնշումը  $10^5 \text{ Պա է:}$  Կերոսինի խորությունը  $800 \text{ կգ/մ}^3$ :
- 1) Որքա՞ն է ճնշումը 2 մ խորությունում: Պատասխանը բազմապատկել  $10^{-3}$ -ով:
  - 2) Որքա՞ն է ճնշման ուժն անցքը փակող խցանի վրա:
683.  $10 \text{ կգ զանգվածով}$  քարը ընկղմված է ջրի մեջ: Քարի խորությունը  $2,5 \cdot 10^3 \text{ կգ/մ}^3$  է, ջրինը  $10^3 \text{ կգ/մ}^3$ :
- 1) Որքա՞ն է քարի վրա ազդող արքիմեդյան ուժը:
  - 2) Ի՞նչ ուժ պետք է կիրառել քարը ջրի մեջ հավասարաչափ քարձրացնելու համար: Ջրի դիմադրության ուժն անտեսել:
684. Համասեռ մարմինը լողում է կերոսինում՝ ընկղմվելով իր ծավալի  $0,75 \text{ մասով:}$  Կերոսինի խորությունը  $800 \text{ կգ/մ}^3$  է:
- 1) Որքա՞ն է մարմնի վրա ազդող արքիմեդյան և ծանրության ուժերի հարաբերությունը:
  - 2) Որքա՞ն է մարմնի նյութի խորությունը:
685. Համասեռ մարմնի կշիռը  $800 \text{ կգ/մ}^3$  խորությամբ հեղուկում 1 Ն է, իսկ  $1000 \text{ կգ/մ}^3$  խորությամբ հեղուկում՝  $0,8 \text{ Ն:}$
- 1) Որքա՞ն է մարմնի ծավալը: Պատասխանը բազմապատկել  $10^4$ -ով:
  - 2) Որքա՞ն է մարմնի խորությունը:

#### 5.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

686. Զրաբաշխական մեքենայով 2 տ զանգվածով բեռը բարձրացնելու համար կատարվել է 40 Զ օգտակար աշխատանք: Այդ ընթացքում փոքր միտոց կատարել է 10 քայլ՝ յուրաքանչյուր քայլի ընթացքում տեղաշարժվելով 10 սմ-ով: Ըստման և դիմադրության ուժերն անտեսել:
- 1) Որքա՞ն է փոքր և մեծ միտոցների տեղափոխությունների հարաբերությունը, եթե փոքր միտոցն իշխում է 10 սմ-ով:
  - 2) Մեծ միտոցի մակերեսը քանի՞ անգամ է մեծ փոքր միտոցի մակերեսից:
  - 3) Որքա՞ն է փոքր միտոցի վրա ազդող ուժը՝ բեռը հավասարաչափ բարձրացնելիս:
687. Թելի մի ծայրն ամրացված է ջրամբարի հատակին, իսկ մյուսը՝ փայտե չորսուին, որի ծավալի 0,75 մասը ընկողմած է ջրի մեջ: Չորսուի զանգվածը 2 կգ է, ջրի խտությունը 1000 կգ/մ<sup>3</sup>, փայտինը՝ 250 կգ/մ<sup>3</sup>:
- 1) Որքա՞ն է չորսուի վրա ազդող արքիմեդյան ուժը:
  - 2) Որքա՞ն է թելի լարման ուժը:
  - 3) Ի՞նչ արագացմամբ կսկսի շարժվել չորսուն, եթե թելը խզվի:

## 5.5. ՉՈՐՍ ՊԱՏԱԽԱՆԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

688.  $500 \text{ կգ/մ}^3$  խտությամբ և  $4 \cdot 10^{-4} \text{ մ}^3$  ծավալով գնդակն ընկրում են ջրի մեջ  $1,8 \text{ մ}$  խորությամբ և քաց քողնում: Ջրի խտությունը  $1000 \text{ կգ/մ}^3$  է:

- 1) Որքա՞ն է գնդակի վրա ազդող ծանրության ուժը:
- 2) Որքա՞ն է գնդակի վրա ազդող արքիմեդյան ուժը:
- 3) Ի՞նչ արագացմամբ է շարժվում գնդակը ջրի մեջ: Ջրի դիմադրությունն անտեսել:
- 4) Ի՞նչ արագությամբ է օժտված գնդակը ջրից դուրս բռչելիս: Գնդակի չափերն անտեսել:

689.  $1 \text{ մ}^2$  լայնական հատույքի մակերես և  $0,4 \text{ մ}$  բարձրություն ունեցող փայտեն չորսուն լրդում է ջրում: Փայտի խտությունը  $500 \text{ կգ/մ}^3$  է, ջրինը՝  $1000 \text{ կգ/մ}^3$ :

- 1) Որքա՞ն է չորսուի՝ ջրի մեջ ընկղմված և վերջրյա մասերի բարձրությունների հարաբերությունը:
- 2) Որքա՞ն է չորսուի վրա ազդող արքիմեդյան ուժը, եթե այն լրիվ սուզված է ջրում:
- 3) Ի՞նչ ուժ պետք է կիրառել չորսուն ջրում պահելու համար, եթե այն լրիվ սուզված է:
- 4) Որքա՞ն աշխատանք է պահանջվում չորսուն ջրի մեջ լրիվ սուզելու համար: Ջրի դիմադրության ուժն անտեսել:

## 6. ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԱԼԻՔՆԵՐ

### 6.1. ԹԻՇ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՍՔ Առաջադրանքներ

690. Ո՞րն է նախադասության *սիսալ շարունակությունը*:

Ազատ տատանումներ առաջանալու համար անհրաժեշտ է, որ ...

- 1) հավասարակշռության դիրքից դուրս գալու համար համակարգն էներգիա ստանա:
- 2) հավասարակշռության դիրքից հանելիս համակարգում առաջանա դեպի հավասարակշռության դիրքը ուղղված ուժ:
- 3) հավասարակշռության դիրքից հանելիս համակարգի վրա ազդի պարբերաբար փոխվող արտաքին ուժ:
- 4) շփումը համակարգում լինի աննշան, որպեսզի տատանումներն արագորեն չմարեն:

691. Ո՞ր դեպքում կառաջանան ազատ տատանումներ:

Ա. Զապահակից կախված բեռը շեղում են հավասարակշռության դիրքից և բաց բռնում:

Բ. Թեևից կախված գնդիկը շեղում են հավասարակշռության դիրքից և բաց բռնում:


- 1) Միայն Ա դեպքում:
- 2) Միայն Բ դեպքում:
- 3) Եվ Ա դեպքում, և Բ:
- 4) Ոչ Ա դեպքում, ոչ Բ:

692. Ո՞ր դեպքում է հարկադրական տատանումների լայնույթն ընդունում իր առավելագույն արժեքը:

- 1) Երբ արտաքին ուժի փոփոխման հաճախությունը փոքր է տատանողական համակարգի սեփական հաճախությունից:
- 2) Երբ արտաքին ուժի փոփոխման հաճախությունը մեծ է տատանողական համակարգի սեփական հաճախությունից:
- 3) Երբ արտաքին ուժի փոփոխման հաճախությունը հավասար է տատանողական համակարգի սեփական հաճախությանը:
- 4) Երբ տատանողական համակարգի վրա ազդում է հաստատուն ուժ:

693. Նկարում պատկերված ա գունդը նկարի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ շեղում են հավասարակշռության դիրքից և բաց բռնում: թ, զ, դ գնդերից ո՞րը կկատարի ավելի մեծ լայնույթով տատանումներ:

- 1) թ գունդը:



- 2) գ գունդը:  
 3) դ գունդը:  
 4) Նշված զնդերը չեն տատանվի:

**694. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:**

Այն ամենափոքր ժամանակը, որից հետո տատանումները կրկնվում են, կոչվում է...

- 1) տատանումների հաճախություն:  
 2) տատանումների պարբերություն:  
 3) տատանումների լայնույթ:  
 4) տատանումների փուլ:

**695. Ո՞րն է տատանումների հաճախության միավորը ՄՀ-ում:**


- 1)  $1 \text{ վ:}$                     3)  $1 \text{ վ}^2:$   
 2)  $1 \text{ վ}^{-1}: \quad \quad \quad 4) 1 \text{ մ/վ:}$

**696. Թելից կախված զնդիկն ազատ տատանումների ժամանակ ձախ եզրային դիրքից մինչև հավասարակշռության դիրքն անցնում է  $0,2 \text{ վ}$ -ում: Որքա՞ն է զնդիկի տատանումների պարբերությունը:**

- 1)  $0,2 \text{ վ:} \quad \quad \quad 3) 0,8 \text{ վ:}$   
 2)  $0,4 \text{ վ:} \quad \quad \quad 4) 1,6 \text{ վ:}$

**697. Նկարում պատկերված է նյութական կետի տատանումները նկարագրող գրաֆիկը: Որքա՞ն է տատանումների պարբերությունը:**

- 1)  $10 \text{ վ:} \quad \quad \quad 3) 30 \text{ վ:}$   
 2)  $20 \text{ վ:} \quad \quad \quad 4) 50 \text{ վ:}$



**698. Ի՞ քարձությունից առանց սկզբնական արագության ազատ անկում կատարող զնդիկը բախվում է հորիզոնական հարթությանը և բռչում վեր: Այնուհետև նորից լճկնում է հարթության վրա ու հետ բռչում և այսպես շարունակ: Գնդիկի շարժումը տատանողակա՞ն է, թե՞ ոչ: Եթե այս, ապա որքա՞ն է տատանման պարբերությունը: Բախումը համարել բացարձակ առաձգական:**

- 1) Տատանողական չէ:  
 2) Տատանողական է,  $T = \sqrt{2H/g}$ :  
 3) Տատանողական է,  $T = 2\sqrt{2H/g}$ :  
 4) Ներդաշնակ տատանումներ են,  $T = \sqrt{2H/g}$ :

699. Թեևից կախված գնդիկը շեղում են հավասարակշռության դիրքից և բաց բողնում: Որքա՞ն ժամանակ անց գնդիկի արագությունը կլինի առավելագույնը, եթե տատանումն պարբերությունը  $T$  է: Ծփումն անտեսել:

- 1)  $1/8 T$  :                    3)  $1/2 T$  :  
 2)  $1/4 T$  :                    4)  $3/8 T$  :

700. Ո՞ր մեծությունը չի փոխվում ներդաշնակ տատանումների ժամանակ:

- 1) Հավասարակշռության դիրքից շեղումը:  
 2) Տատանումների փուլը:  
 3) Տատանումների հաճախությունը:  
 4) Պոտենցիալ էներգիան:

701. Նյութական կետի շարժումը նկարագրվում է  $x = 5 \cos(10t + 3)$  հավասարումով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է տատանումների պարբերությունը:

- 1)  $5\pi$  վ:                    3)  $10\pi$  վ:  
 2)  $\frac{\pi}{5}$  վ:                    4)  $\frac{\pi}{10}$  վ:


702. Տրված է նյութական կետի շարժման հավասարումը՝  $x = 10 \sin(4t + 2)$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է նյութական կետի տատանումների լայնույթը:

- 1) 2 մ:                    3) 5 մ:  
 2) 4 մ:                    4) 10 մ:

703. Նկարում պատկերված է ներդաշնակ տատանումներ կատարող նյութական կետի կոռորդինատի՝


ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ո՞ր խումբն է ճիշտ նշում տատանումների լայնույթը ու պարբերությունը:

- 1) 0,4 մ, 4 վ:                    3) 0,2 մ, 2 վ:  
 2) 0,4 մ, 6 վ:                    4) 0,2 մ, 4 վ:



704. Նկարում պատկերված է ներդաշնակ տատանումներ կատարող նյութական կետի  $x = x_0 \sin(\omega t + \varphi_0)$  կոռորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է տատանումների  $\varphi_0$  սկզբնական փուլը:

- 1)  $-\pi/2$ :      3) 0:  
2)  $\pi/2$ :      4)  $\pi$ :




705. Տրված է նյութական կետի շարժման հավասարումը՝  $x = 2 \sin \pi(t - 0,5)$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ժամանակի հաշվարկման սկզբնական պահից որքա՞ն ժամանակ անց նյութական կետը առաջին անգամ կանցնի հավասարակշռության դիրքով:

- 1) 0,5 վ:      3) 1,57 վ:  
2) 1 վ:      4) 2,5 վ:

706. Նկարում պատկերված է ներդաշնակ տատանումների գրաֆիկ: Ո՞րն է տատանումների հավասարումը, եթե մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:

- 1)  $x = 2 \cos\left(\frac{\pi}{2}t + \frac{\pi}{4}\right)$ :  
2)  $x = 2 \sin\left(\frac{\pi}{4}t + \frac{\pi}{2}\right)$ :  
3)  $x = 4 \cos\left(\frac{\pi}{2}t - \frac{\pi}{4}\right)$ :  
4)  $x = 4 \sin\left(\frac{\pi}{4}t - \frac{\pi}{2}\right)$ :



707. Ներդաշնակ տատանումներ կատարող մարմնի արագությունը ո՞ր դիրքերում է զրո:


- 1) Ոչ մի դիրքում:  
2) Հավասարակշռության դիրքով անցնելու պահին:  
3) Արագությունը հաստատուն է:  
4) Հավասարակշռության դիրքից առավելագույն շեղման կետերում:

708. Ո՞րն է ներդաշնակ տատանումների  $x_0$  լայնույթի, և հաճախության և արագության առավելագույն  $v_0$  արժեքի կապն արտահայտող բանաձևը:

- 1)  $v_0 = \nu x_0$ :      3)  $v_0 = 2\pi\nu x_0^{-1}$ :  
 2)  $v_0 = 2\pi\nu x_0$ :      4)  $v_0 = 4\pi^2\nu^2 x_0$ :

709. Նկարում պատկերված է տատանողական շարժում կատարող մարմնի կոորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր պահերին է մարմնի արագությունը զրո:

- 1) 0, 2, 4, 6 վ:  
 2) 1, 3, 5 վ:  
 3) 0, 1, 2, 3, 4, 5, 6 վ:  
 4) 2, 4, 6 վ:



710. Տրված է նյութական կետի ներդաշնակ տատանումների հավասարումը՝  $x = \cos 4\pi t$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է արագացման  $a_x$  արոյեկցիայի լայնույթը:

- 1)  $16\pi^2 \text{ մ/վ}^2$ :  
 2)  $8\pi^2 \text{ մ/վ}^2$ :  
 3)  $-8\pi^2 \text{ մ/վ}^2$ :  
 4)  $-16\pi^2 \text{ մ/վ}^2$ :


711. Որքա՞ն է ուղիղ գծով ներդաշնակ տատանումներ կատարող նյութական կետի անցած ճանապարհը կես պարբերության ընթացքում, եթե տատանումների լայնույթը  $x_0$  է :

- 1)  $4x_0$ :  
 2)  $2x_0$ :  
 3)  $x_0$ :  
 4)  $x_0/2$ :

712. Որքա՞ն է ուղիղ գծով ներդաշնակ տատանումներ կատարող նյութական կետի տեղափոխությունը մեկ պարբերության ընթացքում, եթե տատանումների լայնույթը  $x_0$  է :

- 1)  $4x_0$ :  
 2)  $2x_0$ :  
 3)  $x_0$ :  
 4) 0:

713. Նկարում (ա) պատկերված է ներդաշնակ տատանումներ կատարող մարմնի կոռդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ո՞ր գրաֆիկն է նկարում (բ) ճիշտ արտահայտում մարմնի իմպուլսի պրոյեկցիայի կախումը ժամանակից:



- 1)  $\omega$ :                           3)  $q$ :  
2)  $p$ :                                   4)  $\eta$ :

714. Երեք մարմին  $x$  առանցքի երկայրով կատարում են մեխանիկական տատանումներ, որոնք արտահայտվում են  $\omega$ .  $x = x_m \sin \omega t$ ,  $p$ .  $x = x_m \cos \omega t$ ,  $q$ .  $x = x_m \cos 3\omega t$  հավասարումներով: Ո՞ր դեպքում են տատանումները ներդաշնակ:

- 1) Միայն  $\omega$  դեպքում:  
2) Միայն  $p$  դեպքում:  
3)  $\omega$  և  $p$  դեպքերում:  
4) Բոլոր դեպքերում:

715. Որքա՞ն է  $T$  այրքերությամբ ներդաշնակ տատանումներ կատարող մաքենատիկական ճոճանակի կինետիկ էներգիայի փոփոխման պարբերությունը:

- 1)  $T$  :                                   3)  $4T$  :  
2)  $2T$  :                                   4)  $T/2$ :

716. Որքա՞ն է կ կոշտությամբ զսպանակին ամրացված  $m$  զանգվածով բեռի արագության մոդուլը հավասարակշռության դիրքով անցնելու պահին, եթե այն կատարում է  $x_0$  լայնությով ներդաշնակ տատանումներ:


- 1)  $x_0 \frac{k}{m}$  :                                   3)  $x_0 \frac{m}{k}$  :  
2)  $x_0 \sqrt{\frac{k}{m}}$  :                                   4)  $x_0 \sqrt{\frac{m}{k}}$  :

717. Թեևից կախված բեռք ներդաշնակ տատանումներ է կատարում A և

C դիրքերի միջև: Ո՞ր դիրքում բեռն ունի

առավելագույն կինետիկ էներգիան:

- 1) A դիրքում:
- 2) B դիրքում:
- 3) C դիրքում:
- 4) Բոլոր դիրքերում նույնն է:



718. Պողպատե զնդիկը կախեցին թելից և շեղեցին հավասարակշռության դիրքից: Որոշ ժամանակ անց տատանումները մարեցին: Ի՞նչն է տատանումների մարման պատճառը:

- 1) Գնդիկի տաքացումը:
- 2) Օդի հետ շփման հետևանքով զնդի լիցքավորումը:
- 3) Կախման կետում շփման և օդի դիմադրության ուժերի առկայությունը:
- 4) Բոլոր պատասխանները սխալ են:

719. Հավասարակշռության դիրքով անցնելիս մաքենատիկական ճոճանակի արագությունն ինչպե՞ս է կախված տատանումների լայնույթից:

- 1) Լայնույթը մեծացնելիս արագությունը մեծանում է:
- 2) Լայնույթը մեծացնելիս արագությունը փոքրանում է:
- 3) Կախված չէ:
- 4) Կախված ճոճանակի զանգվածից՝ կարող է մեծանալ կամ փորձանալ:

720. Եթե ներդաշնակ տատանումների պարբերությունը մեծացնենք 2 անգամ, իսկ լայնույթը բողնենք նույնը, ապա ինչպե՞ս կփոխվի տատանումների լրիվ մեխանիկական էներգիան:

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1) Կմեծանա 2 անգամ: | 3) Կփոքրանա 2 անգամ: |
| 2) Կմեծանա 4 անգամ: | 4) Կփոքրանա 4 անգամ: |

721. Մեծությունների ո՞ր զույգից է կախված մաքենատիկական ճոճանակի ներդաշնակ տատանումների պարբերությունը:

- 1) Զանգված և տատանման լայնույթ:
- 2) Զանգված և սկզբնական փուլ:
- 3) Թելի երկարություն և ազատ անկման արագացում:
- 4) Թելի երկարություն և տատանման լայնույթ:

722. Ինչպե՞ս կարելի է փոքրացնել մաքենատիկական ճոճանակի ներդաշնակ տատանումների պարբերությունը:

- 1) Փոքրացնելով թելի երկարությունը:

- 2) Սեծացնելով քելի երկարությունը:
- 3) Փոքրացնելով բեռի զանգվածը:
- 4) Սեծացնելով տատանումների լայնույթը:

723. Ինչպե՞ս կփոխվի մաքենատիկական ճռճանակի ներդաշնակ տատանումների հաճախությունը, եթե նրա զանգվածը մեծացնենք 4 անգամ:

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1) Կմեծանա 4 անգամ: | 3) Կփոքրանա 4 անգամ: |
| 2) Կմեծանա 2 անգամ: | 4) Կմնա նույնը:      |

724. 1 երկարությամբ քելից կախված  $m$  զանգվածով գնդիկը կատարում է  $T$  պարբերությամբ ներդաշնակ տատանումներ: Ի՞նչ պարբերությամբ ներդաշնակ տատանումներ կկատարի  $2m$  զանգվածով գնդիկը  $2l$  երկարությամբ քելից կախելիս:

- |                            |           |
|----------------------------|-----------|
| 1) $\sqrt{2}T$ :           | 3) $T$ :  |
| 2) $\frac{\sqrt{2}}{2}T$ : | 4) $2T$ : |

725. Ո՞ր արտահայտությամբ կարելի է հաշվել ազատ անկման արագացումը, եթե հայտնի են մաքենատիկական ճռճանակի ներդաշնակ տատանումների  $T$  պարբերությունը և թելի 1 երկարությունը:

- |                           |                             |
|---------------------------|-----------------------------|
| 1) $\frac{2\pi l}{T}$ :   | 3) $\frac{4\pi^2 l}{T^2}$ : |
| 2) $\frac{2\pi l}{T^2}$ : | 4) $\frac{4\pi^2 l}{T}$ :   |

726. Ինչպե՞ս կփոխվի մաքենատիկական ճռճանակի պարբերությունը Երկրի հասարակածից բևեռ տեղափոխելիս:

- 1) Չի փոխվի:
- 2) Կմեծանա:
- 3) Կփոքրանա:
- 4) Հարցին միարժեք պատասխանել հնարավոր չէ:

727. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Մաքենատիկական ճռճանակի տատանումները կարելի է համարել ներդաշնակ՝

- 1) շեղման մեծ անկյունների և դիմադրության փոքր ուժի դեպքում:
- 2) շեղման փոքր անկյունների և դիմադրության փոքր ուժի դեպքում:
- 3) շեղման փոքր անկյունների և դիմադրության մեծ ուժի դեպքում:
- 4) շեղման մեծ անկյունների և դիմադրության մեծ ուժի դեպքում:

728. Ինչպես է ուղղված մաթեմատիկական ճոճանակի բերի վրա ազդող ուժերի համագորք հավասարակշռության դիրքով անցնելու պահին:

- 1) Հետագծի շղափողով:
- 2) Թելի երկայնքով դեպի վեր:
- 3) Թելի երկայնքով դեպի ներքև:
- 4) Համագորյու զրո է:


729. Երկար թելից կախված մազնիսը (մաթեմատիկական ճոճանակը) կատարում է ներդաշնակ տատանումներ: Հավասարակշռության դիրքով անցնելիս նրան կաշում է երկարեն խարտուք, որի հետևանքով նրա զանգվածը մեծանում է: Ինչպես կփոխվեն տատանումների պարբերությունն ու լայնույթը:

- 1) Պարբերությունը չի փոխվի, լայնույթը կփոքրանա:
- 2) Պարբերությունը չի փոխվի, լայնույթը կմեծանա:
- 3) Լայնույթը չի փոխվի, պարբերությունը կմեծանա:
- 4) Լայնույթը չի փոխվի, պարբերությունը կփոքրանա:

730.  $\Omega^*$  բանաձևով է որոշվում  $k$  կոշտությամբ զապանակին ամրացված  $m$  զանգվածով բերի ներդաշնակ տատանումների պարբերությունը:

$$\begin{array}{ll} 1) \sqrt{\frac{k}{m}}: & 3) \frac{1}{2\pi}\sqrt{\frac{k}{m}}: \\ 2) 2\pi\sqrt{\frac{m}{k}}: & 4) 2\pi\sqrt{\frac{k}{m}}: \end{array}$$

731. Աշակերտը որոշեց փորձով պարզել, թե ինչպես է կախված ճոճանակի տատանման պարբերությունը բերի զանգվածից:  $\Omega^*$  ճոճանակների պարբերությունները նա պետք է չափի:



- 1)  $w, p, q:$
- 2)  $p, n, t:$
- 3)  $t, q, t:$
- 4)  $n, q, t:$


732. Ուստինե քուղից կախված բեռը կատարում է  $T$  պարբերությամբ ներդաշնակ տատանումներ: Քանի՞ անգամ կփոխվի տատանումների պարբերությունը, եթե կտրվի քուղի երկարության  $3/4$ -ը և մնացած մասից կախվի նույն բեռը:

- 1) Չի փոխվի:  
2) Կփոքրանան 2 անգամ:
- 3) Կմեծանա 2 անգամ:  
4) Կփոքրանա 4 անգամ:

733. Զսպանակից կախված ներդաշնակ տատանումներ կատարող քեռը 10 վ-ում անցնում է 5 լայնույթի հավասար ճանապարհ: Որքա՞ն է տատանումների պարբերությունը:
- 1) 2 վ:  
2) 4 վ:  
3) 6 վ:  
4) 8 վ:

734. Զսպանակից կախված քեռը կատարում է  $T$  պարբերությամբ ներդաշնակ տատանումներ: Որքա՞ն կլինի նույն քեռի տատանումների պարբերությունը, եթե այն կախվի զուգահեռ միացված չորս նույնատիպ զսպանակներից:

- 1)  $\frac{T}{4}$   
2)  $\frac{T}{2}$
- 3)  $T$ :  
4)  $2T$ :



735. Զսպանակավոր ճոճանակի ներդաշնակ տատանումների լայնույթը փոքրացրին 2 անգամ: Ինչպե՞ս փոխվեց տատանումների պարբերությունը:
- 1) Մեծացավ 2 անգամ:  
2) Փոքրացավ 2 անգամ:
- 3) Փոքրացավ 4 անգամ:  
4) Մնաց նույնը:

736. Ո՞ն է նախադասության ճիշտ շարունակությունը:
- Տատանումների տարածումը տարածության մեջ ժամանակի ընթացքում անվանում են՝
- 1) ազատ տատանումներ:  
2) հարկադրական տատանումներ:
- 3) ինքնատատանումներ:  
4) ալիքներ:

737. Ո՞ր միջավայրում են տարածվում մեխանիկական ալիքները:
- 1) Սիայն վակուումում:  
2) Սիայն պինդ և հեղուկ:  
3) Պինդ, հեղուկ և գազային:  
4) Պինդ, հեղուկ, գազային միջավայրերում և վակուումում:


738. Ո՞ր միջավայրերում են տարածվում երկայնական մեխանիկական ալիքները:
- 1) Սիայն պինդ:  
2) Սիայն հեղուկ:
- 3) Սիայն հեղուկ և պինդ:  
4) Պինդ, հեղուկ և գազային:

739. Նկարում պատկերված է ջրի մակերևույթին առաջացած ներդաշնակ ալիքի կողապատկերը ժամանակի որոշակի պահին: Որքա՞ն են ալիքի  $\lambda$  երկարությունը և  $x_0$  լայ-

5մ


նույթը:

- 1)  $\lambda = 5 \text{ մ}$ ,  $x_0 = 1 \text{ մ}$ :
- 2)  $\lambda = 2 \text{ մ}$ ,  $x_0 = 0,5 \text{ մ}$ :
- 3)  $\lambda = 1 \text{ մ}$ ,  $x_0 = 5 \text{ մ}$ :
- 4)  $\lambda = 0,5 \text{ մ}$ ,  $x_0 = 2,5 \text{ մ}$ :



740. Նկարում պատկերված է մեխանիկական ալիքի տարածական փոփածքը՝ ժամանակի որոշակի պահին: Ո՞ր կետերի միջև հեռավորությունն է առավել ճիշտ համապատասխանում ալիքի երկարությանը:

- 1) a և f:
- 2) d և e:
- 3) c և e:
- 4) b և f:




741. Տրված է ալիքի հավասարումը՝  $y = 3 \sin(5\pi t - 4x)$ , որտեղ մեծություններն արտահայտված են ԱՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է տատանումների պարբերությունը:

- 1)  $0,4 \text{ վ:}$
- 2)  $5\pi \text{ վ:}$
- 3)  $4\pi \text{ վ:}$
- 4)  $3 \text{ վ:}$

742. Ալիքի հավասարումն ունի  $y = 5 \sin[2\pi(t - 0,1x)]$  տեսքը, որտեղ մեծություններն արտահայտված են ԱՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է ալիքի տարածման արագությունը:

- 1)  $10 \text{ մ/վ:}$
- 2)  $5 \text{ մ/վ:}$
- 3)  $2 \text{ մ/վ:}$
- 4)  $1 \text{ մ/վ:}$

743. Նկարում պատկերված լայնական ալիքը տարածվում է ձախից դեպի աջ: Ի՞նչ ուղղությամբ է տատանվում միջավայրի A կետը:



- 1) ab ուղղի երկայնքով:
- 2) cd ուղղի երկայնքով:
- 3) ef ուղղի երկայնքով:
- 4) Հնարավոր է տատանվի կամայական ուղղությամբ:

744. Մոտավորապես ի՞նչ սահմաններում է փոխվում այն մեխանիկական տատանումների հաճախությունը, որոնք մարդու ականջն ընկալում է որպես ձայն:

- 1)  $1 \div 17$  Հց:                            3)  $17000 \div 20000$  Հց:  
2)  $17 \div 20$  Հց:                            4)  $17 \div 20000$  Հց:

745. Տղան գոռաց, և բացատի մյուս ծայրում աղջիկը նրա ձայնը լսեց ժամանակ անց: Զայնի արագությունը օդում  $v$  է: Որքա՞ն է տղայի և աղջկա միջև հեռավորությունը:

- 1)  $2vt$ :                                    3)  $\frac{vt}{2}$ :  
2)  $vt$ :    4)  $\frac{vt}{4}$ :

746. Ո՞ր մեծությունն է բնութագրում ձայնի ուժգնությունը:

- 1) Տատանումների հաճախությունը:  
2) Տարածման արագությունը:  
3) Ալիքի երկարությունը:  
4) Տատանումների լայնույթը:

747. Ո՞ր մեծությունն է մնում անկողինս, եթե ձայնն օդից անցնում է այնպիսի միջավայր:

- 1) Տատանումների հաճախությունը:  
2) Տարածման արագությունը:  
3) Ալիքի երկարությունը:  
4) Նշանակած բոլոր մեծությունները չեն փոխվում:

## 6.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

748. Կամերտոնի ոտիկները տատանվում են 440 Հց հաճախությամբ: Քանի՞ տատանում կկատարեն կամերտոնի ոտիկները 1,5 Վ-ում:
749. Չսպանակավոր ճռճանակի տատանումների լայնույթը 5 սմ է: Որքա՞ն ճանապարհ կանցնի զսպանակին ամրացված քեռը 10 լրիկ տատանման ընթացքում:
750. Որքա՞ն ճանապարհ կանցնի զսպանակից կախված քեռը 25Վ-ում, եթե նրա տատանումների լայնույթը 0,04 մ է, իսկ պարբերությունը՝ 2 Վ:
751. Տրված է նյութական կետի ներդաշնակ տատանումների շարժման հավասարումը՝  $x = 0,2 \cos(20t + \pi/3)$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է նյութական կետի արագության առավելագույն արժեքը:
752. Որքա՞ն է սինուսոիդական տատանումներ կատարող նյութական կետի շեղումը հավասարակշռության դիրքից՝ տատանումներն սկսելուց 2 Վ անց: Տատանումների լայնույթը 2 մ է, պարբերությունը՝ 24 Վ, սկզբնական փուլը՝ 0:
753. 50 գ զանգվածով մասնիկը կատարում է 1 մ լայնույթով և 0,5 Վ պարբերության մը ներդաշնակ տատանումներ: Որքա՞ն է մասնիկի առավելագույն կիմետրիկ էներգիան: Ընդունել՝  $\pi^2 = 10$ :
754. 250 Ն/մ կոշտությամբ զսպանակին ամրացված քեռը 16 Վ-ում կատարում է 20 տատանում: Որքա՞ն է քեռի զանգվածը: Ընդունել՝  $\pi^2 = 10$ :
755. 7,2 Ն ուժի ազդեցությամբ զսպանակը ձգվում է 10 սմ-ով: Որքա՞ն է այդ զսպանակին ամրացված 2 կգ զանգվածով քեռի տատանումների պարբերությունը: Ընդունել՝  $\pi=3$ :
756. Չսպանակին ամրացված 0,8 կգ զանգվածով քեռը տատանվում է 0,5 Վ պարբերությամբ: Ի՞նչ պարբերությամբ կտատանվի նույն զսպանակից կախված 12,8 կգ զանգվածով քեռը:
757. Չսպանակին ամրացված քեռը կատարում է 0,04 մ լայնույթով հորիզոնական տատանումներ: Որքա՞ն է քեռի տատանումների լրիկ մեխանիկական էներգիան, եթե զսպանակի կոշտությունը  $10^4$  Ն/մ է:

758. Զսպանակից կախված բեռք շեղեցին հավասարակշռության դիրքից և բաց բողեցին: Ինչքա՞ն ժամանակում բեռք կանցնի լայնույթի առաջին կեսը, եթե տատանման պարբերությունը 24 վ է:
759. Երկրի մակերևույթին ճոճանակի ներդաշնակ տատանումների պարբերությունը 2 վ է: Որքա՞ն կիහնի այդ ճոճանակի ներդաշնակ տատանումների պարբերությունը Լուսնի մակերևույթին, որտեղ ազատ անկման արագացումը 6,25 անգամ փոքր է, քան երկրի մակերևույթին:
760. Մաքենատիկական ճոճանակը 1 ր-ում կատարում է 30 տատանում: Որքա՞ն է 4 անգամ ավելի կարճ մաքենատիկական ճոճանակի ներդաշնակ տատանումների պարբերությունը:
761. Մաքենատիկական ճոճանակներից մեկի ներդաշնակ տատանումների պարբերությունը 2 վ է, իսկ մյուսինը՝ 4 վ: Որքա՞ն է երկրորդ և առաջին ճոճանակների երկարությունների հարաբերությունը:
762. Կամերտոնը տատանվում է 170 Հց հաճախությամբ: Որքա՞ն է նրա արձակած ձայնի ալիքի երկարությունն օդում: Օդում ձայնի տարածման արագությունը 340 մ/վ է:
763. Օդում տարածվող առաձգական ալիքի երկարությունը 50 մ է: Որքա՞ն է տատանումների հաճախությունը: Ձայնի արագությունն օդում ընդունել 350 մ/վ:
764. Կամերտոնի տատանումների պարբերությունը 0,002 վ է: Որքա՞ն է կամերտոնի արձակած ձայնային ալիքի երկարությունը ջրում: Ձայնի արագությունը ջրում ընդունել 1500 մ/վ:
765. Զկնորսը նկատեց, որ 10 վ-ում լողանն ալիքների վրա կատարեց 20 տատանում: Որքա՞ն է ալիքների տարածման արագությունը, եթե ալիքի երկարությունը 3 մ է:

### 6.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

766. Նյութական կետի ներդաշնակ տատանումների լայնույթը 10 սմ է, իսկ արագության առավելագույն արժեքը՝  $0,314 \text{ մ/վ}$ :
- 1) Որքա՞ն է տատանումների պարբերությունը:
  - 2) Որքա՞ն է տատանման շրջանային հաճախությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
767. Նյութական կետը ուղիղ գծով կատարում է 2 մ լայնույթով և 6 վ պարբերությամբ ներդաշնակ տատանումներ:
- 1) Ամենամեծ շեղման դիրքից հաշված՝ որքա՞ն ժամանակում նյութական կետը կանցնի լայնույթի կեսը:
  - 2) Որքա՞ն է այդ ժամանակում նյութական կետի միջին ճանապարհային արագությունը:
768. Տրված է 1 գ զանգվածով գնդիկի տատանումների հավասարումը՝  $x = 0,2 \sin(100t + 0,6)$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:
- 1) Որքա՞ն է գնդիկի առավելագույն արագացումը:
  - 2) Որքա՞ն է գնդիկի վրա ազդող առավելագույն ուժը:
769. 10 սմ երկարությամբ մաքենատիկական ճոճանակը փոքր անկյունով շեղում են հավասարակշռության դիրքից և բաց քողմում:
- 1) Որքա՞ն է ճոճանակի ներդաշնակ տատանումների շրջանային հաճախությունը:
  - 2) Քանի՞ անգամ ճոճանակի կինետիկ էներգիան կը նդունի իր առավելագույն արժեքը  $6,28 \text{ Վ-ի}$  ընթացքում:
770. Տրված է  $0,2 \text{ կգ}$  զանգվածով գնդիկի տատանումների հավասարումը՝  $x = 5 \sin \pi t$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:
- 1) Որքա՞ն է համակարգի քվազիկոշտությունը: Ընդունել՝  $\pi^2 = 10$ :
  - 2) Որքա՞ն է գնդիկի վրա ազդող քվազիառաձգական ուժի մոդուլը քառորդ պարբերությանը հավասար ժամանակի պահին:
771. Օդից ջուր անցնելիս 1 կչց հաճախությամբ ճայնային ալիքի երկարությունը մեծացավ  $0,66 \text{ մ-ով}$ : Զայնի արագությունն օդում ընդունել  $340 \text{ մ/վ}$ :
- 1) Որքա՞ն է ձայնի ալիքի երկարությունը ջրում:
  - 2) Որքա՞ն է ձայնի արագությունը ջրում:

#### 6.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

772. Տրված է բեռի տատանումների շարժման հավասարումը՝

$$x = 2 \sin \frac{\pi}{2}(t - 1), \text{ որտեղ } m \text{ մեծություններն արտահայտված են } U\text{-ի}$$

համապատասխան միավորներով:

- 1) Որքա՞ն է տատանումների պարբերությունը:
- 2) Ժամանակի հաշվարկման սկզբից ի՞՞նչ ամենափոքր ժամանակամիջոց հետո բեռը կանցնի հավասարակշռության դիրքով:
- 3) Որքա՞ն է բեռի առավելագույն արագացումը: Ընդունել՝  $\pi^2 = 10$ :

773. Զսպանակավոր ճոճանակը հորիզոնական ուղղությամբ կատարում է  $0,06$  մ լայնույթով ներդաշնակ տատանումներ: Հավասարակշռության դիրքից  $0,04$  մ շեղման դեպքում զսպանակի առաձգականության ուժը  $0,8$  Ն է:

- 1) Որքա՞ն է ճոճանակի պոտենցիալ էներգիան այդ դիրքում: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
- 2) Որքա՞ն է ճոճանակի կիսնետիկ էներգիան այդ դիրքում: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 3) Որքա՞ն է ճոճանակի լրիվ մեխանիկական էներգիան այդ դիրքում: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

774. Մարեմատիկական ճոճանակը կատարում է  $3,6$  սմ լայնույթով ներդաշնակ տատանումներ: Ժամանակի սկզբնական պահին ճոճանակն անցնում է հավասարակշռության դիրքով: Այդ պահից  $0,1$  վ անց ճոճանակի շեղումը հավասարակշռության դիրքից  $1,8$  սմ է: Ընդունել՝  $\pi^2 = 10$ :

- 1) Որքա՞ն է ճոճանակի երկարությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 2) Որքա՞ն է արագացման առավելագույն արժեքը:
- 3) Որքա՞ն է արագության առավելագույն արժեքը: Պատասխանը բազմապատկել  $10^4$ -ով:

## 6.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

775. Տրված է  $0,02$  կգ զանգվածով նյութական կետի ներդաշնակ տատանումների շարժման հավասարումը՝  $x = 0,1 \sin \pi(t + 2/3)$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ընդունել՝  $\pi^2 = 10$ :

- 1) Որքա՞ն է նյութական կետի կինետիկ էներգիան ժամանակի  $t = 0,5$  վ պահին: Պատասխանը բազմապատկել  $10^5$ -ով:
- 2) Որքա՞ն է նյութական կետի լրիվ մեխանիկական էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
- 3) Որքա՞ն է նյութական կետի պոտենցիալ էներգիան ժամանակի  $t = 0,5$  վ պահին: Պատասխանը բազմապատկել  $10^5$ -ով:
- 4) Երեք պարբերության ընթացքում որքա՞ն ժամանակ հավասարակշռության դիրքից նյութական կետի շեղման մոդուլը կլինի  $0,05$  մ-ից մեծ:

776. Վերին ծայրն ամրացված  $100$  Ն/մ կոշտությամբ անկշիռ զապանակից կախում են 1 կգ զանգվածով բեռ և առանց սկզբնական արագության բաց քողմում:

- 1) Որքա՞ն է բեռի տատանումների շրջանային հաճախությունը:
- 2) Որքա՞ն է տատանումների լայնույթը: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:
- 3) Որքա՞ն է զապանակի առավելագույն երկարացումը: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:
- 4) Որքա՞ն է զապանակի նվազագույն երկարացումը:

777. Տրված է մեխանիկական ալիքի հավասարումը՝  $y = 6 \cdot 10^{-6} \cos(1884t + 6,28x)$ , որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:

- 1) Որքա՞ն է ալիքի լայնույթը: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:
- 2) Որքա՞ն է տատանումների հաճախությունը:
- 3) Որքա՞ն է ալիքի տարածման արագությունը:
- 4) Որքա՞ն է ալիքի երկարությունը:

## II. ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՖԻԶԻԿԱ ԵՎ ԶԵՐՍԱԴԻՆԱՍԻԿԱ

### 7. ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ-ԿԻՆԵՏԻԿ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ: ԳԱԶԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐ

#### 7.1. ԹԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

778. Ո՞ր պնդումն է մոլեկուլային-կինետիկ տեսության հիմնադրույթ:

- 1) Գագերն ընդունում են այն անորի ծավալը, որի մեջ լցված են:
- 2) Հեղուկները ընդունում են այն անորի ձևը, որի մեջ լցված են:
- 3) Պինդ մարմինները պահպանում են իրենց ձևը և ծավալը:
- 4) Նյութի ատոմները և մոլեկուլները անընդհատ, քառային (զերմային) շարժման մեջ են:

779. Ի՞նչ է զերմային շարժումը:

- 1) Մոլեկուլների ուղղորդված շարժում:
- 2) Մոլեկուլների շարժում ծանրության ուժի ազդեցությամբ:
- 3) Մոլեկուլների և ատոմների անկանոն, քառային շաժում:
- 4) Բոլոր պատասխաններն ել ճիշտ են:

780. Ի՞նչ կարգի մեծություններ են ատոմների չափերը:

- 1)  $10^{-6}$  մ:
- 2)  $10^{-2}$  մ:
- 3)  $10^{-10}$  մ:
- 4)  $10^{-14}$  մ:

781. Ի՞նչ կարգի մեծություն է ջրի մոլեկուլի զանգվածը:

- 1)  $10^{-6}$  կգ:
- 2)  $10^{-10}$  կգ:
- 3)  $10^{-26}$  կգ:
- 4)  $10^{-31}$  կգ:

782. Գնահատեք  $m$  զանգվածով ջրում պարունակվող մոլեկուլների քիլոգրամները  $d$  է, իսկ ջրի խտությունը՝  $\rho$ :

- 1)  $\frac{m}{\rho d^3} :$
- 2)  $\frac{\rho d^3}{m} :$
- 3)  $\sqrt[3]{\frac{m}{\rho d^3}} :$
- 4)  $\sqrt[3]{\frac{\rho d^3}{m}} :$

783. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Գազի մեկ մոլը նյութի այն քանակն է, որը պարունակում է՝

- 1) այնքան մոլեկուլ, որքան  $1/12$  գ ածխածինը:

- 2) այնքան մոլեկուլ, որքան Ավոգադրոյի հաստատունն է:  
 3) այնքան մոլեկուլ, որքան 12 կգ ածխածինը:  
 4) այնքան մոլեկուլ, որքան 1/12 կգ ածխածինը:


**784. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:**

**Մոլային զանգված կոչվում է՝**

- 1) մեկ մոլեկուլի զանգվածը:
- 2) մեկ ատոմի զանգվածը:
- 3) 12 կգ ածխածինի զանգվածը:
- 4) տվյալ նյութի  $6,02 \cdot 10^{23}$  մոլեկուլների զանգվածը:

**785. Անորում զագի արտահոսքի հետևանքով ջերմաստիճանը նվազեց: Ո՞ր գրաֆիկն է արտահայտում այդ զագի մոլային զանգվածի կախումը ջերմաստիճանից:**

- 1) ա:                   3) գ:
- 2) բ:                   4) դ:



**786. Ի՞նչ է ցույց տալիս Ավոգադրոյի հաստատունը:**

- 1) Նորմալ պայմաններում  $1 \text{ m}^3$  օղում պարունակվող մոլեկուլների թիվը:
- 2) Մեկ մոլ նյութում պարունակվող մոլեկուլների թիվը:
- 3) Նյութի միավոր ծավալում պարունակվող մոլեկուլների թիվը:
- 4) Նյութի միավոր զանգվածում պարունակվող մոլեկուլների թիվը:

**787. Որքա՞ն է մոլեկուլների թիվը 1 մոլ զազում:**

- 1)  $6,02 \cdot 10^{23}$ :
- 2) 273:
- 3)  $1,38 \cdot 10^{-23}$ :
- 4) 8,31:

**788.  $m$  զանգվածով նյութը, որի մոլային զանգվածը  $M$  է, պարունակում է  $N$  մոլեկուլ: Որքա՞ն է նրանում նյութի քանակը:**

- 1)  $N_u \frac{m}{M}$ :
- 2)  $\frac{N}{N_u}$ :
- 3)  $\frac{M}{m}$ :
- 4)  $M$ :

**789. Ո՞րն է նախադասության սխալ շարունակությունը:**

**Կամայական նյութի 1 մոլը պարունակում է՝**


- 1) նույն քանակությամբ մոլեկուլ:

- 2)  $6,02 \cdot 10^{23}$  կառուցվածքային մասնիկ:  
 3) Ավոգադրոյի թվին հավասար կառուցվածքային մասնիկ:  
 4) այնքան շատ մասնիկ, որը ան մեծ է խտությունը:

790. Ո՞ր արտահայտությամբ կարելի է հաշվել մոլեկուլների քիվը մարմնում ( $m$ -ը մարմնի զանգվածն է,  $\rho$ -ն՝ նյութի խտությունը,  $M$ -ը՝ մոլային զանգվածը,  $v$ -ն՝ մոլերի քիվը,  $N_u$ -ն՝ Ավոգադրոյի հաստատունը):

$$\begin{array}{ll} 1) \frac{m}{\rho}: & 3) \rho v: \\ 2) \frac{m}{M}: & 4) v N_u: \end{array}$$

791. Անորում լցված գազը սեղմում են շարժական միտցով: Ո՞ր գրաֆիկն է արտահայտում գազի մոլեկուլների կոնցենտրացիայի կախումը ծավալից:



- 1)  $\omega$ :                   3)  $q$ :  
 2)  $\rho$ :                   4)  $\eta$ :

792. Ո՞ր արտահայտությամբ կարելի է հաշվել մոլեկուլի զանգվածը, եթե  $m$ -ը մարմնի զանգվածն է,  $V$ -ն՝ ծավալը,  $\rho$ -ն՝ նյութի խտությունը,  $M$ -ը՝ մոլային զանգվածը,  $v$ -ն՝ մոլերի քիվը,  $n$ -ը՝ մոլեկուլների կոնցենտրացիան:

$$\begin{array}{ll} 1) \frac{\rho}{n}: & 3) \frac{m}{M}: \\ 2) \frac{m}{V}: & 4) \frac{m}{v}: \end{array}$$

793. Ո՞ր բանաձևով կարելի է հաշվել գազի մոլեկուլների կոնցենտրացիան, եթե հայտնի են մարմնի  $V$  ծավալը և մոլերի  $v$  քիվը:

$$1) \frac{VN_u}{v}: \quad 3) \frac{v}{VN_u}:$$

$$2) \frac{\nu N_u}{V}; \quad 4) \frac{V}{\nu N_u};$$

**794. Ինչո՞վ է պայմանավորված բրունյան շարժումը:**


- 1) Հեղուկի մոլեկուլների փոխադարձ բախումներով:
- 2) Հեղուկում կախված մասնիկների փոխադարձ բախումներով:
- 3) Անորթի պատերի հետ հեղուկի մոլեկուլների բախումներով:
- 4) Մասնիկի հետ հեղուկի կամ գազի մոլեկուլների բախումներով:

**795. Փորձի ընթացքում յուրաքանչյուր 40 վայրկյանից հետո նկարվել է բրունյան մասնիկի դիրքը հեղուկում:**

**Արդյունքները պատկերված են նկարում:**

**Ի՞նչ կարելի է ասել մասնիկի շարժման բնույթի մասին ա-բ տեղամասում:**

- 1) Այդ ընթացքում մասնիկը կատարել է ուղղագիծ հավասարաչափ շարժում:
- 2) Այդ ընթացքում մասնիկը կատարել է հավասարաչափ արագացող շարժում:
- 3) Այդ ընթացքում մասնիկը տատանվել է ա-բ ուղղի երկայնքով:
- 4) Փորձի արդյունքները հնարավորություն չեն տալիս դատողություններ անելու մասնիկի շարժման բնույթի վերաբերյալ, քանի որ այն միշտ կրում է ջրի մոլեկուլների չհավասարակշռված ազդեցությունը:



**796. Ո՞ր երևոյթն են անվանում դիֆուզիա:**

- 1) Նյութերի ինքնարերաբար իրար խառնվելը:
- 2) Նյութի մասնիկների անկանոն բախումները:
- 3) Նյութի՝ ազրեգատային մի վիճակից մյուսին անցնելը:
- 4) Տար մարմնից սառը մարմնին ջերմաքանակ հաղորդվելը:

**797. Նյութի ազրեգատային ո՞ր վիճակում է հնարավոր դիֆուզիայի երևոյթը:**

- 1) Սիայն հեղուկ:
- 2) Սիայն գազային:
- 3) Սիայն պինդ:
- 4) Բոլոր ազրեգատային վիճակներում:

**798. Ազրեգատային ո՞ր վիճակում է դիֆուզիան ավելի արագ ընթանում:**

- 1) Հեղուկ:
- 2) Գազային:
- 3) Պինդ:

- 4) Դիֆուզիայի արագությունը կախված չէ նյութի ազրեգատային վիճակից:

**799.** Գագերում մոլեկուլները շարժվում են բավականաչափ մեծ արագություններով: Այդ դեպքում ինչո՞ւ հոտը համեմատաբար դանդաղ է տարածվում չօդափոխվող սենյակում:

- 1) Մոլեկուլները շարժվում են բոլոր ուղղություններով:
- 2) Շարժման ընթացքում մոլեկուլների արագությունը փոքրանում է:
- 3) Մոլեկուլներն անընդհատ բախվելով՝ փոխում են իրենց շարժման ուղղությունը:
- 4) Հոտի տարածումը պայմանավորված չէ մոլեկուլների շարժմամբ:

**800.** Ինչո՞ւ դիֆուզիան պինդ մարմիններում ավելի դանդաղ է ընթանում, քան հեղուկներում:

- 1) Պինդ մարմիններն ավելի խիտ են:
- 2) Պինդ մարմինների ջերմաստիճանն ավելի ցածր է:
- 3) Պինդ մարմնի ատոմները հիմնականում կատարում են տատանողական շարժում հավասարակշռության դիրքերի շուրջ:
- 4) Պինդ մարմնի ատոմներն ավելի դանդաղ են շարժվում:

**801.** Ի՞նչ ուժեր են գործում մոլեկուլների միջև:


- 1) Սիայն ձգողության:
- 2) Սիայն վանողության:
- 3) Ե՛վ ձգողության, և վանողության:
- 4) Մոլեկուլների միջև ուժեր չեն գործում:

**802.** Ինչպե՞ս են հարաբերում երկու ատոմների ձգողության և վանողության ուժերը, եթե դրանց միջև հեռավորությունը փոքր է ատոմի տրամագծից:

- 1) Գերակշռում են վանողության ուժերը:
- 2) Գերակշռում են ձգողության ուժերը:
- 3) Չեն փոխազդում, քանի որ ատոմներն էլեկտրաչեղոք են:
- 4) Սիայն ձգվում են:

**803.** Գրաֆիկի վրա  $n^{\circ}$  կետն է համապատասխանում մոլեկուլների այն հեռավորությանը, որի դեպքում ձգողության և վանողության ուժերն իրար համակշռում են:

- |          |             |
|----------|-------------|
| 1) $w$ : | 3) $q$ :    |
| 2) $p$ : | 4) $\eta$ : |



**804. Գազը կարելի է հեշտությամբ սեղմել: Ինչո՞վ է դա բացատրվում:**

- 1) Գազի մասնիկներն ունեն փոքր գանգվածներ:
- 2) Գազի մասնիկները կատարում են քառային շարժում:
- 3) Գազի մասնիկներն իրարից համեմատարար մեծ հեռավորություն ունեն:
- 4) Գազի մասնիկները ձգում են իրար:

**805. Նյութի ո՞ր վիճակին է բնորոշ հետևյալ պնդումը:**

**Նյութը կազմող մոլեկուլների միջև միջին հեռավորությունը շատ է գերազանցում նրանց չափերը:**

- 1) Սիայն գազային:
- 2) Սիայն գազային և հեղուկ:
- 3) Սիայն ամորֆ:
- 4) Բոլոր ազրեգատային վիճակներին:

**806. Ի՞նչ վիճակում է նյութը, եթե նրան մեջ միջմոլեկուլային հեռավորությունները մոլեկուլի չափերի կարգի են, մոլեկուլները տատանվում են իրենց հավասարակշռության դիրքերի շուրջ և կատարում ցատկեր:**

- |            |               |
|------------|---------------|
| 1) Պինդ:   | 3) Գազային:   |
| 2) Հեղուկ: | 4) Պլազմային: |

**807. Ո՞ր հատկությունն է բնորոշ պինդ մարմիններին:**

- 1) Հեշտությամբ սեղմվելը:
- 2) Հեշտությամբ իր ձևը փոխելը:
- 3) Իր ձևը պահպանելը:
- 4) Տրամադրված ամբողջ ծավալը գրաղեցնելը:

**808. Ստորև բերված մեծություններից ո՞րը մակրոսկոպական պարամետր չէ:**


- |                       |                 |
|-----------------------|-----------------|
| 1) Շնչում:            | 3) Ծավալ:       |
| 2) Մոլեկուլի գանգված: | 4) Զերմաստիճան: |

**809. A մարմինը ջերմային հավասարակշռության մեջ է C մարմնի հետ, իսկ B մարմինը ջերմային հավասարակշռության մեջ չէ C մարմնի հետ: Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) A և C մարմինների ջերմաստիճանները հավասար են:
- 2) A, C և B մարմինների ջերմաստիճանները հավասար են:
- 3) A և B մարմինները ջերմային հավասարակշռության մեջ են:
- 4) A և B մարմինների ջերմաստիճանները հավասար են:

810. Ինչպե՞ս է փոխվում գազի ծավալը նկարում պատկերված  $1 \rightarrow 2$  պրոցեսի արդյունքում:

- 1) Սեծանում է 3 անգամ:
- 2) Սեծանում է 2 անգամ:
- 3) Չի փոխվում:
- 4) Փոքրանում է 2 անգամ:



811. Աշակերտը կարծ ժամանակահատվածում տարբեր ջերմաչափներով չափեց ջրի ջերմաստիճանը: Ինչպիսի՞ արդյունքներ է նա ակնկալում:

- 1) Բոլոր արդյունքները բացարձակապես նույնն են:
- 2) Բոլոր արդյունքներն էապես տարբեր են:
- 3) Միայն երկու արդյունք կլինեն նույնը:
- 4) Ստացված արդյունքները հիմնականում կլինեն իրար մոտ, սակայն ոչ բացարձակապես նույնը:

812. Երկարեւ չորսուի ջերմաստիճանը  $41^{\circ}\text{C}$  է, իսկ փայտն չորսուինը՝  $285^{\circ}\text{C}$ : Ո՞ր չորսուի ջերմաստիճանն է ավելի բարձր:

- 1) Փայտեւ չորսուինը:
- 2) Երկարեւ չորսուինը:
- 3) Հավասար են:
- 4) Ջերմաստիճանները համեմատել չի կարելի, քանի որ արտահայտված են տարբեր միավորներով:

813. Ըստ հաշվարկների՝ հեղուկի ջերմաստիճանը պետք է լինի  $143^{\circ}\text{C}$ : Նրա մեջ մտցված ջերմաչափը ցույց տվեց  $-130^{\circ}\text{C}$  ջերմաստիճան: Ի՞նչ է դա նշանակում:

- 1) Ջերմաչափը նախատեսված չէ բարձր ջերմաստիճաններ չափելու համար, և պետք է այն փոխել:
- 2) Ջերմաչափը ցույց է տալիս հաշվարկված ջերմաստիճանից բարձր ջերմաստիճան:
- 3) Ջերմաչափը ցույց է տալիս հաշվարկված ջերմաստիճանից ցածր ջերմաստիճան:
- 4) Ջերմաչափը ցույց է տալիս հաշվարկված ջերմաստիճանը:

814. Ո՞ր դեպքում չի կարելի օգտվել իդեալական գազի մոդելից՝ ա. բարձակ գրոյին մոտ ջերմաստիճանում, բ. մեծ ճնշումների դեպքում:

- |                     |                         |
|---------------------|-------------------------|
| 1) Միայն ա դեպքում: | 3) ա և բ դեպքերում:     |
| 2) Միայն բ դեպքում: | 4) Նորմալ պայմաններում: |

815. Ինչպե՞ս է կոչվում այն պրոցեսը, երբ համակարգի վիճակը փոխվում

Է հաստատուն ջերմաստիճանում:

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Իզոխոր:  | 3) Իզոբար:  |
| 2) Իզոթերմ: | 4) Աղիարատ: |

816. Հաստատուն ջերմաստիճանում տվյալ գանգվածով իդեալական գազի ծավալը փոքրացնում են 2 անգամ: Ինչպե՞ս կփոխվի գազի ճնշումը:

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) Կմեծանա 2 անգամ:  | 3) Կմեծանա 4 անգամ:  |
| 2) Կփոքրանա 2 անգամ: | 4) Կփոքրանա 4 անգամ: |

817. Նկարում պատկերված գրաֆիկներից ո՞րն է նկարագրում հաստատուն գանգվածով իդեալական գազի իզոբերմ պրոցես:




- |       |       |
|-------|-------|
| 1) ա: | 3) զ: |
| 2) բ: | 4) դ: |

818. Ո՞ր գրաֆիկն է համապատասխանում հաստատուն գանգվածով իդեալական գազի իզոբերմ ընդարձակմանը:

- |       |       |
|-------|-------|
| 1) ա: | 3) զ: |
| 2) բ: | 4) դ: |


819. Գրաֆիկում բերված ո՞ր պրոցեսի ընթացքում հաստատուն գանգվածով իդեալական գազի ջերմաստիճանը չի փոխվում:

- |                                |
|--------------------------------|
| 1) oc:                         |
| 2) ab:                         |
| 3) de:                         |
| 4) Բոլոր պատասխանները սխալ են: |



820. Նկարում պատկերված է հաստատուն գանգվածով իդեալական գազի իզոբերմ պրոցես նկարագրող գրաֆիկը: Ի՞նչ ծավալ կզրադեցնի գազը  $2,5 \cdot 10^5$  Պա ճնշման դեպքում:

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) $1 \text{ m}^3$ :   | 3) $2,4 \text{ m}^3$ : |
| 2) $1,5 \text{ m}^3$ : | 4) $3 \text{ m}^3$ :   |



821. Ինչպե՞ս է կոչվում այն պրոցեսը, երբ համակարգի վիճակը փոխվում է հաստատուն ճնշման դեպքում:

- 1) Իզոխոր:                    3) Իզոբար:
- 2) Իզոթերմ:                    4) Աղիարատ:


822. Ո՞ր համարով է նշված իզոբար պրոցեսում հաստատուն զանգվածով իդեալական գազի ծավալի՝ ջերմաստիճանից կախումն արտահայտող սխալ բանաձևը:

- 1)  $V = V_0(1 + \alpha t)$ :                    3)  $V = V_0\alpha T$ :
- 2)  $\frac{V_1}{V_2} = \frac{T_1}{T_2}$ :                    4)  $\frac{V_1}{V_2} = \frac{T_2}{T_1}$ :

823. Ինչպիսի՞ պրոցես է արտահայտում նկարում պատկերված գրաֆիկը:

- 1) Իզոխոր:                    3) Իզոթերմ:
- 2) Իզոբար:                    4) Աղիարատ:


824. Ո՞ր գրաֆիկներն են պատկերում հաստատուն զանգվածով իդեալական գազի իզոբար պրոցես:



- 1) Միայն ա-ն:                    3) ա-ն և բ-ն:
- 2) Միայն զ-ն:                    4) զ-ն և դ-ն:

825. Հաստատուն զանգվածով իդեալական գազի ինչպիսի՞ պրոցեսներ են նկարագրում ա և բ գրաֆիկները:

- 1) ա-ն՝ իզոբար, բ-ն՝ իզոթերմ:
- 2) ա-ն՝ իզոխոր, բ-ն՝ իզոբար:
- 3) Ե՛վ ա-ն, և բ-ն՝ իզոբար:
- 4) ա-ն՝ իզոթերմ, բ-ն՝ իզոխոր:



826. Ո՞րն է Շառի օրենքի ճիշտ սահմանումը:

- 1) Հաստատուն զանգված և ջերմաստիճան ունեցող իդեալական գազի ճնշումը հակադարձ համեմատական է նրա ծավալին:
- 2) Հաստատուն զանգված և ճնշում ունեցող իդեալական գազի ծավալն ուղիղ համեմատական է բացարձակ ջերմաստիճանին:
- 3) Հաստատուն զանգված և ծավալ ունեցող իդեալական գազի ճնշումը հակադարձ համեմատական է բացարձակ ջերմաստիճանին:

4) Հաստատուն զանգված և ծավալ ունեցող իդեալական գազի ճնշումն ուղիղ համեմատական է բացարձակ ջերմաստիճանին:

827. Ո՞ր հակասարումն է նկարագրում հաստատուն զանգվածով իդեալական գազի իզոխոռ պրոցես:

$$1) \frac{P}{T} = \text{const} : \quad 3) \frac{V}{T} = \text{const} :$$


$$2) \frac{P}{V} = \text{const} : \quad 4) PV = \text{const} :$$

828. Էլեկտրական շիկացման լամպում գազի ճնշումը 280 Կ ջերմաստիճանում 80 կՊա է: Ինչքա՞ն կլինի ճնշումը 560 Կ ջերմաստիճանում:

- 1) 40 կՊա:                    3) 320 կՊա:  
2) 160 կՊա:                    4) Կմնա նույնը:


829. Ո՞ր գրաֆիկն է համապատասխանում հաստատուն զանգվածով իդեալական գազի իզոբերմ սեղմանը:

- 1) ա:                            3) զ:  
2) բ:                            4) դ:



830. Նկարում պատկերված է հաստատուն զանգվածով իդեալական գազի ճնշման՝ ջերմաստիճանից կախումն արտահայտող գրաֆիկը: Ո՞ր կետին է համապատասխանում բացարձակ զրո ջերմաստիճանը:

- 1) A:                            3) C:  
2) B:                            4) D:




831. Փակ անոթում իդեալական գազի բացարձակ ջերմաստիճանը ժամանակից կախված վերխում է նկարում պատկերված ձևով: Ո՞ր գրաֆիկն է արտահայտում այդ գազի ճնշման կախումը ժամանակից:

- 1) ա:                            2) բ:  
3) զ:                            4) դ:


832. Ո՞ր գրաֆիկն է պատկերում հաստատուն զանգվածով իդեալական գազի իզոխոր պրոցես:

- |          |             |
|----------|-------------|
| 1) $w$ : | 3) $q$ :    |
| 2) $p$ : | 4) $\eta$ : |




833. Նկարում պատկերված է միևնույն գազի երկու իզոխոր, որոնց թեքության անկյուններն են  $\alpha_1$  և  $\alpha_2$ : Ո՞րն է գազի ծավալների  $V_1/V_2$  հարաբերության ճիշտ արտահայտությունը:

- |  |  |
|--|--|
| 1) $\frac{V_1}{V_2} = \frac{\sin \alpha_1}{\sin \alpha_2}$ : | 3) $\frac{V_1}{V_2} = \frac{\tg \alpha_1}{\tg \alpha_2}$ : |
| 2) $\frac{V_1}{V_2} = \frac{\sin \alpha_2}{\sin \alpha_1}$ : | 4) $\frac{V_1}{V_2} = \frac{\tg \alpha_2}{\tg \alpha_1}$ : |




834. Ինչպե՞ս է փոխվում հաստատուն զանգվածով իդեալական գազի ջերմաստիճանը նկարում պատկերված պրոցեսում:

- 1) Մեծանում է:
- 2) Փոքրանում է:
- 3) Չի փոխվում:
- 4) Կմեծանալու կամ կվորքանալու:





835. Հաստատուն զանգվածով իդեալական գազն սկզբում տաքացվում է հաստատուն ճնշման տակ, այնուհետև նրա ճնշումը փոքրացվում է՝ հաստատուն պահելով ծավալը, իսկ հետո հաստատուն ջերմաստիճանում նրա ծավալը փոքրացվում է մինչև սկզբնական արժեքը: Ո՞ր գրաֆիկն է համապատասխանում նշված փոփոխություններին:





- |          |             |
|----------|-------------|
| 1) $w$ : | 3) $q$ :    |
| 2) $p$ : | 4) $\eta$ : |

836. Նկարում պատկերված է շրջանային պրոցեսը հաստատուն զանգվածով իդեալական գազի ճնշման՝ բացարձակ ջերմաստիճանից կախման գրաֆիկը: Ստորև բերված գրաֆիկներից ո՞րն է համապատասխանում այդ պրոցեսին:




837. Նկարում պատկերված է հաստատուն զանգվածով իդեալական գազի որոշակի շրջանային պրոցեսի գրաֆիկը  $V-T$  կոորդինատային համակարգում: Ո՞րն է այդ պրոցեսի գրաֆիկը  $p-T$  կոորդինատային համակարգում:



838. Նկարում պատկերված են հաստատուն զանգվածով իդեալական գազի 1 և 2 վիճակները: Ո՞րն է այդ վիճակներում գազի ջերմաստիճանների ճիշտ առնչությունը:

- |                             |                             |
|-----------------------------|-----------------------------|
| 1) $T_2 = \frac{9}{2}T_1$ : | 3) $T_2 = \frac{3}{2}T_1$ : |
| 2) $T_2 = \frac{9}{4}T_1$ : | 4) $T_2 = \frac{3}{4}T_1$ : |



839. Ինչպիսի՞ պայմաններում են ճիշտ գազային օրենքները:

- Սեծ խտությունների և ցածր ջերմաստիճանների դեպքում:

- 2) Սեծ խտությունների և բարձր ջերմաստիճանների դեպքում:  
 3) Փոքր խտությունների և ցածր ջերմաստիճանների դեպքում:  
 4) Փոքր խտությունների և բարձր ջերմաստիճանների դեպքում:

840. Հաստատուն զանգվածով իդեալական գազի ջերմաստիճանը բարձրացնելիս ճնշումը փոքրանում է: Ինչպես է փոխվում զազի ծավալը:

- 1) Սեծանում է:  
 2) Փոքրանում է:  
 3) Կախված պրոցեսից՝ կմեծանա կամ կփոքրանա:  
 4) Մնում է նույնը:

841. Հաստատուն զանգվածով իդեալական գազի ծավալը և բացարձակ ջերմաստիճանը մեծացրին 2 անգամ: Ինչպես փոխվեց զազի ճնշումը:


- 1) Սեծացավ 4 անգամ:                   3) Չփոխվեց:  
 2) Սեծացավ 2 անգամ:                   4) Փոքրացավ 2 անգամ:

842. Ինչպես է փոխվում հաստատուն զանգվածով իդեալական գազի ճնշման և ծավալի  $pV$  արտադրյալը ջերմաստիճանը բարձրացնելիս:

- 1) Սեծանում է:  
 2) Փոքրանում է:  
 3) Կախված պրոցեսից՝ կմեծանա կամ կփոքրանա:  
 4) Մնում է հաստատուն:


843. Նկարում պատկերված է հաստատուն զանգվածով իդեալական գազի  $a \rightarrow b \rightarrow c$  պրոցեսը: Որքա՞ն է զազի ջերմաստիճանը  $c$  վիճակում, եթե  $a$  վիճակում  $T_0$  է:

- 1)  $12 T_0$ :                           3)  $6T_0$ :  
 2)  $9 T_0$ :                                   4)  $4T_0$ :




844. Նկարում պատկերված է հաստատուն զանգվածով իդեալական գազի ճնշման ջերմաստիճանից կախումն արտահայտող շրջանային պրոցեսի գրաֆիկը: Ո՞ր կետում է զազի ծավալն ավելի մեծ:

- 1)  $w$ :                                   3)  $q$ :  
 2)  $p$ :   4)  $\eta$ :



845. Նկարում պատկերված է հաստատուն զանգվածով իդեալական գազի շրջանային




ա → թ → գ → դ → ա պրոցեսը: Պրոցեսի ո՞ր վիճակում է զազի ջերմաստիճանն ավելի բարձր:

- |       |       |
|-------|-------|
| 1) ա: | 3) գ: |
| 2) թ: | 4) դ: |


846. Ո՞ր պրոցեսում է հաստատուն զանգվածով իղեալական զազի ջերմաստիճանը հասնում ավելի մեծ արժեքի:

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1) $1 \rightarrow 2$ : | 3) $1 \rightarrow 4$ : |
| 2) $1 \rightarrow 3$ : | 4) $1 \rightarrow 5$ : |




847. Ինչպես է փոխվում հաստատուն զանգվածով իղեալական զազի ծավալը ա վիճակից թ վիճակին անցնելիս:

- 1) Չի փոխվում:
- 2) Սեծանում է:
- 3) Փոքրանում է:
- 4) Կմեծանա կամ կփոքրանա:




848. Ո՞ր կետում է հաստատուն զանգվածով իղեալական զազի ճնշումն ավելի մեծ:

- 1) ա կետում:
- 2) թ կետում:
- 3) գ կետում:
- 4) Նշված բոլոր կետերում նույնին է:



849. Ինչպես է փոխվում հաստատուն զանգվածով իղեալական զազի ծավալը նկարում պատկերված  $1 \rightarrow 2 \rightarrow 3 \rightarrow 4$  պրոցեսի ընթացքում:

- 1) Միշտ մեծանում է:
- 2)  $1 \rightarrow 2$  պրոցեսում մեծանում է, իսկ  $2 \rightarrow 3 \rightarrow 4$  պրոցեսում՝ փոքրանում:
- 3)  $1 \rightarrow 2$  պրոցեսում մեծանում է,  $2 \rightarrow 3$  պրոցեսում մնում է հաստատուն, իսկ  $3 \rightarrow 4$  պրոցեսում՝ փոքրանում:
- 4)  $1 \rightarrow 2$  պրոցեսում փոքրանում է,  $2 \rightarrow 3 \rightarrow 4$  պրոցեսում՝ մեծանում:



850. Ո՞րն է Մենդելեև-Կլապեյռոնի հավասարումը:

$$1) \quad pV = \frac{m}{M} RT : \quad 3) \quad \frac{pV}{T} = const :$$

$$2) \frac{V_1}{V_2} = \frac{T_1}{T_2}; \quad 4) pV = const;$$

851. Ինչպե՞ս կփոխվի հաստատուն զանգվածով իդեալական զազի քացարձակ ջերմաստիճանը, եթե զազի ծավալը մեծացնենք 2 անգամ այնպիսի պրոցեսով, որի դեպքում ճնշման և ծավալի միջև գոյություն ունի  $pV^3 = const$  առնչությունը:

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) Կմեծանա 2 անգամ:  | 3) Կմեծանա 4 անգամ:  |
| 2) Կփոքրանա 2 անգամ: | 4) Կփոքրանա 4 անգամ: |

852. Ո՞րն է զազային ունիվերսալ հաստատունի ճիշտ արժեքը և չափայնությունը:

- |  |  |
|--|--|
| 1) $8,31 \text{ J/K}\cdot\text{mol}$ : | 3) $6,02 \cdot 10^{23} \text{ կգ/մոլ}$ : |
| 2) $1,38 \cdot 10^{23} \text{ J/K}$ :  | 4) $8,31 \text{ J/K}\cdot\text{mol}$ :   |

853.  $T_0$  ջերմաստիճանում  $p_0$  ճնշման տակ գտնվող 1 մոլ իդեալական զազը գրավում է  $V_0$  ծավալ: Որքա՞ն է այդ նույն զազի 2 մոլի գրաված ծավալը  $p_0$  ճնշման և  $2T_0$  ջերմաստիճանի դեպքում:

- |             |             |
|-------------|-------------|
| 1) $8V_0$ : | 3) $2V_0$ : |
| 2) $4V_0$ : | 4) $V_0$ :  |

854. Ո՞ր արտահայտությամբ կարելի է հաշվել իդեալական զազի խտությունը ( $p$ -ն զազի ճնշումն է,  $T$ -ն՝ բացարձակ ջերմաստիճանը,  $M$ -ը՝ մոլային զանգվածը,  $R$ -ը՝ ունիվերսալ զազային հաստատունը):


- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) $\frac{pR}{MT}$ : | 3) $\frac{RT}{pM}$ : |
| 2) $\frac{pM}{RT}$ : | 4) $\frac{pRT}{M}$ : |

855. Ինչպե՞ս է փոխվում հաստատուն զանգվածով իդեալական զազի խտությունը կողմանը տաքացման դեպքում:

- |                 |                                     |
|-----------------|-------------------------------------|
| 1) Մեծանում է:  | 3) Չի փոխվում:                      |
| 2) Փոքրանում է: | 4) Իդեալական զազի խտությունը զրո է: |

856. Ինչպե՞ս են փոխվում հաստատուն զանգվածով իդեալական զազի ծավալը և խտությունը նկարում պատկերված  $1 \rightarrow 2$  պրոցեսի ընթացքում:


- 1) Ծավալը մեծանում է, խտությունը՝ փոք-



բանում:

- 2) Ծավալը փոքրանում է, խտությունը՝ մեծանում:
- 3) Ծավալը և խտությունը մեծանում են:
- 4) Ծավալը և խտությունը փոքրանում են:


857. Ո՞ր գրաֆիկն է ճիշտ արտահայտում իզոթերմ պրոցեսում իդեալական գազի խտության կախումը ճնշումից:



- 1) ω:
- 2) ρ:
- 3) q:
- 4) η:


858. Ինչպե՞ս է փոխվում հաստատուն գանգվածով իդեալական գազի խտությունը նկարում պատկերված  $1 \rightarrow 2$  պրոցեսի ընթացքում:

- 1) Մեծանում է:
- 2) Փոքրանում է:
- 3) Չի փոխվում:
- 4) Ակզրում մեծանում է, հետո՝ փոքրանում:




859. Նկարում պատկերված են նույն ջերմաստիճանով և նույն գանգվածով երեք տարրեր գազերի ճնշման՝ ծավալից կախումն արտահայտող գրաֆիկները: Ո՞րն է նրանց մոլային գանգվածների միջև ճիշտ առնչությունը:

- 1)  $M_1 = M_2 < M_3$ :
- 2)  $M_1 > M_2 > M_3$ :
- 3)  $M_1 < M_2 < M_3$ :
- 4)  $M_1 = M_2 = M_3$ :



860. Հավասար ծավալներով A և B անորմերում պարունակվող նույն իդեալական գազի ճնշման կախումը բացարձակ ջերմաստիճանից արտահայտված է գրաֆիկներով: Ո՞ր գազի գանգվածն է ավելի մեծ:




- 1)  $A$  անորում պարունակվող գազինը:
- 2)  $B$  անորում պարունակվող գազինը:
- 3) Հավասար են, քանի որ անորների ծավալները հավասար են:
- 4) Հավասար են, քանի որ անորներում նույն գազն է:

861. 3 մոլ ջրածնի ջերմաստիճանն անորում  $T$  է: Ի՞նչ ջերմաստիճան կունենա 3 մոլ թթվածինը նույն ծավալի անորում՝ նույն ճնշման դեպքում:

- 1)  $16T$ :
- 2)  $8T$ :
- 3)  $4T$ :
- 4)  $T$ :

862. Փակ անորում իդեալական գազի զանգվածը փոխվում է: Նկարում պատկերված է այդ գազի վիճակի փոփոխությունն արտահայտող գրաֆիկը: Ո՞ր կետն է համապատասխանում ավելի մեծ զանգվածով վիճակի:

- 1)  $w$ :
- 2)  $p$ :
- 3)  $q$ :
- 4)  $\eta$ :



863. Իդեալական գազի ծավալը, ճնշումը և բացարձակ ջերմաստիճանը փոքրացել են 2 անգամ: Ինչպե՞ս է փոխվել գազի զանգվածը:

- 1) Մեծացել է 2 անգամ:
- 2) Փոքրացել է 2 անգամ:
- 3) Փոքրացել է 8 անգամ:
- 4) Մնացել է նույնը:

864. Գազի մոլեկուլների քառային շարժման միջին կինետիկ ( $\bar{E}_u$ ) և նրանց փոխազդեցության միջին պոտենցիալ ( $\bar{E}_w$ ) էներգիաների ինչպիսի հարաբերակցության դեպքում գազը կարելի է համարել իդեալական:

- 1)  $\bar{E}_u \gg \bar{E}_w$ :
- 2)  $\bar{E}_u \ll \bar{E}_w$ :
- 3)  $\bar{E}_u = \bar{E}_w$ :
- 4)  $\bar{E}_u \geq \bar{E}_w$ :

865. Ո՞րն է իդեալական գազի  $p$  ճնշման ճիշտ արտահայտությունը՝ կախված մոլեկուլների ջերմային շարժման  $\bar{E}$  միջին կինետիկ էներգիայից և  $n$  կոնցենտրացիայից:

- 1)  $p = n\bar{E}$ :
- 2)  $p = \frac{\bar{E}}{n}$ :
- 3)  $p = \frac{2}{3}n\bar{E}$ :
- 4)  $p = \frac{n}{\bar{E}}$ :

866. Հաստատում ջերմաստիճանի դեպքում իդեալական գազի կոնցենտրացիան մեծացավ 2 անգամ: Ինչպե՞ս փոխվեց այդ դեպքում գազի ճնշումը:

- 1) Մեծացավ 2 անգամ:
- 2) Մեծացավ 4 անգամ:
- 3) Փոքրացավ 2 անգամ:
- 4) Փոքրացավ 4 անգամ:

867. Իզոբար պրոցեսում իդեալական գազի կոնցենտրացիան մեծացավ 5 անգամ: Փոխվե՞ց արդյոք մոլեկուլների միջին կիմետրիկ էներգիան:


- 1) Չփոխվեց:
- 2) Մեծացավ 5 անգամ:
- 3) Փոքրացավ 5 անգամ:
- 4) Մեծացավ 25 անգամ:

868. Ինչպե՞ս կփոխվի իդեալական գազի ճնշումը, եթե յուրաքանչյուր մոլեկուլի միջին արագությունը մեծանա 2 անգամ, իսկ կոնցենտրացիան մնա նույնը:

- 1) Կմեծանա 2 անգամ:
- 2) Կփոքրանա 2 անգամ:
- 3) Կմեծանա 4 անգամ:
- 4) Կփոքրանա 4 անգամ:

869.  $\Omega^*$  գրաֆիկն է ճիշտ արտահայտում հաստատում կոնցենտրացիայի դեպքում իդեալական գազի ճնշման կախումը մոլեկուլների միջին կիմետրիկ էներգիայից:

- 1)  $w$ :
- 2)  $p$ :
- 3)  $q$ :
- 4)  $\Omega_z$  մեկը:



870. Անոքը լցված է ջրային գոլորշիով: Կփոխվի՞ արդյոք ճնշումը անոքում, եթե ջրի մոլեկուլները տրոհվեն առանձին ատոմների: Զերմաստիճանը մնում է հաստատում:

- 1) Կմեծանա:
- 2) Կփոքրանա:
- 3) Չի փոխվի:
- 4) Պատասխանը կախված է գոլորշու զանգվածից:

871. Ինչո՞ւ տաքացնելիս փակ անոքում գազի ճնշումը մեծանում է:

- 1) Սոլեկուլների կոնցենտրացիան մեծանում է:
- 2) Սոլեկուլների քառսային շարժման միջին կիմետրիկ էներգիան մեծանում է:
- 3) Մեծանում է մոլեկուլների միջին հեռավորությունը:
- 4) Մեծանում է մոլեկուլների միջին պոտենցիալ էներգիան:

872. Իդեալական գազի խտորդյունը մեծացրին 2 անգամ՝ անփոփոխ պահենով նրա մոլեկուլների միջին քառակուսային արագությունը: Ինչ-

**ալե՞ս փոխվեց գազի ճնշումը:**

- 1) Սեծացավ 2 անգամ:                  3) Փոքրացավ 2 անգամ:  
2) Սեծացավ 4 անգամ:                  4) Մնաց նույնը:

**873. Սենյակի օդը պարունակում է քրվածին, ջրածին, ազոտ և այլ գազեր: Զերմային հավասարակշռության վիճակում  $n^o$  ֆիզիկական մեծության արժեքն է նույնը օդում պարունակվող բոլոր գազերի համար:**

- 1) Զերմաստիճանի:  
2) Կոնցենտրացիայի:  
3) Մասնական ճնշման:  
4) Զերմային շարժման միջին քառակուսային արագության:

**874. Սենյակում  $n^o$  գազի մոլեկուլների համընթաց շարժման միջին կինետիկ էներգիան է ավելի մեծ:**

- 1) Թթվածնի:                  3) Ազոտի:  
2) Ջրածնի:                  4) Բոլոր գազերի համար այն նույնն է:

**875. Ինչպե՞ս կփոխվի իդեալական գազի մոլեկուլների զերմային շարժման միջին կինետիկ էներգիան, եթե բացարձակ զերմաստիճանը մեծանա 2 անգամ:**

- 1) Կմեծանա 2 անգամ:                  3) Կմեծանա 4 անգամ:  
2) Կփոքրանա 2 անգամ:                  4) Կփոքրանա 4 անգամ:

**876. Իզոբերմ պրոցեսի ընթացքում իդեալական գազի ծավալը փոքրացավ 2 անգամ: Ինչպե՞ս փոխվեց գազի մոլեկուլների միջին քառակուսային արագությունը:**

- 1) Սեծացավ 2 անգամ:                  3) Սեծացավ  $\sqrt{2}$  անգամ:  
2) Փոքրացավ 2 անգամ:                  4) Չփոխվեց:

**877. Ինչպե՞ս կփոխվեն փակ անոքում իդեալական գազի զերմաստիճանն ու ճնշումը, եթե նրա մոլեկուլների քառսային շարժման միջին կինետիկ էներգիան մեծանա 2 անգամ:**

- 1) Զերմաստիճանը և ճնշումը կմեծանան 2 անգամ:  
2) Զերմաստիճանը կմեծանա 4 անգամ, իսկ ճնշումը՝ 2 անգամ:  
3) Զերմաստիճանը կմեծանա 2 անգամ, իսկ ճնշումը՝ 4 անգամ:  
4) Զերմաստիճանը և ճնշումը կմեծանան 4 անգամ:

**878. Ինչպե՞ս կփոխվի իդեալական գազի մոլեկուլների քառսային շարժման միջին քառակուսային արագությունը, եթե բացարձակ զերմաստիճանը մեծացնենք 4 անգամ:**

- 1) Կմեծանա 2 անգամ:                  3) Կմեծանա 8 անգամ:

2) Կմեծանա 4 անգամ:

4) Կմեծանա 16 անգամ:

879. Ինչպե՞ս է կախված իդեալական գազի մոլեկուլների քառային շարժման միջին քառակուսային արագությունը  $T$  քացարձակ ջերմաստիճանից:

- 1) Ուղիղ համեմատական է  $T$ -ին:
- 2) Հակադարձ համեմատական է  $T$ -ին:
- 3) Ուղիղ համեմատական է  $\sqrt{T}$ -ին:
- 4) Հակադարձ համեմատական է  $\sqrt{T}$ -ին:

880. Ո՞րն է նույն ջերմաստիճանով քրվածնի և ջրածնի մոլեկուլների ջերմային շարժման միջին քառակուսային արագությունների միջև ճիշտ առնչությունը:

- 1)  $\bar{v}_{\theta} > \bar{v}_{\varphi}$ :
- 2)  $\bar{v}_{\theta} < \bar{v}_{\varphi}$ :
- 3)  $\bar{v}_{\theta} = \bar{v}_{\varphi}$ :
- 4) Բոլոր առնչությունները հնարավոր են:

## 7.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

881. Անոքում կա 0,9 կգ ջուր: Որքա՞ն է ջրի նյութի քանակը, եթե նրա մոլային զանգվածը  $18 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է:
882. Ի՞նչ երկարություն կունենար միամոլեկուլային շարանը, որը խտացվեր  $10^{-6}$  կգ զանգվածով ջրածնի բոլոր մոլեկուլները իրար կպած դասավորելու դեպքում: Ջրածնի մոլեկուլի տրամագիծը  $2,3 \cdot 10^{-10}$  մ է, մոլային զանգվածը՝  $0,002$  կգ/մոլ: Պատասխանը բազմապատկել  $10^{-7}$ -ով:
883. Որքա՞ն է  $2,7$  լ ծավալով ջրի նյութի քանակը: Ջրի խտությունը  $10^3$  կգ/մ<sup>3</sup> է, մոլային զանգվածը՝  $18 \cdot 10^{-3}$  կգ/մոլ:
884. Ջրի մակերևույթին տարածվելու ի՞նչ առավելագույն մակերես կզբաղեցնի  $0,017$  սմ<sup>3</sup> ծավալով ձիթապտղի ճերի կարիլը, եթե նրա մոլեկուլի շառավիղը  $8,5 \cdot 10^{-10}$  մ է:
885. Ի՞նչ ծավալ կունենա  $1,78 \cdot 10^{30}$  ատոմներ ունեցող պղնձն ծովածքը, եթե պղնձի խտությունը  $8900$  կգ/մ<sup>3</sup> է, իսկ նրա ատոմի զանգվածը՝  $1,05 \cdot 10^{-25}$  կգ:
886. Անոքում կա ազոտի  $9,03 \cdot 10^{25}$  մոլեկուլ: Որքա՞ն է ազոտի նյութի քանակը:
887. Որոշակի պայմաններում թթվածինն ունի  $1,28$  կգ/մ<sup>3</sup> խտություն: Ի՞նչ ծավալ կզբաղեցնի այդ պայմաններում  $1$  կմոլ թթվածինը: Թթվածնի մոլային զանգվածը  $32 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է:
888. Քանի՞ անգամ կմեծանա հաստատուն զանգվածով միատոմ իլեալական զազի ճնշումը, եթե նրա ծավալը փոքրացվի  $3$  անգամ: Ասումների շարժման միջին քառակուսային արագությունը մնում է անփոփոխ:
889. Որքա՞ն է միատոմ իլեալական զազի մոլեկուլների միջին կիմետրիկ էներգիան  $20$  կՊա ճնշման դեպքում, եթե զազի մոլեկուլների կոնցենտրացիան նշված պայմաններում  $3 \cdot 10^{25}$  մ<sup>-3</sup> է: Պատասխանը բազ-

մապատկել  $10^{22}$ -ով:

890. Որքա՞ն է իդեալական գազի բացարձակ ջերմաստիճանը մոլեկուլ-ների  $10^{25}$  մ<sup>3</sup> կոնցենտրացիայի և  $6,9 \cdot 10^4$  Պա ճնշման դեպքում:

891. Որոշակի պայմաններում ազոտի ճնշումը  $112,5 \cdot 10^3$  Պա է, իսկ խտությունը՝  $1,35$  կգ/մ<sup>3</sup>: Որքա՞ն է ազոտի մոլեկուլների քառային շարժման միջին քառակուսային արագությունը:

892. Իդեալական գազի մոլեկուլների միջին քառակուսային արագությունը  $450$  մ/վ է, իսկ ճնշումը  $6,75 \cdot 10^4$  Պա: Որքա՞ն է գազի խտությունը:


893. Կելվինի սանդղակով ի՞նչ ջերմաստիճանում միատուն իդեալական գազի մոլեկուլի համընթաց շարժման միջին կիմետրիկ էներգիան կլինի 2 անգամ ավելի մեծ, քան  $-73^{\circ}\text{C}$  -ում:

894. Թթվածնի մոլեկուլների միջին քառակուսային արագությունը քանի՞ անգամ է փոքր ջրածնի մոլեկուլների միջին քառակուսային արագությունից, եթե այդ գազերի ջերմաստիճանները նույնն են: Թթվածնի մոլային զանգվածը  $0,032$  կգ/մոլ է, իսկ ջրածնի մոլային զանգվածը՝  $0,002$  կգ/մոլ:

895. 8 լ ծավալով իդեալական գազն իզոթերմ սեղմում են մինչև 6 լ ծավալը: Գազի ճնշումն այդ դեպքում աճում է  $4 \cdot 10^3$  Պա-ով: Որքա՞ն է գազի սկզբնական ճնշումը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

896. Լճի հատակից մակերևույթին հասնելիս օդի պղպջակի ծավալը մեծացավ 3 անգամ: Որքա՞ն է լճի խորությունը, եթե պրոցեսը իզոթերմ է, իսկ մթնոլորտային ճնշումը՝  $10^5$  Պա: Զրի խտությունը  $10^3$  կգ/մ<sup>3</sup> է:

897. Քանի՞ անգամ կփոքրանա օդի ճնշումը գլա-նի մեջ, եթե միտցը  $\frac{4}{5}L$ -ով տեղափոխվի դեպի աջ (նկ. 25): Պրոցեսն իզոթերմ է: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:



Նկ. 25

898. Ուղղաձիգ գլանում, անկշիռ՝  $0,01\text{m}^2$  մակերեսով փակված միտցի

տակ օդի ճնշումը  $10^5$  Պա է: Ի՞նչ զանգվածով բեռ պետք է դնել մխոցի վրա, որպեսզի գլանում ճնշումը 1,25 անգամ մեծանա: Պրոցեսն իզոբերմ է:

899. Ուղղաձիգ գլանում, անկշիռ մխոցի տակ կա օդ: Մխոցի մակերեսը  $10^2 \text{ մ}^2$  է: Մխոցը իզոբերմ սեղմում են դեպի ներքև այնքան, որ օդի ծավալը փոքրանա երկու անգամ: Ի՞նչ ուժով է պահպում մխոցը այդ դիրքում: Մթնոլորտային ճնշումը  $10^5$  Պա է:
900.  $27^0\text{C}$  ջերմաստիճանում զազի ծավալը  $250 \text{ սմ}^3$  է: Մինչև  $n^0\text{r}$  ջերմաստիճանը (ըստ Կելվինի) պետք է իզոբար տաքացնել զազը, որպեսզի նրա ծավալը դառնա  $270 \text{ սմ}^3$ :
901. Որքա՞ն կլինի հաստատուն զանգվածով իդեալական զազի ծավալը  $77^0\text{C}$ -ում, եթե  $27^0\text{C}$ -ում նրա ծավալը  $6 \text{ մ}^3$  է: Պրոցեսն իզոբար է:
902. Որքա՞ն է եղել հաստատուն զանգվածով օդի սկզբնական ջերմաստիճանը, եթե այն 3 Կ-ով տաքացնելիս նրա ծավալը մեծացել է  $1\%-ով$ : Պրոցեսը իզոբար է:
903. Հաստատուն զանգվածով զազը հովանում է  $1146^0\text{C}$ ից մինչև  $200^0\text{C}$ : Քանի՞ անգամ է մեծանում զազի խտությունը: Գազի ճնշումը մնում է անփոփոխ:
904. Մինչև  $n^0\text{r}$  ջերմաստիճանը (ըստ Կելվինի) պետք է տաքացնել  $27^0\text{C}$  ջերմաստիճանի որոշակի զանգվածով օդը, որպեսզի նրա ծավալը իզոբար մեծանա  $2,5$  անգամ:
905. Ի՞նչ ջերմաստիճանում էր որոշակի զանգվածով զազը, եթե հաստատուն ճնշման տակ  $22$  Կ-ով տաքացնելիս նրա ծավալը մեծացվ 2 անգամ:
906.  $280$  Կ ջերմաստիճանում  $1,2 \cdot 10^{-3}$  կգ զանգվածով զազի ծավալը  $4 \cdot 10^{-3} \text{ մ}^3$  է: Հաստատուն ճնշման տակ զազի ջերմաստիճանը փոխելով՝ խտությունը դարձրել են  $0,6$  կգ/ $\text{մ}^3$ : Որքա՞ն է զազի վերջնական ջերմաստիճանը:

907. Որքա՞ն էր հաստատուն զանգվածով գազի ջերմաստիճանը, եթե հաստատուն ծավալի դեպքում  $100\text{~Կ-ով}$  տաքացնելիս նրա ճնշումն աճեց 3 անգամ:
908.  $0^{\circ}\text{C}$ -ում հաստատուն զանգվածով գազը մինչև  $n^{\circ}\text{r}$  ջերմաստիճանը (ըստ Կելվինի) պետք է տաքացնել, որպեսզի նրա ճնշումը 3 անգամ մեծանա: Գազի ծավալը մնում է հաստատուն:
909. Որքանո՞վ կավելանա հաստատուն զանգվածով իդեալական գազի ճնշումը, եթե նրա ջերմաստիճանը  $37^{\circ}\text{C}$ -ից իզոխոր կերպով բարձրացվի մինչև  $68^{\circ}\text{C}$ : Գազի սկզբնական ճնշումը 8000 Պա է:
910. Խցանը շշից դուրս է թռչում, երբ շշում ճնշումը հավասարվում է  $1,4 \cdot 10^5$  Պա-ի: Որքա՞ն է խցանը դուրս թռչելու պահին օդի ջերմաստիճանը շշում (ըստ Կելվինի), եթե  $7^{\circ}\text{C}$ -ում ճնշումը շշում  $10^5$  Պա էր:
911. Փակ բալոնում գտնվում է  $18 \cdot 10^5$  Պա ճնշման տակ  $15^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի գազ: Ո՞ր ջերմաստիճանում (ըստ Կելվինի) գազի ճնշումը կրառնա 15,5  $\cdot 10^5$  Պա:
912.  $627^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում որոշակի զանգվածով իդեալական գազի ծավալը  $20\text{~մ}^3$  է, իսկ ճնշումը՝  $1,8 \cdot 10^5$  Պա: Ի՞նչ ծավալի դեպքում այդ գազի ճնշում  $-33^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում կլինի  $4 \cdot 10^4$  Պա:
913. Քանի՞ անգամ է մեծացել հաստատուն զանգվածով իդեալական գազի ճնշումը, եթե ջերմաստիճանը, ըստ Կելվինի սանդղակի, փոքրացել է 1,5 անգամ, իսկ խտությունը մեծացել է 3 անգամ:
914.  $727^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում հաստատուն զանգվածով իդեալական գազի ծավալը  $5\text{~մ}^3$  է, իսկ ճնշումը անորի պատերին՝  $2 \cdot 10^5$  Պա: Ի՞նչ ճնշման դեպքում գազի ծավալը  $-23^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում կրառնա 100  $\text{մ}^3$ :
915. Հաստատուն զանգվածով իդեալական գազի ճնշումն աճել է 3 անգամ, իսկ խտությունը՝ 2 անգամ: Քանի՞ տոկոսով է բարձրացել

գազի ջերմաստիճանը՝ լստ Կելվինի:

916. Գազի ծավալը  $3,2 \cdot 10^4$  Պա ճնշման և  $17^0C$  ջերմաստիճանի պայմաններում  $87$  է: Որքա՞ն ծավալ կունենա այդ գազը նորմալ պայմաններում  $P_0 = 100800$  Պա,  $T_0 = 273$  Կ: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
917.  $2,49 \cdot 10^{-2}$  մ<sup>3</sup> տարողությամբ բալոնում պահվում է  $50$  մոլ գազ: Որքա՞ն պետք է լինի գազի առավելագույն ջերմաստիճանն լստ Կելվինի, որպեսզի ճնշումը չգերազանցի  $6 \cdot 10^6$  Պա-ը:
918. Որքա՞ն բրվածին է պարունակում  $83 \cdot 10^{-4}$  մ<sup>3</sup> տարողությամբ անոքը, եթե ճնշումը հավասար է  $750$  մմ սնդ. այսան, իսկ ջերմաստիճանը  $53,4^0C$  է: Թթվածնի մոլային զանգվածը  $32 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է, սնդիկի խտությունը՝  $13,6 \cdot 10^3$  կգ/մ<sup>3</sup>: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
919. Փակ անոքում գազի ճնշումը  $10^5$  Պա է: Բարոնից հանում են գազի զանգվածի  $4/5$ -ը: Որքա՞ն դարձավ ճնշումը: Գազի ջերմաստիճանը մնացել է անփոփոխ: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
920.  $1,4$  մ<sup>3</sup> ծավալով փակ անոքում կա  $7^0C$  ջերմաստիճանի գազ: Որքանո՞վ կնվազի ճնշումը անոքում, եթե հաստատուն ջերմաստիճանի դեպքում նրանից հանվի  $1$  մոլ գազ:
921. Անոքում գազի ճնշումը  $2 \cdot 10^6$  Պա է, իսկ ջերմաստիճանը՝  $27^0C$ :  $60$  Կ-ով գազը տաքացնելուց հետո նրա մի մասը դուրս է գալիս անոքից և այնտեղ ճնշումը դառնում է  $1,2 \cdot 10^6$  Պա: Քանի՞ անգամ է փոքրանում գազի զանգվածն անոքում:
922.  $1$  մ<sup>3</sup> ծավալով փակ անոքում կա  $0,9$  կգ ջուր: Ի՞նչ ճնշում կհաստատվի անոքում, եթե այն տաքացվի մինչև  $127^0C$ , եթե հաշվի առնենք, որ այդ ջերմաստիճանում ամրող ջուրը վերածվում է գոլորշու, որը կարելի է համարել իդեալական գազ: Զրի մոլային զանգվածը  $18 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

### 7.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

923. Դետալի մակերևույթի  $25 \text{ սմ}^2$  մակերեսը պատված է  $4 \text{ մկմ}$  հաստությամբ արծաթի շերտով: Արծաթի մոլային զանգվածը  $108 \cdot 10^{-3} \text{ կգ}/\text{մոլ}$  է, իսկ խտությունը՝  $10,8 \cdot 10^3 \text{ կգ}/\text{մ}^3$ :

- 1) Ի՞նչ զանգվածով արծաթ է նստեցված դետալի վրա: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:
- 2) Արծաթի քանի<sup>9</sup> աստմ է պարունակում ծածկույթը: Պատասխանը բազմապատկել  $10^{-18}$ -ով:

924. Լճի հատակից մակերևույթին հասնելիս օդի պղպջակի ծավալը մեծացավ 3 անգամ: Մթնոլորտային ճնշումը  $10^5 \text{ Պա}$  է, արոցեսը՝ իզոքերմ:

- 1) Որքա՞ն էր ճնշումը պղպջակում, եթե այն լճի հատակին էր: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
- 2) Որքա՞ն է լճի խորությունը: Զրի խտությունը  $1000 \text{ կգ}/\text{մ}^3$  է:

925. Առանց շփման շարժական միտցով փակված հորիզոնական գլանում կա օդ, որի ծավալը  $24 \cdot 10^{-5} \text{ մ}^3$  է, իսկ ճնշումը հավասար է մթնոլորտային ճնշմանը՝  $10^5 \text{ Պա}$ : Միտցը, որի մակերեսը  $24 \cdot 10^{-4} \text{ մ}^2$  է,  $0,02 \text{ մ-ով}$  տեղափոխում են այնպես, որ գլանում օդը սեղմվում է: Զերմաստիճանը հաստատուն է:

- 1) Որքա՞ն է ճնշումը գլանում միտցը տեղափոխելուց հետո: Պատասխանը բազմապատկել  $10^{-3}$ -ով:
- 2) Ի՞նչ ուժ պետք է գործադրել, որպեսզի միտցը տեղաշարժելուց հետո հնարավոր լինի այդ դիրքում պահել:

926. Տվյալ զանգվածով իդեալական գազը հաստատուն ճնշման պայմաններում  $300 \text{ Կ-ից}$  տաքացնում են մինչև  $900 \text{ Կ}$ , որի հետևանքով նրա ծավալը մեծանում է  $6 \cdot 10^{-3} \text{ մ}^3$ -ով:

- 1) Քանի<sup>9</sup> անգամ մեծացավ գազի ծավալը:
- 2) Որքա՞ն էր գազի սկզբնական ծավալը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

927. Ուղղաձիգ գլանում միտցի տակ, որի մակերեսը  $3 \cdot 10^{-3} \text{ մ}^2$  է, օդի ճնշումը  $2 \cdot 10^5 \text{ Ն}/\text{մ}^2$  է, զերմաստիճանը՝  $27 \text{ }^{\circ}\text{C}$ : Գլանում օդը տաքացնում են  $25 \text{ }^{\circ}\text{C}$ -ով: Մթնոլորտային ճնշումը  $10^5 \text{ Պա}$  է: Ըփումը գլանի և միտցի միջև անտեսել:

- 1) Որքա՞ն է միտցի զանգվածը:

2) Օդը տաքացնելուց հետո  $1^{\circ}\text{C}$  զանգվածով բեռ պետք է դնել միտոցի վրա, որպեսզի օդի ծավալը հավասար լինի սկզբնականին:

928. Հաստատուն զանգվածով իդեալական զազի ճնշումը մեծացել է 4 անգամ, իսկ ջերմաստիճանն ըստ Կելվինի՝ երկու անգամ:

- 1) Քանի<sup>9</sup> անգամ է փոքրացել զազի ծավալը:
- 2) Քանի<sup>9</sup> տոկոսով է մեծացել զազի խտությունը:

929. Հաստատուն զանգվածով իդեալական զազի ճնշումը 125 Կ ջերմաստիճանում  $10^3$  Պա է, իսկ ծավալը՝  $2 \text{ m}^3$ : Գազը նախ իզոբերմ սեղմվում է մինչև  $1,6 \text{ m}^3$  ծավալը և ապա իզոխոր տաքացվում մինչև 150 Կ:

- 1) Որքա՞ն է զազի ճնշումը իզոբերմ սեղման վերջում:
- 2) Որքա՞ն է զազի վերջնական ճնշումը:

930. Հաստատուն զանգվածով իդեալական զազի ճնշումը 125 Կ ջերմաստիճանում  $10^3$  Պա է, իսկ ծավալը՝  $2 \text{ m}^3$ : Գազը նախ իզոխոր տաքացնում են մինչև 150 Կ և ապա իզոբերմ կերպով ճնշումը դարձնում 800 Պա:

- 1) Որքա՞ն է զազի ճնշումը իզոխոր տաքացման վերջում:
- 2) Որքա՞ն է զազի վերջնական ծավալը:

931. Բարոնում 12 կգ զանգվածով զազի ճնշումը  $10^7$  Պա է: Բալոնից որոշ քանակությամբ զազ հեռացնելուց հետո զազի ճնշումը դարձավ  $2,5 \cdot 10^6$  Պա: Գազի ջերմաստիճանն անփոփոխ է:

- 1) Քանի<sup>9</sup> անգամ փոքրացավ զազի կոնցենտրացիան բարոնում:
- 2)  $1^{\circ}\text{C}$  զանգվածով զազ հեռացրին բալոնից:

932. Սենյակի ջերմաստիճանը  $17^{\circ}\text{C}$  էր: Վառարանը վառելուց հետո, ջերմաստիճանը սենյակում բարձրացավ մինչև  $27^{\circ}\text{C}$ : Սենյակի ծավալը  $51,875 \text{ m}^3$  է, ոյի ճնշումը՝  $96 \cdot 10^3 \text{ N/m}^2$ : Օյի մոլային զանգվածը  $29 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է:

- 1) Որքա՞ն էր ոյի զանգվածը սենյակում մինչև վառարանը վառելը:
- 2)  $1^{\circ}\text{C}$  զանգվածով օդ դուրս եկավ սենյակից վառարանը վառելուց հետո:

933. Թթվածնի մոլեկուլների քիվը  $10 \text{ m}^3$  ծավալում  $9,03 \cdot 10^{25}$  է, իսկ մոլեկուլների միջին քառակուսային արագությունը՝  $400 \text{ m/s}$ : Թթվածնի մոլային զանգվածը  $32 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է:

- 1) Որքա՞ն է թթվածնի կոնցենտրացիան: Պատասխանը բազմապատկել  $10^{-22}$ -ով:
- 2) Որքա՞ն է թթվածնի ճնշումը անորդ պատերին: Պատասխանը

բազմապատկել  $10^{-2}$ -ով:

934. Անոքում 15 կգ զանգվածով գազի ճնշումը  $2 \cdot 10^5$  Պա է, իսկ մոլեկուլների շարժման միջին քառակուսային արագությունը՝ 200 մ/վ:

- 1) Որքա՞ն է գազի խտությունը:
- 2) Որքա՞ն է գազի ծավալը:

## 7.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

935. 20 մ խորոքյամբ և 10 կմ<sup>2</sup> մակերեսով ջրամբարի մեջ գցեցին 0,029 գ կերակրի աղի բյուրեղիկ: Աղի մոլային զանգվածը  $58 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է: Համարել, որ աղը, լուծվելով, հավասարաչափ բաշխվել է ջրամբարում:

- 1) Աղի քա՞նի մոլեկուլ է պարունակում բյուրեղիկը: Պատասխանը բազմապատկել  $10^{-18}$ -ով:
- 2) Որքա՞ն է աղի կոնցենտրացիան ջրամբարում: Պատասխանը բազմապատկել  $10^{-9}$ -ով:
- 3) Աղի քանի՞ մոլեկուլ կիխի ջրամբարից վերցված 2 սմ<sup>3</sup> ծավալով մի մատուց ջրում: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:

936. Սուզանավի՝ միմյանց հետ հաղորդակցվող 20 մ<sup>3</sup> ծավալով ռեզերվուարներից մեկը ամբողջովին լցված է ջրով, իսկ մյուսը, որի ծավալը 5 մ<sup>3</sup> է, լցված է սեղմված գազով: Սուզանավի խորոքյունը 40 մ է: Մքնոլորտային ճնշումը  $10^5$  Պա է, ջրի խորոքյունը՝  $10^3$  կգ/մ<sup>3</sup>: Պրոցեսը համարել իզորեմ:

- 1) Ի՞նչ ճնշում կհաստատվի ռեզերվուարներում՝ ջուրն արտամղելուց հետո: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
- 2) Սեղմված գազի ի՞նչ ամենափոքր ճնշման դեպքում հնարավոր կլինի արտամղել առաջին ռեզերվուարի ամբողջ ջուրը: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
- 3) Սեղմված գազի ի՞նչ ճնշման դեպքում առաջին ռեզերվուարից կարտամղվի ջրի ամբողջ ծավալի կեսը: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:

937. Բարոմետրական խողովակում սնդիկի մակարդակը 0,04 մ-ով բարձր է բաժակում սնդիկի մակարդակից: Խողովակում օդի այան բարձրությունը սնդիկից վեր 0,19 մ է: Մքնոլորտային ճնշումը հավասար է 760 մմ սնդ. պյան: Օդի ջերմաստիճանը հաստատուն է: Սնդիկի մակարդակի փոփոխությունը բաժակում անտեսել:

- 1) Որքանո՞վ կփոխվի օդի ճնշումը խողովակում, եթե այն իջեցվի այնքան, որ սնդիկի մակարդակները խողովակում և բաժակում հավասարվեն: Սնդիկի խորոքյունն ընդունել  $13,6 \cdot 10^3$  կգ/մ<sup>3</sup>:
- 2) Որքա՞ն է օդի այան բարձրությունը խողովակում, եթե այն իջեցը են այնքան, որ սնդիկի մակարդակները խողովակում և բաժակում հավասարվեն: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

- 3) Որքա՞ն պետք է իջեցրել խողովակը, որպեսզի սնդիկի մակարդակ-ները խողովակում և բաժակում հավասարվեն: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

938. Հորիզոնական դիրքով դրված, երկու ծայրերից փակ ապակյա խո-դրվակը սնդիկի սյունով բաժանված է երկու հավասար մասերի: Օդի սյան երկարությունը խողովակի յուրաքանչյուր կեսում  $0,2$  մ է, ճնշումը հավասար է  $792$  մմ սնդ. սյան: Եթե խողովակը տեղադրվի ուղղաձիգ, ապա սնդիկի սյունը կիշճի 4 ամ-ով:

- 1) Խողովակի ներքեսում օդի ճնշումը քանի՞ անգամ է մեծ վերևի մասի օդի ճնշումից: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
- 2) Որքա՞ն է սնդիկի սյան երկարությունը: Պատասխանը բազմա-պատկել  $10^2$ -ով:
- 3) Որքա՞ն է օդի ճնշումը խողովակի վերևում: Սնդիկի խտությունը  $13,6 \cdot 10^3$  կգ/ $\text{մ}^3$  է: Պատասխանը բազմապատկել  $10^{-1}$ -ով:

939. Ուղղաձիգ գլանած անոքը, որը վերևից փակված է 2 կգ զանգված և  $0,01 \text{ m}^2$  հիմքի մակերես ունեցող միտոցով, լցված է գազով: Գազի ծա-վալը  $0,103 \text{ m}^3$  է: Մքննորդային ճնշումը  $10^5 \text{ N/m}^2$  է, գազի ջերմաստի-ճանը՝ հաստատում: Գլանի պատերի հետ միտցի շփումն անտեսել:

- 1) Որքա՞ն է գազի ճնշումը միտցի տակ: Պատասխանը բազմապատ-կել  $10^{-3}$ -ով:
- 2) Որքա՞ն կլինի գազի ճնշումը, եթե գլանը շարժենք ուղղաձիգ դեպի վեր  $5 \text{ m}/\text{վ}^2$  արագացումով: Պատասխանը բազմապատկել  $10^{-3}$ -ով:
- 3) Որքա՞ն կլինի գազի ծավալը, եթե գլանը շարժենք ուղղաձիգ դեպի վեր  $5 \text{ m}/\text{վ}^2$  արագացումով: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:


940. Ուղղաձիգ նեղ խողովակը, որի ներքեւի ծայրը զողված է, ունի 2 մ երկարություն: Խողովակի ներքեւի կեսը լցված է  $472$  Կ ջերմաստի-ճանի գազ, իսկ վերևի կեսը ամբողջությամբ լցված է սնդիկ: Խողո-վակում օդը տաքացնում են այնքան, որ սնդիկի  $1/4$ -ը քափվի: Սնդիկի խտությունը  $13,6 \cdot 10^3$  կգ/ $\text{մ}^3$  է, մքննորդային ճնշումը՝  $10^5$  Պա:

- 1) Որքա՞ն էր օդի ճնշումը խողովակում մինչև տաքացնելը: Պատաս-խանը բազմապատկել  $10^{-3}$ -ով:
- 2) Որքա՞ն է օդի ճնշումը խողովակում այն տաքացնելուց հետո: Պա-տասխանը բազմապատկել  $10^{-3}$ -ով:
- 3) Ըստ Կելվինի սանդղակի՝ մինչև ո՞ր ջերմաստիճանն է տաքացվել օդը:

941. Օրով լցված 10 լ տարողությամբ բալոնը միացնում են 30 լ տարողությամբ օդ պարունակող բալոնին, որտեղ ճնշումը  $10^5 \text{ N/m}^2$  է: Բալոններում հաստատվում է  $2 \cdot 10^5 \text{ N/m}^2$  ճնշում: Զերմաստիճանը հաստատում է:

- 1) Որքա՞ն էր ճնշումը փոքր ծավալով բալոնում: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
- 2) Որքա՞ն էր օդի զանգվածը փոքր ծավալով բալոնում, եթե մեծ ծավալով բալոնում օդի զանգվածը 0,03 կգ էր: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 3) Որքա՞ն օդ լցվեց մեծ ծավալով բալոն, եթե մինչև փոքր բալոնին միացնելը նրա մեջ օդի զանգվածը 0,03 կգ էր: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

942. 26-րդ նկարում ցույց է տրված սնդիկի սյան դիրքը կարճեցված մանումներում  $22 {}^\circ\text{C}$ -ի և  $750 \text{ mm Hg}$  սնդ. սյան մթնոլորտային ճնշման պայմաններում: Փակ ծնկում սնդիկից վերև օդի սյան բարձրությունը՝  $h_1 = 6 \text{ mm}$ , երկու ծնկներում սնդիկի մակարդակների տարբերությունը՝  $h_2 = 5 \text{ mm}$ : Երբ խողովակն իջեցրին տաք ջրի մեջ, ճախ ծնկում օդի սյունն ընդարձակվեց մինչև 7  $\text{mm}$ : Սնդիկի խոռոչունը  $13,6 \cdot 10^3 \text{ kg/m}^3$  է:



- 1) Որքա՞ն է օդի ճնշումը փակ ծնկում՝ մինչև խողովակը տաք ջրի մեջ իջեցնելը: Պատասխանը բազմապատկել  $10^{-2}$ -ով:
- 2) Որքաման՞վ փոխակեց փակ ծնկում օդի ճնշումը խողովակը տաք ջրի մեջ իջեցնելուց հետո:
- 3) Որքա՞ն է ջրի ջերմաստիճանը:

Նկ. 26

943. Հորիզոնական դրված փակ գլանն առանց շփման շարժվող միջնորմով բաժանված է  $2,2 \cdot 10^{-4} \text{ m}^3$  և  $3,9 \cdot 10^{-4} \text{ m}^3$  ծավալներով երկու մասի, որոնք լցված են նոյն իդեալական գազով: Առաջին մասում 2 մոլ զանգվածով իդեալական գազի ջերմաստիճանը  $-53 {}^\circ\text{C}$  է, միջնորմը դադարի վիճակում է:

- 1) Որքա՞ն է գազի ճնշումը գլանում: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
- 2) Քանի՞ մոլ գազ կա գլանի երկրորդ մասում, եթե այնտեղ ջերմաստիճանը  $-13 {}^\circ\text{C}$  է:
- 3) Որքաման՞վ պետք է մեծացնել առաջին մասում գազի ջերմաստի-

ճանը, որպեսզի միջնորմը գլանը բաժանի երկու հավասար մասի:

944. Գլանում,  $10^{-2}$  մ<sup>2</sup> մակերեսով և 100 կգ զանգվածով մխոցի տակ կա  $28 \cdot 10^{-3}$  կգ ազոտ, ջերմաստիճանը՝ 400 Կ: Գազը տաքացնում են մինչև 500 Կ ջերմաստիճանը: Մթնոլորտային ճնշումը  $10^5$  Ն/մ<sup>2</sup> է: Ազոտի մոլային զանգվածը  $28 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է: Շփումը գլանի և մխոցի միջև անտեսել:

- 1) Որքա՞ն է զազի ճնշումը մխոցի տակ: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
- 2) Որքա՞ն կբարձրանա մխոցը գլանում զազը տաքացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
- 3) Տաքացնելուց հետո ի՞նչ զանգվածով քեռ պետք է դնել մխոցի վրա, որպեսզի այն վերադառնա սկզբնական դիրքին:

945. 0,2 մ<sup>3</sup> տարողությամբ անորում զազի ճնշումը  $2 \cdot 10^6$  Պա է, ջերմաստիճանը՝ 273 Կ: Օգտագործում են զազի մի մասը, որը նորմալ պայմաններում ( $10^5$  Պա ճնշում և 0 °C ջերմաստիճան) զրադեցնում է 1 մ<sup>3</sup> ծավալ, որից հետո անորում ճնշումը դառնում է  $1,4 \cdot 10^6$  Պա:

- 1) Ի՞նչ ջերմաստիճան է հաստատվում անորում: Պատասխանը բազմապատկել  $10^{-1}$ -ով:
- 2) Գազի սկզբնական զանգվածի ո՞ր մասն է օգտագործվել: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 3) Ի՞նչ ճնշում կհաստատվի բալոնում, եթե նրա մեջ զազի ջերմաստիճանը բարձրացվի մինչև սկզբնական ջերմաստիճանը: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:

## 7.5. ՉՈՐՍ ՊԱՏԱԽԱՆԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

946. Հորիզոնական տեղադրված՝ երկու կողմերից փակ գլանաձև անոքը, որը լցված է օղով, 4 կգ զանգված և  $210^{-2}$  մ<sup>2</sup> մակերես ունեցող միտցով բաժանված է երկու հավասար մասերի: Անոքը դանդաղորեն պտտաց-նելով տեղադրում են իմքերից մեկի վրա, որից հետո միտցից վեր օդի ծավալը 3 անգամ մեծ է ներքին օդի ծավալից: Ըստուր միտցի և անոքի պատերի միջև անտեսել, այլոցեալ համարել իզորերմ:

- 1) Քանի<sup>՞</sup> անգամ է միտցի ներքին օդի ճնշումը մեծ միտցի վերևի օդի ճնշումից:
- 2) Միտցից ներքև օդի ճնշումը որքանո՞վ է մեծ միտցի վերևի օդի ճնշումից:
- 3) Որքա՞ն է օդի ճնշումը միտցի ներքեւում:
- 4) Որքա՞ն է օդի ճնշումը անոքում, եթե այն տեղադրված է հորիզոնա-կան դիրքով:

947. Հաղողակից անոքների մեջ լցնում են սնդիկ, այնուհետև երկուսն էլ փակում են: Օդի սյան երկարությունը ծնկերից յուրաքանչյուրում 0,2 մ է, ճնշումը՝ 600 մմ. սնդ. սյուն, ջերմաստիճանը՝ 250 Կ: Առաջին ծնկի լայնական հատույթի մակերեսը երկու անգամ մեծ է երկրորդ ծնկի լայնական հատույթից: Երկրորդ ծնկում օդը տաքացնելուց հետո, առաջին ծնկում ճնշումն աճում է երկու անգամ: Առաջին ծնկում ջեր-մաստիճանը մնում է հաստատուն: Սնդիկի խտությունը  $13,6 \cdot 10^3$  կգ/մ<sup>3</sup> է:

- 1) Որքանո՞վ բարձրացավ առաջին ծնկում սնդիկի սյունը երկրորդ ծնկում օդը տաքացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել 10-ով:
- 2) Քանի<sup>՞</sup> անգամ մեծացավ երկրորդ ծնկի օդի սյան բարձրությունը տաքացնելուց հետո:
- 3) Որքա՞ն է երկրորդ ծնկի օդի ճնշումը տաքացնելուց հետո: Պա-տասխանը բազմապատկել 10<sup>-3</sup>-ով:
- 4) Որքա՞ն է երկրորդ ծնկի օդի ջերմաստիճանը տաքացնելուց հետո (ըստ Կելվինի սանդղակի):

948. Մի ծայրը փակ 42 սմ երկարությամբ խողովակը ուղղաձիգ դիրքով, բաց ծայրով իջեցված է սնդիկով լցված բաժակի մեջ այնպես, որ նրա փակ ծայրը համընկնում է սնդիկի մակարդակին: Խողովակում օդի սյան բարձրությունը 30 սմ է: Խողովակում օդի և մթնոլորտի ջերմաս-


**տիմանները հավասար են՝  $27^{\circ}\text{C}$ : Սնդիկի խտությունը  $13,6 \cdot 10^3$  կգ/մ<sup>3</sup> է:**

- 1) Որքանո՞վ է խողովակում օդի ճնշումը մեծ մքնոլորտային ճնշումից: Պատասխանը բազմապատկել  $10^{-2}$ -ով:
- 2) Քանի՞ անգամ է խողովակում օդի ճնշումը մեծ մքնոլորտային ճնշումից: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
- 3) Որքա՞ն է մքնոլորտային ճնշումը: Պատասխանը բազմապատկել  $10^{-3}$ ով:
- 4) Որքանո՞վ պետք է բարձրացնել խողովակի օդի ջերմաստիճանը, որպեսզի սնդիկն ամրողովին դուրս մղվի խողովակից:

**949. Մի ծայրը փակ գլանաձև հորիզոնական տեղադրված երկար խողովակը պարունակում է  $0,24$  մ սյան երկարությամբ օդ, որը մքնոլորտից անջատված է  $0,15$  մ երկարությամբ սնդիկի սյունով: Առաջին դեպքում խողովակը փակ ծայրը դեպի վեր դրվում է ուղղաձիգ դիրքով, երկրորդ դեպքում ուղղաձիգ դիրքով՝ փակ ծայրը՝ ներքև: Առաջին և երկրորդ դեպքերում հորիզոնական դիրքով տեղադրման համեմատությամբ սնդիկի սյան շեղումների տարրերությունը կազմում է  $2$  սմ: Սնդիկի խտությունը  $13,6 \cdot 10^3$  կգ/մ<sup>3</sup> է, իսկ օդի ջերմաստիճանը՝ հաստատուն:**

- 1) Որքանո՞վ է առաջին դեպքում խողովակի օդի ճնշումը փոքր մքնոլորտային ճնշումից: Պատասխանը բազմապատկել  $10^{-2}$ -ով:
- 2) Որքանո՞վ է երկրորդ դեպքում խողովակի օդի ճնշումը մեծ առաջին դեպքում օդի ճնշումից: Պատասխանը բազմապատկել  $10^{-2}$ -ով:
- 3) Որքա՞ն է մքնոլորտային ճնշումը: Պատասխանը բազմապատկել  $10^{-3}$ -ով:
- 4) Երկրորդ դեպքում քանի՞ անգամ է խողովակի օդի խտությունը մեծ առաջինի համեմատությամբ: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:

**950. Մի ծայրը բաց ուղղանկյուն զուգահեռանիստի ձև ունեցող խողովակը կողմնային նիստով տեղադրված է հորիզոնական հարթության վրա, որի հետ շփման գործակիցը  $0,5$  է (նկ. 27): Ողորկ, խողովակի պատերին կիպ կպած միտոցի հեռավորությունը նրա փակ ծայրից  $3$  մ է: Միտոցը դանդաղորեն շարժում են դեպի փակ ծայրը: Խողովակի զանգվածը միտոցի հետ  $20$  կգ է, միտոցի մակերեսը՝  $20$  սմ<sup>2</sup>: Խողովակի ներսում օդի ճնշումը սկզբում հավասար է մքնոլորտային ճնշմանը: Մքնոլորտային ճնշումը  $10^5$  Պա է: Ջերմա-**



Նկ. 27

**տիճանք հաստատուն է:**

- 1) Որքա՞ն է խողովակի վրա ազդող դադարի շփման ուժի առավելագույն արժեքը:
- 2) Որքանո՞վ է մեծանում է գազի ճնշումը խողովակում այն պահին, եթե խողովակն սկսում է տեղից շարժվել: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:
- 3) Որքանո՞վ է տեղաշարժվում միոցն այն պահին, եթե խողովակը տեղից շարժում է:
- 4) Սկզբնական դիրքից միոցը որքա՞ն պետք է դանդաղորեն տեղաշարժել դեպի խողովակի բաց ծայրը, որպեսզի խողովակը սկսի տեղաշարժվել դեպի բաց ծայրը:

## 8. ԶԵՐՍԱԴԻՆԱՍԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

### 8.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

951. Ո՞րն է սխալ պնդումը:

- 1) Համակարգի ներքին էներգիան կախված է ջերմաստիճանից:
- 2) Իրական գազերի ներքին էներգիան կախված չէ գազի ծավալից:
- 3) Ջերմադինամիկական համակարգի ներքին էներգիան կարելի է փոխել համակարգի նկատմամբ աշխատանք կատարելով:
- 4) Ջերմադինամիկական համակարգի ներքին էներգիան կարելի է փոխել համակարգին ջերմաքանակ հաղորդելով:

952. Ո՞ր ֆիզիկական մեծություններից է կախված իդեալական գազի ներքին էներգիան:

- 1) Գազի զանգվածից և շարժման արագությունից:
- 2) Երկրի մակերևույթից ունեցած բարձրությունից և արագությունից:
- 3) Գազի ջերմաստիճանից և զանգվածից:
- 4) Գազի ջերմաստիճանից և շարժման արագությունից:

953. Ո՞ր դեպքում է մեծանում մարմնի ներքին էներգիան:

- 1) Մարմինը բարձրացնում են 2 մ-ով:
- 2) Մարմինը տաքացնում են 2  $^{\circ}\text{C}$ -ով:
- 3) Մարմնի արագությունը մեծացնում են 2 մ/վ-ով:
- 4) Բոլոր դեպքերում մեծանում է:

954. Ո՞ր պրոցեսի դեպքում է հաստատուն զանգվածով իդեալական գազի ներքին էներգիան մնում հաստատուն:


- 1) Իզոբար սեղմնան:
- 2) Իզոբերմ ընդարձակման:
- 3) Աղիարատ սեղմնան:
- 4) Աղիարատ ընդարձակման:

955. Տաքացնելիս ինչպե՞ս են փոխվում հաստատուն ծավալ ունեցող գազի մոլեկուլների միջին կինետիկ և պոտենցիալ էներգիաները:

- 1) Սիզին կինետիկ և պոտենցիալ էներգիաներն աճում են:
- 2) Սիզին կինետիկ էներգիան աճում է, իսկ պոտենցիալ էներգիան մնում է անփոփոխ:
- 3) Սիզին կինետիկ էներգիան աճում է, իսկ պոտենցիալ էներգիան՝ նվազում:
- 4) Սիզին կինետիկ էներգիան մնում է անփոփոխ, իսկ պոտենցիալ էներգիան՝ աճում:


956. Նկարում պատկերված է հաստատուն զանգվածով իդեալական զազում ընթացող շրջանային պրոցես:  $\Omega^{\circ}$  ը վիճակում է զազի ներքին էներգիան ընդունում իր նվազագույն արժեքը:

- 1) ա վիճակում:
- 2) բ վիճակում:
- 3) գ վիճակում:
- 4) դ վիճակում:




957. Ինչպե՞ս է փոխվում հաստատուն զանգվածով իդեալական զազի ներքին էներգիան  $A$  վիճակից  $B$  վիճակին անցնելիս:

- 1)  $\Delta U = 0$ :
- 2)  $\Delta U > 0$ :
- 3)  $\Delta U < 0$ :
- 4) Կմեծանա կամ կփոքրանա:




958. Նկարում պատկերված  $p$ - $V$  կոորդինատային համակարգում նշված կետերին համապատասխանող ո՞ր վիճակում հաստատուն զանգվածով իդեալական զազն ունի առավելագույն ներքին էներգիան:

- 1) ա կետում:
- 2) բ կետում :
- 3) գ կետում:
- 4) դ կետում:



959. Նկարում պատկերված իզոբերմ պրոցեսի հետևանքում հաստատուն զանգվածով իդեալական զազը  $A$  վիճակից անցնում է  $B$  վիճակին: Ինչպիսի՞ն է այդ դեպքում զազի ներքին էներգիայի փոփոխությունը:

- 1)  $\Delta U > 0$ :
- 2)  $\Delta U < 0$ :
- 3)  $\Delta U = 0$ :
- 4) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխանել:



960. Կփոխվի՞ արդյոք հաստատուն զանգվածով իրական զազի ներքին էներգիան իզոբերմ պրոցեսում:

- 1)  $\Omega_{\Sigma}$ , քանի որ այն կախված է միայն զազի ջերմաստիճանից:
- 2)  $\Omega_{\Sigma}$ , քանի որ այն կախված է միայն զազի զանգվածից:
- 3) Այո, քանի որ այն կախված է զազի ծավալից և ջերմաստիճանից:
- 4) Այո, քանի որ այն կախված է զազի ճնշումից:


961. Հաստատում  $p$  ճնշման պայմանում իդեալական գազի ընդարձակ-  
վում է  $V_1$ -ից մինչև  $V_2$  ծավալը: Ի՞նչ աշխատանք է կատարում գազը:

1)  $A = p(V_2 - V_1)$ :      3)  $A = p \frac{V_1 + V_2}{2}$ :

2)  $A = p(V_1 - V_2)$ :      4)  $A = p\sqrt{V_1 V_2}$ :


962. Գազի ընդարձակվելով՝ ա վիճակից  
անցավ բ վիճակի: Ի՞նչ աշխատանք  
կատարեց գազի այդ դեպքում:

1)  $1,5 \cdot 10^5 \Omega$ :      3)  $1,2 \Omega$ :  
2)  $3 \cdot 10^4 \Omega$ :      4)  $0,2 \Omega$ :



963. Նկարում պատկերված է իդեալական գազի  $1 \rightarrow 2 \rightarrow 3$  պրոցեսը  
նկարագրող գրաֆիկը: Որքա՞ն է  $1 \rightarrow 2$  պրոցեսի ընթացքում գազի  
կատարած աշխատանքի հարաբերությունը  
 $2 \rightarrow 3$  պրոցեսի ընթացքում կատարած  
աշխատանքին:

1) 6 :      3)  $\frac{1}{3}$  :  
2)  $\frac{2}{3}$  :      4) 0 :




964. Ո՞ր պրոցեսում է իդեալական գազի կատարած  
աշխատանքն առավելագույնը:

1)  $a \rightarrow b$  :      3)  $a \rightarrow d$  :  
2)  $a \rightarrow c$  :      4)  $a \rightarrow e$  :


965. Ո՞ր պրոցեսում է գազը դրական աշխատանք  
կատարում:

1)  $a \rightarrow b$ :      3)  $c \rightarrow d$ :  
2)  $b \rightarrow c$ :      4)  $d \rightarrow c$ :



966. Ո՞ր պրոցեսներում է գազի կատարած աշխա-  
տանքը դրական:

1)  $a-b$ :      3)  $a-b$  և  $c-d$ :  
2)  $c-d$ :      4)  $d-a$ :



967. Մետաղե ձողի մի ծայրը մոտեցնում են բոցին:


Որոշ ժամանակ անց նրա մյուս ծայրի ջերմաստիճանը բարձրանում է:  
Ի՞նչ եղանակով է այդ դեպքում կատարվում էներգիայի տեղափոխությունը:

- 1) Ջերմահաղորդականության միջոցով:
- 2) ճառագայթման միջոցով:
- 3) Ջերմահաղորդականության, ճառագայթման և կոնվեկցիայի միջոցով:
- 4) Կոնվեկցիայի միջոցով:

968. Ջերմափոխսանակության ո՞ր տեսակի դեպքում է տեղի ունենում նյութի տեղափոխություն:

- 1) Ջերմահաղորդականության:
- 2) ճառագայթման:
- 3) Կոնվեկցիայի:
- 4) Կոնվեկցիայի և ջերմահաղորդականության:

969. Տարբեր ջերմաստիճաններ ունեցող չորսումերը հպում են իրար, ինչ-պես ցույց է տրված նկարում: Ո՞ր դեպքում է ա մարմնից ջերմաքանակ հաղորդվում Յ մարմնին:



- 1) Սիայն ա դեպքում:
- 2) Սիայն բ դեպքում:
- 3) Սիայն գ դեպքում:
- 4) Բոլոր դեպքերում:

970. Պողպատի ձուլակտորի ջերմաստիճանը՝ ժամանակից կախված փոխվում է զծային օրենքով: Ի՞նչ ջերմաստիճան է ունեցել ձուլակտորը զրաֆիկով շնչված ժամանակի՝  $t = 3$  ժամ պահին:

- 1)  $200^{\circ}\text{C}$ :
- 2)  $300^{\circ}\text{C}$ :
- 3)  $400^{\circ}\text{C}$ :
- 4)  $200^{\circ}\text{C}$ -ից բարձր կամայական ջերմաստիճան:



971. Ո՞րն է նախադասության ճիշտ

**շարունակությունը:**

**Տեսակարար ջերմունակությունը թվապես հավասար է...**

- 1) այն ջերմաքանակին, որն անհրաժեշտ է նյութի ջերմաստիճանը մեկ աստիճանով փոխելու համար:
- 2) այն ջերմաքանակին, որն անհրաժեշտ է 1 կգ նյութի ջերմաստիճանը մեկ աստիճանով փոխելու համար:
- 3) այն ջերմաքանակին, որն անհրաժեշտ է 1 մոլ նյութի ջերմաստիճանը մեկ աստիճանով փոխելու համար:
- 4) այն ջերմաքանակին, որն անհրաժեշտ է 1 մոլ նյութի ջերմաստիճանը 100 աստիճանով փոխելու համար:

972. **Նույն ջերմաստիճանն ունեցող հավասար զանգվածներով երկու պինդ մարմնի հաղորդում են միևնույն ջերմաքանակը: Ո՞ր մարմնի ջերմաստիճանն ավելի շատ կբարձրանա: Ազրեգատային վիճակը չի փոխվում:**

- 1) Որի տեսակարար ջերմունակությունն ավելի մեծ է:
- 2) Որի տեսակարար ջերմունակությունն ավելի փոքր է:
- 3) Կբարձրանա նոյն չափով:
- 4) Որի ծավալն ավելի փոքր է:

973. **Իմչի՞ց է կախված հովանալիս մարմնից անջատված ջերմաքանակը: Ազրեգատային վիճակի փոփոխություն տեղի չունի:**

- 1) Սիայն մարմնի զանգվածից:
- 2) Սիայն նյութի տեսակից:
- 3) Սիայն սկզբնական և վերջնական ջերմաստիճանների տարրերությունից:
- 4) Վերը նշված բոլոր գործոններից:

974. **մ զանգվածով մարմնին  $Q$  ջերմաքանակ հաղորդելիս նրա ջերմաստիճանը բարձրացավ  $\Delta T$ -ով: Ո՞ր արտահայտությունն է որոշում մարմնի տեսակարար ջերմունակությունը:**

- 1)  $\frac{Q}{m}$ :
- 2)  $\frac{Q}{\Delta T}$ :
- 3)  $\frac{Q}{m\Delta T}$ :
- 4)  $mQ\Delta T$ :

975. **Ո՞ր քանածնն է ճիշտ արտահայտում մարմնի  $C$  ջերմունակության և  $C_{\mu}$  մոլային ջերմունակության կապը ( $v$ -ն նյութի քանակն է,  $M$ -ը՝ մոլային զանգվածը):**

1)  $C = v C_\mu$ :

3)  $C = M C_\mu$ :

2)  $C = \frac{C_\mu}{M}$ :

4)  $C = C_\mu$ :

976. Ի՞նչ միավորով է չափում նյութի տեսակարար ջերմունակությունը միավորների ՄՀ-ում:

1)  $1 \Omega$ :

3)  $1 \Omega/\text{կգ}$ :

2)  $1 \Omega/(\text{կգ}\text{Կ})$ :

4)  $1 \Omega/\text{Կ}$ :

977. Միևնույն զանգվածով, սակայն տարրեր նյութերից պատրաստված երկու մարմնի հաղորդում են նույն ջերմաքանակը: Ո՞ր մարմնի ջերմատիճանն ավելի քիչ կփոխվի: Ազդեգատային վիճակը չի փոխվում:

1) Որի ծավալն ավելի մեծ է:

2) Որի տեսակարար ջերմունակությունն ավելի մեծ է:

3) Որի տեսակարար ջերմունակությունն ավելի փոքր է:

4) Որի սկզբնական ջերմաստիճանն ավելի բարձր է:

978. Ջրի շոգեգոյացման տեսակարար ջերմությունը  $2,3 \cdot 10^6 \Omega/\text{կգ}$  է: Ի՞նչ է նշանակում այդ պիտումը:

1) 1 կգ ջուրը  $0^\circ\text{C}$ -ից մինչև եռման ջերմաստիճանը տաքացնելու համար պահանջվում է  $2,3 \cdot 10^6 \Omega$  ջերմաքանակ:

2) Տվյալ զանգվածով ջուրը  $0^\circ\text{C}$ -ից մինչև  $100^\circ\text{C}$  ջերմաստիճանը տաքացնելու համար պահանջվում է  $2,3 \cdot 10^6 \Omega$  ջերմաքանակ:

3) 1 կգ ջուրը հաստատուն ջերմաստիճանում գոլորշու փոխարկելու համար պահանջվում է  $2,3 \cdot 10^6 \Omega$  ջերմաքանակ:

4) 1 կգ ջուրը  $1^\circ\text{C}$ -ով տաքացնելու համար պահանջվում է  $2,3 \cdot 10^6 \Omega$  ջերմաքանակ:


979. Նույն նյութից պատրաստված երկու մարմին տաքացնում են միատեսակ ջերմային աղբյուրներով: Նկարում պատկերված են այդ մարմինների ջերմաստիճանների՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկները: Համեմատել մարմինների զանգվածները:

1)  $m_1 > m_2$ :

3)  $m_1 = m_2$ :

2)  $m_1 < m_2$ :

4)  $m_1 \geq m_2$ :



980. Կալորաչափում խառնել են միևնույն  $t$  զերմաստիճանի  $m$  և  $2m$  զանգվածներով ջրի երկու մասնաբաժին: Որքա՞ն է խառնուրդի վերջնական զերմաստիճանը:

1)  $t :$

3)  $\frac{3t}{2} :$

2)  $2t :$

4)  $\frac{t}{3} :$

981. Ո՞ր պրոցեսում է իդեալական գազի տեսակարար զերմունակությունն ավելի մեծ՝ իզոխո՞ր, թե՞ իզոբար:

1) Իզոբար:

2) Իզոխոր:

3) Երկու դեպքում էլ նույնն է:

4) Իդեալական գազի տեսակարար զերմունակությունը զրո է:

982. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Այն զերմաքանակը, որն անջատվում է 1 կգ զանգվածով վառելիքը լրիվ այրելիս, կոչվում է...

1) Վառելիքի զերմատվություն:

2) Վառելիքի մոլային զերմունակություն:

3) Վառելիքի տեսակարար զերմունակություն:

4) Վառելիքի այրման տեսակարար զերմություն:

983. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Եթե համակարգի ներքին էներգիայի փոփոխությունը նշանակենք  $\Delta U$ -ով, համակարգի կատարած աշխատանքը՝  $A'$ -ով, իսկ համակարգին հաղորդած զերմաքանակը՝  $Q$ -ով, ապա...

1)  $\Delta U = A' + Q :$

3)  $Q = A' + \Delta U :$

2)  $Q = A' - \Delta U :$

4)  $Q = \Delta U :$

984. Զերմադիմամիկայի առաջին օրենքը պնդում է, որ հնարավոր չէ ստեղծել I սեռի «հավերժական շարժի»: Ի՞նչ է նշանակում այս պնդումը:

1) Չի կարելի ստեղծել շարժի, որն աշխատի հավերժ, քանի որ բոլոր շարժիները ժամանակի լնիացքում մաշվում են:

2) Հնարավոր չէ ստեղծել բոլոր ժամանակների համար ամենալավ շարժի, քանի որ զիսության զարգացմանը զուգընթաց կստեղծվեն ավելի լավ շարժիներ:

- 3) Հնարավոր չէ ստեղծել մեքենա, որ հավերժ աշխատի՝ առանց էներգիա ստանալու:
- 4) Բնության մեջ և տեխնիկայում բոլոր շարժումները ժամանակի ընթացքում դադարում են:

**985. Հնարավոր է, որ գազը կատարի ավելի մեծ աշխատանք, քան նրա ստացած ջերմաքանակն է:**

- 1) Ոչ, հնարավոր չէ:
- 2) Հնարավոր է. այդ դեպքում նրա ներքին էներգիան չի փոխվում:
- 3) Հնարավոր է. այդ դեպքում նրա ներքին էներգիան փորձանում է:
- 4) Հնարավոր է. այդ դեպքում նրա ներքին էներգիան մեծանում է:

**986. Գազին հաղորդում են  $Q$  ջերմաքանակ և այն, ընդարձակվելով, կատարում է  $A'$  աշխատանք: Որքա՞ն է գազի ներքին էներգիայի փոփոխությունը:**

- |           |                          |
|-----------|--------------------------|
| 1) $Q :$  | 3) $Q - A' :$            |
| 2) $A' :$ | 4) $Q + \frac{3}{2}A' :$ |

**987. Ո՞ր ֆիզիկական մեծությունն է որոշում  $1$  կգ գազը  $1^0C$ -ով տաքացնելու համար անհրաժեշտ ջերմաքանակը:**

- 1) Գազի ջերմունակությունը:
- 2) Գազի տեսակարար ջերմունակությունը:
- 3) Գազի մոլային ջերմունակությունը:
- 4) Գազի ջերմունակությունը հաստատուն ծավալի դեպքում:

**988. Ինչպե՞ս է արտահայտվում ջերմադինամիկայի առաջին օրենքն իդեալական գազի իզոբերմ սեղմնան դեպքում:  $A$ -ն արտաքին ուժերի կատարած աշխատանքն է,  $Q$ -ն՝ գազից շրջապատին հաղորդված ջերմաքանակը,  $\Delta U$ -ն՝ գազի ներքին էներգիայի փոփոխությունը:**

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1) $\Delta U = A :$ | 3) $Q = \Delta U :$  |
| 2) $Q = A :$        | 4) $\Delta U = -A :$ |

**989. Իդեալական գազին տրվում է  $Q$  ջերմաքանակ այնպես, որ ժամանակի կամայական պահի այդ ջերմաքանակը հավասար է գազի կատարած  $A'$  աշխատանքին: Ի՞նչ պրոցես է տեղի ունեցել այդ ընթացքում:**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Աղիարատ: | 3) Իզոխոր:  |
| 2) Իզորար:  | 4) Իզոթերմ: |

990. Ինչպե՞ս է արտահայտվում ջերմադինամիկայի առաջին օրենքն իդեալական գազի իզոխոր պրոցեսում:  $A$ -ն արտաքին ուժերի կատարած աշխատանքն է,  $Q$ -ն՝ գազին հաղորդված ջերմաքանակը,  $\Delta U$ -ն՝ գազի ներքին էներգիայի փոփոխությունը:
- 1)  $\Delta U = A$ :
  - 2)  $Q = A$ :
  - 3)  $Q = \Delta U$ :
  - 4)  $\Delta U = -A$ :
991. Ինչպե՞ս է փոխվում հաստատուն գանգվածով իդեալական գազի ներքին էներգիան նրա բացարձակ ջերմաստիճանը 2 անգամ բարձրացնելիս:
- 1) Նվազում է 2 անգամ:
  - 2) Աճում է 2 անգամ:
  - 3) Աճում է 4 անգամ:
  - 4) Մնում է անփոփոխ:
992. Որքա՞ն է իզոբար պրոցեսում գազի ստացած ջերմաքանակը, եթե նրա կատարած աշխատանքը  $A'$  է, իսկ ներքին էներգիայի փոփոխությունը՝  $\Delta U$ :
- 1)  $\Delta U$ :
  - 2)  $A'$ :
  - 3)  $A' + \Delta U$ :
  - 4) 0:
993. Ինչպե՞ս է կոչվում այն պրոցեսը, որի ընթացքում համակարգը շրջապատից ջերմաքանակ չի ստանում և չի տալիս:
- 1) Իզոխոր:
  - 2) Իզոբերմ:
  - 3) Իզոբար:
  - 4) Աղիաբառ:
994. Որքանո՞վ է փոխվում  $\nu$  մոլ միատոմ իդեալական գազի ջերմաստիճանը, եթե աղիաբառ սեղմնան ժամանակ արտաքին ուժերը կատարում են  $A$  աշխատանք:
- 1)  $\Delta T = \frac{4A}{3\nu R}$ :
  - 2)  $\Delta T = \frac{A}{\nu R}$ :
  - 3)  $\Delta T = \frac{3A}{2\nu R}$ :
  - 4)  $\Delta T = \frac{2A}{3\nu R}$ :
995. Ինչպե՞ս է փոխվում հաստատուն գանգվածով իդեալական գազի ներքին էներգիան աղիաբառ ընդարձակման պրոցեսում:
- 1)  $\Delta U = 0$ :
  - 2)  $\Delta U > 0$ :
  - 3)  $\Delta U < 0$ :
  - 4) Կփոխվի կամայական ձևով:
996. Ինչպե՞ս է փոխվում գազի ջերմաստիճանն աղիաբառ ընդարձակման պրոցեսում
- 1) Աճում է:
  - 3) Չի փոխվում:

- 2) Նվազում է:                  4) Սկզբում աճում է, հետո՝ նվազում:

997. A և B միատեսակ գլանները լցված են նույն քանակի գազով: A գլանն ամուր փակված է, իսկ B գլանը փակող մխոցը կարող է ազատ տեղաշարժվել: Երկու գլանների գազերին հաղորդվում է նույն ջերմաքանակը: Ո՞ր գլանում գազի ջերմաստիճանն ավելի շատ կրաքանակ:

- 1) A գլանում:                  3) Երկուսինն էլ կրաքանակ նույն չափով:  
2) B գլանում:                  4)Պատասխանը կախված է գազի տեսակից:

998. Ո՞րն է նախադասության միշտ շարունակությունը:

Եթե ջերմադինամիկական պրոցեսի հետևանքով համակարգը վերադառնում է սկզբնական վիճակին, ապա...


- 1) համակարգի կատարած աշխատանքն անպայման զրո է:  
2) համակարգի ստացած ջերմաքանակն անպայման զրո է:  
3) համակարգի ծավալը փոփոխվել է:  
4) համակարգի ներքին էներգիայի փոփոխությունը զրո է:

999. Որքա՞ն է  $v$  մոլ իդեալական գազի  $C_p$  ջերմութակությունը:

- 1)  $\frac{3}{2}vR$ :                  3)  $2vR$ :  
2)  $\frac{5}{2}vR$ :                  4)  $vR$ :

1000.  $p - V$  կոորդինատային համակարգում տրված է երկու իզոթերմ: Մի դեպքում իդեալական գազի հետ ընթանում է Ա պրոցես, մյուս դեպքում Բ պրոցեսը: Ո՞րն է գազի ներքին էներգիայի փոփոխությունների և գազին հաղորդված ջերմաքանակների միշտ հարաբերակցությունը այդ պրոցեսների դեպքում:

- 1)  $\Delta U_1 = \Delta U_2 = 0$ ,  $Q_1 > 0$ ,  $Q_2 < 0$ :  
2)  $\Delta U_1 = \Delta U_2 > 0$ ,  $Q_1 < Q_2$ :  
3)  $\Delta U_1 = \Delta U_2 > 0$ ,  $Q_1 > Q_2$ :  
4)  $\Delta U_1 = \Delta U_2 < 0$ ,  $Q_1 = Q_2$ :



1001. Ո՞րն է նախադասության միշտ շարունակությունը:

Ջերմային շարժիչը սարք է, որը...

- 1) ներքին էներգիան փոխակերպում է մեխանիկական էներգիայի:  
2) մեխանիկական էներգիան փոխակերպում է ներքին էներգիայի:

- 3) պոտենցիալ էներգիան փոխակերպում է կինետիկ էներգիայի:  
 4) կինետիկ էներգիան փոխակերպում է պոտենցիալ էներգիայի:

**1002.** Որքա՞ն է ջերմային մեքենայի **OԳԳ-ն**, եթե բանող մարմինը սառնարանին հաղորդում է ջեռուցչի ստացած ջերմաքանակի  $1/3$  մասը:

$$\begin{array}{ll} 1) \quad \frac{1}{3}: & 3) \quad \frac{3}{4}: \\ 2) \quad \frac{2}{3}: & 4) \quad \frac{4}{3}: \end{array}$$

**1003.** Ո՞ր բանաձևն է արտահայտում ջերմային մեքենայի ջեռուցչի տված  $Q_1$  և սառնարանին հաղորդված  $Q_2$  ջերմաքանակների կապը, եթե ջերմային մեքենայի **OԳԳ-ն**  $\eta$  է:

$$\begin{array}{ll} 1) \quad Q_1 = (1 - \eta)Q_2: & 3) \quad Q_1 = (1 + \eta)Q_2: \\ 2) \quad Q_2 = (1 - \eta)Q_1: & 4) \quad Q_2 = (1 + \eta)Q_1: \end{array}$$

**1004.** Իդեալական ջերմային մեքենայի ջեռուցչի բացարձակ ջերմաստիճանը 2 անգամ մեծ է սառնարանի բացարձակ ջերմաստիճանից: Ինչպես կփոխվի նրա **OԳԳ-ն**, եթե սառնարանի ջերմաստիճանը փոքրացնենք 2 անգամ:

$$\begin{array}{ll} 1) \quad \text{Կմեծանա 25 \%-ով:} & 3) \quad \text{Կմեծանա 2 անգամ:} \\ 2) \quad \text{Կմեծանա 50 \%-ով:} & 4) \quad \text{Կմեծանա 40 \%-ով:} \end{array}$$

**1005.** Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

$$\frac{T_2}{T_1} = \frac{|Q_2|}{Q_1} = 1 - \eta \text{ արտահայտությունը ճիշտ է ...}$$

- 1) կամայական ջերմային շարժիչի համար:  
 2) ներքին այրման շարժիչի համար:  
 3) իդեալական ջերմային շարժիչի համար:  
 4) շոգետուրբինի համար:

**1006.** Ինչպես կարելի է մեծացնել իդեալական ջերմային մեքենայի **OԳԳ-ն**:

- 1) Սիայն մեծացնելով սառնարանի ջերմաստիճանը:  
 2) Սիայն փոքրացնելով ջեռուցչի ջերմաստիճանը:  
 3) Ջեռուցչի ջերմաստիճանը մեծացնելով, սառնարանինը՝ փոքրացնելով:  
 4) Ջեռուցչի ջերմաստիճանը փոքրացնելով, սառնարանինը՝ մեծացնելով:

**1007.** Առաջին դեպքում իդեալական ջերմային մեքենայի ջեռուցչի ջերմաստիճանը բարձրացնում են  $\Delta T$ -ով՝ հաստատում պահելով սառնարա-

Աի ջերմաստիճանը: Երկրորդ դեպքում սառնարանի ջերմաստիճանը իջեցնում են նույն  $\Delta T$ -ով՝ անփոփոխ պահելով ջեռուցչի ջերմաստիճանը: Ո՞ր դեպքում ջերմաստիճանայի ՕԳԳ-ն ավելի մեծ կլինի:

- 1) Առաջին դեպքում:
- 2) Երկրորդ դեպքում:
- 3) Երկու դեպքում էլ կլինի նույնը:
- 4) Պատասխանը կախված է ջեռուցչի և սառնարանի սկզբնական ջերմաստիճաններից:

**1008. Ո՞ր պրոցեսն է կոչվում շոգեգոյացում:**

- 1) Հեղուկ կամ պինդ վիճակից գազային վիճակի անցման պրոցեսը:
- 2) Գազային վիճակից հեղուկ վիճակի անցման պրոցեսը:
- 3) Պինդ վիճակից հեղուկ վիճակի անցման պրոցեսը:
- 4) Հեղուկ վիճակից պինդ վիճակի անցման պրոցեսը:

**1009. Ո՞ր ջերմաստիճանում է գոլորշիանում ջուրը:**

- 1) Սիայն  $18^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանում:
- 2) Սիայն  $100^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում:
- 3) Սիայն  $100^{\circ}\text{C}$ -ից բարձր ջերմաստիճանում:
- 4) Կամայական ջերմաստիճանում:

**1010. Հեղուկը գոլորշիանում է կամայական ջերմաստիճանում: Ինչո՞վ է դա պայմանավորած:**

- 1) Կամայական ջերմաստիճանում հեղուկում առկա են մոլեկուլներ, որոնց կինետիկ էներգիան բավարար է հեղուկի ազատ մակերևույթից պոկվելու համար:
- 2) Հեղուկում մասնիկները շարժվում են անկանոն:
- 3) Հեղուկի մոլեկուլների շարժման միջին կինետիկ էներգիան միշտ փոքր է նրանց փոխազդեցության էներգիայից:
- 4) Հեղուկի մոլեկուլները վանում են միմյանց:

**1011. Ի՞նչ է տեղի ունենում, եթե հեղուկը առանց ջերմություն ստանալու, գոլորշիանում է:**

- |                |                                    |
|----------------|------------------------------------|
| 1) Տաքանում է: | 3) Ծավալը մեծանում է:              |
| 2) Հովանում է: | 4) Ջերմաստիճանը մնում է հաստատում: |

**1012. Զրի գոլորշիմերի խտացման ժամանակ ջերմության քանակ անջատվում է, թե՞ կլանվում:**

- 1) Հնարավոր է ջերմության անջատումը, կլանումը:
- 2) Չի անջատվում և չի կլանվում:

- 3) Կլանվում է:
- 4) Անջատվում է:

1013.  $100^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում ջրի գոլորշին, խտանալով, փոխակերպվում է նույն ջերմաստիճանի ջրի: Ինչպե՞ս կփոխվեն այդ դեպքում նրա զանգվածը, ծավալը, խտությունը և ներքին էներգիան:

- 1) Ծավալը կփոքրանա, զանգվածը կմեծանա, խտությունն ու ներքին էներգիան չեն փոխվի:
- 2) Զանգվածը չի փոխվի, խտությունը կփոքրանա, ծավալն ու ներքին էներգիան կմեծանան:
- 3) Ծավալն ու ներքին էներգիան կփոքրանան, զանգվածը չի փոխվի, խտությունը կմեծանա:
- 4) Բոլոր մեծություններն ել կփոքրանան:

1014.  $\Omega$ <sup>o</sup> գոլորշին է կոչվում հազեցած:

- 1) Բաց անորում հեղուկի մակերևույթին առաջացած գոլորշին:
- 2) Բավական մեծ խտությամբ գոլորշին:
- 3) Ցածր ջերմաստիճանի գոլորշին:
- 4) Գոլորշին, որն իր հեղուկի հետ շարժուն հավասարակշռության մեջ է:

1015. Հերմետիկ փակ անորում կան ջուր և ջրի հազեցած գոլորշի: Ինչպե՞ս կփոխվի վերջինիս ճնշումը ջերմաստիճանը 2 անգամ բարձրացնելիս:

- 1) Չի փոխվի: 3) Կմեծանա ավելի քան 2 անգամ:
- 2) Կմեծանա 2 անգամ: 4) Կփոքրանա 2 անգամ:

1016.  $\Omega$ <sup>o</sup>ն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Հազեցած գոլորշու ճնշումը կախված է...

- 1) գոլորշու կոնցենտրացիայից և ջերմաստիճանից:
- 2) գոլորշու կոնցենտրացիայից և ծավալից:
- 3) գոլորշու ծավալից և ջերմաստիճանից:
- 4) միայն ծավալից:

1017. Անորի մեջ լցնում են որոշակի զանգվածով ջուր և մխոցով փակում այն: Անորում հազեցած գոլորշի կառաջանա՞՝, եթե ջուրը մխոցի տակ մնա երկար ժամանակ: Համակարգի ջերմաստիճանը հաստատուն է:

- 1) Այն, եթե ջրի զանգվածը բավականաչափ մեծ է:
- 2) Այն, եթե ջրի զանգվածը բավականաչափ փոքր է:
- 3) Ջրի կամայական զանգվածի դեպքում գոլորշին հազեցած չէ:
- 4) Ոչ, եթե ջրի զանգվածը բավականաչափ մեծ է:

1018. Անորում միտցի տակ, կան ջուր և ջրի հագեցած գոլորշի: Ի՞նչ տեղի կունենա, եթե անորը տաքացվի այնքան, քանի դեռ ամբողջ ջուրը չի գոլորշիացել:


- 1) Գոլորշին կմնա հագեցած, ճնշումը կաճի:
- 2) Գոլորշին կմնա հագեցած, ճնշումը չի փոխվի:
- 3) Գոլորշին կրառնա ոչ հագեցած, ճնշումը կնվազի:
- 4) Գոլորշին կրառնա ոչ հագեցած, ճնշումը կաճի:

1019. Ի՞նչ կարելի է ասել տրված ջերմաստիճանում հագեցած և չհագեցած գոլորշիների  $n_0$  և  $n_1$  կոնցենտրացիաների մասին:


- 1)  $n_1 > n_0$ :
- 2)  $n_1 < n_0$ :
- 3)  $n_1 = n_0$ :
- 4) Բոլոր պատասխանները հնարավոր են:

1020. Գրաֆիկի  $n^{\circ}$  հատվածն է համապատասխանում գոլորշու՝ հեղուկի փոխարկվելու պրոցեսին:

- 1) ab:
- 2) bc:
- 3) cd:
- 4) bcd:



1021. Փակ անորում կան օդ և ջուր: Է՛ռն գրաֆիկն է արտահայտում ջրի գոլորշու ճնշման կախումը ջերմաստիճանից:



- 1) а-ն:
- 2) բ-ն:
- 3) գ-ն:
- 4) դ-ն:

1022. Ինչպե՞ս է փոխվում օդի հարաբերական խոնավությունը՝ նրա ջերմաստիճանը բարձրացնելիս, եթե չհագեցած գոլորշու խսությունը մնում է անփոփոխ:

- 1) Աճում է:
- 2) Նվազում է:
- 3) Մնում է անփոփոխ:
- 4) Հնարավոր է աճի կամ նվազի:

1023. Ինչպե՞ս կփոխվի խոնավությունը միայն ջրի գոլորշի պարունակող փակ անորում, եթե այն տաքացնեն:

- 1) Բացարձակ խոնավությունը կփոքրանա, հարաբերական խոնավությունը կմնա նույնը:

- 2) Բացարձակ խոնավությունը կմնա նույնը, հարաբերական խոնավությունը կփոքրանա:
- 3) Բացարձակ խոնավությունը կմեծանա, հարաբերական խոնավությունը կփոքրանա:
- 4) Բացարձակ խոնավությունը կմնա նույնը, հարաբերական խոնավությունը կաճի:
- 1024.** Սենյակում հարաբերական խոնավությունը 40 % է, իսկ դրսում՝ 80 %:  
Նո՞յնն է արդյոք օդի բացարձակ խոնավությունը սենյակում և դրսում,  
եթե ջերմաստիճանը նույնն է:
- 1) Դրսում մեծ է:
  - 2) Դրսում փոքր է:
  - 3) Նույնն է:
  - 4) Ծիշտ պատասխանելու համար տվյալները բավարար չեն:
- 1025.** Ո՞ր օրենքն է ճիշտ հազեցած գոլորշու համար:
- 1) Բոյլ-Մարիոտի:
  - 2) Գեյ-Լյուսակի:
  - 3) Շառլի:
  - 4) Πξ մեկը:
- 1026.** Ո՞ր ջերմաստիճանն է կրչվում ցողի կետ:
- 1) Այն ջերմաստիճանը, որի դեպքում չհազեցած գոլորշին դառնում է հազեցած:
  - 2) Այն ջերմաստիճանը, որի դեպքում հեղուկը եռում է:
  - 3) Այն ջերմաստիճանը, որի դեպքում դադարում է մոլեկուլների անցումը հեղուկ վիճակից գոլորշու:
  - 4) Այն ջերմաստիճանը, որի դեպքում դադարում է մոլեկուլների անցումը գոլորշուց հեղուկ վիճակի:
- 1027.** *V* ծավալով օդում պարունակվում է *m* զանգվածով ջրի գոլորշի:  
Որքա՞ն է օդի հարաբերական խոնավությունը, եթե ջրի հազեցած գոլորշու խտությունն այդ ջերմաստիճանում  $\rho_0$  է:
- 1)  $\frac{m}{\rho_0 V}$ :
  - 2)  $\frac{\rho_0 V}{m}$ :
  - 3)  $\frac{mV}{\rho_0}$ :
  - 4)  $\frac{V}{\rho_0 m}$ :

**1028. Որքա՞ն է ջրի եռման ջերմաստիճանը նորմալ մթնոլորտային ճնշման դեպքում:**

- 1) 0 Կ:                  3) 273 Կ:  
2) 100 Կ:                4) 373 Կ:

**1029. Ո՞րն է նախադասության միշտ շարունակությունը:**

**Հեղուկը եռում է այն ջերմաստիճանում, եթե...**

- 1) նրա մակերևույթից սկսում են հեռանալ միջին կինետիկ էներգիայից մեծ կինետիկ էներգիա ունեցող մոլեկուլները:  
2) նրա հազեցած գոլորշու ճնշումը հավասարվում է արտաքին ճնշմանը:  
3) նրա խտությունը փոքրանում է:  
4) նրանից սկսում են հեռանալ մոլեկուլներ:

**1030. Ինչպե՞ս է փոխվում ջրի եռման ջերմաստիճանը բարձր սարի ստորաց գազաք բարձրանալիս:**

- 1) Սնում է անփոփոխ:  
2) Սեծանում է:  
3) Փոքրանում է:  
4) Պատասխանը կախված է ջրի գանգվածից:

**1031. Անորում՝ օդահան պոմային միացված, ջերմամեկուսացված զանգի տակ, հեղուկի մակերևույթին օդի ճնշումը դանդաղ փոքրացնում են:**  
**Ի՞նչ տեղի կունենա հեղուկի հետ:**

- 1) Հեղուկը կտաքանա:      3) Հեղուկի ջերմաստիճանը կմնա անփոփոխ:  
2) Հեղուկը կհովանա:      4) Հեղուկը կեռա:

**1032. Կարելի՞ է արյուր ներծծող հեղուկային պոմպով բարձրացնել եռացող ջուրը:**

- 1) Այո:  
2) Ոչ:  
3) Պատասխանը կախված է պոմպի հզորությունից:  
4) Պատասխանը կախված է արտաքին ճնշումից:


**1033. Հեղուկի եռման պրոցեսում նրա ջերմաստիճանը մնում է հաստատուն:**  
**Ինչի՞ վրա է ծախսվում այդ դեպքում նրան հաղորդված ջերմաքանակը:**

- 1) Հեղուկից հեռացող մոլեկուլների ջերմային շարժման միջին կինետիկ էներգիայի մեծացման:  
2) Հեղուկից հեռացող մոլեկուլների միմյանց հետ փոխազդեցության էներգիայի մեծացման:

- 3) Հեղուկից հեռացող մոլեկուլների ջերմային շարժման միջին կինետիկ էներգիայի փոքրացման:
- 4) Հեղուկից հեռացող մոլեկուլների պոտենցիալ էներգիայի փոքրացման:

1034. Հեղուկով լցված կաթսան դրեցին գազ-օջախին: Հեղուկի ջերմաստիճանի կախումը ժամանակից պատկերված է նկարում: Ո՞րն է ճիշտ պնդում:

- 1) Հեղուկի ջերմաստիճանը ժամանակից կախված անընդհատ աճում է:
- 2) 4 րոպե անց ողջ հեղուկը գոլորշիանում է:
- 3) 350 Կ ջերմաստիճանում հեղուկը շրջապատին տալիս է այնքան ջերմաքանակ, որքան ստանում է շրջապատից:
- 4) 4 րոպե անց հեղուկն սկսում է եռալ:



1035. Որքա՞ն է եռման ջերմաստիճանում  $m$  զանգվածով եթերը ամրողությամբ գոլորշիացնելու համար պահանջվող ջերմաքանակը, եթե նրա շոգեգոյացման տեսակարար ջերմությունը  $r$  է:

- 1)  $\frac{m}{r}$ :
- 2)  $\frac{r}{m}$ :
- 3)  $rm$ :
- 4)  $\frac{mr}{2}$ :

1036. Ի՞նչ ազրեգատային վիճակում է ջուրը  $0^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում:

- 1) Սիայն հեղուկ:
- 2) Սիայն պինդ:
- 3) Հնարավոր է լինի թե՛ պինդ վիճակում, թե՛ հեղուկ:
- 4) Սիայն գազային:

1037. Հալվելիս բյուրեղային մարմնի ջերմաստիճանը չի փոխվում: Ինչի՞ վրա է ծախսվում այդ դեպքում նրան հաղորդած ջերմաքանակը:

- 1) Մարմնի մասնիկների կինետիկ էներգիայի մեծացման:
- 2) Մարմնի մասնիկների փոխազդեցության պոտենցիալ էներգիայի մեծացման:
- 3) Հաղորդվում է շրջապատին:
- 4) Ջերմաքանակ հաղորդելիս մարմնի ջերմաստիճանն անպայման պետք է աճի:

1038. Փորձանոթի մեջ տեղակայում են ծծմբի բյուրեղիկներ և նրանից օդը հանում: Տաքացման հետևանքով ծծմբի մի մասը հալվում է, մի մասը՝ գոլորշիանում, իսկ մնացած մասը մնում է պինդ վիճակում: Ո՞ր վիճակում է ծծմբի մասնիկների շարժման միջին կինետիկ էներգիան ավելի մեծ:


- 1) Պինդ:  
2) Հեղուկ:  
3) Գոլորշու:  
4) Բոլոր վիճակներում նույնն է:

1039. Աղյուսակներում, որտեղ տրվում են նյութերի հալման ջերմաստիճանները և հալման տեսակարար ջերմությունները, ապակու համար տվյալները բացակայում են: Ի՞նչո՞ւ:

- 1) Որովհետև կան տարրեր բաղադրությունների ապակիներ:  
2) Որովհետև ամորֆ մարմինները որոշակի հալման ջերմաստիճան չունեն:  
3) Որովհետև ապակիները պինդ վիճակից միանգամից անցնում են զագային վիճակի:  
4) Բոլոր պատասխանները սխալ են:

1040. Փորձով հետազոտվել է նավթալինի ջերմաստիճանի փոփոխությունը՝ կախված նրա տաքացման ժամանակից: Արդյունքները տե՛ս գրաֆիկում: Ի՞նչ եղանակացություն կարելի է անել:

- 1) 2-6 րոպեի ընթացքում նավթալինի ջերմունակությունը փոփոխվում է:  
2) 2-6 րոպեի ընթացքում տեղի է ունենում ազրեգատային վիճակի փոփոխություն:  
3) 0-2 րոպեի ընթացքում նավթալինը հալվում է:  
4) Նավթալինը հալվում է  $120^{\circ}\text{C}$ -ում:



1041. Զմռան ցուրտ եղանակին, երբ սկսում է ձյուն տեղալ, օդի ջերմաստիճանն զգալիորեն բարձրանում է: Ի՞նչո՞ւ:

- 1) Ձյունը ջերմության վատ հաղորդիչ է:  
2) Ձյունը փոքրացնում է քամու ուժը:  
3) Բյուրեղանալիս ցուրտ ջերմություն է կլանում:  
4) Բյուրեղանալիս ցուրտ ջերմություն է անջատում:

1042. Լճի մակերևույթը գիշերը պատվեց բարակ սառույցով: Սառչելոց ջուրը մքնողորտին ջերմաքանակ տվեց, թե՞ նրանից վերցրեց:


- 1) Տվեց:                  3) Ո՞չ տվեց, ո՞չ էլ վերցրեց:  
 2) Վերցրեց:            4) Որքան տվեց մթնոլորտին, նույնքան էլ վերցրեց ջրից:

**1043. Ի՞նչ միավորով է շափում նյութի հալման տեսակարար ջերմությունը:**

- 1)  $1 \Omega$ :                  3)  $1 \Omega/\text{կգ}$ :  
 2)  $1 \Omega/\text{կգ}\cdot\text{Կ}$ :      4)  $1 \Omega/\text{Կ}$ :


**1044. Տարբեր նյութերից պատրաստված, նույն գանգվածով երկու մարմին տաքացնում և հալում են նույն պայմաններում: Նկարում պատկերված են այդ մարմինների ջերմաստիճանների կախումները դրանց հաղորդված ջերմաքանակից: Որքա՞ն է երկրորդ մարմնի հալման տեսակարար ջերմությունը, եթե առաջին մարմնինը լ է:**

- 1)  $4\lambda$ :                  3)  $1,25\lambda$ :  
 2)  $2\lambda$ :                  4)  $0,25\lambda$ :




**1045. Եթե բարակ թելի երկու ծայրերն ամրացնենք օղակին և մտցնենք օճառաջրի մեջ, ապա այն կպատվի բաղանքով: Ինչպես կփոխվի A մասի մակերեսը, եթե B մասի բաղանքը վերացնենք:**

- 1) Կմեծանալ:  
 2) Կփոքրանալ:  
 3) Կմնա նույնը:  
 4) Պատասխանը կախված է հեղուկի տեսակից:



**1046. Ի՞նչ աշխատանք են կատարում մակերևութային լարվածության ուժերը նկարում պատկերված AB շարժական մետաղալարը  $\Delta x$ -ով ներքև իջեցնելիս:**

- 1)  $A = \sigma \Delta x l$ :                  3)  $A = -\sigma \Delta x l$ :  
 2)  $A = -2\sigma \Delta x l$ :                4)  $A = 2\sigma \Delta x l$ :



**1047. Ո՞րն է սխալ պնդումը:**

- 1) Մակերևութային լարվածության ուժն ուղղահայաց է մակերևույթը սահմանափակող գծին:  
 2) Մակերևութային լարվածության ուժն ուղղված է հեղուկի մակերևույթի երկայնքով:  
 3) Մակերևութային լարվածության ուժն ուղղված է դեպի հեղուկի ներսը:  
 4) Մակերևութային լարվածության ուժը ձգուում է կրծատել հեղուկի ազատ մակերևույթի մակերեսը:

**1048.** Ինչպե՞ս է փոխվում հեղուկի մակերևութային լարվածության գործակիցը՝ ջերմաստիճանը բարձրացնելիս:

- 1) Սեծանում է:
- 2) Փոքրանում է:
- 3) Չի փոխվում:
- 4) Կախված հեղուկի խտությունից՝ կմեծանա կամ կփոքրանա:

**1049.** Ի՞նչ ձև ունեն հեղուկի կարիլներն անկշռության վիճակում:

- 1) Գնդածն են միայն փոքր չափերի կարիլները:
- 2) Գնդածն են կամայական չափերի կարիլները:
- 3) Միշտ գնդածն չեն:
- 4) Պատասխանը կախված է հեղուկի խտությունից:

**1050.** Մազական խողովակի մի ծայրը գտնվում է այն քրջող հեղուկով լցված անորդի մեջ: Որտե՞ղ է հեղուկի մակարդակն ավելի բարձր. մազական խողովակո՞ւմ, թե՞ անորում:

- 1) Անորում:
- 2) Մազական խողովակում:
- 3) Մակարդակները նույնն են:
- 4) Պատասխանը կախված է հեղուկի մակերևութային լարվածության գործակցից:

**1051.** Ինչպե՞ս կփոխվի հեղուկի սյան բարձրությունը մազական խողովակում, եթե խողովակի տրամագիծը մեծացնենք 2 անգամ:

- 1) Կմեծանա 2 անգամ:
- 2) Կփոքրանա 2 անգամ:
- 3) Կմեծանա 4 անգամ:
- 4) Կփոքրանա 4 անգամ:

**1052.** Կարողիկի խողովակի ներքին տրամագիծը  $d$  է, իսկ նրանից պոկվող կարիկի զանգվածը  $m$ : Ո՞ր բանաձևով է որոշվում հեղուկի մակերևութային լարվածության գործակիցը:

- 1)  $\frac{mg}{\pi d}$ :
- 2)  $\frac{mg}{2\pi d}$ :
- 3)  $\frac{2mg}{\pi d}$ :
- 4)  $\pi dm g$ :

**1053.** Ինչպե՞ս կփոխվի սնդիլի գնդածն կարիկի ներքին էներգիան, եթե այն տրոհենք երկու հավասար կարիլների:

- 1) Կմեծանա:
- 2) Կփոքրանա:
- 3) Կմնա նույնը:
- 4) Պատասխանը կախված է կարիկի չափերից:

**1054.** Ինչո՞ւ են մետաղները հաճախ դրսարում իզոտրոպ հատկություններ:

- 1) Սիարյուրեղներ են:      3) Ամորֆ մարմիններ են:  
 2) Բազմաբյուրեղներ են:      4) Նրան մեջ կան ազատ էլեկտրոններ:

**1055. Ի՞նչ ֆիզիկական հատկությամբ է միարյուրեղը տարրերվում ամորֆ մարմնից:**

- 1) Անիզոտրոպությամբ:      3) Ամրությամբ:  
 2) Թափանցիկությամբ:      4) Էլեկտրահաղորդականությամբ:

**1056. Ո՞րն է հարաբերական երկարացման չափայնությունը միավորների ՄՀ-ում:**

- 1)  $\text{Ն}/\text{մ}^2\text{-ն}:$       3)  $\text{Ն}/\text{մ}\text{-ն}:$   
 2)  $\text{Նմ}\text{-ն}:$       4) Չափայնություն չունի:

**1057. Ինչի՞ց է կախված համաստու ձողի կոշտությունը:**

- 1) Սիայն ձողի երկարությունից:  
 2) Սիայն ձողի երկարությունից և նյութի տեսակից:  
 3) Սիայն նյութի տեսակից:  
 4) Զողի երկարությունից, լայնական հատույքի մակերեսից և նյութի տեսակից:

**1058. Ինչպե՞ս է փոխավում համաստու ձողի կոշտությունը՝ նրա երկարությունը երկու անգամ մեծացնելիս:**

- 1) Սեծանում է երկու անգամ:      3) Փոքրանում է երկու անգամ:  
 2) Սեծանում է չորս անգամ:      4) Չի փոխավում:

**1059. Մետաղալիք քեռ է կախված: Ինչպե՞ս կփոխվեն նրա բացարձակ և հարաբերական երկարացմանը, եթե մետաղալիքը կեսից ծալենք և նրանից կախենք նույն քեռը:**

- 1) Երկուսն էլ կփոքրանան 2 անգամ:  
 2) Բացարձակ երկարացումը կփոքրանա 4 անգամ, իսկ հարաբերական երկարացումը՝ 2 անգամ:  
 3) Բացարձակ երկարացումը կփոքրանա 2 անգամ, իսկ հարաբերական երկարացումը՝ 4 անգամ:  
 4) Բացարձակ և հարաբերական երկարացումները չեն փոխվի:

**1060. Ո՞ր բանաձևով են որոշում համաստու գլանաձև ձողի  $k$  կոշտության կախումը նրա  $l_0$  երկարությունից, լայնական հատույքի  $S$  մակերեսից և նյութի առաձգականության  $E$  մոդուլից:**

1)  $k = ESl_0:$       3)  $k = E \frac{l_0}{S}:$

2)  $k = E \frac{S}{l_0}:$       4)  $k = \frac{S}{El_0}:$

## 8.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


1061. Որքա՞ն է 0,2 մոլ իդեալական միատոմ գազի ներքին էներգիան  $27^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում:
1062. Որքա՞ն է 1 մոլ միատոմ իդեալական գազի ներքին էներգիայի փոփոխությունը, եթե այն տաքացնում են  $27^{\circ}\text{C}$ -ից մինչև  $127^{\circ}\text{C}$  ջերմաստիճանը:
1063. Բալոնում փակված  $0,005$  կգ զանգվածով հելիումի ջերմաստիճանը  $400$  Կ է: Որքա՞ն է զազի ներքին էներգիան: Հելիումի մոլային զանգվածը  $4 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է:
1064. Որքա՞ն է 10 մոլ միատոմ իդեալական գազի ջերմաստիճանն՝ արտահայտված Կելվինի սանդղակով, եթե նրա ներքին էներգիան  $74,7$  կՋ է:
1065. Որքա՞ն է  $2 \cdot 1$  ծավալ զբաղեցնող միատոմ իդեալական գազի ներքին էներգիան, եթե զազի ճնշումը  $10^5$  Պա է:
1066. Իդեալական զազի ծավալը  $10^5$  Պա ճնշման դեպքում  $10^{-3} \text{ մ}^3$  է: Գազի ծավալն իզոբար կերպով մեծանում է  $5$  անգամ: Ի՞նչ աշխատանք է կատարում զազն այդ դեպքում:
1067.  $5$  մոլ իդեալական զազն իզոբար ընդարձակման ժամանակ կատարեց  $4150$  Զ աշխատանք: Քանի՞ աստիճանով տաքացավ զազն այդ ընթացքում:
1068.  $0,25$  կգ զանգվածով իդեալական զազն իզոբար ընդարձակվում է՝ կատարելով  $4,15 \cdot 10^4$  Զ աշխատանք: Քանի՞ աստիճանով կտաքանա այդ դեպքում զազը: Գազի մոլային զանգվածը՝  $2 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է:
1069. Որքա՞ն է  $0,001$  կգ զանգվածով ջրածնի սկզբնական ջերմաստիճանը (լստ Կելվինի) գլանում՝ առանց շփման սահող միտոցի տակ, եթե այն մինչև  $350$  Կ ջերմաստիճանը տաքացնելիս կատարում է  $415$  Զ աշխատանք: Ջրածնի մոլային զանգվածը  $2 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է:
1070. Գազի ծավալը  $0,1 \text{ մ}^3$ -ից իզոբար 3 անգամ մեծացնելիս կատարվեց  $200$  Զ աշխատանք: Որոշել զազի ճնշումը:
1071. Զուրը բափում է  $1400$  մ բարձրությունից: Որքանո՞վ է բարձրանում զրի ջերմաստիճանը, եթե նրա տաքացման համար ծախսվում է ծան-

բություն ուժի աշխատանքի 60 % -ը: Զրի տեսակարար ջերմունակությունը 4200 Ջ/կգ·Կ է:

1072. Նույն՝ 800 Ջ/Կ ջերմունակությունն ունեցող երկու մարմինների շփման հետևանքով 1ր հետո նրանցից յուրաքանչյուրի ջերմաստիճանը բարձրացավ 30 Կ-ով: Գտնել միջին հզորությունը շփման ժամանակը:
1073. 493 մ բարձրությունից ընկնող պողպատե բեկորի արագությունը գետնի մակերևույթի մոտ 50 մ/վ էր: Որքանո՞վ բարձրացավ բեկորի ջերմաստիճանը, եթե համարենք, որ օդի դիմադրության ուժի ողջ աշխատանքը ծախսվեց նրա տաքացման համար: Պողպատի տեսակարար ջերմունակությունը 460 Ջ/կգ·Կ է:
1074. Որքա՞ն ջերմաքանակ կպահանջվի 60 մ<sup>3</sup> ծավալով սենյակի օդը 10-ից մինչև 20 °C տաքացնելու համար: Օդի տեսակարար ջերմունակությունը 10<sup>3</sup> Ջ/կգ·Կ է, իսկ խտությունը՝ 1,29 կգ/մ<sup>3</sup>: Օդի զանգվածի փոփոխությունն անտեսել: Պատասխանը բազմապատկել 10<sup>-3</sup>-ով:
1075. Ի՞նչ զանգվածով ջուր կարելի է տաքացնել 10-ից մինչև 60 °C ջերմաստիճանը՝ ծախսելով 1050 կՎ էներգիա: Զրի տեսակարար ջերմունակությունը 4200 Ջ/կգ·Կ է:
1076. Ալյումինե մարմինը 80 Կ-ով տաքացնելիս նրա ներքին էներգիան ավելացավ 246,4 կՋ-ով: Որքա՞ն է մարմնի զանգվածը, եթե ալյումինի տեսակարար ջերմունակությունը 880 Ջ/կգ·Կ է: Պատասխանը բազմապատկել 10-ով:
1077. Քանի՞ աստիճանով կտաքանա 2 կգ զանգվածով ալյումինի կտորը, եթե դրան հաղորդեն այնքան ջերմաքանակ, որքան որ անհրաժեշտ է 880 գ ջուրը 0-ից մինչև 100 °C տաքացնելու համար: Ալյումինի տեսակարար ջերմունակություն 924 Ջ/կգ·Կ է, իսկ ջրինը՝ 4200 Ջ/կգ·Կ:
1078. Որքանո՞վ կնվազի 2,5 կգ զանգվածով պողպատե իրի ներքին էներգիան, եթե նրա ջերմաստիճանը 40 °C -ից իջնի մինչև 20 °C : Պողպատի տեսակարար ջերմունակությունը 500 Ջ/կգ·Կ է: Պատասխանը բազմապատկել 10<sup>-3</sup>-ով:

1079. Տաշտակի մեջ լցրին  $80^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի 20 կգ և  $5^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի 10 կգ ջուր: Որքա՞ն դարձավ խառնուրդի ջերմաստիճանը: Տաշտակի ջերմունակությունն անտեսել:
1080. Անորում լցված 5 կգ զանգվածով ջրի ջերմաստիճանը  $7^{\circ}\text{C}$  է: Եթե ջրի մեջ գցեցին  $1103^{\circ}\text{C}$  ջերմաստիճան ունեցող երկարեւ կշռաքար, որու ժամանակ անց դրանց ընդհանուր ջերմաստիճանը դարձավ  $53^{\circ}\text{C}$ : Որքա՞ն է կշռաքարի զանգվածը: Երկարի տեսակարար ջերմունակությունն  $460 \Omega/\text{կգ}\cdot\text{Կ}$ , ջրինը՝  $4200 \Omega/\text{կգ}\cdot\text{Կ}$ : Անորի ջերմունակությունն անտեսել:
1081. Որքա՞ն ջերմաքանակ է անհրաժեշտ հալման ջերմաստիճանում գտնվող 0,2 կգ զանգվածով մետաղի կտորը հալելու համար: Մետաղի հալման տեսակարար ջերմությունը  $2,5 \cdot 10^4 \Omega/\text{կգ}$  է:
1082.  $0^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի սառցի երկու կտորներ շփում են իրար: Որքա՞ն աշխատանք է կատարվում, եթե շփման հետևանքով հալվում է 1 գ սառույց: Սառցի հալման ջերմաստիճանը  $0^{\circ}\text{C}$  է, իսկ հալման տեսակարար ջերմությունը՝  $330 \text{ k}\Omega/\text{կգ}$ :
1083. Որքա՞ն էներգիա կպահանջվի 5 կգ զանգվածով  $0^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի սառույցը հալելու համար: Սառցի հալման տեսակարար ջերմությունը  $330 \cdot 10^3 \Omega/\text{կգ}$  է: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:
1084. Որքա՞ն էներգիա կպահանջվի 20 կգ  $100^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի ջուրը գոլորշու փոխարկելու համար: Ջրի շոգեգոյացման տեսակարար ջերմությունը  $2,3 \cdot 10^6 \Omega/\text{կգ}$  է: Պատասխանը բազմապատկել  $10^{-6}$ -ով:
1085. Որքա՞ն քարածուխ պետք է այրել, որպեսզի անջատվի  $1,8 \cdot 10^8 \Omega$  էներգիա: Քարածխի այրման տեսակարար ջերմությունը  $3 \cdot 10^7 \Omega/\text{կգ}$  է:
1086.  $23^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի ի՞նչ զանգվածով ջուր կարելի է տաքացնել մինչև  $50^{\circ}\text{C}$  ջերմաստիճանը՝ այրելով 21 գ սպիրտ, եթե ընդունենք, որ այրումից ստացված ամբողջ ջերմությունը ծախսվում է ջրի տաքացման համար: Ջրի տեսակարար ջերմունակությունը  $4200 \Omega/\text{կգ}\cdot\text{Կ}$  է, իսկ սպիրտի այրման տեսակարար ջերմությունը՝  $27 \cdot 10^6 \Omega/\text{կգ}$  է:

1087. Իդեալական գազը ա վիճակից անցել է ք վիճակին և այդ ընթացքում ստացել է  $500 \text{ kJ}$  ջերմաքանակ (նկ. 28): Որքանո՞վ է աճել գազի ներքին էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
1088. Ջերմային մեքենան մեկ ցիկլի ընթացքում ջեռուցչից ստանում է  $5700 \text{ J}$  ջերմաքանակ, որից  $3500 \text{ J}$ -ը տալիս է սառնարանին: Որքա՞ն է մեքենայի կատարած աշխատանքը:
1089. Ջերմային մեքենայի  $O\Phi\Phi$ -ն  $30 \%$  է: Որքա՞ն է մեքենայի կատարած օգտակար աշխատանքը, եթե այն ջեռուցչից ստացել է  $3 \cdot 10^4 \text{ J}$  ջերմաքանակ:
1090. Ջերմային շարժիչը ջեռուցչից յուրաքանչյուր վայրկյանում ստանում է  $7200 \text{ J}$  ջերմաքանակ և սառնարանին է տալիս  $6120 \text{ J}$ : Որքա՞ն է շարժիչի  $O\Phi\Phi$ -ն՝ տոլկումներով:
1091. Ջերմաշարժիչի  $O\Phi\Phi$ -ն  $20 \%$  է: Որքա՞ն կլինի  $O\Phi\Phi$ -ն արտահայտված տոլկումներով, եթե սառնարան վոլտանցվող ջերմաքանակը փոքրանա 2,5 անգամ:
1092. Իդեալական ջերմամեքենայի  $O\Phi\Phi$ -ն  $26 \%$  է, իսկ սառնարանի ջերմաստիճանը՝  $370 \text{ K}$ : Որքա՞ն է ջերմամեքենայի ջեռուցչի բացարձակ ջերմաստիճանը:
1093. Ջերմային մեքենայի  $O\Phi\Phi$ -ն  $20 \%$  է: Որքա՞ն է սառնարանին տված ջերմաքանակի հարաբերությունը մեքենայի կատարած աշխատանքին:
1094. 46 կՎտ հզորությամբ ներքին այրման շարժիչը 1 ժամում ծախսեց  $15 \text{ kJ}$  կերպսին, որի այրման տեսակարար ջերմությունը  $46 \cdot 10^6 \text{ J/kJ}$  է: Որքա՞ն է շարժիչի  $O\Phi\Phi$ -ն՝ տոլկումներով:
1095. 5 լ տարողությամբ փակ անորում կա  $0,05 \text{ g}$  ջրի հազեցած գոլորշի: Որքա՞ն է գոլորշու ջերմաստիճանն ըստ Ցելսիոսի, եթե  $11^\circ\text{C}$  -ում ջրի հազեցած գոլորշու խտությունը  $10 \text{ g/m}^3$  է:
1096.  $1 \text{ m}^3$  ծավալով փակ բալոնում կա  $0,009 \text{ kg/m}^3$  բացարձակ խոնավությամբ օդ: Որքա՞ն է ջրի գոլորշու մոլեկուլների թիվը բալոնում: Զրի



մոլային զանգվածը  $18 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ -ով:

1097. Օղում, որի հարաբերական խոնավությունը 40 % է, ջրի գոլորշիների մասնական ճնշումը 1,04 կՊա է: Որքա՞ն է նույն ջերմաստիճանում ջրի հագեցած գոլորշու ճնշումը:
1098. Որքա՞ն է ջրի հագեցած գոլորշու խտությունը  $100^{\circ}\text{C}$ -ում՝  $\text{գ}/\text{մ}^3$ -ով, եթե հագեցած գոլորշու ճնշումը 102164,7 Պա է, իսկ ջրի մոլային զանգվածը՝  $18 \cdot 10^{-3}$  կգ/մոլ:
1099. Որքա՞ն է օդի հարաբերական խոնավությունը տոկոսներով, եթե  $18^{\circ}\text{C}$ -ում ջրի գոլորշու մասնական ճնշումը 1,4462 կՊա է, իսկ նույն ջերմաստիճանում հագեցած գոլորշու ճնշումը՝ 2,066 կՊա:
1100. Պատրույգում ջուրը բարձրանում է մինչև 150 մմ: Որքա՞ն կրաքանակ սպիրտը նույն պատրույգում: Ջրի խտությունը 1000 կգ/մ<sup>3</sup> է, իսկ մակերևութային լարվածության գործակիցը՝ 0,075 Ն/մ: Սպիրտի խտությունը 800 կգ/մ<sup>3</sup> է, իսկ մակերևութային լարվածության գործակիցը՝ 0,022 Ն/մ: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
1101. Որքա՞ն կրաքանակ ջուրը 0,5 մմ շառավիղ ունեցող մազական խողվակում: Ջրի խտությունը 1000 կգ/մ<sup>3</sup> է, իսկ մակերևութային լարվածության գործակիցը՝ 0,075 Ն/մ: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
1102. 0,25 մ տրամագծով և 0,00712 կգ զանգվածով բարակ մետաղալարե օղակը հորիզոնական դիրքով հպվում է օճառաջրին: Ի՞նչ նվազագույն ուժ է անհրաժեշտ օղակն օճառաջրից պոկելու համար: Օճառաջրի մակերևութային լարվածության գործակիցը 0,04 Ն/մ է: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

### 8.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1103. Ուղղաձիգ դրված գլանում, որի հիմքի մակերեսը 1 դմ<sup>2</sup> է, առանց շիման սահող 10 կգ զանգվածով մխոցի տակ կա օդ: Օդի իզորար տաքացման ժամանակ մխոցը բարձրացավ 20 սմ-ով: Մթնոլորտային ճնշումը  $10^5$  Պա է:
- 1) Որքա՞ն է օդի ճնշումը գլանում: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:
  - 2) Որքա՞ն է օդի կատարած աշխատանքը գլանում:
1104. 63 Զ/Կ ջերմունակություն ունեցող կալորաչափի մեջ լցված 250 գ յուղի ջերմաստիճանը  $12^{\circ}\text{C}$  է: Յուղի մեջ 500 գ զանգված և  $96^{\circ}\text{C}$  ջերմաստիճան ունեցող պղնձե մարմին իջեցնելուց հետո հաստատվեց  $33^{\circ}\text{C}$  ընդհանուր ջերմաստիճան:
- 1) Որքանո՞վ է փոխվում կալորաչափի ներքին էներգիան ջերմային հավասարակշռություն հաստատվելու ընթացքում:
  - 2) Որքա՞ն է յուղի տեսակարար ջերմունակությունն այս փորձի տվյալներով, եթե պղնձի տեսակարար ջերմունակությունը 380 Զ/կգ-Կ է:
1105. 2 կգ զանգվածով մարմինը սահում է թեր հարթության գազաքից մինչև ստորոտ: Այդ ընթացքում մարմնի ջերմաստիճանը մնձանում է  $0,2$  Կ-ով: Համարել, որ մարմնի սկզբնական մեխանիկական էներգիայի 40 %-ը ծախսվել է նրա տաքացման համար: Մարմնի տեսակարար ջերմունակությունը  $1200$  Զ/կգ-Կ է:
- 1) Որքանո՞վ է փոխվել մարմնի ներքին էներգիան:
  - 2) Որքա՞ն է թեր հարթության բարձրությունը:
1106.  $0,05$  կգ ջուրը  $1200$  Վտ հզրությամբ թեյնիկով անհրաժեշտ է տաքացնել  $20^{\circ}\text{C}$ -ից մինչև  $60^{\circ}\text{C}$  ջերմաստիճանը: Զրի տեսակարար ջերմունակությունը  $4200$  Զ/կգ-Կ է: Համարել, որ անջատված ողջ ջերմաքանակը ծախսվում է զրի տաքացման համար:
- 1) Որքա՞ն ջերմաքանակ է անհրաժեշտ ջուրը տաքացնելու համար:
  - 2) Որքա՞ն ժամանակ կպահանջվի զրի տաքացման համար:
1107. Թերմոսում, որի ջերմունակությունը կարելի է անտեսել, լցված է  $7^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի  $0,1$  կգ ջուր: Եթե ջրի մեջ իջեցրին  $127^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի  $42$  գ զանգվածով մարմին, թերմոսում հաստատվեց  $27^{\circ}\text{C}$  ջերմաստիճան: Զրի տեսակարար ջերմունակությունը  $4200$  Զ/կգ-Կ է:
- 1) Որքա՞ն է զրի ներքին էներգիայի փոփոխությունը:
  - 2) Որքա՞ն է մարմնի նյութի տեսակարար ջերմունակությունը:

1108. 100 կգ զանգվածով ջուրը  $5^{\circ}\text{C}$ -ից մինչև  $30^{\circ}\text{C}$  ջերմաստիճանը տաքացնում են՝ նրա մեջ մղելով  $100^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի ջրի գոլորշի: Ջրի տեսակարար ջերմունակությունը  $4200 \frac{\text{Վ/կգ}}{\text{Կ}}$  է, իսկ շոգեգոյացման տեսակարար ջերմությունը՝  $2,206 \cdot 10^6 \frac{\text{Վ/կգ}}$ :
- 1) Որքա՞ն ջերմաքանակ է անհրաժեշտ ջուրը տաքացնելու համար: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
  - 2) Ի՞նչ զանգվածով գոլորշի է ծախսվել ջուրը տաքացնելու համար: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
1109. 2 կգ զանգվածով պղնձի կտորը տաքացնելու և կիսով չափ հալելու համար պահանջվում է  $9,4 \cdot 10^5 \frac{\text{Վ}}{\text{կգ}}$  ջերմաքանակ: Պղնձի տեսակարար ջերմունակությունը  $380 \frac{\text{Վ/կգ}}{\text{Կ}}$  է, հալման ջերմաստիճանը՝  $1083^{\circ}\text{C}$ , իսկ հալման տեսակարար ջերմությունը՝  $180 \frac{\text{կՎ}}{\text{կգ}}$ :
- 1) Ի՞նչ ջերմաքանակ է ծախսվում հալման ջերմաստիճանում պղնձի կտորի կեսի հալման համար: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:
  - 2) Որքա՞ն է պղնձի կտորի սկզբնական ջերմաստիճանը Ցելսիուսի սանդղակով:
1110. 290 գ զանգվածով օդի իզորար տաքացնում են  $20 \frac{\text{Կ}}{\text{ով}}$  նրան հաղորդելով  $5810 \frac{\text{Վ}}{\text{կգ}}$  ջերմաքանակ: Օդի մոլային զանգվածը  $0,029 \frac{\text{կգ}}{\text{մոլ}}$  է:
- 1) Որքա՞ն աշխատանք է կատարել օդի իզորար ընդարձակվելիս:
  - 2) Որքանո՞վ է փոխվել օդի ներքին էներգիան:
1111. Մեկ ցիկլի ընթացքում ջերմային մեքենայի՝ սառնարանին տված ջերմաքանակը  $2,7 \frac{\text{կՎ}}{\text{Կ}}$  է, իսկ մեքենայի  $\text{ՕԳԳ-ն}$   $25\%$ :
- 1) Որքա՞ն ջերմաքանակ է ստանում մեքենան ջեռուցչից մեկ ցիկլի ընթացքում:
  - 2) Որքա՞ն է մեկ ցիկլի ընթացքում մեքենայի կատարած աշխատանքը:
1112. Իրեալական ջերմային մեքենան, որի սառնարանի ջերմաստիճանը  $7^{\circ}\text{C}$  է, ջեռուցչից ստացած յուրաքանչյուր  $1000 \frac{\text{Վ}}{\text{կգ}}$  էներգիայի հաշվին կատարում է  $300 \frac{\text{Վ}}{\text{կգ}}$  աշխատանք:
- 1) Որքա՞ն է մեքենայի  $\text{ՕԳԳ-ն}$ ՝ տոկոսներով:
  - 2) Որքա՞ն է մեքենայի ջեռուցչի ջերմաստիճանը (ըստ  $\text{Կելվինի}$  սանդղակի):
1113. Մեկ ցիկլի ընթացքում  $270 \text{Կ}$  ջերմաստիճանի սառնարանին իդեալական ջերմային մեքենայի տված ջերմաքանակի հարաբերությունը կատարված օգտակար աշխատանքին  $3$  է:

- 1) Որքա՞ն է մեքենայի ՕԳ-Գ-ն՝ տուկոսներով:
  - 2) Որքա՞ն է ջեռուցչի ջերմաստիճանը (Կելվինի սանդղակով):
1114. Միմյանց են խառնել միևնույն ջերմաստիճանի օդի երկու բաժինները: Նրանցից մեկի հարաբերական խոնավությունը 20 % էր, ծավալը՝ 1 մ<sup>3</sup>, իսկ մյուսինը՝ համապատասխանաբար՝ 30 % և 4 մ<sup>3</sup>: Խառնուրդի ծավալը 5 մ<sup>3</sup> է:
- 1) Մեծ ծավալի ջրի գոլորշու զանգվածը քանի՞ անգամ էր մեծ փոքր ծավալի գոլորշու զանգվածից:
  - 2) Որքա՞ն է խառնուրդի հարաբերական խոնավությունը:
1115. 12 °C ջերմաստիճանի օդի հարաբերական խոնավությունը 75 % է: Օդում գոլորշու քանակությունը մնում է անփոփոխ, իսկ ջերմաստիճանը բարձրանում է մինչև 15 °C: Ջրի հազեցած գոլորշու ճնշումը 12 °C ջերմաստիճանում 1,4 կՊա է, իսկ 15 °C ջերմաստիճանում 1,75 կՊա:
- 1) Որքա՞ն է օդում ջրի գոլորշու մասնական ճնշումը 12 °C-ում:
  - 2) Որքանո՞վ է նվազում օդի հարաբերական խոնավությունը ջերմաստիճանը բարձրանալիս:
1116. Մաղով, որի ցանցը պատրաստված է 1 մմ տրամագծով կլոր անցքերով և ջուրը թրջող բաղանքից, ջուր են տեղափոխում: Մաղի անցքերի միջև հեռավորությունը շատ մեծ է անցքի տրամագծից: Ջրի մակերևութային լարվածության գործակիցը 0,07 Ն/մ է, խտությունը՝ 1000 կգ/մ<sup>3</sup>:
- 1) Որքա՞ն է մաղից բափող ջրի կաթիլներից յուրաքանչյուրի զանգվածը: Պատասխանը բազմապատկել  $10^8$ -ով:
  - 2) Ի՞նչ առավելագույն հաստությանը ջրի շերտ կմնա մաղում: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
1117. 3 մ երկարությամբ և 1 մմ<sup>2</sup> հատույքի մակերեսով պողպատե լարի ծայրերին կիրառված են ձգող ուժեր՝ յուրաքանչյուրը 200 Ն: Պողպատի առաձգականության գործակիցն ընդունել  $2 \cdot 10^{11}$  Պա:
- 1) Որքա՞ն է մեխանիկական լարումը պողպատե լարում: Պատասխանը բազմապատկել  $10^8$ -ով:
  - 2) Որքա՞ն է պողպատե լարի բացարձակ երկարացումը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

## 8.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


1118. Որոշակի պրոցեսում միատում իդեալական գազի ճնշումը փոխվում է բացարձակ ջերմաստիճանի քառակուսուն համեմատական: Եթե գազի ծավալն աճում է 20 լ-ից մինչև 60 լ, նրա ներքին էներգիան փոքրանում է 30 Ջ-ով:
- 1) Քանի՞ անգամ է նվազում գազի բացարձակ ջերմաստիճանն այդ դեպքում:
  - 2) Քանի՞ անգամ է նվազում գազի ճնշումն այդ դեպքում:
  - 3) Որքա՞ն է գազի ճնշումը, եթե նրա ծավալը 20 լ է:
1119. 10 կգ զանգված ունեցող մարմինն առանց սկզբնական արագության ընկալ 25 մ քարձորթյունից: Օդի դիմադրությունն անտեսել:
- 1) Որքա՞ն է մարմնի կինետիկ էներգիան գետին հասնելիս:
  - 2) Որքանո՞վ կմեծանա մարմնի ներքին էներգիան գետնին հարվածելիս, եթե մարմնի տաքացման համար ծախսվել է նրա կինետիկ էներգիայի 30 %-ը:
  - 3) Որքանո՞վ կբարձրանա մարմնի ջերմաստիճանը, եթե նրա լրիվ մեխանիկական էներգիան փոխարկվի ներքին էներգիայի: Մարմնի տեսակարար ջերմունակությունը 125 Ջ/կգ.Կ է:
1120. Երկու միանման անոքներից մեկի մեջ կա 0,1 կգ 45 °C ջերմաստիճանի ջուր, մյուսում՝ 0,5 կգ 24 °C ջերմաստիճանի ջուր: Անոքների մեջ լցնում են միևնույն քանակի -23 °C ջերմաստիճանի սնդիկ: Զերմային հավասարակշռություն հաստատվելուց հետո երկու անոքներում էլ ջերմաստիճանը դարձում է 17 °C: Զդի տեսակարար ջերմունակությունը 4200 Ջ/կգ.Կ է, սնդիկինը՝ 140 Ջ/կգ.Կ:
- 1) Որքա՞ն է անոքներից յուրաքանչյուրի ջերմունակությունը:
  - 2) Որքանո՞վ է փոխավել ջրի մեջ լցված սնդիկի ներքին էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{-1}$ -ով:
  - 3) Որքա՞ն սնդիկ է լցվել անոքներից յուրաքանչյուրի մեջ: Պատասխանը բազմապատկել 10-ով:
1121. 150 գ ընդհանուր զանգված և 100 °C ջերմաստիճան ունեցող կապարի և ալյումինի խարտուքը լցրել են 15 °C ջերմաստիճան և 230 գ զանգվածով ջուր պարունակող կալորաչափի մեջ: Հաստատվել է 20 °C վերջնական ջերմաստիճան: Կալորաչափի ջերմունակությունը 42 Ջ/Կ է, կապարի տեսակարար ջերմունակությունը 130 Ջ/կգ.Կ, ալյումինինը՝ 880 Ջ/կգ.Կ, իսկ ջրինը՝ 4200 Ջ/կգ.Կ:

- 1) Որքանո՞վ է փոխվել ջրի ներքին էներգիան խարտուքը լցնելուց հետո:
  - 2) Որքանո՞վ է փոխվել կալորաչափի ներքին էներգիան խարտուքը լցնելուց հետո:
  - 3) Որքա՞ն է եղել ալյումինի զանգվածը խարտուքում: Պատասխանը բազմապատկել 10<sup>3</sup>-ով:
1122. Սալիք 5 կգ զանգվածով ջրային լուծույթը 10 <sup>0</sup>C ջերմաստիճանից մինչև 20 <sup>0</sup>C ջերմաստիճանը տաքացնելու համար հաղորդել են 174 կԶ ջերմաքանակ: Սալիք տեսակարար ջերմունակությունը 2400 Օ/կգ·Կ է, շոգեգոյացման տեսակարար ջերմությունը՝ 0,85·10<sup>6</sup> Օ/կգ, իսկ եռման ջերմաստիճանը՝ 80 <sup>0</sup>C, ջրինը՝ համապատասխանաբար՝ 4200 Օ/կգ·Կ, 2,3·10<sup>6</sup> Օ/կգ, 100 <sup>0</sup>C:
- 1) Որքա՞ն է լուծույթի տեսակարար ջերմունակությունը:
  - 2) Քանի՞ կիլոգրամ սպիրտ կա խառնուրդում:
  - 3) Որքա՞ն ջերմաքանակ է անհրաժեշտ 10 <sup>0</sup>C ջերմաստիճանի լուծույթն ամրողությամբ գոլորշու փոխարկելու համար: Պատասխանը բազմապատկել 10<sup>-4</sup>-ով:
1123. Վառարանի վրա տաքացնում են -20 <sup>0</sup>C ջերմաստիճանի 5 կգ սառույց: Սառցի հալման ջերմաստիճանը 0 <sup>0</sup>C է, տեսակարար ջերմունակությունը՝ 2100 Օ/կգ·Կ, հալման տեսակարար ջերմությունը՝ 330 կԶ/կգ, իսկ ջրի տեսակարար ջերմունակությունը՝ 4200 Օ/կգ·Կ:
- 1) Ի՞նչ ջերմաքանակ պետք է ստանա սառույցը, որպեսզի տաքանա մինչև հալման ջերմաստիճանը: Պատասխանը բազմապատկել 10<sup>-4</sup>-ով:
  - 2) Ի՞նչ նվազագույն ջերմաքանակ պետք է ստանա -20 <sup>0</sup>C ջերմաստիճանի սառույցը, որպեսզի այն ամրողությամբ հալվի: Պատասխանը բազմապատկել 10<sup>-4</sup> – ով:
  - 3) Ի՞նչ ջերմաքանակ պետք է ստանա -20 <sup>0</sup>C ջերմաստիճանի սառույցը, որպեսզի այն ամրողությամբ հալվի և ստացված ջուրը տաքանա մինչև 15 <sup>0</sup>C: Պատասխանը բազմապատկել 10<sup>-3</sup>-ով:
1124. Անհրաժեշտ է -15 <sup>0</sup>C ջերմաստիճանի 0,02 կգ զանգվածով սառույցը վերածել 100 <sup>0</sup>C ջերմաստիճանի գոլորշու: Սառցի հալման ջերմաստիճանը 0 <sup>0</sup>C է, տեսակարար ջերմունակությունը՝ 2100 Օ/կգ·Կ, հալման տեսակարար ջերմությունը՝ 330 կԶ/կգ, ջրի տեսակարար ջերմունակությունը՝ 4200 Օ/կգ·Կ, եռման ջերմաստիճանը 100 <sup>0</sup>C, իսկ շոգեգոյացման տեսակարար ջերմությունը՝ 2,3·10<sup>6</sup> Օ/կգ:

- 1) Որոշել այն ջերմաքանակը, որն անհրաժեշտ է սառույցը մինչև հալման ջերմաստիճան տաքացնելու համար:
- 2) Որոշել այն ջերմաքանակը, որն անհրաժեշտ է եռման ջերմաստիճանում ջուրը գոլորշու փոխարկելու համար: Պատասխանը բազմապատկել  $10^{-1}$ -ով:
- 3) Որոշել այն ջերմաքանակը, որն անհրաժեշտ է ամբողջ պրոցեսն իրականացնելու համար: Պատասխանը բազմապատկել  $10^{-1}$ -ով:

**1125. 29-րդ նկարում պատկերված է միատոմ իդեալական գազի վիճակի փոփոխության պրոցեսը նկարագրող դիագրամը, որտեղ  $P_0 = 0,2$  ԿՊա,  $V_0 = 1$  լ:**


- 1) Ի՞նչ աշխատանք է կատարել գազն այդ պրոցեսի ընթացքում:
- 2) Որքա՞ն է գազի ներքին էներգիայի փոփոխությունը:
- 3) Ի՞նչ ջերմաքանակ է հաղորդվել գազին:



Նկ. 29

**1126. 2 մոլ իդեալական գազը կատարում է աշխատանք երկու իզոխորից և երկու իզոբարից բաղկացած փակ ցիկլով (նկ. 30): 1 վիճակում գազի ջերմաստիճանը  $T_1 = 300$  Կ է, 2 և 4 վիճակներում  $T_2 = T_4 = 600$  Կ:**

- 1) Որքա՞ն է գազի ջերմաստիճանը 3 վիճակում:
- 2) Որքա՞ն աշխատանք է կատարում գազն իզոբար ընդարձակման ընթացքում:
- 3) Որքա՞ն աշխատանք է կատարում գազը մեկ ցիկլի ընթացքում:




Նկ. 30

**1127. 83 մ<sup>3</sup> ծավալով սենյակում ջերմաստիճանը  $17^{\circ}\text{C}$ -ից բարձրացել է մինչև  $21^{\circ}\text{C}$ , որի հետևանքով սենյակի հարաբերական խոնավությունը փոփովել է  $43,5\%$ -ից մինչև  $58,8\%$ : Զրի հազեցած գոլորշու ճնշումը  $17^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում  $1,94$  կՊա է, իսկ  $21^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում՝  $2,49$  կՊա: Զրի մոլային զանգվածը  $18 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է:**

- 1) Որքա՞ն էր զրի գոլորշու մասնական ճնշումը  $17^{\circ}\text{C}$ -ում: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:

- 2) Որքա՞նով է փոխվել գոլորշու քանակը սենյակում (արտահայտված մոլերով): Պատասխանը բազմապատկել 10-ով:
- 3) Որքանո՞վ է աճել ջրի գոլորշու զանգվածը սենյակում: Պատասխանը բազմապատկել  $10^4$ -ով:

**1128.** 31-րդ նկարում պատկերված է միատոմ իդեալական գազի վիճակի փոփոխությունը նկարագրող դիագրամը: Խզդիսոր սառեցման ժամանակ գազի ճնշումը փոքրանում է երեք անգամ, այնուհետև 2 վիճակից գազն իզոբար սեղմվում է մինչև 3 վիճակը, որից հետո վերադարձն սկզբական վիճակին կատարվում է այնպիսի ալրոցեսով, որ գազի ճնշումը ծավալից կախված աճում է գծային օրենքով:



Նկ. 31

- 1) Քանի՞ անգամ է 1 վիճակում գազի ջերմաստիճանը մեծ 3 վիճակում գազի ջերմաստիճանից:
- 2) Որքա՞ն է 3 վիճակից 1 վիճակին անցման ժամանակ գազի կատարած աշխատանքի և իզոբար սեղման ժամանակ գազի կատարած աշխատանքի հարաբերության մոդուլը:
- 3) Մեկ ցիկլի ընթացքում գազին հաղորդված ջերմաքանակը քանի՞ անգամ է մեծ գազի կատարած աշխատանքից:

**1129.** Ջերմամեկուսիչ պատերով երկու ծայրերից փակ հորիզոնական զլանաձև անօքում առանց շփման սահող բարակ միտոցը  $2 \cdot 10^4 \text{ N/m}$  կոշտությամբ զապանակով ամրացված է անորի աջ հիմքին: Չղեփորմացված զապանակի երկարությունը հավասար է անորի երկարությանը: Միտոցից ծախս մատում գտնվում է միատոմ գազ, իսկ աջում՝ վակուում է: Սկզբում միտոցի հեռավորությունը անորի ծախս հիմքից 3 ամ էր: Գազին, շատ դանդաղ, որոշ ջերմաքանակ հաղորդելուց հետո միտոցը տեղաշարժվեց դեպի աջ ևս 3 ամ-ով: Միտոցի հնարավոր տատանումներն անտեսել:


- 1) Քանի՞ անգամ մեծացավ գազի ջերմաստիճանը նրան ջերմաքանակ հաղորդելուց հետո:
- 2) Որքանո՞վ մեծացավ գազի ներքին էներգիան ջերմաքանակ հաղորդելուց հետո:
- 3) Որքա՞ն ջերմաքանակ հաղորդվեց գազին:

## 8.5. ՉՈՐՍ ՊԱՏԱԽԱՆԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1130. Զերմանեկուսացված անոքում կա  $10^{\circ}\text{C}$  զերմաստիճանի  $0,93$  կգ զանգվածով ջուր: Նրա մեջ ավելացնում են  $-20^{\circ}\text{C}$ -ի  $0,6$  կգ զանգվածով սառույց: Սառույցի համան զերմաստիճանը  $0^{\circ}\text{C}$  է, տեսակարար զերմունակությունը՝  $2100 \frac{\Omega}{\text{կգ.Կ}}$ , հալման տեսակարար զերմությունը՝  $330 \frac{\Omega}{\text{կգ.Կ}}$ , իսկ ջրի տեսակարար զերմունակությունը՝  $4200 \frac{\Omega}{\text{կգ.Կ}}$ :


- 1) Որքա՞ն զերմաքանակ է կորցնում ջուրը մինչև  $0^{\circ}\text{C}$  հովանալը: Պատասխանը բազմապատկել  $10^{-1}$ -ով:
- 2) Որքա՞ն զերմաքանակ է անհրաժեշտ ամբողջ սառույցը հալելու համար: Պատասխանը բազմապատկել  $10^{-2}$ -ով:
- 3) Որքա՞ն է անոքում հաստատված զերմաստիճանը:
- 4) Որքա՞ն է անոքում ջրի զանգվածը զերմային հավասարակշռությունից հետո: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

1131. 2 մոլ իդեալական գազը կատարում է աշխատանք փակ ցիկլով, որը բաղկացած է իզոբարից և երկու տեղամասերից, որտեղ ճնշումը ծավալից կախված փոխվում է գծային օրենքով (նկ. 32): Իզոբարը ընդարձակման ժամանակ գազը կատարում է  $9960 \Omega$  աշխատանք, իսկ նրա զերմաստիճանը բարձրանում է  $4$  անգամ: 1 և 3 վիճակներում գազի զերմաստիճանը նույնն է, իսկ 2 և 3 վիճակները միացնող ուղիղն անցնում է  $PV$  դիագրամի սկզբնակետով:



- 1) Որքա՞ն է գազի զերմաստիճանը 1 վիճակում:
- 2) Քանի՞ անգամ է գազի ծավալը 3 վիճակում մեծ 1 վիճակի գազի ծավալից:
- 3) Որքա՞ն է գազի կատարած աշխատանքի մոդուլը 2 վիճակից 3-ին անցնելիս:
- 4) Որքա՞ն աշխատանք է կատարում գազը մեկ ցիկլի ընթացքում:

1132. 33-րդ նկարում պատկերված է 1 մոլ միատու իդեալական գազի վիճակի փոփոխությունը նկարագրող դիագրամը: Հայտնի է, որ 1 վիճակում զերմաստիճանը  $200 \text{ Կ}$  է, 2-ում՝  $400 \text{ Կ}$ , իսկ 3-4 պլոտեսում գազին հա-



**Պորդվել է 2000 Զ ջերմաքանակ:**

- 1) Քանի՞ անգամ է գազի ճնշումը 2 վիճակում մեծ 1 վիճակի գազի ճնշումից:
- 2) Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը 1-2 պրոցեսում:
- 3) Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը 3-4 պրոցեսում:
- 4) Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը մեկ ցիկլի ընթացքում:


### III. ԷԼԵԿՏՐԱԴԻՆԱՄԻԿԱ

#### 9. ԷԼԵԿՏՐԱՍԱՏԻԿԱ

##### 9.1. ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


1133. Ինչպե՞ս են փոխազդում էլեկտրաչեղոք մետաղի ձողը և նրա մոտ տեղադրված լիցքավորված գունդը:

- 1) Իրար ձգում են:
- 2) Իրար վանում են:
- 3) Չեն փոխազդում:
- 4) Բոլոր պատասխանները հնարավոր են:




1134. Քացասական լիցքավորված հորիզոնական անվերջ հարթությունից մետաքս քելով կախված է քացասական լիցքավորված գնդիկը: Նշեք գնդիկի հավասարակշռության պայմանը, եթե  $mg$  -ն գնդիկի ծանրության ուժի մոդուլն է,  $F$  -ը՝ էլեկտրական փոխազդեցության ուժի մոդուլը,  $T$  -ը՝ քելի լարման ուժի մոդուլը:

- 1)  $mg + T - F = 0$ :
- 2)  $mg - T + F = 0$ :
- 3)  $mg + T + F = 0$ :
- 4)  $mg - T - F = 0$ :



1135. Քացասական լիցքավորված  $A$  ձողը մոտեցնում են չլիցքավորված էլեկտրացույցի  $B$  գնդիկին՝ առանց հաելու նրան: Ի՞նչ լիցք կունենան էլեկտրացույցի քերթիկները:

- 1) Դրական:
- 2) Քացասական:
- 3) Չեն լիցքավորվի:
- 4) Ազ քերթիկը՝ դրական, ձախը՝ քացասական:



1136. Ի՞նչ միավորով է չափվում լիցքը միավորների ՄՀ-ում:

- 1) 1Օմ:
- 2) 1Վ :
- 3) 1Կլ:
- 4) 1Ս:

1137. Ո՞րն է ճիշտ պնդումը:

- 1) Մարմնի լիցքը կընդունի միայն դրական արժեքներ:
- 2) Էլեկտրական լիցքը կընդունի միայն քացասական արժեքներ:

- 3) Մարմնի լիցքը կընդունի միայն ընդհատ դրական կամ բացասական արժեքներ:
- 4) Մարմնի լիցքը կընդունի ցանկացած դրական կամ բացասական արժեք:

**1138.** Մարմնում էլեկտրոնների թիվը  $N_e$  է, պրոտոններինը՝  $N_p$ , իսկ նեյտրոններինը՝  $N_n$ :  $\Omega^{\circ}$  ն է ճիշտ պնդումը, եթե մարմինը լիցքավորված է դրականապես:

- 1)  $N_e > N_p$ :
- 2)  $N_e < N_p$ :
- 3)  $N_e = N_p$ :
- 4)  $N_e > N_n$ :

**1139.** Ե՞րբ է չեղոք ասոմք դառնում դրական իոն:

- 1) Երբ կորցնում է էլեկտրոն:
- 2) Երբ կորցնում է պրոտոն:
- 3) Երբ կորցնում է նեյտրոն:
- 4) Երբ նրան միանում է էլեկտրոն:

**1140.**  $\Omega^{\circ}$  ն է նախադասության ճիշտ շարունակոթյունը:

Եթե չեղոք ասոմից պոկվի էլեկտրոն, ապա այն ...

- 1) կդառնա բացասական իոն:
- 2) կդառնա դրական իոն:
- 3) կմնա էլեկտրաչեղոք:
- 4) կլիցքավորվի բացասական լիցքով:

**1141.** Թվարկված ո՞ր մասնիկներն ունեն դրական լիցք:

- 1) Էլեկտրոնը:
- 2) Նեյտրոնը:
- 3) Պրոտոնը:
- 4) Էլեկտրոնը և պրոտոնը:

**1142.** Բրդով շփելիս պատսմասայն քանոնը լիցքավորվում է բացասական լիցքով: Ինչո՞վ է դա պայմանավորված:

- 1) Էլեկտրոնները բրդից անցնում են քանոնին:
- 2) Պրոտոնները քանոնից անցնում են բրդին:
- 3) Էլեկտրոնները քանոնից անցնում են բրդին:
- 4) Պրոտոնները բրդից անցնում են քանոնին:

**1143.** Ապակե ձողը շփեցին մետաքսով: Որքա՞ն է ապակու և մետաքսի վրա առաջացած լիցքերի հարաբերությունը, եթե սկզբում դրանք էլեկտրաչեղոք եին:

- 1) -1:
- 3) 0:

2) 1:                  4) 2:

1144. Ո՞րն է էլեկտրական լիցքի պահպանման օրենքի ճիշտ ձևակերպումը:

- 1) Մարմնի էլեկտրական լիցքը պահպանվում է:
- 2) Մարմինների փակ համակարգում դրական և բացասական լիցքավորված մասնիկների թիվը մնում է հաստատուն:
- 3) Փակ համակարգում տեղի ունեցող բոլոր պրոցեսներում համակարգի գումարային լիցքը պահպանվում է:
- 4) Բոլոր պատասխանները ճիշտ են:

1145. Եթե  $+5e$  լիցք կրող կարիլը տրոհենք երկու մասի այնպես, որ նրանցից մեկի լիցքը լինի  $-2e$ , ապա որքա՞ն կլինի մյուսի լիցքը:

- 1)  $+3e$ :                  3)  $-4e$ :
- 2)  $-2e$ :                  4)  $+7e$ :

1146. Ո՞րն է Կոլոնի օրենքի ճիշտ ձևակերպումը:

- 1) Երկու շարժվող լիցքերի փոխազդեցության ուժը վակուումում ուղիղ համեմատական է լիցքերի մոդուլների արտադրյալին և հակադարձ համեմատական նրանց հեռավորության քառակուսուն:
- 2) Երկու անշարժ կետային լիցքերի փոխազդեցության ուժը վակուումում ուղիղ համեմատական է լիցքերի մոդուլների արտադրյալին, հակադարձ համեմատական նրանց հեռավորության քառակուսուն և ուղղված է լիցքերը միացնող ուղղի երկայնքով:
- 3) Երկու անշարժ կետային լիցքերի փոխազդեցության ուժը վակուումում ուղիղ համեմատական է լիցքերի մոդուլների արտադրյալին, հակադարձ համեմատական նրանց հեռավորությանը և ուղղված է լիցքերը միացնող ուղղի երկայնքով:
- 4) Բոլոր պատասխանները ճիշտ են:

1147. Ո՞ր քանածեռվ է արտահայտվում Կոլոնի օրենքը:

- |                              |  |
|------------------------------|--|
| 1) $F = k \frac{ q }{r}$ :   | 3) $F = k \frac{ q_1  \cdot  q_2 }{r^2}$ : |
| 2) $F = k \frac{ q }{r^2}$ : | 4) $F = k \frac{ q_1  \cdot  q_2 }{r}$ :   |


1148. Ի՞նչ քվային արժեք և չափայնություն ունի Կոլոնի օրենքում համեմատականության կ գործակիցը:

- |   |   |
|---|---|
| 1) $9 \cdot 10^{-9} \text{ Нм}^2/\text{Кл}^2$ : | 3) $8,85 \cdot 10^{-12} \text{ Кл}^2/\text{Нм}^2$ : |
| 2) $9 \cdot 10^{-9} \text{ Кл}^2/\text{Нм}^2$ : | 4) $8,85 \cdot 10^{12} \text{ Нм}^2/\text{Кл}^2$ :  |

1149. Փորձով չափում են որոշակի հեռավորությամբ մոդուլով հավասար երկու անշարժ կետային լիցքերի փոխազդեցության ուժի մոդուլը: Առաջին դեպքում այդ լիցքերը նույնանուն են, իսկ երկրորդ դեպքում՝ տարանուն: Ո՞ր դեպքում ուժն ավելի մեծ կլինի:

- 1) Առաջին դեպքում:
- 2) Երկրորդ դեպքում:
- 3) Երկու դեպքում էլ նույնն է:
- 4) Ավելի մեծ կլինի, եթե երկու լիցքերն ել դրական են:

1150. Ո՞ր նկարում են ճիշտ պատկերված  $+q$  և  $+2q$  դրական լիցքերը: Փոխազդեցության ուժերը:



- 1) w:
- 2) p:
- 3) q:
- 4) r:

1151. Երկու անշարժ կետային լիցքերի էլեկտրաստատիկ փոխազդեցության ուժի մոդուլն  $F$  է: Որքա՞ն կլինի այն, եթե լիցքերից մեկի մոդուլը մեծացնենք 2 անգամ, իսկ մյուսինը փոքրացնենք 4 անգամ:

- 1)  $0:$
- 2)  $\frac{F}{2}:$
- 3)  $2F:$
- 4)  $8F:$

1152. Երկու միատեսակ անշարժ գնդեր լիցքավորված են նույնանուն լիցքերով, և դրանցից մեկի լիցքի մոդուլը  $n$  անգամ մեծ է մյուսինից: Գնդերը հավեցին իրար և հեռացրին նույն հեռավորությամբ: Քանի՞ անգամ մեծացավ լիցքերի փոխազդեցության ուժը:

- 1)  $n$  անգամ:
- 2)  $n+1$  անգամ:
- 3)  $\frac{(n+1)^2}{4n}$  անգամ:
- 4)  $\frac{(n-1)^2}{4n}$  անգամ:

1153. Քանի՞ անգամ կփոքրանա երկու անշարժ կետային լիցքերի էլեկտրաստատիկ փոխազդեցության ուժի մոդուլը, եթե լիցքերից մեկի մոդուլը նվազի իր արժեքի  $1/5$ -ի չափով:

- 1)  $5:$
- 3)  $1,5:$

2) 2:

4) 1,25:

1154. Ինչպե՞ս պետք է փոխել երկու կետային լիցքերի միջև հեռավորությունը, որպեսզի նրանցից յուրաքանչյուրի լիցքը 4 անգամ մեծացնելիս փոխազդեցության ուժը չփոխվի:

- 1) Պետք է մեծացնել 2 անգամ:
- 2) Պետք է մեծացնել 4 անգամ:
- 3) Պետք է փոքրացնել 2 անգամ:
- 4) Պետք է փոքրացնել 4 անգամ:


1155.  $q$  կետային դրական լիցքը տեղադրված է տարածուն լիցքավորված գմղերի կենտրոնները միացնող ուղղի վրա: Ի՞նչ ուղղություն ունի այդ լիցքի վրա ազդող կուլոնյան ուժերի համազորը:

- 1)  $\uparrow$
- 2)  $\leftarrow$
- 3)  $\downarrow$
- 4)  $\rightarrow$



1156. Որքա՞ն է նկարում պատկերված  $q$  և  $-q$  կետային լիցքերի՝  $q_0$  կետային լիցքի վրա ազդող ուժերի համազորի մոդուլը:

- 1)  $F = k \frac{q^2}{r^2} :$
- 2)  $F = k \frac{|q||q_0|}{r^2} :$
- 3)  $F = k \frac{2|q||q_0|}{r^2} :$
- 4)  $F = 0 :$




1157. Վակուումում երկու կետային լիցքերի միջև հեռավորությունը փոքրացնում են  $\sqrt{2}$  անգամ: Ի՞նչ դիէլեկտրական քափանցելիությամբ հեղուկի մեջ պետք է տեղադրել այդ լիցքերը, որպեսզի դրանց փոխազդեցության ուժի մոդուլը մնա անփոփոխ:

- 1) 1:
- 2)  $\sqrt{2}/2 :$
- 3) 2:
- 4)  $\sqrt{2} :$


1158. Ինչպե՞ս է ուղղված հավասարակողմ եռանկյան գագաթին տեղադրված  $+q_0$  դրական լիցքի վրա մյուս գագաթներին տեղադրված  $+q$  և  $-q$  լիցքերի ազդող ուժերի համազորը:

- 1)  $\rightarrow$
- 2)  $\leftarrow$
- 3)  $\downarrow$
- 4)  $\uparrow$




1159. Նկարում պատկերված  $q_1 = |q|$  և  $q_2 = -|q|$  լիցքերն ամրացված են A և B կետերում: Լիցքերը միացնող ուղղի ո՞ր տիրույթում  $q_3 < 0$  լիցքը կարող է գտնվել հավասարակշռության մեջ:

- 1) a տիրույթում:
- 2) b տիրույթում:
- 3) c տիրույթում:
- 4) Ωչ մի տիրույթում:




1160. Նկարում պատկերված  $q_1 = |q|$  և  $q_2 = -2|q|$  լիցքերն ամրացված են A և B կետերում: Ω՞ր տիրույթում  $q_3 < 0$  լիցքը կարող է լինել հավասարակշռության վիճակում:

- 1) a տիրույթում:
- 2) b տիրույթում:
- 3) c տիրույթում:
- 4) Բոլոր տիրույթներում:



1161. Սի կետից ամրացված նույն երկարության երկու մեկուսիչ թելերից կախված են նույն զանգվածով  $q_1 = |q|$  և  $q_2 = 2|q|$  լիցքերով երկու գնդիկներ: Համեմատելուղաձիգի նկատմամբ թելերի շեղման  $\alpha$  և  $\beta$  անկյունները:



- 1)  $\alpha > \beta$ :
- 2)  $\alpha < \beta$ :
- 3)  $\alpha = \beta$ :
- 4)  $\alpha = \beta = 0$ :

1162. Ω՞ն է նախադասություն ճիշտ շարունակությունը:

Էլեկտրական դաշտն ազդում է ...

- 1) միայն անշարժ դրական լիցքի վրա:
- 2) միայն անշարժ բացասական լիցքի վրա:
- 3) միայն անշարժ լիցքի վրա:
- 4) կամայական լիցքի վրա:

1163. Ω՞ր պնդումն է սխալ:

- 1) Էլեկտրական դաշտի լարվածության վեկտորի ուղղությունը հակադիր է դաշտի տվյալ կետում տեղադրված կետային բացասական լիցքի վրա ազդող ուժի ուղղությանը:
- 2) Միավորների UՀ-ում լարվածության միավորը 1 Ն/Կլ-ն է:
- 3) Կետային լիցքի դաշտը անհամասեռ է:

- 4) Կետային լիցքի դաշտի լարվածության մոդուլը հակադարձ համեմատական է լիցքից ունեցած հեռավորությանը:


**1164.** Էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը որոշում են փորձնական զ լիցքով: Այն տեղադրում են որևէ կետում, չափում նրա վրա ազդող  $\vec{F}$  ուժը և լարվածությունը որոշում  $\vec{E} = \vec{F}/q$  բանաձևով: Ինչպես կփոխվի ստացված արդյունքը, եթե նույն պայմաններում փորձնական լիցքը մեծացնենք ո անգամ:

- |                     |                         |
|---------------------|-------------------------|
| 1) Զի փոխվի:        | 3) Կփոքրանա ո անգամ:    |
| 2) Կմեծանա ո անգամ: | 4) Կմեծանա $n^2$ անգամ: |


**1165.** Ի՞նչ միավորով է չափվում էլեկտրական դաշտի լարվածությունը միա-  
վորների  $\text{N}^{-1}$ -ում:

- |          |            |
|----------|------------|
| 1) 1 Վլ: | 3) 1 Վ/մ:  |
| 2) 1 Վ:  | 4) 1 Վլ/մ: |

**1166.** Նկարում պատկերված է ժամանակի ինչ-որ պահին պրոտոնի արա-  
գության ուղղությունը համասեռ էլեկտրաստատիկ դաշտում: Ինչպես է ուղղված պրոտոնի արագացումը: Ծանրության ուժն անտեսել:

- |                                       |  |
|---------------------------------------|--|
| 1) $\vec{E}$ -ի ուղղությամբ:          |    |
| 2) $\vec{E}$ -ին հակառակ ուղղությամբ: |    |
| 3) $\vec{v}$ -ի ուղղությամբ:          |   |
| 4) $\vec{v}$ -ին հակառակ ուղղությամբ: |  |

**1167.** Էլեկտրոն մտնում է համասեռ էլեկտրաստա-  
տիկ դաշտ նրա ուժագծերի ուղղությամբ,  
ինչպես պատկերված է նկարում: Ինչպիսի՞ շարժում կկատարի այն:

- |  |  |
|--|--|
| 1) Ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում:  |  |
| 2) Ուղղագիծ հավասարաչափ դանդաղող շարժում:  |  |
| 3) Ուղղագիծ հավասարաչափ փոփոխական շարժում: |  |
| 4) Շրջանագծային շարժում:                   |  |

**1168.** Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

**Էլեկտրաստատիկ դաշտի ուժագծերը՝**

- |   |  |
|---|--|
| 1) Փակ գծեր են:   |  |
| 2) Ճիշտ իրար զուգահեռ գծեր են:                                |  |
| 3) Ակսվում են դրական լիցքերից, ավարտվում բացասական լիցքերում: |  |
| 4) Ակսում են բացասական լիցքերից, ավարտվում դրական լիցքերում:  |  |

1169. Ինչպե՞ս կփոխվի էլեկտրաստատիկ դաշտում տեղադրված լիցքի վրա դաշտի ազդող ուժի մոդուլը, եթե այդ լիցքի մոդուլը մեծացնենք 2 անգամ:

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1) Չի փոխվի:        | 3) Կփոքրանա 2 անգամ: |
| 2) Կմեծանա 2 անգամ: | 4) Կմեծանա 4 անգամ:  |

1170. Որքա՞ն է  $\vec{E}$  լարվածությամբ համասեռ էլեկտրաստատիկ դաշտում էլեկտրոնի արագացման մոդուլը: Էլեկտրոնի լիցքի մոդուլը է, զանգվածը՝  $m$ : Ծանրության ուժն անտեսել:

- |                    |                     |
|--------------------|---------------------|
| 1) $\frac{eE}{m}:$ | 3) $\frac{eE}{2m}:$ |
| 2) $\frac{E}{em}:$ | 4) $\frac{m}{eE}:$  |

1171. Լիցքավորված հորիզոնական թիթեղների միջև փոշու լիցքավորված մասնիկը հավասարակշռության  
վիճակում է: Կխախտվի՝ արդյոք  $\frac{+}{-}$   
մասնիկի հավասարակշռությունը,  
եթե թիթեղները մոտեցնենք իրար:

- 1) Մասնիկը կբարձրանա վերև:
- 2) Մասնիկը կիջնի ներքև:
- 3) Մասնիկը կմնա հավասարակշռության վիճակում:
- 4) Մասնիկը դուրս կգա թիթեղների արանքից:

1172. Պրոտոնը և էլեկտրոնը նույն համասեռ էլեկտրաստատիկ դաշտի ազդեցությամբ միաժամանակ սկսում են շարժվել դադարի վիճակից: Նրանցից ո՞րը մինույն ժամանակում ավելի մեծ հեռավորություն կանցնի:

- 1) Էլեկտրոնը:
- 2) Պրոտոնը:
- 3) Երկուսն էլ կանցնեն միևնույն հեռավորությունը:
- 4) Պատասխանը կախված է դաշտի լարվածության վեկտորի ուղղությունից:

1173. Ո՞րն է վակուումում  $q_0$  մոդուլով անշարժ կետային լիցքի էլեկտրական դաշտի լարվածության  $E$  մոդուլի բանաձևը:


- 1)  $E = k \frac{q_0}{r}:$
- 3)  $E = k \frac{q_0^2}{r}:$

$$2) \quad E = k \frac{q_0}{r^2}; \quad 4) \quad E = \frac{q_0^2}{r^2};$$

1174. Ո՞ր էլեկտրական դաշտն է կոչվում համասեռ:

- 1) Հավասար մեծությամբ դրական և բացասական կետային լիցքերի ստեղծած դաշտը:
- 2) Դաշտը, որի բոլոր կետերում լարվածությունը ունի նույն ուղղությունը:
- 3) Դաշտը, որի բոլոր կետերում լարվածության մոդուլը ունի նույն արժեքը:
- 4) Դաշտը, որի բոլոր կետերում լարվածությունն ունի նույն մոդուլը և ուղղությունը:


1175. Ո՞ր նկարում են ճիշտ պատկերված բացասական կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի ուժագծերը:



- 1)  $w:$
- 2)  $p:$
- 3)  $q:$
- 4)  $\eta:$

1176. Համեմատել նկարում պատկերված էլեկտրաստատիկ դաշտերում  $A$  և  $B$ ,  $C$  և  $D$  կետերի լարվածությունները:

- 1)  $E_A = E_B, E_C = E_D:$
- 2)  $E_A > E_B, E_C < E_D:$
- 3)  $E_A < E_B, E_C > E_D:$
- 4)  $E_A > E_B, E_C > E_D:$




1177. Ինչպե՞ս կփոխվի կետային լիցքի ստեղծած դաշտի լարվածության մոդուլը տարածության որևէ կետում, եթե լիցքի մեծությունը փոքրացվի  $n$  անգամ:

- 1) Կմեծանա  $n$  անգամ:
- 2) Կփոքրանա  $n$  անգամ:
- 3) Կմեծանա  $n^2$  անգամ:
- 4) Կփոքրանա  $n^2$  անգամ:

1178. Նկարում պատկերված է երկու կետային անշարժ լիցքերի արդյունաբար դաշտի ուժագծերի մոտավոր տեսքը:

Ի՞նչ նշանի են այդ լիցքերը:

- 1) A-ն՝ դրական, B-ն՝ բացասական:
- 2) A-ն՝ բացասական, B-ն՝ դրական:
- 3) Երկուսն էլ դրական:
- 4) Երկուսն էլ բացասական:




1179. Որքա՞ն է նկարում պատկերված կետային լիցքերի ստեղծած արդյունաբար դաշտի լարվածության մոդուլը այդ լիցքերը միացնող հատվածի A միջնակետում:

- 1)  $E = \frac{2kq}{r^2}$ :
- 2)  $E = \frac{kq}{r^2}$ :
- 3)  $E = \frac{kq^2}{4r^2}$ :
- 4)  $E = 0$ :




1180. Երկու տարանուն կետային լիցքեր գտնվում են մի ուղղի վրա:  $q$  դրական լիցքի դաշտի լարվածությունը  $O$  կետում  $60 \text{ V/m}$  է, իսկ  $-q$  լիցքինը՝  $40 \text{ V/m}$ : Որքա՞ն է արդյունաբար դաշտի լարվածությունն այդ կետում, և ինչպես է այն ուղղված:

- 1)  $20 \text{ V/m}$ , ուղղված է դեպի ձախ:
- 2)  $20 \text{ V/m}$ , ուղղված է դեպի աջ:
- 3)  $100 \text{ V/m}$ , ուղղված է դեպի ձախ:
- 4)  $100 \text{ V/m}$ , ուղղված է դեպի աջ:




1181. Նկարում պատկերված  $q_1 = |q|$  և  $q_2 = -2|q|$  կետային լիցքերն ամրացված են A և B կետերում: Ω՞ր տիրույթում է այն կետը, որտեղ էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը զրո է:

- 1) a տիրույթում:
- 2) b տիրույթում:
- 3) c տիրույթում:
- 4) Բոլոր տիրույթներում:



1182. Նկարում պատկերված է  $q_1 = |q|$  և  $q_2 = 4|q|$  անշարժ կետային լիցքերի դասավորությունը: Ω՞ր կետում արդյունաբար դաշտի լարվածության մոդուլը կլինի առավելագույնը:

- 1) A կետում:
- 2) B կետում:



3) Ըետում:

4) Բոլոր կետերում նույնն է:

1183. Ի՞նչ ուղղություն ունի նկարում պատկերված  $q_1 = |q|$  և  $q_2 = -|q|$


անշարժ կետային լիցքերի արդյունարար դաշտի լարվածության վեկտորը լիցքերից հավասարահեռ  $A$  կետում:

1) a:

3) c:

2) b:

4) d:



1184. Ի՞նչ ուղղություն ունի նկարում պատկերված


$q_1 = q_2 = -|q|$  կետային անշարժ լիցքերի արդյունարար դաշտի լարվածության վեկտորը լիցքերից հավասարահեռ  $A$  կետում:

1) a:

3) c:

2) b:

4) d:




1185. Որքա՞ն է էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը հավասարակողմ եռանկյան  $O$  կենտրոնում, եթե յուրաքանչյուր գազարում տեղադրված  $q$  կետային լիցքի դաշտի լարվածության մոդուլը եռանկյան կենտրոնում  $E$  է:

1)  $0$ :

3)  $3E$ :

2)  $E$ :

4)  $9E$ :



1186. Ո՞ր պնդումն է սխալ:

- Հաղորդիչներն այն նյութերն են, որոնց մեջ կան ազատ լիցքակիրներ:
- Մետաղներում ազատ լիցքակիրներն էլեկտրոններն են:
- Դիէլեկտրիկներն այն նյութերն են, որոնց մեջ գործնականում բացակայում են ազատ լիցքակիրները:
- Հաղորդիչները բաժանվում են երկու դասի՝ քևեռային և ոչ քևեռային:

1187. Իրար հաված  $a$  և  $b$  էլեկտրաչեղոք հաղորդիչները տեղադրում են դրական կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտում և հեռացնում իրարից: Ինչպիսի՞ լիցք կունենան  $a$  և  $b$  հաղորդիչները:


- Երկուսն էլ կմնան էլեկտրաչեղոք:
- $a$ -ն՝ դրական,  $b$ -ն՝ բացասական:
- $b$ -ն՝ դրական,  $a$ -ն՝ բացասական:
- Երկուսն էլ՝ բացասական:

$\oplus$ 

a	b
---	---


1188. Կամայական ձև ունեցող մետաղե մարմնին հաղորդել են զ լիցք: Համեմատեք էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլները մարմնի ներսում  $A$ ,  $B$  և  $C$  կետերում:

- 1)  $E_C < E_B < E_A$ :
- 2)  $E_A = E_B = E_C = 0$ :
- 3)  $E_A < E_B < E_C$ :
- 4)  $E_A = E_B > E_C$ :



1189. Մետաղե գնդային մակերևույթին հաղորդվել է զ լիցք: Ի՞նչ առնչություն գոյություն ունի  $A$ ,  $B$ ,  $C$  և  $D$  կետերում դաշտի լարվածության մոդուլների միջև:

- 1)  $E_A = E_B = E_C = E_D$ :
- 2)  $E_A > E_B, E_C > E_D$ :
- 3)  $E_A < E_B, E_C < E_D$ :
- 4)  $E_A = E_B = 0, E_C > E_D$ :



1190. Նույն շառավիրով երկու մետաղե գնդերին, որոնցից մեկը հոծ է, մյուսը՝ սնամեց, հաղորդում են նույն լիցքը: Ո՞ր գնդի լիցքի մակերևութային խսությունն է ավելի մեծ:

- 1) Հոծ:
- 2) Սնամեց:
- 3) Երկու դեպքում էլ նույնն է:
- 4) Հոծ գնդի լիցքը մակերևույթի վրա չի բաշխվում:

1191. Ինչպես է բաշխվում լիցքը կամայական ձև ունեցող հաղորդչում:

- 1) Կախված հաղորդչի ձևից՝ կամայական ձևով կրաշխվի նրա ծավալում:
- 2) Հավասարաչափ բաշխվում է նրա ծավալում:
- 3) Հավասարաչափ բաշխվում է նրա մակերևույթին:
- 4) Բաշխվում է միայն արտաքին մակերևույթին:

1192. Հողակցված սնամեց մետաղե գնդոլորտի մեջ մտցվում է լիցքավորված գնդիկ, որը չի հպկում գնդոլորտի պատերին: Որո՞նք են գնդոլորտի ներսում և գնդոլորտից դրւու էլեկտրական դաշտի  $E_1$  և  $E_2$  լարվածությունների ճիշտ արժեքները:

- 1)  $E_1 = E_2 = 0$ :
- 2)  $E_1 = 0, E_2 \neq 0$ :
- 3)  $E_1 \neq 0, E_2 = 0$ :
- 4)  $E_1 \neq 0, E_2 \neq 0$ :

1193. Ի՞նչ չափայնություն ունի նյութի դիէլեկտրական քափանցելիությունը:


- 1)  $\mathcal{C}_L$ :
- 2)  $\mathcal{U}/\mathcal{C}_L$ :
- 3)  $\mathcal{Q}/\mathcal{C}_L$ :
- 4) Չափայնություն չունի:

**1194. Ի՞նչ է ցույց տալիս միջավայրի դիելեկտրական քափանցելիությունը:**

- 1) Երկու կամայական միջավայրերում էլեկտրական դաշտի լարվածությունների հարաբերությունը:
- 2) Երկու կամայական միջավայրերում էլեկտրական դաշտի պոտենցիալների հարաբերությունը:
- 3) Քանի անգամ է միջավայրում էլեկտրական դաշտի լարվածությունը մեծ վակուումում էլեկտրական դաշտի լարվածությունից:
- 4) Քանի անգամ է վակուումում էլեկտրական դաշտի լարվածությունը մեծ միջավայրում էլեկտրական դաշտի լարվածությունից:

**1195. Ինչպես կշարժվի էլեկտրական երկրները համասեռ էլեկտրաստատիկ դաշտում:**

- 1) Կվատարի համընթաց շարժում դեպի աջ:
- 2) Կվատարի համընթաց շարժում դեպի ձախ:
- 3) Կպտտվի ժամալարի պտտման ուղղությամբ:
- 4) Կպտտվի ժամալարի պտտման հակառակ ուղղությամբ:




**1196. Ո՞ր բանաձևը չի արտահայտում համասեռ էլեկտրաստատիկ դաշտի կատարած աշխատանքը:**

- |                                     |                       |
|-------------------------------------|-----------------------|
| 1) $A = qU :$                       | 3) $A = qE :$         |
| 2) $A = q(\varphi_1 - \varphi_2) :$ | 4) $A = qE\Delta d :$ |

**1197.  $\vec{E}$  լարվածությամբ համասեռ էլեկտրաստատիկ դաշտում  $q$  կետային լիցքը  $A$  կետից տեղափոխվում է  $B$  կետը՝ անցնելով  $l$  ճանապարհ: Ո՞րն է դաշտի կատարած աշխատանքի ճիշտ արտահայտությունը:**

- |            |                        |
|------------|------------------------|
| 1) $0 :$   | 3) $qEl \cos \alpha :$ |
| 2) $qEl :$ | 4) $qEl \sin \alpha :$ |



**1198. Ո՞ր պնդումն է սիսայ:**

- 1) Լիցքի տեղափոխման ժամանակ էլեկտրաստատիկ դաշտի կատարած աշխատանքը կախված է հետազօծի ձևից:
- 2) Եթե էլեկտրաստատիկ դաշտում լիցքը շարժվում է փակ հետազծով, դաշտի կատարած աշխատանքը զրո է:
- 3) Էլեկտրաստատիկ դաշտը պոտենցիալային է:
- 4) Էլեկտրաստատիկ դաշտի կատարած աշխատանքը հավասար է լիցքի պոտենցիալ էներգիայի փոփոխությանը՝ հակառակ նշանով:

**1199. Դրական կետային լիցքը նախ տեղափոխում են համասեռ էլեկտրաստատիկ դաշտի ուժագծերի ուղղությամբ, ապա նույն չափով ուժա-**

**գծերին ուղղահայաց ուղղությամբ:** Ո՞րն է էլեկտրաստատիկ դաշտի կատարած աշխատանքների միջև ճիշտ առնչությունը:

- 1)  $A_1 < A_2$ :
- 2)  $A_1 > A_2 = 0$ :
- 3)  $A_1 > A_2 \neq 0$ :
- 4)  $A_1 = A_2 \neq 0$ :

**1200. Ի՞նչ միավորով է չափվում էլեկտրական դաշտի պոտենցիալը միավորների ՄՀ-ում:**


- 1) 1 Վ:
- 2) 1 Կլ/Ն:
- 3) 1 Վ/մ:
- 4) 1 Ն/Կլ :

**1201. Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Լարվածությունը և պոտենցիալը էլեկտրաստատիկ դաշտի ուժային բնութագրերն են:
- 2) Լարվածությունը և պոտենցիալը էլեկտրաստատիկ դաշտի էներգիական բնութագրերն են:
- 3) Լարվածությունը էլեկտրաստատիկ դաշտի ուժային բնութագիրն է, իսկ պոտենցիալը՝ էներգիական:
- 4) Լարվածությունը էլեկտրաստատիկ դաշտի էներգիական բնութագիրն է, իսկ պոտենցիալը՝ ուժային:

**1202. Լիցքավորված մետաղե հոծ զնդի մակերևույթի A կետում էլեկտրաստատիկ դաշտի պոտենցիալը 100 Վ է: Որքա՞ն է պոտենցիալը զնդի O կենտրոնում:**

- 1) 100 Վ:
- 2) 0:
- 3) Սեծ է 100 Վ-ից:
- 4) Փոքր է 100 Վ-ից:



**1203. Ո՞ր մեծությունն ունի Ձ/Կլ չափայնություն:**

- 1) Էլեկտրական դաշտի լարվածություն:
- 2) Պոտենցիալների տարրերությունը:
- 3) Լիցքերի փոխազդեցության ուժը:
- 4) Լիցքերի փոխազդեցության պոտենցիալ էներգիան:

**1204. Քանի՞ անգամ կմեծանա ալրոտոնի պոտենցիալ էներգիան էլեկտրական դաշտում, եթե այն 5 Վ պոտենցիալ ունեցող կետից տեղափոխվի 15 Վ պոտենցիալ ունեցող կետը:**


- 1) 10 անգամ:
- 2) 5 անգամ:
- 3) 3 անգամ:
- 4) 20 անգամ:

1205. Էլեկտրոնը էլեկտրական դաշտի ազդեցությամբ փոքր պոտենցիալ ունեցող կետից տեղափոխվում է մեծ պոտենցիալ ունեցող կետ: Ինչ-պես է փոխվում այդ ընթացքում նրա կինետիկ էներգիան:

- 1) Սեծանում է:
- 2) Փորրանում է:
- 3) Չի փոխվում:
- 4) Պատասխանը կախված է հետազօտի ձևից:

1206. Նկարում պատկերված համասեռ էլեկտրաստատիկ դաշտի  $A$ ,  $B$ ,  $C$  և  $D$  կետերից ո՞ր զույգի միջև է պոտենցիալների տարրերությունը զրո:

- 1)  $A$  և  $B$ :
- 2)  $A$  և  $C$ :
- 3)  $B$  և  $D$ :
- 4)  $B$  և  $C$ :




1207. Որքա՞ն է  $A$  և  $B$  կետերի պոտենցիալների տարրերությունը, եթե  $A$  կետի պոտենցիալը 5 Վ է, իսկ  $B$  կետինը՝ -5 Վ:

- 1) 0 :
- 2) 1 Վ:
- 3) 5 Վ:
- 4) 10 Վ:


1208. Համասեռ էլեկտրաստատիկ դաշտի ուժագծի վրա տրված են  $A$ ,  $B$  և  $C$  կետերը, ընդ որում,  $AB = BC$ : Որքա՞ն է  $A$  և  $B$  կետերի պոտենցիալների տարրերության հարաբերությունը  $B$  և  $C$  կետերի պոտենցիալների տարրերությանը:

- 1) 2:
- 2) 1:
- 3)  $\frac{1}{2}$ :
- 4) 0:




1209. Լիցքավորված մասնիկը լիցքավորված կոնդենսատորի ներսում շարժվում է  $A$  կետից  $B$  կետը՝ նկարում պատկերված հետազծերով: Ո՞ր հետազծով շարժվելիս մասնիկի կինետիկ էներգիայի փոփոխությունը կլինի ամենամեծը:

- 1)  $a$  հետազծով:
- 2)  $b$  հետազծով:
- 3)  $c$  հետազծով:
- 4) Բոլոր հետազծերով շարժվելիս նույնն է:



1210. Նկարում պատկերված  $+q$  կետային լիցքի դաշտում  $q_0$  լիցքը առաջին դեպքում տեղափոխվել է  $A$  կետից  $B$  կետ, երկրորդ դեպքում



**A-ից C կետը, իսկ երրորդ դեպքում՝ B-ից C կետը:** Համեմատեք այդ դեպքերում դաշտի կատարած  $A_{AB}$ ,  $A_{AC}$  և  $A_{BC}$  աշխատանքները:

- 1)  $A_{AB} = 0$ ,  $A_{AC} < A_{BC}$ :      3)  $A_{AB} = A_{AC} = A_{BC}$ :  
 2)  $A_{AB} = 0$ ,  $A_{AC} > A_{BC}$ :      4)  $A_{AB} = 0$ ,  $A_{AC} = A_{BC}$ :

**1211.** Համասեն էլեկտրաստատիկ դաշտի պոտենցիալն աճում է աջից դեպի ձախ տեղափոխվելիս: Ինչպե՞ս է ուղղված դաշտի լարվածության վեկտորը:

- 1) Աջից ձախ:      3) Զախից աջ:  
 2) Վերևից ներքև:      4) Ներքևից վերև:

**1212.**  $m$  զանգվածով և  $q$  լիցքով զնդիկը միայն էլեկտրաստատիկ ուժի ազդեցությամբ  $\varphi$  պոտենցիալ ունեցող կետից տեղափոխվում է զրո պոտենցիալ ունեցող կետը: Որքա՞ն է մասնիկի սկզբնական արագությունը, եթե նրա վերջնական արագությունը  $v_2$  է:

- 1)  $\sqrt{v_2^2 + \frac{2q\varphi}{m}}$ :      3)  $\sqrt{v_2^2 - \frac{q\varphi}{m}}$ :  
 2)  $\sqrt{v_2^2 - \frac{2q\varphi}{m}}$ :      4)  $\sqrt{\frac{2q\varphi}{m} - v_2^2}$ :

**1213.** Առանձնացված հաղորդչի լիցքը մեծացրին 2 անգամ: Ինչպե՞ս կփոխվի նրա պոտենցիալը:

- 1) Կամի 2 անգամ:      3) Չի փոխվի:  
 2) Կմնագի 2 անգամ:      4) Կամի 4 անգամ:

**1214.** Ֆիզիկական ո՞ր մեծությունն ունի Կ/Վ չափայնություն:

- 1) Էլեկտրական դաշտի լարվածությունը:  
 2) Էլեկտրաունակությունը:  
 3) Էլեկտրական դաշտի կատարած աշխատանքը:  
 4) Էլեկտրական լարումը:

**1215.** Ինչպե՞ս է արտահայտվում էլեկտրաունակության միավորը ՄՀ-ի հիմնական միավորներով:

- 1)  $1 \text{Ա վ:}$       3)  $1 \text{կգ}^{-2} \text{վ}^{-4} \text{Ա}^{-2}$ :  
 2)  $1 \text{կգ}^{-1} \text{մ}^{-2} \text{վ}^4 \text{Ա}^2$ :      4)  $1 \text{կգ}^{-2} \text{վ}^{-3} \text{Ա}^{-1}$ :


**1216.** Երկու գնդերի էլեկտրաունակությունները  $C_1 = 10 \text{ պֆ}$  և  $C_2 = 20 \text{ պֆ}$  են, իսկ դրանց լիցքերը՝ համապատասխանաբար՝  $q_1 = 10^{-8} \text{ Կլ}$  և

$q_2 = 2 \cdot 10^{-8}$  Կլ: Հնարավո՞ր է արդյոք լիցքի տեղափոխություն մի գնդից մյուսը, եթե գնդերը միացնենք հաղորդալարով:

- 1) Այո, քանի որ  $q_2 > q_1$ :
- 2) Այո, քանի որ  $C_2 > C_1$ :
- 3) Ոչ, քանի որ գնդերի պոտենցիալները հավասար են:
- 4) Պատասխանը կախված է գնդերի շառավիղներից:

1217. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում հաղորդչի էլեկտրառունակության կախումը նրա լիցքի մեծությունից:

- 1) a:
- 2) b:
- 3) c:
- 4) d:




1218. Ո՞ր բանաձևն է արտահայտում կոնդենսատորի էլեկտրառունակության սահմանումը:

- 1)  $C = \frac{\varepsilon_0 \varepsilon S}{d}$ :
- 2)  $C = \frac{\varepsilon_0 S}{d}$ :
- 3)  $C = \frac{q}{U}$ :
- 4) Բոլոր բանաձևերը:

1219. Նկարում պատկերված է կոնդենսատորի շրջադիրների միջև լարման՝ կոնդենսատորի լիցքից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է կոնդենսատորի էլեկտրառունակությունը:

- 1)  $2 \cdot 10^{-5}$  Ֆ:
- 2)  $4 \cdot 10^{-2}$  Ֆ:
- 3)  $8 \cdot 10^{-2}$  Ֆ:
- 4) 50 Ֆ:



1220. Ո՞ր մեծությունից է կախված կոնդենսատորի էլեկտրառունակությունը:

- 1) Լիցքից:
- 2) Լարումից:
- 3) Տեսակարար դիմադրությունից:
- 4) Չափերից և ձևից:

1221. Ինչպես կփոխվի հարք կոնդենսատորի էլեկտրառունակությունը, եթե նրա շրջադիրների միջև լարումը փոքրացնենք 2 անգամ:

- 1) Կմեծանա 2 անգամ:
- 2) Կփոքրանա 2 անգամ:
- 3) Չի փոխվի:
- 4) Կմեծանա 4 անգամ:

1222. Օդային հարք կոնդենսատորի շրջադիրները երկու միատեսակ սկավառակներ են: Ինչպես կփոխվի կոնդենսատորի ունակությունը, եթե

**սկավառակների շառավիղը և նրանց միջև հեռավորությունը մեծացվի  
2 անգամ:**

- 1) Կփոքրանա 2 անգամ:      3) Կմեծանա 2 անգամ:  
2) Չի փոխվի:                          4) Կմեծանա 4 անգամ:

**1223. Ինչպե՞ս կփոխվի հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարք  
կոնդենսատորի լիցքը, եթե նրա շրջադիրների միջև տեղադրենք դի-  
էլեկտրիկ:**

- 1) Կմեծանա:  
2) Կփոքրանա:  
3) Կմնա նույնը:  
4) Կախված դիէլեկտրիկի տեսակից՝ կմեծանա կամ կփոքրանա:

**1224. Լիցքավորված և աղբյուրից անջատված օդային կոնդենսատորը  
խորասուզում են կերոսինի մեջ: Ինչպե՞ս է փոխվում կոնդենսատորի  
շրջադիրների միջև լարումը:**

- 1) Չի փոխվում:  
2) Փոքրանում է:  
3) Մեծանում է:  
4) Հավասարվում է զրոյի:

**1225. Հարք օդային կոնդենսատորը լիցքավորում են մինչև U լարում և ան-  
ջատում հոսանքի աղբյուրից: Ինչպե՞ս կփոխվի լարումը, եթե  
շրջադիրների միջև հեռավորությունը մեծացնենք k անգամ:**

- 1) Կմեծանա k անգամ:  
2) Կփոքրանա k անգամ:  
3) Կմնա նույնը:  
4) Կմեծանա k-1 անգամ:

**1226. Ի՞նչպես կփոխվի լիցքավորված և աղբյուրից անջատված կոնդեն-  
սատորի էլեկտրական դաշտի W էներգիան, U լարումը, q լիցքը և E  
լարվածությունը, եթե շրջադիրների միջև եղած հեռավորությունը  
մեծացվի:**

- 1)  $\Delta W > 0$ ,  $\Delta U > 0$ ,  $\Delta q = 0$ ,  $\Delta E = 0$  :  
2)  $\Delta W < 0$ ,  $\Delta U > 0$ ,  $\Delta q = 0$ ,  $\Delta E = 0$  :  
3)  $\Delta W > 0$ ,  $\Delta U > 0$ ,  $\Delta q < 0$ ,  $\Delta E < 0$  :  
4)  $\Delta W < 0$ ,  $\Delta U > 0$ ,  $\Delta q > 0$ ,  $\Delta E > 0$  :

**1227. Հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարք օդային կոն-  
դենսատորի շրջադիրների հեռավորությունը մեծացրին երկու անգամ:  
Ինչպե՞ս փոխվեց շրջադիրների փոխազդեցության ուժը:**


- 1) Մեծացավ երկու անգամ:  
2) Փոքրացավ երկու անգամ:  
3) Փոքրացավ չորս անգամ:  
4) Մեծացավ չորս անգամ:

1228. Հարք կոնդեսատորի շրջադիրները միացված են գալվանական էլեմենտին: Ինչպե՞ս կփոխվի նրանց ձգողության ուժը, եթե կոնդեսատորը տեղափորենք  $\varepsilon = 3$  դիէլեկտրիկ թափանցելիություն ունեցող դիէլեկտրիկ հեղուկի մեջ:

- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) Կփոքրանա 3 անգամ: | 3) Կփոքրանա 9 անգամ: |
| 2) Կմեծանա 3 անգամ:  | 4) Կմեծանա 9 անգամ:  |

1229. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում էլեկտրական դաշտի էներգիայի  $\omega$  խտության՝ դաշտի  $E$  լարվածությունից կախվածությունը:

- |       |       |
|-------|-------|
| 1) a: | 3) c: |
| 2) b: | 4) d: |



1230. Ինչպե՞ս կփոխվի հաստատուն հոսանքի աղբյուրից անջատված հարք կոնդենսատորի էլեկտրաստատիկ դաշտի էներգիան, եթե նրա շրջադիրների միջև հեռավորությունը մեծացնենք 2 անգամ:

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| 1) Կմեծանա 2 անգամ:  | 3) Կմնա նույնը:     |
| 2) Կփոքրանա 2 անգամ: | 4) Կմեծանա 4 անգամ: |

1231. Հոսանքի աղբյուրից անջատված հարք օդային կոնդենսատորի էներգիան  $W$  է: Ի՞նչ աշխատանք պետք է կատարել նրա շրջադիրների միջև հեռավորությունը  $n$  անգամ մեծացնելու համար:


- |               |                       |
|---------------|-----------------------|
| 1) $nW$ :     | 3) $\frac{W}{n}$ :    |
| 2) $(n-1)W$ : | 4) $\frac{n-1}{n}W$ : |

1232. Առաջին դեպքում կոնդենսատորին հաղորդում են այնքան լիցք, որ նրա լարումն աճում է 0-ից մինչև  $U$ , իսկ երկրորդ դեպքում  $U$ -ից մինչև  $2U$ : Ո՞ր դեպքում է կոնդենսատորի էներգիան ավելի շատ մեծանում:

- 1) Առաջին դեպքում, 3 անգամ ավելի շատ:
- 2) Երկրորդ դեպքում, 3 անգամ ավելի շատ:
- 3) Երկրորդ դեպքում, 2 անգամ ավելի շատ:
- 4) Երկու դեպքում էլ՝ նույն չափով:

1233. Նկարում պատկերված լիցքավորված հարք կոնդենսատորի A կետում էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլը  $E$  է: Որքա՞ն է լարվածության մոդուլը B, C և D կետերում:

- 1) B-ում՝  $2E$ , C-ում՝  $E$ , D-ում՝  $E$  :  
 2) B-ում՝  $E$ , C-ում՝  $E$ , D-ում՝  $0$ :  
 3) B-ում՝  $E$ , C-ում՝  $0$ , D-ում՝  $0$ :  
 4) B-ում՝  $2E$ , C-ում՝  $0$ , D-ում՝  $2E$  :



1234. Ո՞րն է լիցքավորված հարք կոնդենսատորի շրջադիրների միջև ստեղծված համաստու էլեկտրական դաշտի էներգիայի խոռոչյան բանաձևը:

- 1)  $\omega = \frac{1}{2} \varepsilon \varepsilon_0 E^2$  :      3)  $\omega = \frac{C U^2}{2}$  :  
 2)  $\omega = E d$  :      4)  $\omega = q U$  :

## 9.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1235. Երկու միևնույն չափի մետաղե գնդիկներ ունեն -5 Վկլ և 9 Վկլ լիցքեր: Որքա՞ն կինի գնդիկներից յուրաքանչյուրի լիցքը, եթե նրանք հպենք իրար և նորից հեռացնենք: Պատասխանը բազմապատկել  $10^9$ -ով:
1236. Մետաղե գնդիկը լիցքավորված է  $-8 \cdot 10^{-16}$  Վկլ լիցքով: Քանի՞ հավելուրդային էլեկտրոն կա գնդիկի վրա:
1237. Ամպրոպային աճափի երկու կուտակումների միջև հեռավորությունը 10 կմ է: Այդ ամպերի լիցքերը համապատասխանաբար 2 Վկլ և 4 Վկլ են: Որքա՞ն է այդ ամպերի փոխազդեցության ուժը: Ամպերի չափերը շատ փոքր են նրանց հեռավորության համեմատությամբ:
1238. Ի՞նչ ուժով են փոխազդում միմյանցից  $0,4 \cdot 10^{-8}$  մ հեռավորությամբ էլեկտրոնը և պրոտոնը: Պատասխանը բազմապատկել  $10^{13}$ -ով:
1239. Յուրաքանչյուրը 5,6 մկՎլ լիցք ունեցող երկու գնդեր տեղադրված են որոշակի հեռավորությամբ: Ի՞նչ մեծության դրական լիցք պետք է մի գնդից տեղափոխել մյուսը, որպեսզի նրանց փոխազդեցության ուժը փոքրանա 2 անգամ: Պատասխանը բազմապատկել  $10^8$ -ով:
1240. Երկու անշարժ կետային լիցքերի փոխազդեցության ուժի մոդուլը 20 Ն է: Որքա՞ն կինի այն, եթե լիցքերից յուրաքանչյուրի մոդուլը փոքրացնենք 2 անգամ:
1241. Քանի՞ անգամ կմեծանա մոդուլով հավասար նույնանուն լիցքերով լիցքավորված երկու գնդիկների էլեկտրական փոխազդեցության ուժը, եթե նրանց հեռավորությունը փոքրացվի երկու անգամ և մեկի լիցքի կեսը տեղափոխվի մյուսի վրա:
1242. Քանի՞ անգամ պետք է մեծացնել երկու հավասար կետային լիցքերից յուրաքանչյուրի մեծությունը, որպեսզի ջրի մեջ սուզելիս նրանց փոխազդեցության ուժը նույն հեռավորության դեպքում լինի այնքան, որքան օդում էր: Զրի դիէլեկտրական թափանցելիությունը 81 է:
1243. Քանի՞ անգամ կմեծանա երկու կետային լիցքերի էլեկտրական փոխազդեցության ուժը, եթե նրանց միջև հեռավորությունը փոքրացվի 4 անգամ և միաժամանակ նրանք տեղափոխվեն մի միջավայր, որի դիէլեկտրական թափանցելիությունը 2 անգամ մեծ է նախորդինից:
1244. Երկու միատեսակ գնդեր լիցքավորված են նույնանուն լիցքերով և դրանցից մեկի լիցքի մոդուլը 5 անգամ մեծ է մյուսից: Գնդերը հակեցին


իրար և հեռացրին նույն հեռավորությամբ: Քանի՛ անգամ մեծացակ լիցքերի փոխազդեցության ուժը: Պատասխանը քազմապատկել 10-ով:

1245. Երկու կետային լիցքեր, որոնց հեռավորությունն օղում  $0,05$  մ է, միմյանց հետ փոխազդում են  $1,2 \cdot 10^{-4}$ Ն ուժով: Հեղուկ դիէլեկտրիկում այդ լիցքերի փոխազդեցության ուժը  $0,15 \cdot 10^{-4}$ Ն է, եթե նրանք իրարից հեռու են  $0,1$  մ: Որքա՞ն է հեղուկի դիէլեկտրական թափանցելիությունը:
1246.  $2 \cdot 10^{-5}$ Կլ և  $4,5 \cdot 10^{-5}$ Կլ երկու կետային լիցքերի հեռավորությունը 10 մ է: Լիցքերը միացնող ուղղի վրա փոքր լիցքից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղակորել կետային լիցքը, որպեսզի այն լինի հավասարակշռության մեջ:
1247.  $2 \cdot 10^{-5}$ Կլ կետային լիցքը  $3 \cdot 10^5$ Ն/Կլ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում է: Որքա՞ն է այդ լիցքի վրա ազդող ուժը:
1248.  $16 \cdot 10^{-4}$ Կլ կետային լիցքից ի՞նչ հեռավորությամբ կետում էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը կլինի  $4 \cdot 10^5$ Ն/Կլ:
1249.  $4 \cdot 10^3$ Վ/մ լարվածությամբ արտաքին համասեռ էլեկտրաստատիկ դաշտում դիէլեկտրիկի կապված լիցքերի դաշտի լարվածությունը  $2 \cdot 10^3$ Վ/մ է: Որքա՞ն է դիէլեկտրիկի դիէլեկտրական թափանցելիությունը:
1250. 2 մ տրամագիծ ունեցող գնդին հաղորդեցին  $3 \cdot 10^{-8}$ Կլ լիցք: Նրա մակերևույթից ի՞նչ հեռավորության վրա էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը կլինի 30 Ն/Կլ:
1251. Կետային լիցքի էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը նրանից որոշ հեռավորության վրա վակուումում  $8,1 \cdot 10^5$ Ն/Կլ է, իսկ ջրում այդ լիցքից նույն հեռավորության վրա՝  $10^4$  Ն/Կլ: Որքա՞ն է ջրի դիէլեկտրական թափանցելիությունը:
1252.  $4 \cdot 10^{-9}$ Կլ և  $-9 \cdot 10^{-9}$ Կլ երկու կետային լիցքերի հեռավորությունը 0,5 մ է: Լիցքերը միացնող ուղղի վրա դրական լիցքից ի՞նչ հեռավորությամբ կետում էլեկտրական դաշտի լարվածությունը կլինի զրո:
1253. Միատեսակ  $-5 \cdot 10^{-7}$ Կլ երկու կետային լիցքերի հեռավորությունը 0,7 մ է: Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածությունը լիցքերը միացնող ուղղի միջնակետում:

1254. Էլեկտրական դաշտի  $10^7$  Ն/Կլ լարվածության գեաքում օդը դադարում է մեկուսիչ լինելուց, տեղի է ունենում պարապում: Որքա՞ն պետք է լինի մետաղի գնդի շառավղի փոքրագույն արժեքը, որպեսզի հնարավոր լինի նրա վրա կուտակել 1 Կլ լիցք:

1255. Փոշեհատիկը, որն ունի  $16 \cdot 10^{-12}$  Կլ լիցք և  $4 \cdot 10^{-7}$  գ զանգված, ուղղաձիգ վեր ուղղված համասեռ էլեկտրաստատիկ դաշտում հավասարակշռության վիճակում է: Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածությունը:

1256.  $4 \cdot 10^3$  Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում տեղադրում են  $27 \cdot 10^{-10}$  Կլ կետային լիցք: Որքա՞ն է արդյունարար դաշտի լարվածության մոդուլը ուժագծերի հակառակ ուղղությամբ լիցքից 0,09 մ հեռավորությամբ գտնվող  $A$  կետում (նկ. 34):



Նկ. 34


1257. 30 սմ տրամագծով մետաղի գնդին հաղորդեցին 16 Ա Կլ լիցք: Որքա՞ն է դաշտի լարվածությունը գնդի մակերևույթին:

1258. Յուղով լցված անոքը մտցրին համասեռ էլեկտրաստատիկ դաշտ, որի լարվածությունը 750 Վ/մ է: Ինչքա՞ն է դաշտի լարվածությունը յուղում, եթե յուղի դիէլեկտրական թափանցելիությունը 2,5 է:

1259. Կետային լիցքը հեղուկի մեջ է, որի դիէլեկտրական թափանցելիությունը 4 է: Լիցքից ի՞նչ հեռավորության վրա դաշտի լարվածությունը կլինի այնքան, որքան վակուումում 40 սմ հեռավորության վրա: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1260. Լիցքը Երկրի մակերևույթից 1000 Վ պոտենցիալով կետ տեղափոխելիս կատարվել է  $10^{-5}$  Օ աշխատանք: Որքա՞ն է տեղափոխվող լիցքը: Երկրի պոտենցիալն ընդունել գրո: Պատասխանը բազմապատկել 10<sup>9</sup>-ով:

1261. Որքա՞ն է  $A$  և  $B$  կետերի միջև լարումը, եթե նրանց միջև հեռավորությունը 8 սմ է, իսկ  $AB$  հատվածը 50 կՎ/մ լարվածությամբ համասեռ դաշտի ուժագծերի հետ կազմում է  $60^\circ$  անկյուն (նկ. 35):



Նկ. 35

1262. Լիցքը համասեռ էլեկտրական դաշտի ուժագծերի ուղղությամբ 5 սմ տեղափոխելիս դաշտը կատարում է  $15 \text{ } \Omega$  աշխատանք: Ի՞նչ աշխատանք կկատարի այդ դաշտը երկու անգամ ավելի մեծ լիցքն ուժագծերի ուղղությամբ 3 սմ տեղափոխելիս:
1263. Ի՞նչ աշխատանք կկատարի էլեկտրական դաշտը  $0,25 \text{ } \text{V}$  պոտենցիալների տարրերություն ունեցող կետերի միջև տեղափոխելիս:
1264. Ի՞նչ արագություն ձևոր կրերի էլեկտրոնը  $10^4 \text{ } \text{V}/\text{m}$  լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում ուժագծի երկայնքով  $4,5 \cdot 10^{-3} \text{ } \text{N}$  տեղափոխելիս, եթե նրա սկզբնական արագությունը զրո է: Պատասխանը բազմապատկել  $10^{-6}$ -ով:
1265. Որքա՞ն է համասեռ էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը, եթե նրա ուժագծերի ուղղությամբ պրոտոնը 1 մ տեղափոխելու համար պահանջվում է  $2,56 \cdot 10^{-16} \text{ } \Omega$  աշխատանք:
1266. Երկու լիցքավորված զուգահեռ թիթեղների միջև ստեղծված համասեռ էլեկտրական դաշտի լարվածությունը 5 կՎ/մ է, իսկ նրանց միջև լարումը՝  $200 \text{ } \text{V}$ : Որքա՞ն է թիթեղների հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
1267.  $8 \cdot 10^6 \text{ } \text{N}/\text{C}$  արագությամբ բռչող էլեկտրոնը թափանցում է էլեկտրական դաշտ: Լարվածության գծերի ուղղությամբ շարժվելով երկու կետերի միջև՝ նրա արագությունը փոքրանում է 3 անգամ: Որքա՞ն է այդ կետերի պոտենցիալների տարրերությունը:
1268. Համասեռ դաշտի լարվածության նույն գծի 40 սմ հեռավորությամբ երկու կետերի միջև լարումը  $300 \text{ } \text{V}$  է: Որքա՞ն է դաշտի լարվածությունը:
1269. Հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարք օդային կոնդենսատորի լիցքը  $20 \text{ } \mu\text{F}$  է: Որքա՞ն կլիմի կոնդենսատորի լիցքը, եթե շրջադիրների նույն հեռավորության դեպքում շրջադիրներից յուրաքանչյուրի մակերեսը փոքրացվի 4 անգամ: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:
1270. Հարք օդային կոնդենսատորի ունակությունը  $3 \cdot 10^{-6} \text{ } \text{F}$  է: Որքա՞ն լիցք պետք է հաղորդել կոնդենսատորին, որպեսզի շրջադիրների միջև 3 թափանցելիությամբ դիէլեկտրիկ նացնելուց հետո նրանց միջև առաջանա 1  $\text{V}$  լարում: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:
1271. Որքա՞ն է կոնդենսատորի կուտակած էլեկտրական դաշտի էներգիան, եթե նրա լիցքը  $0,04 \text{ } \text{V}$  է, իսկ շրջադիրների միջև լարումը՝  $100 \text{ } \text{V}$ :


1272. Հարք օդային կոնդենսատորի թիթեղների միջև հեռավորությունը 0,5 մմ է, լարումը՝ 10 Վ: Կոնդենսատորն անջատված է աղբյուրից: Որքա՞ն կլինի լարումը, եթե թիթեղների միջև հեռավորությունը հասցվի 5 մմ-ի:
1273. Հոսանքի աղբյուրից անջատված, 4 դիէլեկտրական թափանցելիություն ունեցող հեղուկ դիէլեկտրիկով լցված կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիան 20 Ջ է: Որքա՞ն կլինի կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիան, եթե հեռացվի հեղուկ դիէլեկտրիկը:
1274. Հաստատում հոսանքի աղբյուրին միացված հարք օդային կոնդենսատորի թիթեղների փոխազդեցության ուժը 12 Ն է: Որքա՞ն կլինի թիթեղների փոխազդեցության ուժը, եթե դրանց հեռավորությունը մեծացվի երկու անգամ:
1275. Օդային հարք կոնդենսատորի թիթեղների միջև կարծր դիէլեկտրիկ մտցնելիս կոնդենսատորի լարումը 400 Վ-ից փոքրացավ մինչև 50 Վ: Ինչքա՞ն է դիէլեկտրիկի դիէլեկտրական թափանցելիությունը:
1276. Որքա՞ն է կոնդենսատորի ունակությունը, եթե նրան 0,01 Վլ լիցք հաղորդելիս կատարվում է 10 Ջ աշխատանք: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:
1277. Իմպուլսային ֆուտորոնկման լամպը սնվում է 300 Վ լարման և 800 մկՖ ունակությամբ կոնդենսատորից: Որքա՞ն է բռնկման էներգիան:

### 9.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1278. Ուղաձիգ ներքև ուղղված  $2 \cdot 10^4$  Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրաստատիկ դաշտում մեկուսից թելից կախված է 0,1 կգ զանգվածով և  $2 \cdot 10^{-4}$  Կլ լիցքով գնդիկը:
- 1) Որքա՞ն է գնդիկի վրա էլեկտրաստատիկ դաշտի ազդող ուժը:
  - 2) Որքա՞ն է թելի լարման ուժը:
1279. Մինույն նշանի և մեծության երկու կետային լիցքերը միացնող հատվածի միջնակետում տեղադրում են նույն նշանի երկու անգամ մեծ երրորդ լիցքը:
- 1) Լիցքերից յուրաքանչյուրի վրա երրորդ լիցքի ազդող ուժը քանի՞ անգամ է մեծ մինչև երրորդ լիցքը տեղադրելը լիցքերի փոխազդեցության ուժից:
  - 2) Զանի՞ ազամ մեծացավ լիցքերից յուրաքանչյուրի վրա ազդող ուժը երրորդ լիցքը տեղադրելուց հետո:
1280. Հավասարակողմ եռանկյան գագարներում մինույն նշանի լիցքերից յուրաքանչյուրի վրա ազդող համագոր ուժը  $\sqrt{3} \cdot 10^{-3}$  Ն է:
- 1) Որքա՞ն է լիցքերից յուրաքանչյուր գույզի փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
  - 2) Որքա՞ն է եռանկյան կողմի երկարությունը, եթե լիցքերից յուրաքանչյուրը  $6 \cdot 10^{-9}$  Կլ է: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
1281. Պրոտոնի  $2 \cdot 10^5$  Ն/Կլ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում է: Պրոտոնի զանգվածն ընդունել  $1,6 \cdot 10^{-27}$  կգ:
- 1) Որքա՞ն է պրոտոնի վրա ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^{15}$ -ով:
  - 2) Որքա՞ն է պրոտոնի արագացումն այդ դաշտում: Պատասխանը բազմապատկել  $10^{-13}$ -ով:
1282. Յոդի գնդաճե կաթիլն առաջացել է մառախուղի նույն չափի և նույն լիցքը կրող 216 կաթիլների միացումից:
- 1) Յոդի կաթիլի շառավիղը քանի՞ անգամ է մեծ մառախուղի յուրաքանչյուր կաթիլի շառավիղից:
  - 2) Յոդի կաթիլի մակերևույթի վրա դաշտի լարվածությունը քանի՞ անգամ է մեծ մառախուղի յուրաքանչյուր կաթիլի մակերևույթի վրա դաշտի լարվածությունից:

1283. Հավասարակողմ եռանկյան  $AB$  և  $AC$  կողմերը միևնույն լիցքով հավասարաչափ լիցքավորված ձողեր են (նկ. 36): Եռանկյան  $O$  կենտրոնում էլեկտրական դաշտի լարվածության մոդուլը  $100 \text{ V/m}$  է, իսկ պոտենցիալը՝  $300 \text{ V}$ :

- 1) Որքա՞ն կլինի լարվածության մոդուլն այդ կետում, եթե ձողերից մեկը հեռացնենք:
- 2) Որքա՞ն կլինի պոտենցիալն այդ կետում, եթե ձողերից մեկը հեռացնենք:



Նկ. 36


1284. Առանձնացված  $9 \mu \text{C}$  շառավիզով դրականապես լիցքավորված մետաղե գնդի մակերևույթի վրա էլեկտրական դաշտի լարվածությունը  $130 \text{ V/m}$  է:

- 1) Որքա՞ն է գնդի լիցքը: Պատասխանը բազմապատկել  $10^8$ -ով:
- 2) Որքա՞ն է դաշտի լարվածությունը գնդի կենտրոնից  $18 \mu \text{m}$  հեռավորությամբ կետում: Պատասխանը բազմապատկել  $10^{-6}$ -ով:

1285. Քառակուսու գագաթներում տեղադրված են 4 կետային լիցքեր՝  $q_1 = -1 \text{ nC}$ ,  $q_2 = +2 \text{ nC}$ ,  $q_3 = -3 \text{ nC}$  և  $q_4 = +4 \text{ nC}$  (նկ. 37):

Քառակուսու անկյունագիծը 20 սմ է:

- 1) Որքա՞ն է էլեկտրական դաշտի լարվածության մոդուլը քառակուսու կենտրոնում:
- 2) Որքա՞ն կլինի դաշտի լարվածության մոդուլը քառակուսու կենտրոնում, եթե  $q_1$  և  $q_3$  լիցքերը հեռացնենք:



Նկ. 37

1286. Երկու միատեսակ՝  $-10^{-7} \text{ C}$  բացասական լիցքով և  $3 \cdot 10^{-4} \text{ C}$  կգ զանգվածով նյութական կետեր պտտվում են  $10^{-7} \text{ C}$  դրական կետային լիցքի շորջը՝ դրական լիցքով անցնող  $0,2 \text{ m}$  երկարությամբ տրամագծի հակադիր ծայրերում: Ծանրության ուժն անտեսել:

- 1) Որքա՞ն է բացասական լիցքերի փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^5$ -ով:
- 2) Որքա՞ն է բացասական լիցքերի պտտման անկյունային արագությունը:

1287.  $2 \cdot 10^{-3}$  կգ զանգվածով և  $3 \cdot 10^{-8}$  Կլ լիցքով մասնիկի արագությունը էլեկտրաստատիկ դաշտում երկու կետերի միջև տեղափոխվելիս 0,02 մ/վ-ից դարձավ 0,1 մ/վ:
- 1) Որքա՞ն աշխատանք է կատարում էլեկտրաստատիկ դաշտը մասնիկն այդ կետերի միջև տեղափոխվելիս: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:
  - 2) Որքա՞ն է այդ կետերի պոտենցիալների տարբերությունը:
1288. Հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարք օդային կոնդենսատորի շրջադիրների հեռավորությունը փոքրացրին 2 անգամ:
- 1) Քանի՞ անգամ փոխվեց շրջադիրների միջև դաշտի լարվածությունը:
  - 2) Քանի՞ անգամ փոխվեց կոնդենսատորի լիցքը:
1289. 20 Վ լարման հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարք օդային կոնդենսատորի շրջադիրների հեռավորությունը 1 սմ-ից դարձրին 2 սմ:
- 1) Որքանո՞վ փոքրացավ շրջադիրների միջև լարվածությունը:
  - 2) Քանի տոկոսով փոքրացավ կոնդենսատորի լիցքը:


## 9.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1290.  $10^4$  Ն/Կլ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտի ուժագծերի երկայնքով շարժվում են 3 մ երկարությամբ թերու կապված երկու գնդիկները: Գնդիկների զանգվածները  $20 \text{ q}$  և  $30 \text{ q}$  են, իսկ լիցքերը՝ համապատասխանաբար՝  $-1$  մկՎ և  $4$  մկՎ: Ծանրության ոժն ամտենել:

- 1) Որքա՞ն է լիցքերի շարժման արագացումը: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:
- 2) Որքա՞ն է լիցքերի կուլոնյան փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
- 3) Որքա՞ն է լիցքերը միացնող թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

1291.  $7 \text{ q}$  զանգվածով գնդիկը լիցքավորված է  $q_1 = 280$  մԿլ լիցքով և կախված է թելից (նկ. 38):

Նրան հակառակ նշանի  $q_2$  լիցք մոտեցնելիս թելը շեղվում է  $\alpha = 45^\circ$ -ով: Լիցքերը նույն հորիզոնականի վրա են:




Նկ. 38

- 1) Որքա՞ն է գնդիկների կուլոնյան փոխազդեցության ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 2) Որքա՞ն է  $q_2$  լիցքի մոդուլը, եթե  $r = 6$  սմ: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:
- 3) Որքա՞ն է թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

1292. Ուղղաձիգ ներքև ուղղված  $8 \cdot 10^3$  Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում  $16 \text{ q}$  զանգվածով և  $4 \cdot 10^{-6}$  Կլ լիցքով ուղղաձիգ վեր նետված մարմինը 10 կ հետո վերադարձնում է նետման կետ: Էլեկտրական դաշտի ուժագծերը համընկնում են Երկրի գրավիտացիոն ուժի ուղղությանը: Օդի դիմադրությունն անտենել:

- 1) Որքա՞ն է մարմնի շարժման արագացումը:
- 2) Որքա՞ն է մարմնի սկզբնական արագությունը:
- 3) Ի՞նչ առավելագույն բարձրության կիասնի մարմինը:



Նկ. 39

1293. Էլեկտրական դաշտն առաջացել է արտաքին համասեռ դաշտի և լիցքավորված թիթեղի դաշտի վերաբրումից (նկ. 39): Արդյունաբար

դաշտի լարվածությունը քիբեղից աջ  $E_1 = 4 \cdot 10^4$  Վ/մ է, իսկ ձախ՝  $E_2 = 2 \cdot 10^4$  Վ/մ:

- 1) Որքա՞ն է արտաքին դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:
  - 2) Որքա՞ն է թիթեղի ստեղծած դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:
  - 3) Որքա՞ն է թիթեղի լիցըր, եթե թիթեղի վրա արտաքին դաշտի ազդող ուժը 2 Ն է: Պատասխանը բազմապատկել  $10^4$ -ով:
- 1294.**  $8 \cdot 10^4$  Վ/մ լարվածությամբ համաստ էլեկտրական դաշտում ուղղաձիգ առանցքի շուրջը 6 ոտղ/վ անկյունային արագությամբ պտտվում է 1 մ երկարությամբ քելից կախված  $10$  գ զանգվածով և  $10^{-6}$  Կլ լիցըրով գնդիկը: Էլեկտրական դաշտի ուժագծերն ուղղված են ծանրության ուժի ուղղությամբ:
- 1) Որքա՞ն է քելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
  - 2) Որքա՞ն է քելի կազմած անկյունն ուղղաձիգի հետ:
  - 3) Որքա՞ն է գնդիկի կինետիկ էներգիան 6 ոտղ/վ անկյունային արագությամբ պտտվելիս: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
- 1295.** Միմյանցից 8 սմ հեռավորությամբ գուգահեռ դասավորված A և B թիթեղների վրա պահպանվում են համապատասխանարար  $+60$  և  $-60$  Վ պոտենցիալներ: Նրանց միջև A թիթեղից 2 սմ հեռավորությամբ տեղադրում են C հողակցված մնացած թիթեղը:
- 1) Որքա՞ն էր դաշտի լարվածությունը A և B թիթեղների միջև մինչև C թիթեղի տեղադրելը:
  - 2) Որքա՞ն դարձավ դաշտի լարվածությունը A և C թիթեղների միջև:
  - 3) Որքա՞ն դարձավ դաշտի լարվածությունը B և C թիթեղների միջև:
- 1296.** Էլեկտրոնն արագացնող դաշտում տեղափոխվեց 20 Վ պոտենցիալ ունեցող կետից 30 Վ պոտենցիալ ունեցող կետ: Էլեկտրոնի սկզբանական արագությունը զրո է:
- 1) Որքա՞ն է էլեկտրոնի ծեռք քերած կինետիկ էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ով:
  - 2) Որքա՞ն է էլեկտրոնի ծեռք քերած արագությունը: Ընդունել՝  $\sqrt{2} = 1,41$ : Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:
  - 3) Որքա՞ն է էլեկտրոնի էլեկտրական փոխազդեցության պոտենցիալ էներգիայի փոփոխության մոդուլը: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ով:


1297.  $8 \cdot 10^{-7}$  Կլ լիցք կրող փոշեհատիկը հորիզոնական դիրքով դասավորված երկու մետաղե թիթեղների մեջտեղում է: Թիթեղների միջև հեռավորությունը 0,01 մ է: Եթե թիթեղների պոտենցիալների տարրերությունը 200 Վ է, փոշեհատիկն ուղղաձիգ ներքև է իջնում  $2 \text{ N/V}^2$  արագացմամբ: Օդի դիմադրությունն անտեսել:
- 1) Որքա՞ն է թիթեղների միջև դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:
  - 2) Որքա՞ն է փոշեհատիկի վրա էլեկտրական դաշտի ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
  - 3) Որքա՞ն է փոշեհատիկի զանգվածը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
1298. Միմյանցից  $10^{-2}$  մ հեռավորությամբ երկու ուղղաձիգ թիթեղների միջև մեկուսիչ թելից կախված է  $10^{-4}$  կգ զանգվածով և  $10^{-8}$  Կլ լիցքով գնդիկը: Եթե թիթեղներին կիրառում են 1000 Վ լարում, գնդիկը թելի հետ շեղվում է:
- 1) Որքա՞ն է թիթեղների միջև էլեկտրական դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
  - 2) Որքա՞ն է ուղղաձիգի հետ թելի կազմած անկյունը:
  - 3) Որքա՞ն է թելի լարման ուժը շեղված վիճակում: Պատասխանը բազմապատկել  $10^4$ -ով:
1299. 40 գ զանգված և  $2 \cdot 10^{-5}$  Կլ լիցք ունեցող գնդիկը կախված է 0,4 մ երկարությամբ մեկուսիչ թելից և պտտվում է հորիզոնական հարթության մեջ այնպես, որ թելն ուղղաձիգի հետ կազմում է  $60^0$  անկյուն: Համակարգը ուղղաձիգ վեր ուղղված  $10^4$  Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրաստատիկ դաշտում է:
- 1) Ոքա՞ն է գնդիկի վրա դաշտի ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
  - 2) Որքա՞ն է թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
  - 3) Որքա՞ն է գնդիկի պտտման պարբերությունը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
1300. Լիցքավորված օդային հարք կոնդենսատորի շրջադիրներից յուրաքանչյուրի մակերեսը  $20 \text{ m}^2$  է, նրանց հեռավորությունը՝  $2$  սմ, իսկ նրանց միջև դաշտի լարվածությունը՝  $200 \text{ V/m}$ : Կոնդենսատորը տեղադրում են 150 Վ/մ լարվածությամբ արտաքին համասեռ էլեկտրաստատիկ դաշտում այնպես, որ այդ դաշտի լարվածության վեկտորը

հակառակ է ուղղված կոնդենսատորի թիթեղների միջև դաշտի լարվածությանը:

- 1) Որքա՞ն է արտաքին դաշտում տեղադրելուց հետո շրջադիրների միջև դաշտի լարվածությունը:
- 2) Որքա՞ն կլինի շրջադիրների միջև դաշտի լարվածությունը, եթե շրջադիրների տեղերը փոխվի:
- 3) Որքա՞ն աշխատանք պետք է կատարել շրջադիրների տեղերը փոխելու համար: Պատասխանը բազմապատկել  $10^{14}$ -ով:

1301. Ուղղաձիգ դեպի ներքև ուղղված  $E = 2 \cdot 10^3$

Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում  $I = 0,45$  մ երկարությամբ թելից կախված  $m = 1$  գ զանգվածով գնդիկին հաղորդվել է  $q = 5 \cdot 10^{-6}$  Կ լիցք (նկ. 40): Թելը շեղում են  $90^\circ$ -ով և բաց բողնում:



Նկ. 40

1) Որքա՞ն է գնդիկի արագությունն այն պահին, երբ թելն ուղղաձիգի հետ կազմում է  $\alpha = 60^\circ$  անկյուն:

- 2) Որքա՞ն է թելի լարման ուժն այն պահին, երբ թելն ուղղաձիգի հետ կազմում է  $\alpha = 60^\circ$  անկյուն: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 3) Որքա՞ն է էլեկտրական դաշտի կատարած աշխատանքը, երբ գնդիկն սկզբնական դիրքից տեղափոխվում է մինչև այն դիրքը, երբ թելն ուղղաձիգի հետ կազմում է  $\alpha = 60^\circ$  անկյուն: Պատասխանը բազմապատկել  $10^5$ -ով:

1302. Մինչև  $600$  Վ պոտենցիալների տարբերությունը լիցքավորված  $2 \cdot 10^{-6}$  Ֆ ունակությամբ կոնդենսատորը միացնում են նոյն ունակությունն ունեցող չլիցքավորված կոնդենսատորին:

- 1) Որքա՞ն է լիցքավորված կոնդենսատորի էներգիան մինչև չլիցքավորվածին միացնելը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 2) Որքա՞ն կլինի սկզբում չլիցքավորված կոնդենսատորի թիթեղների միջև պոտենցիալների տարբերությունն այն լիցքավորվածին միացնելուց հետո:
- 3) Որքա՞ն է կոնդենսատորների համակարգի էլեկտրական դաշտի էներգիայի փոփոխության մորուլը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

1303.  $10$  պֆ ունակությամբ հաղորդիչն ունի  $600$  նկ. լիցք, իսկ նրանից մեծ հեռավորությամբ տեղադրված  $30$  պֆ ունակությամբ հաղորդիչ՝  $-200$

**ԱԿԼ լիցք:** Հաղորդիչները միմյանց միացնում են հաղորդալարով, որի ունակությունը կարելի է անտեսել:

- 1) Որքա՞ն լիցք կմնա առաջին հաղորդչի վրա միացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:
- 2) Որքա՞ն լիցք կմնա երկրորդ հաղորդչի վրա միացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:
- 3) Որքա՞ն կլինի հաղորդիչների պոտենցիալը միացնելուց հետո: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:


## 9.5. ԶՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐՄԱՔՆԵՐ

1304. Կախոցի նույն կետից ամրացված միևնույն երկարությամբ թելերից կախված երկու լիցքավորված գնդիկներ օղից մտցնում են կերոսինի մեջ: Կերոսինի խտությունը  $800 \text{ kg/m}^3$  է, իսկ դիէլեկտրական քափանցելիությունը՝  $2$ : Հավասարակշռության վիճակում թելերի կազմած անկյունը օդում և կերոսինում նույնն է:
- 1) Գնդիկների էլեկտրական փոխազդեցության ուժն օդում քանի<sup>9</sup> անգամ է մեծ դիէլեկտրիկում նրանց էլեկտրական փոխազդեցության ուժից:
  - 2) Գնդիկի ծանրության ուժը քանի<sup>9</sup> անգամ է մեծ նրա վրա ազդող կերոսինի արքիմեդյան ուժից:
  - 3) Որքա<sup>10</sup>ն է կերոսինում և օդում թելերի լարման ուժերի հարաբերությունը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
  - 4) Որքա<sup>10</sup>ն է գնդիկների միջին խտությունը:
1305.  $10$  գ զանգվածով և  $1$  մկՎ լիցքով մարմինը նետվել է հորիզոնի նկատմամբ  $30^\circ$  անկյան տակ  $10$  մ/վ սկզբնական արագությամբ: Մարմնի շարժումը տեղի է ունենում գրավիտացիոն և  $10^5 \text{ N/m}$  լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտերում: Վերջինիս ուժագծերն ուղղված են ուղղաձիգ դեպի ներքև:
- 1) Որքա<sup>10</sup>ն է մարմնի արագացումը:
  - 2) Որքա<sup>10</sup>ն է թոփչքի տևողությունը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
  - 3) Որքա<sup>10</sup>ն է թոփչքի հեռահասությունը: Ընդունել՝  $\sqrt{3} = 1,8$ : Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
  - 4) Որքա<sup>10</sup>ն է թոփչքի առավելագույն բարձրությունը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
1306.  $0,1$  կգ զանգվածներով A և B գնդիկները լիցքավորված են  $10$  մկՎ տարանուն լիցքերով: A գնդիկը կախված է անշիռ մեկուսիչ  $10$  Ն/մ կոշտությամբ զապանակից, որի տակ տեղադրված B գնդիկը (նկ. 41): Սկզբնական դիրքում գնդիկների կուլոնյան ձգողության ուժը  $4$  անգամ մեծ է գնդիկներից մեկի ծանրության ուժից: Զապանակի O կախման կետը բարձրացնում են այնքան, որ BС թելի լարումը հավասարվի գրոյի:
- 1) Որքա<sup>10</sup>ն է սկզբնական վիճակում A և B գնդերի հեռավորությունը: Ընդունել՝  $\sqrt{10} = 3,2$ : Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

- 2) Որքա՞ն է սկզբնական վիճակում զսպանակի երկարացումը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
- 3) Օ կետը բարձրացնելուց հետո որքա՞ն է գնդիկների միջև հեռավորությունը: Ընդունել՝  $\sqrt{10} = 3,2$ : Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 4) Որքա՞ն է բարձրացնելուց հետո զսպանակի երկարացումը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

1307. Ուղղաձիգ վեր ուղղված  $9 \cdot 10^2$  Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտում դադարի վիճակում պահում են 2 մ երկարությամբ մեկուսիչ անկշիռ ծողի ծայրին ամրացված  $0,3$  կգ զանգվածով և  $2 \cdot 10^{-2}$  Կլ լիցքով գնդիկը: Չողի ազատ ծայրը հողակապով ամրացված է հորիզոնական հարթությանը (նկ. 42): Սկզբում ծողին ուղղաձիգի հետ կազմում է  $\alpha = 60^\circ$  անկյուն:

- 1) Որքա՞ն է էլեկտրական դաշտի կողմից գնդիկի վրա ազդող ուժը:
- 2) Գնդիկն ազատ արձակելուց հետո, որքա՞ն աշխատանք է կատարում էլեկտրաստատիկ դաշտը, մինչև այն պահը, եթե ծողին անցնում է ուղղաձիգ դիրքով:
- 3) Որքա՞ն է գնդիկի արագությունը ձորի ուղղաձիգ դիրքով անցնելիս:
- 4) Որքա՞ն է ծողի լարման ուժը, այն ուղղաձիգ դիրքով անցնելիս:




Նկ. 41

1308.  $10^{-8}$  գ զանգվածով, լիցքավորված փոշեհատիկը գտնվում է հորիզոնական դիրքով դրված թիթեղների միջև ստեղծված համասեռ էլեկտրական դաշտում: Ներքեւի թիթեղը լիցքավորված է մինչև 3 ԿՎ, իսկ վերևինը՝  $-3$  ԿՎ պոտենցիալը: Թիթեղների միջև հեռավորությունը 6 ամ է: Սկզբնական պահին փոշեհատիկը ներքեւի թիթեղից բարձր է 1 ամ և  $0,1$  Վ-ի ընթացքում հասնում է վերևի թիթեղին:

- 1) Որքա՞ն է թիթեղների միջև էլեկտրական դաշտի լարվածությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:
- 2) Որքա՞ն է փոշեհատիկի արագացումը:
- 3) Որքա՞ն է փոշեհատիկի լիցքը: Պատասխանը բազմապատկել  $10^{15}$ -ով:
- 4) Որքա՞ն պետք է լինի փոշեհատիկի լիցքը, որպեսզի այն գտնվի հավասարակշռության վիճակում: Պատասխանը բազմապատկել  $10^{15}$ -ով:


1309. Ուղղաձիգ ուղղի վրա միմյանցից  $0,3$  մ հեռավորությամբ ամրացված են երկու միատեսակ  $q = 2 \cdot 10^{-6}$  Կլ կետային լիցքեր (նկ. 43): Այդ լիցքերից հավասարահեռ հորիզոնական հարթության մեջ  $r = 0,2$  մ



Նկ. 42


շառավղով շրջանագծով պտտվում է  $q_0 = -4 \cdot 10^{-5}$  Կլ կետային լիցքն այնպես, որ շրջանագծի կենտրոնը գտնվում է ամրացված լիցքերը միացնող ուղղի վրա: Ծանրության ուժն աճնեսել:

- 1) Որքա՞ն է ամրացված լիցքերից յուրաքանչյուրի ստեղծած էլեկտրական դաշտի լարվածությունը պտտվող լիցքի ուղեծրի վրա: Պատասխանը բազմապատկել  $10^{-3}$ -ով:
- 2) Որքա՞ն է ամրացված լիցքերի արդյունարար դաշտի լարվածությունը պտտվող լիցքի ուղեծրի վրա: Պատասխանը բազմապատկել  $10^{-2}$ -ով:
- 3) Որքա՞ն է պտտվող լիցքի անկյունային արագությունը, եթե նրա գանգվածը  $6,4 q$  է:
- 4) Քանի՞ անգամ պետք է մեծացնել պտտվող լիցքի մեծությունը, որպեսզի նույն ուղեծրով պտտվելիս անկյունային արագությունը մեծանա  $3$  անգամ:



Նկ. 43

1310. Հարք օդային կոնդենսատորի շրջադիրներից յուրաքանչյուրի մակերեսը  $0,01 \text{ m}^2$  է, նրանց միջև հեռավորությունը՝  $3 \cdot 10^{-3} \text{ m}$ : Շրջադիրների միջև տեղադրում են հավասար չափերով տարրեր դիէլեկտրիկներ այնպես, որ շրջադիրների միջև տարածությունն ամրողավում է (նկ. 44): Դիէլեկտրիկների դիէլեկտրական բափանցելիությունները՝  $\varepsilon_1 = 4$ ,  $\varepsilon_2 = 6$ :



Նկ. 44

- 1) Որքա՞ն է կոնդենսատորի  $\varepsilon_1$  բափանցելիությամբ կեսի ունակությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{12}$ -ով:
- 2) Որքա՞ն է կոնդենսատորի  $\varepsilon_2$  բափանցելիությամբ կեսի ունակությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{13}$ -ով:
- 3) Որքա՞ն է ամրող կոնդենսատորային համակարգի ունակությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{13}$ -ով:
- 4) Կոնդենսատորային համակարգի ունակությունը քանի՞ անգամ է մեծ օդային կոնդենսատորի (առանց դիէլեկտրիկների) ունակությունից:

## **10. ՀԱՍՏԱՏՈՒՆ ՀՈՍԱՆՔ: ՕՀՄԻ ՕՐԵՆՔԸ ՇՊԸԱՅԻ ՏԵՂԱՍԱՍԻ ՀԱՍԱՐ: ՀԱՊՈՐԴԻՉՆԵՐԻ ՀԱԶՈՐԴԱԿԱՆ ԵՎ ԶՈՒԳԱՀԵՌ ՄԻԱՑՈՒՄՆԵՐ**

### **10.1. ԹԻԾՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

**1311. Ինչպե՞ս են մետաղում շարժվում էլեկտրոնները էլեկտրական դաշտի առկայությամբ:**

- 1) Կատարում են անկանոն, քառային շարժում:
- 2) Կատարում են ուղղորդված, կարգավորված շարժում:
- 3) Զերմային շարժման հետ մեկտեղ կատարում են ուղղորդված, կարգավորված շարժում:
- 4) Բոլոր պատասխանները ճիշտ են:

**1312. Էլեկտրական հոսանքի ո՞ր ազդեցությունը միշտ տեղի ունի կամայական միջավայրով անցնելիս:**

- 1) Զերմային ազդեցությունը:
- 2) Մագնիսական ազդեցությունը:
- 3) Քիմիական ազդեցությունը:
- 4) Թե՛ զերմային ազդեցությունը, թե՛ մագնիսական:

**1313. Ո՞ր ուղղությունն է ընդունված որպես հոսանքի ուղղություն:**

- 1) Դրականապես լիցքավքրված մասնիկների ուղղորդված շարժման ուղղությունը:
- 2) Բացասականապես լիցքավքրված մասնիկների ուղղորդված շարժման ուղղությունը:
- 3) Դրականապես լիցքավքրված մասնիկների ուղղորդված շարժման հակառակ ուղղությունը:
- 4) Բոլոր պատասխանները սխալ են:

**1314. Էլեկտրաչեղոք մետաղե հաղորդչում միշտ առկա են ազատ էլեկտրոններ: Ինչո՞ւ այդ դեպքում նրա շուրջը էլեկտրական դաշտ չի նկատվում:**

- 1) Էլեկտրոնների շարժումը քառային է:
- 2) Էլեկտրոնները շատ քիչ են:
- 3) Էլեկտրաչեղոք մետաղում ազատ էլեկտրոնների և իոնների գումարային լիցքը զրո է:

4) Էլեկտրական դաշտ ի հայտ չի գալիս, որովհետև հաղորդալարը պատված է մեկուսիչ թաղանքով:

1315. Ո՞ր բանաձևն է արտահայտում հաստատուն հոսանքի ուժի սահմանումը:

$$1) \quad I = \frac{U}{R}; \quad 3) \quad I = \frac{F_{\max}}{Bl};$$

$$2) \quad I = \frac{q}{t}; \quad 4) \quad I = \frac{\varepsilon}{R + r};$$

1316. Ո՞ր բանաձևն է արտահայտում  $I$  հոսանքի ուժի, հաղորդչի լայնական հատույքի  $S$  մակերեսի, նրա մեջ  $q_0$  լիցքով ազատ մասնիկների ուղղորդված շարժման  $v$  միջին արագության և  $n$  կոնցենտրացիայի միջև կապը:

$$1) \quad I = q_0 nv; \quad 3) \quad I = q_0 nv^2;$$

$$2) \quad I = q_0 nvS; \quad 4) \quad I = nvS;$$

1317. Հաղորդչի ծայրերին կիրառվում է որոշակի լարում: Ինչպես կփոխվի էլեկտրոնների ուղղորդված շարժման միջին արագությունը, եթե նույն լարումը կիրառենք նույն նյութից պատրաստված, լայնական հատույքի նույն մակերեսով, սակայն ավելի երկար հաղորդչի ծայրերին:

1) Չի փոխվի:

2) Կմեծանա:

3) Կփորբանա:

4) Կախված հաղորդչի նյութի տեսակից՝ կմեծանա կամ կփոքրանա:

1318. Մետաղական հաղորդալարով հաստատուն հոսանք անցնելիս հոսանքի ո՞ր ազդեցությունն է բացակայում, եթե այն գերհաղորդիչ վիճակում չէ:


1) Չերմային ազդեցությունը:

2) Ջիմիական ազդեցությունը:

3) Մագնիսական ազդեցությունը:

4) Թե՛ ջերմային ազդեցությունը, թե՛ մագնիսական:

1319. Հաղորդչով անցած լիցքի մեծությունը ժամանակի ընթացքում փոխվում է նկարում պատկերված ձևով: Որքա՞ն է




**հոսանքի առավելագույն ուժը ժամանակի 0-8 վ-ում:**

- 1) 0,125 Ա:      3) 2 Ա:  
2) 1,5 Ա:      4) 4,5 Ա:

**1320.** Նկարում պատկերված է հաղորդավարով անցնող հոսանքի ուժի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ի՞նչ քանակությամբ լիցք կանցնի հաղորդչի լայնական հատույթով 0-2 վ-ում:

- 1) 5 Կլ:      3) 10 Կլ:  
2) 7,5 Կլ:      4) 20 Կլ:



**1321.** Ո՞ր քանածուվ է արտահայտվում Օհմի օրենքը շրթայի տեղամասի համար:

- 1)  $I = \frac{q}{t}$ :      3)  $I = \frac{U}{R}$ :  
2)  $\varepsilon = \frac{A}{q}$ :      4)  $I = \frac{\varepsilon}{R+r}$ :

**1322.** Այլուսակում տրված են հաղորդչում հաստատուն հոսանքի ուժի արժեքները՝ նրա ծայրերին կիրառված լարման տարրեր արժեքների դեպքում: Որքա՞ն է հոսանքի ուժը հաղորդչում 3,5 Վ լարման դեպքում:

$U$ (Վ)	0	1	2	3	4
$I$ (Ա)	0	2	4	6	8

- 1) 2 Ա      3) 7 Ա  
2) 6,5 Ա      4) 7,5 Ա

**1323.** Որքա՞ն է  $l$  երկարությամբ համասեռ պղնձալարի դիմադրությունը, եթե նրա լայնական հատույթի մակերեսը  $S$  է, իսկ պղնձի տեսակարար դիմադրությունը՝  $\rho$ :

- 1)  $\rho \frac{l}{S}$ :      3)  $\frac{l}{\rho S}$ :  
2)  $\rho \frac{S}{l}$ :      4)  $\frac{S}{\rho l}$ :

**1324.** Ի՞նչ չափայնություն ունի տեսակարար դիմադրությունը միավորների ՄՀ-ում:

- 1)  $\text{Օմ} \cdot \text{մ}^2$ :      3)  $\text{Օմ} \cdot \text{մ}$ :

2) Ա.Վ.մ:                  4) Օմ.մ<sup>2</sup>:

1325. Ի՞նչ միավորով է չափում նյութի տեսակարար դիմադրությունը:

- 1) 1 Օմ:                  3) 1 Վ/Ա:  
2) 1 Օմ.մ:                  4) 1 Օմ.մ<sup>2</sup>:

1326. Ինչի՞ց է կախված հաղորդչի դիմադրությունը:

- 1) Հոսանքի ուժից:  
2) Լարումից:  
3) Հոսանքի աղբյուրի ԷլՇՈՒ-ից:  
4) Նրա չափերից, նյութի տեսակից և ջերմաստիճանից:



1327. Միևնույն նյութից և միևնույն լայնական հատույթի մակերես ունեցող երկու հաղորդիչներ ունեն տարրեր  $l_1$  և  $l_2$  երկարություններ: Ո՞րն է նրանց  $R_1$  և  $R_2$  դիմադրությունների միջև ճիշտ հարաբերակցությունը:

- 1)  $R_1 = R_2$ :                  3)  $\frac{R_1}{R_2} = \frac{l_2}{l_1}$ :  
2)  $\frac{R_1}{R_2} = \frac{l_1}{l_2}$ :                  4)  $R_1 R_2 = l_1 l_2$ :

1328. Որքա՞ն է նույն նյութից պատրաստված, նույն երկարությամբ երկու զլանաձև հաղորդիչների  $R_1$  և  $R_2$  դիմադրությունների հարաբերությունը, եթե առաջինի լայնական հատույթի մակերեսը երկու անգամ մեծ է երկրորդինից:

- 1)  $\frac{R_1}{R_2} = \frac{1}{2}$ :                  3)  $\frac{R_1}{R_2} = 2$ :  
2)  $\frac{R_1}{R_2} = 4$ :                  4)  $\frac{R_1}{R_2} = \frac{1}{4}$ :

1329. Նկարում պատկերված հաղորդալարերը պատրաստված են նույն նյութից: Ո՞ր զույգը պետք է վերցնել, որ փորձով հայտնաբերվի դիմադրության կախումը հաղորդչի լայնական հատույթի մակերեսից:

- 1) ա:                    
2) բ:                    
3) գ:                    
4) դ:                  

1330. Ինչպե՞ս կփոխվի հոսանքի ուժը, եթե երկար հաղորդալարը փոխարինվենք նույն չափեր ունեցող պղնձե հաղորդալարով: Լարումը երկու

դեպքում էլ նույնն է: Երկարի տեսակարար դիմադրությունը 7 անգամ  
մեծ է պղնձի տեսակարար դիմադրությունից:

- |                      |                       |
|----------------------|-----------------------|
| 1) Կփոքրանա 7 անգամ: | 3) Կփոքրանա 49 անգամ: |
| 2) Կմեծանա 7 անգամ:  | 4) Կմեծանա 49 անգամ:  |

**1331.** Մետաղե հաղորդչի ծայրերին կիրառենք հաստատուն լարում և այն  
տաքացնենք: Տաքացմանը զուգընթաց ինչպե՞ս կփոխվի նրա միջով  
անցնող հոսանքի ուժը:

- 1) Կաճի:
- 2) Կնվազի:
- 3) Չի փոխվի:
- 4) Բոլոր պատասխանները հնարավոր են:

**1332.** Ինչպե՞ս կփոխվի գլանաձև համասեռ հաղորդչի դիմադրությունը, եթե  
նրա լայնական հատույքի մակերեսը մեծացնենք 2 անգամ:


- |                      |                      |
|----------------------|----------------------|
| 1) Կմեծանա 2 անգամ:  | 3) Կմեծանա 4 անգամ:  |
| 2) Կփոքրանա 2 անգամ: | 4) Կփոքրանա 4 անգամ: |

**1333. Ω<sup>o</sup> պնդումն է սխալ:**

- 1) Վոլտաչափի դիմադրությունը պետք է շատ մեծ լինի այն տեղամասի  
դիմադրությունից, որին միացված է:
- 2) Վոլտաչափը միացնում են շղբայի տեղամասին հաջորդաբար:
- 3) Վոլտաչափը միացնում են շղբայի տեղամասին զուգահեռ:
- 4) Վոլտաչափը նախատեսված է լարում չափելու համար:

**1334.** R դիմադրության ծայրերում լարումը չափելու համար չորս աշակերտ  
վոլտաչափը միաց-

րեցին տարբեր ձևերով: Արդյունքները  
պատկերված են  
նկարում: Ω<sup>o</sup> վոլտաչափին է ճիշտ  
միացված:




- 1) а:
- 2) р:
- 3) q:
- 4) η:

1335. Հաղորդչի դիմադրությունը կարելի է հաշվել  $R = U/I$  բանաձևով: Այս բանաձևի հիման վրա կարելի<sup>o</sup> է արդյոք պնդել, որ հաղորդչի դիմադրությունն այնքան անգամ մեծ է, որքան անգամ մեծ է նրա ծայրերին կիրառված լարումը:

- 1) Չի կարելի, քանի որ լարումը մեծացնելիս հոսանքի ուժը փոքրանում է:
- 2) Կարելի է, քանի որ դիմադրությունն ուղիղ համեմատական է կիրառված լարմանը:
- 3) Չի կարելի, որովհետև քանի անգամ մեծացնում ենք լարումը, նույնին քան անգամ մեծանում է հոսանքի ուժը:
- 4) Կարելի է, քանի որ դիմադրությունը բնութագրում է հաղորդչի՝ նրա միջով անցնող հոսանքին դիմադրելու հատկությունը:


1336. Ըղայում միացված են երեք միատեսակ դիմադրություններ:  $A_3$  ամպերաչափը ցույց է տալիս  $I_0$  հոսանք: Պատասխանների ո՞ր զույգն է ճիշտ արտահայտում  $A_1$  և  $A_2$  ամպերաչափերի ցուցմունքները: Ամպերաչափերի դիմադրությունները հաշվի չառնել:

- 1)  $\frac{I_0}{2}, \frac{I_0}{2}$ :      3)  $\frac{2I_0}{3}, \frac{I_0}{3}$ :
- 2)  $\frac{I_0}{3}, \frac{I_0}{3}$ :      4)  $I_0, I_0$ :




1337. Ինչպե՞ս կփոխվեն  $A_1$  և  $A_2$  ամպերաչափերի ցուցմունքները, եթե K բանալին փակենք: Ամպերաչափերի դիմադրությունները հաշվի չառնել:

- 1)  $A_1$ -ինը կաճի,  $A_2$ -ինը կնվազի:
- 2)  $A_1$ -ինը կնվազի,  $A_2$ -ինը կաճի:
- 3) Երկուսինն էլ կաճնեն:
- 4) Երկուսինն էլ կնվազնեն:




1338. Նկարում պատկերված շղթայի ծայրերին կիրառված է  $U_0$  լարում: Որքա՞ն է  $2R$  դիմադրության ծայրերին լարման անկումը:

- 1)  $3U_0$ :      3)  $\frac{U_0}{3}$ :
- 2)  $U_0$ :      4)  $\frac{2U_0}{3}$ :



1339. Նկարում պատկերված շղթայի ո՞ր դիմադրությունում է հոսանքի ուժն ամենամեծը:

- 1) 100 Ω դիմադրությունում:
- 2) 50 Ω դիմադրությունում:
- 3) 60 Ω դիմադրությունում:
- 4) Բոլոր դիմադրություններում հոսանքի ուժը նույնն է:



1340. Ինչպե՞ս կփոխվի հոսանքի ուժը հաղորդչում, եթե անփոփոխ պահելով նրա ծայրերին կիրառված լարումը և լայնական հատույքի նակերեսը, երկարությունը մեծացնենք 2 անգամ:


- 1) Կմեծանա 2 անգամ:
- 2) Կփոքրանա 2 անգամ:
- 3) Կմեծանա 4 անգամ:
- 4) Կփոքրանա 4 անգամ:

1341. Ինչպե՞ս կփոխվի հոսանքի ուժը հաղորդչում, եթե անփոփոխ լարման դեպքում հաղորդչի տրամագիծը և երկարությունը մեծացնենք 2 անգամ:

- 1) Չի փոխվի:
- 2) Կփոքրանա 2 անգամ:
- 3) Կփոքրանա 4 անգամ:
- 4) Կմեծանա 2 անգամ:


1342. Նկարում պատկերված են հոսանքի ուժի՝ լարումից կախման գրաֆիկ-ները  $R_1$  և  $R_2$  դիմադրություններ ունեցող երկու հաղորդիչների համար: Ո՞րն է այդ դիմադրությունների միջև ճիշտ առնչությունը:

- 1)  $R_1 > R_2$ :
- 2)  $R_1 < R_2$ :
- 3)  $R_1 = R_2$ :
- 4) Գրաֆիկներից եզրակացություն անել հնարավոր չէ:




1343. Ինչպե՞ս կփոխվեն շղթայում միացված ամպերաչափի և վոլտաչափի ցուցմունքները, եթե ռեզստատի ստղակը տեղափոխենք դեպի ներքեւ: Զավիչ սարքերը համարել իդեալական:

- 1) Վոլտաչափինը կաճի, ամպերաչափինը կնվազի:
- 2) Վոլտաչափինը կնվազի, ամպերաչափինը կաճի:
- 3) Վոլտաչափինը չի փոխվի, ամպերաչափինը կաճի:
- 4) Երկուսինն էլ կնվազեն:



1344. Աշակերտը փորձով ստուգում է այն պնդումը, որ սարքով անցնող հոսանքի ուժն ուղիղ համեմատական է նրա ծայրերին կիրառված լարմանը: Նկարում պատկերված են փորձի տվյալների հիման վրա նրա կառուցած համապատասխան գրաֆիկները A և B սարքերի համար:
- Ո՞ր սարքի համար է ճիշտ վերը նշված պնդումը:

- 1) Սիայն A սարքի:
- 2) Սիայն B սարքի:
- 3) Երկու սարքերի համար:
- 4) Ωչ մեկի:




1345. Ո՞րն է նախադասության ոչ ճիշտ շարունակությունը:

**Հաղորդիչների հաջորդական միացման դեպքում...**

- 1) շղթայի տեղամասը ճյուղավորումներ չունի:
- 2) բոլոր հաղորդիչներում հոսանքի ուժը նույն է:
- 3) ամբողջ տեղամասի լարումը հավասար է առանձին հաղորդիչների լարումների գումարին:
- 4) հաջորդաբար միացված տեղամասերում լարումները հակադարձ համեմատական են այդ տեղամասերի դիմադրություններին:


1346. Ինչպե՞ս են հարաբերում նկարում պատկերված շղթայում  $R_1$  և  $R_2$  դիմադրություններով անցնող  $I_1$  և  $I_2$  հոսանքները:

$$\begin{array}{ll} 1) \frac{I_1}{I_2} = \frac{R_1}{R_2} : & 3) \frac{I_1}{I_2} = \left( \frac{R_1}{R_2} \right)^2 : \\ 2) \frac{I_1}{I_2} = \frac{R_2}{R_1} : & 4) \frac{I_1}{I_2} = 1 : \end{array}$$




1347. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:

- 1)  $3R$ :
- 2)  $R/3$ :
- 3)  $2R/3$ :
- 4)  $3R/2$ :



1348. Ո՞րն է շղթայում միացված  $V_1$  և  $V_2$  իդեալական վոլտաչափերի  $U_1$  և  $U_2$  ցուցմունքների ճիշտ առնչությունը:



1)  $U_1 = \frac{U_2}{4}$ :

3)  $U_1 = 2U_2$ :

2)  $U_1 = \frac{U_2}{2}$ :

4)  $U_1 = 4U_2$ :

1349. Ո՞րն է նախադասության ոչ ճիշտ շարունակությունը:

**Հաղորդիչների գուգահեռ միացման դեպքում...**

- 1) հոսանքի ուժը շղթայի չճյուղավորված մասում հավասար է առանձին ճյուղերով անցնող հոսանքի ուժերի գումարին:
- 2) լարումը նրանց ծայրերում նույնն է:
- 3) ամբողջ տեղամասի դիմադրությունը հավասար է առանձին հադրդիչների դիմադրությունների գումարին:
- 4) գուգահեռ միացված տեղամասերում հոսանքի ուժերը հակադարձ համեմատական են այդ տեղամասերի դիմադրություններին:


1350. Ո՞ր բանաձևը է որոշվում  $R_1$  և  $R_2$  դիմադրություններով երկու հաղորդիչների գուգահեռ միացման ընդհանուր դիմադրությունը:

1)  $R_1 + R_2$ :                   3)  $\frac{R_1 + R_2}{R_1 R_2}$ :


2)  $\frac{1}{R_1} + \frac{1}{R_2}$ :                   4)  $\frac{R_1 R_2}{R_1 + R_2}$ :

1351. 2 Ω և 6 Ω դիմադրություններով երկու հաղորդակար միացված են նկարում պատկերված ձևով: Որքա՞ն է այդ տեղամասի ընդհանուր դիմադրությունը:

- 1) 12 Ω:
- 2) 8 Ω:
- 3) 4 Ω:
- 4) 1,5 Ω:




1352. Ո՞ր շղթաներում են լամպերը միացված գուգահեռ:



- 1) ա և η շղթաներում:
- 2) Սիայն բ շղթայում:
- 3) բ և զ շղթաներում:
- 4) ա, բ և զ շղթաներում:

1353. Շղայի շճյուղավորված տեղամասով անցնում է  $I=10$  Ա հաստատուն հոսանք: Ի՞նչ է ցույց տալիս ամպերաչափը: Ամպերաչափի դիմացորդունն անտեսել:

- 1) 10 Ա:
- 2) 5 Ա:
- 3) 2,5 Ա:
- 4) 20 Ա:



1354. Բնակարանում էլեկտրասպառհեծերը միացնում են զուգահեռ: Ի՞նչ է:


- 1) Նույն լարումն ունենալու նպատակով:
- 2) Նույն հոսանքի ուժն ունենալու նպատակով:
- 3) Նույն հզորությունը ծախսելու նպատակով:
- 4) Ջիշ հաղորդալար ծախսելու նպատակով:

1355. Ինչպես է փոխվում շղայի տեղամասի ընդհանուր դիմադրությունը՝ նրան ևս մեկ դիմադրություն զուգահեռ միացնելիս:

- 1) Մեծանում է:
- 2) Չի փոխվում:
- 3) Փոքրանում է:
- 4) Հնարավոր է՝ մեծանա կամ փոքրանա:


1356. Ո՞ր բանաձևով կարելի է հաշվել նկարում պատկերված շղայի ընդհանուր դիմադրությունը:

- 1)  $R = R_1 + R_2 + R_3$ :
- 2)  $R = R_2 + \frac{R_1 R_3}{R_1 + R_3}$ :
- 3)  $R = R_1 + \frac{R_2 R_3}{R_2 + R_3}$ :
- 4)  $R = \frac{R_2(R_1 + R_3)}{R_1 + R_2 + R_3}$ :




1357. Որքա՞ն է նկարում պատկերված շղայի ընդհանուր դիմադրությունը:

- 1) 4 Ω:
- 2) 8 Ω:
- 3) 12 Ω:
- 4) 24 Ω:




1358. Որքա՞ն է նկարում պատկերված շղայի ընդհանուր դիմադրությունը:

- 1)  $R$ :
- 2)  $1,5R$ :
- 3)  $2R$ :
- 4)  $4R$ :




1359. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:

- 1) 1 Ом:
- 2) 2 Ом:
- 3) 3 Ом:
- 4) 12 Ом:




1360. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:

- 1) 1 Ом:
- 2) 3 Ом:
- 3) 4 Ом:
- 4) 12 Ом:



1361. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը  $A$  և  $B$  կետերի միջև:

- 1)  $5R$ :
- 2)  $4R$ :
- 3)  $2,5R$ :
- 4)  $0,5R$ :




1362. Ծորայում  $n$  միատեսակ դիմադրություններ միացված են հաջորդաբար: Ինչպե՞ս կփոխվի շղթայի ընդհանուր դիմադրությունը, եթե այդ հաղորդիչները միացվեն զուգահեռ:

- 1) Կմեծանա  $n$  անգամ:
- 2) Կփոքրանա  $n$  անգամ:
- 3) Կմեծանա  $n^2$  անգամ:
- 4) Կփոքրանա  $n^2$  անգամ:


1363. Կփոխվե՞ն արդյոք նկարում պատկերված  $a$  և  $b$  լամպերի պայմանությունները, եթե  $c$  լամպն այրվի: Լամպերը միատեսակ են:

- 1) Երկուսի պայմանությունն էլ չի փոխվի:
- 2) Երկուսի պայմանությունն էլ կմեծանա:
- 3)  $a$ -ինը կմեծանա,  $b$ -ինը կփոքրանա:
- 4)  $a$ -ինը կփոքրանա,  $b$ -ինը կմեծանա:




1364. Նկարում պատկերված շղթայի  $R$  դիմադրությունը անցնում է  $I$  հոսանք: Ի՞նչ հոսանք է անցնում  $2R$  դիմադրությունով:

- 1)  $3I$ :
- 2)  $2I$ :
- 3)  $I$ :
- 4)  $0,5I$ :




1365. Նկարում պատկերված շղթայում  $A_1$  ամպերաչափի ցուցմոնքը  $1 \text{ U}$  է:  
Որքա՞ն է  $A_2$  ամպերաչափի ցուցմոնքը, եթե  $R_1 = R_2 = R_3$ : Ամպեր-  
աչափերի դիմադրություններն անտե-  
սել:

- 1)  $1 \text{ U}$ :      3)  $2 \text{ U}$ :  
2)  $1,5 \text{ U}$ :      4)  $3 \text{ U}$ :




1366. Ո՞րն է նկարում պատկերված սխեմայում  $V_1$  և  $V_2$  վոլտաչափերի ցուցմոնքների ճիշտ հարա-  
բերակցությունը:

- 1)  $U_1 = U_2$ :  
2)  $U_1 = 3U_2$ :  
3)  $U_2 = 3U_1$ :  
4) Տվյալները բավարար չեն  
հարցին միարժեք պատաս-  
խանելու համար:




1367.  $R$  հաստատուն և  $r$  փոփոխական դիմադրությանք ռեզիստորները  
միացված են գուգահեռ: Ո՞ր գրաֆիկով է ներկայացված շղթայի  
լնդիանուր  $R_0$  դիմադրության կախվա-  
ծությունը  $r$  դիմադրությունից:

- 1) a:  
2) b:  
3) c:  
4) d:




1368. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդիանուր դիմադրությունը:  
Միացնող հաղորդալարերի  
դիմադրությունն անտեսել:

- 1)  $3R$ :      3)  $\frac{R}{3}$ :  
2)  $\frac{3R}{2}$ :      4)  $0$ :




1369. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի  
տեղամասի ընդիանուր դիմադրությունը:

- 1)  $R$ :      3)  $3R$ :  
2)  $2R$ :      4)  $5R$ :




1370. Նկարում պատկերված շղթայի տեղամասը կազմված է յուրաքանչյուրը  $R$  դիմադրությամբ երեք հաղորդչից: Որքա՞ն է շղթայի տեղամասի լրիվ դիմադրությունը, եթե բանալին փակ է:

- 1)  $R/2$ :      3)  $2R$ :  
2)  $R$ :      4)  $3R$ :



1371. Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:

- 1)  $\frac{2}{3}R$ :      3)  $\frac{4}{5}R$ :  
2)  $\frac{3}{4}R$ :      4)  $\frac{5}{6}R$ :



1372. Առաջին հաղորդչով գ լիցք տեղափոխվելիս էլեկտրական դաշտը կատարում է  $A$  աշխատանք: Երկրորդ հաղորդչով նույն լիցքը տեղափոխվելիս էլեկտրական դաշտը կատարում է  $2A$  աշխատանք: Որքա՞ն է հաղորդիչների ծայրերին կիրառված լարումների հարաբերությունը:

- 1)  $\frac{U_1}{U_2} = 4$ :      3)  $\frac{U_1}{U_2} = \frac{1}{2}$ :  
2)  $\frac{U_1}{U_2} = 2$ :      4)  $\frac{U_1}{U_2} = \frac{1}{4}$ :

1373. Ինչպե՞ս կփոխվի միավոր ժամանակում նույն դիմադրությունում անջատված ջերմաքանակը, եթե հոսանքի ուժը մեծանա 4 անգամ:

- 1) Կմեծանա 4 անգամ:      3) Կմեծանա 16 անգամ:  
2) Կփոքրանա 4 անգամ:      4) Կփոքրանա 16 անգամ:

1374.  $R$  դիմադրությամբ հաղորդչի ծայրերին հաստատուն  $U$  լարում կիրառելիս նրա միջով անցնում է  $I$  հոսանք: Ո՞ր բանաձևով կարելի է հաշվել հաղորդչում անջատված հզորությունը:

- 1) Սիայն  $P = I^2R$  բանաձևով:      3) Սիայն  $P = IU$  բանաձևով:  
2) Սիայն  $P = \frac{U^2}{R}$  բանաձևով:      4) Բոլոր երեք բանաձևերով:

1375. Ինչպե՞ս կփոխվի էլեկտրական սալիկի հզորությունը, եթե անփոփոխ լարման դեպքում նրա դիմադրությունը մեծացնենք 2 անգամ:

- 1) Կփոքրանա 2 անգամ:      3) Կմեծանա 4 անգամ:

2) Կփոքրանա 4 անգամ:

4) Չի փոխվի:

1376. Ծիկացման լամպի թելիկը ժամանակի ընթացքում բարակում է: Ինչպես կփոխվի լամպի սպառած հզորությունը, եթե այն միացված է հաստատուն լարման աղբյուրին:

1) Կնվազի:

2) Կաճի:

3) Չի փոխվի:

4) Սիարթեք պատասխանելու համար խնդրի տվյալները բավարար չեն:

1377. Որքա՞ն է զուգահեռ միացված  $R_1$  և  $R_2$  դիմադրությունների վրա անջատված ընդհանուր հզորությունը, եթե շրայի ծայրերին կիրառված լարումը  $U$  է:

$$1) \frac{U^2}{R_1 + R_2} :$$

$$3) \frac{U^2(R_1 + R_2)}{R_1 R_2} :$$

$$2) U^2(R_1 + R_2) :$$

$$4) U^2 \frac{R_1 R_2}{R_1 + R_2} :$$


1378. Ո՞րն է նկարում պատկերված շրայի  $R_1$  դիմադրության վրա անջատված հզորության արտահայտությունը:

$$1) \frac{I^2 R_1 R_2^2}{(R_1 + R_2)^2} :$$


$$3) \frac{I(R_1 + R_2)}{R_1 R_2} :$$

$$2) I^2(R_1 + R_2) :$$

$$4) I^2 \frac{R_1 R_2^2}{R_1 + R_2} :$$



1379. Նկարում պատկերված շրայում  $R_1 > R_2 > R_3$ : Ինչպիսի՞ն է դիմադրությունների վրա անջատված հզորությունների հարաբերակցությունը շրայով հոսանք անցնելիս:



$$1) P_1 > P_2 > P_3 : \quad 3) P_3 > P_1 > P_2 :$$

$$2) P_1 < P_2 < P_3 : \quad 4) P_2 > P_3 > P_1 :$$

1380. Երկու հաղորդիչներ, որոնցից մեկի դիմադրությունը երկու անգամ մեծ է մյուսի դիմադրությունից, հաջորդաբար միացված են հոսանքի աղբյուրին: Դիմադրությունների վրա անջատված լրիվ հզորությունը

**քանի՞ անգամ է մեծ փոքր դիմադրությամբ հաղորդչի վրա անջատված հզորությունից:**

- |             |               |
|-------------|---------------|
| 1) 2 անգամ: | 3) 4 անգամ:   |
| 2) 3 անգամ: | 4) Հավասար է: |

**1381. Տոնածառը զարդարված է հաջորդաբար միացված 12 լամպով: Ինչպե՞ս կփոխվի ծախսվող հզորությունը, եթե 12 լամպի փոխարեն միացնենք 6 լամպ:**

- |                      |                     |
|----------------------|---------------------|
| 1) Կփոքրանա 2 անգամ: | 3) Կմեծանա 2 անգամ: |
| 2) Կփոքրանա 4 անգամ: | 4) Կմեծանա 4 անգամ: |

**1382. Սենյակը լուսավորվում է հաջորդաբար միացված 4 լամպով: Ինչպե՞ս կփոխվի էլեկտրականության ծախսը, եթե լամպերի թիվը փոքրացնենք մեկով:**

- |  |  |
|--|--|
| 1) Կնվազի:   |  |
| 2) Կաճի:   |  |
| 3) Չի փոխվի:   |  |
| 4) Միարժեք պատասխանելու համար տվյալները բավարար չեն: |  |

**1383. Ի՞նչ ջերմաքանակ կանցատվի իրար հաջորդաբար միացված երեք  $R_1 = R_2 = R_3 = R$  հավասար դիմադրություններով շղթայի տեղամասում  $\Delta t$  ժամանակամիջոցում, եթե շղթայի ծայրերին կիրառված լարումը  $U$  է:**


- |                                |                                |
|--------------------------------|--------------------------------|
| 1) $\frac{3U^2}{R} \Delta t :$ | 3) $\frac{U^2}{R} \Delta t :$  |
| 2) $\frac{U^2}{3R} \Delta t :$ | 4) $\frac{3U^2}{R \Delta t} :$ |

**1384. Նույն երկարությամբ և նույն նյութից պատրաստված երկու հաղորդիչներ հաջորդաբար միացված են շղթայում: Առաջին հաղորդչի լայնական հատույքի մակերեսը 3 անգամ մեծ է երկրորդ հաղորդչի լայնական հատույքի մակերեսից: Ինչպե՞ս են հարաբերում այդ հաղորդիչներում միավոր ժամանակում անջատված ջերմաքանակները:**

- |                            |   |
|----------------------------|---|
| 1) $\frac{Q_1}{Q_2} = 9 :$ | 3) $\frac{Q_1}{Q_2} = \frac{\sqrt{3}}{3} :$ |
| 2) $\frac{Q_1}{Q_2} = 3 :$ | 4) $\frac{Q_1}{Q_2} = \frac{1}{3} :$        |

1385. Նկարում պատկերված շղթան միացված է հաստատուն լարման աղբյուրին: Ո՞ր դիմադրությունում ավելի մեծ զերմաքանակ կանչառվի:

- 1) Առաջինում՝ 2 անգամ ավելի մեծ:
- 2) Երկրորդում՝ 2 անգամ ավելի մեծ:
- 3) Առաջինում՝ 4 անգամ ավելի մեծ:
- 4) Երկրորդում՝ 4 անգամ ավելի մեծ:



1386. Հաղորդչի ծայրերին կիրառված Ս լարման դեպքում և ժամանակամիջոցում անջատվում է  $Q$  զերմաքանակ: Ի՞նչ քանակությամբ լիցք է անցնում հաղորդչի լայնական հատույթով այդ ընթացքում:

- 1)  $\frac{QU}{t} :$
- 2)  $\frac{Q}{Ut} :$
- 3)  $\frac{Qt}{U} :$
- 4)  $\frac{Q}{U} :$

1387. Հավասար դիմադրությամբ երկու ռեզիստորներ միացվում են միևնույն հոսանքի աղբյուրին՝ մի դեպքում հաջորդաբար, մյուս անգամ՝ զուգահեռ: Ինչպես են հարաբերում միևնույն ժամանակում անջատված զերմաքանակները հաջորդաբար ( $Q_1$ ) և զուգահեռ ( $Q_2$ ) միացման դեպքերում: Աղբյուրի ներքին դիմադրությունն անտեսել:

- 1)  $Q_1 = Q_2 :$
- 2)  $\frac{Q_1}{Q_2} = 2 :$
- 3)  $\frac{Q_1}{Q_2} = \frac{1}{2} :$
- 4)  $\frac{Q_1}{Q_2} = \frac{1}{4} :$

1388. Հաջորդաբար միացված երեք միատեսակ հաղորդիչներում 9 րոպեում անջատվում է որոշակի զերմաքանակ: Որքա՞ն ժամանակում նույնքան զերմաքանակ կանչառվի այդ հաղորդիչների զուգահեռ միացման դեպքում: Երկու դեպքում էլ կիրառված լարումը նույնն է:

- 1) 1 րոպեում:
- 2) 1,5 րոպեում:
- 3) 2 րոպեում:
- 4) 18 րոպեում:

1389. Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) ԷլՇՈՒ-ն թվապես հավասար է փակ շղթայով միավոր լիցքի տեղափոխման համար էլեկտրաստատիկ դաշտի կատարած աշխատանքին:
- 2) ԷլՇՈՒ-ն թվապես հավասար է փակ շղթայով միավոր լիցքի տեղափոխման համար կողմնակի ուժերի կատարած աշխատանքին:

- 3) ԷլՇՈւ-ն թվապես հավասար է բաց շղթայում հոսանքի աղբյուրի սեղմակների պոտենցիալների տարբերությանը:
- 4) ԷլՇՈւ-ն թվապես հավասար է շղթայի արտաքին և ներքին տեղամասերում լարման անկումների գումարին:

1390. Ո՞րք ՄՀ-ում էլեկտրաշարժ ուժի չափայնություն չէ:

- 1) Ն:                   3)  $\Omega/\text{Վլ}$ :
- 2) Վ:                   4)  $\text{կգ} \cdot \text{մ}^2/(\text{Ա} \cdot \text{վ}^3)$ :

1391. Ո՞ր բանաձևով է որոշվում հոսանքի ուժը չ ԷլՇՈւ-ով հոսանքի աղբյուրի կարճ միացման դեպքում:  $R$ -ը շղթայի արտաքին տեղամասի դիմադրությունն է, իսկ  $r$ -ը՝ ներքին դիմադրությունը:

$$1) I = \frac{\varepsilon}{R+r}; \quad 3) I = \frac{U}{R};$$

$$2) I = \frac{\varepsilon}{r}; \quad 4) I = \frac{U}{r};$$


1392. Փակ շղթան կազմված է իրար հաջորդաբար միացված հոսանքի աղբյուրից, շիկացման թելիկով լամպից և ռեզոստատից: Վերջինի սողնակը շարժելիս լամպի պայծառությունը մեծանում է: Ինչպես է այդ դեպքում փոխակում ռեզոստատի դիմադրությունը շղթայում:

- 1) Սեծանում է:
- 2) Փոքրանում է:
- 3) Չի փոխակում:
- 4) Պատասխանը կախված է հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունից:


1393. Նկարում պատկերված շղթան պարունակում է չ ԷլՇՈւ ունեցող հոսանքի աղբյուր և  $R$  արտաքին դիմադրություն: Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը, եթե շղթայում հոսանքը  $I$  է:

$$1) \frac{\varepsilon}{I} - R; \quad 3) \frac{\varepsilon}{I};$$

$$2) \frac{\varepsilon}{I} + R; \quad 4) R - \frac{\varepsilon}{I};$$



1394.  $\varepsilon$  ԷլՇՈւ և  $r$  ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրին միացված է  $R$  դիմադրությամբ ռեզոստատ: Ո՞ր գրաֆիկն է արտահայտում շղթայի արտաքին տեղամասում  $U$  լարման անկման կախումը  $R$  դիմադրությունից:



1) a:

3) c:


2) b:

4) d:

1395. Ո՞ր քանակնով են որոշում նկարում պատկերված շղթայի ՕԳԳ-ն:


$$1) \eta = \frac{R}{r} \cdot 100\% : \quad 3) \eta = \frac{r}{R+r} \cdot 100\% :$$

$$2) \eta = \frac{r}{R} \cdot 100\% : \quad 4) \eta = \frac{R}{R+r} \cdot 100\% :$$




1396. Ինչպե՞ս կփոխվի ամպերաչափի ցուցմունքը շղթայում, եթե K քանակին փակենք:

- 1) Չի փոխվի, քանի որ ԷլՇՈւ-ն մնում է նույնը:
- 2) Կամի, քանի որ շղթայի դիմադրությունը փոքրանում է:
- 3) Կնվազի, քանի որ շղթայի դիմադրությունը մեծանում է:
- 4) Կնվազի, քանի որ շղթայի դիմադրությունը փոքրանում է:



1397. Ի՞նչ է արտահայտում  $I_E$  մեծությունը նկարում պատկերված շղթայում:

- 1) Լարումը՝ հոսանքի աղբյուրի սեղմակներում:
- 2) Ծոբայում անջատված լրիվ հզորությունը:
- 3) Ծոբայի արտաքին տեղամասում անջատված հզորությունը:
- 4) Ծոբայի ներքին տեղամասում անջատված հզորությունը:




1398. 0,5 Օմ ներքին դիմադրությամբ հոսանքի

աղբյուրին միացված է ռեզստատ:


Նկարում պատկերված է ռեզստատում հոսանքի ուժի՝ նրա դիմադրությունից կախումն արտահայտող գրաֆիկը:

Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն:

- 1) 12 Վ:
- 2) 6 Վ:
- 3) 4 Վ:
- 4) 2 Վ:




1399. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում հաստատոն հոսանքի աղբյուր պարունակող փակ շղթայում անջատված լրիվ հզորության կախումն արտաքին դիմադրությունից:



- |       |       |
|-------|-------|
| 1) w: | 3) q: |
| 2) p: | 4) q: |

1400. Նկարում պատկերված էլեկտրական շղթայում ռեզստատի սողնակը տեղափոխում են դեպի աջ: Ինչպես կփոխվեն այդ դեպքում իդեալական վոլտաչափի և ամպերաչափի ցուցմունքները:

- 1) Երկու սարքերի ցուցմունքները կաճեն:
  - 2) Երկու սարքերի ցուցմունքները կնվազեն:
  - 3) Ամպերաչափի ցուցմունքը կաճի, իսկ վոլտաչափինը՝ կնվազի:
  - 4) Ամպերաչափի ցուցմունքը կնվազի, իսկ վոլտաչափինը՝ կաճի:



1401. Ի՞նչ լիցքակիրներով է պայմանավորված էլեկտրական հոսանքը մետաղներում:

- 1) Դրական իռնմներով:      3) Ազատ էլեկտրոնմներով:  
2) Բազասական իռնմներով:      4) Պրոտոնմներով:

1402. Ինչպե՞ս է կախված հոսանքի ուժը մետաղում առկա ազատ էլեկտրոնների կոնցենտրացիայից:


- 1) Ուղիղ համեմատական է:
  - 2) Հակադարձ համեմատական է:
  - 3) Կախված է քառակուսային օրենքով:
  - 4) Կախված չէ:

1403. Հոսանքի ո՞ր ազդեցությունն է ի հայտ գալիս մետաղե հաղորդակարով էեկարական հոսանք անցնելիս:

- 1) Սիայն ջերմային:
  - 2) Սիայն մագնիսական:
  - 3) Մագնիսական և ջեռութային:

4) Մագնիսական, ջերմային և քիմիական:

1404. Հաստատուն լայնական հատույթի մակերեսով համասեռ մետաղե երկար հաղորդիչը միացված է հոսանքի աղբյուրին: Ω՞ր կետում էլեկտրոնների ուղղորդված շարժման միջին արագությունն ունի ավելի փոքր արժեք:



- 1) ա կետում:      3) գ կետում:  
2) բ կետում:      4) Բոլոր կետերում նույնն է:

1405. Ω՞ր լիցքակիրների ուղղորդված շարժմամբ է պայմանավորված էլեկտրական հոսանքը կիսահաղորդիչներում:

- 1) Սիայն էլեկտրոնների:      3) Դրական և բացասական իոնների:  
2) Էլեկտրոնների և խոռոչների:      4) Իոնների և էլեկտրոնների:

1406. Ինչպե՞ս են ուղղված խոռոչների և ազատ էլեկտրոնների ուղղորդված շարժման արագությունները էլեկտրական դաշտում:

- 1) Խոռոչներինը՝ էլեկտրական դաշտի լարվածության ուղղությամբ, էլեկտրոններինը՝ լարվածությանը հակառակ:  
2) Էլեկտրոններինը՝ էլեկտրական դաշտի լարվածության ուղղությամբ, խոռոչներինը՝ լարվածությանը հակառակ:  
3) Երկու դեպքում էլ՝ էլեկտրական դաշտի լարվածության ուղղությամբ:  
4) Երկու դեպքում էլ՝ էլեկտրական դաշտի լարվածությանը հակառակ ուղղությամբ:

1407. Ինչո՞ւ ջերմաստիճանը բարձրացնելիս կիսահաղորդչի հաղորդականությունը մեծանում է:

- 1) Մեծանում է ազատ լիցքակիրների ուղղորդված շարժման միջին արագությունը:  
2) Մեծանում է ազատ լիցքակիրների ջերմային շարժման միջին արագությունը:  
3) Մեծանում է ազատ լիցքակիրների կոնցենտրացիան:  
4) Մեծանում է կիսահաղորդչի դիմադրությունը:

1408. Ω՞ր գործոններից է կախված կիսահաղորդչի տեսակարար դիմադրությունը.

- ա. լուսավորվածություն,  
բ. խառնուրդների առկայություն,  
գ. ջերմաստիճան:

- 1) Սիայն ա:      3) Սիայն գ:

2) Սիայն թ:

4) ա, թ և զ:

1409. Գերակշռող էլեկտրոնային հաղորդականությամբ օժտված կիսահաղորդիչներն ինչպիսի՞ խառնուրդներ են պարունակում:


- 1) Դոնորային:
- 2) Ակցեպտորային:
- 3) Խառնուրդներ չեն պարունակում:
- 4) Հավասար կոնցենտրացիաներով դոնորային և ակցեպտորային խառնուրդներ:

1410. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Ակցեպտորային խառնուկները ...

- 1) Մեծացնում են ազատ էլեկտրոնների թիվը:
- 2) Մեծացնում են խոռոչների թիվը:
- 3) Կիսահաղորդչին հաղորդում են դրական լիցք:
- 4) Կիսահաղորդչին հաղորդում են բացասական լիցք:

1411. Մետաղ (M) և կիսահաղորդչից (K) պատրաստված դիմադրատերը շրջայում միացված են զուգահեռ: Ցանցի լարման որոշակի արժեքի դեպքում դիմադրատարերին հաջորդաբար միացված ամպերաչափերի ցուցմունքները նույն են: Ինչպես կփոխվեն ամպերաչափերի ցուցմունքները, եթե ցանցի լարումը մեծացնենք:




- 1) A<sub>1</sub>-ի ցուցմունքը կամի, A<sub>2</sub>-ինը՝ կնվազի:
- 2) A<sub>1</sub>-ի ցուցմունքը կնվազի, A<sub>2</sub>-ինը՝ կամի:
- 3) Երկու ամպերաչափերի ցուցմունքները կմնան նույնը:
- 4) Երկու ամպերաչափերի ցուցմունքներն ել կամեն:

1412. Ի՞նչ նպատակով են օգտագործում կիսահաղորդչային դիոդը:

- 1) Հոսանքի ուժի մեծացման համար:
- 2) Լարման բարձրացման համար:
- 3) Հաստատուն հոսանքը փոփոխականի փոփակերպելու համար:
- 4) Փոփոխական հոսանքի ուղղման համար:

1413. Ո՞րն է տրանզիսորի պայմանական նշանը:

- 1) ա:
- 2) թ:
- 3) զ:
- 4) դ:



**1414. Ո՞ր երևույթն է կոչվում էլեկտրոլիզ:**

- 1) Էլեկտրոլիտում իոնների վերամիավորման երևույթը:
- 2) Էլեկտրոլիտում իոնների քառային շարժման երևույթը:
- 3) Էլեկտրոլիտում իոնների ուղղորդված շարժման երևույթը:
- 4) Էլեկտրոլիտում էլեկտրոդների վրա նյութի անջատման երևույթը:

**1415. Ո՞ր մասնիկներով է պայմանավորված էլեկտրական հոսանքն էլեկտրոլիտներում:**

- 1) Սիայն դրական իոններով:
- 2) Սիայն բացասական իոններով:
- 3) Սիայն էլեկտրոններով:
- 4) Դրական և բացասական իոններով:

**1416. Ինչո՞ւ ջերմաստիճանը բարձրացնելիս էլեկտրոլիտի հաղորդականությունը մեծանում է:**

- 1) Մեծանում է էլեկտրոլիտի խտությունը:
- 2) Աճում է դիտուման հետևանքով առաջացած իոնների կոնցենտրացիան:
- 3) Աճում է իոնների ջերմային շարժման միջին կինետիկ էներգան:
- 4) Վերամիավորման հետևանքով փոքրանում է իոնների կոնցենտրացիան:

**1417. Ո՞ր բանաձևով չի կարելի արտահայտել Ֆարադեյի օրենքն էլեկտրոլիզի համար:**

$$\begin{array}{ll} 1) \quad m = kI\Delta t : & 3) \quad m = \frac{M}{nN_{\text{A}}e} I\Delta t : \\ 2) \quad m = \frac{1}{F} \frac{M}{n} I\Delta t : & 4) \quad m = kI : \end{array}$$

**1418. Ո՞րն է նախադասության սխալ շարունակությունը:**

**Նյութի էլեկտրաքիմիական համարժեքը...**

- 1) ուղիղ համեմատական է քիմիական համարժեքին:
- 2) կախված չէ էլեկտրոդի վրա անջատված նյութի զանգվածից և էլեկտրոլիտով անցնող հոսանքի ուժից:
- 3) ուղիղ համեմատական է մոլային զանգվածին և հակադարձ համեմատական է իոնի լիցքին:
- 4) ուղիղ համեմատական է իոնի լիցքին և հակադարձ համեմատական է իոնի զանգվածին:

**1419. Ո՞ր մեծությունը կարելի է հաշվել՝ իմանալով Ֆարադեյի և Ավոգադրոյի հաստատունները:**

- 1) Լույսի արագությունը վակուումում:
- 2) Պլանկի հաստատունը:
- 3) Տարրական լիցքի մեծությունը:
- 4) Էլեկտրոնի զանգվածը:


1420. Էլեկտրոդի վրա անջատվեց  $M$  մոլային զանգվածին թվապես հավասար զանգվածով նյութ:  $\text{H}^+$  լիցք է անցել էլեկտրոլիտով:

$$1) \frac{1}{k} : \quad 3) \frac{M}{nk} :$$


$$2) \frac{M}{k} : \quad 4) \frac{M}{n} :$$

1421. Նկարում պատկերված է պղնձարջասալի ( $\text{CuSO}_4$ ) լուծույթով լցված էլեկտրոլիտային գոտո:  $\Omega^*$  էլեկտրոդի վրա կանչատվի պղինձ:

- 1)  $\text{U}$  էլեկտրոդի:
- 2)  $\text{U}'$  էլեկտրոդի:
- 3)  $\Omega^*$  մեկի:
- 4) Երկուսի վրա էլ կանչատվի հավասար քանակությամբ:



1422.  $HCl$ -ի,  $NaCl$ -ի և  $CuCl_2$ -ի ջրային լուծույթներ պարունակող երեք էլեկտրոլիտային գոտեր միացված են հաջորդաբար:  $\Omega^*$  է էլեկտրոլիզի ժամանակ նրանցում անջատված քլորի  $m_1$ ,  $m_2$  և  $m_3$  զանգվածների միջև ճիշտ առնչությունը:



- 1)  $m_1 = m_2 = m_3 :$
- 2)  $m_1 = m_2 + m_3 :$
- 3)  $m_1 = m_2 = 0,5m_3 :$
- 4)  $m_1 = m_2 = 2m_3 :$

1423.  $\Omega^*$  երևույթում է առավել ընդգծված արտահայտվում լիցքի ընդհատությունը:

- 1) Էլեկտրոլիզի:

2) Ինքնամակածման:

3) Էլեկտրամագնիսական մակածման:

4) Էլեկտրամագնիսական ալիքների ճառագայթման:

1424. Ո՞ր արտահայտությամբ է որոշվում էլեկտրոլիզի ընթացքում էլեկտրոլիզի վրա անջատված նյութի ատոմների թիվը, եթե  $e$ -ն տարրական լիցքն է,  $n$ -ը՝ արժեքականությունը,  $I$ -ն՝ հոսանքի ուժը,  $t$ -ն՝ ժամանակը:

$$1) \frac{It}{ne};$$

$$3) \frac{Itn}{e};$$

$$2) \frac{en}{It};$$

$$4) \frac{I}{net};$$

1425. Ո՞րն է նախադասության ճշշտ շարունակությունը:

Ինքնուրույն պարապումը գազում այն հոսանքն է, որն ...

1) առաջանում է առանց լարման աղբյուրի:

2) առաջանում է առանց իոնարարի ազդեցության:

3) ընդհատվում է իոնարարը վերացնելիս:

4) առաջանում է բավականաչափ փոքր լարումների դեպքում:

1426. Էլեկտրաստատիկ դաշտի լարվածության ի՞նչ արժեքի դեպքում տեղի կունենա գազի ինքնուրույն պարապում, եթե մոլեկուլների իոնացման էներգիան  $W$  է, իսկ ազատ վազքի միջին երկարությունը՝  $\lambda$ :

$$1) \frac{eW}{\lambda}; \quad 3) \frac{\lambda}{eW};$$

$$2) \frac{W}{e\lambda}; \quad 4) eW\lambda;$$


1427. Նկարում պատկերված է գազային պարապման վոլտամպերային բնութագիծը: Գրաֆիկի ո՞ր հատվածն է համապատասխանում ինքնուրույն պարապմանը:

1) a-b տեղամասը:

2) b-c տեղամասը:

3) c-d տեղամասը:

4) a-c տեղամասը:




1428. Գազային պարապման վոլտամպերային բնութագծով որոշել լարման փոքրագույն արժեքը, որի դեպքում հոսանքը հազենում է:

1) 300 V:

3) 100 V:

2) 200 V:

4) 0:




## 10.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1429. Որքա՞ն լիցք կանցնի հաղորդալարի հատույթի մակերեսով 20 րոպեում, եթե հոսանքի ուժը շղթայում  $0,5 \text{ U}$  է:
1430. Հաղորդալարի լայնական հատույթով 2 վ-ում անցնում են  $5 \cdot 10^{19}$  ազատ էլեկտրոններ: Որքա՞ն է հոսանքի ուժը հաղորդալարում:
1431. Հաղորդչում հոսանքի ուժը 10 վ-ում հավասարաշափ աճում է գրոյից մինչև 5 U: Որքա՞ն լիցք է անցնում հաղորդչով այդ ընթացքում:
1432. Հաջորդաբար միացված երկու պղնձե հաղորդալարերով հոսանք է անցնում: Երկրորդ հաղորդալարում էլեկտրոնների ուղղորդված շարժման արագությունը քանի<sup>o</sup> անգամ է մեծ առաջին հաղորդալարում էլեկտրոնների ուղղորդված շարժման արագությունից, եթե երկրորդ հաղորդալարի տրամագիծը երկու անգամ փոքր է առաջին հաղորդալարի տրամագիծից:
1433. Հաղորդչում հոսանքի ուժը 0,5 U է: Որքա՞ն կլինի հոսանքի ուժն այդ հաղորդչում, եթե լարումը մեծանա 4 անգամ:
1434. Որքա՞ն է լարումը շղթայի տեղամասում, եթե այդ տեղամասի դիմադրությունը 0,24 կՕմ է, իսկ հոսանքի ուժը՝ 100 մU:
1435. Որքա՞ն է 10 Օմ դիմադրությամբ հաղորդչի ծայրերին կիրառված լարումը, եթե 5 րոպեում նրա լայնական հատույթով անցնում է 120 Կլ լիցք:
1436. Որքա՞ն է 10 մ երկարությամբ և  $0,5 \text{ mm}^2$  հատույթի մակերեսով նիկելինե հաղորդալարի դիմադրությունը: Նիկելինի տեսակարար դիմադրությունը  $4 \cdot 10^{-7}$  Օմ է:
1437. I<sup>o</sup>ն լարում է կիրառված 0,8 նմ տրամագծով պղնձե լարի ծայրերին, եթե այն պարունակում է  $10^{25}$  ազատ էլեկտրոններ, որոնց ուղղորդված շարժման միջին արագությունը  $3,14 \text{ nm}/\text{վ}$  է: Պղնձի տեսակարար դիմադրությունը  $1,7 \cdot 10^{-8}$  Օմ է:
1438. Ալյումինե հաղորդալարի դիմադրությունը  $0^{\circ}\text{C}$ -ում 40 Օմ է: Որքա՞ն կլինի այդ նույն հաղորդալարի դիմադրությունը  $200^{\circ}\text{C}$ -ում: Ալյումինի դիմադրության ջերմաստիճանային գործակիցը  $0,0045 \text{ аստ}^{-1}$  է:

1439. Որքա՞ն է պղնձե լերկ հաղորդչի զանգվածը, եթե նրա դիմադրությունը 34 Ω է, իսկ երկարությունը՝ 10 կմ: Պղնձի տեսակարար դիմադրությունը  $1,7 \cdot 10^{-8}$  Ωմ է, իսկ խսությունը՝  $8,9 \cdot 10^3$  կգ/մ<sup>3</sup>:


1440. Ծղբայի  $AB$  տեղամասի ընդհանուր դիմադրությունը 10 Ω է (նկ.45): Որքա՞ն է  $R_3$  դիմադրությունը, եթե  $R_1 = 2$  Ω,

$$R_2 = 5 \text{ Ω}:$$




Նկ. 45

1441. 46-րդ նկարում պատկերված շղթայում ամպերաչափը ցույց է տալիս 1,5 A, իսկ վոլտաչափը՝ 12 V: Որքա՞ն է  $R_2$  դիմադրությունը, եթե  $R_1 = 2$  Ω:



Նկ. 46

1442. 47-րդ նկարում պատկերված շղթայում ամպերաչափի ցուցմունքը 0,5 A է, իսկ վոլտաչափինը՝ 35 V: Որքա՞ն է լամպի դիմադրությունը, եթե  $R_1 = 14$  Ω,  $R_2 = 36$  Ω:



Նկ. 47

1443. 10 Ω և 15 Ω դիմադրություններով երկու հաղորդիչներ միացված են իրար հաջորդաբար: Որքա՞ն է հաղորդիչների ընդհանուր դիմադրությունը:

1444. 220 V լարման ցանցին իրար հաջորդաբար միացրին 20 Ω և 30 Ω դիմադրություններով երկու լամպեր: Որքա՞ն է լարումը երկրորդ լամպի սեղմակներին:


1445. Ելեկտրական շղթայում իրար հաջորդաբար միացվել են  $R_1 = 13$  Ω,  $R_2 = 3$  Ω և  $R_3 = 2$  Ω դիմադրություններով հաղորդիչներ: Ծղբայում ընդհանուր լարումը 36 V է: Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում:

1446. 10 Ω և 15 Ω դիմադրություններով երկու հաղորդիչներ միացված են իրար զուգահեռ: Որքա՞ն է հաղորդիչների ընդհանուր դիմադրությունը:

1447. Ծղբայում իրար զուգահեռ միացված են լամպը և ռեզստատը: Հոսանքի ուժը լամպում 0,5 A է, իսկ ռեզստատում՝ 1,5 A: Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայի ճնուղավորված մասում:


1448. Հաջորդաբար միացված երկու հաղորդիչներից մեկի դիմադրությունը 4 անգամ մեծ է մյուսի դիմադրությունից: Քանի՞ անգամ կմեծանա հոսանքը, եթե հաղորդիչները միացվեն զուգահեռ: Լարումը երկու դեպքում էլ նույնն է: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

1449. 200 Ω դիմադրությամբ համասեռ հաղորդալարը բաժանեցին հավասար մասերի: Եթե դրանք միացրին իրար զուգահեռ, ընդհանուր դիմադրությունը հավասարվեց 2 Ω-ի: Քանի՞ մասի էին բաժանել հաղորդալարը:




1450. Որքա՞ն է 48-րդ նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը, եթե  $R_1 = 2$  Ω,  $R_2 = 6$  Ω,  $R_3 = 8$  Ω:

1451. Որքա՞ն է 49-րդ նկարում պատկերված շղթայի  $AB$  տեղամասի ընդհանուր դիմադրությունը, եթե  $R = 2$  Ω:



1452. Որքա՞ն է նկ. 50-ում ամպերաշափի ցուցմունքը, եթե  $R = 3$  Ω, իսկ վոլտաչափի ցուցմունքը՝  $U = 20$  V:



1453. Էլեկտրական շղթայի տեղամասով տեղափոխվեց 240 Վլ լիցը, և այդ դեպքում էլեկտրական դաշտը կատարեց 1200 Ω աշխատանք: Որքա՞ն է լարումն այդ տեղամասում:

Նկ. 50

1454. Որքա՞ն է մեկ րոպեում 15 Ω դիմադրությամբ հաղորդչում անջատված ջերմաքանակը, եթե այդ ժամանակամիջոցում նրա միջով անցել է 10 Վլ լիցը:

1455. Որքա՞ն ջերմաքանակ կանցատվի 10 րոպեում 60 Ω դիմադրությամբ հաղորդչում 30 V լարման դեպքում:

1456. 4 Ω դիմադրությամբ հաղորդչում հոսանքի ուժը 2 A է: Որքա՞ն աշխատանք է կատարում հոսանքը 10 վ-ում:

1457. Որքա՞ն է 484 Օմ դիմադրությամբ լամպի հզորությունը, որը նախատեսված է 220 Վ լարման համար:
1458. Էլեկտրասալիկը 5 Ա հոսանքի ուժի դեպքում 30 րոպեում սպառում է 1080 կՋ էներգիա: Որքա՞ն է էլեկտրասալիկի դիմադրությունը:
1459. 60 Վտ հզորությամբ լամպն օրական միացնում են 5 Ժ: Քանի՞ դրամ պետք է վճարել մեկ շաբաթվա (7 օր) էլեկտրաէներգիայի ծախսի համար, եթե 1 կՎտ·Ժ-ն արժեն 30 դրամ:
1460. Բնակարանը լուսավորվում է երեք լամպով՝ երկուսը՝ 75 Վտ հզորությամբ, իսկ մեկը՝ 150 Վտ: Օրվա ընթացքում յուրաքանչյուր լամպ հոսանքին միացված է լինում 4 ժամ: Որքա՞ն է լամպերի սպառած էլեկտրաէներգիայի ծախսը մեկ ամսում (30 օր), եթե մեկ կիլովատժամի սակագինը 30 դրամ է:
1461. Քանի՞ վայրկյանում կեռա 220 գ զանգվածով ջուրը, եթե ջրի սկզբնական ջերմաստիճանը  $20^{\circ}\text{C}$  է: Զեռուցչում հոսանքի ուժը 0,5 Ա է, իսկ ցանցի լարումը՝ 220 Վ: Ջրի տեսակարար ջերմունակությունը 4200 Ջ/կգ·Կ է: Չուրը եռում է  $100^{\circ}\text{C}$ -ում:
1462. Հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն 6 Վ է: Աղբյուրի ներսում մի քևերից մյուսը 25 Վլ լիցք տեղափոխելիս որքա՞ն աշխատանք են կատարում կողմանակի ուժերը:
1463. 220 Վ ԷլՇՈւ և 2 Օմ ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրը փակված է 108 Օմ դիմադրությամբ հաղորդչով: Որքա՞ն է լարման անկումն աղբյուրի ներքին դիմադրության վրա:
1464. Որքա՞ն է հոսանքի ուժը 4 Վ ԷլՇՈւ և 0,5 Օմ ներքին դիմադրությամբ հոսանքի աղբյուր ունեցող հաստատուն հոսանքի շղթայում, եթե արտաքին տեղամասում լարման անկումը 2 Վ-ով մեծ է հոսանքի աղբյուրում լարման անկումից:
1465. Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷլՇՈւ-ն, եթե 14 Օմ դիմադրությամբ հաղորդչով այն փակելիս լարումն աղբյուրի սեմակներին 28 Վ է, իսկ 29 Օմ դիմադրությամբ հաղորդչով փակելիս՝ 29 Վ:
1466. 120 Վ ԷլՇՈւ և 5 Օմ ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրին միացված վղտաշափը ցույց է տալիս 118 Վ: Որքա՞ն է վղտաշափի դիմադրությունը:

1467. 4,5 Վ ԷլՉՈՒ ունեցող հոսանքի աղբյուրին միացված 7,5 Օմ դիմադրությամբ հաղորդչով անցնում է 0,5 Ա հոսանք: Որքա՞ն է հոսանքի ուժը հոսանքի աղբյուրի կարճ միացման ժամանակ:
1468. Որքա՞ն է 1 Օմ ներքին դիմադրություն ունեցող հաստատուն հոսանքի աղբյուրի ԷլՉՈՒ-ն, եթե շղթայի 4 Օմ դիմադրությամբ արտաքին տեղամասում անջատվում է  $23,04 \text{ Վ}$  հզորություն:
1469. 4,5 Վ ԷլՉՈՒ և 0,9 Օմ ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրը շղթայում ստեղծում է 1 Ա հոսանք: Որքա՞ն է շղթայի ՕԳԳ-ն տուկոսներով:
1470. Գրավանի լապտերի մարտկոցի ԷլՉՈՒ-ն 4,5 Վ է: Շղթայի արտաքին տեղամասի 12 Օմ դիմադրության դեպքում հոսանքի ուժը 0,3 Ա է: Որքա՞ն է մարտկոցի ներքին դիմադրությունը:
1471. Որքա՞ն է շղթայի ՕԳԳ-ն՝ տուկոսներով, եթե հոսանքի աղբյուրի ներքին դիմադրության վրա լարման անկումը 4 անգամ փոքր է շղթայի արտաքին տեղամասում լարման անկումից:
1472. Որքա՞ն լիցք պետք է անցնի ծծմբաբրվային պղնձի լուծույթով, որպեսզի կարողի վրա անջատվի  $0,6588 \text{ գ}$  պղնձ: Պղնձի էլեկտրաքիմիական համարժեքը  $3,294 \cdot 10^{-7} \text{ կգ/Վլ}$  է:
1473. Էլեկտրոլիզի հետևանքում 10 Վ լարման տակ  $CuSO_4$ -ի լուծույթից անջատվում է պղնձ: Որքա՞ն էներգիա է անհրաժեշտ ծախսել  $0,987 \text{ կգ}$  պղնձնական ստանալու համար: Կորուստներն անտեսել: Պղնձի էլեկտրաքիմիական համարժեքը  $3,29 \cdot 10^{-7} \text{ կգ/Վլ}$  է: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:
1474. Որքա՞ն պետք է լինի հոսանքի ուժը  $ZnSO_4$ -ի լուծույթում, որպեսզի 5 ժամում կարողի վրա անջատվի  $306 \cdot 10^{-4} \text{ կգ ցինկ}$ : Ցինկի էլեկտրաքիմիական համարժեքը  $34 \cdot 10^{-8} \text{ կգ/Վլ}$  է:
1475. Որքա՞ն ալյումին կանջատվի 1կՎտժ էլեկտրաէներգիայի ծախսի դեպքում, եթե էլեկտրոլիզը տեղի է ունենում 2,796 Վ լարման պայմաններում, իսկ ողջ կայանքի ՕԳԳ-ն 75% է: Ալյումինի էլեկտրաքիմիական համարժեքը  $9,32 \cdot 10^{-8} \text{ կգ/Վլ}$  է: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

### 10.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1476. Հաղորդչում հոսանքի ուժը 9,6 Ա է:

- 1) Քանի<sup>°</sup> էլեկտրոն է անցնում հաղորդչի կտրվածքով 1 ժամում: Պատասխանը բազմապատկել  $10^{-21}$ -ով:
- 2) Որքա<sup>°</sup>ն գանգված է անցնում հաղորդչի կտրվածքով 1 ժամում: Պատասխանը բազմապատկել  $10^{10}$ -ով:

1477. Այլումինե և պղնձե հաղորդալարերն ունեն նույն գաճակածն ու լայնական կտրվածքի նույն մակերեսը: Այլումինի խտորդյունը  $2,9 \cdot 10^3$  կգ/մ<sup>3</sup> է, իսկ պղնձինը՝  $8,7 \cdot 10^3$  կգ/մ<sup>3</sup>, այլումինի տեսակարար դիմադրությունը  $2,7 \cdot 10^{-8}$  Օմ<sup>մ</sup> է, իսկ պղնձինը՝  $1,8 \cdot 10^{-8}$  Օմ<sup>մ</sup>:

- 1) Այլումինե հաղորդալարի երկարությունը քանի<sup>°</sup> անգամ է մեծ պղնձե հաղորդալարի երկարությունից:
- 2) Այլումինե հաղորդալարի դիմադրությունը քանի<sup>°</sup> անգամ է մեծ պղնձե հաղորդալարի դիմադրությունից: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:

1478. 20 մեկուսացված պղնձե քարակ լարերից կազմված մալուխի երկարությունը 3 մ է: Յուրաքանչյուր լարի կտրվածքի մակերեսը  $0,05$  մմ<sup>2</sup> է: Պղնձի տեսակարար դիմադրությունը  $1,7 \cdot 10^{-8}$  Օմ<sup>մ</sup> է:

- 1) Որքա<sup>°</sup>ն է յուրաքանչյուր լարի դիմադրությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 2) Որքա<sup>°</sup>ն է մալուխի դիմադրությունը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

1479. Երկու դիմադրություններ հաջորդաբար միացնելիս ստացվում է 5 Օմ դիմադրություն, իսկ գուգահեռ միացնելիս՝  $1,2$  Օմ:


- 1) Որքա<sup>°</sup>ն է մեծ դիմադրությունը:
- 2) Որքա<sup>°</sup>ն է փոքր դիմադրությունը:

1480. Շղբայի տեղամասը կազմված է 2 մ երկարությամբ և  $0,048$  մմ<sup>2</sup> կտրվածքի մակերեսով պողպատե հաղորդալարից և նրան հաջորդաբար միացված 1 մ երկարությամբ,  $0,021$  մմ<sup>2</sup> կտրվածքի մակերեսով նիկելինե հաղորդալարից: Պողպատի տեսակարար դիմադրությունը  $12 \cdot 10^{-8}$  Օմ·մ է, իսկ նիկելինը՝  $42 \cdot 10^{-8}$  Օմ<sup>մ</sup>:

- 1) Որքա<sup>°</sup>ն է տեղամասի ընդհանուր դիմադրությունը:
- 2) Որքա<sup>°</sup>ն լարում է անհրաժեշտ կիրառել տեղամասի ծայրերին՝  $0,6$  Ա հոսանք ստանալու համար:

1481. Ծղբան կազմված է  $R_1 = 5,4$  Ω,  $R_2 = 0,6$  Ω և  $R_3 = 12$  Ω երեք հաջորդարար միացված դիմադրություններից (նկ. 51): Ծղբայում միացված վոլտաչափի ցուցմունքը՝  $U = 1,2$  V:


- 1) Որքա՞ն է ամպերաչափի ցուցմունքը:
- 2) Որքա՞ն է լարման անկումը A և B կետերի միջև:



Նկ. 51

1482. 52-րդ նկարում պատկերված շղբայում  $R_1 = 2$  Ω,  $R_2 = 1$  Ω,  $R_3 = 2$  Ω, իսկ  $U = 24$  V:

- 1) Որքա՞ն է շղբայի ընդհանուր հոսանքը:
- 2) Որքա՞ն է  $R_3$  դիմադրությունը անցնող հոսանքը:



Նկ. 52

1483.  $R_1 = 2$  Ω և  $R_2 = 6$  Ω դիմադրությամբ երկու հաղորդիչ միացվում են ցանցին՝ նախ միմյանց զուգահեռ, ապա հաջորդարար:

- 1) Ի՞նչ ջերմաքանակ է անջատվում առաջին դեպքում  $R_2$  դիմադրությամբ հաղորդչում այն ժամանակում, որի ընթացքում  $R_1$  դիմադրությամբ հաղորդչում անջատվում է  $630 \Omega$  ջերմաքանակ:
- 2) Ի՞նչ ջերմաքանակ է անջատվում երկրորդ դեպքում  $R_2$  դիմադրությամբ հաղորդչում այն ժամանակում, որի ընթացքում  $R_1$  դիմադրությամբ հաղորդչում անջատվում է  $630 \Omega$  ջերմաքանակ:

1484. Լամպը 1,5 V էլ. շղբու ունեցող աղբյուրից սնելիս շղբայով անցնում է 0,2 A հոսանք:

- 1) Որքա՞ն լիցք է տեղափոխվում շղբայով 1 ր-ում:
- 2) Որքա՞ն աշխատանք են կատարում կողմնակի ուժերն աղբյուրի ներսում այդ լիցքը մի բևեռից մյուս տեղափոխելիս:

1485. Լամպը 4,5 V էլ. շղբու-ով աղբյուրին միացնելիս նրա վրա լարումը 4 V է, իսկ հոսանքը՝ 0,25 A:

- 1) Որքա՞ն է լամպի դիմադրությունը:
- 2) Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը:

1486. Զրի էլեկտրոլիզի ժամանակ գուռով անցավ 5000 Կլ լիցք:


- 1) Որքա՞ն թթվածին անջատվեց: Թթվածին էլեկտրաքիմիական համարժեքը  $829 \cdot 10^{-10}$  կգ/Կլ է: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:
- 2) Որքա՞ն է անջատված թթվածին ջերմաստիճանը (ըստ Կելվինի), եթե  $2,0725 \cdot 10^5$  Ω անշման տակ այն զբաղեցնում է  $3,32 \cdot 10^{-4}$  մ<sup>3</sup> ծավալ: Թթվածինի մոլային զանգվածը  $32 \cdot 10^{-3}$  կգ/մոլ է:

## 10.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1487. Ծղբան կազմված է հաջորդաբար միացված երեք հաղորդչից, որոնք միացված են 24 Վ լարման աղբյուրին: Առաջին հաղորդչի դիմադրությունը 4 Օմ է, երկրորդինը՝ 6 Օմ, իսկ երրորդի վրա լարման անկումը 4 Վ է:
- 1) Որքա՞ն է առաջին երկու դիմադրությունների վրա լարման անկումը:
  - 2) Որքա՞ն է շղթայով անցնող հոսանքը:
  - 3) Որքա՞ն է երրորդ հաղորդչի դիմադրությունը:
1488. 200 Վ լարման աղբյուրին հաջորդաբար միացրել են  $R_1 = 200$  Օմ և  $R_2 = 1000$  Օմ դիմադրություններ:  $R_2$  դիմադրության ծայրերին միացված վոլտաչափը ցույց է տալիս 160 Վ լարում:
- 1) Որքա՞ն է  $R_1$  դիմադրության վրա լարման անկումը:
  - 2) Որքա՞ն է ընդհանուր հոսանքի ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
  - 3) Որքա՞ն է վոլտաչափի դիմադրությունը:
1489. Երկու էլեկտրական ջեռուցիչ ունեն 200-ական Վատ հզորություն և 85 % ՕԳԳ: Անհրաժեշտ է 400 գ զուրք  $15^{\circ}\text{C}$ -ից տաքացնել մինչև եռման ջերմաստիճան ( $100^{\circ}\text{C}$ ): Զրի տեսակաբար ջերմունակությունը 4200 Վկգ.Կ է:
- 1) Որքա՞ն ժամանակ կպահանջի 1 ջեռուցիչ օգտագործելիս:
  - 2) Որքա՞ն ժամանակ կպահանջի զուգահեռ միացված 2 ջեռուցիչ օգտագործելիս:
  - 3) Որքա՞ն ժամանակ կպահանջի հաջորդաբար միացված 2 ջեռուցիչ օգտագործելիս:
1490. Մարտկոցի ԷլՉՈՒ-6 12 Վ է, իսկ ներքին դիմադրությունը՝ 1 Օմ: Ծղբան փակված է 11 Օմ արտաքին դիմադրությամբ:
- 1) Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում:
  - 2) Որքա՞ն է շղթայի արտաքին տեղամասում լարման անկումը:
  - 3) Որքա՞ն է ներքին դիմադրության վրա լարման անկումը:

1491. 53-րդ նկարում պատկերված գույում ա, թ, զ կարողների՝ դեպի անողն ուղղված կողի մակերեսները հավասար են  $10$  սմ<sup>2</sup>: Նրանց հեռավորություններն անողից՝ համապատասխանաբար՝  $5$  սմ,  $10$  սմ, և  $15$  սմ են, իսկ կիրառված լարումը՝  $1,5$  Վ: Գույքը լցված է պղնձարջասապի լուծույթով: Լուծույթի տեսակարար դիմադրությունն ընդունել 20 Օմ/սմ, իսկ պղնձի էլեկտրաքիմիական համարժեքը՝  $0,33 \cdot 10^{-6}$  կգ/Կլ:

- 1) Որքա՞ն է ա կարողի վրա անջատված պղնձի զանգվածը 1 ժամում: Պատասխանը բազմապատկել  $10^7$ - ով:
- 2) Որքա՞ն է թ կարողի վրա անջատված պղնձի զանգվածը 1 ժամում: Պատասխանը բազմապատկել  $10^7$ - ով:
- 3) Որքա՞ն է զ կարողի վրա անջատված պղնձի զանգվածը 1 ժամում: Պատասխանը բազմապատկել  $10^7$ - ով:




Նկ. 53

## 10.5. ԶՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1492. 54-րդ նկարում քերպած շղթայի A և B սեղմակների միջև 100 Վ լարում կիրառելիս, C և D սեղմակների միջև լարումը 40 Վ է, իսկ  $R_2$  դիմադրությամբ հաղորդչում հոսանքի ուժը՝ 1 Ա: C և D սեղմակների միջև 60 Վ լարում կիրառելիս A և B սեղմակների միջև լարումը 15 Վ է:

- 1) Որքա՞ն է լարման անկումը  $R_2$  դիմադրության վրա A և B սեղմակների միջև 100 Վ լարում կիրառելիս:
- 2) Որքա՞ն է  $R_2$  հաղորդչի դիմադրությունը:
- 3) Որքա՞ն է  $R_3$  հաղորդչի դիմադրությունը:
- 4) Որքա՞ն է  $R_1$  հաղորդչի դիմադրությունը:



Նկ. 54


1493. Հարք էլեկտրոդներով երկեկտրոդ էլեկտրոնային լամպում լարումը  $22 \cdot 10^3$  Վ է: Լամպով անցնում է  $2 \cdot 10^{-3}$  Ա հոսանք: Էլեկտրոնի լիցքի և զանգվածի հարաբերությունն ընդունել  $1,76 \cdot 10^{11}$  Կլ/կգ:

- 1) Որքա՞ն է էլեկտրոնի արագությունը լամպի անողին հասնելիս: Պատասխանը բազմապատկել  $10^{-6}$ -ով:
- 2) Որքա՞ն է էլեկտրոնի իմպուլսի փոփոխության մոդուլը անողին բախվելիս: Պատասխանը բազմապատկել  $10^{25}$ -ով:
- 3) Քանի՞ էլեկտրոն է հասնում անողին 1 վ-ում: Պատասխանը բազմապատկել  $10^{-14}$ -ով:
- 4) Որքա՞ն է էլեկտրոնների հարվածներով պայմանավորված ուժը, որն ազդում է անողի վրա: Պատասխանը բազմապատկել  $10^8$ -ով:

1494. 55-րդ նկարում պատկերված շղթայում հոսանքի աղբյուրի ԷլՇՈՒ-ն  $E = 12$  Վ է, ներփակիչ դիմադրությունը՝  $r = 1$  Ωն:

Շղթայի արտաքին տեղամասի պարամետրերն են՝  $R_1 = 2$  Ωն,  $R_2 = 3$  Ωն,  $C = 2 \cdot 10^{-6}$  Ֆ: Շղթայի բանալին փակ է:

- 1) Որքա՞ն է շղթայի արտաքին տեղամասի ակտիվ դիմադրությունը:
- 2) Որքա՞ն է շղթայում հոսանքի ուժը:
- 3) Որքա՞ն է կոնդենսատորի լարումը:
- 4) Որքա՞ն ջերմաքանակ կանչատվի շղթայում բանալին անջատելուց հետո: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:



Նկ. 55


## 11. ՍԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱԾ

### 11.1. ՃԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄՔ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1495. Ինչպես է իրականացվում երկու հոսանքակիր հաղորդիչների մազնիսական փոխազդեցությունը:

- 1) Էլեկտրական հոսանքները չեն փոխազդում:
- 2) Էլեկտրական հոսանքները փոխազդեցությունը պայմանավորված է իրենց ստեղծած էլեկտրական դաշտերով:
- 3) Հեռավորության վրա էլեկտրական հոսանքները փոխազդեցում են նրանց ստեղծած մազնիսական դաշտերի միջոցով:
- 4) Սի հոսանքակիր հաղորդչի ստեղծած մազնիսական դաշտն ազդում է մյուս հոսանքակիր հաղորդչի վրա և հակառակը:

1496. Ապակե խողովակում առկա է հաստատուն արագությամբ շարժվող էլեկտրոնների հոսք: Ի՞նչ դաշտ կարելի է հայտնաբերել նրա մերձական կա A կետում:

- 1) Սիայն էլեկտրական:
  - 2) Սիայն մազնիսական:
  - 3) Սիածամանակ և էլեկտրական, և մազնիսական:
  - 4) Ո՞չ էլեկտրական, ո՞չ մազնիսական:
- 

1497. Ո՞ր միջավայրերում է դրսորվում հոսանքի մազնիսական ազդեցությունը:

- 1) Սիայն վակուումում:
- 2) Սիայն մետաղներում:
- 3) Մետաղներում և էլեկտրոլիտներում:
- 4) Կամայական միջավայրում:

1498. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:


Այն մեծությունը, որը հավասար է մազնիսական դաշտի տվյալ կետում տեղադրված հոսանքակիր հաղորդչի բավականաշափ փոքր տեղամասի վրա ազդող առավելագույն ուժի մոդուլի հարաբերությանը հոսանքի ուժի և այդ տեղամասի երկարության արտադրյալին, կոչվում է մազնիսական դաշտի...

- |                                 |                 |
|---------------------------------|-----------------|
| 1) ինդուկցիայի վեկտորի մոդուլ:  | 3) պոտենցիալ:   |
| 2) լարվածության վեկտորի մոդուլ: | 4) հզորություն: |

1499. Ինչպե՞ս է կոչվում  $1 \frac{\text{Ն}}{\text{Ա մ}}$  միավորը:

- 1) 1 վերեր:      3) 1 տեսլա:  
2) 1 օհմ:            4) 1 վոլտ:

1500. Նկարում պատկերված մագնիսը քածանված է երեք կտորի: Ի՞նչ բևեռներ են առաջանում միջին կտորի ծայրերին:



- 1) a ծայրին՝ հյուսիսային, b ծայրին՝ հարավային:  
2) a ծայրին՝ հարավային, b ծայրին՝ հյուսիսային:  
3) Երկու ծայրերին էլ՝ հյուսիսային:  
4) Երկու ծայրերին էլ՝ հարավային:

1501. Ինչպե՞ս են փոխազդում երկու գրավակեր հոսանքակիր հաղորդիչները, եթե նրանց միջով անցնող հոսանքներն ունեն հակադիր ուղղություններ:


- 1) Փոխազդեցության ուժը զրո է:  
2) Հաղորդիչներն իրար ձգում են:  
3) Հաղորդիչներն իրար վանում են:  
4) Կախված հոսանքի մեծությունից՝ հաղորդիչները կձգեն կամ կվանեն իրար:

1502. Ո՞րն է սխալ պնդումը:


- 1) Էլեկտրական լիցքերի այն փոխազդեցությունը, որը ծագում է նրանց շարժման ժամանակ, կոչվում է մագնիսական փոխազդեցություն:  
2) Մագնիսական դաշտի գլխավոր հատկությունն այն է, որ նա ազդում է դաշտում տեղադրված հոսանքակիր հաղորդչի կամ շարժվող լիցքի վրա:  
3) Մագնիսական դաշտը մրրկային դաշտ է:  
4) Ի տարբերություն էլեկտրական դաշտի ուժագծերի՝ մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերը հատվում են:

1503. Ո՞րն է ուղղագիծ հոսանքի ստեղծած մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերի միջտ պատկերը, եթե հոսանքն ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը:

- 1) ա:      3) թ:  
2) զ:      4) դ:




1504. Ինչպես է ուղղված նկարում պատկերված երկու անվերջ երկար, ուղիղ, իրար զուգահեռ հոսանքակիր հաղորդալարերի արդյունարար մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը հավասարական  $A$  կետում: Հաղորդալարերում հոսանքի ուժը նույնն է ( $I_1 = I_2$ ):



- 1) Ուղղված է դեպի վերև:
- 2) Զրո է:
- 3) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է նկարից դեպի դիտողը:
- 4) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դիտողից դեպի նկարը:


1505. Նկարում տրված է հոսանքատար հաղորդչի լայնական հատույքը  $A$  կետում: Էլեկտրական հոսանքն ուղղված է դիտորդից դեպի գծագրի հարթություն: Ի՞նչ ուղղություն ունի մագնիսական դաշտի ինդուկցիան  $C$  կետում:

- 1)  $w$ :      3)  $q$ :
- 2)  $p$ :      4)  $\eta$ :



1506. Երկու միատեսակ մետաղական օդակներով հոսում է նույն հոսանքը: Սի օդակը տեղադրված է ուղղաձիգ հարթության մեջ, իսկ մյուսը հորիզոնական: Ի՞նչ ուղղություն ունի մագնիսական ինդուկցիայի վեկտորը օդակների ընդհանուր կենտրոնում:

- 1)  $w$ :      3)  $p$ :
- 2)  $q$ :      4)  $\eta$ :




1507. Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Մագնիսական դաշտի կողմից այդ դաշտում տեղակայված հոսանքակիր հաղորդչի բավականաչափ փոքր երկարությամբ տեղամասի վրա ազդող ուժը կախված է այդ տեղամասի երկարությունից:
- 2) Մագնիսական դաշտի կողմից այդ դաշտում տեղակայված հոսանքակիր հաղորդչի բավականաչափ փոքր երկարությամբ տեղամասի վրա ազդող ուժը կախված է նրանում հոսանքի ուժից:
- 3) Մագնիսական դաշտերի համար ճիշտ է վերադրման սկզբունքը:
- 4) Մագնիսական դաշտի կողմից հոսանքակիր հաղորդչի վրա ազդող ուժը կախված չէ տարածության մեջ նրա կողմնորոշումից:

1508. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում հոսանքակիր հաղորդչի բավականաշափ փոքր տեղամասի վրա մազնիսական դաշտի ազդող առավելագույն ուժի կախումը՝ նրանով անցնող հոսանքի ուժից:

- 1) ա:                   3) զ:  
2) բ:                   4) դ:




1509.  $\vec{B}$  ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտում տեղադրված է լերկարությամբ ուղղագիծ հաղորդալար, որով անցնող հոսանքի ուժը  $I$  է: Ել ո՞ր մեծությունը պետք է հայտնի լինի հաղորդչի վրա մազնիսական դաշտի կողմից ազդող ուժը որոշելու համար:

- 1) Հաղորդչի լայնական հատույթի մակերեսը:  
2) Հաղորդչի զանգվածը:  
3)  $\vec{B}$  վեկտորի և հաղորդչով անցնող հոսանքի ուղղության կազմած անկյունը:  
4) Հաղորդչի դիմադրությունը:


1510. Նկարում պատկերված է հոսանքակիր հաղորդչի լայնական հատույթը համասեռ մազնիսական դաշտում:  $\otimes$  նշանը ցույց է տալիս, որ հոսանքի ուղղությունն ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի նկարը: Ո՞րն է Ամպերի ուժի ուղղությունը:

- 1)  $\rightarrow$ :                   3)  $\leftarrow$ :  
2)  $\uparrow$ :                   4)  $\downarrow$ :




1511. Նկարում պատկերված է հոսանքակիր հաղորդչի դիրքը մազնիսական դաշտում: Մազնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը: Ի՞նչ ուղղություն ունի հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժը:

- 1) ա:                   3) զ:  
2) բ:                   4) դ:




1512. Ինչպես է ուղղված նկարում պատկերված համասեռ մազնիսական դաշտում



**տեղադրված հոսանքակիր շրջանակի վերին կողմի վրա ազդող  
Ամպերի ուժը:**


- 1) Դեպի ներքև:
  - 2) Դեպի վերև:
  - 3) Նկարի հարթությունից դեպի դիտողը:
  - 4) Դիտողից դեպի նկարի հարթությունը:
1513. Նկարում պատկերված են  $AB$  և  $CD$  հոսանքակիր հաղորդիչների մագնիսական դաշտերի ինդուկցիայի գծերը: Ինչպե՞ս են ուղղված հոսանքները հաղորդիչներում, և ինչպե՞ս են դրանք փոխազդում:

- 1)  $A$ -ից  $B$ ,  $C$ -ից  $D$ , ձգում են:
- 2)  $A$ -ից  $B$ ,  $C$ -ից  $D$ , վանում են:
- 3)  $B$ -ից  $A$ ,  $D$ -ից  $C$ , ձգում են:
- 4)  $B$ -ից  $A$ ,  $D$ -ից  $C$ , վանում են:



1514. Օղում հրիզոնական դիրքով անշարժ վիճակում հոսանքակիր հաղորդչի հատվածը տեղադրված է հաղորդչին ուղղահայաց  $\vec{B}$  ինդուկցիայով համաստու մագնիսական դաշտում: Ի՞նչ ուղղություն ունեն հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժը և հոսանքը հաղորդչում:

- 1) Ամպերի ուժը՝ վերև, հոսանքը՝ ա-ից թ:
- 2) Ամպերի ուժը՝ ներքև, հոսանքը՝ ա-ից թ:
- 3) Ամպերի ուժը՝ վերև, հոսանքը՝ թ-ից ա:
- 4) Ամպերի ուժը՝ ներքև, հոսանքը՝ թ-ից ա:



1515. Նկարում պատկերված երեք հոսանքակիր հաղորդիչները գուգահեռ են իրար և գտնվում են ուղաձիգ հարթության մեջ: Ինչպե՞ս է ուղղված 1-ին հաղորդչի վրա մյուս երկուսի կողմից ազդող Ամպերի ուժը:

- 1) Դեպի վեր:
- 2) Դեպի ներքև:
- 3) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դիտողից դեպի նկարը:
- 4) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է նկարից դեպի դիտողը:

1

2

3

1516. Հորիզոնական ողորկ մակերևույթի վրա տեղադրված է շատ փափուկ հաղորդալարից պատրաստված քառակուսաձև հաղորդիչ: Ինչպես կփոխվի հաղորդչի ձևը, եթե նրա միջով բաց քողմենք հաստատուն հոսանք:

- |                             |                                 |
|-----------------------------|---------------------------------|
| 1) Չի փոխվի:                | 3) Կընդունի շրջանագծի տեսք:     |
| 2) Կընդունի շեղանկյան տեսք: | 4) Սեղմվելով կընդունի գծի տեսք: |

1517. Նեյտրոնը և պրոտոնը նույն արագությամբ մտնում են համասեռ մազմիսական դաշտ՝ նրա ուժագծերին ուղղահայաց ուղղությամբ: Որքա՞ն է նրանց վրա ազդող Լորենցի ուժերի  $F_n / F_p$  հարաբերությունը:


- |       |                       |
|-------|-----------------------|
| 1) 0: | 3) 2000:              |
| 2) 1: | 4) $\frac{1}{2000}$ : |

1518. Ո՞ր հատկությամբ օժտված չէ Լորենցի ուժը:


- 1) Լիցավորված մասնիկին հաղորդում է արագացում:
- 2) Կատարում է աշխատանք:
- 3) Փոխում է լիցքավորված մասնիկի արագության վեկտորի ուղղությունը:
- 4) Փոխում է լիցքավորված մասնիկի շարժման հետազիծը:

1519. Էլեկտրոնը համասեռ մազմիսական դաշտում շարժվում է նկարում պատկերված հետազծով: Ինչպես է ուղղված մազմիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը:

- 1) Դեպի վերև՝  $\uparrow$ :
- 2) Դեպի ներքև՝  $\downarrow$ :
- 3) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է նկարից դեպի դիտողը՝  $\odot$ :
- 4) Ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դիտողից դեպի նկարը՝  $\otimes$ :



1520. Էլեկտրոնը  $\vec{v}$  արագությամբ մտնում է մի տիրույթ, որտեղ առկա են համասեռ մազմիսական և էլեկտրական դաշտեր, որոնց  $\vec{E}$  և  $\vec{B}$  վեկտորներն ուղղված են հակա-



**ուակ:** Ինչպիսի՞ շարժում կկատարի էլեկտրոնը, եթե նրա արագությունն ուղղահայց է  $\vec{E}$  և  $\vec{B}$  վեկտորներին:

- 1) Ծրջանագծային շարժում, որի ընթացքում արագության մոդուլն աճում է:
- 2) Ուղղագիծ հավասարաչափ շարժում:
- 3) Ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում:
- 4) Կշարժվի պարուրագծով, որի քայլը ժամանակի ընթացքում աճում է:

**1521.** Ինչպե՞ս և դեպի  $n^{\text{ր}}$  կողմ կշարժվի էլեկտրոնը դադարի վիճակից, եթե այն տեղադրված է ժամանակի ընթացքում չփոփոխվող համասեռ մագնիսական դաշտում:

- 1) Հավասարաչափ արագացումով, ազ:  $\longrightarrow$
- 2) Ծրջանագծով, ժամալարի պտտման ուղղությամբ:  $e \bullet \longrightarrow \vec{B}$
- 3) Ծրջանագծով, ժամալարի պտտմանը հակառակ ուղղությամբ:  $\longrightarrow$
- 4) Կմնա անշարժ:

**1522.** Լիցքավորված մասնիկը հաստատուն  $\vec{v}$  արագությամբ շարժվում է  $\vec{E}$  լարվածությամբ էլեկտրական և  $\vec{B}$  ինդուկցիայով մագնիսական համասեռ դաշտերում:  $\vec{E}$  և  $\vec{B}$  վեկտորները փոխուղղահայց են: Ի՞նչ պայմանի դեպքում դա տեղի ունի:

$$\begin{array}{ll} 1) \quad v = \frac{B}{E}: & 3) \quad v = \frac{E}{B} \\ 2) \quad v = \frac{B}{\sqrt{E^2 + B^2}}: & 4) \quad v = \frac{E}{\sqrt{E^2 + B^2}} \end{array}$$

**1523.** Ինդուկցիայի վեկտորի հետ մասնիկի սկզբնական արագության վեկտորի կազմած ի՞նչ անկյան դեպքում մասնիկը համասեռ մագնիսական դաշտում կկատարի ուղղագիծ հավասարաչափ շարժում:

- 1)  $\alpha = 90^\circ$ :
- 2)  $0^\circ < \alpha < 90^\circ$ :
- 3)  $\alpha = 0^\circ$  կամ  $\alpha = 180^\circ$ :
- 4)  $90^\circ < \alpha < 180^\circ$ :

**1524.** Ինչպե՞ս կշարժվի լիցքավորված մասնիկը համասեռ մագնիսական դաշտում, եթե նրա սկզբնական արագությունը սուր անկյուն է կազմում մագնիսական ինդուկցիայի վեկտորի հետ:


- 1) Ծրջանագծով:
- 3) Ուղիղ գծով:

2) Պարաբոլ:

4) Պարուրագծով:

1525. Նկարում  $q$  լիցքի արագությունն ուղղահայաց է հոսանքակիր հարթ շրջանակի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը: Ինչպե՞ս է ուղղված լիցքի վրա շրջանակի ազդող ուժն այն պահին, եթե լիցքը հատում է շրջանակի հարթությունը նրա կենտրոնում:

- 1) Դեպի աջ:                    3) Դեպի վերև:  
2) Դեպի ձախ:                4) Ուժը զրո է:



1526. Լիցքավորված մասնիկը  $\vec{E}$  լարվածությամբ էլեկտրական և  $\vec{B}$  ինդուկցիայով մագնիսական փոխուղղահայաց համասեռ դաշտերում ( $\vec{E} \perp \vec{B}$ ) շարժվում է հաստատուն  $v$  արագությամբ: Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1)  $\vec{E}$  և  $\vec{B}$  վեկտորների մոդուլները հավասար են:  
2)  $\vec{E}$ -ի մոդուլը մեծ է  $\vec{B}$ -ի մոդուլից  $v$  անգամ:  
3)  $\vec{E}$ -ի մոդուլը փոքր է  $\vec{B}$ -ի մոդուլից  $v$  անգամ:  
4)  $\vec{E}$ -ի մոդուլը շատ փոքր է  $\vec{B}$ -ի մոդուլից:

1527.  $m$  զանգվածով և  $q$  լիցքով մասնիկը  $B$  ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում կատարում է հավասարաչափ շրջանագծային շարժում: Ո՞ր արտահայտությամբ է որոշվում մասնիկի անկյունային արագությունը:

- 1)  $\frac{m}{qB}$ :                            3)  $qmB$ :  
2)  $\frac{qm}{B}$ :                            4)  $\frac{qB}{m}$ :

1528. Լիցքավորված մասնիկը շրջանագծային ուղեծրով պտտվում է համասեռ մագնիսական դաշտում: Ինչպե՞ս կփոխվի մասնիկի պտտման պարբերությունը, եթե նրա արագության մոդուլը փոքրացնենք երկու անգամ:

- 1) Կմեծանա 2 անգամ:                    3) Կմնա նույնը:  
2) Կփոքրանա 2 անգամ:                4) Կմեծանա 4 անգամ:

1529.  $q$  լիցքով մասնիկը  $B$  ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում շարժվում է  $R$  շառավիրով շրջանագծով: Որքա՞ն է մասնիկի իմպուլսը:

$$1) \ qBR :$$

$$2) \ qBR^2 :$$

$$3) \ 2\pi RqB :$$

$$4) \ qB\pi R^2 :$$

1530. Ինչպե՞ս կվոխավի համաեռ մագնիսական դաշտում ինդուկցիայի վեկտորին ուղղահայաց մտնող լիցքավորված մասնիկի հետազծի շառավիղը, եթե նրա կիմետրիկ էներգիան փոքրացնենք 4 անգամ:

$$1) \ Կվոքրանա 4 անգամ:$$

$$2) \ Կվոքրանա 2 անգամ:$$

$$3) \ Կմեծանա 2 անգամ:$$

$$4) \ Չի փոխավի:$$

1531. Միևնույն կիմետրիկ էներգիայով երկու մասնիկներ, որոնց լիցքերի հարաբերությունը՝  $q_2 / q_1 = 2$ , մտնում են համասեռ մագնիսական դաշտ նրա ուժագծերին ուղղահայաց ուղղությամբ: Որքա՞ն է մասնիկների զանգվածների  $m_2 / m_1$  հարաբերությունը, եթե նրանց հետազծերի շառավիղների հարաբերությունը՝  $R_2 / R_1 = 1/2$ :

$$1) \ 1:$$

$$2) \ 2:$$

$$3) \ 8:$$

$$4) \ 4:$$

1532.  $m$  զանգվածով և  $q$  լիցքով մասնիկը  $v$  արագությամբ մտնում է համասեռ մագնիսական դաշտ՝ նրա ինդուկցիայի գծերի նկատմամբ  $\alpha$  անկյան տակ: Որքա՞ն է մագնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլը, եթե պարուրագծի շառավիղը, որով շարժվում է մասնիկը,  $R$  է:

$$1) \ \frac{mv \cos \alpha}{qR} : \quad 3) \ \frac{mv}{qR \sin \alpha} :$$

$$2) \ \frac{mv \sin \alpha}{qR} : \quad 4) \ \frac{mv}{qR} :$$

1533. Երկու էլեկտրոններ դադարի վիճակում են: Նրանց վրա կիրառվում է համապատասխանաբար  $U$  և  $2U$  պոտենցյալների տարրերություն: Արագացում ձեռք բերած էլեկտրոնները մտնում են համասեռ մագնիսական դաշտ, որի ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է նրանց արագության վեկտորներին: Որքա՞ն է երկրորդ և առաջին էլեկտրոնների հետազծերի կորության շառավիղների հարաբերությունը:

$$1) \ \frac{1}{4} : \quad 3) \ \frac{\sqrt{3}}{2} :$$


$$2) \ \frac{1}{2} : \quad 4) \ \sqrt{2} :$$

**1534. Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Մագնիսը հաղորդիչ փակ շրջանակի մեջ մտցնելիս շրջանակում մակածվում է էլեկտրական հոսանք:
- 2) Կոճը հոսանքի աղբյուրից անջատելիս նրանում մակածվում է ԷլՇՈՒ:
- 3) Կոճում տեղադրված հաստատուն մագնիսը կոճում մակածում է էլեկտրական հոսանք:
- 4) Ժամանակի ընթացքում փոփոխվող մագնիսական դաշտը փակ հաղորդիչ շրջանակում մակածում է էլեկտրական հոսանք:


**1535. Առաջին երկու վայրկյանում մագնիսը մոտեցնում են մետաղե շրջանակին, իաջորդ երկու վայրկյանին մագնիսն անշարժ պահում են շրջանակի ներսում, իսկ վերջին երկու վայրկյանի ընթացքում այն հեռացնում են շրջանակից: Ո՞ր դեպքում է շրջանակում մակածվում ԷլՇՈՒ:**

- 1) Սիայն մագնիսը մոտեցնելիս:
- 2) Սիայն մագնիսը հեռացնելիս:
- 3) Շրջանակի ներսում մագնիսն անշարժ պահելիս:
- 4) Մոտեցնելիս և հեռացնելիս:



**1536. Պղնձե օղակի մոտ, նրա մակերևոյթին ուղղահայաց տեղադրված է հաստատուն մագնիս, ինչպես ցոյց է տրված նկարում: Առաջին դեպքում օղակը շարժում են դեպի ներքեւ, իսկ երկրորդ դեպքում՝ դեպի աջ: Ո՞ր դեպքում օղակում կմակածվի հոսանք:**

- 1) Սիայն առաջին դեպքում: 3) Երկու դեպքում էլ:
- 2) Սիայն երկրորդ դեպքում: 4) Ոչ մի դեպքում:




**1537. Նկարում պատկերված մետաղե հարք շրջանակը համասեռ մագնիսական դաշտում տեղադրված է այնպես, որ նրա ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է շրջանակի հարթությանը և ուղղված է դեպի նկարը: Շրջանակում կմակածվի՝ արդյոք հոսանք, եթե այն համընթաց շարժենք մագնիսական դաշտում:**

- 1) Այո:
- 2) Չի մակածվի:
- 3) Այո, եթե արագության մոդուլն աճի:
- 4) Այո, եթե արագության մոդուլը նվազի:



1538. Երկարե միջուկի վրա տեղակայված է երկու կոճ: Աջ կոճում հոսանքի ուժը ժամանակից կախված փոխվում է նկարում պատկերված օրինաչափությամբ: Ժամանակի ո՞ր միջակայքերում ամպերաչափը ճախ կոճում հոսանքը ցույց կտա:



- 1) 4-5 վայրկյանի ընթացքում:
- 2) 0-2 և 4-5 վայրկյանի ընթացքում:
- 3) 2-4 և 5-9 վայրկյանի ընթացքում:
- 4) 0-2 վայրկյանի ընթացքում:

1539. Ինչպես է կռչվում այն ֆիզիկական մեծությունը, որը հավասար է ինդուկցիայի  $\bar{B}$  վեկտորի մոդուլի և այդ դաշտում կոնտուրի մակերևույթի  $S$  մակերեսի և ինդուկցիայի վեկտորի ու մակերևույթի նորմալի կազմած անկյան կոսինոսի արտադրյալի:

- 1) Ինդուկտիվություն:
- 2) Մագնիսական հոսք:
- 3) Մագնիսական ինդուկցիա:
- 4) Մագնիսական դաշտի էներգիա:


1540. Ինչպես կփոխվի մագնիսական հոսքը փակ կոնտուրով, եթե նրա մակերեսը մեծացնենք 2 անգամ, իսկ կոնտուրի մակերևույթի նորմալը ուղղված մագնիսական դաշտի ինդուկցիան մեծացնենք 2 անգամ:

- |                     |                        |
|---------------------|------------------------|
| 1) Կմեծանա 2 անգամ: | 3) Կմեծանա 4 անգամ:    |
| 2) Փոքրանա 2 անգամ: | 4) Կփոքրացման 4 անգամ: |

1541. Հարք շրջանակը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում: Շրջանակի հարթության նորմալի և մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի կազմած  ${}^{\circ}$ նշ անկյան դեպքում է մագնիսական հոսքը շրջանակով դառնում զրո:

- |                   |                   |
|-------------------|-------------------|
| 1) $0^{\circ}$ :  | 3) $60^{\circ}$ : |
| 2) $45^{\circ}$ : | 4) $90^{\circ}$ : |

1542. Նկարում պատկերված  $I$  հոսանքի մագնիսական դաշտում տեղադրված ո՞ր կոնտուր թափանցող մագնիսական հոսքն է ավելի մեծ:




1)  $\Phi_1 = \Phi_2 \neq 0$ :      3)  $\Phi_1 = \Phi_2 = 0$ :

2)  $\Phi_1 > \Phi_2$ :      4)  $\Phi_1 < \Phi_2$ :


1543. Ո՞րն է կոճով անցնող հոսանքի ստեղծած մագնիսական դաշտի  $\Phi$  հոսքի կախումը նրանով անցնող  $I$  հոսանքից:

1)  $w$ :      3)  $p$ :  
2)  $q$ :      4)  $\eta$ :




1544. Մագնիսը մետաղե օղակից հավասարաչափ հեռացնելիս նրանում մակածված հոսանքի ուղղությունը պատկերված է նկարում: Մագնիսի ո՞ր քևոն է ավելի մոտ օղակին:

- 1) Հյուսիսային:  
2) Հարավային:  
3) Սեծ արագության դեպքում՝ հյուսիսային:  
4) Սեծ արագության դեպքում՝ հարավային:



1545. Օղակամեն հաղորդիչը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում (տես նկարը), որի ինդուկցիայի գծերն ուղղահայաց են շրջանակի հարթությանը և ուղղված են նկարից դեպի դիտողը: Մագնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլը ժամանակից կախված աճում է: Ի՞նչ ուղղություն ունի հաղորդչում մակածված հոսանքը:

- 1) Ժամանակի պտտման ուղղությունը:  
2) Ժամանակի պտտմանը հակառակ ուղղությունը:  
3) Հոսանք չի մակածվի:  
4) Մակածված հոսանքի ուղղությունը կախված է մագնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլի աճման արագությունից:



1546. Շրջանակում մակածվում է հաստատուն ԷլՇՈՒ: Ժամանակից կախված՝ ի՞նչ օրենքով է նրա մեջ փոխվում մագնիսական հոսքը:

- 1) Սինուսի կամ կոսինուսի օրենքով:  
2) Գծային օրենքով:  
3) Քառակուսային օրենքով:  
4) Չի փոխվում:

1547. Ինչի՞ց է կախված անշարժ հաղորդիչ շրջանակում մակածված ԷլՇՈՒ-ի մոդուլը:

- 1) Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի ուղղությունից:  
2) Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի մոդուլից:


- 3) Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի հոսքի մեծությունից:  
 4) Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորի հոսքի փոփոխման արագությունից:

1548. Հաղորդիչ շրջանակում մագնիսական հոսքը հավասարաչափ աճում է  $0\text{-}t$  մինչև  $\Phi_0$  արժեքը՝ առաջին դեպքում՝  $t$  ժամանակում, իսկ երկրորդ դեպքում՝  $2t$ : Ո՞ր դեպքում շրջանակում կմակածվի մողոլով ավելի մեծ ԷլՇՈՒ:

- 1) Առաջին դեպքում, 4 անգամ մեծ:
- 2) Երկրորդ դեպքում, 4 անգամ մեծ:
- 3) Առաջին դեպքում, 2 անգամ մեծ:
- 4) Երկրորդ դեպքում, 2 անգամ մեծ:


1549. Մետաղե շրջանակում մագնիսական հոսքը փոխվում է նկարում պատկերված օրինաչափությամբ: Ժամանակի ո՞ր միջակայքում է մակածվում մողոլով ամենամեծ ԷլՇՈՒ-ն:

- 1) a միջակայքում:
- 2) b միջակայքում:
- 3) c միջակայքում:
- 4) Բոլոր միջակայքերում ԷլՇՈՒ-ն ունի միևնույն արժեքը:



1550. Նկարում պատկերված է  $100 \Omega$  Օմ դիմադրությամբ փակ շրջանակ քավանցող մագնիսական հոսքի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է շրջանակում մակածված հոսանքի ուժը 2-4 վայրկյան միջակայքում:

- 1) 0,1 Ա:
- 2) 0,2 Ա :
- 3) 0,4 Ա:
- 4) 2 Ա:



1551. Հավասարաչափ նվազող

ինդուկցիայով մագնիսական դաշտում  $R$  դիմադրությամբ հաղորդիչ օդակում մակածվում է  $I$  հոսանք: Որքա՞ն է մեկ վայրկյանում մագնիսական հոսքի փոփոխությունը կոնտուրում:

- 1)  $IR$ :
- 2)  $I^2R$  :
- 3)  $IR^2$ :
- 4)  $0$ :

1552. Ո՞րն է  $\vec{B}$  ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում  $\vec{v}$  արագությամբ շարժվող  $I$  երկարությամբ ուղիղ հաղորդչում մակածման ԷլԸու-ի բանաձևը:

- 1)  $vBl \sin \alpha$ :      3)  $qvB \sin \alpha$ :  
 2)  $IBl \sin \alpha$ :      4)  $vBl \cos \alpha$ :

1553. Մագնիսական ինդուկցիայի  $\vec{B}$  վեկտորին ուղղահայաց ուղղությամբ  $\vec{h}$  նշ արագությամբ պետք է շարժվի  $I$  երկարությամբ ուղիղ հաղորդչը, որպեսզի նրա մեջ մակածվի  $\varepsilon$  ԷլԸու: Հաղորդիչն ուղղահայաց է  $\vec{B}$  և  $\vec{v}$  վեկտորներին:


- 1)  $\frac{\varepsilon}{Bl}$ :      3)  $\frac{\varepsilon B}{l}$ :  
 2)  $\frac{\varepsilon l}{B}$ :      4)  $\frac{2\varepsilon}{Bl}$ :

1554. Ի՞նչ ուժերի ազդեցությամբ է փոփոխական մագնիսական դաշտում տեղադրված անշարժ մետաղական հաղորդչում առաջանում մակածման հոսանքը:

- 1) Էլեկտրաստատիկ ուժերի:  
 2) Մագնիսական ուժերի:  
 3) Մրրկային էլեկտրական դաշտի կողմից ազդող ուժերի:  
 4) Բյուրեղային ցանցի իոնների կողմից ազդող ուժերի:

1555. ABCD ուղղանկյունաձև շրջանակը  $\vec{v}$  արագությամբ համընթաց շարժվում է  $I$  հոսանքի մագնիսական դաշտում: Ինչպես է ուղղված շրջանակում մակածված հոսանքը:

- 1) Ժամալարի պտտման ուղղությամբ:  
 2) Ժամալարի պտտմանը հակառակ ուղղությամբ:  
 3) Շրջանակում հոսանքը բացակայում է:  
 4) Հոսանքի ուղղությունը կախված է արագության մոդուլից:




1556. Ի՞նչ միավորով է չափվում ինդուկտիվունը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Հն:      3) 1 Տլ:  
 2) 1 Ֆ:      4) 1 Վբ:

1557. Ո՞րն է առանց միջուկի կոճով անցնող  $I$  հոսանքից  $L$  ինդուկտիվության կախումն արտահայտող գրաֆիկը:

- 1) ա:                    3) գ:  
2) բ:                    4) դ:



1558. Ո՞ր բանաձևով է որոշվում ինքնամակածման ԷլՇու-ի և կոճով հոսող հոսանքի ուժի փոփոխության արագության միջև կապը:


- 1)  $\varepsilon = -N \frac{\Delta \Phi}{\Delta t} :$                     3)  $\varepsilon = LI :$   
2)  $\varepsilon = - \frac{\Delta \Phi}{\Delta t} :$                     4)  $\varepsilon = -L \frac{\Delta I}{\Delta t} :$

1559. Կոճի ինդուկտիվությունը մեծացրին 2 անգամ, իսկ հոսանքի ուժը նրա մեջ փորբացրին 2 անգամ; Ինչպես փոխվեց այդ դեպքում կոճի մագնիսական դաշտի էներգիան:

- 1) Սեծացավ 8 անգամ:                    3) Փորբացավ 4 անգամ:  
2) Փորբացավ 2 անգամ:                    4) Փորբացավ 8 անգամ:

1560. Նկարում պատկերված շղթան հոսանքի աղբյուրից անջատելուց հետո որոշ ժամանակ լամպը շարունակում է լուսարձակել: Որքա՞ն է այդ ընթացքում անջատված էներգիան, եթե մինչ անջատելը հոսանքի ուժը շղթայում  $I$  է, լամպի դիմադրությունը՝  $R$ , իսկ կոճի ինդուկտիվությունը՝  $L$ :

- 1)  $I^2 R :$                     3)  $\frac{LI^2}{2} :$   
2)  $LI^2 :$                     4)  $\frac{I^2 R}{2} :$



1561. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Տատանողական կոնտուրը էլեկտրական շղթա է, որը կազմված է ...

- 1) հոսանքի աղբյուրից և կոնդենսատորից:  
2) հոսանքի աղբյուրից և ինդուկտիվության կոճից:  
3) կոնդենսատորից և ինդուկտիվության կոճից:  
4) կոնդենսատորից, ակտիվ դիմադրությունից և հոսանքի աղբյուրից:

1562. Ժամանակի սկզբնապահին տատանողական կոնտուրի կոնդենսատորի լարումը առավելագույնն է: Էլեկտրանագնիսական տատանում-

ների պարբերությունը  $T$  է: Որքա՞ն ժամանակ հետո կոնդենսատորի լարումը կհավասարվի զրոյի:

$$1) \frac{T}{4}; \quad 3) \frac{3}{4}T;$$

$$2) \frac{T}{2}; \quad 4) T;$$

1563. Լիցքավորված կոնդենսատորը միացնում են կոճին:  $\Omega^*$  հավասարումն է նկարագրում շղթայով անցնող հոսանքի ուժի կախումը ժամանակից: Որպես ժամանակի հաշվարկման սկիզբ համարել միացման պահը:

$$1) i(t) = -I_0 \sin \omega t; \quad 3) i(t) = I_0 \sin 2\omega t;$$

$$2) i(t) = -I_0 \cos \omega t; \quad 4) i(t) = -I_0(1 + \cos \omega t);$$


1564. Ունենք  $C_1 = 10$  պֆ,  $C_2 = 40$  պֆ ունակությամբ երկու կոնդենսատորների և  $L_1 = 5$  մՀն,  $L_2 = 0,1$  մՀն ինդուկտիվությամբ երկու կոճերի հավաքածու:  $\Omega^*$  գույզի դեպքում նրանցից կազմված տատանողական կոնտուրում ազատ էլեկտրամագնիսական տատանումների պարբերությունը կլինի ավելի մեծ:

$$1) L_1 C_1; \quad 3) L_1 C_2;$$

$$2) L_2 C_2; \quad 4) L_2 C_1;$$

1565. Ինչպե՞ս կփոխվի կոնտուրում սեփական էլեկտրամագնիսական տատանումների հաճախությունը, եթե բանալին առիրքից տեղափոխենք բ դիրք:


- 1) Չի փոխվի:
- 2) Կմեծանա 2 անգամ:
- 3) Կփոքրանա 2 անգամ:
- 4) Կփոքրանա 4 անգամ:



1566. Կոճում մագնիսական հոսքի փոփոխման արագությունը ժամանակի տվյալ պահին  $\Phi'(t)$  է: Որքա՞ն է կոնդենսատորի լիցքն այդ պահին:

$$1) q = \Phi'(t); \quad 3) q = LC|\Phi'(t)|;$$

$$2) q = C|\Phi'(t)|; \quad 4) q = L|\Phi'(t)|;$$




1567. Ի՞նչ էներգիայով է օժտված տատանողական կոնտուրն այն պահին, եթե կոնդենսատորի լիցքն առավելագույնն է:

- 1) Սիայն էլեկտրական դաշտի էներգիայով:
- 2) Սիայն մագնիսական դաշտի էներգիայով:
- 3) Էլեկտրական և մագնիսական դաշտերի էներգիաներով:
- 4) Էներգիայով օժտված չէ:


1568. Նկարում պատկերված է տատանողական կոնտուրում հոսանքի ուժի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի հաշվարկման սկզբնական պահից հաշված՝ 6 մկվ-ի ընթացքում կոճի մագնիսական դաշտի էներգիան քանի անգամ է ընդունում իր առավելագույն արժեքը:

- |    |    |    |    |
|----|----|----|----|
| 1) | 1: | 3) | 3: |
| 2) | 2: | 4) | 4: |



1569. Որքա՞ն է նկարում պատկերված փոփոխական լարման տատանումների պարբերությունը:

- |    |      |    |      |
|----|------|----|------|
| 1) | 1 վ: | 3) | 3 վ: |
| 2) | 2 վ: | 4) | 5 վ: |



1570. Ինչպես կփոխվի էլեկտրամագնիսական տատանումների հաճախությունը տատանողական կոնտուրում, եթե մեծացնենք կոնդենսատորի շրջադիրների միջև հեռավորությունը:

- 1) Չի փոխվի:
- 2) Կփորձանա:
- 3) Կմեծանա:
- 4) Հարցին միարժեք պատասխանելու համար տվյալները բավարար չեն:

1571. Տատանողական կոնտուրի օդային կոնդենսատորի թիթեղների հեռավորությունը փոքրացրին 2 անգամ և դրանց միջև տեղադրեցին  $\varepsilon = 2$  դիէլեկտրական քափանցելիություն ունեցող կոշտ դիէլեկտրիկ: Ինչպես փոխվեց կոնտուրում սեփական տատանումների պարբերությունը:

- 1) Սեծացավ 2 անգամ:      3) Սեծացավ 4 անգամ:  
 2) Փոքրացավ 2 անգամ:      4) Փոքրացավ 4 անգամ:

1572. Իդեալական տատանողական կոնտուրի կոնդենսատորի առավելագույն լիցքը մեծացրին 3 անգամ: Ինչպե՞ս փոխվեց կոճի մազնիսական դաշտի առավելագույն էներգիան:

- 1) Սեծացավ 3 անգամ:      3) Սեծացավ 9 անգամ:  
 2) Սեծացավ 6 անգամ:      4) Չփոխվեց:

1573. Կոնդենսատորը լիցքավորում են և միացնում կոժին: Ստեղծված տատանողական կոնտուրում առաջանում են  $T$  պարբերությամբ ներդաշնակ էլեկտրամագնիսական տատանումներ: Ինչպիսի՞ն է էլեկտրական և մազնիսական դաշտերի էներգիաների հարաբերակցությունը  $t = T / 2$  պահին:

- 1) Էլեկտրական և մազնիսական դաշտերի էներգաները հավասար են զրոյի:  
 2) Էլեկտրական դաշտի էներգիան զրո է, մազնիսական դաշտի էներգիան ընդունել է առավելագույն արժեքը:  
 3) Մազնիսական դաշտի էներգիան զրո է, էլեկտրական դաշտի էներգիան ընդունել է առավելագույն արժեքը:  
 4) Էլեկտրական և մազնիսական դաշտերի էներգաներն ընդունել են իրենց առավելագույն արժեքները:

1574. Լիցքավորված կոնդենսատորը ինդուկտիվության կոժին միացնելուց որքա՞ն ժամանակ անց կոնդենսատորի և կոճի էներգիաները կհավասարվեն:

- 1)  $\frac{T}{2}:$       3)  $\frac{T}{6}:$   
 2)  $\frac{T}{4}:$       4)  $\frac{T}{8}:$

1575. Փոփոխական հոսանքի շղթայում հոսանքը փոխվում է  $i(t) = 2 \cos(100\pi t)$  օրենքով, որտեղ մեծություններն արտահայտված են ԱՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է հոսանքի ուժի լայնութային արժեքը:

- 1) 2 Ա:      3)  $200\pi$  Ա:  
 2) 100 Ա:      4) 200 Ա:

1576. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Փոփոխական սինուսոիդական հոսանքի ուժի գործող արժեքը ...

- 1)  $\sqrt{2}$  անգամ փոքր է հոսանքի ուժի լայնութային արժեքից:
- 2)  $\sqrt{2}$  անգամ մեծ է հոսանքի ուժի լայնութային արժեքից:
- 3) Հավասար է հոսանքի ուժի լայնութային արժեքին:
- 4) Զրո է:

1577. Ω՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

**Փոփոխական հոսանքի ուժի գործող արժեքը...**

- 1) Միշտ մեծ է հոսանքի ակնթարթային արժեքից:
- 2) Միշտ փոքր է հոսանքի ակնթարթային արժեքից:
- 3) Միշտ հավասար է հոսանքի ակնթարթային արժեքին:
- 4) Կարող է մեծ, փոքր կամ հավասար լինել հոսանքի ակնթարթային արժեքին:

1578.  $R$  դիմադրությունով անցնող փոփոխական հոսանքի լայնութային արժեքը  $I_0$  է, իսկ նրա ծայրերին կիրառված լարման լայնութային արժեքը՝  $U_0$ : Որքա՞ն է նրա վրա անջատված միջին հզորությունը:

- |                  |                                 |
|------------------|---------------------------------|
| 1) $I_0 U_0$ :   | 3) $\frac{I_0 U_0}{2}$ :        |
| 2) $2 I_0 U_0$ : | 4) $\frac{I_0}{\sqrt{2}} U_0$ : |

1579.  $R$  դիմադրությամբ արդուկում լարումը փոփոխվում է  $u = U_0 \cos \omega t$  օրենքով: Որքա՞ն է արդուկի միջին հզորությունը:

- |                         |                               |
|-------------------------|-------------------------------|
| 1) $\frac{U_0^2}{2R}$ : | 3) $\frac{U_0^2}{\omega R}$ : |
| 2) $\frac{U_0^2}{R}$ :  | 4) $\frac{U_0^2}{4R}$ :       |

1580. Հաղորդիչ կոնտուրը  $v$  հաճախությամբ պտտվում է  $\vec{B}$  ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում, որի ընթացքում նրա  $S$  մակերեսով մագնիսական հոսքը փոխվում է  $\phi = BS \cos(2\pi v t)$  օրենքով:  $\Omega$  արտահայտությամբ է որոշվում կոնտուրում մակածված ԷլՇու-ն:

- 1)  $BS \cos(2\pi v t)$ :
- 2)  $BS \sin(2\pi v t)$ :
- 3)  $2\pi v B S \cos(2\pi v t)$ :
- 4)  $2\pi v B S \sin(2\pi v t)$ :

1581. Ω՞ր սարքում է մեխանիկական էներգիան փոխակերպվում էլեկտրական էներգիայի:

- 1) Գալվանական էլեմենտում:
- 2) Էլեկտրաշարժիչում:
- 3) Արեգակնային մարտկոցում:
- 4) Էլեկտրական հոսանքի գեներատորում:

**1582. Ի՞նչ նպատակով է օգտագործվում տրանսֆորմատորը:**

- 1) Հաստատուն հոսանքի աղբյուրի լարումը փոխելու համար:
- 2) Հաճախությունը պահելով՝ նույնը՝ փոփոխական լարման լայնությը փոխելու համար:
- 3) Փոփոխական հոսանքի հաճախությունը մեծացնելու համար:
- 4) Փոփոխական լարման հաճախությունը մեծացնելու համար:

**1583. Ինչպե՞ս են հարաբերում բարձրացնող տրանսֆորմատորի առաջնային և երկրորդային փաթույթների գալարների  $N_1$  և  $N_2$  թվերը:**

- 1)  $N_1 > N_2$ :
- 2)  $N_1 < N_2$ :
- 3)  $N_1 = N_2$ :
- 4)  $N_1 \geq N_2$ :

**1584. Տրանսֆորմատորի առաջնային փաթույթում լարումը՝  $U_1 = 250$  Վ. Որքա՞ն է  $U_2$  լարումը երկրորդային փաթույթի ծայրերին, եթե տրանսֆորմացիայի զործակիցը 10 է:**

- 1)  $U_2 = 2,5$  Վ.:
- 2)  $U_2 = 25$  Վ.:
- 3)  $U_2 = 250$  Վ.:
- 4)  $U_2 = 2500$  Վ.:

**1585. Ի՞նչ երևույթի վրա է հիմնված տրանսֆորմատորի աշխատանքը:**

- 1) Հոսանքի մագնիսական ազդեցության:
- 2) Հոսանքի ջերմային ազդեցության:
- 3) Էլեկտրամագնիսական մակածման:
- 4) Էլեկտրաստատիկ մակածման:

**1586. Տրանսֆորմատորի առաջնային փաթույթում լարումը  $U_1$  է, հոսանքը՝  $I_1$ , իսկ երկրորդային փաթույթում՝ համապատասխանարար  $U_2$  և  $I_2$ : Որքա՞ն է տրանսֆորմատորի ՕԳԳ-ն:**

- 1)  $\frac{I_2 U_2}{I_1 U_1}$ :
- 2)  $\frac{I_2^2 U_2}{I_1^2 U_1}$ :
- 3)  $\frac{I_1 U_1}{I_2 U_2}$ :
- 4)  $\frac{I_1^2 U_1}{I_2^2 U_2}$ :

**1587. Էլեկտրամագնիսական ալիքներ ստանալու համար ի՞նչ կոնտուր կարելի է օգտագործել:**

- 1) Բաց տատանողական կոնտուր:
- 2) Փակ տատանողական կոնտուր:
- 3) Կամայական տատանողական կոնտուր:
- 4) Նշվածներից ոչ մեկը:

**1588. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:**

**Միավոր ժամանակում ճառագայթված էլեկտրամագնիսական ալիքի էներգիան ուղիղ համեմատական է ...**

- 1) ալիքի հաճախությանը:
- 2) ալիքի հաճախության քառակուսուն:
- 3) ալիքի հաճախության խորանարդին:
- 4) ալիքի հաճախության չորրորդ աստիճանին:

**1589. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:**

**Էլեկտրամագնիսական ալիքների տարածման արագությունը...**

- 1) ամենամեծ արժեքն ունի վակուումում:
- 2) ամենամեծ արժեքն ունի դիէլեկտրիկում:
- 3) ամենամեծ արժեքն ունի մետաղներում:
- 4) նույնն է բոլոր միջավայրերում:

**1590. Ուղիղորնդունիչը համարված է 100 մ երկարության ալիքի համար:**

**Ուղիղորնդունիչի կոնտուրի ինդրուսիվությունը չփոխելով, ինչպես պետք է փոխել կոնտուրի կոնդենսատորի ունակությունը, որպեսզի ընդունիչն ընդունի 25 մ երկարությամբ ռադիոալիքներ:**

- |                       |                        |
|-----------------------|------------------------|
| 1) Սնձացնել 4 անգամ:  | 3) Փորրացնել 4 անգամ:  |
| 2) Սնձացնել 16 անգամ: | 4) Փորրացնել 16 անգամ: |

**1591. Ինչպիսի՞ շարժման դեպքում լիցքավորված մասնիկը կճառագայթի էլեկտրամագնիսական ալիք:**

- 1) Կամայական շարժման դեպքում:
- 2) Սիայն ներդաշնակ տատանումների դեպքում:
- 3) Սիայն շրջանագծային շարժման դեպքում:
- 4) Կամայական արագացմամբ շարժման դեպքում:

**1592. Ո՞ր դեպքում է ճառագայթվում էլեկտրամագնիսական ալիք.**

**ա. Էլեկտրոնները ալեցրում կատարում են տատանողական շարժում,  
բ. Էլեկտրոնները արագացվում են արագարարում:**

- |                     |                      |
|---------------------|----------------------|
| 1) Սիայն ա դեպքում: | 3) Երկու դեպքում էլ: |
|---------------------|----------------------|

- 2) Սիայն ք դեպքում:                  4) Ωչ մի դեպքում:

1593. Ինչպե՞ս են ուղղված էլեկտրամագնիսական ալիքի լարվածության  $\vec{E}$  և մագնիսական ինդուկցիայի  $\vec{B}$  վեկտորները:

- 1)  $\vec{E} \uparrow\uparrow \vec{B}$ :                  3)  $\vec{E} \perp \vec{B}$ :  
 2)  $\vec{E} \uparrow\downarrow \vec{B}$ :                  4) Հնարավոր է՝ ուղղված լինեն կամայական ձևով:

1594. Դիտարկենք վակուումում էլեկտրոնի երկու տիպի շարժում.

ա. Էլեկտրոնը կատարում է տատանողական շարժում,

բ. Էլեկտրոնը հավասարաշափ պտտվում է շրջանագծով:

Ո՞ր դեպքում է այն ճառագայթում:

- 1) Սիայն ա:                  3) ա և բ դեպքերում:  
 2) Սիայն ք:                  4) Երկու դեպքում էլ չի ճառագայթում:

1595. Ինչպե՞ս է կախված տատանվող լիցքի առաքած էլեկտրամագնիսական ալիքի էլեկտրական դաշտի լարվածության մոդուլը տատանումների և հաճախությունից:

- 1) Ուղիղ համեմատական է  $v$ -ին:  
 2) Ուղիղ համեմատական է  $v^2$ -ուն:  
 3) Ուղիղ համեմատական է  $v^3$ -ին:  
 4) Ուղիղ համեմատական է  $v^4$ -ին:

1596. Ինչպե՞ս պետք է փոխել տատանողական կռնտուրի ունակությունը, որպեսզի նրա առաքած էլեկտրամագնիսական ալիքների երկարությունը մեծանա 2 անգամ:

- 1) Մեծացնել 4 անգամ:                  3) Փոքրացնել 2 անգամ:  
 2) Մեծացնել 2 անգամ:                  4) Փոքրացնել 4 անգամ:

1597. Ինչպե՞ս են ուղղված էլեկտրամագնիսական ալիքի էլեկտրական դաշտի  $\vec{E}$  լարվածության, մագնիսական դաշտի  $\vec{B}$  ինդուկցիայի և ալիքի տարածման  $\vec{v}$  արագության վեկտորները:

- 1)  $\vec{E} \perp \vec{B}$ ,  $\vec{E} \parallel \vec{v}$ ,  $\vec{B} \parallel \vec{v}$ :                  3)  $\vec{E} \parallel \vec{B}$ ,  $\vec{E} \perp \vec{v}$ ,  $\vec{B} \perp \vec{v}$   
 2)  $\vec{E} \perp \vec{B}$ ,  $\vec{E} \perp \vec{v}$ ,  $\vec{B} \perp \vec{v}$ :                  4)  $\vec{E} \parallel \vec{B}$ ,  $\vec{E} \parallel \vec{v}$ ,  $\vec{B} \parallel \vec{v}$ :

## 11.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1598. Ուղղագիծ հաղորդիչը, որի երկարությունը 0,8 մ է, տեղավորված է համասեռ մազնիսական դաշտում՝ ուղղահայաց նրա ինդուկցիայի վեկտորին, որի մոդուլը  $20 \text{ Sl}$  է: Որքա՞ն է հաղորդչով անցնող հոսանքի ուժը, եթե նրա վրա մազնիսական դաշտի ազդող ուժը  $48 \text{ N}$  է:
1599. Ուղղագիծ հաղորդիչը տեղավորված է  $5 \text{ Sl}$  ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտում՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Որքա՞ն է հաղորդչի տեղամասի երկարությունը, եթե մազնիսական դաշտը նրա վրա ազդում է  $20 \text{ N}$  ուժով, եթե նրա մեջ հոսանքի ուժը  $1 \text{ U}$  է:
1600.  $0,2 \text{ m}$  երկարությամբ ուղղագիծ հաղորդիչը տեղադրված է  $4 \text{ Sl}$  ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտում: Որքա՞ն է այն ուժը, որով մազնիսական դաշտն ազդում է հաղորդչի վրա, եթե նրանում հոսանքի ուժը  $5 \text{ U}$  է, և այն մազնիսական դաշտի ինդուկցիայի գծերի հետ կազմում է  $30^\circ$  անկյուն:
1601. Ի՞նչ անկյուն է կազմում ուղղագիծ հաղորդիչը  $20 \text{ Sl}$  ինդուկցիա ունեցող համասեռ մազնիսական դաշտի ինդուկցիայի գծերի հետ, եթե յուրաքանչյուր  $0,2 \text{ m}$  երկարությամբ տեղամասի վրա ազդում է  $4 \text{ N}$  ուժ, եթե նրա մեջ հոսանքի ուժը  $2 \text{ U}$  է:
1602. Հորիզոնական դիրքում գտնող  $2 \text{ m}$  երկարությամբ և  $4 \text{ kg}$  զանգվածով ուղիղ հոսանքակիր հաղորդալարով անցնում է  $2 \text{ U}$  հոսանք: Հաղորդալարը տեղադրված է հորիզոնական ուղղությամբ համասեռ մազնիսական դաշտում, որի ինդուկցիայի գծերն ուղղահայաց են հաղորդալարին: Որքա՞ն պետք է լինի մազնիսական դաշտի ինդուկցիայի մոդուլը, որպեսզի հաղորդալարը գտնվի կախված վիճակում:
1603.  $0,4 \text{ m}$  երկարությամբ և  $1 \text{ kg}$  զանգվածով հաղորդիչ ձողը դրված է իդեալական ողորկ հորիզոնական մակերևույթի վրա՝  $0,5 \text{ Sl}$  ինդուկցիայով ուղղաձիգ համասեռ մազնիսական դաշտում: Ի՞նչ ուժի հոսանք պետք է անցնի ձողով, որպեսզի այն սկսի շարժվել  $2 \text{ m/s}^2$  արագացումով:
1604.  $1 \text{ m}$  երկարությամբ հաղորդիչը, որի միջով անցնում է  $5 \text{ U}$  հոսանք, տեղադրված է  $10 \text{ Sl}$  ինդուկցիա ունեցող համասեռ մազնիսական դաշտում՝ ուղղահայաց ինդուկցիայի գծերին: Որքա՞ն աշխատանք է կա-

տարեկ Ամպերի ուժն իր ազդման ուղղությամբ հաղորդվը 0,2 մ տեղափոխելու համար:


1605.  $10^7$  մ/վ արագությամբ շարժվող լիցքավորված մասնիկը մտնում է 20 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ ուղղահայաց ինդուկցիայի գծերին: Որքա՞ն է մասնիկի վրա մագնիսական դաշտի ազդող ուժի մեծությունը, եթե նրա լիցքը  $3,2 \cdot 10^{-7}$  Կլ է:
1606. 0,1 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտի ուժագծերի նկատմամբ ի՞նչ անկյան տակ է մտել  $10^7$  մ/վ արագությամբ շարժվող էլեկտրոնը, եթե նրա վրա մագնիսական դաշտի ազդող ուժը  $0,8 \cdot 10^{-13}$  Ն է:
1607. Էլեկտրոնը մտնում է  $9 \cdot 10^{-3}$  Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ ուղղահայաց ինդուկցիայի գծերին, և շարժվում է  $10^{-2}$  մ շառավղով շրջանագծով: Որքա՞ն է էլեկտրոնի արագությունը: Պատասխանը քազմապատկել  $10^{-6}$ -ով:
1608. Էլեկտրոնը  $5,625 \cdot 10^6$  մ/վ արագությամբ շարժվում է 0,01 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում ինդուկցիայի գծերին ուղղահայաց ուղղությամբ: Որքա՞ն է էլեկտրոնի շարժման արագացումը: Պատասխանը քազմապատկել  $10^{-16}$ -ով:
1609. Պրոտոնը և  $\alpha$ -մասնիկը համասեռ մագնիսական դաշտ են քափանցում նույն արագությամբ՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Որքա՞ն է պրոտոնի և  $\alpha$ -մասնիկի արագացումների հարաբերությունը, եթե  $q_\alpha = 2q_p$ , և  $m_\alpha = 4m_p$ :
1610. Պրոտոնը շարժվում է համասեռ մագնիսական դաշտում 0,5 մ շառավղով շրջանագծով: Որքա՞ն է նույն մագնիսական դաշտում այն շրջանագծի շառավիղը, որով կպտտվի  $\alpha$ -մասնիկը, եթե ունենա նույն արագությունը:  $q_\alpha = 2q_p$  և  $m_\alpha = 4m_p$ :
1611. Լիցքավորված մասնիկի վրա էլեկտրական դաշտի ազդող ուժը քանի՞ անգամ է մեծ մագնիսական դաշտի ազդող ուժից, եթե էլեկտրական դաշտի լարվածությունը  $1,5 \cdot 10^3$  Վ/մ է, իսկ մագնիսական դաշտի ինդուկցիան 0,1 Տլ: Լիցքավորված մասնիկի շարժման արագությունը 200 մ/վ է և ուղղահայաց է մագնիսական դաշտի ինդուկցիայի գծերին:

1612. Ինդուկցիայի գծերին ուղղահայաց համասեռ մազնիսական դաշտ են մտնում պրոտոնը և  $\alpha$ -մասնիկը: Քանի<sup>o</sup> անգամ է  $\alpha$ -մասնիկի շարժման արագությունը մեծ պրոտոնի շարժման արագությունից, եթե  $\alpha$ -մասնիկի վրա մազնիսական դաշտի ազդող ուժը 8 անգամ մեծ է պրոտոնի վրա ազդող ուժից:  $\alpha$ -մասնիկի լիցքը  $3,2 \cdot 10^{-19}$  Կլ է:
1613.  $4 \cdot 10^6$  մ/վ արագությամբ շարժվող լիցքավորված մասնիկը մտնում է համասեռ մազնիսական դաշտ, նրա ինդուկցիայի գծերի նկատմամբ  $60^0$  անկյան տակ և սկսում է պտտվել  $2 \cdot 10^6$  վ<sup>-1</sup> հաճախությամբ: Որքա՞ն է գալարագծի քայլը, որով շարժվում է մասնիկը:
1614. Էլեկտրոնը մտնում է  $5 \cdot 10^{-3}$  Տլ ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտ՝ նրա ինդուկցիայի գծերին ուղղահայաց, և դաշտի ազդեցությամբ շարժվում է 0,1 մ շառավիրով շրջանագծով: Որքա՞ն է էլեկտրոնի իմպուլսի մոդուլը: Պատասխանը քազմապատկել  $10^{23}$ -ով:
1615.  $4 \cdot 10^{-5}$  Կլ լիցք և  $10^{-9}$  կգ զանգված ունեցող մասնիկը մտնում է 0,5 Տլ ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտ՝ նրա ինդուկցիայի գծերի նկատմամբ  $30^0$  անկյան տակ, և շարժվում է 0,4 մ շառավիրով ունեցող գալարագծով: Որքա՞ն է մասնիկի շարժման արագությունը:
1616. 10 սմ կողմով քառակուսի շրջանակը տեղադրված է 2 Տլ ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտում այնպես, որ շրջանակի հարթությունն ուղղահայաց է մազնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին: Ի՞նչ անկյունով պետք է պտտել շրջանակը, որպեսզի շրջանակով սահմանափակված մակերևույթով քափանցող մազնիսական հոսքը փոխվի  $10^{-2}$  Վ-ով:
1617.  $0,5$  մ<sup>2</sup> մակերևոսով հարք շրջանակը տեղադրված է 4 Տլ ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտում այնպես, որ ինդուկցիայի վեկտորն ուղղահայաց է շրջանակի հարթությանը: Որքա՞ն է մազնիսական դաշտի հոսքը շրջանակով սահմանափակված մակերևույթով:
1618. 50 սմ կողմով քառակուսի կոնտուրը տեղադրված է 40 Տլ ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտում այնպես, որ կոնտուրի նորմալը ինդուկցիայի վեկտորի հետ կազմում է  $60^0$  անկյուն: Որքա՞ն է մազնիսական հոսքը կոնտուրով սահմանափակված հարք մակերևույթով:

1619. Հարք հաղորդիչ կոնտուր քափանցող մազնիսական հոսքը  $0,15$  վ-ում նվազում է  $0,75$  Վր-ից մինչև  $0,15$  Վր: Որքա՞ն է մակածված ԷլՇՈւ-ն:
1620.  $10^{-3}$  մ<sup>2</sup> մակերես ունեցող հարք հաղորդիչ կոնտուրը տեղադրված է համասեռ մազնիսական դաշտում՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Որքա՞ն է կոնտուրում մակածված ԷլՇՈւ-ի բացարձակ արժեքը, եթե մազնիսական ինդուկցիան կոնտուրում  $4 \cdot 10^{-4}$  վ-ում հավասարաշափ նվազում է  $0,5$  Տլ-ից մինչև  $0,1$  Տլ:
1621. Հաղորդալարի քանի՞ գալարից պետք է բաղկացած լինի  $0,005$  մ<sup>2</sup> լայնական հատույքի մակերեսով փառույթը, որպեսզի նրա մեջ մազնիսական ինդուկցիան  $0,005$  վ-ի ընթացքում  $0,1$  Տլ-ից մինչև  $1,1$  Տլ փոխվելիս մակածվի 100 Վ ԷլՇՈւ:
1622. Հաղորդալարի  $2 \cdot 10^{-3}$  մ<sup>2</sup> մակերեսով շրջանակը տեղադրված է  $5$  Տլ ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտում: Ինդուկցիայի վեկտորը ուղղահայաց է շրջանակի հարթությանը: Ծրջանակը  $0,5$  վ-ի ընթացքում պտտում են  $180^{\circ}$ -ով: Որքա՞ն էլինի կոնտուրում մակածված ԷլՇՈւ-ի մոդուլը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
1623. Կոճն ունի  $200$  գալար: Կոճ քափանցող մազնիսական հոսքի արժեքը  $0,2$  վ-ում հավասարաշափ նվազեց  $1,5 \cdot 10^{-2}$  Վր-ից մինչև  $0$ : Որքա՞ն է մակածված ԷլՇՈւ-ն:
1624. Որքա՞ն է հաղորդիչ կոնտուր ներքափանցող մազնիսական հոսքի փոփոխման արագությունը, եթե կոնտուրում մակածված է  $6$  Վ ԷլՇՈւ:
1625. Որքա՞ն է մակածման ԷլՇՈւ-ն  $0,4$  մ երկարությամբ ուղիղ հաղորդալարում, որը  $5$  Տլ ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտում շարժվում է  $3$  մ/վ արագությամբ՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց ուղղությամբ:
1626.  $0,5$  մ երկարությամբ ուղիղ հաղորդալարը համասեռ մազնիսական դաշտի ինդուկցիայի գծերին ուղղահայաց ուղղությամբ շարժվում է  $2$  մ/վ արագությամբ: Որքա՞ն է մազնիսական դաշտի ինդուկցիայի մեծությունը, եթե հաղորդալարում մակածվում է  $4$  Վ ԷլՇՈւ:
1627. Ուղիղ հաղորդիչը շարժվում է  $25$  մ/վ արագությամբ  $15,2 \cdot 10^{-3}$  Տլ ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտում՝ ինդուկցիայի գծերին

ուղղահայաց ուղղությամբ: Որքա՞ն է հաղորդալարի երկարությունը, եթե նրա ծայրերին առաջացել է  $380$  մՎ լարում:

1628. Ինդուկցիայի գծերի նկատմամբ ի՞նչ անկյան տակ պետք է  $10$  մ/վ արագությամբ շարժվի  $0,4$  մ երկարությամբ հաղորդիչը, որպեսզի նրա մեջ մակածվի  $\sqrt{2}$  Վ ԷլՇՈւ: Մագնիսական դաշտի ինդուկցիան  $0,5$  Տլ է:
1629. Ինքնաթիռը թռչում է հորիզոնական ուղղությամբ՝  $300$  մ/վ արագությամբ: Որքա՞ն է նրա թևերի ծայրերի միջև մակածված ԷլՇՈւ-ն, եթե Երկրի մագնիսական դաշտի ինդուկցիայի ուղղահայաց բաղադրիչը  $5 \cdot 10^{-4}$  Տլ է, իսկ հեռավորությունը թևերի ծայրակետերի միջև՝  $20$  մ:
1630. Ինչքա՞ն պետք է լինի հոսանքի ուժը  $0,5$  Հն ինդուկտիվություն ունեցող կոճի փառույթում, որպեսզի կոճի մագնիսական դաշտի էներգիան լինի  $1$  Ջ:
1631.  $0,4$  Հն ինդուկտիվությամբ կոճում հոսանքի ուժը  $20$  Ա է: Որքա՞ն է այդ կոճի մագնիսական դաշտի էներգիան:
1632. Որքա՞ն է  $0,25$  Հն ինդուկտիվությամբ կոճով անցնող հոսանքի ուժը, եթե կոճի մագնիսական դաշտն օժտված է  $18$  Ջ էներգիայով:
1633. Ի՞նչ մագնիսական հոսք կառաջանա  $0,2$  Հն ինդուկտիվություն ունեցող կոճում  $20$  Ա հոսանքի ուժի դեպքում:
1634. Որքա՞ն ինքնամակածման ԷլՇՈւ կծագի  $0,4$  Հն ինդուկտիվություն ունեցող էլեկտրամագնիսի փառույթում, եթե նրա մեջ  $0,02$  Վ-ի ընթացքում հոսանքի ուժը հավասարաչափ փոխվում է  $5$  Ա-ով:
1635.  $56$ -րդ նկարում պատկերված է կոճում հոսանքի ուժի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Որքա՞ն է ինքնամակածման ԷլՇՈւ-ն, եթե կոճի ինդուկտիվությունը  $6$  Հն է:
1636.  $6 \cdot 10^{-3}$  Հն ինդուկտիվությամբ սոլենիդում հոսանքը  $3$  Վ-ի ընթացքում հավասարաչափ փոխելիս նրա մեջ ինքնա-



Նկ. 56

մակածման  $E_{CO_1}$ -ն  $8 \cdot 10^{-3}$  Վ է: Որքա՞ն է հոսանքի ուժի վոխտխորյան մոդուլը:

1637. Որքա՞ն է կոճի ինդուկտիվությունը, եթե մագնիսական հոսքը 4 Վ-ից մինչև 2 Վք փոխվելու դեպքում մագնիսական դաշտի էներգիան փոքրանում է 3 Զ-ով:
1638. Հաղորդիչ շրջանակում հոսանքի ուժը 0,15 Ա է: Շրջանակով սահմանափակված մակերևույթով հոսանքի ստեղծած մագնիսական դաշտի ինդուկցիայի հոսքը 0,6 Վք է: Որքա՞ն է շրջանակի ինդուկտիվությունը:
1639. Քանի՞ անգամ կմեծանա կոնտուրում սեփական տատանումների պարբերությունը, եթե օդային հարք կոնդենսատորի թիրեղների միջև տեղադրենք 4 դիէլեկտրական քափանցելիությամբ կարծր դիէլեկտրիկ:
1640. Քանի՞ անգամ կմեծանա կոնտուրի սեփական տատանումների պարբերությունը, եթե օդային կոնդենսատորը փոխարինվի նորով, որի շրջադիրի մակերեսը 6 անգամ մեծ է նախկինից, և շրջադիրների միջև տեղադրվի  $\varepsilon = 1,5$  դիէլեկտրական քափանցելիությամբ կարծր դիէլեկտրիկ:
1641. Տատանողական կոնտուրի կոնդենսատորի ունակությունը  $5 \cdot 10^{-11}$  ֆ է, իսկ ազատ տատանումների շրջանային հաճախությունը՝  $10^8$  Վ<sup>-1</sup>: Որքա՞ն է կոնտուրի կոճի ինդուկտիվությունը: Պատասխանը քազմակատկել  $10^6$ -ով:
1642. Տատանողական կոնտուրի կոճի ինդուկտիվությունը  $2 \cdot 10^{-6}$  ՀՆ է, իսկ ազատ տատանումների շրջանային հաճախությունը՝  $5 \cdot 10^5$  Վ<sup>-1</sup>: Որքա՞ն է կոնդենսատորի ունակությունը: Պատասխանը քազմապատկել  $10^6$ -ով:
1643. Տատանողական կոնտուրը քաղկացած է  $4 \cdot 10^{-8}$  ֆ ունակությամբ կոնդենսատորից և 0,01 ՀՆ ինդուկտիվությամբ կոճից: Լարման լայնութային արժեքը 500 Վ է: Որքա՞ն է հոսանքի ուժի տատանման լայնույթը:

1644. Տատանողական կռնտուրի կռնդենսատորի լարումը 20 Վ-ով մեծաց-նելիս հոսանքի ուժի տատանման լայնույթը կռնտուրում մեծացավ 2 անգամ: Որքա՞ն է սկզբնական լարումը:
1645. Իդեալական տատանողական կռնտուրի կռնդենսատորի առավելագույն լիցքը մեծացրին 3 անգամ: Քանի՞ անգամ մեծացավ կռնդի մագ-նիսական դաշտի առավելագույն էներգիան:
1646.  $10^{-4}$  Ֆ ունակությամբ կռնդենսատորը լիցքավորեցին միջև 400 Վ լարումը և միացրին կռնդին: Դրանից հետո կռնտուրում առաջացան մարդ տատանումներ: Որքա՞ն ջերմաքանակ է աճատվում կռնտու-րում այն ժամանակամիջոցով, որի ընթացքում լարման լայնույթը փոքրանում է 2 անգամ:
1647. Փոփոխական հոսանքի շրջանային հաճախությունը  $100\pi$  Վ<sup>-1</sup> է: Որքա՞ն է հոսանքի հաճախությունը:
1648.  $0,02 \text{ m}^2$  մակերես ունեցող ուղղանկյունաձև շրջանակը պտտվում է  $0,5 \text{ S}$  ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ նրա մեջ մակածված  $E_{\text{լ}C\Omega i}$ -ի լայնութային արժեքը  $10 \text{ V}$  է: Ի՞նչ անկյունային արագությամբ է պտտվում շրջանակը:
1649. Փոփոխական հոսանքի շրբայի տեղամասի ծայրերում լարումը փոխ-վում է  $u = U_o \sin \omega t$  օրենքով: Որքա՞ն է լարման լայնութային արժեքը, եթե  $t = \frac{T}{12}$  պահին լարման ակնթարթային արժեքը  $10 \text{ V}$  է:
1650. Ի՞նչ լարման համար պետք է նախատեսել էլեկտրահաղորդման գծի մեկուսիչները, եթե լարման գործող արժեքը  $430 \text{ V}$  է:
1651. Տրանսֆորմատորը միացված է  $120 \text{ V}$  լարում ունեցող ցանցին: Առաջ-նային փաթույթի զալարմերի թիվը 300 է: Քանի՞ զալար պետք է ունենա երկրորդային փաթույթը, որպեսզի նրա ծայրերում լարումը լինի  $6,4 \text{ V}$ :
1652. Իդեալական տրանսֆորմատորի առաջնային փաթույթում հոսանքի ուժը 5 Ա է: Որքա՞ն է հոսանքի ուժը երկրորդային փաթույթում, եթե տրանսֆորմացիայի գործակիցը 0,6 է:

1653. Տրանսֆորմատորը միացված է  $110 \text{ V}$  լարման ցանցին: Առաջնային փաթույթի գալարների թիվը 165 է: Որքա՞ն կլինի լարումը երկրողային փաթույթի ծայրերին, եթե այն ունի 12 գալար:
1654. 22 Օմ դիմադրությամբ էլեկտրաջեռուցիչը միացված է փոփոխական հոսանքի գեներատորին: Որքա՞ն ջերմաքանակ կանցատվի ջեռուցիչում  $30 \text{ \AA}$ -ում, եթե հոսանքի ուժի լայնութային արժեքը  $4 \text{ A}$  է:
1655. Բաց տատանողական կոնտուրում հոսանքի ուժը ժամանակից կախված փոխակում է  $i = 0,1 \cos(6 \cdot 10^5 \pi t)$  օրենքով: Որքա՞ն է կոնտուրի առաքած էլեկտրամագնիսական ալիքի երկարությունը վակուումում:
1656. Ինչ-որ միջավայրում  $10^6 \text{ \AA}$  հաճախությամբ էլեկտրամագնիսական ալիքը տարածվում է  $2 \cdot 10^8 \text{ m}$ /վ արագությամբ: Որքա՞ն է այդ ալիքի երկարությունը:
1657. Ռադիոտեղորշչիչը վակուումում արձակում է  $10 \text{ uA}$  երկարությամբ էլեկտրամագնիսական ալիք: Որքա՞ն է տատանումների հաճախությունը: Պատասխանը բազմապատկել  $10^9$ -ով:
1658. Տատանողական կոնտուրը համալրված է  $12 \text{ nH}$  երկարության ալիքի վրա: Որքա՞ն է կոնդենսատորի ունակությունը, եթե կոնտուրի ինդուկտիվությունը  $4 \cdot 10^{-7} \text{ \AA}$  է: Ընդունել՝  $\pi^2 = 10$ : Պատասխանը բազմապատկել  $10^{11}$ -ով:
1659. Ընդունող անտենայի տատանողական կոնտուրի ունակությունը  $10^9 \text{ \AA}$  է: Ինչքան պետք է լինի կոնտուրի ինդուկտիվությունը, որպեսզի կարողանա ընդունել  $300 \text{ nH}$  երկարությամբ ռադիոալիքներ: Ընդունել՝  $\pi^2 = 10$ : Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:
1660. Ռադիոտեղորշչն աշխատում է  $0,15 \text{ \mu A}$  երկարությամբ ալիքով, իսկ յուրաքանչյուր իմպուլսի տևողությունը  $2 \cdot 10^{-6} \text{ \mu s}$  է: Քանի՞ տատանում է պարունակում յուրաքանչյուր իմպուլսը:
1661. Տատանողական կոնտուրի կոճում հոսանքի ուժը  $0,4 \text{ \AA}$  վայրկյանում  $1 \text{ \AA}$ -ով հավասարաչափ փոքրացնելիս մակածվում է  $0,5 \cdot 10^{-7} \text{ \AA}$  ԷլՇՈՒ: Որքա՞ն կլինի այդ կոնտուրի ճառագայթած էլեկտրամագնիսական ալիքի երկարությունը վակուումում, եթե կոնտուրի ունակությունը  $2 \cdot 10^{-8} \text{ \AA}$  է: Ընդունել՝  $\pi = 3$ :

### 11.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1662. Էլեկտրոնը  $0,02$   $S_l$  ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում շարժվում է շրջանագծով՝ ունենալով  $28,8 \cdot 10^{-21}$  կգ.մ/վ իմպուլս:


- 1) Որքա՞ն է էլեկտրոնի վրա մագնիսական դաշտի ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^{13}$ -ով:
- 2) Որքա՞ն է էլեկտրոնի հետագծի շառավիղը:

1663. Երկու իոններ, դադարի վիճակից անցնելով նույն արագացնող պոտենցիալների տարրերությունը, մտնում են համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Իոններից առաջինը շարժվում է  $5$  ամ շառավիղով շրջանագծով, իսկ երկրորդը՝  $2,5$  ամ: Երկրորդ իոնի լիցքը երկու անգամ մեծ է առաջին իոնի լիցքից:

- 1) Որքա՞ն է իոնների իմպուլսների հարաբերությունը:
- 2) Քանի՞ անգամ է առաջին իոնի զանգվածը մեծ երկրորդ իոնի զանգվածից:

1664.  $U = 200$  Վ պոտենցիալների տարրերությամբ արագացված լիցքավորված մասնիկը  $A$  կետում մտնում է  $B = 4 \cdot 10^{-3}$   $S_l$  ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին և շերտի եզրին ուղղահայաց (նկ. 57): Մասնիկը մագնիսական դաշտից դուրս է զայխ դաշտի եզրին ուղղահայաց՝ այդ կետից  $L = 1$  մ հեռավորությամբ  $C$  կետից:

- 1) Որքա՞ն է մասնիկի արագությունը մագնիսական դաշտում: Պատասխանը բազմապատկել  $10^5$ -ով:
- 2) Որքա՞ն է մասնիկի տեսակարար լիցքը ( $q/m$ ): Պատասխանը բազմապատկել  $10^{-8}$ -ով:



Նկ. 57

1665.  $2 \cdot 10^{-3}$   $\text{մ}^2$  մակերեսով և  $2$   $\text{Օմ}$  դիմադրությամբ հարք շրջանակը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ շրջանակի հարթությունն ուղղահայաց է մագնիսական ինդուկցիայի վեկտորին: Մագնիսական դաշտը նվազում է  $2 \cdot 10^3$   $S_l/\text{վ}$  հաստատում արագությամբ:

- 1) Որքա՞ն է շրջանակում մակածված ԷլՇՈւ-ն:
- 2) Որքա՞ն է շրջանակով անցնող հոսանքի ուժը:

1666.  $8 \cdot 10^{-2}$  մ<sup>2</sup> մակերեսով օղակաձև շրջանակի դիմադրությունը 4 Օմ է: Օղակը տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում այնպէս, որ նրա հարքությունն ուղղահայաց է ինդուկցիայի վեկտորին: Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը նվազում է 50 Տ/վ արագությամբ:
- 1) Որքա՞ն է օղակում մակածված Էլ.ՇՈՒ-ն:
  - 2) Որքա՞ն ջերմաքանակ կանցատվի օղակում 2 վ-ում:
1667. Տատանողական կոնտուրի կոնդենսատորի լարումը ժամանակից կախված փոխական է  $U = 50 \cos(10^4 \pi t)$  բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Կոնդենսատորի ունակությունը  $2 \cdot 10^{-7}$  Ֆ է:
- 1) Որքա՞ն է տատանողական կոնտուրի հաճախությունը:
  - 2) Որքա՞ն է կոնտուրի կոճի ինդուկտիվությունը: Ընդունել՝  $\pi^2 = 10$ : Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
1668. Լիցքավորված կոնդենսատորը միացրին կոճին: Ժամանակի ինչ-որ պահի տատանողական կոնտուրում էլեկտրական դաշտի էներգիան երեք անգամ մեծ է մագնիսական դաշտի էներգիայից:
- 1) Կոնդենսատորի լարումն այդ պահին լարման լայնութային արժեքի  $n^{\circ}$  տոկոսն է կազմում:
  - 2) Միացումից հետո մինչև այդ պահն անցած ժամանակամիջոցը քանի՞ անգամ է փոքր տատանման պարբերությունից:
1669. Տատանողական կոնտուրում կոնդենսատորի ունակությունը  $16 \cdot 10^{-4}$  Ֆ է, իսկ կոճի ինդուկտիվությունը՝  $4 \cdot 10^{-2}$  Հն: Կոնդենսատորը լիցքավորեցին մինչև  $100$  Վ լարումը:
- 1) Որքա՞ն էլեկտրական էներգիա հաղորդեցին կոնդենսատորին:
  - 2) Որքա՞ն է կոնտուրում հոսանքի առավելագույն արժեքը:
1670.  $4 \cdot 10^{-6}$  Ֆ ունակությամբ լիցքավորված կոնդենսատորը միացրին  $9 \cdot 10^{-2}$  Հն ինդուկտիվությամբ կոճին:
- 1) Որքա՞ն է տատանողական կոնտուրում առաջացած ազատ էլեկտրամագնիսական տատանումների պարբերությունը: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:
  - 2) Կոճին միացնելուց հետո, նվազագույնը որքա՞ն ժամանակում կոնդենսատորի լիցքը կփոքրանա 2 անգամ: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:

1671. Փոփոխական հոսանքի շղթայի տեղամասի ծայրերում լարումը ժամանակից կախված փոխվում է  $U = U_0 \sin(\omega t)$  օրենքով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Ժամանակի  $t = T/12$  պահին, որտեղ  $T$ -ն պարբերությունն է, լարման ակնքարթային արժեքը 15 Վ է:
- 1) Որքա՞ն է լարման լայնութային արժեքը:
  - 2) Որքա՞ն է լարման գործող արժեքը:
1672. Ծրջանակում մակածված  $\text{Էլ}\text{C}\Omega\text{i-ի}$  կախումը ժամանակից որոշվում է  $\varepsilon_i = 100 \sin(800\pi t)$  բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով:
- 1) Որքա՞ն է մակածված  $\text{Էլ}\text{C}\Omega\text{i-ի}$  լայնութային արժեքը:
  - 2) Որքա՞ն է մակածված  $\text{Էլ}\text{C}\Omega\text{i-ի}$  տատանման պարբերությունը: Պատասխանը բազմապատկել  $10^4$ - ով:
1673. Տրանսֆորմատորը լարումը 100 Վ-ից մեծացնում է մինչև 560 Վ: Փառույթներից մեկի վրա հագցված մի գալարի ծայրերին լարումը 0,4 Վ է:
- 1) Քանի՞ գալար ունի տրանսֆորմատորի առաջնային փաթույթը:
  - 2) Տրանսֆորմատորի երկրորդային փաթույթը քանի՞ գալարով է գերազանցում առաջնայինը:

## 11.4. ԵՐԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


1674.  $10^{-2}$  կգ զանգվածով և  $0,2$  մ երկարությամբ ուղիղ հաղորդիչը հորիզոնական դիրքով մեկուսիչ թելերով կախված է համասեռ մագնիսական դաշտում:  $0,25$  Տլ ինդուկցիայով մագնիսական դաշտն ուղղված է ուղղաձիգ: Հաղորդիչով անցնում է  $2$  Ա հոսանք: Թելերի զանգվածն անտեսել:
- 1) Որքա՞ն է հաղորդչի վրա ազդող Ամպերի ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
  - 2) Որքա՞ն է հավասարակշռության դիրքում թելերի շեղման անկյունն ուղղաձիգից:
  - 3) Որքա՞ն է հավասարակշռության դիրքում յուրաքանչյուր թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
1675.  $140$  սմ երկարությամբ հոսանքակիր հաղորդալարը ծռված է  $90^0$  անկյան տակ: Անկյան մի կողմի երկարությունը  $60$  սմ է: Հաղորդալարը տեղադրված է  $0,2$  Տլ համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ անկյան կողմերն ուղղահայաց են ինդուկցիայի գծերին: Հաղորդալարով անցնում  $10$  Ա հոսանք:
- 1) Որքա՞ն է անկյան երկար կողմի վրա ազդող Ամպերի ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
  - 2) Որքա՞ն է կարճ կողմի վրա ազդող Ամպերի ուժը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
  - 3) Որքա՞ն է ամբողջ հաղորդալարի վրա մագնիսական դաշտի ազդող համազոր ուժը:
1676. Հաղորդալարից պատրաստված քառակուսածն կոնտուրի զանգվածը  $100$  գ է, իսկ կողմի երկարությունը  $1$ մ է: Կոնտուրը կարող է պտտվել հորիզոնական առանցքի շուրջ, որը համընկնում է կողմերից մեկի հետ: Կոնտուրը տեղադրված է ուղղաձիգ ուղղված  $0,1$  Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում: Կոնտուրով հոսանք բաց բռնելուց հետո, այն ուղղաձիգի հետ կազմելով  $45^0$  անկյուն, հայտնվում է հավասարակշռության վիճակում:
- 1) Որքա՞ն է կոնտուրի վրա ազդող ծանրության ուժի բազուկը պտտման առանցքի նկատմամբ: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
  - 2) Որքա՞ն է կոնտուրի վրա ազդող ծանրության ուժի մոմենտը պտտման առանցքի նկատմամբ: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
  - 3) Որքա՞ն է կոնտուրով անցնող հոսանքի ուժը:

1677. Երկու բացասական լիցքավորված մասնիկներ մտնում են 0,2 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերին ուղղահայաց: Մասնիկներից առաջինի լիցքի մոդուլը երկու անգամ մեծ է երկրորդի լիցքի մոդուլից: Երկու մասնիկներն ել շարժվում են շրջանագծի աղեղներով, առաջինը՝  $0,4$  մ շառավղով, երկրորդը՝  $0,2$  մ: Երկու մասնիկներն այնուհետև նտնում են էլեկտրաստատիկ դաշտ, որտեղ, անցնելով  $128$  Վ պոտենցիալների տարրերություն, երկուսի արագությունները փոքրանում են 3 անգամ:
- 1) Մագնիսական դաշտում շարժելիս քանի<sup>7</sup> անգամ է առաջին մասնիկի իմպուլսը մեծ երկրորդ մասնիկի իմպուլսից:
  - 2) Որքա<sup>8</sup>ն է առաջին մասնիկի վերջնական արագությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-2}$ -ով:
  - 3) Որքա<sup>8</sup>ն է երկրորդ մասնիկի վերջնական արագությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-2}$ -ով:
1678. Էլեկտրոնը, դադարի վիճակից անցնելով  $180$  Վ արագացնող պոտենցիալների տարրերություն, մտնում է  $0,5$  Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտ՝ ինդուկցիայի գծերի նկատմամբ  $60^\circ$  անկյան տակ:
- 1) Որքա<sup>9</sup>ն է էլեկտրոնի արագությունը մագնիսական դաշտ մտնելիս: Պատասխանը բազմապատկել  $10^{-6}$ -ով:
  - 2) Որքա<sup>9</sup>ն է էլեկտրոնի պտտման պարբերությունը մագնիսական դաշտում: Պատասխանը բազմապատկել  $10^{14}$ -ով:
  - 3) Որքա<sup>9</sup>ն է էլեկտրոնի շարժման գալարագծի քայլը: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:
1679. Լայնական հատույթի  $2 \cdot 10^{-2}$  մ<sup>2</sup> մակերեսով փառությը, որը պարունակում է  $500$  գալար, տեղադրված է համասեռ մագնիսական դաշտում այնպես, որ ինդուկցիայի վեկտորը գուգահեռ է կոճի առանցքին: Մագնիսական դաշտը  $0,1$  Վ-ում հավասարաչափ նվազում է  $0,5$  Տլ-ով, որի հետևանքով կոճում անջատվում է  $500 \Omega$  զերմաքանակ:
- 1) Որքա<sup>10</sup>ն է կոճում մակածված ԷլՇՈւ-ն:
  - 2) Որքա<sup>10</sup>ն է կոճի դիմադրությունը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
  - 3) Որքա<sup>10</sup>ն լիցք անցավ կոճով այդ ընթացքում:
1680. Տատանողական կոճությի կոճի ինդուկտիվությունը  $0,3$  Հն է, իսկ հոսանքի ուժի տատանումների լայնույթը՝  $4 \cdot 10^{-2}$  Ա:

- 1) Որքա՞ն է տատանողական կոնտուրի լրիվ էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^5$ - ով:
  - 2) Որքա՞ն է կոճի մագնիսական դաշտի էներգիան, եթե հոսանքի ուժի ակնքարթային արժեքը 2 անգամ փոքր է լայնութայինից: Պատասխանը բազմապատկել  $10^5$ - ով:
  - 3) Որքա՞ն է կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիան, եթե հոսանքի ուժի ակնքարթային արժեքը 2 անգամ փոքր է լայնութայինից: Պատասխանը բազմապատկել  $10^5$ - ով:
- 1681. Տատանողական կոնտուրի կոնդենսատորի շրջադիրների լարումը ժամանակից կախված փոխվում է  $U = 100 \cos(1000\pi t)$  օրենքով, որտեղ մեծություններն արտահայտված են  $ՄՀ$ -ի համապատասխան միավորներով: Կոնդենսատորի ունակությունը  $10^{-6} \text{ Ֆ}$  է:**
- 1) Որքա՞ն է էլեկտրամագնիսական տատանումների պարբերությունը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ - ով:
  - 2) Որքա՞ն է կոնտուրի կոճի ինդուկտիվությունը: Ընդունել՝  $\pi^2 = 10$ : Պատասխանը բազմապատկել  $10$ - ով:
  - 3) Որքա՞ն է հոսանքի ուժի լայնութային արժեքը: Ընդունել՝  $\sqrt{10} = \pi = 3,14$ : Պատասխանը բազմապատկել  $10^3$ - ով:
- 1682. Բաց տատանողական կոնտուրի ունակությունը  $2 \cdot 10^{-8} \text{ Փ}$  է, իսկ նրա կոռում հոսանքի ուժը  $0,4$  վայրկյանում  $1$  Ա-ով հավասարաչափ նվազելիս մակածվում է  $0,5 \cdot 10^{-7} \text{ Վ ԷլՇու}$ :**
- 1) Որքա՞ն է կոնտուրի կոճի ինդուկտիվությունը: Պատասխանը բազմապատկել  $10^8$ - ով:
  - 2) Որքա՞ն է կոնտուրի շրջանային հաճախությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-7}$ - ով:
  - 3) Որքա՞ն է կոնտուրի ճառագայթած էլեկտրամագնիսական ալիքի երկարությունը վակուումում: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 1683. Տրանսֆորմատորի առաջնային փաթույթն ունի  $2200$  գալար և միացված է  $220$  Վ լարման ցանցին: Երկրորդային փաթույթի ակտիվ դիմադրությունը  $1$  Օմ է: Երկրորդային փաթույթին միացված է ռադիոլամպ, որի սեղմնակների վրա լարումը  $4$  Վ է, իսկ հոսանքի ուժը՝  $1$  Ա:**
- 1) Որքա՞ն է լամպի դիմադրությունը:
  - 2) Որքա՞ն է երկրորդային փաթույթում մակածված ԷլՇու-ն:
  - 3) Որքա՞ն է երկրորդային փաթույթի գալարների թիվը:

## 11.5. ԶՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


1684. Հորիզոնական ռելսերի վրա դրված 100 գ զանգվածով, 50 սմ երկարությամբ հաղորդիչ ձողը տեղադրված է  $0,2 \text{ S} \cdot \text{m}$  ինդուկցիայով հորիզոնական ուղղությամբ ուղղված համաստեղ մագնիսական դաշտում (նկ. 58): Զողով անցնում է  $5 \text{ A}$  հոսանք: Զողը ռելսերի ճկատմամբ տեղաշարժվում համար, անհրաժեշտ է կիրառել հորիզոնական ուղղված  $0,4 \text{ T}$  փոքրագույն ուժ:



Նկ. 58

- 1) Որքա՞ն է ձողի վրա մագնիսական դաշտի կողմից ազդող ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
- 2) Որքա՞ն է ձողի վրա ազդող ռելսերի հակագուցության ուժը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
- 3) Որքա՞ն է ձողի և ռելսերի միջև շփման գործակիցը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
- 4) Ինչպիսի՞ փոքրագույն հորիզոնական ուժ պետք է կիրառել ձողի վրա, այն տեղից շարժելու համար, եթե մագնիսական դաշտի ինդուկցիան ունի հակառակ ուղղությունը: Պատասխանը բազմապատկել 10- ով:

1685.  $2 \cdot 10^{-3} \text{ kg}$  զանգված,  $10^{-2} \text{ N}$  լիցք ունեցող գնդիկը կախված է  $20 \text{ mm}$  երկարությամբ մեկուսիչ թելից՝ հորիզոնական ուղղված  $0,5 \text{ T}$  ինդուկցիայով համաստեղ մագնիսական դաշտում (նկ. 59): Մագնիսական դաշտի ինդուկցիան ուղղված է դեպի դիտողը: Թելը քեզի հետ շեղում են մինչև հորիզոնական դիրքն այն հարթության մեջ, որն ուղղահայաց է մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին և բաց բողոքում: Օղի դիմադրությունն անտեսել:



Նկ. 59

- 1) Որքա՞ն է գնդիկի արագությունը հավասարակշռության դիրքով անցնելու պահին:
- 2) Որքա՞ն է գնդիկի վրա ազդող  $L$  որենցի ուժը հավասարակշռության դիրքով անցնելու պահին: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:

- 3) Որքա՞ն է գնդիկի արագացումը հավասարակշռության դիրքով անցնելու պահին:
- 4) Որքա՞ն է թելի լարման ուժը, գնդիկը հավասարակշռության դիրքով անցնելու պահին: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:

- 1686.**  $2 \cdot 10^{-4}$  կգ զանգվածով և  $4 \cdot 10^{-3}$  Կլ լիցքով մասնիկը 0,1 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում գծում է  $10$  սմ շառավղով շրջանագիծ: Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին գուգահեռ միացնում են  $100$  Վ/մ լարվածությամբ համասեռ էլեկտրական դաշտ:
- 1) Որքա՞ն է միայն մագնիսական դաշտի ազդեցության ընթացքում մասնիկի շարժման արագությունը: Պատասխանը բազմապատկել  $10$ - ով:
  - 2) Որքա՞ն է մասնիկին էլեկտրական դաշտի հաղորդված արագացումը: Պատասխանը բազմապատկել  $10^{-3}$ - ով:
  - 3) Որքա՞ն ժամանակ պետք է միացնել էլեկտրական դաշտը, որպեսզի մասնիկի կինետիկ էներգիան մեծանա երկու անգամ: Պատասխանը բազմապատկել  $10^4$ - ով:
  - 4) Որքա՞ն ճանապարհ կանցնի մասնիկն էլեկտրական դաշտի ուղղությամբ էլեկտրական դաշտի միացման ընթացքում: Պատասխանը բազմապատկել  $10^5$ - ով:

## 12. ՕՊՏԻԿԱ

### 12.1. ԾԻԸՑ ՊԱՏԱՍԽԱՆԱԿ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1687. Ինչպիսի՞ միջավայրում է լույսը տարածվում ուղղագիծ:


- 1) Սիայն անհամառեղ միջավայրում:
- 2) Կամայական միջավայրում:
- 3) Օպտիկապես համասեղ, թափանցիկ միջավայրում:
- 4) Կամայական թափանցիկ միջավայրում:

1688. Լույսի ինչպիսի՞ աղբյուրի օգնությամբ կարելի է ստանալ կիսաստվեր:

- 1) Կետային աղբյուրի:
- 2) Բնական աղբյուրի:
- 3) Արիեստական աղբյուրի:
- 4) Աղբյուրի, որի չափերը շատ փոքր չեն մինչև առարկան հեռավորության համեմատությամբ:

1689. Նկարում պատկերված են լույսի գնդաներ՝ *S* աղբյուրը, անթափանց *A* գունդը և էլիպսները: Ո՞ր կետն է գտնվում ստվերում:

- |          |             |
|----------|-------------|
| 1) b:    | 3) a, b, c: |
| 2) a, c: | 4) d:       |



1690. Ինչպե՞ս է փոխվում ուղղաթիռի ստվերի

չափը, եթե արևային եղանակին այն ուղղաձիգ քարձրանում է թոփքահրապարակից:

- |                 |                              |
|-----------------|------------------------------|
| 1) Սեծանում է:  | 3) Չի փոխվում:               |
| 2) Փոքրանում է: | 4) Փոխվում է կամայական ձևով: |

1691. Ինչպե՞ս է փոխվում ծառի ստվերի երկարությունը արևոտ օրվա ընթացքում:

- 1) Նույնն է ամբողջ օրվա ընթացքում:
- 2) Ամենակարճն է, եթե Արեգակը հորիզոնից ամենաբարձր կետում է:
- 3) Ամենակարճն է, եթե Արեգակը ծագում է, և ամենաերկարն է, եթե մայր է մտնում:
- 4) Ամենաերկարն է, եթե Արեգակը ծագում է, և ամենակարճն է, եթե մայր է մտնում:

1692. Մակերևույթի անհարությունների բնորոշ  $l$  չափի և ընկնող լույսի  $\lambda$  ալիքի երկարության ի՞նչ հարաբերակցության դեպքում է անդրադարձում այդ մակերևույթից կոչվում հայելային:

- 1)  $l \ll \lambda$ :      3)  $l \leq \lambda$ :  
2)  $l \gg \lambda$ :      4)  $l > \lambda$ :

1693. Որքա՞ն է անդրադարձման անկյունը, եթե անկման անկյունը  $60^0$  է:

- 1)  $30^0$ :      3)  $90^0$ :  
2)  $60^0$ :      4)  $120^0$ :

1694. Որքա՞ն է ճառագայթի անկման անկյունը, եթե անդրադարձող ճառագայթն ընկնող ճառագայթի հետ կազմում է ուղիղ անկյուն:

- 1)  $45^0$ :      3)  $135^0$ :  
2)  $90^0$ :      4)  $180^0$ :


1695. Ինչպե՞ս է փոխվում ընկնող և անդրադարձող ճառագայթների կազմած անկյունը՝ անկման անկյունը  $10^0$ -ով մեծացնելիս:

- 1) Սեծանում է  $5^0$ -ով:      3) Սեծանում է  $20^0$ -ով:  
2) Սեծանում է  $10^0$ -ով:      4) Չի փոխվում:

1696. Ճառագայթը հարթ հայելու վրա ընկնում է  $40^0$  անկյան տակ: Որքա՞ն է անդրադարձած ճառագայթի և հայելու մակերևույթի կազմած անկյունը:

- 1)  $140^0$ :      3)  $50^0$ :  
2)  $80^0$ :      4)  $40^0$ :

1697. Նկարների ո՞ր զույգն է պատկերում լույսի ճառագայթի շրջելիությունը:



- 1)  $w$  և  $p$ :      3)  $w$  և  $η$ :  
2)  $q$  և  $η$ :      4)  $p$  և  $q$ :

1698. Ո՞րն է մատիտի միշտ պատկերը հարթ հայելում:

- 1)  $w$ :      2)  $p$ :      3)  $q$ :      4)  $η$ :
-


1699. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Լույսի կետային աղբյուրից հարք հայելու վրա ընկնող ճառագայթներն...

- 1) անդրադառնում են՝ հատվելով մի կետում:
- 2) անդրադառնում են՝ մնալով իրար զուգահեռ:
- 3) անդրադառնում են այնպես, որ դրանց շարունակությունները հատվում են մի կետում:
- 4) ընդհանրապես չեն անդրադառնում:

1700. Լույսի  $S$  աղբյուրը տեղադրված է հարք հայելու առջև: Ո՞ր կետն է  $S$  աղբյուրի պատկերը հայելում:

- 1) Սիայն ա-ն:                   3)  $p$ -ն և  $q$ -ն:
- 2) Սիայն  $\eta$ -ն:                   4) ա-ն,  $p$ -ն և  $q$ -ն:




1701. Առարկայի հեռավորությունը հարք հայելուց  $d$  է: Հայելուց ի՞նչ լ հեռավորությամբ է ստացվում առարկայի պատկերը:

- 1)  $l < d$ :
- 2)  $l = d$ :
- 3)  $l > d$ :
- 4)  $l = 2d$ :

1702. Ո՞ր կետում է ստացվում լույսի  $S$  կետային աղբյուրի պատկերը հարք հայելում:


- 1) a:
- 2) b:
- 3) c:
- 4) Պատկերը չի ստացվում:



\*S

1703. Ո՞ր կետում է ստացվում լույսի  $S$  կետային աղբյուրի պատկերը հարք հայելում:

- 1) a:
- 2) b:
- 3) c:
- 4) d:



1704. Տղան դեմքից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրի հարք հայելին, որպեսզի լավ տեսնի դեմքը, եթե լավագույն տեսողության համար ընդունված չափը 40 սմ է:


- 1) 80 սմ:
- 2) 40 սմ:
- 3) 30 սմ:
- 4) 20 սմ:

1705. Մարմնի և հարք հայելում նրա պատկերի միջև հեռավորությունը 50 սմ է: Որքա՞ն կլինի այդ հեռավորությունը, եթե մարմինը հայելու հեռացնենք 10 սմ-ով:

- 1) 40 սմ:
- 2) 50 սմ:
- 3) 60 սմ:
- 4) 70 սմ:


1706. Հարք հայելու վրա լույսի ճառագայթն ընկնում է  $30^0$  անկյան տակ: Որքա՞ն կլինի անդրադարձնան անկյունը, եթե հայելին ուղղաձիգ հարքության մեջ պտտենք  $10^0$ -ով:

- 1)  $40^0$ :
- 2)  $30^0$ :
- 3)  $20^0$ :
- 4)  $10^0$ :




1707. Երկու հարք հայելիներ տեղադրված են միմյանց նկատմամբ  $90^0$  անկյան տակ: Լույսի ճառագայթը նկարի հարքության մեջ ընկնում է առաջին հայելու վրա և, անդրադարձնալով, ընկնում երկրորդ հայելու վրա: Ի՞նչ ուղղությամբ կանդրադարձնա ճառագայթը երկրորդ հայելուց:

- 1)  $w$ :
- 2)  $p$ :
- 3)  $q$ :
- 4)  $\eta$ :




1708. Նկարում պատկերված ո՞ր կետերն են լույսի  $S$  կետային աղբյուրի պատկերները երկու փոխուղղահայաց հարք հայելիներում:

- 1)  $w$  կետը:
- 2)  $p$  կետը:
- 3)  $q$  կետը:
- 4) Բոլոր կետերը:




1709. Նկարում պատկերված ո՞ր կետերում է ստացվում  $AB$  առարկայի պատկերը հարք հայելում:

- 1)  $3 - 5 - 7$ :
- 2)  $1 - 5 - 9$ :
- 3)  $6 - 8 - 10$ :
- 4)  $4 - 8 - 12$ :



1710. Ինչպե՞ս պետք է տեղափոխել հայելին, որպեսզի դիտողը հայելու մեջ սլաքը տեսնի ամբողջությամբ:

- 1) Սեկ վանդակ դեպի ձախ:
- 2) Սեկ վանդակ դեպի վերև:
- 3) Սեկ վանդակ դեպի ներքև:
- 4) Առանց տեղափոխման սլաքը կերևս ամբողջությամբ:




1711. Գնդիկն ուղիղ գծով շարժվում է հորիզոնական սեղանի վրայով: Սեղանի նկատմամբ ի՞նչ սուր անկյան տակ պետք է տեղադրել հարթ հայելին, որպեսզի գնդիկի պատկերը նրա մեջ շարժվի ուղղաձիգ ուղղությամբ:

- 1)  $90^\circ$ :                            3)  $45^\circ$ :  
2)  $60^\circ$ :                            4)  $30^\circ$ :

1712. Հարթ հայելին գետնի նկատմամբ հորիզոնական ուղղությամբ շարժվում է  $\vec{v}_1$  արագությամբ, իսկ լույսի  $S$  աղբյուրը՝ ուղղաձիգ ուղղությամբ  $\vec{v}_2$  արագությամբ: Ի՞նչ արագությամբ կշարժվի գետնի նկատմամբ աղբյուրի պատկերը հայելում:

- 1)  $2v_1$ :                            3)  $\sqrt{v_1^2 + v_2^2}$ :  
2)  $v_1 + v_2$ :                            4)  $\sqrt{4v_1^2 + v_2^2}$ :




1713. Ո՞րն է նախադասության միշտ շարունակությունը:

**Բեկման անկյունը...**

- 1) բեկված և անդրադարձած ճառագայթների կազմած անկյունն է:  
2) միջավայրերի բաժանման սահմանի և բեկված ճառագայթի կազմած անկյունն է:  
3) ճառագայթի անկման կետում միջավայրերի բաժանման սահմանին տարված ուղղահայացի և բեկված ճառագայթի կազմած անկյունն է:  
4) ընկնող և բեկված ճառագայթների կազմած անկյունն է:

1714. Ինչպե՞ս են դասավորված երկու միջավայրերի բաժանման սահմանին ընկնող, անդրադարձող և բեկվող լուսային ճառագայթները:

- 1) Նույն հարթության մեջ են:  
2) Փոխուղղահայաց հարթությունների մեջ են:  
3) Ընկնող և անդրադարձող ճառագայթները միևնույն հարթության մեջ են, իսկ բեկվող ճառագայթը՝ ոչ:  
4) Ընկնող և բեկվող ճառագայթները միևնույն հարթության մեջ են, իսկ անդրադարձող ճառագայթը՝ ոչ:



1715. Ո՞րն է երկու միջավայրերի բաժանման սահմանին լույսի ճառագայթի անկման  $\alpha$  և բեկման  $\beta$  անկյունների միջև միշտ առնչությունը:

$$1) \frac{\sin \alpha}{\sin \beta} = const :$$

$$3) \frac{\cos \alpha}{\cos \beta} = const :$$

$$2) \frac{\sin \alpha}{\cos \beta} = const :$$

$$4) \frac{\operatorname{tg} \alpha}{\operatorname{tg} \beta} = const :$$

1716. Աշակերտը փորձով որոշում է ջրի բեկման ցուցիչը: Դրա համար նա լույսի ճառագայթը որոշակի անկյան տակ օդից գցում է ջրի մեջ և շափում բեկման անկյունը: Ինչպես են փոխավում ճառագայթի բեկման անկյունը և ջրի բեկման ցուցիչը անկման անկյունը մեծացնելիս:

1) Բեկման ցուցիչը փոքրանում է, բեկման անկյունը՝ մեծանում:


2) Բեկման ցուցիչը չի փոխավում, բեկման անկյունը մեծանում է:

3) Բեկման ցուցիչն ու բեկման անկյունը մեծանում են:

4) Բեկման ցուցիչը մեծանում է, բեկման անկյունը՝ փոքրանում:

1717. Նկարում պատկերված է լույսի ճառագայթի ընթացքը  $A$  միջավայրից  $B$  միջավայր անցնելիս: Միջավայրերի բեկման ցուցիչներն են  $n_A$ ,  $n_B$ : Պատասխանների ո՞ր զույգն է նշում ճիշտ առնչությունները:

$$1) \frac{\sin \alpha}{\sin \beta} = \frac{n_A}{n_B}, \quad n_A > n_B :$$



$$2) \frac{\sin \alpha}{\sin \beta} = \frac{n_A}{n_B}, \quad n_A < n_B :$$

$$3) \frac{\sin \alpha}{\sin \beta} = \frac{n_B}{n_A}, \quad n_A > n_B :$$

$$4) \frac{\sin \alpha}{\sin \beta} = \frac{n_B}{n_A}, \quad n_A < n_B :$$

1718. Երկու միջավայրի բաժանման սահմանն անցնելիս երկու ճառագայթների  $\alpha_1$  և  $\alpha_2$  բեկման անկյուններին համապատասխանում են  $\beta_1$  և  $\beta_2$  բեկման անկյունները: Ո՞րն է այդ անկյունների միջև ճիշտ առնչությունը:


$$1) \frac{\alpha_1}{\alpha_2} = \frac{\beta_1}{\beta_2} :$$

$$3) \frac{\sin \alpha_2}{\sin \alpha_1} = \frac{\sin \beta_1}{\sin \beta_2} :$$

$$2) \frac{\alpha_1}{\beta_2} = \frac{\alpha_2}{\beta_1} :$$

$$4) \frac{\sin \alpha_1}{\sin \beta_1} = \frac{\sin \alpha_2}{\sin \beta_2} :$$

1719. Լույսի ճառագայթն օղց ընկնում է ապակե կիսագնդին: Ո՞րն է ճառագայթի ճիշտ ընթացքը:



- 1) w:  
2) p:  
3) q:  
4) η:

1720. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Լույսի ճառագայթը զրոյից տարբեր անկման անկյան տակ օպտիկապես խիստ միջավայրից նոսր միջավայր անցնելիս ...


- 1) անկման անկյունը հավասար է բեկման անկյանը;  
2) անկման անկյունը մեծ է բեկման անկյունից;  
3) անդրադարձման անկյունը մեծ է բեկման անկյունից;  
4) անկման անկյունը փոքր է բեկման անկյունից:

1721. Լույսի ճառագայթը ջրից ( $n_1 = 1,33$ ) անցնում է ապակու ( $n_2 = 1,6$ )  
մեջ: Ինչպես է փոխվում այդ դեպքում լույսի արագությունը:

- 1) Սեծանում է:  
2) Փոքրանում է:  
3) Չի փոխվում:  
4) Պատասխանը կախված է անկման անկյունից:

1722. Նկարում պատկերված է լույսի ճառագայթի ընթացքը  $A$  միջավայրից  $B$  միջավայր անցնելիս: Ո՞րն է այդ միջավայրերում լույսի տարածման  $v_A$  և  $v_B$  արագությունների միջև ճիշտ  
հարաբերակցությունը:

- 1)  $v_A > v_B$   
2)  $v_A < v_B$   
3)  $v_A = v_B$   
4) Հարաբերակցությունը կախված է անկման անկյունից:



1723. Լույսի ճառագայթը վակուումից անցնում է ապակու մեջ: Շառագայթի անկման անկյունն  $\alpha$  է, իսկ բեկման անկյունը՝  $\beta$ : Որքա՞ն է լույսի արագությունն ապակու մեջ, եթե վակուումում այն  $c$  է:

$$1) \frac{c \cdot \sin \alpha}{\sin \beta} : \quad 3) \frac{c \cdot \cos \alpha}{\cos \beta} :$$

$$2) \frac{c \cdot \sin \beta}{\sin \alpha} : \quad 4) \frac{c \cdot \cos \beta}{\cos \alpha} :$$

1724. Լույսի արագությունը վակուումում  $c$  է, իսկ միջավայրում՝  $v$ : Որքա՞ն է այդ միջավայրի բեկման ցուցիչը:

$$1) \frac{c - v}{c} : \quad 3) \frac{c + v}{c} :$$

$$2) \frac{c}{v} : \quad 4) \frac{v}{c} :$$

1725. Որքա՞ն է ապակու բեկման ցուցիչը, եթե լույսը նրա մեջ տարածվում է  $2 \cdot 10^8$  մ/վ արագությամբ: Լույսի արագությունը վակուումում՝  $3 \cdot 10^8$  մ/վ:

$$1) 6: \quad 3) 2: \\ 2) 3: \quad 4) 1,5:$$

1726. Լույսի ճառագայթը ջրից անցնում է ապակու մեջ: Ինչպես է այդ դեպքում փոխվում լույսի արագությունը: Ջրի բեկման ցուցիչը 1,33 է, ապակունը՝ 1,6:


$$1) \text{Սեծանում է:} \quad 3) \text{Չի փոխվում:} \\ 2) \text{Փոքրանում է:} \quad 4) \text{Կախված է անկման անկյունից:}$$

1727. Տղան ոլիում է 1 մ խորությամբ ջրամբարի հատակին ընկած փոքր քարը: Ուղղաձիգ նայելիս որքա՞ն կլինի ջրամբարի թվացյալ խորությունը:

- 1) 1 մ:
- 2) 1 մ-ից մեծ:
- 3) 1 մ-ից փոքր:
- 4) Հնարավոր չէ հարցին միանշանակ պատասխանել:


1728. Եթե ուղղաձիգ ուղղությամբ նայենք ջրամբարի հատակի և կետում գտնվող քարին, որտե՞ղ կտեսնենք նրա պատկերը:

- 1) a կետում:  
2) b կետում:  
3) c կետում:  
4) Չի երևա:



1729. Նկարում պատկերված լույսի ճառագայթը ջրից դուրս կգա՞ օդ:

- 1) Միշտ դուրս կգա:  
2) Երբեք դուրս չի գա:  
3) Պատասխանը կախված է անկման անկյունից:  
4) Բոլոր պատասխանները սխալ են:



օդ

1730. Ո՞ր քանաձնով է որոշվում լույսի լրիվ անդրադարձման սահմանային անկյունը, եթե լույսը մի միջավայրից, որտեղ նրա արագությունը  $v$  է, անցնում է վակուում: Լույսի արագությունը վակուումում  $c$  է:

- 1)  $\sin \alpha_0 = \frac{v}{c}$ :  
2)  $\sin \alpha_0 = \frac{c}{v}$ :  
3)  $\sin \alpha_0 = \frac{1}{c}$ :  
4)  $\sin \alpha_0 = \frac{1}{v}$ :

1731. Հեղուկից օդ դուրս եկող լուսային ճառագայթի լրիվ անդրադարձման սահմանային անկյունը  $\alpha_0$  է: Որքա՞ն է լույսի տարածման արագությունը հեղուկում: Լույսի արագությունը վակուումում  $c$  է:

- 1)  $\frac{c}{\sin \alpha_0}$ :  
2)  $c \cdot \sin \alpha_0$ :  
3)  $\frac{c}{\operatorname{tg} \alpha_0}$ :  
4)  $c \cdot \operatorname{tg} \alpha_0$ :

1732. Զրի բեկման ցուցիչը ( $n_1$ ) փոքր է ապակու բեկման ցուցիչը ( $n_2$ ): Ո՞րն է զրի և ապակու լրիվ անդրադարձման  $\alpha_1$  և  $\alpha_2$  սահմանային անկյունների ծիշտ հարաբերակցությունը, եթե այդ միջավայրերից լույսը դուրս է գալիս վակուում:


- 1)  $\alpha_1 > \alpha_2$ :  
2)  $\alpha_1 < \alpha_2$ :  
3)  $\alpha_1 = \alpha_2$ :  
4)  $\alpha_1 \leq \alpha_2$ :

1733. Զրի համար լրիվ անդրադարձման սահմանային անկյան սինուսը  $0,75$  է: Զրի խորքում տեղադրված աղբյուրից լույսի ճառագայթը զրի մակերևույթին ընկնում է  $60^{\circ}$  անկյան տակ:  $\Omega^{\circ}$  պնդումն է ճիշտ:

- 1) Ճառագայթը զրից դուրս չի գա օդ:
- 2) Ճառագայթը զրից դուրս կգա օդ:
- 3) Ճառագայթի կսահի զրի մակերևույթով:
- 4) Ճառագայթի ընթացքը կախված է լույսի ուժգնությունից:


1734.  $\Omega^{\circ}$  դեպքում օդում ապակե ուղղանկյուն հավասարասուն հատվածակողմի վրա ընկնող լույսի ճառագայթը կշեղվի  $180^{\circ}$ -ով:

- 1) ա:
- 2) թ:
- 3) գ:
- 4) դ:




1735.  $\Omega^{\circ}$ ն է օդում ապակե հատվածակողմի միջով լույսի ճառագայթի ճիշտ ընթացքը:

- 1) ա:
- 2) թ:
- 3) գ:
- 4) դ:




1736.  $\Omega^{\circ}$  ճառագայթն է ցույց տալիս լույսի աճառագայթի ընթացքը օդում գտնվող ապակե հարք-զուգահեռ թիթեղմ անցնելուց հետո:



- 1) b-ն:                   3) c-ն:
- 2) d-ն:                   4) Բոլոր ճառագայթները:

1737. Լույսի երկու զուգահեռ ճառագայթ զրից դուրս են զալիս օդ: ա ճառագայթը անմիջապես է դուրս զալիս օդ, իսկ � ճառագայթը՝ զրի մեջ ապակե հարք-զուգահեռ թիթեղի միջոցով անցնելուց հետո: Ի՞նչ ընթացք կունենա օդում ա և � ճառագայթները:




- 1) Կմնան իրար զուգահեռ:
- 2) Կտարամիտեն:
- 3) Կզուգամիտեն:
- 4) Կախված է թիթեղի նյութի բեկման ցույցից:

1738. Ինչպե՞ս է փոխվում լույսի գուգահեռ ճառագայթների փնջի լայնությունը վակուումում տեղադրված ապակե հարք-գուգահեռ թիթեղն անցնելիս:

- 1) Չի փոխվում:
- 2) Սեծանում է:
- 3) Փոքրանում է:
- 4) Պատասխանը կախված է ապակու բեկման ցուցչի արժեքից:

1739. Նկարում պատկերված են ապակե ոսպնյակներ: Որո՞նք են հավաքող:

- 1) A-ն, C-ն:
- 2) B-ն, C-ն:
- 3) A-ն, B-ն:
- 4) B-ն, D-ն:



1740. Ոսպնյակի ո՞ր հատկության շնորհիվ այն լայն կիրառություն ունի օպտիկական սարքերում:

- 1) Ոսպնյակը գործնականում լույս չի կլանում:
- 2) Ոսպնյակը գործնականում լույս չի անդադարձնում:
- 3) Ոսպնյակը չի փոխում լույսի տարածման ուղղությունը:
- 4) Ոսպնյակի օգնությամբ կարելի է կառավարել լույսի ճառագայթների ընթացքը և ստանալ տարբեր պատկերներ:

1741. Ի՞նչ է ոսպնյակի կիզակետը:


- 1) Ոսպնյակի և նրա գլխավոր օպտիկական առանցքի հատման կետը:
- 2) Ոսպնյակի այն կետը, որով անցնելիս ճառագայթները չեն բեկվում:
- 3) Գլխավոր օպտիկական առանցքի այն կետը, որտեղ հատվում են այդ առանցքին գուգահեռ ընկանող ճառագայթները կամ դրանց շարունակությունները՝ ոսպնյակն անցնելիս:
- 4) Ոսպնյակի օպտիկական առանցքների հատման կետը:

1742. Ո՞րն է կոչվում ոսպնյակի կիզակետային հեռավորություն:

- 1) Երկու կիզակետերի հեռավորությունը:
- 2) Կիզակետի և ոսպնյակի օպտիկական կենտրոնի միջև հեռավորությունը:
- 3) Ոսպնյակի մակերևույթների միջև հեռավորությունը:
- 4) Ոսպնյակի մակերևույթների կորության կենտրոնների միջև հեռավորությունը:

1743. Որքա՞ն է նկարում պատկերված ոսպնյակի կիզակետային հեռավորությունը, եթե յուրաքանչյուր բաժանմանը համապատասխանում է 1 սմ:

- 1) 1 սմ:                  3) 3 սմ:  
2) 2 սմ:                  4) 5 սմ:



1744. Ի՞նչ միավորով է չափվում ոսպնյակի օպտիկական ուժը միավորների ԱՀ-ի հիմնական միավորներով:


- 1) 1 մ:                  3) 1 Ն:  
2) 1 մ<sup>-1</sup>:              4) 1 Ն/մ:

1745. Ո՞րն է ոսպնյակի  $D$  օպտիկական ուժի և  $F$  կիզակետային հեռավորության միջև ճիշտ առնչությունը:

- 1)  $\frac{F}{D} = 1$ :                  3)  $F + D = 1$ :  
2)  $FD = 1$ :                  4)  $F - D = 1$ :

1746. Աշակերտը նկարեց չորս ճառագայթների ընթացքը հավաքող ոսպնյակով անցնելուց հետո: Ո՞ր ճառագայթի ընթացքն է սխալ պատկերված:

- 1) a:                  3) c:  
2) b:                  4) d:




1747. Լույսի ճառագայթը, անցնելով կիզակետով, ընկնում է հավաքող ոսպնյակի վրա: Ի՞նչ ուղղություն կունենա այն ոսպնյակով անցնելուց հետո:

- 1) Կանցնի մյուս կիզակետով:  
2) Գլխավոր օպտիկական առանցքը կհատի կրկնակի կիզակետային հեռավորությամբ:  
3) Կանցնի գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ:  
4) Չի փոխի իր ուղղությունը:

1748. Կառուցելով առարկայի պատկերը հավաքող ոսպնյակում՝ աշակերտը սխալվեց: Ո՞րն է նրա սխալը:

- 1) Սխալ է պատկերված  $A$  կետից դուրս եկող ճառագայթի ընթացքը:




- 2) Սխալ է պատկերված Բ կետից դուրս եկող ճառագայթի ընթացքը:  
 3) A և B կետերից դուրս եկող ճառագայթները չեն հատվի A<sub>1</sub> կետում:  
 4) A կետի պատկերի ստացման համար օգտագործվել է տարրեր կետերից դուրս եկող ճառագայթներ:

1749. Որտե՞ղ կստացվի բարակ հա-

վաքող ոսպնյակում S լուսատու կետի պատկերը:

- 1) 1 կետում:  
 2) 2 կետում:  
 3) 3 կետում:  
 4) Անսահման մեջ հեռավորությունում:




1750. Արևոտ եղանակին հավաքող ոսպնյակի օգնությամբ կարելի է այրել քուղը: Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է պահել քուղը, որպեսզի այն այրվի արագ:

- 1) Կիզակետային հեռավորության հեռավորությամբ:  
 2) Կիզակետային հեռավորության կրկնապատիկին հավասար հեռավորությամբ:  
 3) Կիզակետային հեռավորության կեսին հավասար հեռավորությամբ:  
 4) Հեռավորությունը կախված է ոսպնյակի տրամագծից:

1751. Ո՞ր կետում են հատվում նկարում

պատկերված a և b ճառագայթները  
ոսպնյակն անցնելոց հետո:

- 1) w:  
 2) p:  
 3) q:  
 4) r:




1752. Հավաքող ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի նրա պատկերը լինի իրական:

- 1) Կիզակետային հեռավորությունից մեծ հեռավորությամբ:  
 2) Կիզակետային հեռավորությունից փոքր հեռավորությամբ:  
 3) Կամայական հեռավորությունում պատկերը կլինի իրական:  
 4) Կամայական հեռավորությունում պատկերը կլինի կեղծ:

1753. Ո՞ր կետում է ստացվում նկարում

պատկերված լույսի S կետային աղբյուրի պատկերը հավաքող բարակ ոսպնյակում:


- 1) a կետում:



- 2) Ե կետում:  
 3) Ը կետում:  
 4) Իրական պատկեր չի ստացվում:


1754. Առարկայի հեռավորությունը ոսպնյակից հավասար է նրա եռակի կիզակետային հեռավորությանը: Ինչպի-սի՞ն է առարկայի պատկերը:

- 1) Շրջված և խոշորացած:  
 2) Ուղիղ և փոքրացած:  
 3) Ուղիղ և խոշորացած:  
 4) Շրջված և փոքրացած:




1755. Ինչպի՞ն է  $AB$  առարկայի պատկերը հավաքող բարակ ոսպնյակում:

- 1) Իրական, մեծացված, շրջված:  
 2) Իրական, փոքրացված, շրջված:  
 3) Կեղծ, մեծացված, ուղիղ:  
 4) Կեղծ, փոքրացված, ուղիղ:




1756. Առարկան գտնվում է բարակ ոսպնյակից կրկնակի կիզակետային հեռավորության վրա և շարժվում է դեպի կիզակետը: Ո՞ր ուղղությամբ է շարժվում այդ դեպքում առարկայի պատկերը:

- 1) Մոտենում է ոսպնյակին:  
 2) Մոտենում է առարկային:  
 3) Մոտենում է կիզակետի հետևում գտնվող կիզակետին:  
 4) Հեռանում է ոսպնյակի մյուս կողմում գտնվող  $2F$  կետից:



1757. Ի՞նչ տեղի կունենա, եթե նկարում պատկերված առարկան հեռացնենք ոսպնյակից:

- 1) Պատկերի չափերը կմեծանան, իսկ պատ-կերը կմոտենա ոսպնյակին:  
 2) Պատկերի չափերը կփոքրանան, իսկ պատկերը կմոտենա ոսպնյակին:  
 3) Պատկերի չափերը կփոքրանան, իսկ պատկերը կհեռանա ոսպնյակից:  
 4) Պատկերի չափերը կմեծանան, իսկ պատկերը կհեռանա ոսպնյակից:



1758.  $\Omega^{\circ}$  բն է բարակ ոսպնյակի  $\Gamma$  խոշորացման բանաձևը:  $d$ -ն առարկայի հեռավորությունն է ոսպնյակից, իսկ  $f$ -ը՝ պատկերի հեռավորությունը ոսպնյակից:

$$1) \quad \Gamma = d + f :$$

$$3) \quad \Gamma = \frac{f}{d + f} :$$

$$2) \quad \Gamma = \frac{d}{f} :$$

$$4) \quad \Gamma = \frac{f}{d} :$$


1759.  $F$  կիզակենտային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակում առարկայի պատկերի խոշորացումը  $1/3$  է: Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից:

$$1) \quad 3F : \qquad 3) \quad \frac{2}{3}F :$$

$$2) \quad \frac{1}{3}F : \qquad 4) \quad 4F :$$

1760. Նկարում պատկերված է հավաքող բարակ ոսպնյակ և  $a$ ,  $p$  և  $q$  առարկաների դիրքերը:  $\Omega^{\circ}$  պատկերը կիմի իրական, շրջված և խոշորացված:

- 1) Սիայն  $a$ -ի:
- 2) Սիայն  $p$ -ի:
- 3) Սիայն  $q$ -ի:
- 4) Բոլոր առարկաների:



1761. Կարելի՞ է արդյոք երկգոգավոր ոսպնյակով ստանալ առարկայի իրական պատկերը:

- 1) Ոչ:
- 2) Հնարավոր է, եթե առարկան տեղադրվի ոսպնյակի և կիզակետի միջև:
- 3) Հնարավոր է, եթե ոսպնյակը տեղադրվի բափանցիկ միջավայրում, որի բեկման ցուցիչը մեծ է ոսպնյակի նյութի բեկման ցուցչից:
- 4) Հնարավոր է, եթե ոսպնյակը վակուումում է:

1762. Ինչպիսի՞ն է  $F$  կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակում առարկայի պատկերը, եթե առարկայի հեռավորությունը ոսպնյակից  $F/2$  է:

- 1) Իրական, խոշորացված:


- 3) Կեղծ, խոշորացված:

2) Իրական, փոքրացված:

4) Կեղծ, փոքրացված:

1763. Ո՞րն է  $AB$  սլաքի պատկերը բարակ հավաքող ռազմական ռազմակում:

- 1)  $a$ -ն:
- 2)  $b$ -ն:
- 3)  $c$ -ն:
- 4)  $d$ -ն:




1764. Ինչպիսի՞ն կարող է լինել առարկայի պատկերը ցրող բարակ ռազմական ռազմակում:

- 1) Սիայն մեծացված:
- 2) Սիայն փոքրացված:
- 3) Մեծացված կամ փոքրացված:
- 4) Սիայն փոքրացված կամ առարկայի չափին հավասար:

1765. Որքա՞ն է նկարում պատկերված ռազմակի օպտիկական ուժը, եթե յուրաքանչյուր բաժանմանը համապատասխանում է  $2,5$  սմ:

- 1)  $10$  դպտր:
- 2)  $-5$  դպտր:
- 3)  $-10$  դպտր:
- 4)  $-20$  դպտր:




1766. Հավաքող բարակ ռազմակում ստացել են առարկայի իրական պատկերը: Ի՞նչ կդիտվի, եթե անթափանց մարմնով փակենք ռազմակի ստորին կեսը:

- 1) Պատկերի ստորին կեսը կանհետանա:
- 2) Պատկերի վերին կեսը կանհետանա:
- 3) Պատկերը կտեղաշարժվի դեպի վեր:
- 4) Պատկերը կմնա տեղում, իսկ նրա պայծառությունը կնվազի:

1767. Ի՞նչ ուղղությամբ է տարածվում նկարում պատկերված ցրող բարակ ռազմակի վրա՝ նրա զիսավոր օպտիկական առանցքին զուգահեռ ընկնող լուսի  $AB$  ճառագայթը ռազմակն անցնելուց հետո:

- 1)  $a$ :
- 2)  $c$ :
- 3)  $b$ :
- 4)  $d$ :



1768. Ո՞ր ոսպնյակի համար է կիրառելի  $-\frac{1}{|F|} = -\frac{1}{|f|} + \frac{1}{d}$  բանաձևը:

- 1) Հավաքող բարակ ոսպնյակի:
- 2) Ցրող բարակ ոսպնյակի:
- 3) Կամայական բարակ ոսպնյակի:
- 4) Լուսանկարչական ապարատի:


1769. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Առարկայի կեղծ պատկերը ցըռդ ոսպնյակում երկու անգամ փոքրացված լինելու համար անհրաժեշտ է, որ նրա հեռավորությունը ոսպնյակից հավասար լինի...

- 1) Կիզակետային հեռավորությանը:
- 2) Կիզակետային հեռավորության  $3/2$ -ին:
- 3) Կրկնակի կիզակետային հեռավորությանը:
- 4) Կիզակետային հեռավորության կեսին:

1770. Իրարից ի՞նչ  $a$  հեռավորությամբ պետք է տեղադրել  $F_1$  և  $F_2$  կիզակետային հեռավորություններով երկու հավաքող բարակ ոսպնյակները, որպեսզի ընկնող զուգահեռ ճառագայթների վունջը նրանցով անցնելուց հետո մնա զուգահեռ:

- 1)  $a > F_1 + F_2$ :
- 2)  $a < F_1 + F_2$ :
- 3)  $a = F_1 + F_2$ :
- 4)  $a = 0$ :



1771. Ինչպե՞ս կփոխվի բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը, եթե նրա եզրից կտրենք:

- 1) Կմեծանա:
- 2) Կփոքրանա:
- 3) Չի փոխվի:
- 4) Հավաքող ոսպնյակի դեպքում կմեծանա, իսկ ցրողի դեպքում կփոքրանա:

1772. Նկարում պատկերված են բարակ ոսպնյակի  $MN$  զիսավոր օպտիկական առանցքը,  $A$  լուսատու կետը և նրա  $A_1$  պատկերը: Հավաքո՞ղ, քե՞՞ ցըռդ է ոսպնյակը, իրակս՞ն, քե՞՞ կեղծ է պատկերը:

•A

• $A_1$

- 1) Ոսպնյակը հավաքող է, իսկ պատկերը՝ կեղծ:
- 2) Ոսպնյակը ցրող է, իսկ պատկերը՝ կեղծ:
- 3) Ոսպնյակը հավաքող է, իսկ պատկերը՝ իրական:
- 4) Ոսպնյակը ցրող է, իսկ պատկերը՝ իրական:

**1773.** Որքա՞ն է  $F$  կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակում առարկայի և նրա իրական պատկերի միջև եղած նվազագույն հեռավորությունը:

- |           |           |
|-----------|-----------|
| 1) $F :$  | 3) $3F :$ |
| 2) $2F :$ | 4) $4F :$ |

**1774.** Ստորև թվարկված էլեկտրամագնիսական ճառագայթումները դասավորեք ըստ ալիքի երկարության աճի՝

1. ունատզենյան ճառագայթում,
2. ենթակարմիր ճառագայթում,
3. ուսումնական:

- |             |             |
|-------------|-------------|
| 1) 1, 3, 2: | 3) 3, 2, 1: |
| 2) 2, 1, 3: | 4) 1, 2, 3: |

**1775.** Նշված ո՞ր ճառագայթման հաճախությունն է ավելի մեծ:

- 1) Անդրմանուշակագույն ճառագայթման;
- 2) Ունատզենյան ճառագայթման:
- 3) Տեսանելի լույսի:
- 4) Ենթակարմիր ճառագայթման:

**1776.** Լույսի ալիքի բեկման ժամանակ ո՞ր մեծությունը չի փոխվում:

- |                           |                         |
|---------------------------|-------------------------|
| 1) Տարածման արագությունը: | 3) Ալիքի երկարությունը: |
| 2) Ալիքի հաճախությունը:   | 4) Ալիքի լայնությը:     |

**1777.** Ո՞ր լույսի ալիքի երկարությունն է ավելի մեծ:

- |             |                    |
|-------------|--------------------|
| 1) Կարմիր:  | 3) Մանուշակագույն: |
| 2) Կապույտ: | 4) Դեղին:          |

**1778.** Լույսի արագությունը վակուումում  $c$  է, իսկ ալիքի երկարությունը՝  $\lambda_0$ :

Պատասխանների ո՞ր զույգն է ճիշտ նշում լույսի  $v$  արագության և  $\lambda$  ալիքի երկարության ճիշտ արտահայտությունները ո բեկման ցուցիչ ունեցող միջավայրում:

- |  |   |
|--|---|
| 1) $v = \frac{c}{n}, \quad \lambda = n\lambda_0 :$ | 3) $v = \frac{c}{n}, \quad \lambda = \lambda_0 :$ |
|--|---|

$$2) \quad v = c, \quad \lambda = n\lambda_0 :$$

$$4) \quad v = \frac{c}{n}, \quad \lambda = \frac{\lambda_0}{n} :$$

1779. Ինչպե՞ս է կոչվում ապակե հատվածակողմով անցնելիս սպիտակ լույսի՝ տարրեր գույների տարրալուծման երևոյթը:

1) Լույսի ինտերֆերենց:

3) Լույսի դիսպերսիա:

2) Լույսի դիֆրակցիա:

4) Լույսի անդրադարձում:


1780. Թափանցիկ ապակե հատվածակողմի վրա իրար զուգահեռ ընկնում են կարմիր և կանաչ գույնի լազերային լույսի ճառագայթներ: Ինչպիսի՞ ընթացք կունենան դրանք հատվածակողմն անցնելուց հետո:

1) Կմնան զուգահեռ:

2) Կտարամիտեն:

3) Կհատվեն:

4) Պատասխանը կախված է ապակու բեկման ցուցչից:



1781. Ո՞ր գույնի լույսի ճառագայթն է օդում ապակե հատվածակողմով անցնելիս բոլորից շատ շեղվում:

1) Կանաչ:

3) Մանուշակագույն:

2) Կապույտ:

4) Կարմիր:

1782. Նո՞յնն է արդյոք հավաքող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը կարմիր և կապույտ ճառագայթների համար:

1) Կարմիրի համար ավելի մեծ է:

2) Կապույտի համար ավելի մեծ է:

3) Նույնն է:

4) Պատասխանը կախված է ապակու տեսակից:

1783. Ո՞ր գույնի լույսին համապատասխանող ալիքն է ավելի մեծ արագությամբ տարածվում ապակու մեջ:

1) Կապույտ:

3) Կանաչ:

2) Կարմիր:

4) Մանուշակագույն:

1784. Փոխվո՞ւմ են արդյոք լույսի ալիքի երկարությունը և հաճախությունը վակուումից ջուր անցնելիս:

1) Ալիքի երկարությունը փոքրանում է, հաճախությունը՝ մեծանում:

2) Ալիքի երկարությունը մեծանում է, հաճախությունը՝ փոքրանում:

3) Ալիքի երկարությունը փոքրանում է, հաճախությունը չի փոխվում:

4) Ալիքի երկարությունը մեծանում է, հաճախությունը չի փոխվում:

**1785. Ինչո՞ւ է խոտը կանաչ:**

- 1) Խոտն անդրադարձնում է միայն կանաչ գույնին համապատասխանող լույսի ալիքը:
- 2) Խոտը կլանում է միայն կանաչ գույնին համապատասխանող լույսի ալիքը:
- 3) Խոտը կլանում է բոլոր գույներին համապատասխանող լույսի ալիքը:
- 4) Խոտն անդրադարձնում է բոլոր գույներին համապատասխանող լույսի ալիքները:

**1786. Ի՞նչ գույնի կտեսնենք առարկան, եթե նրան նայենք իրար վրա դրված կանաչ և կարմիր ապակիների միջով:**

- 1) Կանաչ:
- 2) Սև:
- 3) Կարմիր:
- 4) Մոխրագույն:

**1787. Կարմիր և կապույտ ապակիները տեղադրված են միմյանց վրա: Ի՞նչ գույնի ճառագայթներ կանցնեն այդ ապակիներից:**

- 1) Կարմիր:
- 2) Կանաչ:
- 3) Նայած թե որ կողմից կնայենք:
- 4) Տեսանելի լույսի ճառագայթներ չեն անցնի:

**1788. Ե՞րբ են լույսի ալիքները կոհերենտ:**

- 1) Երբ հավասար են դրանց լայնույթները:
- 2) Երբ հավասար են միայն դրանց հաճախությունները:
- 3) Երբ հաստատում է միայն դրանց սկզբնական փուլերի տարրերությունը:
- 4) Երբ հաստատում է դրանց սկզբնական փուլերի տարրերությունը, և հավասար են հաճախությունները:

**1789. Ո՞ր երևույթը չի կարելի քացատրել երկրաչափական օպտիկայի օրենքներով:**

- 1) Ստվերի առաջացումը:
- 2) Լույսի անդրադարձումը:
- 3) Լույսի բեկումը:
- 4) Լույսի ինտերֆերենցը:

**1790. Ո՞ր պայմանի դեպքում կդիտվի լույսի երկու ալիքների ինտերֆերենց:**

- 1) Երբ լայնույթները հավասար են:
- 2) Երբ սկզբնական փուլերը նույնն են:
- 3) Երբ նույնն են լայնույթները և սկզբնական փուլերը:
- 4) Երբ նույնն են հաճախությունները, և հաստատում է սկզբնական փուլերի տարրերությունը:

1791. Ո՞րն է լույսի կոհերենտ ալիքների ինտերֆերենցային մաքսիմումի պայմանը: Δ -ն ալիքների ընթացքի տարրերությունն է, λ -ն՝ ալիքի երկարությունը, m -ն ամքող քիվ է:

1)  $\Delta = m\lambda :$                                    3)  $\Delta = \frac{1}{2}m\lambda :$

2)  $\Delta = \left( m + \frac{1}{2} \right)\lambda :$                                   4)  $\Delta = \frac{\lambda}{m} :$

1792. Լույսի երկու աղբյուրներ առաքում են միևնույն սկզբնական փուլերով  $5 \cdot 10^{14}$  Հց հաճախությամբ ալիքներ: Տարածության տվյալ կետում այդ ալիքների ընթացքի ի՞նչ նվազագույն տարրերության դեպքում կդիտվի ինտերֆերենցային մաքսիմում:

- 1) 0,9 մկմ:                                   3) 0,4 մկմ:  
2) 0,3 մկմ:                                   4) 0:

1793. Տարածության տվյալ կետում լույսի երկու կոհերենտ ալիքների ընթացքի տարրերությունը  $2,5\lambda$  է: Ի՞նչ է դիտվում այդ կետում:

- 1) Ինտերֆերենցային մաքսիմում:  
2) Ինտերֆերենցային մինիմում:  
3) Կդիտվի ինտերֆերենցային մինիմում կամ մաքսիմում:  
4) Պատասխանը կախված է  $\lambda$  ալիքի երկարությունից:

1794. 750 նմ ալիքի երկարությամբ կարմիր գույնի լույսի երկու կոհերենտ ալիքներ տարածության որևէ կետում հանդիպում են 25 մկմ ընթացքի տարրերությամբ: Ի՞նչ կդիտվի այդ կետում ալիքների ինտերֆերենցի հետևանքով:

- 1) Առավելագույն լուսավորվածություն:  
2) Նվազագույն լուսավորվածություն:  
3) Մոտավորապես միջին լուսավորվածություն:  
4) Նույն գույնի լույսի ալիքները չեն ինտերֆերում:

1795. Ի՞նչ պայմանի դեպքում է հնարավոր դիտել տարրեր ալիքի երկարությամբ երկու լույսի ալիքի ինտերֆերենց:

- 1) Եթե նրանց լայնություները հավասար են:  
2) Եթե սկզբնական փուլերը նույնն են:  
3) Սիշտ կարելի է դիտել:  
4) Ωչ մի պայմանի դեպքում:

1796. Ո՞ր երևույթն է հաստատում լույսի ալիքային քննությը:

- 1) Լույսի անդրադարձումը:      3) Լույսի բեկումը:  
 2) Լույսի դիֆրակցիան:      4) Լույսի ուղղագիծ տարածումը:

**1797. Ω՞ր երևոյթն է քացատրվում լույսի դիֆրակցիայով:**

- 1) Բարակ քաղանքների գունավորումը:
- 2) Ստվերի և կիսաստվերի առաջացումը:
- 3) Լույսի ճառագայթների շեղումը դեպի երկրաչափական ստվերի տիրույթ:
- 4) Ապակե հատվածակողմից անցնելիս սպիտակ լույսի տարավուծումը տարբեր գույների:

**1798. Ω՞ր պնդումն է սխալ:**

- 1) Լույսի ճառագայթն ուղղահայաց է ալիքային մակերևույթին:
- 2) Լույսի ճառագայթը զիծ է, որի երկայնքով տարածվում է լույսի ալիքի էներգիան:
- 3) Անթափանց էկրանի անցքի տրամագիծը փոքրացնելիս նրանով անցնող լույսի փունջն անընդհատ նեղանում է:
- 4) Այն մակերևույթը, որի բոլոր կետերում ժամանակի տվյալ պահին տատանումներն ունեն նույն փուլը, կոչվում է ալիքային մակերևույթ:


**1799. d պարբերությամբ դիֆրակտային ցանցը լուսավորվում է ճրան ուղղահայաց ընկնող  $\lambda$  ալիքի երկարությամբ լույսով: Ω՞ր քանածով կարելի է որոշել այն  $\alpha$  անկյունը, որի դեպքում դիտվում է 2-րդ կարգի մաքսիմումը:**

$$\begin{array}{ll} 1) \sin \alpha = \frac{2\lambda}{d}: & 3) \cos \alpha = \frac{2\lambda}{d}: \\ 2) \sin \alpha = \frac{d}{2\lambda}: & 4) \cos \alpha = \frac{d}{2\lambda}: \end{array}$$

**1800.  $\lambda$  երկարությամբ լուսային ալիքը ընկնում է  $d = 5\lambda$  պարբերությամբ դիֆրակտային ցանցի վրա: Ի՞նչ անկյան տակ կդիտվի երկրորդ կարգի մաքսիմումը:**

- 1)  $\arcsin 0,2:$
- 2)  $\arcsin 0,4:$
- 3)  $\arcsin 0,15:$
- 4)  $\arcsin 0,3:$

**1801. Լազերի ճառագայթը դիֆրակտային ցանցի վրա ուղղահայաց ընկնելիս ցանցի հետևում տեղադրված էկրանին դիտվում է դիֆրակտային պատկեր: Ինչպես կփոխակի պատկերը, եթե ցանցի հաստատունը փոքրացնենք:**



- 1) Ե կետի մաքսիմումը կմնա իր տեղում, իսկ մնացած մաքսիմումները կհեռանան նրանից:
- 2) Ե կետի մաքսիմումը կմնա իր տեղում, իսկ մնացած մաքսիմումները կմոտենան նրանից:
- 3) Ե կետի մաքսիմումը կվերանա, իսկ մնացած մաքսիմումները կմնան իրենց տեղերում:
- 4) Պատկերը չի փոխվի:


**1802. Ո՞ր լույսն է բևեռացված:**

- 1) Արեգակի առաքած լույսը:
- 2) Ելեկտրական լամպի առաքած լույսը:
- 3) Մոմի բոցի լույսը:
- 4) Տուրմալինե թիթեղով անցած լույսը:

**1803. Ո՞ր երևույթն է հաստատում լույսի ալիքի լայնական լինելը:**

- |                         |                       |
|-------------------------|-----------------------|
| 1) Լույսի ինտերֆերենցը: | 3) Լույսի դիսպերսիան: |
| 2) Լույսի դիֆրակցիան:   | 4) Լույսի բևեռացումը: |

**1804. Լույսի փունջն անցնում է նկարում պատկերված տուրմալինի երկու թիթեղներով, որոնց օպտիկական առանցքները զուգահեռ են: Ինչպես՞ս կփոխվի երկրորդ թիթեղով անցած լույսի պայծառությունը, եթե այն  $90^{\circ}$ -ով պտտենք փունջի շուրջը:**



- 1) Կաճի :
- 2) Չի փոխվի:
- 3) Նվազելով՝ կհավասարվի զրոյի:
- 4) Սկզբում կաճի, հետո՝ կնվազի:

**1805. Ո՞ր պնդումն է հարաբերականության հատուկ տեսության կանխադրույթ:**

**ա. Մեխանիկական երևույթները հաշվարկման բոլոր իներցիալ համակարգերում ընթանում են միատեսակ:**

**բ. Բոլոր ֆիզիկական երևույթները հաշվարկման բոլոր իներցիալ համակարգերում ընթանում են միատեսակ:**

- |               |                    |
|---------------|--------------------|
| 1) Միայն ա-ն: | 3) և ա-ն, և բ-ն:   |
| 2) Միայն բ-ն: | 4) ոչ ա-ն, ոչ բ-ն: |

**1806. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:**

Համաձայն հարաբերականության հատուկ տեսության առաջին կանխադրույթի՝ նույն պայմաններում հաշվարկման իներցիալ համակարգերում նույն ձևով են ընթանում ...

- 1) միայն մեխանիկական երևույթները:
- 2) միայն էլեկտրական երևույթները:
- 3) միայն օպտիկական երևույթները:
- 4) բնության բոլոր երևույթները:

**1807. Ω՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Լույսի արագությունը կախված չէ միջավայրից:
- 2) Լույսի արագությունը կախված է աղբյուրի արագությունից:
- 3) Լույսի արագությունը վակուումում կախված է հաշվարկման համակարգից:
- 4) Լույսի արագությունը վակուումում կախված չէ աղբյուրի արագությունից:

**1808. Լույսի ֆոտոննը տվյալ հաշվարկի համակարգում ունի *c* արագություն:**  
**Ո՞ր պնդումն է ճիշտը:**

- 1) Կարելի է ընտրել այնպիսի հաշվարկի համակարգ, որտեղ ֆոտոննի արագությունը փոքր լինի վակուումում լույսի արագությունից:
- 2) Կարելի է ընտրել այնպիսի հաշվարկի համակարգ, որտեղ ֆոտոննի արագությունը մեծ լինի վակուումում լույսի արագությունից:
- 3) Բոլոր հաշվարկի համակարգերում ֆոտոննի արագությունը հավասար է վակուումում լույսի արագությանը:
- 4) Բոլոր պնդումները սխալ են:

**1809. Դադարի վիճակում ավտոմեքենայի լուսարձակների առաքած լույսի արագությունը գետնի նկատմամբ *c* է: Որքա՞ն կլինի լույսի արագությունը, եթե ավտոմեքենան շարժվի *v* արագությամբ:**

- 1)  $c :$       3)  $c - v :$
- 2)  $\frac{c}{2} :$       4)  $c + v :$

**1810. Ո՞ր ֆիզիկական մեծությունը կախված չէ հաշվարկման համակարգի ընտրությունից:**


- 1) Վակուումում էլեկտրամագնիսական ալիքի տարածման արագությունը:
- 2) Մարմնի գծային չափերը:
- 3) Երկու մարմինների միջև հեռավորությունը:
- 4) Երկու պատահարների միջև ժամանակահատվածը:

**1811. Քանի՞ անգամ կփոխվի ճնողի երկարությունը, եթե այն շարժվի իր կայնքով ուղղված  $0,6c$  արագությամբ:**

- 1) Կմեծանա 1,25 անգամ:                    3) Կմեծանա 1,6 անգամ:  
 2) Կփոքրանա 1,25 անգամ:                    4) Կփոքրանա 1,6 անգամ:

1812. Ի՞նչ արագությամբ է շարժվում ձողը նկարում պատկերված հաշվարկման իներցիալ համակարգում, եթե այդ համակարգում ձողի երկարությունը 40 %-ով փոքր է ձողի հետ կապված հաշվարկման համակարգում նրա երկարության համեմատությամբ:

- 1)  $0,4c$ :                    3)  $0,92c$ :  
 2)  $0,8c$ :                    4)  $0,99c$ :



1813. Դադարի վիճակում մասնիկի կյանքի տևողությունը  $\tau_0$  է: Որքա՞ն կլինի այդ մասնիկի կյանքի տևողությունը հաշվարկման այն համակարգում, որի նկատմամբ մասնիկը շարժվում է  $v$  արագությամբ:

- 1)  $\tau = \frac{\tau_0}{\sqrt{1 - v^2/c^2}}$ :                    3)  $\tau = \tau_0 \sqrt{1 - v^2/c^2}$ :  
 2)  $\tau = \tau_0$ :                    4)  $\tau = \tau_0 \sqrt{1 + v^2/c^2}$ :

1814. Որքա՞ն է տարրական մասնիկի կյանքի տևողությունը արագարարում  $0,6c$  արագությամբ շարժվելիս, եթե մասնիկի հետ կապված հաշվարկման համակարգում նրա կյանքի տևողությունը  $\tau_0$  է:

- 1)  $\tau_0$ :                    3)  $0,8\tau_0$ :  
 2)  $1,67\tau_0$ :                    4)  $1,25\tau_0$ :

1815. Ի՞նչ արագության դեպքում է էլեկտրոնի կինետիկ էներգիան հավասար նրա հանգստի էներգիային:

- 1)  $\frac{c}{2}$ :                    3)  $\frac{\sqrt{3}}{2}c$ :  
 2)  $\frac{\sqrt{2}}{2}c$ :                    4)  $0$ :

1816. Ո՞ր բանաձևը է որոշվում ռելյատիվիստական էլեկտրոնի կինետիկ էներգիան ( $m$ -ը էլեկտրոնի զանգվածն է,  $v$ -ն՝ արագությունը,  $c$ -ն՝ լույսի արագությունը վակուումում):

$$1) \frac{mv^2}{2}:$$

$$3) \frac{mc^2}{\sqrt{1-v^2/c^2}} - mc^2:$$

$$2) \frac{mc^2}{2}:$$

$$4) mc^2 + \frac{mv^2}{2}:$$

1817. Մասնիկի լրիվ էներգիան քանի՞ աճամ է մեծ նրա հանգստի էներգիայից, եթե նրա կինետիկ էներգիան երեք աճամ մեծ է հանգստի էներգիայից:

1) 2:

3) 4:

2) 3:

4) 0,5:

1818. Արեգակն անընդհատ էներգիա է ճառագայթում: Փոխվո՞ւմ է արդյոք նրա զանգվածն այդ ընթացքում:

1) Մեծանում է:

3) Չի փոխվում:

2) Փոքրանում է:

4) Հնարավոր է՝ մեծանա կամ փոքրանա:

1819. Երկիրը յուրաքանչյուր վայրկյանում կլանում է Արեգակի արձակած էլեկտրամագնիսական ճառագայթման  $6 \cdot 10^{16}$  Ω էներգիա: Մոտավորապես քանի՞ կիլոգրամով է ավելանում Երկրի զանգվածը մեկ վայրկյանում: Լույսի արագությունը վակուումում  $3 \cdot 10^8$  մ/վ է:



1)  $6 \cdot 10^{16}$  կգ:

3)  $2 \cdot 10^8$  կգ;


2)  $5,4 \cdot 10^{33}$  կգ:

4) 0,67 կգ:

## 12.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1820. 4 մ բարձրությամբ այան գագաթին ամրացված է փողոցային լուսավորության լամպը: Որքա՞ն է 1 մ բարձրությամբ ուղղաձիգ ձողի ստվերի երկարությունը, եթե նրա հեռավորությունը սյունից 3 մ է:
1821. Եթե Արեգակի անկյունային բարձրությունը հորիզոնից  $45^0$  է, շենքի ստվերի երկարությունը 30 մ է: Որքա՞ն կլինի շենքի ստվերի երկարությունը, եթե Արեգակի անկյունային բարձրությունը հորիզոնից  $60^0$  է:
1822. Լույսի կետային աղբյուրի հեռավորությունը էկրանից 80 սմ է: Նրանց միջև՝ էկրանից 30 սմ հեռավորությամբ և էկրանին զուգահեռ, տեղադրված է 12 սմ երկարությամբ քանոն: Որքա՞ն կլինի քանոնի ստվերի երկարությունը էկրանի վրա: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
1823. Ի՞նչ անկյան տակ պետք է ճառագայթն ընկնի հարք հայելու վրա, որպեսզի անդրադարձած ճառագայթն ուղղահայաց լինի ընկնող ճառագայթին:
1824. Ի՞նչ անկյան անկյան դեպքում են ընկնող և անդրադարձած ճառագայթները կազմում  $120^0$  անկյուն:
1825. Հարք հայելու և նրա վրա ընկնող ճառագայթի կազմած անկյունը  $30^0$  է (նկ. 60): Որքա՞ն է ճառագայթի անդրադարձման անկյունը:
- 
- Նկ. 60
1826. Հարք հայելու վրա ընկնող և անդրադարձած ճառագայթների կազմած անկյան  $2/3$  մասը  $80^0$  է: Որքա՞ն է ճառագայթի անկյան անկյունը:
1827. Լույսի ճառագայթն ընկնում է հարք հայելու վրա  $25^0$  անկյան տակ: Քանի՞ աստիճանով կվտխվի ընկնող և անդրադարձած ճառագայթների կազմած անկյունը, եթե ընկնող ճառագայթի և հայելու կազմած անկյունը մեծացնենք  $10^0$ -ով:
1828. Հորիզոնական տեղադրված հարք հայելու վրա լույսի ճառագայթի անկյան անկյունը  $30^0$  է: Որքա՞ն կլինի լույսի անդրադարձման անկյունը, եթե հայելին շրջենք  $10^0$ -ով այնպես, ինչպես ցույց է տրված 61-րդ նկարում:
- 
- Նկ. 61

1829. Հորիզոնական տեղադրված հարք հայելու վրա լույսի ճառագայթի անկման անկյունը  $45^{\circ}$  է: Որքա՞ն կլինի ընկնող և անդրադարձող ճառագայթների կազմած անկյունը, եթե հայելին շրջենք  $15^{\circ}$ -ով այնպես, ինչպես ցույց է տրված 62-րդ նկարում:




Նկ. 62

1830. Հայելուն ընկնող ճառագայթի ի՞նչ անկման անկյան դեպքում են ընկնող և անդրադարձած ճառագայթները համընկնում:
1831. Մարդը կանգնած է հարք հայելու դիմաց՝ նրանից  $1,5$  մ հեռավորությամբ: Որքա՞ն կլինի մարդու և նրա պատկերի հեռավորությունը, եթե մարդը հայելուց հեռանա ևս  $2$  մ-ով:
1832. Արեգակը հորիզոնից բարձր է  $20^{\circ}$ : Հորիզոնի նկատմամբ ի՞նչ սուր անկյան տակ պետք է տեղադրել հարք հայելին, որպեսզի նրանից անդրադարձած ճառագայթն ուղղված լինի ուղղաձիգ դեպի վեր:
1833. Սեղանի հորիզոնական հարթության նկատմամբ ի՞նչ սուր անկյան տակ պետք է տեղադրել հարք հայելին, որպեսզի սեղանի վրայով դեպի հայելի գլորվող գնդիկի պատկերը շարժվի ուղղաձիգ ուղղությամբ:
1834. Ճառագայթն ընկնում է երկու փոխուղղահայաց հայելիների համակարգի վրա: Առաջին հայելու վրա ճառագայթի անկման անկյունը՝  $\alpha = 17^{\circ}$ : Անդրադարձալով առաջին հայելուց ճառագայթն ընկնում է երկրորդի վրա: Որքա՞ն է երկրորդ հայելուց ճառագայթի անդրադարձման անկյունը:
1835. Մարդը հարք հայելուն մոտենում է  $2$  մ/վ արագությամբ: Ի՞նչ արագությամբ է նա մոտենում հայելում իր պատկերին:
1836. Հարք հայելին շարժվում է հաստատում՝  $1,5$  մ/վ արագությամբ, հայելու նորմալի ուղղությամբ: Նոյն հաշվարկման համակարգում ի՞նչ արագությամբ պետք է շարժվի լույսի կետային աղբյուրը, որպեսզի հայելում նրա պատկերը մնա անշարժ:
1837.  $5$  մ շարավիով շրջանաձև լողավազանը լիքը լցված է ջրով: Լողավազանի կենտրոնում՝ ջրի մակերևույթից  $3$  մ բարձրությամբ կախված է լամպը: Լողավազանի եզրից առավելագույնն ի՞նչ հեռավորությունից կտեսնի մարդը լամպի պատկերը ջրում, եթե նրա հասակը  $1,8$  մ է:

1838. Լույսի ճառագայթն օդից ընկնում է  $\sqrt{2}$  քելման ցուցիչ ունեցող թափանցիկ դիէլեկտրիկի վրա: Անկման անկյունը  $45^0$  է: Բեկման հետևանքով ի՞նչ անկյանը է շեղվում ճառագայթն իր սկզբնական ուղղությունից:
1839. Ի՞նչ անկյան տակ պետք է լույսի ճառագայթը վակուումից ընկնի  $\sqrt{3}$  քելման ցուցիչ ունեցող թափանցիկ դիէլեկտրիկի վրա, որպեսզի անդրադարձած ճառագայթն ուղղահայաց լինի բեկված ճառագայթին:
1840. Լույսի ճառագայթը վակուումից ընկնում է  $\sqrt{3}$  քելման ցուցիչ ունեցող թափանցիկ դիէլեկտրիկի վրա: Որքա՞ն է քելման անկյունը, եթե այն  $30^0$ -ով փոքր է անկման անկյունից:
1841. Որքա՞ն է լույսի արագությունը միջավայրում, եթե միջավայրի քելման ցուցիչը  $1,25$  է: Պատասխանը բազմապատկել  $10^{-7}$ -ով:
1842. Զրասուզակին ջրում ի՞նչ անկյան տակ է երևում մայր մտնող Արեգակը, եթե ջրի քելման ցուցիչը  $\sqrt{2}$  է:
1843. Լույսի ճառագայթը հեղուկից դուրս է զալիս օդ: Լրիվ անդրադարձման սահմանային անկյունը  $30^0$  է: Որքա՞ն է լույսի արագությունը հեղուկում: Պատասխանը բազմապատկել  $10^{-7}$ -ով:
1844. Որքա՞ն ճանապարհ է անցնում լույսի ճառագայթը ջրում  $1$  մկվ-ի լնքացքում, եթե ջրի քելման ցուցիչը  $4/3$  է:
1845. Լույսի ճառագայթը, օդից ուղղահայաց ընկնելով ապակե հավասարակողմ եռանկյուն հատվածակողմի նիստերից մեկի վրա, անդրադանում է երկրորդ նիստից և դուրս զալիս երրորդ նիստից: Որքա՞ն է ընկնող և հատվածակողմից դուրս եկող ճառագայթների կազմած անկյունը:
1846. Լույսի կետային աղբյուրի խորությունը ջրի մեջ  $1,5$  մ է: Ինչքա՞ն է այն շրջանի շառավիղը ջրի մակերևույթի վրա, որի սահմաններում հնարավոր է ճառագայթի դուրս զալը օդ: Ջրի քելման ցուցիչն ընդունել  $1,25$ :
1847. Ոսպնյակի օպտիկական ուժը  $0,5$  դպտը է: Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը:
1848. Մոմի հեռավորությունը  $10$  դպտը օպտիկական ուժ ունեցող թարակ հավաքող ոսպնյակից  $0,125$  մ է: Ոսպնյակից ի՞նչ հեռավորության վրա կստացվի պատկերը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:

1849. Բարակ ոսպնյակից 0,4 մ հեռավորությամբ տեղադրված առարկայի պատկերը ստացվեց իրական և 3 անգամ խոշորացված: Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
1850. Հավաքող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը 4 մ է: Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից, եթե այն 4 անգամ փոքր է, քան իրական պատկերի հեռավորությունը ոսպնյակից:
1851. Որքա՞ն է բարակ ոսպնյակի խոշորացումը, եթե առարկայի հեռավորությունը ոսպնյակից 4 անգամ փոքր է պատկերի՝ ոսպնյակից ունեցած հեռավորությունից:
1852. Առարկան տեղադրված է հավաքող բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքին ուղղահայաց՝ ոսպնյակից նրա կիզակետային հեռավորության 1/2-ին հավասար հեռավորության վրա: Որքա՞ն է գծային խոշորացման բացարձակ արժեքը:
1853. Հավաքող բարակ ոսպնյակից 0,04 մ հեռավորությամբ դրված առարկան այդ ոսպնյակով դիտելիս ստանում են նրա կեղծ պատկերը, որը 5 անգամ մեծ է առարկայից: Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը:
1854. Հավաքող բարակ ոսպնյակից 0,4 մ հեռավորության վրա տեղադրված առարկայի կեղծ պատկերը ոսպնյակից հեռու է 0,5 մ: Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը:
1855. Լուսանկարչական ապարատի օրյեկտիվի կենտրոնից մինչև ետևի պատը եղած հեռավորությունը 0,05 մ է: Օրյեկտիվից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել նկարվող առարկան, որպեսզի նրա պատկերը ստացվի 40 անգամ փոքրացված:
1856. 2 մ բարձրությամբ առարկան 1 մ կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակից հեռու է 3 մ: Որքա՞ն է առարկայի պատկերի բարձրությունը:
1857. Հավաքող բարակ ոսպնյակի կիզակետից մինչև առարկան հեռավորությունը 0,1 մ է, իսկ իրական պատկերից մինչև մյուս կիզակետը՝ 2,5 մ: Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը:
1858. Բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը 50 սմ է: Առարկան ոսպնյակից հեռու է 60 սմ: Ոսպնյակից ի՞նչ հեռավորության վրա կստացվի առարկայի պատկերը:

1859. Որքա՞ն է ցրող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորության մոդուլը, եթե ոսպնյակից մինչև առարկա հեռավորությունը 12 սմ է, իսկ մինչև պատկերը՝ 4 սմ: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
1860. Լույսի ճառագայթների գուգահեռ փունջն ընկնում է 5 դպրոց օպտիկական ուժով բարակ ոսպնյակի վրա՝ նրա զլիսավոր օպտիկական առանցքին գուգահեռ (նկ. 63): Ուսուցակի տրամագիծը՝  $d_1 = 6$  սմ: Էկրանը ոսպնյակից հեռու է  $L = 60$  սմ: Որքա՞ն է էկրանի վրա ոսպնյակով ստացված լուսավոր օդակի տրամագիծը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
1861. Ցրող բարակ ոսպնյակից 6 մ հեռավորությամբ տեղադրված 0,4 մ բարձրությամբ առարկայի կեղծ պատկերի բարձրությունը 0,1 մ է: Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորության բացարձակ արժեքը:
1862. Սիմյանցից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել երկու հավաքող բարակ միատեսակ ոսպնյակները՝ յուրաքանչյուրը 2 դպտր օպտիկական ուժով, որպեսզի այդ համակարգի վրա ընկնող ճառագայթների գուգահեռ փունջը, դուրս գալով նրանից, մնա գուգահեռ:
1863. Օդում կալիումի գոլորշիների արձակած կարմիր գույնի լույսի ալիքի երկարությունը  $7,36 \cdot 10^{-7}$  ն է: Որքա՞ն է տվյալ լույսի ալիքի երկարությունն ապակում, եթե նրա բեկման ցուցիչը 1,6 է: Պատասխանը բազմապատկել  $10^8$ -ով:
1864. Լույսի ալիքի երկարությունը բափանցիկ միջավայրում քանի՛ տուկոսով է փոքր վակուումում նրա ալիքի երկարությունից: Այդ միջավայրի բեկման ցուցիչը 1,25 է:
1865. Վակուումում ի՞նչ հեռավորություն կանցնի լույսի մեներանգ ճառագայթման ալիքի ճակատն այն ժամանակամիջոցում, որի ընթացքում այդ ալիքը ջրում անցնում է 170 մ հեռավորություն: Զրի բեկման ցուցիչը 1,3 է:
1866. Որքա՞ն մանուշակագույն լույսի ալիքներ են տեղադրվում մեկ սանտիմետրում: Օդում մանուշակագույն լույսի ալիքի երկարությունը  $4 \cdot 10^{-7}$  ն է: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:



Նկ. 63

1867. Երկու վերադրվող կոհերենտ լույսի ալիքների ընթացքի տարրերությունը տվյալ կետում հավասար է ալիքի երկարության  $0,3$  -ին: Որքա՞ն է այդ կետում տատանումների փուլերի տարրերությունն՝ արտահայտված աստիճաններով:
1868. Էկրանի ինչ-որ կետում ընթացքի  $2,4 \cdot 10^{-6}$  մ տարրերությամբ երկու կոհերենտ ալիքների վերադրման հետևանքով դիտվում է չորրորդ կարգի մաքսիմում: Որքա՞ն է նույն ալիքի երկարությամբ երկու կոհերենտ ալիքների ընթացքի տարրերությունն այն դեպքում, եթե էկրանի վրա ստացվում է նույն կարգի մինիմում: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:
1869. Որքա՞ն է դիֆրակտային ցանցի հաստատունը, եթե այն 1 մմ-ի վրա ունի 500 նրբագիծ: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:
1870. Լույսի փունջն ընկնում է դիֆրակտային ցանցի վրա՝ նրա նորմալի ուղղությամբ: Որոշել ցանցի պարբերությունը, եթե երկրորդ կարգի մաքսիմումը դիտվում է սկզբնական ուղղության նկատմամբ  $30^0$  անկյան տակ: Լույսի ալիքի երկարությունը  $5 \cdot 10^{-7}$  մ է: Պատասխանը բազմապատկել  $10^6$ -ով:
1871. Դիֆրակտային ցանցի պարբերությունը  $3,3 \cdot 10^{-6}$  մ է: Որքա՞ն է կանաչ գույնի լույսի սպեկտրի մաքսիմումների առավելագույն կարգը, եթե ալիքի երկարությունը  $5,5 \cdot 10^{-7}$  մ է:
1872.  $2 \cdot 10^{-5}$  մ պարբերությամբ դիֆրակտային ցանցի վրա, նրան ուղղահայց ուղղությամբ ընկնում է սպիտակ լույսի գուգակն փունջ: Ցանցից 2 մ հեռավորության էկրանի վրա դիտվում է սպեկտր: Որքա՞ն է սպեկտրի առաջին կարգի կարմիր և մանուշակագույն գույների մաքսիմումների հեռավորությունը, եթե լույսի կարմիր և մանուշակագույն ալիքների երկարությունները համապատասխանաբար  $8 \cdot 10^{-7}$  մ և  $4 \cdot 10^{-7}$  մ են: Ընդունել, որ փոքր անկյունների համար  $\sin \varphi \approx t g \varphi$ : Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
1873. 700 նմ ալիքի երկարությամբ լազերային ճառագայթն ուղղահայաց ընկնում 1 մմ-ի վրա 250 նրբագիծ պարունակող դիֆրակտային ցանցի վրա: 1 մմ-ի վրա քանի՞ նրբագիծ պետք է պարունակի դիֆրակտային ցանցը, որպեսզի նրա վրա վրա 500 նմ ալիքի երկարությամբ լազերային ճառագայթ ընկնելիս դիֆրակտային պատկերը չփոխվի:

1874. Դիֆրակտային ցանցի հաստատունը  $2 \cdot 10^{-6}$  մ է: Ցանցի վրա նորմալի ուղղությամբ ընկնում է հարք մեներանգ ալիք: Որքա՞ն է ընկնող ալիքի երկարությունը, եթե 4-րդ կարգի ապեկտրը դիտվում է ընկնող ճառագայթներին ուղղահայաց ուղղությամբ: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:
1875. Դիֆրակտային ցանցի պարբերությունը 0,01 մմ է: Առաջին դիֆրակտային մաքսիմումը կենտրոնական պատկերից հեռու է 11,8 սմ, իսկ ցանցից՝ 2 մ: Որքա՞ն է լույսի ալիքի երկարությունը: Փոքր անկյունների համար ընդունել  $\sin \alpha \approx \tan \alpha$ : Պատասխանը բազմապատկել  $10^8$ -ով:
1876. Ի՞նչ արագությամբ պետք է շարժվի մարմինը, որպեսզի անշարժ դիտողի համար նրա երկայնական չափերը շարժման ուղղությամբ փոքրանան 2 անգամ: Պատասխանը բազմապատկել  $10^{-6}$ -ով:
1877. Երկրի նկատմամբ ի՞նչ արագությամբ պետք է շարժվի տիեզերանավը, որպեսզի նրա հետ կապված հաշվարկման համակարգում ժամանակը երկու անգամ դանդաղ ընթանա, քան Երկրի հետ կապված հաշվարկման համակարգում: Պատասխանը բազմապատկել  $10^{-6}$ -ով:
1878. Քանի՞ տարի կանցնի Երկրի վրա, եթե Երկրի նկատմամբ  $0,8c$  արագությամբ շարժվող հրթիռում անցնում է 6 տարի:
1879. Մարմնի հանգստի էներգիան  $1,8 \cdot 10^{17}$  Ջ է: Որքա՞ն է մարմնի զանգվածը:
1880. Երկիրը յուրաքանչյուր վայրկյանում կլանում է Արեգակի արձակած էլեկտրամագնիսական ճառագայթման  $6,3 \cdot 10^{16}$  Ջ էներգիա: Քանի՞ կիլոգրամով է ավելանում Երկրի զանգվածը 10 վայրկյանում:
1881.  $10^0$  C ջերմաստիճանի 2 կգ զանգվածով ջուրը տաքացնում են մինչև եռման ջերմաստիճանը ( $100^0$  C): Որքանո՞վ է փոխվում ջրի զանգվածը: Ջրի տեսակարար ջերմունակությունը 4200 Ջ/կգ·Կ է: Պատասխանը բազմապատկել  $10^{13}$ -ով: Գոլորշիացման հետևանքով ջրի զանգվածի փոփոխությունն անտեսել:
1882. Որքա՞ն աշխատանք է անհրաժեշտ կատարել էլեկտրոնի արագությունը  $0,6c$  -ից մինչև  $0,8c$  արժեքը մեծացնելու համար: Պատասխանը բազմապատկել  $10^{17}$ -ով:

1883. Ի՞նչ արագության դեպքում  $m$  զանգվածով ռելյատիվիստական մաս-  
նիկի կինետիկ էներգիան կդառնա  $\frac{mc^2}{3} : \sqrt{7} = 2,64 :$  Պա-  
տասխանը բազմապատկել  $10^{-6}$ -ով:

## 12.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1884. Փողոցային լրսավորության լամպից որոշ հեռավորությամբ ուղղաձիգ տեղադրված 1 մ երկարությամբ ձողի ստվերի երկարությունը գետնին 1 մ է: Եթե լամպի սյան և ձողի հեռավորությունը մեծացնենք 1,5 մ-ով, ապա ստվերի երկարությունը կլինի 1,5 մ:


- 1) Սկզբում սյունից հ՞նչ հեռավորության վրա էր ձողը:
- 2) Որքա՞ն է լամպի բարձրությունը գետնից:

1885. Լույսի կետային աղբյուրը տեղադրված է միմյանց զուգահեռ երկու հարք հայելիների միջև: Հայելիների միջև հեռավորությունը 1 մ է:

- 1) Որքա՞ն է հայելիներում լույսի աղբյուրի առաջին պատկերների միջև հեռավորությունը:
- 2) Որքանո՞վ կմեծանա առաջին պատկերների հեռավորությունը, եթե հայելիների հեռավորությունը մեծացնենք 0,5 մ-ով:

1886. 64-րդ նկարում պատկերված հարք հայելին շարժվում է  $v = 2,5$  մ/վ արագությամբ, իսկ լույսի  $S$  կետային աղբյուրը՝  $u = 5$  մ/վ արագությամբ:

- 1) Գետնի նկատմամբ ի՞նչ արագությամբ է շարժվում աղբյուրի պատկերը:
- 2) Հայելու հետ ի՞նչ սուր անկյուն է կազմում պատկերի արագությունը գետնի նկատմամբ:




Նկ. 64

1887. Լույսի ճառագայթը վակուումից անցնում է քափանցիկ դիէլեկտրիկի մեջ: ճառագայթի անկման անկյունը  $45^0$  է: Դիէլեկտրիկի բեկման ցուցիչը  $\sqrt{2}$  է:

- 1) Որքա՞ն է ճառագայթի բեկման անկյունը:
- 2) Որքա՞ն է բեկման հետևանքով սկզբնական ուղղությունից ճառագայթի շեղման անկյունը:

1888. Լույսի ճառագայթն ուղղահայաց ընկնում է 65-րդ նկարում պատկերված  $\alpha = 30^0$  բեկող անկյուն ունեցող հատվածակողմի  $AB$  նիստին և դուրս գալիս նրանից այնպես, որ եքում ճառագայթը  $BC$  նիստի հետ նույնական կազմում է  $\alpha = 30^0$  անկյուն: Հատվածակողմի  $BC$  նիստն ուղղահայաց է  $AC$  նիստին:

- 1) Որքա՞ն է ճառագայթի անկման անկյունը  $BC$  նիստի վրա:




Նկ. 65

- 2) Որքա՞ն է հատվածակողմի նյութի բեկման ցուցիչը: Պատասխանը բազմապատկել 10- ով:

1889. Ապակե հատվածակողմի հատույթն ունի հավասարասրուն եռանկյան տեսք: Հավասար նիստերից մեկն արծաթապատված է, իսկ մյուսին ուղղահայաց ընկնող լույսի ճառագայթը, երկու անգամ անդրադառնալուց հետո, դուրս է գալիս հատվածակողմից՝ նրա հիմքին ուղղահայաց ուղղությամբ (նկ. 66):

- 1) Որքա՞ն է հատվածակողմի գագարի  $\alpha$  անկյունը:
- 2) Որքա՞ն է հատվածակողմի հիմքի  $\beta$  անկյունը:



Նկ. 66

1890. Լուսատու կետը  $F = 0,5$  մ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքի երկայնքով 3 Վ-ում ոսպնյակից  $3F$  հեռավորությամբ A կետից տեղափոխում է  $1,5F$  հեռավորությամբ B կետը:

- 1) Որքա՞ն է A և B կետերի պատկերների հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 2) Որքա՞ն է լուսատու կետի պատկերի շարժման միջին արագությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

1891. 4 դպտը օպտիկական ուժ ունեցող բարակ ոսպնյակով պետք է ստանան առարկայի խոշորացված պատկերը:

- 1) Ոսպնյակից  $h^{\circ}$  հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի ստացվի նրա 5 անգամ խոշորացված իրական պատկերը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
- 2) Ոսպնյակից  $h^{\circ}$  հեռավորությամբ պետք է տեղադրել առարկան, որպեսզի ստացվի նրա 5 անգամ խոշորացված կեղծ պատկերը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:

1892. Եթե առարկայի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 6 մ է, նրա իրական պատկերը ստացվում է 2 անգամ խոշորացված:


- 1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 2) Որքանո՞վ պետք է տեղափոխել առարկան դեպի ոսպնյակը, որպեսզի նրա իրական պատկերը լինի 10 անգամ խոշորացված: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

1893. 0,6 մ կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակից 0,3 մ հեռավորությամբ տեղադրված է առարկան:

- 1) Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի առարկայի պատկերը:  
Պատասխանը բազմապատկել 10-ով:
  - 2) Որքա՞ն է այդ դեպքում ոսպնյակի խոշորացումը:
1894. Հավաքող բարակ ոսպնյակում առարկայի իրական պատկերը ստացվում է 2 անգամ խոշորացված: Առարկայի և պատկերի հեռավորությունը 24 սմ է:
- 1) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10<sup>2</sup>-ով:
  - 2) Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը: Պատասխանը բազմապատկել 10<sup>2</sup>-ով:
1895. Առարկայի իրական պատկերի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից 6 սմ է: Եթե հավաքող ոսպնյակը փոխարինվի մոդուլով նույն կիզակատային հեռավորություն ունեցող ցրող բարակ ոսպնյակով, ապա կեղծ պատկերը ցրող ոսպնյակից հեռու կլինի 3 սմ:
- 1) Որքա՞ն է ոսպնյակների կիզակետային հեռավորության մոդուլը: Պատասխանը բազմապատկել 10<sup>2</sup>-ով:
  - 2) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակներից: Պատասխանը բազմապատկել 10<sup>2</sup>-ով:
1896. Հավաքող բարակ ոսպնյակից 0,2 մ հեռավորությամբ տեղադրված առարկայի կեղծ պատկերը խոշորացված է 5 անգամ:
- 1) Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը:
  - 2) Որքա՞ն պետք է լինի առարկայի հեռավորությունը ոսպնյակից, որպեսզի ստացվի 5 անգամ խոշորացված իրական պատկերը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
1897. Հավաքող բարակ ոսպնյակում առարկայի 5 անգամ խոշորացված կեղծ պատկերի հեռավորությունը առարկայից 80 սմ է:
- 1) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10-ով:
  - 2) Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը:
1898. Լույսի երկու կետային աղբյուրների միջև հեռավորությունը 24 սմ է: Նրանց միջև, մեկից 6 սմ հեռավորության վրա հավաքող բարակ ոսպնյակը տեղադրված է այնպես, որ երկու աղբյուրների պատկերներն ել ստացվում են զլսավոր օպտիկական առանցքի նույն կետում:
- 1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը:  
Պատասխանը բազմապատկել 10<sup>2</sup>-ով:

- 2) Ոսպնյակից  $h^{\circ} \approx$  հեռավորությամբ են ստացվում պատկերները: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 1899.** Հավաքող բարակ ոսպնյակում առարկայի կեղծ պատկերի հեռավորությունը ոսպնյակից 4 անգամ մեծ է կիզակետային հեռավորությունից:
- 1) Որքա՞ն է առարկայի ոսպնյակից ունեցած հեռավորության և կիզակետային հեռավորության հարաբերությունը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
  - 2) Որքա՞ն է ոսպնյակի խոշորացումը:
- 1900.** 20 սմ կիզակետային հեռավորությամբ բարակ ոսպնյակում ստացվում է առարկայի 4 անգամ փոքրացված պատկերը: Այլ ոսպնյակով փոխարինելիս նույն տեղում ստացվում է նույն առարկայի 4 անգամ խոշորացված իրական պատկերը:
- 1) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից:
  - 2) Որքա՞ն է երկրորդ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
- 1901.** 0,4 մ բարձրությամբ առարկան տեղադրված է 2 մ կիզակետային հեռավորություն ունեցող ցրող բարակ ոսպնյակից 6 մ հեռավորությամբ:
- 1) Որքա՞ն է առարկայի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
  - 2) Որքա՞ն է պատկերի բարձրությունը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
- 1902.**  $F = 15$  սմ կիզակետային հեռավորությամբ ցրող բարակ ոսպնյակի վրա՝ նրա զլսավոր օպտիկական առանցքին գուգահեռ ընկնում է լույսի ճառագայթների զլանաձև փունջ: Ոսպնյակի հետևում տեղադրված է կրանին ստացվում է փնջի տրամագծից 3 անգամ մեծ տրամագծով լուսավոր շրջան:
- 1) Որքա՞ն է էկրանի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
  - 2) Լուսավոր շրջանի տրամագիծը քանի<sup>o</sup> անգամ մեծ կլինի փնջի տրամագծից, եթե էկրանը տեղադրենք ոսպնյակից  $3F$  հեռավորությամբ:
- 1903.**  $O_1$  և  $O_2$  կոհերենտ աղբյուրների ճառագայթած լույսի ալիքի երկարությունը  $5,9 \cdot 10^{-7}$  մ է: Մետք հեռավորությունը աղբյուրներից՝  $d_1 = 1$  մ և  $d_2 = 1,059$  մ (Ակ. 67):

- 1) Որքա՞ն է  $M$  կետում ալիքների ընթացքների տարրերությունը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
- 2) Լույսի քանի՞ ալիքի երկարություն է տեղավորվում ընթացքների տարրերության վրա: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ -ով:



Նկ. 67

**1904. Դիֆրակտային ցանցի նորմալի ուղղությամբ նրա վրա դնենաւմ է  $1000$  նմ ալիքի երկարությամբ ենթակարմիր լույս: Դիֆրակտային ցանցի 1 մմ-ի վրա պարունակվում է  $500$  նրբագիծ:**

- 1) Ի՞նչ անկյան տակ կդիտվի առաջին կարգի մաքսիմումը՝ արտահայտված աստիճաններով:
- 2) Որքա՞ն է ալիքի տատանման հաճախությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-14}$ -ով:

**1905. Մեներանգ լույսի փունջն ուղղահայաց ընկերում է դիֆրակտային ցանցի վրա, որի հաստատունը  $1,5$  մկմ է: Լույսի ալիքի երկարությունը՝  $0,525$  մկմ:**

- 1) Որքա՞ն է դիտվող մաքսիմումների առավելագույն կարգը:
- 2) Ի՞նչ անկյան տակ է ստացվում առավելագույն կարգի մաքսիմումը: Հնդունել՝  $0,7 = \sqrt{2}/2$ :

**1906. Վակուումում վերադրվող երկու մեներանգ լույսի ալիքների տատանման փուլերի տարրերությունը՝  $\Delta\varphi = 6\pi$ , իսկ ընթացքների տարրերությունը՝  $\Delta d = 1,5$  մկմ:**

- 1) Որքա՞ն է ալիքի տատանման հաճախությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-14}$ -ով:
- 2) Որքա՞ն է լույսի ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:

**1907. Մարմնի զանգվածը 876 գ է:**

- 1) Որքա՞ն է մարմնի հանգստի էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{-13}$ -ով:
- 2) Քանի՞ տարում այդքան էներգիա կարտադրի  $10^9$  Վտ հզորությամբ էլեկտրակայանը: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:


## 12.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1908. Լույսի ճառագայթը  $60^{\circ}$  անկյան տակ ընկնում է ապակե հարք զուգահեռ թիթեղի վրա և դուրս գալիս նրանից: Ապակու բեկման ցուցիչը  $\sqrt{3}$  է: Թիթեղի հաստությունը  $0,3$  մ է:

- 1) Որքա՞ն է ճառագայթի բեկման անկյունը օդ-ապակի սահմանի վրա:
- 2) Բեկման հետևանքով ապակու մեջ լույսի ճառագայթը քանի՞՝ աստիճանով է շեղվում իր սկզբնական ուղղությունից:
- 3) Ապակուց դուրս եկած ճառագայթը որքանո՞վ է տեղաշարժվում սկզբնական ուղղությունից: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:

1909.  $60^{\circ}$  բեկող անկյուն ունեցող հավասարակողմ հատվածակողմը դրված է  $BC$  հիմքի վրա (նկ. 68): Հատվածակողմի վրա ընկնող ճառագայթը նրա ներսում տարածվում է  $BC$  հիմքին զուգահեռ: Հատվածակողմի նյութի բեկման ցուցիչը  $\sqrt{3}$  է:

- 1) Որքա՞ն է ճառագայթի բեկման անկյունը հատվածակողմ մտնելիս:
- 2) Որքա՞ն է ճառագայթի անկման անկյունը հատվածակողմ մտնելիս:
- 3) Որքա՞ն է սկզբնական ուղղությունից ճառագայթի շեղման  $\delta$  անկյունը:



Նկ. 68

1910. Երբ առարկայի հեռավորությունը հավաքող բարակ ոսպնյակից  $0,06$  մ է, նրա իրական պատկերը ստացվում է  $2$  անգամ խոշորացված:

- 1) Ոսպնյակից  $1^{\circ} 6$  հեռավորությամբ է ստացվում առարկայի պատկերը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:
- 2) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:
- 3) Այդ ոսպնյակից  $1^{\circ} 6$  հեռավորությամբ պէտք է տեղադրել առարկան, որպեսզի ստացվի նրա  $2$  անգամ խոշորացված կեղծ պատկերը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:

1911. Հավաքող բարակ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը  $10$  մ է:  $2$  ամ բարձրությամբ առարկան տեղադրված է ոսպնյակից  $15$  մ հեռավորությամբ՝ զիսավոր օպտիկական առանցքին ուղղահայաց:

- 1) Որքա՞ն է առարկայի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել  $10$ - ով:

- 2) Որքա՞ն է ոսպնյակի խոշորացումը:
- 3) Որքա՞ն է պատկերի բարձրությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:
1912. Ողդանկյուն կոռորդինատային համակարգի X առանցքը համընկնում է բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքին: (10 ; 5) կոռորդինատներով լուսատու կետի իրական պատկերը ստացվում է (40 ; -10) կոռորդինատներով կետում: Կոռորդինատներն արտահայտված են սանտիմետրերով:
- 1) Որքա՞ն է լուսատու կետի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:
  - 2) Որքա՞ն է լուսատու կետի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:
  - 3) Որքա՞ն է ոսպնյակի օպտիկական ուժը:
1913. Լուսատու կետը հավաքող բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքի շուրջը 3 սմ/վ գծային արագությամբ կատարում է 10 սմ շառավղով շրջանագծային շարժում: Լուսատու կետի պտտման հարթությունն ուղղահայաց է գլխավոր օպտիկական առանցքին և ոսպնյակից հեռու է  $1,5F$ , որտեղ  $F = 10$  սմ-ը ոսպնյակի կիզակետային հեռավորությունն է:
- 1) Ոսպնյակից  $h^{\circ}$ նշ հեռավորություն ունի լուսատու կետի պատկերի հետագծի հարթությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
  - 2) Որքա՞ն է պատկերի հետագծի շառավիղը: Պատասխանը բազմապատկել 10- ով:
  - 3)  $h^{\circ}$ նշ գծային արագությամբ է պտտվում պատկերը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:
1914. 4 սմ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակը տեղադրված է անքափանց թիթեղի նույն մեծությամբ շրջանաձև անցքում: Լույսի կետային աղբյուրը տեղադրված է ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքի վրա՝ ոսպնյակից 12 սմ հեռավորությամբ:
- 1) Ոսպնյակի մյուս կողմում՝ նրանից  $h^{\circ}$ նշ ամենափոքր հեռավորությամբ պետք է տեղադրել էկրանը, որպեսզի նրա վրա ստացվող լուսավոր շրջանի տրամագիծը երկու անգամ փոքր լինի ոսպնյակի տրամագծից: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:
  - 2) Ոսպնյակի մյուս կողմում, նրանից  $h^{\circ}$ նշ ամենամեծ հեռավորությամբ պետք է տեղադրել էկրանը, որպեսզի նրա վրա ստացվող լուսավոր

շրջանի տրամագիծը երկու անգամ փոքր լինի ոսպնյակի տրամագծից: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:

- 3) Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ պետք է տեղադրել էկրանը, որպեսզի նրա վրա ստացվի աղբյուրի կետային պատկերը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:
1915. Լույսի կետային աղբյուրը ցրող բարակ ոսպնյակից  $1,2$  մ հեռավորությամբ կետից զիսավոր օպտիկական առանցքի երկայնքով տեղափոխում են մինչև  $0,6$  մ հեռավորությամբ կետը: Այդ ընթացքում նրա պատկերն անցնում է  $10$  ամ ճանապարհ:
- 1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել  $10$ - ով:
  - 2) Որքա՞ն է աղբյուրի սկզբանական դիրքի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել  $10$ - ով:
  - 3) Որքա՞ն է աղբյուրի վերջնական դիրքի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել  $10$ - ով:
1916.  $0,12$  մ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակից առարկայի հեռավորությունը  $0,18$  մ է: Ոսպնյակի կիզակետային հարթության մեջ տեղադրված է հարք հայելի:
- 1) Ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի առարկայի պատկերը նշված համակարգում: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:
  - 2) Որքա՞ն է այդ պատկերի խոշորացումը:
  - 3) Առարկայից ի՞նչ հեռավորության վրա է ստացվում պատկերը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
1917.  $F_1 = |F_2| = 0,2$  մ կիզակետային հեռավորություններ ունեցող հավաքող և ցրող բարակ ոսպնյակները տեղադրված են իրարից  $0,5$  մ հեռավորությամբ, այնպես, որ նրանց զիսավոր օպտիկական առանցքները համընկնում են: Լույսի կետային աղբյուրը տեղադրված է հավաքող ոսպնյակի առջևում՝ նրանից  $0,3$  մ հեռավորությամբ, և նրա պատկերը ստացվում է ցրող ոսպնյակի հետևում:

- 1) Հավաքող ոսպնյակից ի՞նչ հեռավորությամբ կստացվի աղբյուրի պատկերը ցրող ոսպնյակի բացակայության դեպքում: Պատասխանը բազմապատկել  $10$ - ով:
- 2) Որքա՞ն է այդ պատկերի հեռավորությունը ցրող ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել  $10$ - ով:
- 3) Ցրող ոսպնյակից ի՞նչ հեռավորություն ունի աղբյուրի պատկերը ոսպնյակների համակարգում: Պատասխանը բազմապատկել  $10$ - ով:

1918. Դիֆրակտային ցանցի միջոցով, նրան ուղղահայաց ընկնող 625 նմ ալիքի երկարությամբ մեներանգ լույսի փնջով լուսավորելիս, կարելի է ստանալ առավելագույնն ութերորդ կարգի մաքսիմում:

- 1) Որքա՞ն է դիֆրակտային ցանցի հաստատունը: Պատասխանը բազմապատկել  $10^6$  – ով:
- 2) Քանի՞ նրբագիծ է պարունակում ցանցը 1 մմ-ի վրա:
- 3) Ի՞նչ աստիճանի անկյան տակ կդիտվի շորբորդ կարգի մաքսիմումն այդ ցանցում:

1919. 14 մկմ պարբերությամբ դիֆրակտային ցանցի վրա՝ նրան ուղղահայաց ընկնում է մեներանգ լուսային ալիք: Ցանցից 2 մ հեռավորությամբ էկրանին առաջացած սպեկտրի երկրորդ և երրորդ կարգի մաքսիմումների հեռավորությունը 8,7 սմ է: Փոքր անկյունների համար ընդունել՝  $\sin \alpha = tg \alpha$ :

- 1) Որքա՞ն է լույսի ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկել  $10^9$ - ով:
- 2) Որքա՞ն է գլխավոր և առաջին կարգի մաքսիմումների հեռավորությունն էկրանի վրա: Պատասխանը բազմապատկել  $10^3$ - ով:
- 3) Որքա՞ն է ութերորդ և յոթերորդ կարգի մաքսիմումների հեռավորությունն էկրանի վրա: Պատասխանը բազմապատկել  $10^3$ - ով:

## 12.5. ԶՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ


1920. 18 սմ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակն էկրանին տալիս է առարկայի  $\Gamma_1 = 9$  խոշորացմամբ պատկերը: Մեկ այլ հավաքող բարակ ոսպնյակ առարկայի և էկրանի նույն հեռավորության դեպքում տալիս է այդ առարկայի  $\Gamma_2 = 3$  խոշորացմամբ պատկերը:

- 1) Որքա՞ն է առարկայի և էկրանի հեռավորությունը:
- 2) Որքան է պատկերի հեռավորությունը երկրորդ ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:
- 3) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը երկրորդ ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10- ով:
- 4) Որքա՞ն է երկրորդ ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:

1921. Հավաքող բարակ ոսպնյակի օգնությամբ էկրանի վրա սկզբում ստանում են մոմի բոցի խոշորացված պատկերը, այնուհետև՝ փոքրացված: Խոշորացված պատկերի բարձրությունը 12 մմ է, փոքրացվածինը՝ 3 մմ: Երկու դեպքում էլ էկրանի և բոցի միջև հեռավորությունը նույն է:

- 1) Որքա՞ն է բոցի բարձրությունը: Պատասխանը բազմապատկել  $10^3$ -ով:
- 2) Որքա՞ն է բոցի հեռավորությունը ոսպնյակից առաջին դեպքում: Ոսպնյակի կիզակետային հեռավորությունը 12 սմ է: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 3) Որքա՞ն է բոցի հեռավորությունը ոսպնյակից երկրորդ դեպքում: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 4) Որքա՞ն է բոցի և էկրանի հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:


1922.  $l = 8$  սմ երկարությամբ  $AB$  ձողը տեղադրված է  $F = 12$  սմ կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակի զոլի խավոր օպտիկական առանցքի երկայնքով (նկ. 69): Չողի կենտրոնը հեռու է ոսպնյակից  $a = 20$  սմ:



Նկ. 69

- 1) Որքա՞ն է ձողի Բ ծայրակետի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:
  - 2) Որքա՞ն է ձողի Ա ծայրակետի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով: (48)
  - 3) Որքա՞ն է ձողի պատկերի երկարությունը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:
  - 4) Չողի պատկերի երկարությունը քանի՞ անգամ է մեծ ձողի երկարությունից:
- 1923.** Առարկան և ցրող բարակ ոսպնյակում նրա պատկերը համաչափ են դասավորված ոսպնյակի կիզակետային հեռավորության մոդուլը: Առարկայի հեռավորությունը կիզակետից  $0,05$  մ է:
- 1) Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորության մոդուլը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
  - 2) Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:
  - 3) Որքա՞ն է առարկայի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել  $10^2$ - ով:
  - 4) Որքա՞ն է առարկայի բարձրությունը, եթե պատկերի բարձրությունը  $0,07$  մ է: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

- 1924.** 20 սմ կիզակետային հեռավորություն ունեցող հավաքող բարակ ոսպնյակը չճգվող թելով կախված է Ա կետից (նկ. 70) այնպես, որ Ա կետից մինչև ոսպնյակի կենտրոն եղած հեռավորությունը  $0,45$  մ է: Ոսպնյակը շեղելով՝ թելը բերում են հորիզոնական դիրքի և բաց քողօնում: Շարժման ընթացքում ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքը միշտ ուղղված է թելի երկայնքով: Օդի դիմադրությունն ու շփումն անտեսել:



Նկ. 70

- 1) Որքա՞ն է ոսպնյակի արագությունը հավասարակշռության դիրքով անցնելիս:
- 2) Որքա՞ն է Ա կետի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
- 3) Որքա՞ն է Ա կետի պատկերի արագությունը ոսպնյակը հավասարակշռության դիրքով անցնելու պահին: Պատասխանը բազմապատկել  $10$ -ով:
- 4) Որքա՞ն է Ա կետի պատկերի արագացումը ոսպնյակը հավասարակշռության դիրքով անցնելու պահին:

1925. 50 գ զանգվածով գնդիկը 5 մ/վ արագությամբ հորիզոնական ուղղությամբ շարժվում է 40 սմ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակի գլխավոր օպտիկական առանցքի երկայնքով։ Ոսպնյակն ուղղաձիգ դիրքով տեղադրված է պատվանդանի վրա, որը գտնվում է ողորկ հորիզոնական հարթության վրա։ Ոսպնյակը պատվանդանի հետ միասին ունի 200 գ զանգված։ Գնդիկը բացարձակ առաձգական բախումով անդրադառնում է ոսպնյակից։
- 1) Որքա՞ն ժամանակ գոյություն կունենա գնդիկի կեղծ պատկերը ոսպնյակում մինչև ոսպնյակի հետ բախվելը։ Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով։
  - 2) Որքա՞ն է գնդիկի արագությունը, ոսպնյակի հետ բացարձակ առաձգական բախումից հետո։
  - 3) Որքա՞ն է ոսպնյակի արագությունը գնդիկի հետ բացարձակ առաձգական բախումից հետո։
  - 4) Որքա՞ն ժամանակ գոյություն կունենա գնդիկի կեղծ պատկերը ոսպնյակում ոսպնյակի հետ բախվելուց հետո։ Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով։
1926. Էկրանը տեղադրված է 80 սմ կիզակետային հեռավորությամբ ոսպնյակի կիզակետային հարթության մեջ։ Ոսպնյակի մյուս կիզակետից լույսի կետային աղբյուրը, շարժվելով գլխավոր օպտիկական առանցքի երկայնքով, սկսում է հեռանալ  $0,2 \text{ m}^2/\text{վ}$  արագացմամբ։ Շարժումն սկսելուց որոշ ժամանակ անց էկրանի վրա լուսավոր շրջանի տրամագիծը փոքրացավ 9 անգամ։
- 1) Որքա՞ն է այդ պահին լույսի աղբյուրի պատկերի հեռավորությունը ոսպնյակից։ Պատասխանը բազմապատկել  $10$ -ով։
  - 2) Որքա՞ն է այդ պահին կետի հեռավորությունը ոսպնյակից։ Պատասխանը բազմապատկել  $10$ -ով։
  - 3) Որքա՞ն է լույսի աղբյուրի անցած ճանապարհն այդ պահին։ Պատասխանը բազմապատկել  $10$ -ով։
  - 4) Որքա՞ն ժամանակում լուսավոր շրջանի տրամագիծը փոքրացավ 9 անգամ։

## 13. ՔՎԱՆՏԱՅՑԻՆ ՖԻԶԻԿԱ

### 13.1. ԾԻԾՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1927. Ո՞ր մեծությանն է ուղիղ համեմատական ֆուսոնի էներգիան:

- 1) Ֆուսոնի արագության քառակուսուն:
- 2) Ֆուսոնի արագությանը:
- 3) Հաճախությանը:
- 4) Ալիքի երկարությանը:

1928. Ո՞ր ճառագայթման ֆուսոնի էներգիան է ավելի մեծ:

- 1) Տեսանելի լույսի:
- 2) Անդրմանուշակագույն ճառագայթման:
- 3) Ենթակարմիր ճառագայթման:
- 4) Ունտգենյան ճառագայթման:

1929. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

λ ալիքի երկարությամբ էլեկտրամագնիսական ալիքի ֆուսոնի էներգիան համեմատական է...

- 1)  $\frac{1}{\lambda^2}$ :
- 2)  $\lambda^2$ :
- 3)  $\lambda$ :
- 4)  $\frac{1}{\lambda}$ :

1930. Եթե էլեկտրամագնիսական ալիքի հաճախությունը փոքրանա երկու անգամ, ապա ինչպե՞ս կփոխվի ճառագայթման ֆուսոնի էներգիան:

- 1) Կմեծանա 2 անգամ:
- 2) Կփոքրանա 2 անգամ:
- 3) Կմեծանա 4 անգամ:
- 4) Կփոքրանա 4 անգամ:

1931. Ո՞րն է λ ալիքի երկարությամբ ֆուսոնի իմպուլսի ճիշտ բանաձևը:

- 1)  $h\lambda$ :
- 2)  $\frac{h}{\lambda}$ :
- 3)  $\frac{hc}{\lambda^2}$ :
- 4)  $\frac{hc}{\lambda}$ :

1932. Համեմատեք կարմիր և մանուշակագույն լույսի ֆուսոնների իմպուլսները:

- 1) Կարմիր լույսի ֆուսոնի իմպուլսն ավելի մեծ է:
- 2) Մանուշակագույն լույսի ֆուսոնի իմպուլսն ավելի մեծ է:

- 3) Երկու դեպքում էլ ֆոտոնն ունի միևնույն իմաստը:  
 4) Ֆոտոնն իմաստը չունի:

1933. Հայելային մակերևույթին ուղղահայաց ընկնող լույսը լրիվ անդրադառնում է: Որքա՞ն է այդ մակերևույթին մեկ ֆոտոնի հաղորդած իմաստը:

- 1)  $\frac{h\nu}{2c}$ :                    3)  $\frac{2h\nu}{c}$ :  
 2)  $\frac{h\nu}{c}$ :                    4)  $\frac{c}{\lambda\nu}$ :

1934. Հանգստի վիճակում գտնվող  $m$  զանգվածով ատոմը ճառագայթում է և հաճախության ֆոտոն: Որքա՞ն է այդ դեպքում ատոմի ձեռք բերած իմաստը:

- 1) 0 :                    3)  $\frac{h\nu}{c}$ :  
 2)  $mc$  :                    4)  $\frac{h\nu}{mc}$  :

1935. Երկու ֆոտոնների իմաստների հարաբերությունը՝  $p_1 / p_2 = 2$ : Որքա՞ն է համապատասխան ալիքի երկարությունների  $\lambda_1 / \lambda_2$  հարաբերությունը:

- 1)  $\frac{1}{4}$ :                    3) 2 :  
 2)  $\frac{1}{2}$ :                    4) 4 :

1936. Ապակե թիթեղով անցնելիս լույսի փնջի ուժգնությունը փոքրանում է: Ի՞նչ է տեղի ունենում այդ դեպքում:

- 1) Փնջում յուրաքանչյուր ֆոտոնի էներգիան փոքրանում է:  
 2) Լույսի հաճախությունը փոքրանում է:  
 3) Ֆոտոնների թիվը փոքրանում է:  
 4) Ֆոտոնների թիվը և յուրաքանչյուր ֆոտոնի էներգիան փոքրանում է:

1937. Լազերային ճառագայթման միջին հզորությունը  $P$  է, իսկ ալիքի երկարությունը՝  $\lambda$ : Որքա՞ն է յուրաքանչյուր վայրկյանում ճառագայթված ֆոտոնների միջին թիվը:

$$1) \frac{P}{\lambda}:$$

$$3) \frac{Pc}{\lambda}:$$

$$2) \frac{P\lambda}{c}:$$

$$4) \frac{P\lambda}{hc}:$$

1938. Ո՞ր երևոյթն է կոչվում ֆոտոէֆեկտ:

- 1) Լույսի ազդեցությամբ նյութից էլեկտրոններ պոկվելու երևոյթը:
- 2) Լույսի ազդեցությամբ ընթացող քիմիական ռեակցիան:
- 3) Ատոմի կողմից ֆոտոնի առաքման երևոյթը:
- 4) Ատոմի կողմից ֆոտոնի կլանման երևոյթը:

1939. Մեկուսացված էլեկտրաչեղոք ցինկե թիթեղը լուսավորում են անդրմանուշակագույն ճառագայթումով: Ի՞նչ նշանի լիցք է ձեռք բերում թիթեղը:

- 1) Դրական:
- 2) Բացասական:
- 3) Չի լիցքավորվում:
- 4) Կամայական նշանի լիցք:

1940. Ո՞րն է նախադասության միշտ շարունակությունը:

Լույսի ազդեցությամբ մետաղից 1 վ-ում պոկված էլեկտրոնների թիվը...

- 1) ուղիղ համեմատական է լույսի ուժգնությանը:
- 2) կախված չէ լույսի ուժգնությունից:
- 3) հակադարձ համեմատական է լույսի ուժգնությանը:
- 4) կախված է միայն լույսի հաճախությունից:

1941. ν հաճախության լույսով մետաղը լուսավորելիս նրանից պոկված էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան  $E$  է: Որքա՞ն է մետաղի ելքի աշխատանքը:

- 1)  $E - h\nu$ :
- 2)  $E + h\nu$ :
- 3)  $h\nu - E$ :
- 4)  $h\nu$ :

1942. Ֆոտոէֆեկտի ժամանակ ընկնող լույսի հաճախությունը մեծացնելիս ֆոտոէլեկտրոնների առավելագույն արագությունը մեծանում է երեք անգամ: Ինչպե՞ս կփոխվի այդ դեպքում կասեցնող լարումը:

- 1) Կմեծանալ 3 անգամ:
- 2) Կմեծանալ 9 անգամ:
- 3) Կփոքրանալ 3 անգամ:
- 4) Կփոքրանալ 9 անգամ:

1943. Ո՞րն է նախադասության միշտ շարունակությունը:


Լույսի ազդեցությամբ մետաղից պոկված էլեկտրոնի կինետիկ էներգիան ...

- 1) կախված չէ ընկնող լույսի հաճախությունից:
- 2) կախված է ընկնող լույսի հաճախությունից գծային օրենքով:


- 3) կախված է ընկնող լույսի ալիքի երկարությունից գծային օրենքով:
  - 4) կախված չէ մետաղի ելքի աշխատանքից:

1944. Սետաղը հերթականությամբ լուսավորում են միևնույն հաճախությամբ լազերային երկու ճառագայթումներով, որոնց ուժգնության կախումը ժամանակից պատկերված է նկարում։ Երկու դեպքում էլ դիտվում է ֆուտք. Ֆեկա: Ո՞ր դեպքում ֆուտք-էլեկտրոնների արագությունն ավելի մեծ կլինի:

- 1) ա դեպքում:
  - 2) թ դեպքում:
  - 3) Երկու դեպքում էլ նույնն է:
  - 4) Պատասխանը կախված է եթի աշխատանքի մեծությունից:



1945. Ո՞ր գրաֆիկն է արտահայտում լույսի ազդեցությամբ մետաղից պոկված էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիայի կախումը ընկնող լույսի փոտոնի էներգիայից:



- |       |       |
|-------|-------|
| 1) w: | 3) q: |
| 2) p: | 4) η: |

1946. Ի՞նչի՞ց կախված չէ ֆոտոլիքեկտի ժամանակ մետաղից պոկված կեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան:

- 1) Ընկնող լրւյսի հաճախությունից:
  - 2) Ընկնող լրւյսի ուժգնությունից:
  - 3) Էլեկտրոնների ելքի աշխատանքից:
  - 4) Ընկնող լրւյսի ալիքի երկարությունից:

1947. Սետաղը լուսավորում են  $\lambda = \lambda_0 / 2$  ալիքի երկարությամբ լույսով, որտեղ  $\lambda_0$ -ն ֆոտոէֆեկտի կարմիր սահմանն է: Որքա՞ն է ֆոտոէկտի առավելագույն կինետիկ էներգիան:

- 1) 0 :                    3)  $\frac{hc}{\lambda_0}$  :
- 2)  $\frac{hc}{2\lambda_0}$  :            4)  $\frac{2hc}{\lambda_0}$  :


1948. Ո՞ր մեծություններից է կախված ֆոտոէլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան:  $I$ -ն ընկնող լույսի ուժգնությունն է,  $\nu$ -ն՝ ընկնող լույսի հաճախականությունը,  $A$ -ն՝ մետաղի ելքի աշխատանքը:

- 1) Սիայն  $I$ -ից:                    3)  $\nu$ -ից և  $A$ -ից:
- 2) Սիայն  $\nu$ -ից:                    4)  $I$ -ից,  $\nu$ -ից և  $A$ -ից:

1949.  $\nu$  հաճախության ի՞նչ արժեքների դեպքում է  $A$  ելքի աշխատանք ունեցող մետաղում դիտվում ֆոտոէլեկտի երևոյթը:

- 1)  $\nu < \frac{A}{h}$  դեպքում:            3) Սիայն  $\nu = \frac{h}{A}$  դեպքում:
- 2)  $\nu \geq \frac{A}{h}$  դեպքում:            4)  $\nu$ -ի կամայական արժեքի դեպքում:


1950. Նկարում պատկերված է ֆոտոէլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիայի կախումն ընկնող լույսի հաճախությունից՝ երկու տարրեր մետաղների համար: Ո՞րն ունի ավելի մեծ ելքի աշխատանք:



- 1) I մետաղը:  
2) II մետաղը:  
3) Ելքի աշխատանքները հավասար են:  
4) Պատասխանը կախված է լույսի հաճախությունից:


1951. Նկարում պատկերված է ֆոտոհոսանքի վոլտամպերային բնութագիծը: Ո՞ր կետն է համապատասխանում այն հոսանքին, որի դեպքում կաթոլից պոկված էլեկտրոնների միայն մի մասն է հասնում անողին:

- 1) a:                    3) c:  
2) b:                    4) d:



1952. Նկարում պատկերված են  $I$  ֆունկիոնանքի ուժի  $U$  լարումից կախումն արտահայտող գրաֆիկներ՝ ընկող լույսի տարրեր հաճախությունների համար: Ո՞ր գրաֆիկն է հաճապատասխանում ֆունկելեկտրոնների ամենամեծ կիմետրի էներգիային:


- 1) ա:                   3) զ:
- 2) բ:                   3) դ:



1953. Նկարում պատկերված է լարումից ֆունկիոնանքի ուժի կախման գրաֆիկը: Փոխվո՞ւմ են արդյոք  $U_0$ ,

$I_0$  և  $I_m$  մեծությունները լույսի ուժգնությունը փոխելիս:


- 1) Փոխվում են  $U_0$ -ն և  $I_0$ -ն:
- 2) Փոխվում են  $I_0$ -ն և  $I_m$ -ը:
- 3) Փոխվում են  $U_0$ -ն և  $I_m$ -ը:
- 4) Փոխվում է միայն  $I_m$ -ը:



1954. Նկարում պատկերված է ֆունկիոնանքի ուժ՝ կիրառված լարումից կախումն արտահայտող գրաֆիկը:

Ի՞նչ տեղի կունենա, եթե լույսի նույն ուժգնության դեպքում սկսնը փոքրացնել լույսի հաճախությունը:

- 1) Գրաֆիկի՝ կասեցնող լարմանը համապատասխանող մասը կտեղափոխվի դեպի աջ:
- 2) Գրաֆիկի՝ կասեցնող լարմանը համապատասխանող մասը կտեղափոխվիս դեպի ձախ:
- 3) Գրաֆիկի՝ հոսանքի հագեցումը ցույց տվող մասը կտեղափոխվի դեպի վերև:
- 4) Գրաֆիկի՝ հոսանքի հագեցումը ցույց տվող մասը կտեղափոխվի դեպի ներքև:



1955. Լույսի ազդեցությամբ մետաղից պոկվում են էլեկտրոններ: Ի՞նչ տեղի կունենա, եթե ընկնող լույսի ուժգնությունը նետացնենք 2 անգամ:

- 1) Սիավոր ժամանակում մետաղից պոկված էլեկտրոնների թիվը կմե-

ծանա 2 անգամ:

- 2) Սիավոր ժամանակում մետաղից պոկված էլեկտրոնների թիվը չի փոխվի:
- 3) Էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան կմեծանա 2 անգամ:
- 4) Էլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան կմեծանա 4 անգամ:

**1956.** Ինչպե՞ս է փոխվում ֆուսուէլեկտրոնների կինետիկ էներգիան լույսի ուժգնությունը մեծացնելիս:

- |                |                          |
|----------------|--------------------------|
| 1) Չի փոխվում: | 3) Կմեծանա կամ կփոքրանա: |
| 2) Մեծանում է: | 4) Փոքրանում է:          |

**1957.** Ո՞ր օրենքն է արտահայտում Այնշտայնի բանաձևը ֆուսուէֆեկտի համար:


- |                         |                         |
|-------------------------|-------------------------|
| 1) Իմպուլսի պահպանման:  | 3) Լիցքի պահպանման:     |
| 2) Էներգիայի պահպանման: | 4) Լույսի անդրադարձման: |

**1958.** ν հաճախությամբ լույսի ազդեցությամբ մետաղից պոկված էլեկտրոնի կինետիկ էներգիան հավասար է ֆուսոնի էներգիայի կեսին: Որքա՞ն է ֆուսուէֆեկտի կարմիր սահմանն այդ մետաղի համար:

- |               |             |
|---------------|-------------|
| 1) $0,5\nu$ : | 2) $2\nu$ : |
| 2) $\nu$ :    | 3) $3\nu$ : |

**1959.** Ֆուսուանքի կասեցնող լարման կախումը ընկնող լույսի հաճախությունից տրված է գրաֆիկով: Ո՞ր արտահայտությունն է ճիշտ Պլանկի հաստատությի համար ( $e$ -ն էլեկտրոնի լիցքի մոդուլն է):

- 1)  $\operatorname{tg} \alpha = h :$
- 2)  $\operatorname{tg} \alpha = \frac{h}{e} :$
- 3)  $\operatorname{tg} \alpha = \frac{e}{h} :$
- 4) Այդ գրաֆիկով հնարավոր չէ որոշել պլանկի հաստատունը:



**1960.** Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

**Համաձայն Թոմսոնի մոդելի՝ ասումը ...**

- 1) կազմված է դրական լիցքավորված միջուկից, որի շուրջը պտտվում են էլեկտրոններ:
- 2) գունդ է, որի ներսում կան պրոտոններ և էլեկտրոններ:

- 3) Էլեկտրաչեղոք գունդ է, որի ներսում կան էլեկտրոններ:  
 4) Պրական լիցքավորված գունդ է, որի ներսում կան էլեկտրոններ:


**1961. Ի՞նչ նաևնիկներով էր ռմբակոծվում ատոմը Ունկերֆորդի փորձերում:**

- 1) Էլեկտրոններով:                   3) Նեյտրոններով:  
 2) Պրոտոններով:                   4)  $\alpha$ -մասնիկներով:

**1962. Նկարում պատկերված  $\alpha$ -մասնիկը**

**շարժվում է դեպի ատոմի միջուկը:**


**Ո՞ր հետազծով կշարժվի  $\alpha$ -մասնիկը  
միջուկից ցրվելուց հետո:**



- 1) A:   3) C:  
 2) B:   4) D:

**1963. Ո՞ր նկարն է առավել համապատասխանում ջրածնի ատոմի նոդելին:**

- 1) w:  
 2) p:  
 3) q:  
 4) η:



**1964. Ո՞րն է նախադասության միշտ շարունակությունը:**

**Համաձայն Ունկերֆորդի մոդելի՝ ատոմի միջուկում կենտրոնացված են...**

- 1) ատոմի գրեթե ամբողջ զանգվածը և ամբողջ դրական լիցքը:  
 2) ատոմի ամբողջ զանգվածը և բացասական լիցքը:  
 3) ատոմի զանգվածի շնչին մասը և ամբողջ դրական լիցքը:  
 4) ատոմի զանգվածի շնչին մասը և ամբողջ բացասական լիցքը:

**1965. Ո՞րն է նախադասության միշտ շարունակությունը:**

**Ատոմը կլանում է...**

- 1) միայն տեսանելի լույսի ֆոտոններ:  
 2) կամայական էներգիայով ֆոտոն:  
 3) միայն որոշակի էներգիայով ֆոտոններ:  
 4) միայն մեկ այլ ատոմի կողմից ճառագայթած ֆոտոն:

**1966. Ո՞րն է նախադասության միշտ շարունակությունը:**

**Ատոմը ճառագայթում է ...**

- 1) գրգռված վիճակից հիմնական վիճակի անցնելիս:  
 2) հիմնական վիճակից գրգռված վիճակի անցնելիս:  
 3) ուղեծրով էլեկտրոնի հավասարաչափ շարժման ժամանակ:  
 4) ուղեծրով էլեկտրոնի արագացող շարժման ժամանակ:

1967. Որքա՞ն է ատոմի կլանած ֆուտոնի էներգիան, եթե էլեկտրոնը հիմնական  $E_1$  վիճակից անցնում է  $E_2$  գրգռված վիճակի:

- |            |                  |
|------------|------------------|
| 1) $E_1$ : | 3) $E_2 - E_1$ : |
| 2) $E_2$ : | 4) $E_1 - E_2$ : |

1968. Տարբեր հաճախությամբ քանի՞ ֆուտոն կարող է առաքել 4-րդ ստացիոնար էներգիական մակարդակում գտնվող ատոմը, եթե բոլոր անցումները հնարավոր են:


- |       |       |
|-------|-------|
| 1) 3: | 3) 5: |
| 2) 4: | 4) 6: |

$$\begin{array}{l} E_4 \\ E_3 \\ E_2 \end{array}$$

$$E_1$$

1969. Նկարում պատկերված է ատոմի էներգիական մակարդակների դիագրամը: Ո՞ր անցման դեպքում է ատոմի ճառագայթած ֆուտոնի ալիքի երկարությունն առավելագույնը:

- |                            |                            |
|----------------------------|----------------------------|
| 1) $E_2 \rightarrow E_3$ : | 3) $E_1 \rightarrow E_3$ : |
| 2) $E_4 \rightarrow E_3$ : | 4) $E_4 \rightarrow E_1$ : |



1970. Ատոմը  $E_3$  էներգիական մակարդակից  $E_1$  մակարդակն անցնելիս ճառագայթում է  $\nu_1$  հաճախության ֆուտոն, իսկ  $E_2$ -ից  $E_1$  մակարդակն անցնելիս՝  $\nu_2$  հաճախությամբ ֆուտոն: Ի՞նչ հաճախության ֆուտոն կճառագայթի ատոմը  $E_3$  մակարդակից  $E_2$  մակարդակն անցնելիս:

- |                      |                                |
|----------------------|--------------------------------|
| 1) $\nu_1 + \nu_2$ : | 3) $\frac{\nu_1 + \nu_2}{2}$ : |
| 2) $\nu_1 - \nu_2$ : | 4) $\frac{\nu_1 - \nu_2}{2}$ : |

1971. Զրածնի ատոմի հիմնական և առաջին գրգռված վիճակների էներգիաներու տարբերվում են 4 անգամ, իսկ հիմնական և երկրորդ գրգռված վիճակներինը՝ 9 անգամ: Որքա՞ն է հիմնական վիճակից առաջին գրգռված վիճակն անցնելիս և հիմնական վիճակից երկրորդ գրգռված վիճակն անցնելիս կլանված ֆուտոնների հաճախությունների:

- |                    |                      |
|--------------------|----------------------|
| 1) $\frac{4}{9}$ : | 3) $\frac{27}{32}$ : |
|--------------------|----------------------|

2)  $\frac{4}{5}:$

4)  $\frac{5}{27}:$

1972. Ի՞նչ նշանի լիցք ունի ատոմի միջուկը:

- 1) Դրական:  
2) Բացասական:

3) Էլեկտրաչեղոք է:

4) Կունենա տարբեր նշանի լիցքեր:

1973. Ի՞նչ ուժերով է պայմանավորված միջուկների կայունությունը:

- 1) Թույլ փոխազդեցության ուժերով:  
2) Ուժեղ փոխազդեցության ուժերով:  
3) Էլեկտրական ուժերով:  
4) Մագնիսական ուժերով:

1974. Որքա՞ն է պրոտոնների  $Z$  և նեյտրոնների  $N$  քիվը ազոտի  $^{14}_7N$  միջուկում:

- 1)  $Z = 6, N = 14:$   
2)  $Z = 6, N = 8:$

3)  $Z = 7, N = 7:$

4)  $Z = 14, N = 6:$

1975. Պղնձի ատոմի միջուկը պարունակում է 29 պրոտոն և 35 նեյտրոն:

Քանի՞ էլեկտրոն է պարունակում պղնձի  $Cu^{+2}$  իոնը:

- 1) 35:  
2) 31:

3) 27:

4) 29:

1976. Քանի՞ էլեկտրոն է պարունակում ալյումինում  $^{27}_{13}Al$  չեղոք ատոմը:

- 1) 27:  
2) 13:

3) 40:

4) 0:

1977. Ի՞նչ միջուկ կունենանք, եթե հելիումի  $^3_2He$  իզոտոպի միջուկում բռնոր պրոտոնները փոխարինվեն նեյտրոններով, իսկ նեյտրոնները՝ պրոտոններով:


- 1)  $^2_3He:$   
2)  $^3_1H:$

3)  $^2_1He:$


4)  $^4_2He:$

1978. Նկարում սխեմատիկորեն պատկերված են որոշ միջուկներ: Դրանցից որո՞նք են միևնույն տարրի իզոտոպներ:


- 1) ա-ն և բ-ն:  
2) ա-ն և զ-ն:  
3) բ-ն և զ-ն:



w



p



q

4) Սինույն տարրի իզոտոպներ չկան:

**1979. Ո՞րն է նախադասության ճշշտ շարունակությունը:**

**Սինույն տարրի իզոտոպներն ունեն...**

- 1) հավասար թվով նեյտրոններ:
- 2) հավասար թվով պրոտոններ:
- 3) հավասար թվով նուկլոններ:
- 4) հավասար զանգվածի թվեր:

**1980. Ի՞նչ ուժեր են գործում ատոմի միջուկում պրոտոնների միջև:**

- 1) Սիայն էլեկտրամագնիսական:
- 2) Սիայն միջուկային:
- 3) Սիայն գրավիտացիոն և միջուկային:
- 4) Գրավիտացիոն, էլեկտրամագնիսական և միջուկային:

**1981. Ատոմի միջուկի ո՞ր մասնիկների միջև են գործում միջուկային ուժերը.**

**ա. պրոտոն – պրոտոն,**

**բ. պրոտոն – նեյտրոն,**

**գ. նեյտրոն – նեյտրոն:**

- |                     |                     |
|---------------------|---------------------|
| 1) Սիայն ա դեպքում: | 3) Սիայն գ դեպքում: |
| 2) Սիայն բ դեպքում: | 4) Բոլոր դեպքերում: |

**1982. Ինչի՞ շնորհիվ ատոմի միջուկը չի տրոհվում առանձին նուկլոնների:**

- 1) Նուկլոնների միջև գործող գրավիտացիոն ուժերի շնորհիվ:
- 2) Նուկլոնների միջև գործող քույլ փոխազդեցության ուժերի շնորհիվ:
- 3) Նուկլոնների միջև գործող կուլոնյան ուժերի շնորհիվ:
- 4) Նուկլոնների միջև գործող միջուկային ուժերի շնորհիվ:

**1983. Մենդելեևի պարբերական աղյուսակում քիմիական տարրի կարգաբիշությունը ներկայական է հավասար:**

- 1) Սիջուկում նուկլոնների թվին:
- 2) Սիջուկում նեյտրոնների թվին:
- 3) Սիջուկում պրոտոնների թվին:
- 4) Սիջուկում պրոտոնների և նեյտրոնների թվին:

**1984.  $^{30}_{15}P$ ,  $^{40}_{21}Sc$  և  $^{190}_{82}Pb$  միջուկներից ո՞րն է ավելի կայուն:**

- |                            |                                  |
|----------------------------|----------------------------------|
| 1) $^{30}_{15}P$ միջուկը:  | 3) $^{190}_{82}Pb$ միջուկը:      |
| 2) $^{40}_{21}Sc$ միջուկը: | 4) Բոլորն էլ միատեսակ կայուն են: |

**1985. Ստորև նշված միջուկային ռեակցիայում անջատվո՞ւմ է էներգիա, քե՞՝**

կլանվում (մասնիկների նշանների ներքևում նշված են դրանց զանգվածները՝ արտահայտված ՍԷՎ-երով):

$${}_{\frac{14}{7}N} + {}_{\frac{1}{0}n} \rightarrow {}_{\frac{13}{6}C} + {}_{\frac{2}{1}H}$$

13039,97 ՍԷՎ 939,57 ՍԷՎ 12109,58 ՍԷՎ 1875,58 ՍԷՎ

- 1) Անջատվում է:
- 2) Կլանվում է:
- 3) Ոչ անջատվում է, ոչ կլանվում:
- 4) Բերված տվյալները բավարար չեն պատասխանի համար:

**1986.** Ի՞նչ մասնիկ է առաջանում  ${}_{\frac{14}{7}N} + {}_{\frac{4}{2}He} \rightarrow {}_{\frac{17}{8}O} + ?$  միջուկային ռեակցիայի հետևանքով:

- 1) Ելեկտրոն:
- 2) Θրոտոն:
- 3) Նեյտրոն:
- 4)  $\alpha$ -մասնիկ:

**1987.** Ի՞նչ միջուկ է առաջանում  ${}_{\frac{14}{7}N} + {}_{\frac{4}{2}He} \rightarrow ? + {}_{\frac{1}{1}H}$  ռեակցիայի հետևանքով, եթե ազոտի միջուկը ռմբակոծվում է  $\alpha$ -մասնիկով:

- 1)  ${}_{\frac{17}{8}O}$ :
- 2)  ${}_{\frac{16}{8}O}$ :
- 3)  ${}_{\frac{19}{9}F}$ :
- 4)  ${}_{\frac{20}{10}Ne}$ :

**1988.** Ո՞րն է  ${}_{\frac{9}{4}Be} + \gamma \rightarrow X + {}_{\frac{1}{0}n}$  միջուկային ռեակցիայի X անդամը:

- 1)  ${}_{\frac{8}{4}Be}$ :
- 2)  ${}_{\frac{4}{2}He}$ :
- 3)  ${}_{\frac{9}{4}Be}$ :
- 4)  ${}_{\frac{11}{5}B}$ :

**1989.** Ի՞նչ միջուկ է առաջանում  $p + \alpha + \alpha = X$  ռեակցիայի հետևանքով:

- 1)  ${}_{\frac{3}{2}He}$ :
- 2)  ${}_{\frac{9}{5}B}$ :
- 3)  ${}_{\frac{4}{2}He}$ :
- 4)  ${}_{\frac{1}{1}H}$ :

**1990.**  ${}_{\frac{27}{13}Al$  և  ${}_{\frac{12}{6}C}$  միջուկների միացման հետևանքով առաջանում են  $\alpha$ -մասնիկ, նեյտրոն և նոր միջուկ: Որքա՞ն է նեյտրոնների թիվն այդ միջուկում:

- 1) 16:
- 2) 19:
- 3) 17:
- 4) 36:

**1991.** Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Միջուկային ռեակցիան սկզբունքորեն հնարավոր չէ, եթե փոխվում է ...

- 1) պրոտոնների ընդհանուր թիվը:
- 2) ռեակցիայի մեջ մտնող մասնիկների ընդհանուր թիվը:

- 3) ռեակցիայի մեջ մտնող նուկլոնների թիվը:  
 4) նեյտրոնների ընդհանուր թիվը:

**1992.** Քանի՞ նեյտրոն է անջատվում  $^{92}_{42}Mo + ^2H \rightarrow ^{92}_{43}Te + x \cdot ^1n$  ռեակցիայի հետևանքով:

- 1) 0:                    3) 2:  
 2) 1:                    4) 3:

**1993.** Ո՞ր միջուկային ռեակցիայի դեպքում է խախտվում զանգվածային թվի պահպանման օրենքը:

- 1)  $^{90}_{90}Th + ^1_0n \rightarrow ^{229}_{88}Ra + ^4_2He$ :        3)  $^{200}_{81}Tl + ^4_2He \rightarrow ^{112}_{44}Ru + 2^1_0n$ :  
 2)  $^{102}_{40}Zr \rightarrow ^{102}_{41}Nb + ^0_{-1}e$ :        4)  $^{236}_{92}U + ^1_0n \rightarrow ^{97}_{40}Zr + ^{139}_{52}Te + 2^1_0n$ :

**1994.** Ո՞ր միջուկային ռեակցիան հնարավոր չէ, քանի որ խախտվում է լիցրի պահպանման օրենքը:


- 1)  $^{232}_{90}Th + ^1_0n \rightarrow ^{229}_{88}Ra + ^4_2He$ :        3)  $^{102}_{40}Zr \rightarrow ^{102}_{41}Nb + ^0_{+1}e$ :  
 2)  $^{200}_{81}Tl + ^4_2He \rightarrow ^{112}_{44}Ru + ^{92}_{39}Y$ :        4)  $^{236}_{92}U + ^1_0n \rightarrow ^{97}_{40}Zr + ^{137}_{52}Te + 2^1_0n$ :

**1995.**  $\alpha$ -,  $\beta$ - և  $\gamma$ - ճառագայթումներից որո՞նք են շեղվում էլեկտրական և մագնիսական դաշտերում:

- 1)  $\gamma$ - ճառագայթումը:        3)  $\alpha$ - և  $\gamma$ - ճառագայթումները:  
 2)  $\alpha$ - և  $\beta$ - ճառագայթումները:        4)  $\alpha$ ,  $\beta$  և  $\gamma$  ճառագայթումները:

**1996.** Համասեռ մագնիսական դաշտում ճառագայթումը տրոհվում է եթեք մասի՝  $\alpha$ -ճառագայթում,  $\beta$ -ճառագայթում,  $\gamma$ - ճառագայթում: Ո՞րն է  $\alpha$ - ճառագայթումը:

- 1) a-ն:  
 2) b-ն:  
 3) c-ն:  
 4) Հնարավոր է լինի a-ն կամ c-ն:



**1997. Ի՞նչ է  $\alpha$ - ճառագայթումը:**

- 1) Զրածնի միջուկների հոսք:  
 2) Հելիումի միջուկների հոսք:
- 3) Նեյտրոնների հոսք:  
 4) Էլեկտրոնների հոսք:

**1998. Ինչպես է փոխվում ռադիոակտիվ տարրի միջուկի կարգաբիվը, եթե առաջընթացը է երկու  $\alpha$ -մասնիկ:**

- 1) Սեծանում է երկուսով:  
 2) Փոքրանում է երկուսով:
- 3) Չի փոխվում:  
 4) Փոքրանում է չորսով:

1999. Թորիումի  $^{234}_{90}Th$  միջուկը ենթարկվում է երեք  $\alpha$ - տրոհման: Որոշել նեյտրոնների թիվն առաջացած միջուկում:

- 1) 234:                    3) 144:  
2) 228:                    4) 138:

2000. Ի՞նչ միջուկի է փոխակերպվում ուկու  $^{179}_{79}Au$  միջուկը  $\alpha$ - տրոհման հետևանքով:

- 1)  $^{177}_{75}Re$ :                    3)  $^{178}_{79}Au$ :  
2)  $^{175}_{77}Ir$ :                    4)  $^{179}_{80}Hg$ :

2001. Ի՞նչ է  $\beta$  -ճառագայթումը:

- 1) Ջրածնի միջուկների հոսք:            3) Նեյտրոնների հոսք:  
2) Հելիումի միջուկների հոսք:            4) Էլեկտրոնների հոսք:

2002. Ի՞նչ միջուկի է փոխակերպվում  $^{27}_{12}Mg$  -ի միջուկը մեկ  $\beta$  - տրոհման հետևանքով:

- 1)  $^{23}_{10}Ne$ :                    3)  $^{26}_{12}Mg$ :  
2)  $^{27}_{11}Na$ :                    4)  $^{27}_{13}Al$ :

2003. Ինչպես է փոխվում պրոտոնների թիվն ատոմի միջուկում, եթե այն արձակում է երեք  $\beta$  -մասնիկ:

- 1) Սեծանում է երերով:                    3) Սեծանում է վեցով:  
2) Փորրանում է երերով:                    4) Փորրանում է վեցով:

2004. Եթե միջուկը կազմված է 92 պրոտոնից և 144 նեյտրոնից, ապա երկու  $\alpha$  - տրոհումից և մեկ  $\beta$  - տրոհումից առաջացած միջուկը քանի՞ նեյտրոն և քանի՞ պրոտոն կպարունակի:

- 1) 89 պրոտոն և 139 նեյտրոն:            3) 88 պրոտոն և 140 նեյտրոն:  
2) 88 պրոտոն և 138 նեյտրոն:            4) 87 պրոտոն և 139 նեյտրոն:

2005.  $^{238}_{92}U$  միջուկի ռադիոակտիվ տրոհման ընթացքում առարկում են երեք  $\alpha$  և երկու  $\beta$  մասնիկներ: Ի՞նչ միջուկ է առաջանում տրոհման հետևանքով:

- 1)  $^{232}_{90}Th$ :                    3)  $^{224}_{87}Fr$ :  
2)  $^{226}_{88}Ra$ :                    4)  $^{233}_{92}U$ :

**2006.**  $Z^A X$  միջուկում տեղի է ունենում երկու  $\beta$  -տրոհում և առաքվում է երկու  $\gamma$  քվանտ: Ի՞նչ միջուկ է առաջանում:

- 1)  $Z^{A-2} Y$ :      3)  $Z^{A+2} Y$ :  
2)  $Z^{A-4} Y$ :      4)  $Z^{A-2} Y$ :

**2007.** Ո՞ր դեպքում է տեղի ունենում  $\gamma$ -ճառագայթում:

- 1) Երբ ատոմը գրգռված վիճակից անցնում է հիմնական վիճակի:  
2) Երբ միջուկում նեյտրոնը փոխակերպվում է պրոտոնի:  
3) Երբ միջուկում պրոտոնը փոխակերպվում է նեյտրոնի:  
4) Երբ միջուկը գրգռված վիճակից անցնում է հիմնական վիճակի:

**2008.** Ինչպե՞ս է փոխվում ատոմի միջուկում նուկլոնների թիվը, եթե միջուկն առաքում է  $\gamma$  քվանտ:

- 1) Սեծանում է 2-ով:      3) Փոքրանում է 2-ով:  
2) Չի փոխվում:      4) Փոքրանում է 4-ով:

**2009.** Ո՞ր ճառագայթումն ունի առավել ներքափանցման հատկություն:

- 1)  $\alpha$  -ճառագայթումը:  
2)  $\beta$  -ճառագայթումը:  
3)  $\gamma$  -ճառագայթումը:  
4) Ճառագայթման բոլոր տեսակներն ել օժտված են ներքափանցման միատեսակ հատկությամբ:

**2010.** Ուղղնի կիսատրոհման պարբերությունը 3,8 օր է: Որքա՞ն ժամանակում ռադիոհանու զանգվածը կփոքրանա 64 անգամ:

- 1) 3,8 օրում:      3) 22,8 օրում:  
2) 19 օրում:      4) 38 օրում:

**2011.** Ճառագայթաակտիվ տարի կիսատրոհման պարբերությունը 1 րոպե է: Որքա՞ն ժամանակում կտրոհվի այդ նյութի սկզբնական միջուկների 3/4-ը:

- 1) 1 րոպե:      3) 0,75 րոպե:  
2) 2 րոպե:      4) 0,25 րոպե:

**2012.** Ուղիղումի կիսատրոհման պարբերությունը 1600 տարի է: Որքա՞ն ժամանակ անց չտրոհված միջուկների թիվը կկազմի սկզբնական ատոմների թվի 1/8-ը:

- 1) 4800 տարի անց:      3) 1400 տարի անց:  
2) 1600 տարի անց:      4) 200 տարի անց:

**2013.** Ծառագայթաակտիվ իզոտոպի կիսատրոհման պարբերությունը 10 րոպէ է: Այդ իզոտոպի  $10^6$  միջուկներից քանի՞սը կտրոհվեն 20 րոպեում:

- 1)  $10^6$ :                            3)  $7,5 \cdot 10^5$ :  
2)  $5 \cdot 10^5$ :                            4)  $25 \cdot 10^5$ :

**2014.** Ծառագայթաակտիվ տարրերից մեկի կիսատրոհման պարբերությունը  $T$  է, իսկ մյուսինը՝  $2T$ : Ժամանակի սկզբնական պահին այդ տարրերի միջուկների թիվը նույնն է: Որքա՞ն է առաջին տարրի չտրոհված միջուկների հարաբերությունը երկրորդ տարրի չտրոհված միջուկների թիվն  $T$  ժամանակ անց:

- 1) 2:                                    3)  $\frac{\sqrt{2}}{2}$ :  
2)  $\sqrt{2}$ :                                    4)  $\frac{1}{2}$ :

**2015.** Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

**Զերմանիջուկային ռեակցիան...**

- 1) ծանր միջուկների տրոհման ռեակցիան է:  
2) միշտ ընթանում է էներգիայի կլանմամբ:  
3) թեթև միջուկների սինթեզի ռեակցիան է:  
4) ընթանում է միայն արհեստականորեն ստեղծված պայմաններում:

**2016.** Ինչպես է փոխվում դեյտերիումի երկու  ${}_{1}^{2}H$  միջուկների լրիվ էներգիան, եթե դրանք միավորվելով կազմում են հելիումի  ${}_{2}^{4}He$  միջուկ:

- 1) Սեծանում է:  
2) Փոքրանում է:  
3) Չի փոխվում:  
4) Կախված դրանց սկզբնական հեռավորությունից՝ կմեծանա կամ կփոքրանա:

**2017.** Ազոտի  ${}_{7}^{14}N$  իզոտոպը նեյտրոններով ռմբակոծելիս առաջանում է բորի  ${}_{5}^{11}B$  իզոտոպը: Ի՞նչ այլ մասնիկներ են առաջանում այդ ռեակցիայի հետևանքում:

- 1) 2 պրոտոն:                            3) Նեյտրոն:  
2)  $\alpha$ -մասնիկ:                            4) Էլեկտրոն:

**2018.** Հելիումի երկու  ${}_{2}^{4}He$  միջուկների սինթեզի հետևանքում անջատվեց մեկ

**պրոտոն: Ի՞նչ տարրի միջուկ առաջացավ հետևանքում:**

- 1)  ${}^3_3 Li$ :                          3)  ${}^7_4 Be$ :  
2)  ${}^7_3 Li$ :                                  4)  ${}^6_4 Be$ :

**2019. Ինչպես է փոխվում ազատ պրոտոններից և նեյտրոններից կազմված համակարգի ընդհանուր զանգվածը, եթե դրանք, միանալով, կազմում են ատոմի միջուկ:**

- 1) Սեծանում է:                          3) Չի փոխվում:  
2) Փոքրանում է:                          4) Կմեծանա կամ կփոքրանա:

**2020. Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:**

**Ծրայական ռեակցիայի ժամանակ ուրանի միջուկի տրոհման ժամանակ միջուկից անպայման դրւու են քոչում...**

- 1) Նեյտրոններ:                          3)  $\alpha$  -մասնիկներ:  
2) Պրոտոններ:                                  4)  $\beta$  -մասնիկներ:

**2021. Ո՞ր պայմանն է անիրաժեշտ ուրանի միջուկների տրոհման շղթայական ռեակցիա իրականացնելու համար.**

**ա. յուրաքանչյուր տրոհման ժամանակ 2-3 նեյտրոնի անջատում,  
բ. ուրանի բավարար զանգվածի առկայություն,  
գ. բարձր ջերմաստիճան:**

- 1) Սիայն ա-ն:                          3) Սիայն գ-ն:  
2) Սիայն բ-ն:                                  4) ա-ն և բ-ն:

**2022. Ո՞ր եռյակում են բռլոր մասնիկները տարրական:**

- 1) Ատոմ, էլեկտրոն, պրոտոն:  
2) Էլեկտրոն, նեյտրինո, ֆոտոն:  
3) Ատոմ, պրոտոն, նեյտրոն:  
4)  $\alpha$  -մասնիկ, էլեկտրոն, պոզիտրոն:

**2023. Տարրական մասնիկների ո՞ր խմբերին են պատկանում  $\pi^0$  մեզոնը և  $\mu^+$  մյուոնը:**

- 1)  $\pi^0$ -ն հաղբոնների,  $\mu^+$ -ը՝ լեպտոնների:  
2)  $\pi^0$ -ն մեզոնների,  $\mu^+$ -ը հաղբոնների:  
3) Երկուսն էլ մեզոնների:  
4) Երկուսն էլ հաղբոնների:

**2024. Ի՞նչ դասերի են բաժանվում հաղբոնները:**

- 1) Լեպտոնների և մեզոնների:                  3) Ֆոտոնների և բարիոնների:

2) Լեպտոնների և նուկլոնների: 4) Սեղոնների և բարիոնների:

**2025.** Որքա՞ն էներգիա կանցատվի դադարի վիճակում էլեկտրոնի և պոզիտրոնի անինիլացիայի ժամանակ: Էլեկտրոնի զանգվածը  $m_e$  է:

1)  $m_e c$ : 3)  $2m_e c$ :

2)  $m_e c^2$ : 4)  $2m_e c^2$ :

**2026.** Ո՞ր տարրական մասնիկն է ազատ վիճակում անկայուն, այսինքն՝ ինքնակամ փոխարկվում է այլ մասնիկների:

1) Էլեկտրոնը: 3) Նեյտրոնը:

2) Θրոտոնը: 4) Ֆոտոնը:

**2027. Որքա՞ն է նեյտրոնի լիցքը:**

1)  $-1,6 \cdot 10^{-19}$  Ալ:

3)  $1,6 \cdot 10^{-19}$  Ալ:

2)  $1$  Ալ:

4)  $0$ :

**2028. Ո՞ր եռյակի բոլոր մասնիկներն են լեպտոններ:**

1) Նեյտրոն, պրոտոն, էլեկտրոն: 3) Էլեկտրոն, նեյտրինո, մյուոն:

2) Նեյտրոն, ֆոտոն, մյուոն: 4) Նեյտրինո, նեյտրոն, ֆոտոն:

**2029. Ո՞ր մասնիկի հակամասնիկն է պոզիտրոնը:**

1) Էլեկտրոնի: 3) Նեյտրոնի:

2) Θρոտոնի: 4) Նեյտրինոյի:

**2030. Ի՞նչ մասնիկներից է կազմված նեյտրոնը:**

1) Նեյտրոնը տարրական մասնիկ է և կազմված չէ այլ մասնիկներից:

2) Θողիտրոնից և նեյտրինոյից:

3) Θողիտրոնից և էլեկտրոնից:

4) Քվարկներից:

**2031. Ի՞նչ լիցք ունեն քվարկները:**

1) «ս» քվարկը՝  $\frac{2}{3}e$ , «դ» քվարկը՝  $-\frac{1}{3}e$ , «ս» քվարկը՝  $-\frac{1}{3}e$ :

2) «ս» քվարկը՝  $\frac{2}{3}e$ , «դ» քվարկը՝  $-\frac{1}{3}e$ , «ս» քվարկը՝  $\frac{1}{3}e$ :

3) «ս» քվարկը՝  $-\frac{1}{3}e$ , «դ» քվարկը՝  $\frac{2}{3}e$ , «ս» քվարկը՝  $\frac{2}{3}e$ :

4) «ս» քվարկը՝  $\frac{1}{3}e$ , «դ» քվարկը՝  $\frac{2}{3}e$ , «ս» քվարկը՝  $-\frac{1}{3}e$ :

### 13.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

2032. Որքա՞ն է 600 նմ ալիքի երկարությամբ լույսի ֆոտոնի էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{20}$ -ով:
2033.  $10^{-10}$  մ ալիքի երկարությամբ ռենտգենյան ճառագայթման ֆոտոնի էներգիան քանի՞ անգամ է մեծ  $4 \cdot 10^{-7}$  մ ալիքի երկարությամբ տեսանելի լույսի ֆոտոնի էներգիայից:
2034. Որոշել այն միջավայրի բեկման ցուցիչը, որտեղ  $3,3 \cdot 10^{-19}$  Ω էներգիայով ֆոտոնի ալիքի երկարությունը  $3 \cdot 10^{-7}$  մ է:
2035. Որքա՞ն է ֆոտոնի ալիքի երկարությունը, եթե նրա էներգիան հավասար է 5Վ լարմամբ արագացված էլեկտրոնի կինետիկ էներգիային: Պատասխանը բազմապատկել  $10^{10}$ -ով:
2036. Որքա՞ն է ֆոտոնի հաճախությունը, եթե նրա իմպուլսը հավասար է  $1,1 \cdot 10^6$  մ/վ արագությամբ շարժվող էլեկտրոնի իմպուլսին: Էլեկտրոնը համարելով ոչ ռելյատիվիստական: Պատասխանը բազմապատկել  $10^{16}$ -ով:
2037. Որքա՞ն է  $5 \cdot 10^{14}$  Հց հաճախությամբ ֆոտոնի իմպուլսը: Պատասխանը բազմապատկել  $10^{28}$ -ով:
2038. 200 Վտ հզորությամբ մեներանգ լույսի աղբյուրը 1Վ-ում ճառագայթում է  $5 \cdot 10^{20}$  ֆոտոն: Որքա՞ն է ճառագայթման ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկել  $10^9$ -ով:
2039. Որքա՞ն է լամպի հզորությունը, եթե այն 1Վ-ում առաքում է  $6,6 \cdot 10^{-7}$  մ ալիքի երկարությամբ  $10^{20}$  ֆոտոն:
2040. Քանի՞ ֆոտոն է արձակում 1 Վ-ում 100 Վտ հզորությամբ լամպը, եթե նրա ճառագայթած մեներանգ լույսի ալիքի երկարությունը  $6 \cdot 10^{-7}$  մ է, և լույսի տեսքով ճառագայթվում է լամպի հզորության  $3,3\%$ -ը: Պատասխանը բազմապատկել  $10^{-18}$ -ով:
2041. Որքա՞ն է տեսանելի ճառագայթման ամենաերկար  $\lambda = 7,5 \cdot 10^{-7}$  մ ալիքին (կարմիր լույս) համապատասխանող ֆոտոնի էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ -ով:

2042. Մետաղից, որի համար էլեկտրոնի ելքի աշխատանքը  $3,2 \cdot 10^{-19}$  Զ է, ֆոտոնը պոկում է  $3,8 \cdot 10^{-19}$  Զ առավելագույն կինետիկ էներգիայով էլեկտրոն: Որքա՞ն է ֆոտոնի էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ով:
2043. Որքա՞ն է ֆոտոէլեկտրոնների առավելագույն արագությունը, եթե կասեցնող լարումը  $1,8$  Վ է: Պատասխանը բազմապատկել  $10^5$ -ով:
2044. Մետաղի վրա ընկնում է  $7,5 \cdot 10^{-19}$  Զ էներգիայով ֆոտոն: Ֆոտոէֆեկտի շնորհիվ մետաղից պոկված էլեկտրոնի առավելագույն կինետիկ էներգիան  $2,7 \cdot 10^{-19}$  Զ է: Ի՞նչ էներգիայով ֆոտոն պետք է ընկնի մետաղի վրա, որպեսզի պոկված էլեկտրոնի առավելագույն կինետիկ էներգիան լինի  $3,2 \cdot 10^{-19}$  Զ: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ով:
2045. Ի՞նչ հաճախությամբ լույս պետք է ընկնի մետաղի մակերևույթին, որպեսզի ֆոտոէլեկտրոնների առավելագույն արագությունը լինի  $3 \cdot 10^6$  մ/վ: Այդ մետաղի ելքի աշխատանքը  $4,38 \cdot 10^{-19}$  Զ է: Պատասխանը բազմապատկել  $10^{14}$ -ով:
2046.  $10^{15}$  Հց հաճախությամբ լույսի ազդեցությամբ մետաղից պոկված էլեկտրոնին լրիվ կասեցնող լարումը  $2$  Վ է: Որքա՞ն է մետաղի ելքի աշխատանքը: Պատասխանը բազմապատկել  $10^{20}$ -ով:
2047. Ի՞նչ առավելագույն կինետիկ էներգիա են ունենում լիթիումից պոկված էլեկտրոնները՝  $10^{15}$  Հց հաճախությամբ լույսով ճառագայթելիս: Լիթիումի համար էլեկտրոնի ելքի աշխատանքը  $3,84 \cdot 10^{-19}$  Զ է: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ -ով:
2048. Ցեղլումի մակերևույթից ֆոտոէֆեկտ առաջացնող ֆոտոնների էներգիան մեծացավ  $32 \cdot 10^{-20}$  Զ-ով: Այդ դեպքում որքանո՞վ մեծացավ ֆոտոէլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{20}$ -ով:
2049. Որքա՞ն է ցինկի համար ֆոտոէֆեկտի կարմիր սահմանը ( $\lambda_{\max}$ ), եթե նրանից պոկված ֆոտոէլեկտրոններն արգելակող լարումը  $1,5$  Վ է, իսկ ճառագայթման ալիքի երկարությունը  $275$  նմ: Պատասխանը բազմապատկել  $10^{10}$ -ով:

2050. Ցեզիումի կարողը լուսավորում են մեներանգ ճառագայթմամբ: Որքա՞ն է կասեցնող լարման արժեքը, եթե ցեզիումի ելքի աշխատանքը  $1,8 \text{ ԷՎ}$  է, իսկ ճառագայթման ալիքի երկարությունը՝  $450 \text{ նմ}:$   $1\text{ԷՎ} = 1,6 \cdot 10^{-19} \Omega$ : Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
2051. Ի՞նչ ուժով է  ${}_1^1H$  ջրածնի ատոմում միջուկն ազդրում էլեկտրոնի վրա, եթե նրա պտտման շառավիղը  $0,5 \cdot 10^{-10} \text{ մ}$  է: Պատասխանը բազմապատկել  $10^{11}$ -ով:
2052. Հելիումի  $({}_2^4He)$  ատոմում էլեկտրոնային ուղեծրի շառավիղը  $10^{-10} \text{ մ}$  է: Որքա՞ն է էլեկտրոնի շարժման կենտրոնաձիգ արագացումը այդ ուղեծրի վրա: Պատասխանը բազմապատկել  $10^{-20}$ -ով:
2053. Ջրածնի  $({}_1^1H)$  ատոմում էլեկտրոնային ուղեծրի շառավիղը հավասար է  $1,2 \cdot 10^{-10} \text{ մ}$ -ի: Որքա՞ն է միջուկի ստեղծած էլեկտրական դաշտի լարվածությունն այդ ուղեծրում: Պատասխանը բազմապետկել  $10^{-11}$ -ով:
2054. Ինչ-որ հեռավորության վրա գտնվող երկու ալֆա մասնիկների էլեկտրական փոխազդեցության ուժը քանի՞ անգամ է մեծ նույն հեռավորության վրա երկու էլեկտրոնների փոխազդեցության ուժից:
2055. Ֆոտոնն ճառագայթելիս ատոմի էներգիան փոքրացավ  $2,25 \text{ ԷՎ}$ -ով: Որքա՞ն է ճառագայթված լույսի ալիքի երկարությունը:  $1 \text{ ԷՎ} = 1,6 \cdot 10^{-19} \Omega$ : Պատասխանը բազմապատկել  $10^8$ -ով:
2056. Ատոմը, մի ստացիոնար վիճակից մյուսին անցնելիս, ճառագայթեց  $4 \cdot 10^{-19} \Omega$  էներգիայով ֆոտոն: Որքա՞ն է ճառագայթման ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկել  $10^9$ -ով:
2057. Հիմնական վիճակում գտնվող ջրածնի ատոմն իոնացնելու համար անհրաժեշտ է նրան հաղորդել  $13,6 \text{ ԷՎ}$  էներգիա: Քանի ջոռու էներգիա է անհրաժեշտ հաղորդել առաջին գրգռված վիճակում գտնվող ատոմն իոնացնելու համար, եթե այդ վիճակի գրգռման էներգիան  $10,2 \text{ ԷՎ}$  է:  $1 \text{ ԷՎ} = 1,6 \cdot 10^{-19} \Omega$ : Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ -ով:

2058. Սնդիկի գոլորշու ատոմներն էլեկտրոններով ռմբակոծելիս սնդիկի ատոմի էներգիան մեծանում է  $4,95$  էՎ-ով: Հիմնական վիճակի անցնելիս հ՞նչ երկարությամբ էլեկտրամագնիական ալիք են արձակում սնդիկի ատոմները:  $1 \text{ էՎ} = 1,6 \cdot 10^{-19} \text{ Ջ}$ : Պատասխանը բազմապատկել  $10^8$ -ով:
2059. Ուրանի  $^{234}_{92}U$  իզոտոպի միջուկը ենթարկվում է  $\alpha$ -տրոհման: Որքա՞ն կլինի առաջացած միջուկի զանգվածային թիվը:
2060. Որքա՞ն է լիթիումի  $^8_3Li$  իզոտոպի մեկ  $\alpha$  տրոհման և մեկ  $\beta$  տրոհման արդյունքում առաջացած տարրի կարգարիվը:
2061. Որքա՞ն է  $^A_zX + ^4_2He \rightarrow ^{30}_{14}Si + ^1_1H$  միջուկային ռեակցիայի մեջ մտնող անհայտ  $X$  տարրի միջուկում պարունակող նեյտրոնների թիվը:
2062. Որքա՞ն է  $^{14}_7N + ^4_2He \rightarrow ^A_zX + ^1_1H$  միջուկային ռեակցիայի արդյունքում առաջացած անհայտ  $X$  տարրի նուկլոնների թիվը:
2063. Զերմամիջուկային ռեակցիայի ժամանակ  $^2_1H$  դեյտերիումի և  $^3_1H$  տրիտիումի միջուկների միացումից անջատվում է  $28,16 \cdot 10^{-13} \text{ Ջ}$  էներգիա: Որքա՞ն էներգիա կանցատվի, եթե ռեակցիայի մեջ մտնի 1 գ դեյտերիում: Ավոգադրոյի հաստատությունը ընդունել  $6 \cdot 10^{23} \text{ մոլ}^{-1}$ , ջրածնի մոլային զանգվածը՝  $2 \cdot 10^{-3}$  կգ/մոլ: Պատասխանը բազմապատկել  $10^{-8}$ -ով:
2064. Որքա՞ն է հելիումի ատոմի  $\left(^4_2He\right)$  միջուկում նուկլոնների կապի տեսակաբար էներգիան:  $m_p = 1,672 \cdot 10^{-27} \text{ կգ}$ ,  $m_n = 1,675 \cdot 10^{-27} \text{ կգ}$ ,  $M_{He} = 6,644 \cdot 10^{-27} \text{ կգ}$ : Պատասխանը բազմապատկել  $10^{15}$ -ով:
2065. Ի՞նչ փոքրագույն էներգիայով օժտված պետք է լինի  $\gamma$  քվանտը, որպեսզի տեղի ունենա դեյտերիումի միջուկի ճնշում հետևյալ ռեակցիայով՝  $^2_1H + \gamma \rightarrow ^1_1H + ^0_0n$ : Միջուկի, պրոտոնի և նեյտրոնի զանգվածները համապատասխանաբար ընդունել  $3,34 \cdot 10^{-27} \text{ կգ}$ ,  $1,67 \cdot 10^{-27} \text{ կգ}$  և  $1,68 \cdot 10^{-27} \text{ կգ}$ : Պատասխանը բազմապատկել  $10^{13}$ -ով:

### 13.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

2066. Զրածնի ատոմում կեկտրոնի պտտման շառավիղը փոքրացավ  $16$  անգամ, եթե այն մի ուղեծրից մյուսն էր անցնում:
- 1) Քանի<sup>o</sup> անգամ մեծացավ կեկտրոնի վրա ազդող կուլոնյան ձգողության ուժը:
  - 2) Քանի<sup>o</sup> անգամ մեծացավ կեկտրոնի շարժման արագությունը:
2067. Էլեկտրոնի կինետիկ էներգիան հավասար է  $1,1 \cdot 10^{-7}$  մ ալիքի երկարությամբ ֆոտոնի էներգիային: Էլեկտրոնը համարելով ոչ ռելյատիվիստիկ:
- 1) Որքա՞ն է էլեկտրոնի կինետիկ էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ով:
  - 2) Որքա՞ն է էլեկտրոնի արագությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-6}$ -ով:
2068. 100 Վտ հզորությամբ մեմերանգ ճառագայթման աղբյուրը 1 վ-ում առաքում է  $5 \cdot 10^{20}$  ֆոտոն:
- 1) Որքա՞ն է մեկ ֆոտոնի էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ով:
  - 2) Որքա՞ն է ճառագայթման ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկել  $10^8$ -ով:
2069. Ինչ-որ մետաղից պատրաստված թիթեղը նախ՝  $\nu_1 = 8 \cdot 10^{14}$  Հց, ապա՝  $\nu_2 = 6 \cdot 10^{14}$  Հց հաճախությամբ լույսով լուսավորելիս նկատվում է, որ ֆոտոէլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան փոխվում է 3 անգամ:
- 1) Որքա՞ն է մետաղի ելքի աշխատանքը: Պատասխանը բազմապատկել  $10^{20}$ -ով:
  - 2) Որքա՞ն է ֆոտոէլեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան  $\nu_2$  հաճախությամբ լույսով լուսավորելիս: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ -ով:
2070. Մետաղը,  $0,5$  մկմ ալիքի երկարությամբ մանուշակագույն լույսով լուսավորելիս, նրանից պոկված էլեկտրոնները արգելակվում են  $2$  Վ լարման դեպքում:

- 1) Որքա՞ն է մետաղի ելքի աշխատանքը: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ - ով:
  - 2) Որքա՞ն կլինի արգելակող լարումը, եթե մետաղը լուսավորվի 0,66 մկմ ալիքի երկարություն ունեցող կարմիր գույնի լույսով: Պատասխանը բազմապատկել 10- ով:
- 2071. Լույսի ամենափոքր հաճախությունը, որի դեպքում մետաղից էլեկտրոն է պոկվում,  $6 \cdot 10^{14}$  Հց է:**
- 1) Որքա՞ն է մետաղի ելքի աշխատանքը: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ - ով:
  - 2) Ի՞նչ առավելագույն հաճախության դեպքում մետաղից պոկված էլեկտրոնները լրիվ կարգելակվեն 3,3 Վ կասեցնող լարման դեպքում: Պատասխանը բազմապատկել  $10^{-14}$ - ով:
- 2072. Տվյալ մետաղի վրա ընկնող լույսի ալիքի երկարությունը  $4,8 \cdot 10^{-7}$  մ է, իսկ ֆոտոէֆեկտի կարմիր սահմանը  $6,6 \cdot 10^{-7}$  մ է:**
- 1) Որքա՞ն է էլեկտրոնների ելքի աշխատանքը մետաղից: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ով:
  - 2) Որքա՞ն է ֆոտոէլեկտրոնի առավելագույն արագությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-5}$ - ով:
- 2073. Դաղարի վիճակում գտնվող ջրածնի ատոմը  $-3,4$  էՎ էներգիայով գրգռված վիճակից անցավ  $-13,6$  էՎ էներգիայով վիճակի:**  
 $1 \text{ էՎ} = 1,6 \cdot 10^{-19} \text{ Ջ}:$
- 1) Որքա՞ն է ատոմի ճառագայթած ֆոտոնի էներգիան՝ արտահայտված ջողովներով: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ - ով:
  - 2) Որքա՞ն է ֆոտոնի՝ ատոմին հաղորդած իմպուլսը: Պատասխանը բազմապատկել  $10^{29}$ - ով:
- 2074. Ատոմի ճառագայթման սպեկտրի Լայմանի սերիայի հաճախությունները որոշվում են  $\nu = R \left( \frac{1}{1^2} - \frac{1}{n^2} \right)$  բանաձևով, որտեղ  $n = 2, 3, \dots$ ,**  
**իսկ  $R$  -ը Ռիորեզգի հաստատունն է, որն ընդունել  $3,28 \cdot 10^{15}$  Հց:**
- 1) Որքա՞ն է Լայմանի սերիայի ամենամեծ հաճախությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-13}$ - ով:
  - 2) Որքա՞ն է Լայմանի սերիայի ամենափոքր հաճախությունը: Պատասխանը բազմապատկել  $10^{-13}$ - ով:

2075. 92 պրոտոնից և 144 նեյտրոնից կազմված ատոմի միջուկը ենթարկվում է  $\beta$ -տրոհման:
- 1) Որքա՞ն է պրոտոնների թիվն առաջացած միջուկում:
  - 2) Որքա՞ն է նեյտրոնների թիվն առաջացած միջուկում:
2076. Ազոտի  $^{14}_7 N$  միջուկի՝  $\alpha$ -մասնիկի կլանման հետևանքում առաջացավ նոր տարր, և աճատվեց մեկ պրոտոն:
- 1) Քանի՞ պրոտոն է պարունակում անհայտ տարրի միջուկը:
  - 2) Քանի՞ նուկլոն է պարունակում անհայտ տարրի միջուկը:
2077. Այնշտայնիումի  $^{253}_{99} Es$  իզոտոպն առաջանում է մենդելեևիում տարրը, և աճատվում է մեկ նեյտրոն:
- 1) Քանի՞ պրոտոն է պարունակում մենդելեևիումի միջուկը:
  - 2) Քանի՞ նեյտրոն է պարունակում մենդելեևիումի միջուկը:
2078. Հելիումի  $^4_2 He$  միջուկում նուկլոնի կապի էներգիան  $4,16 \cdot 10^{-13}$  Ջ/նուկլոն է:
- 1) Որքա՞ն է նուկլոնների թիվը միջուկում:
  - 2) Որքա՞ն է միջուկի կապի էներգիան: Պատասխանը բազմապատկեր  $10^{15}$ -ով:
2079. Շառագայթաակտիվ ուրանի  $^{235}_{92} U$  իզոտոպը տրոհվում է կապարի  $^{207}_{82} Pb$  իզոտոպի:
- 1) Քանի՞  $\alpha$ -տրոհում է տեղի ունենում այդ դեպքում:
  - 2) Քանի՞  $\beta$ -տրոհում է տեղի ունենում այդ դեպքում:
2080. Ուրանի  $^{235}_{92} U$  միջուկի ճեղքման ժամանակ աճատվում է 200 ՍէՎ էներգիա: Ավզադրոյի հաստատումն ընդունել  $6 \cdot 10^{23}$  մոլ<sup>-1</sup>, ուրանի մոլային զանգվածը՝  $235 \cdot 10^{-3}$  կգ/մոլ:  $1 \text{ էՎ} = 1,6 \cdot 10^{-19} \text{ Ջ}$ :
- 1) Որքա՞ն էներգիա կանչատվի ատոմային ռեակտորում 235 գ ուրանի տրոհման ժամանակ: Պատասխանը բազմապատկել  $10^{-11}$ -ով:
  - 2) Ի՞նչ զանգվածով վառելանյութ պետք է այրել նույնքան էներգիա ստանալու համար, եթե վառելանյութի այրման տեսակարար ջերմությունը  $3 \cdot 10^7$  Ջ/կգ է: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ով:


### 13.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

2081. 132 Վտ հզրությամբ լամպի ՕԳԳ-ն 6 % է: Համարել, որ լամպը ճառագայթում է  $6 \cdot 10^{14}$  Հց հաճախությամբ մեներանգ լույս:

- 1) Որքա՞ն էներգիա է ճառագայթում լամպը 5 վ-ում: Պատասխանը բազմապատկել  $10^{-4}$ -ի:
- 2) Որքա՞ն է 5 վ-ում ճառագայթած ֆոտոնների թիվը: Պատասխանը բազմապատկել  $10^{-20}$ -ի:
- 3) Լամպից արձակված քանի՞ ֆոտոն կընկնի նրանից 100 մ հեռավորությամբ կանգնած մարդու աչքի բիբի վրա 5 վ-ում, եթե բիբի շառավիղը  $2 \cdot 10^{-3}$  մ է: Պատասխանը բազմապատկել  $10^{-10}$ -ի:

2082. Ֆոտոէֆեկտին վերաբերող փորձի հետևանքում աշակերտը կառուցեց մետաղից պոկված էլեկտրոնի առավելագույն կիմետրիկ էներգիայի՝ ընկնող ճառագայթման հաճախությունից կախումն արտահայտող գրաֆիկը (նկ. 71):

- 1) Օգտվելով գրաֆիկից՝ որոշեք Պլանկի հաստատունը: Պատասխանը բազմապատկել  $10^{35}$ -ի:
- 2) Օգտագործելով Պլանկի հաստատունի ստացված արժեքը՝ հաշվեք մետաղի համար էլեկտրոնի ելքի աշխատանքը: Պատասխանը բազմապատկել  $10^{20}$ -ի:
- 3) Որքա՞ն է մետաղից պոկված էլեկտրոնների առավելագույն կիմետրիկ էներգիան, եթե մետաղի վրա ընկնող ճառագայթման հաճախությունը  $3,5 \cdot 10^{15}$  Հց է: Պատասխանը բազմապատկել  $10^{20}$ -ի:



Նկ. 71

2083. Տվյալ մետաղից էլեկտրոնի ելքի աշխատանքը  $0,625$  էՎ է: Մետաղը լուսավորում են  $6,6 \cdot 10^{-7}$  մ ալիքի երկարություն ունեցող լույսով: 1 էՎ =  $1,6 \cdot 10^{19}$  Ω:

- 1) Որքա՞ն է մետաղի վրա ընկնող ֆոտոնի էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ի:
- 2) Որքա՞ն է մետաղից պոկված էլեկտրոնի առավելագույն իմպուլսը: Պատասխանը բազմապատկել  $10^{25}$ -ի:

3) Քանի՞ անգամ է մետաղից պոկված էլեկտրոնի իմպուլսը մեծ ֆուռոնի իմպուլսից:

2084. **Մետաղի վրա, որի համար էլեկտրոնի ելքի աշխատանքը**  $5,2 \cdot 10^{-19}$  **Ω**, **ընկնող ֆուռոնի իմպուլսը**  $2,4 \cdot 10^{-27}$  **կգ մ/վ է:**


- 1) Որքա՞ն է մետաղի վրա ընկնող ֆուռոնի էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{20}$ -ով:
- 2) Որքա՞ն է մետաղից պոկված էլեկտրոնի առավելագույն կինետիկ էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ով:
- 3) Քանի՞ անգամ է մետաղից պոկված էլեկտրոնի առավելագույն իմպուլսը մեծ ընկնող ֆուռոնի իմպուլսից:

2085. Տվյալ մետաղի համար ֆուռութելիսի կարմիր սահմանը 700 նմ է: Մետաղը նախ լուսավորում են  $\lambda_1 = 600$  նմ ալիքի երկարությամբ լույսով, իսկ հետո անհայտ  $\lambda_2$  ալիքի երկարությամբ լույսով: Նշված դեպքերում ֆուռութելելու ների առավելագույն արագությունների հարաբերությունը՝  $v_1/v_2 = 3/4$ :

- 1) Որքա՞ն է  $\lambda_2$ -ը: Պատասխանը բազմապատկել  $10^8$  – ով:
- 2) Որքա՞ն է  $\lambda_1$  և  $\lambda_2$  ալիքների երկարություն ունեցող ֆուռոնների էներգիաների  $E_1/E_2$  հարաբերությունը: Պատասխանը բազմապատկել  $10$  – ով:
- 3) Որքա՞ն է  $\lambda_1$  և  $\lambda_2$  ալիքների երկարություն ունեցող ֆուռոնների իմպուլսների  $p_1/p_2$  հարաբերությունը: Պատասխանը բազմապատկել  $10$  – ով:

### 13.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

2086. Ֆուտոկեմենտում կարողի մետաղից էլեկտրոնի ելքի աշխատանքը  $4 \cdot 10^{-19}$  Զ է: Կարողը լուսավորում են 3,3  $\cdot 10^{-7}$  մ ալիքի երկարությամբ լույսով: Ծավալային լիցքերից խուսափելու համար, ֆուտոկեմենտում կարողի և անողի միջև տեղադրում



Նկ. 72

են ցանց: Ցանցի և կարողի միջև ստեղծում են 3,75 Վ արագացնող պոտենցիալների տարրերություն (նկ. 72):

- 1) Որքա՞ն է կարողը լուսավորող լույսի ֆուտոնի էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ով:
- 2) Որքա՞ն է մետաղից պոկված էլեկտրոնի առավելագույն կինետիկ էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ով:
- 3) Որքա՞ն է ցանցին հասնելիս էլեկտրոնի առավելագույն կինետիկ էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{19}$ -ով:
- 4) Որքա՞ն պետք է լինի ցանցի և անողի միջև արգելակող լարումը, որպեսզի ֆուտոհոսանքը դադարի:

2087. Գնդոլորտի տեսքով երկու ցինկե համակենտրոն էլեկտրոդները (արտաքին գնդոլորտը ցանց է) միացված են  $4 \cdot 10^{-6}$  Ֆ ունակությամբ կոնդենսատորի շրջադիրներին: Ներքին էլեկտրոդը երկար ժամանակ լուսավորում են  $0,25 \cdot 10^{-6}$  մ ալիքի երկարությամբ մեներանգ լույսով: Ցինկի համար էլեկտրոնի ելքի աշխատանքը  $3,3$  էՎ է:  $1 \text{ էՎ} = 1,6 \cdot 10^{-19}$  Զ է:
- 1) Որքա՞ն է ցինկի համար ֆուտոկենտրի կարմիր սահմանին համապատասխանող ալիքի երկարությունը: Պատասխանը բազմապատկել  $10^9$ -ով:
  - 2) Որքա՞ն է ֆուտոկենտրոնների առավելագույն կինետիկ էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ -ով:
  - 3) Որքա՞ն է էլեկտրոդների միջև լարման առավելագույն արժեքը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:
  - 4) Որքա՞ն է կոնդենսատորի շրջադիրների լիցքը, էլեկտրոդները երկար ժամանակ լուսավորելիս: Պատասխանը բազմապատկել  $10^7$ -ով:

2088. Պրոտոնը  $7,5 \cdot 10^4$  մ/վ արագությամբ բախվում է դադարի վիճակում գտնվող չորգուկած ջրածնի ատոմին: Բախումից հետո պրոտոնը շարժվում է նախկին ուղղությամբ  $2 \cdot 10^4$  մ/վ արագությամբ, իսկ ատոմն

**անցնում է գրգռված վիճակի:** Զրածնի ասոսի զանգվածն ընդունել հավասար պրոտոնի զանգվածին:

- 1) Որքա՞ն է պրոտոնի կինետիկ էներգիան մինչև բախվելը: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ -ով:
- 2) Որքա՞ն է ջրածնի ասոսի կինետիկ էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ -ով:
- 3) Որքանո՞վ մեծացավ ջրածնի ասոսի ներքին էներգիան: Պատասխանը բազմապատկել  $10^{21}$ -ով:
- 4) Ասոմը գրգռված վիճակից հիմնական վիճակին անցնելիս ի՞նչ հաճախությամբ լույս կճառագայթի: Պատասխանը բազմապատկել  $10^{-14}$ -ով:

## ՊԱՏԱՍԽԱՆԵՐ

1. 2:	38. 2:	75. 2:	112. 4:
2. 3:	39. 1:	76. 2:	113. 4:
3. 1:	40. 2:	77. 2:	114. 4:
4. 3:	41. 2:	78. 2:	115. 1:
5. 4:	42. 3:	79. 3:	116. 2:
6. 2:	43. 1:	80. 1:	117. 2:
7. 2:	44. 1:	81. 4:	118. 3:
8. 4:	45. 1:	82. 3:	119. 4:
9. 2:	46. 1:	83. 4:	120. 3:
10. 4:	47. 1:	84. 4:	121. 4:
11. 1:	48. 1:	85. 4:	122. 3:
12. 2:	49. 2:	86. 1:	123. 2:
13. 1:	50. 2:	87. 3:	124. 3:
14. 3:	51. 3:	88. 1:	125. 4:
15. 3:	52. 3:	89. 2:	126. 3:
16. 4:	53. 4:	90. 4:	127. 5:
17. 2:	54. 3:	91. 2:	128. 8:
18. 2:	55. 4:	92. 1:	129. 3:
19. 1:	56. 4:	93. 3:	130. 200:
20. 1:	57. 3:	94. 1:	131. 10:
21. 3:	58. 3:	95. 3:	132. 1:
22. 4:	59. 3:	96. 2:	133. 20:
23. 3:	60. 3:	97. 3:	134. 4:
24. 3:	61. 1:	98. 3:	135. 8:
25. 4:	62. 1:	99. 2:	136. 4:
26. 2:	63. 3:	100. 2:	137. 12:
27. 2:	64. 3:	101. 3:	138. 144:
28. 1:	65. 3:	102. 1:	139. 9:
29. 3:	66. 3:	103. 3:	140. 15:
30. 1:	67. 3:	104. 3:	141. 10:
31. 1:	68. 1:	105. 1:	142. 80:
32. 2:	69. 4:	106. 3:	143. 20:
33. 2:	70. 1:	107. 4:	144. 10:
34. 3:	71. 4:	108. 1:	145. 500:
35. 1:	72. 3:	109. 2:	146. 3:
36. 4:	73. 2:	110. 3:	147. 40:
37. 2:	74. 2:	111. 2:	148. 4:

149. 8:	2) 2:	1) 2,	196.
150. 45:	174.	2) 3:	1) 2,
151. 15:	1) 25,	187.	2) 2,
152. 4:	2) 1:	1) 2,	3) 1,
153. 2:	175.	2) 20:	4) 3:
154. 3:	1) 15,	188.	197.
155. 2:	2) 10:	1) 60,	1) 1,
156. 20:	176.	2) 500,	2) 10,
157. 2:	1) 3,	3) 600:	3) 2,
158. 80:	2) 8:	189.	4) 5:
159. 16:	177.	1) 5,	198.
160. 20:	1) 9,	2) 75,	1) 50,
161. 2:	2) 2:	3) 10:	2) 16,
162. 3:	178.	190.	3) 480,
163. 975:	1) 2,	1) 6,	4) 720:
164. 5:	2) 9:	2) 12,	199.
165. 2:	179.	3) 6:	1) 10,
166. 8:	1) 20,	191.	2) 20,
167.	2) 3:	1) 50,	3) 20,
1) 4,	180.	2) 20,	4) 4:
2) 2:	1) 50,	3) 5:	200.
168.	2) 5:	192.	1) 10,
1) 2,	181.	1) 10,	2) 2,
2) 2:	1) 5,	2) 125,	3) 10,
169.	2) 160:	3) 50:	4) 14:
1) 10,	182.	193.	201. 2:
2) 100:	1) 3,	1) 10,	202. 2:
170.	2) 30:	2) 20,	203. 1:
1) 70,	183.	3) 0:	204. 1:
2) 35:	1) 10,	194.	205. 2:
171.	2) 25:	1) 45,	206. 1:
1) 8,	184.	2) 5,	207. 2:
2) 2:	1) 105,	3) 30:	208. 2:
172.	2) 20:	195.	209. 3:
1) 2,	185.	1) 2,	210. 2:
2) 10:	1) 2,	2) 15,	211. 2:
173.	2) 20:	3) 0,	212. 4:
1) 10,	186.	4) 45:	213. 1:

214. 1:	252. 3:	290. 1:	328. 2:
215. 3:	253. 2:	291. 4:	329. 7500:
216. 2:	254. 3:	292. 4:	330. 8:
217. 4:	255. 2:	293. 3:	331. 1250:
218. 2:	256. 4:	294. 3:	332. 50:
219. 1:	257. 1:	295. 4:	333. 4:
220. 2:	258. 2:	296. 1:	334. 55:
221. 2:	259. 4:	297. 1:	335. 11:
222. 4:	260. 1:	298. 2:	336. 25:
223. 2:	261. 3:	299. 3:	337. 625:
224. 1:	262. 2:	300. 2:	338. 4:
225. 4:	263. 4:	301. 3:	339. 70:
226. 3:	264. 1:	302. 1:	340. 2:
227. 2:	265. 3:	303. 2:	341. 20:
228. 3:	266. 4:	304. 1:	342. 2:
229. 4:	267. 4:	305. 3:	343. 978:
230. 2:	268. 3:	306. 3:	344. 15:
231. 1:	269. 1:	307. 16:	345. 3:
232. 3:	270. 4:	308. 1:	346. 5:
233. 4:	271. 2:	309. 75:	347. 5:
234. 3:	272. 2:	310. 1:	348. 10:
235. 3:	273. 1:	311. 2000:	349. 1:
236. 3:	274. 4:	312. 2:	350. 12:
237. 2:	275. 1:	313. 24:	351. 8:
238. 2:	276. 2:	314. 4:	352. 1:
239. 3:	277. 2:	315. 15:	353. 2:
240. 3:	278. 1:	316. 2:	354. 16:
241. 1:	279. 4:	317. 2:	355. 75:
242. 4:	280. 2:	318. 50:	356. 110:
243. 3:	281. 1:	319. 10:	357. 4:
244. 1:	282. 2:	320. 10:	358. 3:
245. 2:	283. 4:	321. 300:	359. 300:
246. 3:	284. 4:	322. 3:	360. 5:
247. 3:	285. 2:	323. 2:	361. 30:
248. 1:	286. 4:	324. 2:	362. 40:
249. 2:	287. 4:	325. 4:	363. 12:
250. 4:	288. 1:	326. 4:	364. 8000:
251. 1:	289. 4:	327. 2:	365. 14:

366.	26:	1) 6,	3) 30:	1) 16,
367.	3:	2) 120:	<b>392.</b>	2) 16,
368.	1:	<b>382.</b>	1) 4,	3) 72,
369.	4000:	1) 5,	2) 56,	4) 556:
370.		2) 5:	3) 76:	<b>401.</b> 2:
	1) 2512,	<b>383.</b>	<b>393.</b>	<b>402.</b> 2:
	2) 6:	1) 8,	1) 40,	<b>403.</b> 2:
371.		2) 4000:	2) 8,	<b>404.</b> 2:
	1) 2,	<b>384.</b>	3) 48:	<b>405.</b> 4:
	2) 6:	1) 5,	<b>394.</b>	<b>406.</b> 3:
372.		2) 125:	1) 10,	<b>407.</b> 2:
	1) 2,	<b>385.</b>	2) 20,	<b>408.</b> 4:
	2) 4:	1) 2,	3) 17:	<b>409.</b> 3:
373.		2) 4,	<b>395.</b>	<b>410.</b> 3:
	1) 2,	3) 5:	1) 2,	<b>411.</b> 2:
	2) 10:	<b>386.</b>	2) 8,	<b>412.</b> 1:
374.		1) 5,	3) 16:	<b>413.</b> 2:
	1) 4,	2) 50,	<b>396.</b>	<b>414.</b> 3:
	2) 2:	3) 12:	1) 10,	<b>415.</b> 2:
375.		<b>387.</b>	2) 2,	<b>416.</b> 4:
	1) 40,	1) 50,	3) 25,	<b>417.</b> 2:
	2) 5:	2) 5,	4) 50:	<b>418.</b> 3:
376.		3) 2:	<b>397.</b>	<b>419.</b> 1:
	1) 8,	<b>388.</b>	1) 3,	<b>420.</b> 2:
	2) 50:	1) 4,	2) 2,	<b>421.</b> 3:
377.		2) 5	3) 6,	<b>422.</b> 4:
	1) 180,	3) 3:	4) 2:	<b>423.</b> 2:
	2) 2:	<b>389.</b>	<b>398.</b>	<b>424.</b> 1:
378.		1) 11,	1) 2,	<b>425.</b> 2:
	1) 10,	2) 5,	2) 24,	<b>426.</b> 1:
	2) 10:	3) 22:	3) 48,	<b>427.</b> 3:
379.		<b>390.</b>	4) 96:	<b>428.</b> 3:
	1) 5,	1) 10,	<b>399.</b>	<b>429.</b> 2:
	2) 20:	2) 10,	1) 30,	<b>430.</b> 1:
380.		3) 1:	2) 20,	<b>431.</b> 2:
	1) 2,	<b>391.</b>	3) 15,	<b>432.</b> 3:
	2) 25:	1) 5,	4) 0:	<b>433.</b> 1:
381.		2) 15,	<b>400.</b>	<b>434.</b> 1:

435. 3:	461.	486. 4:	524. 3:
436. 2:	1) 30,	487. 3:	525. 3:
437. 1:	2) 40,	488. 3:	526. 1:
438. 3:	3) 5:	489. 4:	527. 3:
439. 800:	462.	490. 1:	528. 4:
440. 8:	1) 2,	491. 1:	529. 3:
441. 24:	2) 1,	492. 2:	530. 3:
442. 10:	3) 2:	493. 3:	531. 2:
443. 600:	463.	494. 4:	532. 2:
444. 60:	1) 2,	495. 1:	533. 3:
445. 3:	2) 2400,	496. 2:	534. 1:
446. 250:	3) 2400:	497. 3:	535. 1:
447. 20:	464.	498. 2:	536. 3:
448. 100:	1) 1,	499. 2:	537. 2:
449. 10:	2) 20,	500. 2:	538. 1:
450. 8:	3) 20,	501. 3:	539. 3:
451. 6:	4) 4:	502. 2:	540. 3:
452. 36:	465. 3:	503. 4:	541. 2:
453. 9:	466. 1:	504. 4:	542. 3:
454. 50:	467. 3:	505. 2:	543. 2:
455.	468. 3:	506. 3:	544. 3:
1) 200,	469. 4:	507. 2:	545. 2:
2) 170:	470. 2:	508. 4:	546. 4:
456.	471. 4:	509. 1:	547. 4:
1) 10,	472. 4:	510. 3:	548. 3:
2) 17:	473. 3:	511. 1:	549. 1:
457.	474. 2:	512. 4:	550. 3:
1) 1,	475. 3:	513. 4:	551. 1:
2) 120:	476. 2:	514. 4:	552. 3:
458.	477. 1:	515. 1:	553. 3:
1) 1500,	478. 1:	516. 2:	554. 2:
2) 3500:	479. 2:	517. 1:	555. 200:
459.	480. 3:	518. 4:	556. 500:
1) 1,	481. 2:	519. 1:	557. 14:
2) 60:	482. 3:	520. 3:	558. 4800:
460.	483. 1:	521. 3:	559. 0:
1) 7000,	484. 3:	522. 1:	560. 400:
2) 9000:	485. 3:	523. 1:	561. 10:

562. 30:	1) 26,	2) 1125,	4) 2:
563. 9000:	2) 39:	3) 2250:	617.
564. 500:	596.	608.	1) 3,
565. 6:	1) 7500,	1) 800,	2) 10,
566. 1600:	2) 1:	2) 1600,	3) 8,
567. 240:	597.	3) 50:	4) 5:
568. 117:	1) 8960,	609.	618.
569. 4:	2) 160:	1) 3000,	1) 110,
570. 160:	598.	2) 2,	2) 180,
571. 864:	1) 120,	3) 400:	3) 4,
572. 3000:	2) 3:	610.	4) 1400:
573. 8100:	599.	1) 2304,	619. 4:
574. 40:	1) 4,	2) 3,	620. 2:
575. 200:	2) 3:	3) 220:	621. 3:
576. 600:	600.	611.	622. 3:
577. 204:	1) 16,	1) 20,	623. 2:
578. 6:	2) 25:	2) 100,	624. 2:
579. 700:	601.	3) 104:	625. 3:
580. 25:	1) 4,	612.	626. 4:
581. 2:	2) 5:	1) 32,	627. 2:
582. 10:	602.	2) 16,	628. 4:
583. 10:	1) 20,	3) 64:	629. 4:
584. 8:	2) 15:	613.	630. 1:
585. 250:	603.	1) 500,	631. 1:
586. 6:	1) 5,	2) 500,	632. 2:
587. 20:	2) 6:	3) 1000:	633. 3:
588. 2:	604.	614.	634. 3:
589. 4:	1) 50,	1) 1,	635. 4:
590. 2:	2) 625:	2) 330,	636. 3:
591. 30:	605.	3) 5:	637. 3:
592. 10:	1) 10,	615.	638. 2:
593.	2) 6:	1) 50,	639. 2:
1) 450,	606.	2) 10,	640. 1:
2) 45:	1) 20,	3) 10:	641. 1:
594.	2) 2,	616.	642. 3:
1) 4000,	3) 2:	1) 5,	643. 3:
2) 5:	607.	2) 3,	644. 1:
595.	1) 750,	3) 6,	645. 4:

646. 2:	2) 116:	700. 3:	738. 4:
647. 2:	683.	701. 2:	739. 2:
648. 4:	1) 40,	702. 4:	740. 3:
649. 1:	2) 60:	703. 4:	741. 1:
650. 2:	684.	704. 1:	742. 1:
651. 3:	1) 1,	705. 1:	743. 1:
652. 3:	2) 600:	706. 2:	744. 4:
653. 2:	685.	707. 4:	745. 2:
654. 4:	1) 1,	708. 2:	746. 4:
655. 3:	2) 1800:	709. 2:	747. 1:
656. 1:	686.	710. 1:	748. 660:
657. 3:	1) 500,	711. 2:	749. 2:
658. 2:	2) 500,	712. 4:	750. 2:
659. 3:	3) 40:	713. 3:	751. 4:
660. 1:	687.	714. 4:	752. 1:
661. 2:	1) 60,	715. 4:	753. 4:
662. 2:	2) 40,	716. 2:	754. 4:
663. 3:	3) 20:	717. 2:	755. 1:
664. 1:	688.	718. 3:	756. 2:
665. 1:	1) 2,	719. 1:	757. 8:
666. 4:	2) 4,	720. 4:	758. 4:
667. 1:	3) 10,	721. 3:	759. 5:
668. 2500:	4) 6:	722. 1:	760. 1:
669. 600:	689.	723. 4:	761. 4:
670. 1500:	1) 1,	724. 1:	762. 2:
671. 180:	2) 4000,	725. 3:	763. 7:
672. 15:	3) 2000,	726. 3:	764. 3:
673. 10:	4) 200:	727. 2:	765. 6:
674. 200:	690. 3:	728. 2:	766.
675. 1500:	691. 3:	729. 1:	1) 2,
676. 3840:	692. 3:	730. 2:	2) 314:
677. 2060:	693. 2:	731. 2:	767.
678. 5250:	694. 2:	732. 2:	1) 1,
679. 4:	695. 2:	733. 4:	2) 1:
680. 1500:	696. 3:	734. 2:	768.
681. 5:	697. 2:	735. 4:	1) 2000,
682.	698. 3:	736. 4:	2) 2:
1) 116,	699. 2:	737. 3:	769.

1)	10,	781.	3:	819.	4:	857.	1:
2)	20:	782.	1:	820.	3:	858.	3:
770.		783.	2:	821.	3:	859.	2:
1)	2,	784.	4:	822.	4:	860.	2:
2)	10:	785.	3:	823.	2:	861.	4:
771.		786.	2:	824.	3:	862.	1:
1)	1,	787.	1:	825.	3:	863.	2:
2)	1000:	788.	2:	826.	4:	864.	1:
772.		789.	4:	827.	1:	865.	3:
1)	4,	790.	4:	828.	2:	866.	1:
2)	1,	791.	3:	829.	2:	867.	3:
3)	5:	792.	1:	830.	1:	868.	3:
773.		793.	2:	831.	3:	869.	2:
1)	16,	794.	4:	832.	2:	870.	1:
2)	2,	795.	4:	833.	4:	871.	2:
3)	36:	796.	1:	834.	2:	872.	1:
774.		797.	4:	835.	2:	873.	1:
1)	36,	798.	2:	836.	3:	874.	4:
2)	1,	799.	3:	837.	4:	875.	1:
3)	1884:	800.	3:	838.	1:	876.	4:
775.		801.	3:	839.	4:	877.	1:
1)	75,	802.	1:	840.	1:	878.	1:
2)	1,	803.	2:	841.	3:	879.	3:
3)	25,	804.	3:	842.	1:	880.	2:
4)	4:	805.	1:	843.	3:	881.	50:
776.		806.	2:	844.	4:	882.	6923:
1)	10,	807.	3:	845.	3:	883.	150:
2)	1,	808.	2:	846.	3:	884.	10:
3)	2,	809.	1:	847.	3:	885.	21:
4)	0:	810.	3:	848.	1:	886.	150:
777.		811.	4:	849.	4:	887.	25:
1)	6,	812.	2:	850.	1:	888.	3:
2)	300,	813.	4:	851.	4:	889.	10:
3)	300,	814.	3:	852.	4:	890.	500:
4)	1:	815.	2:	853.	2:	891.	500:
778.	4:	816.	1:	854.	2:	892.	1:
779.	3:	817.	1:	855.	3:	893.	400:
780.	3:	818.	2:	856.	2:	894.	4:

895. 12:	1) 3,	938.	1) 1,
896. 20:	2) 3:	1) 15,	2) 2,
897. 18:	927.	2) 33,	3) 204,
898. 25:	1) 30,	3) 8976:	4) 1250:
899. 1000:	2) 5:	939.	948.
900. 324:	928.	1) 102,	1) 408,
901. 7:	1) 2,	2) 103,	2) 14,
902. 300:	2) 100:	3) 102:	3) 102,
903. 3:	929.	940.	4) 168:
904. 750:	1) 1250,	1) 236,	949.
905. 22:	2) 1500:	2) 202,	1) 204,
906. 140:	930.	3) 505:	2) 408,
907. 50:	1) 1200,	941.	3) 102,
908. 819:	2) 3:	1) 5,	4) 15:
909. 800:	931.	2) 5,	950.
910. 392:	1) 4,	3) 3:	1) 100,
911. 248:	2) 9:	942.	2) 5,
912. 24:	932.	1) 952,	3) 1,
913. 2:	1) 60,	2) 2720,	4) 3:
914. 2500:	2) 2:	3) 354:	951. 2:
915. 50:	933.	943.	952. 3:
916. 26:	1) 903,	1) 166,	953. 2:
917. 360:	2) 256:	2) 3,	954. 2:
918. 10:	934.	3) 170:	955. 2:
919. 20:	1) 15,	944.	956. 1:
920. 1660:	2) 1:	1) 2,	957. 2:
921. 2:	935.	2) 415,	958. 3:
922. 166:	1) 301,	3) 50:	959. 3:
923.	2) 1505,	945.	960. 3:
1) 108,	3) 301:	1) 2548,	961. 1:
2) 602:	936.	2) 25,	962. 2:
924.	1) 5,	3) 15:	963. 4:
1) 3,	2) 25,	946.	964. 2:
2) 20:	3) 15:	1) 3,	965. 2:
925.	937.	2) 2000,	966. 4:
1) 125,	1) 5440,	3) 3000,	967. 1:
2) 60:	2) 18,	4) 1500:	968. 3:
926.	3) 5:	947.	969. 4:

970. 2:	1008. 1:	1046. 2:	1084. 46:
971. 2:	1009. 4:	1047. 3:	1085. 6:
972. 2:	1010. 1:	1048. 2:	1086. 5:
973. 4:	1011. 2:	1049. 2:	1087. 3:
974. 3:	1012. 4:	1050. 2:	1088. 2200:
975. 1:	1013. 3:	1051. 2:	1089. 9000:
976. 2:	1014. 4:	1052. 1:	1090. 15:
977. 2:	1015. 3:	1053. 1:	1091. 68:
978. 3:	1016. 1:	1054. 2:	1092. 500:
979. 2:	1017. 1:	1055. 1:	1093. 4:
980. 1:	1018. 1:	1056. 4:	1094. 24:
981. 1:	1019. 2:	1057. 4:	1095. 11:
982. 4:	1020. 2:	1058. 3:	1096. 301:
983. 3:	1021. 1:	1059. 2:	1097. 2600:
984. 3:	1022. 2:	1060. 2:	1098. 594:
985. 3:	1023. 2:	1061. 747:	1099. 70:
986. 3:	1024. 1:	1062. 1245:	1100. 55:
987. 2:	1025. 4:	1063. 6225:	1101. 30:
988. 2:	1026. 1:	1064. 600:	1102. 134:
989. 4:	1027. 1:	1065. 300:	1103.
990. 3:	1028. 4:	1066. 400:	1) 11,
991. 2:	1029. 2:	1067. 100:	2) 220:
992. 3:	1030. 3:	1068. 40:	1104.
993. 4:	1031. 2:	1069. 250:	1) 1323,
994. 4:	1032. 2:	1070. 1000:	2) 2028:
995. 3:	1033. 2:	1071. 2:	1105.
996. 2:	1034. 4:	1072. 800:	1) 480,
997. 1:	1035. 3:	1073. 8:	2) 60:
998. 4:	1036. 3:	1074. 774:	1106.
999. 2:	1037. 2:	1075. 5:	1) 8400,
1000. 2:	1038. 4:	1076. 35:	2) 7:
1001. 1:	1039. 2:	1077. 200:	1107.
1002. 2:	1040. 2:	1078. 25:	1) 8400,
1003. 2:	1041. 4:	1079. 55:	2) 2000:
1004. 1:	1042. 1:	1080. 2:	1108.
1005. 3:	1043. 3:	1081. 5000:	1) 105,
1006. 3:	1044. 4:	1082. 330:	2) 42:
1007. 2:	1045. 2:	1083. 165:	1109.

1)	18,	<b>1121.</b>	2)	2232,	<b>1158.</b>	1:
2)	83:	1)	4830,	3)	0,	<b>1159.</b> 4:
<b>1110.</b>		2)	210,	4)	972:	<b>1160.</b> 1:
1)	1660,	3)	58:	<b>1131.</b>		<b>1161.</b> 3:
2)	4150:	<b>1122.</b>		1)	200,	<b>1162.</b> 4:
<b>1111.</b>		1)	3480,	2)	2,	<b>1163.</b> 4:
1)	3600,	2)	2,	3)	4980,	<b>1164.</b> 1:
2)	900:	3)	1007:	4)	2490:	<b>1165.</b> 3:
<b>1112.</b>		<b>1123.</b>		<b>1132.</b>		<b>1166.</b> 1:
1)	30,	1)	21,	1)	2,	<b>1167.</b> 3:
2)	400:	2)	186,	2)	0,	<b>1168.</b> 3:
<b>1113.</b>		3)	2175:	3)	2000,	<b>1169.</b> 2:
1)	25,	<b>1124.</b>		4)	340:	<b>1170.</b> 1:
2)	360:	1)	630,	<b>1133.</b>	1:	<b>1171.</b> 3:
<b>1114.</b>		2)	4600,	<b>1134.</b>	2:	<b>1172.</b> 1:
1)	6,	3)	6163:	<b>1135.</b>	2:	<b>1173.</b> 2:
2)	28:	<b>1125.</b>		<b>1136.</b>	3:	<b>1174.</b> 4:
<b>1115.</b>		1)	300	<b>1137.</b>	3:	<b>1175.</b> 3:
1)	1050,	2)	150,	<b>1138.</b>	2:	<b>1176.</b> 2:
2)	15:	3)	450:	<b>1139.</b>	1:	<b>1177.</b> 2:
<b>1116.</b>		<b>1126.</b>		<b>1140.</b>	2:	<b>1178.</b> 1:
1)	2198,	1)	1200,	<b>1141.</b>	3:	<b>1179.</b> 4:
2)	28:	2)	9960,	<b>1142.</b>	1:	<b>1180.</b> 4:
<b>1117.</b>		3)	4980:	<b>1143.</b>	1:	<b>1181.</b> 1:
1)	2,	<b>1127.</b>		<b>1144.</b>	3:	<b>1182.</b> 3:
2)	3:	1)	8439,	<b>1145.</b>	4:	<b>1183.</b> 1:
<b>1118.</b>		2)	207,	<b>1146.</b>	2:	<b>1184.</b> 4:
1)	3,	3)	3726:	<b>1147.</b>	3:	<b>1185.</b> 1:
2)	9,	<b>1128.</b>		<b>1148.</b>	1:	<b>1186.</b> 4:
3)	1500:	1)	9,	<b>1149.</b>	3	<b>1187.</b> 3:
<b>1119.</b>		2)	2,	<b>1150.</b>	2:	<b>1188.</b> 2:
1)	2500,	3)	8:	<b>1151.</b>	2:	<b>1189.</b> 4:
2)	750,	<b>1129.</b>		<b>1152.</b>	3:	<b>1190.</b> 3:
3)	2:	1)	4,	<b>1153.</b>	4:	<b>1191.</b> 4:
<b>1120.</b>		2)	81,	<b>1154.</b>	2:	<b>1192.</b> 3:
1)	140,	3)	108:	<b>1155.</b>	4:	<b>1193.</b> 4:
2)	1568,	<b>1130.</b>		<b>1156.</b>	3:	<b>1194.</b> 4:
3)	28:	1)	3906,	<b>1157.</b>	3:	<b>1195.</b> 3:

1196.	3:	1234.	1:	1272.	100:	2) 2:
1197.	3:	1235.	2:	1273.	80:	<b>1289.</b>
1198.	1:	1236.	5000:	1274.	3:	1) 1000,
1199.	2:	1237.	720:	1275.	8:	2) 50:
1200.	1:	1238.	144:	1276.	5:	<b>1290.</b>
1201.	3:	1239.	392:	1277.	36:	1) 6,
1202.	1:	1240.	5:	1278.		2) 4,
1203.	2:	1241.	3:		1) 4,	3) 18:
1204.	3:	1242.	9:		2) 5:	<b>1291.</b>
1205.	1:	1243.	8:	1279.		1) 7,
1206.	4:	1244.	18:		1) 8,	2) 1,
1207.	4:	1245.	2:		2) 9:	3) 98:
1208.	2:	1246.	4:	1280.		<b>1292.</b>
1209.	4:	1247.	6:		1) 1,	1) 12,
1210.	4:	1248.	6:		2) 18:	2) 60,
1211.	3:	1249.	2:	1281.		3) 150:
1212.	2:	1250.	2:		1) 32,	<b>1293.</b>
1213.	1:	1251.	81:		2) 2:	1) 1,
1214.	2:	1252.	1:	1282.		2) 3,
1215.	2:	1253.	0:		1) 6,	3) 2:
1216.	3:	1254.	30:		2) 6:	<b>1294.</b>
1217.	1:	1255.	250:	1283.		1) 36,
1218.	3:	1256.	1000:		1) 100,	2) 60,
1219.	1:	1257.	6400:		2) 150:	3) 135:
1220.	4:	1258.	300:	1284.		<b>1295.</b>
1221.	3:	1259.	2:		1) 117,	1) 1500,
1222.	3:	1260.	10:		2) 325:	2) 3000,
1223.	1:	1261.	2000:	1285.		3) 1000:
1224.	2:	1262.	18:		1) 2520,	<b>1296.</b>
1225.	1:	1263.	2:		2) 1800:	1) 16,
1226.	1:	1264.	4:	1286.		2) 188,
1227.	3:	1265.	1600:		1) 225,	3) 16:
1228.	2:	1266.	4:		2) 15:	<b>1297.</b>
1229.	2:	1267.	160:	1287.		1) 2,
1230.	1:	1268.	750:		1) 96,	2) 16,
1231.	2:	1269.	5:		2) 320:	3) 2:
1232.	2:	1270.	9:	1288.		<b>1298.</b>
1233.	3:	1271.	2:		1) 2,	1) 1,

	2) 45,	1)	18,	1330.	2:	1368.	4:
	3) 14:	2)	18,	1331.	2:	1369.	1:
1299.		3)	10,	1332.	2:	1370.	2:
	1) 2,	4)	30:	1333.	2:	1371.	1:
	2) 4,		1308.	1334.	2:	1372.	3:
	3) 1256:	1)	1,	1335.	3:	1373.	3:
1300.		2)	10,	1336.	3:	1374.	4:
	1) 50,	3)	2,	1337.	1:	1375.	1:
	2) 350,	4)	1:	1338.	4:	1376.	1:
	3) 2124:		1309.	1339.	1:	1377.	3:
1301.		1)	288,	1340.	2:	1378.	1:
	1) 3,	2)	4608,	1341.	4:	1379.	2:
	2) 3,	3)	120,	1342.	2:	1380.	2:
	3) 225:	4)	9:	1343.	3:	1381.	3:
1302.		1310.		1344.	1:	1382.	2:
	1) 36,	1)	59,	1345.	4:	1383.	2:
	2) 300,	2)	885,	1346.	4:	1384.	4:
	3) 18:	3)	1475,	1347.	1:	1385.	2:
1303.		4)	5:	1348.	1:	1386.	4:
	1) 1,		1311.	1349.	3:	1387.	4:
	2) 3,		1312.	1350.	4:	1388.	1:
	3) 1:		1313.	1351.	4:	1389.	1:
1304.		1314.	3:	1352.	1:	1390.	1:
	1) 2,		1315.	1353.	2:	1391.	2:
	2) 2,		1316.	1354.	1:	1392.	2:
	3) 5,		1317.	1355.	3:	1393.	1:
	4) 1600:		1318.	1356.	3:	1394.	3:
1305.		1319.	3:	1357.	3:	1395.	4:
	1) 20,		1320.	1358.	1:	1396.	2:
	2) 5,		1321.	1359.	3:	1397.	2:
	3) 45,		1322.	1360.	3:	1398.	2:
	4) 625:		1323.	1361.	4:	1399.	3:
1306.		1324.	3:	1362.	4:	1400.	4:
	1) 48,		1325.	1363.	4:	1401.	3:
	2) 5,		1326.	1364.	4:	1402.	1:
	3) 96,		1327.	1365.	4:	1403.	3:
	4) 2:		1328.	1366.	2:	1404.	4:
1307.		1329.	3:	1367.	3:	1405.	2:

1406.	1:	1444.	132:	1478.		3)	1680:
1407.	3:	1445.	2:	1)	102,		1490.
1408.	4:	1446.	6:	2)	51:		1)
1409.	1:	1447.	2:	1479.			2)
1410.	2:	1448.	625:	1)	3,		1:
1411.	4:	1449.	10:	2)	2:	1491.	
1412.	4:	1450.	4:	1480.		1)	1782,
1413.	2:	1451.	3:	1)	25,		2)
1414.	4:	1452.	4:	2)	15:		3)
1415.	4:	1453.	5:	1481.		1492.	
1416.	2:	1454.	25:	1)	2,		1)
1417.	4:	1455.	9000:	2)	36:		60,
1418.	4:	1456.	160:	1482.		2)	60,
1419.	3:	1457.	100:	1)	9,		3)
1420.	2:	1458.	24:	2)	3:	1493.	
1421.	2:	1459.	63:	1483.		1)	88,
1422.	1:	1460.	1080:	1)	210,		2)
1423.	1:	1461.	672:	2)	1890:		125,
1424.	1:	1462.	150:	1484.		4)	99:
1425.	2:	1463.	4:	1)	12,	1494.	
1426.	2:	1464.	2:	2)	18:		1)
1427.	3:	1465.	30:	1485.		5,	2)
1428.	3:	1466.	295:	1)	16,		2,
1429.	600:	1467.	3:	2)	2:		3)
1430.	4:	1468.	12:	1486.		36:	4)
1431.	25:	1469.	80:	1)	4145,	1495.	4:
1432.	4:	1470.	3:	2)	640:	1496.	3:
1433.	2:	1471.	80:	1487.		1497.	4:
1434.	24:	1472.	2000:	1)	20,	1498.	1:
1435.	4:	1473.	3:	2)	2,	1499.	
1436.	8:	1474.	5:	3)	2:	1500.	3:
1437.	170:	1475.	9:	1488.		1501.	
1438.	76:	1476.		1)	40,	1502.	4:
1439.	445:	1)	216,	2)	2,	1503.	1:
1440.	3:	2)	1944:	3)	4000:	1504.	2:
1441.	6:	1477.		1489.		1505.	4:
1442.	20:	1)	3,	1)	840,	1506.	1:
1443.	25:	2)	45:	2)	420,	1507.	4:
						1508.	2:

1509.	3:	1547.	4:	1585.	3:	1623.	15:
1510.	4:	1548.	3:	1586.	1:	1624.	6:
1511.	2:	1549.	1:	1587.	1:	1625.	6:
1512.	4:	1550.	2:	1588.	4:	1626.	4:
1513.	3:	1551.	1:	1589.	1:	1627.	1:
1514.	3:	1552.	1:	1590.	4:	1628.	45:
1515.	2:	1553.	1:	1591.	4:	1629.	3:
1516.	3:	1554.	3:	1592.	3:	1630.	2:
1517.	1:	1555.	1:	1593.	3:	1631.	80:
1518.	2:	1556.	1:	1594.	3:	1632.	12:
1519.	4:	1557.	3:	1595.	2:	1633.	4:
1520.	4:	1558.	4:	1596.	1:	1634.	100:
1521.	4:	1559.	2:	1597.	2:	1635.	3:
1522.	3:	1560.	3:	1598.	3:	1636.	4:
1523.	3:	1561.	3:	1599.	4:	1637.	2:
1524.	4:	1562.	1:	1600.	2:	1638.	4:
1525.	4:	1563.	1:	1601.	30:	1639.	2:
1526.	2:	1564.	3:	1602.	10:	1640.	3:
1527.	4:	1565.	2:	1603.	10:	1641.	2:
1528.	3:	1566.	2:	1604.	10:	1642.	2:
1529.	1:	1567.	1:	1605.	64:	1643.	1:
1530.	2:	1568.	3:	1606.	30:	1644.	20:
1531.	1:	1569.	2:	1607.	16:	1645.	9:
1532.	2:	1570.	3:	1608.	1:	1646.	6:
1533.	4:	1571.	1:	1609.	2:	1647.	50:
1534.	3:	1572.	3:	1610.	1:	1648.	1000:
1535.	4:	1573.	3:	1611.	75:	1649.	20:
1536.	3:	1574.	4:	1612.	4:	1650.	602:
1537.	2:	1575.	1:	1613.	1:	1651.	16:
1538.	3:	1576.	1:	1614.	8:	1652.	3:
1539.	2:	1577.	4:	1615.	4000:	1653.	8:
1540.	3:	1578.	3:	1616.	60:	1654.	5280:
1541.	4:	1579.	1:	1617.	2:	1655.	1000:
1542.	2:	1580.	4:	1618.	5:	1656.	200:
1543.	3:	1581.	4:	1619.	4:	1657.	3:
1544.	1:	1582.	2:	1620.	1:	1658.	10:
1545.	1:	1583.	2:	1621.	100:	1659.	25:
1546.	2:	1584.	2:	1622.	4:	1660.	4000:

1661.	36:	1) 1, 2) 45, 1) 1024, 2) 9:	3) 50: <b>1684.</b> 1) 5, 2) 5,	1709. 2: 1710. 3: 1711. 3: 1712. 4:
1662.				
1663.		1) 16, 1) 1, 2) 2:	3) 8, 4) 12: <b>1685.</b> 4) 5:	1713. 3: 1714. 1: 1715. 1:
1664.		<b>1676.</b> 1) 2, 2) 1:	1) 2, 2) 1, 3) 20,	1716. 2: 1717. 4: 1718. 4:
1665.		3) 5:	4) 5:	1719. 2:
1666.		1) 4, 2) 2:	<b>1677.</b> 1) 4, 2) 12, 3) 24:	1720. 4: 1721. 2: 1722. 1:
1667.		1) 8, 1) 5000, 2) 5:	<b>1686.</b> 1) 2, 2) 2, 3) 1, 4) 1:	1723. 2: 1724. 2:
1668.		<b>1678.</b> 1) 85, 2) 12:	<b>1687.</b> 3: <b>1688.</b> 4: <b>1689.</b> 1: <b>1690.</b> 3:	1725. 4: 1726. 2: 1727. 3: 1728. 3:
1669.		3) 10:	<b>1691.</b> 2: <b>1692.</b> 1: <b>1693.</b> 2: <b>1694.</b> 1:	1729. 3: 1730. 1: 1731. 2: 1732. 1:
1670.		<b>1680.</b> 1) 3768, 2) 628:	<b>1695.</b> 3: <b>1696.</b> 3: <b>1697.</b> 1: <b>1698.</b> 4:	1733. 1: 1734. 4: 1735. 2: 1736. 2:
1671.		2) 6, 1) 20:	<b>1699.</b> 3: <b>1700.</b> 2: <b>1701.</b> 2: <b>1702.</b> 2:	1737. 1: 1738. 1: 1739. 4: 1740. 4:
1672.		<b>1682.</b> 1) 100, 2) 25:	<b>1703.</b> 1: <b>1704.</b> 4: <b>1705.</b> 4: <b>1706.</b> 3:	1741. 3: 1742. 2: 1743. 2: 1744. 2:
1673.		3) 3768:	<b>1683.</b> 1) 4, 2) 5,	1745. 2: 1746. 2:
1674.			<b>1707.</b> 2: <b>1708.</b> 4:	

1747.	3:	1785.	1:	1823.	45:	1861.	2:
1748.	4:	1786.	2:	1824.	60:	1862.	1:
1749.	3:	1787.	4:	1825.	60:	1863.	46:
1750.	1:	1788.	4:	1826.	60:	1864.	20:
1751.	3:	1789.	4:	1827.	20:	1865.	221:
1752.	1:	1790.	4:	1828.	40:	1866.	25:
1753.	3:	1791.	1:	1829.	60:	1867.	108:
1754.	4:	1792.	4:	1830.	0:	1868.	27:
1755.	1:	1793.	2:	1831.	7:	1869.	2:
1756.	4:	1794.	3:	1832.	35:	1870.	2:
1757.	2:	1795.	4:	1833.	45:	1871.	6:
1758.	4:	1796.	2:	1834.	73:	1872.	4:
1759.	4:	1797.	3:	1835.	4:	1873.	350:
1760.	2:	1798.	3:	1836.	3:	1874.	5:
1761.	3:	1799.	1:	1837.	3:	1875.	59:
1762.	3:	1800.	2:	1838.	15:	1876.	255:
1763.	2:	1801.	1:	1839.	60:	1877.	255:
1764.	2:	1802.	4:	1840.	30:	1878.	10:
1765.	3:	1803.	4:	1841.	24:	1879.	2:
1766.	4:	1804.	3:	1842.	45:	1880.	7:
1767.	1:	1805.	2:	1843.	15:	1881.	84:
1768.	2:	1806.	4:	1844.	225:	1882.	3375:
1769.	1:	1807.	4:	1845.	60:	1883.	198:
1770.	3:	1808.	3:	1846.	2:	1884.	
1771.	3:	1809.	1:	1847.	2:		1) 3,
1772.	2:	1810.	1:	1848.	5:		2) 4:
1773.	4:	1811.	2:	1849.	3:	1885.	
1774.	4:	1812.	2:	1850.	5:		1) 2,
1775.	2:	1813.	1:	1851.	4:		2) 1:
1776.	2:	1814.	4:	1852.	2:	1886.	
1777.	1:	1815.	3:	1853.	20:		1) 7,
1778.	4:	1816.	3:	1854.	2:		2) 45:
1779.	3:	1817.	3:	1855.	2:	1887.	
1780.	2:	1818.	2:	1856.	1:		1) 30,
1781.	3:	1819.	4:	1857.	2:		2) 15:
1782.	1:	1820.	1:	1858.	3:	1888.	
1783.	2:	1821.	17:	1859.	6:		1) 30,
1784.	3:	1822.	192:	1860.	12:		2) 17:

<b>1889.</b>	2) 1:	3) 15:	4) 54:
1) 36,	<b>1902.</b>	1) 3,	<b>1922.</b>
2) 72:	2) 4:	2) 2,	1) 24,
<b>1890.</b>	1) 75,	3) 6:	2) 48,
2) 25:	1) 59,	<b>1914.</b>	3) 24,
<b>1891.</b>	2) 1:	1) 3,	4) 3:
1) 3,	<b>1904.</b>	2) 9,	<b>1923.</b>
2) 2:	1) 30,	3) 6:	1) 12,
<b>1892.</b>	2) 3:	<b>1915.</b>	2) 17,
1) 4,	<b>1905.</b>	1) 6,	3) 7,
2) 16:	1) 2,	2) 4,	<b>1924.</b>
<b>1893.</b>	2) 45:	3) 3:	1) 3,
1) 6,	<b>1906.</b>	<b>1916.</b>	2) 36,
2) 2:	1) 6,	1) 6,	3) 54,
<b>1894.</b>	2) 5:	2) 1,	4) 36:
1) 8,	<b>1907.</b>	3) 12:	<b>1925.</b>
2) 1875:	1) 7884,	<b>1917.</b>	1) 8,
<b>1895.</b>	2) 25:	1) 6,	2) 3,
1) 4,	<b>1908.</b>	2) 1,	3) 2,
2) 12:	1) 30,	3) 2:	4) 8:
<b>1896.</b>	2) 30,	<b>1918.</b>	<b>1926.</b>
1) 4,	3) 17:	1) 5,	1) 9,
2) 3:	<b>1909.</b>	2) 200,	2) 72,
<b>1897.</b>	1) 30,	3) 30:	3) 64,
1) 2,	2) 60,	<b>1919.</b>	4) 8:
2) 4:	3) 60:	1) 609,	<b>1927.</b> 3:
<b>1898.</b>	<b>1910.</b>	2) 87,	<b>1928.</b> 4:
1) 9,	1) 12,	3) 87:	<b>1929.</b> 4:
2) 18:	2) 4,	<b>1920.</b>	<b>1930.</b> 2:
<b>1899.</b>	3) 2:	1) 2,	<b>1931.</b> 2:
1) 8,	<b>1911.</b>	2) 15,	<b>1932.</b> 2:
2) 5:	1) 3,	3) 5,	<b>1933.</b> 3:
<b>1900.</b>	2) 2,	4) 375:	<b>1934.</b> 3:
1) 1,	3) 4:	<b>1921.</b>	<b>1935.</b> 2:
2) 8:	<b>1912.</b>	1) 6,	<b>1936.</b> 3:
<b>1901.</b>	1) 1,	2) 18,	<b>1937.</b> 4:
1) 15,	2) 2,	3) 36,	<b>1938.</b> 1:

1939.	1:	1977.	2:	2015.	3:	2053.	1:
1940.	1:	1978.	1:	2016.	2:	2054.	4:
1941.	3:	1979.	2:	2017.	1:	2055.	55:
1942.	2:	1980.	4:	2018.	2:	2056.	495:
1943.	2:	1981.	4:	2019.	2:	2057.	544:
1944.	3:	1982.	4:	2020.	1:	2058.	25:
1945.	1:	1983.	3:	2021.	4:	2059.	230:
1946.	2:	1984.	1:	2022.	2:	2060.	2:
1947.	3:	1985.	2:	2023.	1:	2061.	14:
1948.	3:	1986.	2:	2024.	4:	2062.	17:
1949.	2:	1987.	1:	2025.	4:	2063.	8448:
1950.	2:	1988.	1:	2026.	3:	2064.	1125:
1951.	2:	1989.	2:	2027.	4:	2065.	9:
1952.	2:	1990.	3:	2028.	3:	2066.	
1953.	2:	1991.	3:	2029.	1:		1) 256,
1954.	1:	1992.	3:	2030.	4:		2) 4:
1955.	1:	1993.	3:	2031.	1:	2067.	
1956.	1:	1994.	3:	2032.	33:		1) 18,
1957.	2:	1995.	2:	2033.	4000:		2) 2:
1958.	1:	1996.	1:	2034.	2:	2068.	
1959.	2:	1997.	2:	2035.	2475:		1) 2,
1960.	4:	1998.	4:	2036.	45:		2) 99:
1961.	4:	1999.	4:	2037.	11:	2069.	
1962.	1:	2000.	2:	2038.	495:		1) 33,
1963.	2:	2001.	4:	2039.	30:		2) 66:
1964.	1:	2002.	4:	2040.	10:	2070.	
1965.	3:	2003.	1:	2041.	264:		1) 76,
1966.	1:	2004.	1:	2042.	7:		2) 14:
1967.	3:	2005.	2:	2043.	8:	2071.	
1968.	4:	2006.	3:	2044.	8:		1) 396,
1969.	2:	2007.	4:	2045.	68:		2) 14:
1970.	2:	2008.	2:	2046.	34:	2072.	
1971.	3:	2009.	3:	2047.	276:		1) 3,
1972.	1:	2010.	3:	2048.	32:		2) 5:
1973.	2:	2011.	2:	2049.	4125:	2073.	
1974.	3:	2012.	1:	2050.	95:		1) 1632,
1975.	3:	2013.	3:	2051.	9216:		2) 544:
1976.	2:	2014.	3:	2052.	512:	2074.	

1) 328,	1) 7,	2) 6,	<b>2087.</b>
2) 246:	2) 4:	3) 600:	1) 375,
<b>2075.</b>	<b>2080.</b>	<b>2084.</b>	2) 264,
1) 93,	1) 192,	1) 72,	3) 165,
2) 143:	2) 64:	2) 2,	4) 66:
<b>2076.</b>	<b>2081.</b>	3) 250:	<b>2088.</b>
1) 8,	1) 396,	<b>2085.</b>	1) 4725,
2) 17:	2) 1,	1) 54,	2) 2541,
<b>2077.</b>	3) 1:	2) 9,	3) 1848,
1) 101,	<b>2082.</b>	3) 9:	4) 28:
2) 155:	1) 66,	<b>2086.</b>	
<b>2078.</b>	2) 66,	1) 6,	
1) 4,	3) 165:	2) 2,	
2) 1664:	<b>2083.</b>	3) 8,	
<b>2079.</b>	1) 3,	4) 5:	

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Է. Ղազարյան, Գ. Մելիքյան, Ֆիզիկայի թեստային առաջադրանքների ժողովածու, Երևան, «Էղիք Պրինտ», 2008:
2. Ռ. Ալավերդյան, Գ. Մելիքյան, Ժ. Նինոյան, Ա. Պետրոսյան, Ֆիզիկայի խնդիրների ժողովածու, Երևան, Հեղ. Հրատ., 2009:
3. Ժ. Նինոյան, Պ. Պետրոսյան, Լ. Գրիգորյան, Ա. Պետրոսյան, Ֆիզիկայի թեստերի ժողովածու ԲՈՒՀ ընդունվողների համար, Երևան, «ՄՈԱ», 2009:
4. Ռ. Ավագյան և այլոք, Ֆիզիկայի խնդիրների ժողովածու, Երևան, 1996:
5. Է. Ղազարյան և այլոք, Ֆիզիկայի խնդիրների և թեստային հարցերի ժողովածու ԲՈՒՀ ընդունվողների համար, Երևան, «Լույս», 1990:
6. Ժ. Նինոյան, Գ. Ա. Վարդանյան, Ֆիզիկայի խնդիրների ժողովածու ԲՈՒՀ ընդունվողների համար, Երևան, «ԵՊՀ», 1991:
7. Գ. Մելիքյան, Ֆիզիկայի խնդիրների լուծման մեթոդական ձեռնարկ, Երևան, «Էղիք Պրինտ», 2006:
8. Ռ. Հովհաննիսյան, Հ. Չարխատունյան, Է. Սարգսյան, Ֆիզիկայի խնդիրների և հարցերի խողովածու, Երևան, «Լույս», 2000:
9. Ի. Վորոբյով և այլոք, Ֆիզիկայի խնդիրներ (Օ. Սավչենկոյի խմբագրությամբ), Երևան, «Տիգրան Մեծ»: 2008:
10. Է. Ղազարյան, Ա. Գալոյան, Հ. Պողոսյան, Ֆիզիկայի խնդիրների ժողովածու օլիմպիադաներին նախապատրաստվելու համար, Երևան, «ԵՊՀ», 1974:
11. Գ. Գրիգորյան, Ա. Հովակիմյան, Է. Ղազարյան, Վ. Վարդանյան, Ֆիզիկայի ընտրովի խնդիրների ժողովածու, Երևան, 1998:
12. Գ. Վ. Գրիգորյան, Բ. Ա. Փախչանյան, Ֆիզիկայի հանրապետական օլիմպիադաներ, 1983-2003, Երևան, «Էղիք Պրինտ», 2003:
13. Ռ. Բ. Ալավերդյան, Օպտիկական երևոյթների ֆիզիկայի խնդիրների ժողովածու, Երևան, «ԵՊՀ», 2005:
14. А. П. Рымкевич, Сборник задач по физике, М.: Просвещение, 1986.
15. Физика: 3800 задач для школьников и поступающих в вузы (Авт. сост. Н. В. Турчина и др.) М.: Дрофа, 2000.
16. Е. И. Бутиков и др., Физика в примерах и задач, М.: Наука, 1979.
17. Е. И. Пинский, Задачи по физике, М.: Наука, 1978.
18. И. М. Гольфгат, и др. 1001 задач по физике с решениями, М.: 1995.
19. Р. А. Бендриков и др., Задачи по физике для поступающих в вузы, М.: Наука, 1987.

20. А. Н. Малинин., Сборник вопросов и задач по физике, М.: Просвещение, 2002.
21. И. Е. Иродов, Задачи по общей физике, Санкт-Петербург, Лань, 2001.
22. Б. Б. Буховцев, Сборник задач по элементарной физике, М.: Наука, 1974
23. Г. В. Меледин, Физика в задачах, М.: Наука, 1990.

www.atc.am

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	3
<b>I. ՄԵԽԱՆԻԿԱ .....</b>	<b>5</b>
1. ԿԻՆԵՍԱՏԻԿԱ .....	5
1.1. Թից ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	5
1.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	31
1.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	36
1.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	40
1.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	42
2. ԴԻՆԱՄԻԿԱ .....	44
2.1. Թից ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	44
2.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	65
2.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	72
2.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	75
2.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	78
3. ԱՏԱՏԻԿԱ .....	80
3.1. Թից ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	80
3.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	87
3.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	89
3.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	91
3.4. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	92
<b>4. ԱՇԽԱՏԱՆՔ, ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ԷՆԵՐԳԻԱ: ԽՄՊՈՒԼԱ:</b>	
<b>ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՄԵԽԱՆԻԿԱՅՈՒՄ .....</b>	<b>93</b>
4.1. Թից ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	93
4.2. ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	112
4.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	116
4.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	119
4.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ .....	122

<b>5. ՀԻԳՐՈՍՏԱՏԻԿԱ</b>	<b>124</b>
5.1. ԹԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	124
5.2. ՍԵԿ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	134
5.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	136
5.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	137
5.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	138
<b>6. ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԱԼՔԻՖՆԵՐ</b>	<b>139</b>
6.1. ԹԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	139
6.2. ՍԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	151
6.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	153
6.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	154
6.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	155
<b>II. ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՖԻԶԻԿԱ ԵՎ ԶԵՐՍԱԴԻՆԱՍԻԿԱ</b>	<b>156</b>
<b>7. ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ-ԿԻՆԵՏԻԿ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՎԵՐԸ:</b>	
<b>ԳԱԶԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐ</b>	<b>156</b>
7.1. ԹԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	156
7.2. ՍԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	176
7.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	181
7.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	184
7.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	188
<b>8. ԶԵՐՍԱԴԻՆԱՍԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՎԵՐԸ</b>	<b>191</b>
8.1. ԹԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	191
8.2. ՍԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	212
8.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	217
8.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	220
8.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	224
<b>III. ԷԼԵԿՏՐԱԴԻՆԱՍԻԿԱ</b>	<b>226</b>
<b>9. ԷԼԵԿՏՐԱՍԱՏԻԿԱ</b>	<b>226</b>
9.1. ԹԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	226

9.2. ՍԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	246
9.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	251
9.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	254
9.5. ՉՈՐՄ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	259
<b>10. ՀԱՍՏԱՏՈՒՄ ՀՈՍԱՆՔ: ՕՀՄԻ ՕՐԵՆՔԸ ԾՂԹԱՅԻ ՏԵՂԱՍՍԱԲԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՀՈՍԱՆՔԸ ՀԱԶՈՐԴԱԿԱՆ ԵՎ ՉՈՒԳԱՀԵՇ ՄԻԱՑՈՒՄՆԵՐ</b>	<b>262</b>
10.1. ԹԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	262
10.2. ՍԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	286
10.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	291
10.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	293
10.5. ՉՈՐՄ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	295
<b>11. ՄԱԳՆԵԽԱԿԱՆ ԴԱԾԸ: ԷԼԵԿՏՐԱՍՍԳՆԻՄԱԿԱՆ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԱԼՔԸՆԵՐ</b>	<b>296</b>
11.1. ԹԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	296
11.2. ՍԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	318
11.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	326
11.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	329
11.5. ՉՈՐՄ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	332
<b>12. ՕՊՏԻԿԱ: ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԸ</b>	<b>334</b>
12.1. ԹԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	334
12.2. ՍԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	360
12.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	368
12.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	373
12.5. ՉՈՐՄ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	377
<b>13. ՔՎԱՆՏԱՅԻՆ ՖԻԶԻԿԱ</b>	<b>380</b>
13.1. ԹԻԾ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	380
13.2. ՍԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	398
13.3. ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	402

13.4. ԵՐԵՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	405
13.5. ՉՈՐՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՁՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	407
<b>Պատասխաններ</b>	<b>409</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>429</b>

Ալավերդյան Ռոմա, Ղազարյան Էդուարդ,  
Մելիքյան Գաղիկ, Նինոյան Ժիրայր,  
Պետրոսյան Ալֆրեդ, Թոսունյան Ռոստոմ

# ՖԻԶԻԿԱ

Պետական ավարտական և միասնական  
քննությունների

Ը Տ Ե Մ Ա Ր Ա Ն

ՍԱՍ

2

Չափսը՝ 100x70 1/16: Ծավալը՝ 27.25 մամոլ:

Տպաքանակը՝ 500:

**ԵԴԻԹ ՊՐԻՆՏ**  
Երևան, Թումանյան 12  
հեռ.՝ (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)



**EDIT PRINT**  
12 Toumanyan str., Yerevan  
Tel.: (374 10) 520 848  
[www.editprint.am](http://www.editprint.am)  
[info@editprint.am](mailto:info@editprint.am)